

Ժ. Գ. Վարդանյան
Գ. Յա. Սայադյան

**ԱՆՏԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ
ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ**

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՎ բուսաբանության ինստիտուտի հրատարակչություն
2008

ՀՏԴ 801.3-919.81-82-20:630
ԳՄԴ 81.2Հ-4+81.2Ո-4+81.2Անգլ-4+43
Վ 301

Ֆրատարակման և երաշխավորվել ԳԳ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոսների՝ կենս. գիտ. դոկտոր Գ.Մ. Ֆայվուշ
Ռ. Գ. Փիլոսյան

Սասնազեն-խմբագիր՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ժ. Հ. Վարդանյան

Վարդանյան Ժ. Հ., Սաքաղյան Հ. Յա.:
Վ 301 Անտառագիտական և կանաչապատման տերմինների հայերեն-օւսերեն-անգլերեն բացարական բառարան, Եր.: ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի հրատ., 2008. -341 էջ

Բառարանն ընդգրկում է անտառային տնտեսության և կանաչապատման ոլորտներում օգտագործվող շուրջ 1650 տերմին և հասկացություն, դրանց ժամանակակից համառոտ բացատրությունները հայերեն լեզվով, ինչպես նաև այդ տերմինների օւսերեն և անգլերեն համարժեքները:

Տրվում է նաև տերմինների օւսերեն և անգլերեն անվանումների ցանկ՝ համապատասխան համարանիշով (էջով), ինչպես նաև Հայաստանի անտառաբուծության և կանաչապատման մեջ օգտագործվող արորիզեն ու ներմուծված ծառերի ու թփերի քառալեզու (նաև լատիներեն) անվանումները:

Բառարանը նախատեսված է անտառային ու կանաչապատման ոլորտների մասնագետների, բուսաբանների, ծառագետների, անտառագետների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների «Անտառային տնտեսություն և քնակավայրերի կանաչապատում» և ազրոկենսաբանական այլ մասնագիտությունների ուսանողների համար:

ԳՄԴ 81.2Հ-4+81.2Ո-4+
81.2 Անգլ-4+43

ISBN 978-99941-2-178-6

4630-2009

© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ, 2008 թ.

Վերջին տասնամյակների ընթացքում ագրոկենսաբանության և էկոլոգիայի, այդ թվում նաև անտառագիտության զարգացմամբ գիտական գրականությունը հարստացել է նոր տերմիններով և հասկացություններով: Նեղ մասնագիտական շատ տերմիններ հաճախ թարգմանվում են տարրեր կերպ, տալով տարբեր բացատրություններ, որը և դժվարացնում է դրանց ճիշտ հասկանալն ու օգտագործելը:

Անցած ավելի քան 70 տարիների ընթացքում հանրապետության անտառային ոլորտում և կանաչ շինարարությունում կատարված հսկայածավալ հետազոտությունների արդյունքները որպես կանոն հրատարակվել են ռուսերեն լեզվով, որը և պատճառ է դարձել անտառագիտական շատ տերմինների ու հասկացությունների հայերեն ճշգրիտ անվանումների բացակայությանը: Եվ պատահական չէ, որ գիտական համաժողովներում, զեկուցումներում ու տարրեր պաշտոնական փաստաթղթերում, ինչպես նաև կրթական հաստատություններում մասնագիտական առարկաների (Անտառագիտություն, Ծառագիտություն, Բնակավայրերի կանաչապատում և այլն) դասավանդման ընթացքում շատ հաճախ գործածվում են մասնագիտական տերմինների ռուսերեն անվանումները:

Հայերեն լեզվով «Անտառագիտական տերմինների ռուս - հայերեն տեղեկատու բառարան» -ի ստեղծման առաջին փորձը կատարել է պրոֆ. Պ.Ա. Խուրշուդյանը (2000 թ.): Բառարանն ընդգրկում է շուրջ 950 անտառագիտական հիմնական տերմիններ: Այն կազմելիս հեղինակը հիմք է ընդունել ռուսերեն լեզվով հրատարակված «Անտառային հանրագիտարանի: (Лесная энциклопедия, т.т. 1-2,.) հարուստ բառացանկը:

Հաշվի առնելով վերջին տարիներին անտառային ոլորտում կատարվող լուրջ բարեփոխումները, իրականացվող բազմաբնույթ միջազգային, տարածա-շրջանային և ազգային դրամաշնորհային ծրագրային աշխատանքները, որոնց կատարման ընթացքում գործածվում են նաև մեծ թվով նոր և օտարածին տերմիններ ու հասկացություններ, ինչպես նաև Հայաստանի պետական ազդարային Համալսարանում «Անտառային տնտեսության և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտությամբ դասավանդվող մեծ թվով նեղ մասնագիտական առարկաները, անհրաժեշտություն է առաջացել կազմելու անտառագիտական և կանաչապատման տերմինների ու հասկացությունների սույն եռալեզու (Հայերեն - ռուսերեն - անգլերեն) բացատրական բառարանը:

Այն ընդգրկում է անտառային տնտեսության և կանաչ շինարարության ոլորտներում գործածվող շուրջ 2000 տերմին ու հասկացություն՝ ընդգրկելով անտառագիտական, ծառագիտական, բնափայտագիտական, բուսաբանական, անտառային քարտեզագրական և այլ նեղ մասնագիտական ուղղություններ:

Բառարանը կազմելիս հիմք է ընդունվել հայերեն լեզվով հրատարակված Պ.Ա. Խուրշուդյանի հիշյալ բառարանը, Ֆ.Փ. Հայրապետյանի, Լ.Վ. Հարությունյանի և Յու.Ի. Սուլքիջանյանի «Կանաչ շինարարության հայ - ռուսերեն բացատրական բառարանը» (1986), Լ.Վ. Հարությունյանի և ուր. «Բուսա-

բանական տերմինների ռուս - հայերեն բացատրական բառարանը (2002), Ֆ.Փ. Հայրապետյանի Հայ - ռուսերեն բացատրական բառարանը (1987), Զ.Գ. Ծատուրյանի և Մ. Լ. Գևորգյանի «Ռուսերեն, Անգլերեն, Հայերեն բուսաբանական տերմինների համառոտ բառարանը» (2003), Ժ.Հ. Վարդանյանի «Ծառագիտություն» ԲՈՒՀ - ական դասագիրքը (2005), ռուսերեն լեզվով առկա մի շարք մասնագիտական բառարաններ (Биологический энциклопедический словарь, 1989; Я.И. Мулкиджанян и В.С. Теодоронский, 1984; Словарь ботанических терминов, 1984; Лесная энциклопедия, т.т. 1-2, 1985 - 1986; Терминологический словарь лесного хозяйства, 2002; Булыгин Н.Е., Ярмишко В.Т., 2000), ինչպես նաև օտարալեզու անտառագիտական տերմինների այլ բառարաններ (1.Russian-English, English-Russian Forestry and Wood Dictionary, 2-nd edition. W. Linnard & D. Darrah-Morgan. CABI publishing 1999.,2. Dictionary of Natural Resource Management. Julian and Ratherine Dunster. CAB International. 1996):

Առանձին տերմինների բացատրությունը տրված է հեղինակների կողմից:

Տերմինները բառարանում դասավորված են հայերեն այբբենական հաջորդականությամբ, տրված է դրանց ռուսերեն և անգլերեն անվանումները և հայերեն համառոտ բացատրությունը: Բառարանում տրված է նաև Հայաստանում բնականորեն աճող (աբորիգեն) և հանրապետության անտառաբուծության ու կանաչապատման մեջ օգտագործվող ներմուծված (օտարածին) ծառերի ու թփերի հայերեն - ռուսերեն - լատիներեն - անգլերեն անվանումները, որը չպիտանի կարևոր է հատկապես ուսանողների և ոլորտում աշխատող պրակտիկ մասնագետների համար:

Հիմնական եռալեզու տերմինացանկից բացի, բառարանում տրված է նաև տերմինների հայերեն և անգլերեն անվանումների ցանկ՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով այն էջը, որտեղ տրված է հայերեն բացատրությունը:

Բառարանը օգտակար կլինի ԲՈՒՀ- երի ազդու նախաբանական մասնագիտությունների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, գիտաշխատողների, ինչպես նաև անտառային և կանաչապատման ոլորտներում աշխատող անտառագետ - ծառագետ մասնագետների համար:

Ա

ԱԲԻՈՏԻԿ ԳՈՐԾՈՆՆԵՐ, *Абиотические факторы; abiotic factors*

Կենդանի օրգանիզմների վրա ազդող արտաքին միջավայրի անկենդան գործոններն են ջերմությունը, խոնավությունը, լույսը, հողագրունտային պայմանները, օեղիեֆը և այլն: Մեկ այլ բնորոշմամբ Ա. Գ. բուսական օրգանիզմների վրա ազդող միջավայրի միազուսմար գործոններ: Բաժանվում են՝ քիմիականի (մթնոլորտը, քաղցրահամ ջրերը, հողի կազմը և այլն) և կլիմայականի (մթնոլորտի ճնշումը, օդային զանգվածի տեղափոխությունը, ծովային հոսանքները, արեգակնային ճառագայթումը և այլն): Անտառում Ա. Գ.-ից կարևոր նշանակություն ունեն զազային, լուսային, քամու օեֆիմները, հողի կազմը, արեգակնային ճառագայթումը և այլն:

ԱԲՈՐԻԳԵՆ ԲՈՒՅՍԵՐ, *Аборигенные растения; indigenous, native plants*

Տեղաբնակ բույսեր, որոնք ծագել և էվոլյուցիոն զարգացում են անցել որոշակի տարածքում: Հաճախ նույնացվում են էնդեմիկ բույսերի հետ:

ԱԲՍՈՐԲԻԱ, *Абсорбция; Absorption*

Երկրի մակերևույթի առարկաների (մարգագետին, անտառ, տափաստան) կողմից արեգակնային ճառագայթարձակման կլանման երևույթը:

ԱԳՐՈՆՏԱՄԲԱՐԵԼԱՎԱՆՆ ԵՐՁԱՆԱՅՈՒՄ, *Агроресамелиоративное районирование; agroforestameliorative zoning*

Տարածքի բաժանումը անտառարելավման շրջանների՝ էլենելվ անտառածման պայմաններից: Բաժանման հիմքում ընկած են հողակլիմայական, հիդրոլոգիական, երկրաբանական, տոպոգրաֆիկ գործոնները և գյուղատնտեսության մասնագիտացումը: Ա. Ե. օգտագործում են ագրոանտառարելավման միջոցառումների նախագծման, ծառաբույսի տեսակաչափի ընտրության, անտառաշերտերի հիմնադրման, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումների պլանավորման նպատակով:

ԱԳՐՈՆՏԱՄԲԱՐԵԼԱՎՈՂ, *Агроресамелиоратор; a groforestameliorator*

Անտառագետ-մարտարագետ մասնագետ, որն զբաղվում է ագրոանտառարելավման միջոցառումների նախագծման և իրականացման աշխատանքներով:

ԱԳՐՈՆՏԱՄԲԱՐԵԼԱՎՈՒՄ, *Агроресамелиорация; agroforestamelioration*

Անտառարուծության բնագավառ, որն ուսումնասիրում է անտառունկարկների միջոցով գյուղատնտեսական հանդակների արդյունավետության բարձրացման տեխ-

նրլոգիական և կազմակերպական հարցերը: Հիմնված է անտառի հողապաշտպան, քրակարգավորիչ և պաշտպանական այլ հատկությունների վրա:

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԱՐՏԶՂՈՒՐԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ, *Агротехнические работы в садово-парковом хозяйстве; agrotechnical activities in garden-park farming*

Տնկիների, սերմնաբուսակների տնկման, սիզամարգերի և ծաղկանոցների հարդարման, բույսերի խնամքի ու մշակության, տնկարկների ձևավորման միջոցառումներ պարտեզներում ու զբոսայգիներում:

ԱԳՐՈՑԵՆՈՉ, *Агроценоз; agrocenosis*

Մարդու կողմից ստեղծվող և պահպանվող կենսահամակեցություն: Աչքի է ընկնում նվազ հուսալիությամբ, բայց բույսերի մեկ կամ մի քանի ընտրված տեսակների (սորտերի) բարձր բերքատվությամբ:

ԱՐԱՊՏԱԳԻՎ (ՀԱՐՍԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ), *Адаптация; adaptation*

Բուսատեսակի կամ պոպուլյացիայի մորֆոլոգիական վարքագծի դրսևորում, որն ապահովում է տվյալ օրգանիզմի նորմալ կենսագործունեությունը միջավայրի որոշակի պայմաններում կամ գոյատևելու ընդունակությունը՝ գոյության փոփոխված պայմաններին:

ԱՐՎԵՆՏԻՎ (ԵԿՎՈՐ, ԲԵՐՎԱԾ) ԲՈՒՅՍԵՐ, *Пришлые растения (пришельцы); adventive plants*

Մարդու կողմից կամ տեղից տեղ փոխադրված բույսեր: Տեղի է ունենում գյուղատնտեսական մթերքների առևտրի, սերմերի փոխանակման և մարդու տնտեսական այլ գործողությունների ժամանակ, երբ չեն պահպանվում կարանտին հսկողության կանոնները:

ԱԶԱՏ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ, *Свободная планировка; free planning*

Պարտեզների և զբոսայգիների հատակագծման եղանակ: Բնորոշվում է տարածության վրա տնկարկների և կառուցվածքների ազատ տեղադրմամբ: Առավելագույն չափով են օգտագործվում տեղանքի ելիեֆը, քրամբարները,

բուսականությունը: Ընդգրկում է ինչպես կանոնավոր, այնպես էլ լանդշաֆտային հատակագծման տարրեր:

ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՐԿ, *Природный национальный парк; National Natural Park*

Բնական համալիր, որը ներկայացնում է էկոլոգիական, պատմական, գեղագիտական հետաքրքրություն և օգտագործվում է հանգստի, կրթական և գիտական նպատակներով: Ա.Բ.Պ.-ի տարածքում արգելվում է բնական հարստությունների (իող,

ջուր, բուսականություն, ընդերք) տնտեսական օգտագործումը: Ստեղծվում է կառավարության որոշմամբ և գործում է հատուկ հաստատված իրավական կանոնների շրջանակներում:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ, *Национальный парк; national park*

Աստիճանված կարգով առանձնացված հատուկ պահպանվող բնական տարածք, որը ներկայացնում է բնապահպանական, պատմամշակութային, գեղագիտական, գիտական, ռեկրեացիոն և այլ արժեքներ: Ա.Պ. ի տարբերություն պետական արգելոցների, ունի ֆունկցիոնալ գոտիականությամբ պայմանավորված պահպանության ռեժիմներ: Ազգային պարկում, որպես կանոն, առանձնացվում են հատուկ գոտիներ. արգելոցային՝ պահպանության, հանգստի կազմակերպման, ինչպես նաև տնտեսական գործունեության իրականացման գոտի:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐԻ ԱՆՏԱՆՆԵՐ, *Леса национальных парков; forests of national parks*

Ազգային պարկերի տարածքում առկա խմբին պատկանող անտառներ, որոնք ունեն բնապահպանական, գիտական, ռեկրեացիոն և պատմամշակութային նշանակություն:

ԱՉՈՆԱԼ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Азональная растительность; azonal vegetation*

Ազոնալ բուսականությունը հորիզոնական և ուղղաձիգ գոտիականության հետ միասին բնական (նաև բուսական) զոնաների առանձնացման օրինաչափություն է, որի հիմքում դրված է խոնավացման նվազումը ծովափից դեպի ցամաքի խորքը:

ԱԵՐՈՎԱԼԱԳԱՏՈՒՄ (ՕՂԱԳԱԼԱԳԱՏՈՒՄ), *Аэротаксация; air survey*

Անտառի գնահատում ինքնաթիռից կամ ուղղաթիռից: Կատարում են նախօրոք մշակված աերոֆոտոսխեմաների երթուղով: Ա. օգտագործում են 3-րդ և 4-րդ կարգի անտառգնահատման ժամանակ՝ համեմատելով ստացված տվյալները վերերկրյա գնահատման նյութերի հետ:

ԱԵՐՈՏԱՆՔՍ (ՕՂԱՅՆՔՍ), *Аэросеб; Воздушный посев; air sowing*

Սերմերի ցանքսն ինքնաթիռով կամ ուղղաթիռով: Կիրառում են մեծ տարածությունների վրա ասեղնատերևավոր տեսակների, իսկ անապատներում՝ սաքսաուլի ցանքսի նպատակով:

ԱԵՐՈՏԱՔՍԱՅԻՎ (ՕՂԱՅԻՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ), *Аэротаксация; air inventory*

Անտառային ռեսուրսների աչքաչափային (վիզուալ) գնահատում, որը կատարվում է ինքնաթիռից, ուղղաթիռից, օդային նավատորմի այլ միջոցներից դիտարկմամբ:

ԱԵՐՈՎՈՒՄԱԿՆԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ, Աերոֆոտոսյեմկա; air photo survey

Աէրոլուսանկարահանում, անտառային ռեսուրսների (պաշարների) ուսումնասիրման մեթոդ:

Տե՛ս Օդալուսանկարահանում:

ԱԼԲԵՐՈ, *Альбедо; albedo*

Առարկաների մակերևութին ընկնող ճառագայթային էներգիայի անդրադարձման ունակությունը բնորոշող մեծություն: Չափվում է անդրադարձված և ստացված ճառագայթային էներգիաների քանակների հարաբերությամբ: Բարցարձակ սև ծարմնի ալբեդոն 0 է, ծառերի սաղարթինը՝ 10-15 %, խտածածկինը՝ 20-25%, հողի մակերեսինը՝ մոտավորապես 10 %:

ԱԼԵԼՈՊԱՏԻԱ, *Аллелопатия; allelopathy*

Բույսերի փոխազդեցությունը կենսաքանական ակտիվ նյութերի արտաքին միջավայր արտազատման միջոցով (ֆիտոնցիդներ, կուլիններ, անտիբիոտիկներ): Երբեմն ալելոպատիան դիտվում է որպես մի տեսակի քաղցասական ազդեցությունը մեկ այլ տեսակի վրա, որի հետևանքով վերջինս դուրս է մղվում արհեստական ֆիտոցենոզներից: Մեկ այլ դեպքում այդ նյութերը կարող են դրականորեն ազդել այլ բույսերի վրա՝ նպաստել դրանց արագ զարգացմանը (մեծ մասամբ բնական ֆիտոցենոզներում):

ԱԼՊԻՆԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ, *Альпийские растения; alpine plants*

Բարձրեռանյին պայմաններում (ալպիական գոտում) աճելուն և զարգանալուն հարմարված բույսեր (կարճահասակ հացազգիներ, բոշխեր, գնարբուկներ և այլն): Կարող են օգտագործվել քարաբլրակների և քարապարտեզների ստեղծման ժամանակ:

ԱԼՊԻՆԱՐԻՈՒՄ, ԱԼՊԻՎԱԼՆ ԱՅԳԻ, *Альпинарий; rock garden, alpinarium*

Լեռնային լանդշաֆտի և նրա բուսականության գեղեցկությունը ալպիական բույսերի, ժայռաբեկորների ու ջրի զուգորդման միջոցով վերարտադրող քարքարոտ պարտեզ: Ստեղծվում է արհեստական եղանակով բուսաբանական այգիներում և բույսերի ex-situ պահպանության այլ պայմաններում:

ԱԼՈՍ, *АЛОС (Передовой спутник наблюдения Земли); ALOS (Advanced Land Observation Satellite)*

ԱԼՈՍ-ը (ALOS) ճապոնական վերջին սերնդի հատուկ քարտեզագրական արբանյակ է, որն իրականացնում է մինչև 2,5 մ թույլտրելիության ստերեոհանույթ: Նկարահանող ապարատը՝ PRISM-ը (Panchromatic Remote Sensing Instrument for Stereomapping) ունի երեք օբյեկտիվներ, որոնք ունենալով օպտիկական տարբեր ա-

Օանցքային բեցություններ ապահովում են ստերեոզույզի ստացումը: Այս արթանյակը նոր հեռանկարներ է բացում անտառային քարտեզագրության համար:

ԱԾԱՆՅԱԼ ԱՆՏԱՌՆԵՐ, *Прозрачные леса; secondary, derivative forests*

Բնական տարերքի և մարդու տնտեսական գործունեության հետևանքով կազմը, ձևը, աճման պայմանները, արդյունավետությունը և այլ ցուցանիշներ փոփոխած անտառներ: Բնական ճանապարհով կամ մարդու նպատակալաց գործունեությամբ Ա. Ա. կարող են վերականգնել իրենց նախկին վիճակը, այսինքն դառնալ արմատական անտառներ: Այդ տեսակետից Ա.Ա. բաժանվում են՝ կարճ ածանցյալ, որտեղ արմատական անտառի վերականգնումը կարող է կատարվել տվյալ ծառատունկի մեկ սերունդի ընթացքում, արմատական՝ 2-3 սերունդների, և կայուն ածանցյալ՝ 3 և ավելի սերունդների ընթացքում:

ԱՎԼԻՄԱՏԻՉԱՅԻՆ, *Аκклиматизация; acclimatization*

Մարդու համար օգտակար բուսատեսակներով բնական համակեցությունը հարստացնելու նպատակով նախկինում այդտեղ չաճող որևէ բույսի ներմուծումը և գոյության նոր պայմաններին այդ բուսատեսակների հարմարվելը: Այդ պրոցեսում մեծ նշանակություն ունեն կլիմայական գործոնները (օդի ջերմաստիճանը, խոնավությունը, տեղումների քանակությունը և դրանց բաշխման ժիթմը տարվա ընթացքում, լուսապարթերակաությունը, լույսի ինտենսիվությունը), հողային ծածկույթի բնույթը և այլն:

ԱՎՎԱՐԻՈՒՄ, *Аквариум; aquarium*

Ջրավազան, թափանցիկ պատեր ունեցող, ջրով լցված հատուկ անոթ: Նախատեսված է ձկների, ջրային կենդանիների ու բույսերի աճեցման և պահպանման համար:

ԱՂԱԲՈՒՅՍ, *Галофит; halophytes*

Աղակալած հողերին հարմարված բույս (կարմրան, օշան, սաքսաուլ և այլն):

ԱՂՅՈՒՍԱԿ (ԱՏԳ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ), *Таблица (в ГИС среде); Table (in GIS environment)*

Թվային և տեքստային տեղեկություններ պարունակող համակազային ծրագիր, որտեղ արյուսակի տողերի և սյունակների օգնությամբ կարելի է հարցումներ և վերլուծություններ իրականացնել: Արյուսակը ԱՏԳ միջավայրում կարող է պարունակել այն նույն ցուցանիշները, ինչ նախկին տաքսացիոն մատյան-նկարագրերը կամ ներկա գույքագրման տվյալները:

ԱՂԱՐԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Солестойвусоотс; salinity resistance*

Չողի աղակալման որոշակի պայմաններում աճող անապատային բույսերին բնորոշ հատկանիշ:

ԱԶ, *Прурост;* growth

Տարվա ընթացքում շիվերի երկարությամբ աճման ցուցանիշ: Յուրաքանչյուր տեսակի համար բնորոշվում է որոշակի տևողությամբ՝ մի քանի օրից մինչև մի քանի ամիս: Լինում է ընդհանրացումներով կամ անընդհատ:

ԱԶՍԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ, *Таблицы года роста; growth tables*

Թվային տվյալների համակարգ՝ դասավորված հասակային որոշ հաջորդականությամբ, որը ցույց է տալիս անտառի քանակական բնութագիրն աճման տարբեր ժամանակաշրջաններում: Արտահայտում են ծառուտում ընթացող երկու հակադիր պրոցեսների՝ կանգուն մնացած ծառերի աճի ու մահացած ծառերի քանակական հարաբերությունը: Օգտագործում են անտառարևութային գիտական ու գործնական հարցեր լուծելիս:

ԱԶՍԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՓՈՐՉՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ, *Опытные таблицы года роста; experimental growth tables*

Ընդգրկում են տարբեր ծառատեսակներից կազմավորված ծառուտների զարգացմանը վերաբերող տվյալներ, ըստ նրանց հասակի և բոնիտետի: Մշակում են տարբեր երկրների, երկրամասերի, տարածաշրջանների համար առանձին՝ ըստ քնակի մայական պայմանների: Հաշվարկը կատարում են ելնելով ծառուտի 1.0 լրիվության ցուցանիշից:

ԱԶՍԱՆ ԽԹԱՆԻՉ, *Стимулятор роста; growth stimulator*

Հատուկ նյութ, որը նպաստում է բույսերի արագ աճին, արմատակալմանը (աուքսին, հիբերիլին, ցիտոկինին, վիտամիններ և այլն): Օգտագործվում է հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է արագացնել բույսերի կտրոնների արմատակալումը կամ նպաստել դանդաղած բույսերի արագ աճին:

ԱԶՍԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ, *Оптимальные условия произрастания; growing optimal conditions*

Օրգանիզմի գոյության պայմաններ, որոնք ապահովում են նրա լավագույն աճն ու զարգացումը: Արտաքին պայմանների յուրաքանչյուր գործոն ունի իր օպտիմալ չափանիշը կամ ցուցանիշը, որը տարբեր օրգանիզմների (տեսակների) համար տարբեր է:

ԱՄԱՈՆԱԿԱՆԱՉ ԱՆՏԱՈՆԵՐ, *Летнезеленые леса; summer green forests*

Բարեխառն գոտում լայնատերև, սաղարթավոր ծառատեսակներից կազմավորված անատառներ, որոնք ձմռանը գտնվում են հարաբերական հանգստի շրջանում (տերևաթափ են լինում):

ԱՍՄՈՒՆՏՆԱԿ, Летний домик; summerhouse

Փայտից, ստվարաթղթից և այլ նյութերից պատրաստված թեթև, բաց կառուցվածքի պարտեզավորակային շինություն:

ԱՄՊԵԼԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ, Ампельные растения; ampel plants

Փաթաթվող կամ ցած թափվող ցողուններով բույսեր: Օգտագործվում են շենքերի ներքին և արտաքին ձևավորման համար: Աճեցվում են կախովի ծաղկաթաղարներում, հատուկ զամբյուղներում և այլն: Կիրառվում են նաև հանդիպակաց կանաչապատման համար (երբ ներքևից բարձրանում են լիաները, իսկ տանիքից ցած են իջնում ամպելային բույսերը):

ԱՅԳԵՊԱՇՏՊԱՆ ԱՍՏԱՌԱՇԵՐՏԵՐ, Садооащитные лесные полосы; garden-protection forest shelterbelts

Պաշտպանական անտառաշերտերի տարատեսակ: Պտղատու և խաղողի այգիները շրջապատող և նրանց տարածքում տեղադրված ժապավենածև անտառաշերտեր, որոնք հիմնադրվում են միկրոկլիման բարելավելու համար: Անտառաշերտերի կառուցվածքը և տեսակաչափը պայմանավորված են պաշտպանվող մշակաբույսերով: Որպես կանոն, անտառաշերտի կազմում ընտրում են պտղատու տեսակների հետ ընդհանուր հիվանդություններ և վնասատուներ չունեցող, տվյալ գոտու համար արագած ծառատեսակներ:

ԱՅԳԻ (ՊԱՐՏԵՉ), Саd; garden, orchard

Կանաչապատման օբյեկտ: Որոշակի հատակագծային կոմպոզիցիայում միավորված բենահարթակ, մարզահրապարակներ, ծառուղիներ, մանկական խաղահրապարակներ, ջրամբարներ ունեցող և տնկարկներով, մարզագետիններով, ծաղկանոցներով ծածկված 5-10 հա-ից ոչ պակաս տարածք: Լինում են քաղաքային, շրջանային բնակելի թաղամասի և հատուկ նշանակության (ակումբներին, հիվանդանոցներին, առողջարաններին, դպրոցներին, արդյունաբերական ձեռնարկություններին կից) պարտեզներ:

ԱՅՐ-ԱՍԹ, Ожог; burn, scald scorch

Շատաբույսերի հիվանդություն, որը քնորոշվում է հյուսվածքների (տերևների, ճյուղերի, ծաղիկների, շիվերի, բնի) հանկարծակի սևանալով և մահանալով: Ա. լինում է վարակիչ, որն առաջանում է մանրէների և սնկերի ներգործությամբ, և ոչ վարակիչ, հետևանք է արհիտիկ անբարենպաստ գործոնների:

ԱՅՐՈՒՄ, Отжуг; annealing, steam burn

Հակահողեռային նպատակով անտառում ղեկավարվող գետնատարած հողեռի արհեստական առաջացում, որի կրակն ուղղվում է բուն հողեռի ընդդեմ: Անտառում հողեռի մեկուսացման արդյունավետ եղանակներից մեկը:

ԱՇՏՐՊԱՏԱՅՈՒՄ, *Опустынивание; desertification*

Տարածքի կորուստը համատարած քուսական ծածկույթից, որը հնարավոր չէ հետագայում վերականգնել առանց մարդու միջամտության: Որպես կանոն դիտվում է չորային, սակայն ոչ պարտադիր շոգ վայրերում: Տեղի է ունենում ինչպես բնական, յանպես էլ (գլխավորապես) անթրոպոգեն գործոնների ազդեցության հետևանքով:

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԳԵՏԱԳՈՎՏԱՅԻՆ ԱՆՏԱՈՒՆԵՐ, *Тугайные леса; tugai forests*

Աճում են միջին և կենտրոնական Ասիայի անապատային շրջանների գետափուլիտներում, նեղ ժապավեններով: Ունեն ջրապաշտպան կարևոր նշանակություն և մտնում են առաջին խմբի անտառների մեջ:

ԱՆՂԼԻՎԱԼՆ ԶՐՈՍԱՅԳԻ (ԱՆԴՆԱՖՏԱՅԻՆ ԶՐՈՍԱՅԳԻ); *Английский парк (Ландшафтный парк); English park, landscape park*

Լանդշաֆտային որոշակի կոմպլեքսով տարածք (5-100 հա), որի հատակագծային տարրերը բնական դասավորություն ունեն: Օգտագործվում է սահմանափակ ռեժիմով հանգստի համար:

ԱՆԴՐԱԳՐՈՋՈՒՄ, *Отражение; reflectance*

Արեգակնային ճառագայթներն ընկնում են երկրի մակերևույթի առարկաների վրա և անդրադարձվում տարբեր ուղղություններով: Գեոսահար ուսումնասիրությունների մեջ առավել օգտագործվում են հենց այդ անդրադարձված ճառագայթները՝ անտառածածկի և այլ լանդշաֆտների հետազոտությունների ժամանակ: Անդրադարձման չորս տեսակ են առանձնացնում՝

ա/ իդեալական հայելային (սպեկուլյար), բ/մոտիկ հայելային (սպեկուլյար), գ/մոտիկ դիֆուզային, դ/ իդեալական դիֆուզային կամ Լամբերտյան մակերես:

ԱՆԴՐԱԳՐՈՋՄԱՆ ԻՆԴԻԿԱՏՐԻՍԱԿ, *Индикатрса отражения; reflectance indicatrice*

Անդրադարձման ինդիկատրիսան երկրի մակերևույթի օբյեկտի կամ առարկայի (օր.լայնատերև կամ փշատերև անտառների) պայծառության գործակիցների հանրագումարն է, որը գրաֆիկորեն պատկերվում է բևեռային դիագրամայի տեսքով:

ԱՆԴՂԼԻՄ, *Отводок; layer, offset*

Ընծյուղի բողբոջակիր հատված, որը մայրական րույսից առանց անջատելու մի կողմ է տարված և միջին մասով թաղված է հողում: Բույսերի վեգետատիվ քաղմագման եղանակներից է (նոսենի, կոկոռչենի, հաղարջենի, մոռչենի, եղրևանի և այլն):

ԱՆԵՍՈՒՆՈՐԻՎ, *Анемозория (анемозор-организм, распространяемый ветром); anemochore*

Դիասպորի տեղափոխությունը օդի հոսանքների միջոցով: Ապրումվոր բույսերի և սնկերի տարածման հիմնական եղանակը: Չատուկ է նաև բազմաթիվ սերմնավոր բույսերի, որոնք ունեն այդ նպատակին ծառայող հարմարություններ (թամբակաթելի մման հավելվածներ, թևիկներ, օդային պարկիկներ):

ԱՆԵՄՈՖԻԼԻԱ, *Анемофилия; anemophilny*

Բույսի հարմարողականությունը քամու միջոցով փոշուվելու համար: Անեմոֆիլիան ասեղնատերևավորների փոշուտման միակ ձևն է: Բնորոշ է նաև մի շարք ծաղկավոր բուսատեսակների:

ԱՆՁՈՎԱՆԵՐ, *Сучовцеты, անмортелу; xeranthemum, immortelle*

Աստղածաղկազգիների (*Asteraceae*) ընտանիքի բույսեր, որոնք ունեն չոր, կաշեկերպ, կարծր, թթառամող և երկար պահպանվող ծաղիկներ: Օգտագործվում են ծաղկադեկորատիվ ձևավորումներում, ձմեռային ծաղկեփնջերում (անթառամ, հազատեսերևուկ, ակրոկլիմում, անոբիում և այլն):

ԱՆՁՐՈՂՈՂԳԵՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ, *Антропогенные факторы; anthropogen factors*

Միջավայրում տեղի ունեցող փոփոխություններ, որոնք պայմանավորված են մարդու գործունեությամբ: Կարող են լինել անմիջական՝ անտառների զանգվածային ոչնչացում, և անուղղակի, որն իրականացվում է լանդշաֆտի, կլիմայի, օդի ֆիզիկական վիճակի ու բաղադրության, հողի և այլ փոփոխությունների հետևանքով: Միջավայրի աղտոտումը կենցաղային և արդյունաբերական թափոններով հանգեցնում է էկոլոգիական հավասարակշռության խախտման, օրգանիզմների համակեցության (կենսաերկրագեոզի) քայքայման: Դողի բերրիության բարձրացմամբ մշակաբույսերի և ընտանի կենդանիների համար մարդը ստեղծել է նոր միջավայր՝ ազդուկենսացեոզներ:

ԱՆՇԱՌԱՊՄԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Безвершинное кобловое хозяйство; peatless pallard farming*

Անտառանյութի մանրաչափ տեսականի ստանալու նպատակով ծառի բունը կտրում են 2-4 մ բարձրության վրա: Առաջացած քնաշիվերը 2-10 տարեկան հասակում հատում են՝ թողնելով հիմքից 3-5 սմ, նոր քնաշիվեր ստանալու համար: Ա.Տ. վարում են բարրուց, լորենուց կազմավորված ծառուտներում:

ԱՆՉՈՒՆԱՅԻՆ ԸՄՔԼՈՆ (ԽՏԱՉԱՓ), *Угловой шаблон; corner sample (model)*

Անտառզնահատման գործիք, որով որոշում են ծառերի բների ընդայնական կտրվածքի մակերեսների գումարը:

ԱՆԿՈՍԱՉԱԾՈՒԹՅՈՒՆ, *Асимметрия; asymmetry*

Համաչափության առանցքի բացակայության պայմաններում ծավալատարածական տարրերի զուգակցում և բաշխում: Զրոսայգու կոմպոզիցիայի լայնորեն օգտագործվող եղանակ:

ԱՆԵՐԴՎԱԾԱԿՈՒԹՅՈՒՆ, *Диссонанс; dissonance, discordance*

Ներդաշնակության բացակայություն: Արտահայտվում է ձևի և բովանդակության, առարկաների ու երևույթների արտաքին տեսքի ու դրանց էության և այլնի անհամապատասխանության մեջ: Կանաչ շինարարությունում ներկայացնում է ըստ չափերի, ճարտարակերտության և գույների, անհաջող ընտրված բույսերի խմբեր:

ԱՆՈՅՎԱՌ ԲՈՒՅՍԵՐ, *Сосудистые растения; vascular plants*

Բույսեր, որոնց օրգաններում առկա են անոթներ կամ տրախեիդներ (մաղանման տարրեր): Այս խմբի մեջ են մտնում բոլոր բարձրակարգ բույսերը՝ բացառությամբ մամռանմանների:

ԱՆՋՐԴԻ ԾԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ, *Богарное деревоводство; boghar tree farming*

Ռոզգման բացակայության պայմաններում բույսերի աճեցումը տարեկան 300 մմ-ից ոչ պակաս տեղումների, դրանց բարենպաստ բաշխվածության և մշակման լավ պայմանների (պարարտացում, փխրեցում, ցանքածածկ) առկայության դեպքում:

ԱՆՍԱՍԲԼ, *Ансамбль; ensemble*

Պարտեզպուրակային արվեստում բուսականության և լանդշաֆտի մյուս տարրերի գործառական կապվածության ամբողջություն, որը բերված է միասնական տեսքի և ձևեջ է բերել որոշակի գեղարվեստական բնույթ:

ԱՆՏԱՌ, *Лес; forest*

Բուսականության հիմնական տիպերից մեկը: Հանդիսանում է ծառերի, թփերի, խոտերի, մամուռների, քարաքոսերի, կենդանիների ու միկոորգանիզմների կենսաբանորեն սերտ համագործակցված ընդհանրություն, որոնք գտնվում են մշտական փոխազդեցության մեջ ինչպես միմյանց, այնպես էլ շրջակա միջավայրի հետ: Ա. աշխարհագրական լանդշաֆտ է, կենսոլորտի բաղկացուցիչ կարևոր տարրերից մեկը, անտառանյութի հումքային բազա: Որպես բնական երևույթ դիտվում է բնապատմական, տեխնիկական, տնտեսագիտական, իրավաբանական, առողջապահական հումում-ներով: Որպես կենսոլորտի տարր տարածված է մայրցամաքներում, բացի ԱՆ-տարկտիդայից: Զբաղեցնում է ցամաքի շուրջ 30%-ը: Ա. լինում է բնական և արհեստական: Բնական անտառները զբաղեցնում են Ա.-ների հիմնական տարածքը: Կարող են լինել՝ կուսական (արմատական), որը ցի կրել մարդու ներգործությունը. տարերային-կուսական, որը կազմավորվել է բնության և մարդու տարերային գործունեության

հետևանքով, բնական կարգավորվող, որտեղ մարդը հատումներ կիրառելիս պահպանում է մատղաշը՝ ապահովելով Ա.-ի ինքնավերականգնումը, արհեստական, որը հիմնադրել է մարդը տնկման կամ ցանքսի միջոցով: Ա. հանդիսանում է մթնոլորտում քթվածնի և ածխաթթու գազի հաշվեկշիռի հզոր կարգավորիչ: Նյութափոխանակության շնորհիվ Ա.-ում կուտակվում է հսկայական օրգանական նյութ՝ հիմնականում կենսազանգվածի ձևով: Մեկ հա-ում օրգանական նյութերի տարեկան կուտակումը կազմում է՝ արևադարձային անձրևային Ա.-ներում 28, քարեխամն գոտու խառն Ա.-ներում մինչև 10 տ/հա: Երկարակեցության շնորհիվ Ա.-ում կենսազանգվածի կուտակումը տասնյակ անգամ գերազանցում է բուսական մյուս տիպերի կենսազանգվածին:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒՆ, *Делянка; plot, piece of forestland*

Հատատեղի մի մասը, որը բաժանվում է անկյունացցայուններով՝ վրան նշված անտառաբաժնի ու անտառափակածի համարը: Հատատեղի Ա.-ների բաժանումը նպաստում է անտառօգտագործման աշխատանքների միշտ և ռաջիոնալ կազմակերպմանը:

ԱՆՏԱՌԱՔՈՒՇՈՒԹՅՈՒՆ, *Лесоводство; silviculture*

Անտառային ոլորտի գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Ուսումնասիրում է անտառաճման, անտառի արդյունավետության բարձրացման ու վերարտադրման մեթոդները: Ա. գիտություն է անտառի կյանքի, այնտեղ կատարվող կենսաբանական պրոցեսների և անտառկազմավորմանը մասնակցող կենսաձևերի փոխազդեցության մասին: Ա. խնդիրներից հարկ է նշել անտառտնկումները, որոնք լինում են միատարր (միայն մեկ տեսակից կազմված) և խառը (մի քանի տեսակներից կազմված): Ըստ տարիքի, լինում են միահասակ (երբ ծառերը հասակային միևնույն դասից են) և տարահասակ (երկու և ավելի հասակային դասերից): Ըստ ձևի լինում են պարզ (միահարկ) և բարդ (քազմահարկ): Առաջին շարահարկերում լինում են լուսասեր, իսկ երկրորդ և հաջորդ շարահարկերում՝ համեմատաբար ստվերասեր տեսակներ: Ըստ հասունացման աստիճանի, անտառները լինում են՝ մատղաշ, ծողանային, հասունացող, հասուն և զերհասուն: Անտառազուրկ տարածություններում անտառների աճեցումը կատարվում է արհեստական ցանքի, տնկման, երբեմն էլ կտրոնների միջոցով, մնացած դեպքերում՝ բնական եղանակով (սերմնաբույսերով կամ արմատաընձուղներով): Լեռնային պայմաններում հողապաշտպանման և ջրային ռեժիմի կարգավորման նպատակով ստեղծվում են խառը, քազմահարկ անտառներ: Ծառերի աճին զուգընթաց կատարվում են անտառափակումներ, ծողանային և հասունացող ծառատնեքում՝ միջանկյալ օգտագործման, խնամքի և սանիտարական հատումներ, հասունացած ծառատնեքում՝ հատումներ անտառօգտագործման համար: Հաժողումները կատարվում են աստիճանական, խմբային ընտրովի, կամավոր ընտրովի եղանակներով, այն հաշվով, որ միշտ ապահովվի սերմնային բնական վերականգնումը նոր ծառուտներում: Ցածրաբժեք և շիվային ծառում ունեցող անտառներում կատարվում են վե-

րակառուցման հատումներ՝ այն զուգակցելով բնական վերականգնմանն օժանդակող միջոցառումներով և արհեստական անտառտնկմամբ:

ԱՆՏԱՌԻՄԱԿԱՆ (ԱՆՏԱՌԱՏՄԱՆ) ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, *Лесорастительное районирование; forest vegetation subdivision*

Պետական անտառային ֆոնդի տարածքի բաժանումը (զոնայական և ուղղաձիգ գոտիականությամբ) միավորների՝ ելնելով տեղի հողակլիմայական պայմաններից և անտառի տիպից: Ա.Շ. ցույց է տալիս անտառների աշխարհագրական բազմազանությունը, դրանց ֆիզիկաաշխարհագրական բաշխվածությունը:

ԱՆՏԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *Лесоведение; forestry*

Կենսաբանական գիտություն անտառի մասին: Հանդիսանում է անտառի կյանքը բնորոշող գիտելիքների միասություն: Ա. ուսումնասիրում է անտառների աճման և զարգացման կենսաբանական գործոնները և դրանց փոխադարձ կապը միջավայրի հետ: Ա. ելնելով տնտեսության պահանջներից, մշակում է անտառների օգտագործման և վերարտադրության հարցերը՝ հենվելով բույսերի անատոմիայի, ֆիզիոլոգիայի, բուսաբանության, կենդանաբանության, օդերևութաբանության, հողագիտության և գիտության այլ ճյուղերի վրա:

ԱՆՏԱՌԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔ, *Лесопокрытая площадь; forested area, forest cover*

Տարածք, որն զբաղեցված է բնական անտառներով կամ պետական անտառային ֆոնդ փոխադրած միակցված անտառտնկարկներով:

ԱՆՏԱՌԱԿ, *Роща, перелесок; grove, copse*

Ոչ մեծ, հաճախ շրջապատից տարբերվող, միահասակ ծառատեսակներից կազմավորված անտառամաս:

ԱՆՏԱՌԱԳԱՏՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ, *Лесорубочный участок; felling area, plot, parcel*

Տարեկան հատատեղի մի մաս (տեղամաս):

ԱՆՏԱՌԱԳԱՏՄԱՆ ՏՈՄԱ, *Лесорубочный билет; felling licence, wood ticket*

Անտառահատման և անտառանյութի բացթողման գրանցումների ստուգման հիմնական փաստաթուղթ:

ԱՆՏԱՌԱԳԱՏՎԱԾ, *Выдел лесной; sub-compartment*

Անտառի որոշակի հատված, որը անտառամասերից ունի հիմնական հատկանիշների (ձևի, կազմի, ծազման, հասակայնությանը, բոնիտետի, տիպի, լրիվությանը և այլն) նկատելի տարբերություն:

ԱՆՏԱՊԱՂՈՂ, *Лесная почва; forest soil*

Անտառածածկ հողի վերնաշերտը: Պարունակում է անտառային փովածքի մասնակիորեն հանքայնացված մնացորդներ: Օգտագործվում է պարտիզահող ստանալու համար:

ԱՆՏԱՊԱՂՈՒԽԱՅՅԻՆ ԲԱԶԱ, *Лесосырьевая база; forest resource base*

Պետական անտառային ֆոնդի տարածք, որն ամրացված է անտառահողմը մթերող ձեռնարկությամբ:

ԱՆՏԱՊԱՂՈՂԵՂՎԱԿՍԱՆԳ ԺԱՄԱՆԱԿՎԱՇՐՋԱԼՆ, *Лесопожарный период; forest fire period*

Ժամանակաշրջան, որն առանձնապես վտանգավոր է հրդեհների ծագման ու տարածման համար: Պայմանավորված է եղանակով: Լեռնային լայնատերև և սաղարթավոր անտառներում Ա. Ժ. է ամռան երկրորդ կեսը և աշնան սկիզբը: Ասեղնատերևավոր անտառներում՝ զարման և ամռան ամիսները:

ԱՆՏԱՊԱՆԵՑՈՒՄ, *Лесовыращивание; forest planting, forest growing*

Անտառանյութ և այլ մթերքներ ստանալու, ինչպես նաև անտառի բազմակողմանի հատկությունների լավագույն դրսևորման նպատակով անտառտնտեսվարման տեսական դրույթների գործնական կիրառում:

ԱՆՏԱՊԱՆՍԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, *Лесорастительные условия; forest growing conditions*

Կլիմայական, լեռնագրական, հիդրոլոգիական և հողային պայմանների համալիր, որը պայմանավորում է անտառային բուսականության աճը և անտառի դինամիկան:

ԱՆՏԱՊԱՆՍԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԻՊ, *Тип лесорастительных условий; type of forest growing conditions*

Անտառածածկ և ոչ անտառածածկ տարածքի անտառածման համանման պայմանների միազուսմարտություն: Անտառային տիպոլոգիայի դասակարգման միավոր, որը կիրառվում է անտառի և անտառապատման համար նախատեսված տարածքները դասակարգելիս:

ԱՆՏԱՊԱՍՍԻ ՍԱՔՐՈՒՄ ՀԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ, *Очистка мест рубок; cleaning of cut plot*

Հատման մնացորդների հավաքումը և հեռացումը հատատեղից կամ նրանց այնպիսի վիճակի բերելը, որը չի խանգարի անտառի սերմնային բնական վերականգնմանն ու մատղաշի նորմալ աճին: Հատատեղում հատման մնացորդները կազմում են զգալի ծավալ (ծառուտի կենսազանգվածի 15-20 %) և հումք են հանդիսանում քիմիական, վիտամինային այրուղի, քլորոֆիլային մածուկի և այլ արժեքավոր նյութերի ստացման համար:

ԱՆՏԱՌԱՅԳԻՆԵՐ՝ *Leccobady; forest gardens*

Բնական կամ արհեստական անտառի թափախ վրա ստեղծված պտղատու և հատապտղատու տեսակների գերակշռությամբ հատուկ տնկարկ: Ունի ինչպես զրոսայգու, այնպես էլ պտղատու այգու գործնական նշանակություն: Ստեղծվում է վայրի պտղատուները պատվաստելով և ազնվացնելով: Դրանով անտառի որոշ հատվածներ վերածվում են հատուկ տնկարկների, որտեղից լրացուցիչ ստացվում է պտղատու մշակաբույսերի բարձրորակ թերջ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *Лесное товароведение; forest commodity science*

Անտառային ոլորտին վերաբերող գիտական ուղղություն, որն ուսումնասիրում է անտառային ապրանքների (անտառանյութի, փայտամշակման, թղթի ու ցելյուլոզի և անտառի կողմնակի օգտագործման մթերքների) կիրառական հատկությունները, մշակում դրանց դասակարգումն ու ստանդարտները, քացահայտում քնափայտի պահպանման, տեղափոխման և օգտագործման պրոցեսում որակի վրա ազդող գործոնները:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, *Лесная промышленность; forest industry*

Անտառային համալիրի ճյուղ, որն զբաղվում է անտառանյութի մթերմամբ, փայտանյութի վերամշակմամբ և այլ գործունեությամբ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ, *Лесной доход, результат; forest income, result*

Անտառնտեսվարման արդյունքում ստացված բոլոր ապրանքների (փայտանյութ, ոչ-փայտյա անտառանյութ և այլն) ամբողջությունը դրամական արտահայտությամբ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ, *Лесное пастбище; forest pasture*

Պետական անտառային ֆոնդի մեջ մտնող խոտաբույսերով ծածկված տարածք, որն օգտագործվում է անասունների արածեցման համար՝ առանց անտառին վնաս պատճառելու: Որպես Ա. Ա. առանձնացվում են ինչպես անտառածածկ, այնպես էլ ոչ անտառածածկ տարածքներ: Ա.Ա. արգելվում է առանձնացնել արգելոցներում, արգելավայրերում, ազգային պարկերում, անտառապարկերում, գիտական կամ պատմական նշանակություն ունեցող անտառներում, պաշտպանական անտառաշերտերում, հակաէրոզիոն տնկարկներում, սանիտարական և առողջարանային նշանակության անտառներում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՎՎԱՅԱԳՐՈՒՄ, *Лесная сертификация; forest certification*

Անտառանյութի (հիմնականում փայտանյութի) կայուն ստացման և իրացման գնահատման համակարգ: Աշխարհում գոյություն ունեն անտառային վկայազրու-

ման մի քանի համակարգեր. անտառային հոգեքարծուների խորհուրդ, Դամանվոր-պական անտառային վկայագրման խորհուրդ և այլն:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԲՈՐՍԱ, *Биржа лесная; forest bourse*

Անտառանյութի բաց պահեստ: Նախատեսված է անտառից անտառանյութի ստացման, կուտակման համար: Ծառայում է որպես բնափայտի փոխաբեմնման կետ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՍՍԱԿԵՅՈՅՅՈՒՆ, *Лесной ценоз (лесное сообщество); forest phytocenosis*

Բուսական հիմնական տիպերից մեկը, որի բարդ բազմաշարահարկային կա-ռուցվածքում հիմնական դերը պատկանում է ծառերին:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴԵՆԴՐՈՒԲԱՅՍԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ, *Лесное дендроразнообразие; forest dendrodiversity*

Տե՛ս Անտառային դենդրոֆլորա:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴԵՆԴՐՈՖԼՈՐԱ, *Лесная дендрофлора; forest dendroflora*

Անտառային համակեցությունը ներկայացնող ծառերի ու թփերի տեսակային բազմազանություն:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ, *Лесной доход; forest profit*

Անտառային պետական ֆոնդի օգտագործումից պետական բյուջե մուտքագր-վող դրամական միջոցներ: Ա.Ե.-ի տնտեսագիտական ելակետը հանդիսանում է ան-տառտնտեսվարման վրա ներդրած հասարակական ու արտադրական ծախսերի փոխհատուցումը և արտադրության հետագա ընդլայնման համար կուտակումների ա-պահովումը: Հիմնականում ստացվում է արմատի վրա անտառի վաճառքից, որի մեջ բացի բնափայտի արժեքից, մտնում է նաև խեժի, կեղևի և այլ նյութերի վաճառքից ստացված գումարը, որը կազմում է Ա.Ե.-ի 60-90%-ը, և փայտանյութի երկրորդական տեսակների իրացումից գոյացած միջոցները:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՉԱՆԳԱԾ, *Лесной массив; forest massive*

Անտառածածկ որոշակի տարածք, որը զատվում է բնական սահմաններով (գետ, լիճ, լեռներ), այլ հողատեսքերով (մարգագետին, վարելահող) կամ բնակավայ-րերով: Կարող է լինել մի քանի հարյուրից մինչև մի քանի տասնյակ հազար հա: Ա.Ձ.-ի ներսում կարող են լինել բազատներ, ոչ անտառածածկ տարածքներ և այլն:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԷՆՏՈՍՈՂՈՒԿԱ (ՄԻՋԱՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ), *Лесная энтомология; forest entomology*

Փսիտություն միջատների մասին: Ուսումնասիրում է անտառում բնակվող մի-ջատները, նրանց փախադարձ կապը ծառատեսակների հետ, զանգվածային բազ-

մացման պատճառները, նրանց հասցրած վնասը և օգուտը: Դանդիսանում է անտառի պաշտպանության տեսական հիմքը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԹԱՂԻՔ, *Лесная подстилка; forest litter*

Անտառի սաղարթի տակ հողի մակերեսին անտառային կենսացենոզի բափուկի կուտակումը, որը ձևավորվում է թաղիքային շերտով՝ ստեղծելով բարենպաստ միջավայր կենդանիների ու միկրոօրգանիզմների համար: Թաղիքի տարբեր շերտերում օրգանական թափուկը զտնվում է քայքայման և հումիֆիկացիայի տարբեր աստիճաններում: Ա.Թ.-ի հզորությունը պայմանավորված է ծառուտի կազմով, ձևով, լրիվությամբ, հասակով, կենդանի ծածկոցի տիպով և նրա տարածվածության աստիճանով, հողի ջրային ռեժիմով, կլիմայական պայմաններով, կրծող կենդանիների զործուներության ակտիվությամբ և այլ գործոններով: Ա.Թ. լինում է 3 տիպի՝ մուլ կամ փուխր. առաջանում է լայնատերև ծառատնկիներից կազմավորված ծառուտներում՝ բարձր ջերմաստիճանի, ցածր խոնավության պայմաններում. կոպիտ կամ թթու. առաջանում է ասեղնատերևավոր և մանրատերև սաղարթավոր անտառներում՝ բարձր խոնավության և ցածր ջերմաստիճանի պայմաններում. մոդեռն. հանդիսանում է նախորդ երկու տիպերի միջինը: Լայնատերև սաղարթավոր հասուն անտառներում տարեկան անտառային թափուկը հասնում է մինչև 3000 կգ/հա, չոր տիպի ասեղնատերևավոր անտառներում՝ 3000-6000 կգ/հա, իսկ թարմ և խոնավ տիպերում՝ 25-30%-ով ավելի: Ունի հողառաջացման կարևոր նշանակություն: Այն կարգավորում է հողի քիմիական ռեակցիան, ջրային ռեժիմը, ֆիզիկական հատկությունները, բարձրացնում թերրիությունը, պայմաններ ստեղծում անտառի սերմնային վերականգնման համար:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԹՓՍՏԵՍԱԿՆԵՐ, *Лесные кустарники; forest bush species*

Անտառներում ենթանտառը ներկայացնող թփերը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԻՆՏՐՈՂՈՒԿՑԻԱ, *Лесная интродукция; forest introduction*

Տվյալ տարածքում բնականորեն չաճող, չհանդիպող նոր ծառատեսակների ներմուծումը և արհեստականորեն բազմացումը և աճեցումը անտառային մշակույթներում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԽՈՏՅԱՐՔԵՐ, *Лесные сенокосы; forest hayfields*

Անտառային ֆոնդում առկա տարածքներ, որոնք պիտանի են խոտհնձի համար: Ա.Խ. առանձնացվում են անտառաշինության և հողաշինության հիման վրա, ոչ անտառային տարածքում, երբեմն էլ չվերականգնված հատատեղում, որտեղ դեռևս չի նախատեսվում վերականգնում անտառաշակության եղանակով, ինչպես նաև այն տարածքներում, որտեղ պահանջվում է բարելավման միջոցառումների (չորացում, հրկիզում...) կիրառում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱԾԿՈՅԻ ԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Самнютость крон леса; forest canopy closure*

Տե՛ս Աադարթի միակցություն:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ, *Лесные древесные породы; forest tree species*

Ծառատեսակներ, որոնք աճում են անտառային համակեցություններում և ներկայացնում ծառային շարահարկը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՆՏԱՌՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՏՎԱՆԻՇՆԵՐ,

Лесоэкологические свойства древесных пород; forest ecological features of tree species

Ծառատեսակների կենսաբանական և էկոլոգիական այն հատկանիշները, որոնք անտառաբուծության համար ունեն գործնական նշանակություն: Առանձնապես կարևոր են ծառատեսակների պահանջը կլիմայական պայմանների, լույսի, ջերմության, տեղումների քանակի և նրանց բաշխման, օդի խոնավության, քամու և հողի նկատմամբ, աճման առանձնահատկությունները, դիմացկունությունն անբարենպաստ գործոնների նկատմամբ, երկարակացությունն ու արտադրողականությունը աճման տարբեր պայմաններում: Այդ հատկությունների իմացությունը հնարավորություն է տալիս անտառտնտեսվարման շնորհիվ ապահովել ծառերի բարձր արդյունավետությունը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱ, *Экология лесных древесных пород; ecology of forest tree species*

Կենսաբանական գիտության ուղղություններից մեկը: Ուսումնասիրում է ծառաբույսերի և շրջակա միջավայրի փոխհարաբերությունը: Ընդգրկում է ինչպես առանձին ծառատեսակների փոխազդեցությունը միմյանց վրա, այնպես էլ ծառուտի և շրջակա միջավայրի համակողմանի գործոնների (կլիմա, հող, կենդանական աշխարհ, բուսական այլ կենսածներ) փոխազդեցությունը: Գասակային տարբեր փուլերում ծառաբույսերը հանդես են բերում էկոլոգիական տարբեր հատկություններ, ուստի ուսումնասիրվում է տվյալ տեսակի օժտոգնեզի ընթացքում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՐԿԱՍՏՐ, ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՐԿԱՍՏՐ, *Лесной кадастр; forest cadastr, (survey), state forest cadastre*

Պետական անտառների հաշվառման ցուցակ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՐԿԱՎՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆ, *Лесная пирология; forest pyrology*

Ուսումնասիրում է անտառային հրդեհները, դրանց հետևանքով առաջացած փոփոխությունները և պայքարի եղանակները:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՂԵՐ, *Лесные почвы; forest soils*

Անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՒՄՈՒՍ, *Лесной гумус; forest humus*

Օրգանական նյութ, որը գոյանում է բուսական մնացորդների քայքայումից՝ հումուսային բնորոշ նյութերի առկայությամբ և կազմում է անտառային հողի վերին բերրի շերտը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ, *Лесные ресурсы; forest resources*

Հասարակության նյութական և կուլտուր-կենցաղային կարիքների համար անտառից ստացվող օգտակար մթերքներ: Ա.Ռ. վերականգնվող են և ճիշտ տնտեսվարման դեպքում՝ անսպառ: Լինում են բնափայտ քաղմատեսակ, տեխնիկական (խեժ, խցան, դաբաղանյութ, օրգանական ներկանյութեր), սննդամթերք (վալի, հատապտուղ, միրգ, ուտվող բույսեր, վայրի կենդանիների մոթեղեն), ալյուրային (խոտ, դալար ճյուղեր, տերևներ, կաղին և այլն), դեղաբույսեր: Ա.Ռ.-ի մեջ ընդունում են նաև նրա բնապահպանական հատկությունները և հասարակական օգտակարությունը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՐԴԵՂՆԵՐ, *Лесные пожары; forest fire*

Լանդշաֆտային հրդեհների տարատեսակ, որի ժամանակ հրդեհը տարերայնորեն տարածվում է անտառում: Ա. Գ.-ները լինում են գետնատարած, երբ այրվում են թափուկը, խաշամը, մանուսային և խոտային ծածկույթը: Գրդեհի տարածման արագությունը 1-3 մ/րոպե: Արագընթաց գետնատարած հրդեհի դեպքում այրվում են նաև ենթանտառը, մատղաշը: Սաղարթային հրդեհ-խոտածածկի, թափուկի, խաշամի հետ միասին այրվում է նաև ծառերի սաղարթը: Սաղարթային հրդեհի տարածումն ընթացում է թոփքածև, տարածման միջին արագությունը մինչև 40 մ/րոպե: Երբեմն գետնատարած և սաղարթային հրդեհները հանդես են գալիս միաժամանակ: Ստորգետնյա (տորֆային) հրդեհները բնութագրվում է 0.3-1.5 մ և ավելի տորֆային շերտի անբոց այրմամբ: Ստորգետնյա հրդեհի արագությունը չի անցնում օրական 7 մ-ից, տևողությունը՝ մեկ կամ մի քանի օրից մինչև մի քանի ամիս:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՐԴԵՂՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, *Классификация лесных пожаров; classification of forest fires*

Գործնականում ընդունված է 3 տիպի հրդեհ՝ ստորին կամ գետնատարած, վերին կամ սաղարթային և ստորգետնյա: Երբեմն առանձնացնում են նաև 4-րդ տիպը՝ բնային: Բացի նշված տիպերից, լինում են նաև խառը, երբ 2-րդ կամ 3-րդ տիպի հրդեհները հանդես են գալիս միասին, և անցումային, երբ մի տիպի հրդեհը փոխարկվում է մյուսով: Գետնատարած հրդեհն ուժգնության տեսակետից բաժանվում է՝ թույլ,

մեղմ և ինտենսիվ: Ըստ տարածման բնույթի լինում է ակնթարթային, որը շարժվում է արագ, այրելով կենդանի ծածկոցը, թաղիքի վերին շերտը, մասամբ մատղաշն ու ենթանտառը, որը քրորշվում է դանդաղ տարածմամբ՝ ընդգրկելով ողջ թաղիքը և ծառաքների հիմքը: Սաղարթային հրդեհները բաժանվում են՝ փոքրկային, որն արագ անցնում է ծառերի վերին մասով՝ այրելով ճյուղերը, և համատարած, որի կրակն ավելի կայուն է և ընդգրկում է ողջ սաղարթը: Ստորգետնյա հրդեհը լինում է խոր ստորգետնյա և մակերեսային (քնորոշ է տորֆային հողերին):

ԱՆՏԱՈՒԱՅԻՆ ՀՐԴԵՂՆԵՐԻ ՀԱՆՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Частота лесных пожаров; frequency of forest fires

Յուզանիշ, որն արտահայտում է որևէ տարածքում մեկ սեզոնում կամ բազմամյա տարիների միջին հրդեհների քանակը:

ԱՆՏԱՈՒԱՅԻՆ ՀՐԴԵՂՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ, Обнаружение лесных пожаров; detection of forest fires

Ծխի կամ այլ նշանների հիման վրա անտառ՝ ծագած հրդեհի օջախի ճիշտ որոշում: Այն կատարվում է գետնի վրա տեղակայված՝ ռուկ դիտակետերի, օդանավերի, տիեզերական սարքերի և դիտարկման այլ մ` ջրցններով:

ԱՆՏԱՈՒԱՅԻՆ ՀՐԴԵՂՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ, Тушение лесных пожаров; extinguishing (putting out) of forest fires

Բաղկացած է հետևյալ փուլերից՝ հրդեհի կանխում (տարածման արգելակում), մեկուսացում (սահմանափակումը որոշակի տարածքում), հանգցնելուց և հրդեհված տարածքի հսկումից, որպեսզի թույլ չտրվեն նոր բռնկումներ:

ԱՆՏԱՈՒԱՅԻՆ ՀՐԴԵՂՆԵՐԻ ԵՎ ՀՐԴԵՂԱՎՏԱՆԳԱԿՈՒՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ; Карты лесных пожаров и пожарной опасности; forest fires and fire danger maps

1:25 000 - 1:50 000 մասշտաբի անտառային հրդեհների տարածումը և հրդեհավտանգավորության տարբեր կարգեր ունեցող անտառտարածքները պատկերող անտառտնտեսական միջոցառումների քարտեզներ:

ԱՆՏԱՈՒԱՅԻՆ ՀՐԴԵՂՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Периодичность лесных пожаров; periodicity of forest fires

Անտառի որոշակի տարածքում հրդեհների կրկնման օրինաչափության հաջորդականությունը: Տարբերվում են՝ բազմամյա, սեզոնային և օրական: Որոշակի պայրերականությանը կրկնվող հրդեհները պայմանավորված են կլիմայական չոր և խոնավ տարիների հաջորդականությամբ: Տարվա շրջանակներում առանձնացվում են հրդեհավտանգ սեզոնները, որոնք գործնականում ընդհանուր են որոշակի գոտիների համար: Հրդեհների բռնկումը մեծ մասամբ արժանագրվում է ժամը 13-15-ը:

ԱՆՏԱՐԱՎՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ, *Лесные культуры; forest cultures, forest plantings (FP)*

Ա.Մ. անտառավերականգնման, անտառածածկ տարածքի ընդարձակման, անտառբարելաման նպատակներով տնկված կամ սերմերի ցանքսի միջոցով արհեստական հիմնադրված անտառտնկարկներն են, որոնք դեռ չեն միակցվել և դրանցում տարվում են անտառաշակման (հողի փխրեցում, քաղհան) աշխատանքեր: Բնական անտառավերականգնումը հաճախ պահանջում է փոքրածավալ հատումներ, երբ այս կամ այն պատճառով անհնար է ապահովել սերմնային վերարտադրությունը կամ այդ պրոցեսում տեղի է ունենում տեսակային անցանկալի փոփոխություն, անհրաժեշտություն է զգացվում կիրառել անտառաձևակութային միջոցառումներ: Անտառաձևակութային ստեղծման հաջողությունը ծառատեսակների ճիշտ ընտրությունից և տեղաբաշխումից բացի, կախված է ագրոտեխնիկական միջոցառումների ճիշտ և ժամանակին կիրառումից: Ա.Մ. լինում են համատարած, երբ բացակայում է բնական վերականգնումը, և մասնակի, երբ բնական վերականգնումն անբավարար է, կամ ընթացում է ոչ հիմնական ծառատեսակներով: Ա.Մ.-ում գլխավոր տեսակի ընտրությունը պայմանավորված է անտառաձման պայմաններով, հիմնականում հողի արտադրողականությամբ, տեսակի էկոլոգիկենսաբանական առանձնահատկություններով և հիմնադրվող մշակույթի նպատակայնությամբ: Անտառաճեցման պայմաններից և տեսակի աճման տեմպից ելնելով, 5-12 տարեկան միակցված անտառային մշակույթները որպես կանոն փոխադրվում են անտառածածկ ֆոնդ:

ԱՆՏԱՐԱՎՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, *Густота лесных культур; density of FP*

Միավոր (սովորաբար մեկ հա) անտառաձևակութային տարածքում աճող ծառերի և թփերի քանակ: Լինում է սկզբնական տնկման (կամ ցանքսի) խտություն, և տնկարկի խտություն՝ հաշվարկի ժամանակ տնկարկում աճող ծառերի և թփերի փաստացի քանակը: Տնկարկի սզբնական օպտիմալ խտությունը պայմանավորված է տնկվող (ցանվող) տեսակների աճման էներգիայով և բնակլիմայական գործոններով: Անբարենպաստ պայմաններում տնկում են համեմատաբար խիտ: Ծառերի պսակի միակցվելուց հետո տնկարկի խտությունը կանոնավորում են խնամքի հատումների միջոցով:

ԱՆՏԱՐԱՎՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՉՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Сохранность лесных культур; safety (integrity) of FP*

Որոշակի ժամանակամիջոցում հիմնադրված կենսունակ անտառաձևակութային և տնկված ընդհանուր տարածքի հարաբերությունը տոկոսներով: Կենսունակ է համարվում, երբ 1-2 տարեկան հասակում կաշողականությունը 25 % -ից ավելի է: Ավելի մեծ հասակի անտառաձևակութային կենսունակության նվազագույն %-ը որոշվում է ելնելով տնկարկի նպատակայնությունից:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՇԿՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՇՎԱՌԿ, Учет состояния лесных культур;
registration of FP status

Հիմնադրված անտառաշակույթներում աշնանը ընտրում են փորձնական հաշվարկային շարքեր և գրանցում բույսերի վիճակը: Մահացած բուսակները հանում են և որոշում չորացման պատճառները: Երեք տարեկանից մեծ տնկարկներում որոշում են պատճառները, ինչպես նաև բույսերի միջին քարծրությունը, տրամագիծը և դեմոգրամետրիկ մյուս տարրերը: Լարային տնկարկի դեպքում հաշվում են 10 շարքից մեկը (10%-ը): Հրապարակներով և փոսերով տնկման դեպքում հարշվարկը կատարում են ելնելով տնկման ձևից, հաշվի ամսելով տնկված բույսերի քանակը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՇԿՈՒՅԹՆԵՐԻ ՏԻՊ, Тип лесных культур; type of FP

Անտառային մշակույթներ, որոնց հիմնադրման տեխնոլոգիայի, տեսակային կազմի և տեղաքաշխման բնույթը միանման են:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՇՐՋԱՅՑ, Обход лесной; forest observe, forest beat

Անտառպետության տարածքում անտառամաս, որն առանձնացվում և ամրագրվում է անտառապահին (չրջայցողին) պահպանության համար: Ա. Շ.-ի տարածքը պայմանավորված է անտառպետության տարածքով, անտառապահպանման պայմաններով և տվյալ անտառապահի համար նախատեսվող աշխատանքների ծավալով:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՇՐՋԱՆՑ, Обьезд лесной; forest detour (circuit)

Անտառային մի քանի շրջայցերի միավորում, որը կցվում է մեկ շրջայցողի հսկողությանը: Շրջայցը կատարվում է ծիով կամ այլ փոխադրամիջոցներով: Շրջայցման տարածքի մեծությունը կախված է միավորված շրջայցերի քանակից և ընդհանուր տարածքից. հարավային շրջանների անտառտնտեսություններում լինում է 1.5-2.0 հազարից մինչև 20 հազար հա, իսկ Ափրիի անտառարդուումաբերական շրջաններում՝ 40-60 հազար հա:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՉԱՓԻՉ ԲԱՆՈՆ, Скоба мерная лесная; forest measurement rampon, stobie

Գերանների և սողանյութի ընդլայնական կտրվածքը չափող գործիք: Կազմված է 60 սմ երկարության նշվարկված քանոնից, որի մի ծայրն ունի փոքր կեռիկ (ցցվածք):

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐ, Лесные склады; forest store houses

Անտառմթերող ձեռնարկության հիմնական օդակներից մեկը, որտեղ կատարվում է անտառանյութի ժամանակավոր պահեստավորում, գերանների մշակում, անտառանյութի քարծում և առաքում սպասողին: Այստեղ կազմակերպվում է մեքենա-

յացված, ավտոմատացված արտադրական համալիր, կատարվում են փայտանյութի ակզբնական մշակման տեխնոլոգիական բոլոր պրոցեսները:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱՐՆԵՐ, *Запасы лесные; forest resources (FR)*

Անտառային ռեսուրսների օգտագործման ենթակա թույլատրելի մասը, որը կարող է արտահայտվել ըստ ծավալի, քանակի, որակի, ձևի ու տպաթեքային տեղադրիչի:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՂԱՍՄ, *Государственный лесной кадастр; forest state cadastre*

Անտառների և անտառային հողերի քանակական և որակական տվյալների գրանցման, տնտեսական գնահատման, ինչպես նաև անտառների դասակարգման պարբերաբար նորացվող համակարգ:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԼԱՆՇԵՏՆԵՐ, *Лесные планшеты; compartment map*

Պլանշետները ծառայում են որպես աշխատանքային քարտեզներ, որոնց միջոցով անտառտնտեսավարող օրգանները իրականացնում են իրենց գործունեությունը. բնության մեջ առանձնացնում են հատատեղերը, խնամքի հատումների և անտառավերականգնման վայրերը և գրանցում են տնտեսական գործունեության հետևանքով անտառային ֆոնդում առաջացած փոփոխությունները: Միևնույն ժամանակ պլանշետները միջանկյալ նյութեր են, որոնց հիման վրա հետագայում կազմվում են անտառտնկման պլանները և սխեմատիկ քարտեզները: Պլանշետները կառուցում են ճշգրտված ֆոտոսխեմաների, ֆոտոպլանների և տեղագրական քարտեզների հիման վրա:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆՀՎԱՐԿ, *Учет лесных ресурсов; calculation of FR*

Կատարվում է անտառտնտեսության, անտառաշահագործման աշխատանքների պլանավորման նպատակով: Լինում է անտառային ռեսուրսների հիմնական հաշվարկ, հատատեղի հաշվարկ, անտառային ֆոնդի ընթացիկ փոփոխությունների հաշվարկ: Ա.Ռ.Գ.-ում կիրառում են հետևյալ մեթոդները՝ հաշվարկային (առանձին ժառերի հաշվառում և գնահատում), այքաչափային, օդալուսանկարահանման (դիտողական և երկրաչափական հանույթի միջոցով), ընտրովի գնահատման ստատիկ մեթոդ և այլն:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, *Воспроизводство лесных ресурсов; reproduction of FR*

Անտառից ստացվող բնափայտի և բուսական այլ հումքի անընդմեջ վերականգնում:

ԱՆՏԱՊԱՅԻՆ ԱՍՎԱԳԻՆ, *Лесные таксы; forest tax, forest rate*

Արձատի վրա կանգուն ծառի արժեքը: Որոշվում է պետության կողմից անտառային ռեսուրսների օգտագործումը փոխհատուցելու անտառօտնոտնությանը՝ անտառային ռեսուրսների պահպանման, վերարտադրության ապահովման համար: Ա. Ս. պայմանավորված է աշխարհագրական վայրով, տնտեսական զարգացմամբ և անտառապատվածության աստիճանով:

ԱՆՏԱՊԱՅԻՆ ՍԵԼԵԿՑԻԱ, *Лесная селекция; forest selection*

Գիտություն բնական պոպուլյացիաների կամ արհեստականորեն ստացված ծառային ձևերի ու սորտերի մասին: Անտառարձուծության քննազավառ, որն զբաղվում է կենսաբանորեն կայուն, տնտեսական քարձրարժեք ծառային ձևերի ու սորտերի ստացմամբ ու քարձրացմամբ: Ա. Ա.-ում առանձնացվում են հետևյալ ուղղությունները՝ ընդհանուր արդյունավետության, որակի, արտակարգ պայմանների, ախտածին բակտերիաների և վնասատուների նկատմամբ դիմացկունության: Հիմնական եղանակներն են՝ ընտրություն (իիբրիդացում, մուտագենեզ, մասսայական, անհատական, խմբային): Ա.Ս. կատարվում է ելնելով մեկ կամ մի շարք հատկանիշներից:

ԱՆՏԱՊԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ (ԱՐՏՈՆԱԳԻՐ), *Сертификат на лесные семена; certificate on forest seeds*

Սերմնաստուգիչ կայանների կողմից տրվող փաստաթուղթ, որը վկայում է սերմերի որակը:

ԱՆՏԱՊԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԻ ՍՏԱՆՊԱՐՏՆԵՐ, *Стандарты на лесные семена; standarts on forest seeds*

Ցանքսի համար նախատեսված սերմերի որակական ցուցանիշները՝ ժլունակությունը, որակի գնահատականը: Ա.Ս.Ս.-ի նպատակն է ապահովել մթերվող և պահվող սերմերի որակը: Պարտադիր են սերմ մթերող, պահող և օգտագործող բոլոր կազմակերպությունների համար:

ԱՆՏԱՊԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, *Упаковка лесных семян; packing of forest seeds*

Սերմերի փաթեթավորման տարաները կարող են լինել փափուկ քամրակա կամ վուշի 50 կգ տարողությամբ պարկեր, որոնց մեջ փաթեթավորում են ամուր կեղևով սերմեր (կաղին, ընկույզ, հաճար), և չոր՝ փայտյա արկեր, տակաթներ, զամբյուղներ, մետաղյա տուփեր, ապակյա խոշոր անոթներ և այլն:

ԱՆՏԱՊԱՅԻՆ ՍԵՐՄՆԱԲՆԱՈՒԹՅՈՒՆ, *Лесное семеноведение; forest seeds science*

Կենսաբանական գիտության ճյուղ անտառային ծառերի ու քիների սերմերի կենսաբանության մասին:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՆԵՐՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, *Лесное семеноводство; forest seed growing, forest s. breeding*

Անտառոնտեսության գործունեության բնագավառ, որի խնդիրն է գեներտիկական սելեկցիայի ճանապարհով ստանալ ժառանգական և ցանքային բարձր հատկանիշներով օժտված անտառային տեսակների սերմեր, մշակելու դրանց պահպանման և արդյունավետ օգտագործման եղանակները: Ա.Ս.-յան նպատակն է բարձրացնել անտառների արդյունավետությունը, դիմացկունությունը և փայտանյութի որակը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՆԵՐՄԱԲՈՒԹՅԱՆ ԱՍՏՆԱԿՆԵՐԸ, *Лесной сеянец; forest seedling*

Անտառում (տնկարկում) ծառի կամ թփի սերմերից առաջացած երիտասարդ բույս, որը կարող է օգտագործվել որպես տնկանյութ: Անտառային մշակույթներում և պաշտպանական անտառտնկարկներում սովորաբար օգտագործում են ասեղնատերևավորների 1-3 տարեկան, իսկ լայնատերև սաղարթավոր տեսակների 1-2 տարեկան սերմնաբույսեր:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՆԵՐՄԱԲՈՒԹՅՆԻ ԱՏՎԵՐԱՑՈՒՄ, *Оттенивание лесных сеянцев; shadowing of forest seedling*

Տնկարկում սերմնաբույսերի պաշտպանումը արևի կիզիչ ճառագայթների ազդեցությունից: Սովբերացման համար օգտագործում են փայտից, եղեգնից պատրաստած վահանացանցեր կամ ծղոտ, որը փայտացանցի վրա տեղադրվում է ցանքամարզերում 45° բեքությամբ: Սերմերի զանգվածային ծելուց 20-30 օր հետո ստվերացնող ցանցերը հավաքում են, իսկ մինչև այդ ցանցավահանն աստիճանաբար նստացնում են:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ, *Лесные площади; forest areas*

Անտառային պետական միասնական ֆոնդի մեջ մտնող անտառածածկ և ոչ անտառածածկ տարածք: Ա.Տ.-ների հիմնական ուղղությունն անտառաճեցումն է:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏՆԿԱԳԱՇՏ (ՊԼԱՆՏԱՑԻԱ), *Плантация лесных пород; forest species plantation*

Արագած կամ տեխնիկական բարձրարժեք տեսակների հատուկ աճեցման տարածք, որտեղից ստացվում է հումք՝ քիմիական կամ փայտամշակման արդյունաբերության համար: Հիմնադրվում է տվյալ անտառանյութի աճեցման ժամկետը կրճատելու, նրա բարձր ելքի որակական հականիշների ապահովման, անտառաճեցման տեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԻՊՈԼՈՂԻԱ, *Лесная типология; forest typology*

Անտառային տարածքում տարբեր ֆիտոցենոզները բնորոշող հատկանիշների հանրագումարային հասկացություն: Քանի որ անտառների զգալի մասը ենթարկվում

Է մարդու տնտեսական գործունեությանը, ուստի տարբերում են անտառային տիպերի երկու կատեգորիա՝ արմատական տիպ, որը զերծ է մնացել մարդու գործունեությունից, և ածանցյալ տիպ, որն առաջացել է մարդու ներգործության հետևանքով և հաճախ զուգակցվում է անտառում տեսակափոխությամբ: Եթե ածանցյալ անտառային տիպ են բափանցում նախկինում աճած ծառատեսակների սերմեր, ապա տվյալ անտառազանգվածում հնարավոր է արմատական տիպի վերականգնումը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆԿԱՐԱՆ, *Лесной питомник; forest nursery*

Անտառնշակույթների հիմնադրման համար տնկանյութ ամեցնող մասնագիտացված տնտեսություն: Ըստ չափերի լինում է փոքր (մինչև 3 հա տարածություն), միջին (3-30 հա) և խոշոր (30 հա-ից ավելի): Ըստ գործունեության տևողության լինում է մշտական և ժամանակավոր: Վերջինս գործում է մինչև 5 տարի ժամանակով, հիմնադրվում է տվյալ տնտեսության սահմաններում, ապագա անտառտնկման վայրում կամ նրա մոտակայքում: Մշտական Ա. Տ. ինքնուրույն տնտեսվարկային տնտեսություն է, որը կազմակերպվում է երկարատև գործունեության նպատակով: Հիմնադրվում է հարթ (մինչև 3⁰ թեքության), սննդանյութերով հարուստ հողերի վրա: Ունենում է հետևյալ բաժինները՝ ցանցային (կտրոնային և սածիլային բաժիններով), դպրոցական (պտղատու, հատապտղային և զեղազարդ տեսակների տնկանյութ ամեցնելու համար): Տնկանյութերի ամեցման տեխնոլոգիան ընդգրկում է տարածքի ցանցաշրջանառություն, հերթիցիոնների, հանքային և օրգանական պարարտանյութերի օգտագործում, սերմերի նախացանցային մշակում, ցանքս, տնկանյութերի ամեցման քազմակողմանի միջոցառումներ, տնկանյութի համումը, ընտրությունը և թաղումը (պահպանում): Ա.Տ.-ում սերմերի ցանքսի ձևի ընտրությունը (զծային, ժապավենաձև, ակոսային) պայմանավորված է մշակվող ծառատեսակներով:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆԿԱՐԱՆԻ ՄԱՅՐԱԿԱՆ (ՑՈՒ) ԲԱԺԻՆ, *Маточное отделение лесного питомника; mother (branch) division of forest nursery*

Անտառային տնկարանի տարածքի մաս, որտեղ ամեցվում են սերմեր ու կտրոնների ելանյութ հանդիսացող ծառեր և թփեր:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ, *Ведение лесного хозяйства; management of forest enterprise*

Անտառշինական նախագծերով նախատեսված համալիր միջոցառումների իրականացում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Лесное хозяйство; forest enterprise*

Նյութական արտադրության քնազավառ, որն իրականացնում է անտառների ուսումնասիրությունը, հաշվառումը, վերարտադրությունը, պահպանումը, պայքարը վնասատուների և հիվանդությունների դեմ, անտառօգտագործումը և անտառային օբ-

սուրսների օգտագործման վերահսկումը, անտառածածկ տարածքի ընդարձակումը և երկարատև անտառածեցման ապահովումը, անտառի արդյունավետության բարձրացումը, անտառային ֆոնդի մեջ մտնող հողերի արդյունավետ օգտագործումը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶԱՄԱԿՈՒՄԻ (ԿՎԱՐՏԱԼ), *Лесной квартал; forest compartment*

Անտառի դրոշակի մաս, որը սահմանագծով և անտառուղիներով (կածաններով), ճանապարհներով կամ բնական սահմաններով (զետ, լիճ, լեռնաշղթա): Ա.Զ-ների բաժանումը կարող է լինել բնական, երբ սահմանագատվում է բնական սահմանագծերով, (Ա.Զ. ստացվում է տծև), խառը, երբ դրանց սահմաններից որևէ մեկը լինում է բնական, մյուսները՝ արհեստական, և արհեստական, երբ Ա.Զ. սահմանագատվում է անտառուղիներով:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԶԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ, *Лесное картирование; forest mapping*

Զարտեզագրության այն բաժինը, որն զբաղվում է անտառապատ տարածքների վերաբերյալ քարտեզագրական համապատասխան նյութերի պատրաստման, օգտագործման և ուսումնասիրման հարցերով: Անտառային քարտեզագրական հիմնական նյութեր են հանդիսանում անտառային պլանշետները, անտառտնկման պլանները, սխեմաները և անտառային ամենատարբեր քարտեզները:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՂԵՐԵՎՈՒԹԱՐՔԱՆՈՒԹՅՈՒՆ, *Лесная метеорология; forest meteorology*

Գիտական ուղղություն, որն ուսումնասիրում է անտառտնտեսվարման և օդերևութաբանական երևույթների միջև եղած կապը:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳԻՐՔ, *Лесной кодекс; forest code*

Կարգավորում է տվյալ երկրի անտառային հարաբերությունները, անտառների և անտառային հողերի կալույն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

ՀՀ-ում առաջին Ա.Օ. ընդունվել է 1994 թ., որը բաղկացած էր 20 բաժնից և 85 հոդվածից: Ներկայումս գործող Ա.Օ. ընդունվել է 2005թ. նոյեմբերին, որն ընդգրկում է 62 հոդված:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ, *Лесное законодательство; forest legislation*

Երկրում անտառային բնագավառում հարաբերությունները կարգավորում են տվյալ հանրապետության Սահմանադրությամբ, անտառային օրենսգրքով, քաղաքացիական օրենսգրքով և այլ իրավական ակտերով:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖԻՏՈՒՊԱԹՈՒԼՈԳԻԱ, *Лесная фитопатология; forest phytopathology*

Ազդրկենսաբանական գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է անտառային ծառաբույսերի ու բնափայտի հիվանդությունները, դրանց առաջացման պատճառները, հարուցիչները, բույսերի և արտաքին միջավայրի փոխազդությունները, բացառապատում հիվանդությունների զարգացման օրինաչափությունները և տեսական այլ հարցեր:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴ, *Лесной фонд; forest estate*

Երկրի բոլոր անտառները միասին կազմում են անտառների պետական միասնական ֆոնդը: Համաձայն ՀՀ Հողային օրենքի, անտառային ֆոնդի մեջ մտնում են ինչպես անտառածածկ, այնպես է ոչ անտառածածկ տարածքները, որոնց կոչված են ապահովելու անտառտնեսության կարիքները: Անտառային ֆոնդի մեջ չեն մտնում մասնավոր, կոլեկտիվ գյուղացիական, համայնքային հողատարածքներում եղած ծառերը, թփերը, պաշտպանական տնկարկները, երկաթգծերը, ավտոճանապարհները երիզող կանաչ գոտիները և քաղաքային կանաչ տնկարկները: Ա.Ֆ. բացարձակ պետական սեփականություն է, և նրա օգտագործումը կատարվում է պետության կողմից: Անտառային ռեսուրսների բացառապատման նպատակով պարբերաբար կատարվում է անտառային ֆոնդը կազմում է 459.9 հազար հա, որից անտառածածկ է շուրջ 334.1 հազար հա (իսկ նրա պետության տարածքի 11.2 %-ը):

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՄՐԺՇՆՔԱՅ (ԴԻՆԱՄԻԿԱ), *Динамика лесного фонда; dynamics of forest estate*

Անտառային ֆոնդի փոփոխություն, որը տեղի է ունենում ժամանակի և տարածության մեջ անթրոպոգեն և բնական գործոնների ներգործությամբ:

ԱՆՏԱՌԱՅՈՒԹ, *Лесоматериал; forest material*

Կտրած ծառից ստացված նյութ, որը պահպանում է բնափայտի բնական ֆիզիկական կառուցվածքը և քիմիական կազմը: Անտառանյութը լինում է սղոցված, ճեղքված, ճառագայթային, ֆրեզացված, մանրացված: Ըստ տեսակների Ա. բաժանվում է՝ մշակված, որը ստանում են գերանից ու պահպանվում են բնափայտի բնական հարստությունները, և անմշակ՝ գերաններ, որոնք ստացվում են ծառի բունը ճյուղերից մաքրելուց հետո (կեղտով կամ կեղևահան վիճակում)՝ տարբեր չափերի վրա ընդլայնակի սղոցելով:

ԱՆՏԱՌԱՅՈՒԹԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՎՈՐՈՒՄ, *Стандартизация лесоматериала; standardization of forest materials*

Թողարկվող փայտանյութի տեսականու տեխնիկական նորմերի (ստանդարտների) մշակում, որոնք պետք է ապահովեն տնտեսության ավագ պահանջները և նրա զարգացման հեռանկարները:

ԱՆՏԱՌԱՎԱՆՑ ԵՐԱՆՆԵՐԻ, *Лесонабывточные работы; forest abundant regions*

Շրջաններ, որոնք այժի են ընկնում բարձր անտառապատվածությամբ, հատուկ և գերհատուկ ծառուտներով և անբավարար անտառաշահագործմամբ: Այս խմբին են պատկանում Արևելյան Սիրիի և Հեռավոր Արևելքի անտառները:

ԱՆՏԱՌԱՎԵՐՏԵՐԻ, *Лесные полосы; forest belts*

Ժապավենաձև և պաշտպանական անտառտնկարկներ, որոնք հիմնադրվում են վարելահողերում, ծորածորպերին, լեռնալանջերին, ճանապարհաեզրերին և այլ վայրերում: Ա.-երը բարելավում են շրջապատի միկրոկլիման և ջրային ռեժիմը, պաշտպանում հողերը էրոզիայից, պայմաններ ստեղծում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, քնական խոտածածկի արդյունավետության բարձրացման համար:

ԱՆՏԱՌԱՎԵՐՏԵՐԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ, *Конструкция лесных полос; construction of forest belts*

Անտառաշերտերի կառուցվածքի երկայնական պրոֆիլ, որով բնորոշվում է նրա քամեթափանցման աստիճանը: Պայմանավորված է տնկարկի բարձրությամբ, շարահարկայնությամբ, խտությամբ, ծառաթփային տեսակաշարով և այլ գործոններով, որոնք բնորոշում են անտառաշերտի ազդեցությունը շրջակա միկրոկլիմայի, առանձնապես քամու ռեժիմի վրա: Հիմնականում առանձնացվում են Ա.4.-ի 3 տեսակ՝ անթափանցելի, ցածկեն, քամեթափանց:

ԱՆՏԱՌԱՊԱՐ, *Лесник; forest-guard, forester, ranger*

Անտառապետությունում անտառի պետական պահպանությունն իրականացնող աշխատակից: Ա.-ին ամրացվում է անտառի որոշ զանգված, որտեղ նա պարտավոր է ստուգել անտառի անվնաս, խտիճնի և այլ բնույթի անտառօգտագործման փաստաթղթերը, կազմել անտառի անունների, որսի և հակահորեհային կանոնների խախտման վերաբերյալ ակտեր, հետևել հակահորեհային աշտարակների, հեռախոսային ու էլեկտրական գծերի, ճանապարհների ու կամուրջների վիճակին և դրանց վթարների ու անտառում վնասատուներով թռցված օջախների մասին ժամանակին տեղեկացնել անտառապետությանը: Ա. ղեկավարում է իր պահաքաժնու անտառի տնկման և ցանքսի աշխատանքերը, անտառմշակույթների խնամքը, միջանկյալ հատումները, սերմերի, պտուղների, սնկերի հավաքը: Ա.-ին տրվում է պահաքաժնի անձնագիր, համազգեստ, իսկ երբեմն էլ որսորդական հրացան:

ԱՆՏԱՌԱՊԱՐՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Лесообеспеченность; forest provision, forest supply*

Յուրացնիչ, որը ցույց է տալիս մեկ շնչին ընկնող անտառային ռեսուրսների հնարավոր օգտագործման չափը: Հաշվարկում են գլխավոր և միջանկյալ անտառօգտագործման տվյալներով:

ՄԵՏԱՌԱՊԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Лесу́щность; forest cover (percentage of forested land)*

Որոշվում է տվյալ տարածքի և դրանում առկա անտառների հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով: Ա.-յան աստիճանը կախված է ֆիզիկա-աշխարհագրական վայրից, հողակլիմայական պայմաններից: Նրա դիմամիկան պայմանավորված է քնական տարերային երևույթներով և մարդու տնտեսական գործունեությամբ: Տարբերում են՝ օպտիմալ Ա., հիդրոլոգիական Ա. և անհրաժեշտ նվազագույն Ա.:

ՄԵՏԱՌԱՄԱՍՈՒՄ, *Облесение; afforestation*

Արհեստական անտառների հիմնադրման շնորհիվ անտառագուրկ տարածքների ծառապատում: Կատարում են տնկման կամ սերմերի ցանքսի միջոցով: Ելնելով աշխարհագրական դիրքից, ռելիեֆից և անտառապատման նպատակներից՝ օգտագործում են ծառերի ու քիֆերի համապատասխան տեսակաչար և հողի մշակման տարրեր եղանակներ:

ՄԵՏԱՌԱՊԱՐԿ, *Лесопарк; forest park*

Բնական կամ արհեստական հիմնադրված քաղաքամերձ անտառներ, որոնք ծառայում են քնակչության կուլտուրական հանգստին: Բարելավում են քաղաքների սանիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները: Ա.-երը պետք է ունենան մեծ տարածություններ՝ մեկ մարդուն բաժին ընկնող միջին նորման մոտ 300 քմ է:

ՄԵՏԱՌԱՊԵՏ, *Лесничий; forest officer*

Անտառային տնտեսության մասնագետ, որը ղեկավարում է անտառապետությունում անտառի արդյունավետ օգտագործման, վերարտադրման, պահպանության և պաշտպանության համակողմանի միջոցառումները: Ա. որպես կանոն ունենում է մասնագիտական բարձրագույն կրթություն, ենթարկվում է անտառտնտեսության տնօրենին և զլխավոր (ավագ) անտառապետին: Նա իր տրամադրության տակ ունի տեխնիկական միջոցեր, օգնական, քանվորներ և անտառապահներ, կազմակերպում է վերջիններիս տեխնիկական ուսուցումը:

ՄԵՏԱՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, *Лесничество; forest district*

Անտառտնտեսության տարածքային արդյունաբերական միավոր, որտեղ իրականացվում են՝

- անտառի կցում (խարանում) և անտառմթերողներից ու քնակչությանն անտառանյութի բացթողում, կողմնակի անատօգտագործման կարգավորում,
- անտառանյութի և կողմնակի անտառօգտագործման կարգի ու կանոնների ճիշտ կիրառման հսկողություն,
- անտառի պահպանություն ու պաշտպանություն,

- անտառտնտեսական միջոցառումներ (անտառվերականգնման, խնամքի, անտառշինական և այլն),
- խնամքի հատումներ: Ա.-ում անտառտնտեսվարման պատասխանատուն անտառապետն է, որն իր գործունեությամբ ենթարկվում է անտառտնտեսության տնօրենին: Ա.-ի տարածքը կախված միջոցառումների ծավալից, կարող է լինել 5-8 հազարից մինչև մի քանի տասնյակ հազար հա:

ԱՆՏԱՌԱՏՈՒՄՍՏՎԱՆԱՆ, *Лесостепь; forest-steppe*

Անտառից տափաստան անցումային գոտի կամ ենթագոտի: Ա.-ին բնորոշ են միմյանց հաջորդող անտառային և տափաստանային զանգվածները և դրանց բնորոշ ծառաթփերն ու խոտաբույսերը:

ԱՆՏԱՌՏՈՒՆԴՐԱՎ, *Лесотундра; forest-tundra*

Անտառից տունդրա անցումային գոտի: Եթե տունդրան գրեթե զուրկ է ծառաբույսերից, ապա Ա.-ում հանդիպում են անտառի կղզյակներ, որտեղ ծառերը մեծ մասամբ լինում են կոր, ծ ոճոված բներով:

ԱՆՏԱՌԱՐՉՈՒՄԱՐԲԵՐՎԱԿԱՆ ԳՈՏԻ, *Лесопромышленная зона; forest-industrial zone*

Ընդգրկում է բոլոր անտառները, քաղցի առաջին խմբում դասված անտառներից, արգելոցներից, արգելավայրերից, ջրապաշտպան և պաշտպանական այլ նշանակություն ունեցող անտառներից: Հայաստանում Ա.Գ.-ում անտառներ չկան:

ԱՆՏԱՌԱՐՉՈՒՄԱՐԲԵՐՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ԱՆՏԱՌԱՐՉՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ), *Лесопромхоз; forest enterprise*

Տնտեսավարկային ձեռնարկություն, որն իրեն ամրացված որոշակի տարածքի վրա իրականացնում է անտառաշահագործման, անտառվերականգնման, անտառի պահպանման և անտառանյութի բացթողման աշխատանքներ:

ԱՆՏԱՌԲՐԵՆԼԱՎԱԿԱՆ ՖՈՆԴ, *Лесомелиоративный фонд; forest amelioration fund, f. a. estate*

Հողատարածք, որտեղ նախատեսված է հիմնադրել պաշտպանական (անտառաբարելավման) տնկարկներ:

ԱՌՍԱՅՐԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄ, *Лесотаксационное районирование; forest zony zoning*

Բնության շրջանացման տարատեսակ, որի ժամանակ կատարվում է անտառային տարածքի բաժանում՝ ելնելով անտառի ածման բնույթից, նրա ապրանքային կառուցվածքից և արտադրողականությունից, առանձին ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից: Ա. Շ. կարևոր նշանակություն ունի անտառների ա-

ծի հաշվարկման, անտառզնահատման միասնական նորմերի մշակման և կիրառման գործում:

ԱՆՏԱՌԳԱՂԱՅՈՒՄԱՆ ՈՒՐՎԱՆԿԱՐ, *Лесотаксационный абрис; forest inventory draft schema*

Անտառային մեկ կամ մի քանի քառակուսիների դաշտային զծագիր, որը կազմում է անտառզնահատողը անտառի գույքագրման ժամանակ: Ա.Ու. կազմում են միլիմետրաթղթի կամ աերոլուսանկարի վրա: Ուրվանկարում արտահայտում են քառակուսիների ներսում զնահատման անտառատվածների սահմանները, դրանց տարածքների դասավորությունը, համարները, ոռոգման առուները և այլ օբյեկտների տեղաբաշխումը: Գնահատումը կատարվում է երկու փուլով՝ նախնական, մինչև դաշտային աշխատանքների սկսվելը, երբ հանվում է երկրաբաշխական հիմքը՝ նշելով նշանաձողերը: Հիմնական նախապատրաստված զծագրի վրա անտառզնահատողը նշում է անտառատվածների սահմանները, համարակալում և կազմում անտառի զնահատման քնութագիրը: Անտառզնահատման ուրվագծի մասշտաբը պայմանավորված է անտառաշինության կարգով (1:5000-ից մինչև 1:50000):

ԱՆՏԱՌԳԱՂԱՅՈՒՄԱՆ ԱՍՏԻԿ ՄԵԾՈՂ, *Статистический метод таксации леса; forest inventory statistic method*

Ատատիկ դիտարկումները հնարավոր է կատարել հետազոտվող օբյեկտի փոփոխականության օրինաչափությունները իմանալու պարագայում: Փոփոխականությունը չափում են որոշակի գործակցով, որն ստացվում է փորձնական ուսումնասիրությունների տվյալների թվաբանական միջին մեծության (M) և նրա համեմատությամբ դիտվող շեղումների (E) տարբերությամբ, որի տոկոսային արտահայտությունը M-ի հետ կոչվում է փոփոխության գործակից (C): Դիտարկումների թիվը (n) որոշվում է հետևյալ բանաձևով՝ $n = C^2/p^2$, որտեղ C-ն փոփոխության գործակիցն է, իսկ p-ն՝ դիտարկումների ճշտությունը:

ԱՆՏԱՌԳԱՂԱՅՈՒՄՈՂ, *Таксометр; forest inventor*

Ինժեներ անտառաշինարար, որը կատարում է անտառի հաշվառման և ուսումնասիրման աշխատանքներ: Նրա պարտականություններն են՝ զեռոնգիական հանույթի աշխատանքների ղեկավարումը, ծառուտի զնահատումը, նրա ուրվապատկերների գծումը, անտառզնահատման քարտերի լրացումը և անտառզնահատման տարածքում կատարված անտառտնտեսական աշխատանքների վերլուծությունը, վարում է անտառզնահատման փաստաթղթերը և դրամական գործարքները, հավաքում տվյալներ անտառաշինական նախագծի մշակման համար և մասնակցում նրա կազմմանը: Միջանտառաշինական ժամանակաշրջանում մասնակցում է վերահսկման աշխատանքներին:

ԱՆՏԱՌԻ ԳՆԱԴԱՏՈՒՄ (ՏԱՔԱՍՑԻՎ), *Taxация леса; forest assessment*

Տեխնիկական համակողմանի միջոցառում, որի նպատակն է բացահայտել անտառային ռեսուրսների քանակական և որակական բնույթը ստատիկ ու դինամիկ վիճակում: Ա.Գ. հիմք է տալիս նպատակասլաց պլանավորելու անտառտնտեսության զործունեությունը, զնահատելու անտառի դինամիկ զարգացումն աճման տվյալ պայմաններում, վերահսկելու անտառտնտեսավորումը: Կատարվում է անտառի պարբերական գույքագրման և պլանային նյութերի օգտագործման միջոցով: Նրա գիտական հիմքում ընկած է անտառզնահատում առարկան, որն ուսումնասիրում և զարգացնում են անտառային գիտահետազոտական հիմնարկներում, անտառագիտական բուհերում:

ԱՆՏԱՌԻ ԴԵԳՐԱՂԱՅԻՎ, *Degradация леса; forest degradation*

Բնական կամ անթրոպոգեն զործոնների ազդեցության տակ անտառային միջավայրի էկոլոգիական վիճակի վատթարացման հետևանքով անտառային տնկարկների կենսունակության աստիճանական կորուստ և մահացում:

ԱՆՏԱՌԴԵՖԻՑԻՏԱՅԻՆ (ՍԱԿԱՎԱՆՏԱՌԱՅԻՆ) ՇՐՋԱՆՆԵՐ, *Лесодефицитные районы; scarce forest lands*

Սակավանտառ շրջաններ, որտեղ փայտանյութի պահանջը գերազանցում է տեղում մթերման հնարավորություններին: ՈՂ-ի եվրոպական մաս, Միջին Ասիայի հանրապետություններ, ԳԳ և այլն, որտեղ անտառների մեծամասնությունն ունի պաշտպանական նշանակություն և դասվում է առաջին կարգի անտառների շարքը:

ԱՆՏԱՌԵՁՐ, *Опушка леса; forest edge*

Անտառի եզրային մասը, որից հետո անտառային համակեցության տարածքը փոխվում է բուսական այլ տիպով: Լեռնային օելիեֆի պայմաններում լինում է վերին Ա. և ստորին Ա.:

ԱՆՏԱՌՆԱՐԱՐՉԱԿՈՒՄ (ԱՆՏԱՌԱՊԱՏՈՒՄ), *Лесоразведение; forest extension (afforestation)*

Ոչ անտառային հողերի վրա անտառային տնկարկների հիմնադրում և աճեցում: Գիմնականում իրականացվում է սակավ անտառածածկ շրջաններում՝ զանգվածային կամ շերտերով պաշտպանական անտառտնկարկների հիմնադրման եղանակով:

ԱՆՏԱՌԻ (ԱՆՏԱՌԱՅՈՒԹԻ) ԽՈՏԱՆՈՒՄ, *Браковка леса; forest penalization, repudiation*

Որոշվում է անտառից մթերվող փայտանյութի տեսականու որակը բնութագրող ցուցանիշներով: Կատարվում է պետական որոշակի ստանդարտներին և տեխնիկական պայմաններին համապատասխան:

ԱՆՏԱՌԻ (ԾԱՌՈՒՄՏԻ) ՏԱՌԻՔ, *Возраст (древостоя) леса; forest age*

Անտառի տարիքը հաշվում են հասակային դասերով: Մեկ դասը, նայած աճման պայմաններին և տեսակի աճման տեմպին, ընդգրկում է 5 օրացուցային տարի: Արևադարձային լայնություններում աճող ծառերի հասակային դասը, անկախ տեսակից, երբեմն ընդունվում է 40 տարի: Անտառը լինում է միահասակ, երբ կազմավորված է մեկ հասակային խմբին պատկանող ծառերից: Տարահասակ, երբ ծառուտի կազմավորմանը մասնակցում են երկու և ավելի դասի պատկանող ծառեր: Արհեստական տնկարկները, ինչպես նաև կոճղաշիվային ծագում ունեցող ծառերը լինում են միահասակ: Օգտագործվում է նաև անտառի հասակային փուլ հասկացությունը՝ մատղաշ (ծողանային), միջին տարիքի, հասունացող, հասուն, գերհասուն:

ԱՆՏԱՌԻ ԱՊԻԱԿԱՆ ԱՍԻՄԱՆ, *Альпийская граница леса; forest alpine boundary*

Բնորոշ է լեռնային երկրներին: Միջին լայնություններում այն սկսվում է ծովի մակարդակից մոտ 2000 մետր բարձրությունից, իսկ Գարավային Կովկասում, այդ բվում և Գայաստանում՝ 2200-2400 մ բարձրությունից:

ԱՆՏԱՌԻ ԱՄՐԱՅՈՒՄ, *Закрепление леса; forest fastening, strengthening*

Օգտագործման և պետական առաջադրանքների կատարման նպատակով անտառի ամրացումն անտառտնտեսություններին, նախարարություններին ու գերատեսչություններին և այլ ձեռնարկություններին:

ԱՆՏԱՌԻ ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅՈՒՆ, *Товарность леса; forest marketability*

Ծառուտում բնափայտի պաշարի որակը՝ տնտեսության օգտագործման առումով: Որոշում են շինափայտ և վառելափայտ ունեցող ծառերի հարաբերությամբ՝ մեծության և տեսականու հետագա բաժանումով: Հասուն և գերհասուն ծառուտների գնահատման ժամանակ օգտագործում են հատուկ ցուցանիշ՝ ապրանքայնության դաս, որը որոշում են ընդհանուր պաշարից շինափայտի ելքով (%) կամ շինափայտային ծառերի քանակով (%):

ԱՆՏԱՌԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ, *Промышленная таксация леса; industrial assessment of forests*

Ծառուտներից և առանձին ծառերից ստացվելիք փայտանյութի արդյունաբերական տեսականու որոշման եղանակ:

ԱՆՏԱՌԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ, *Продуктивность леса; forest production, forest efficiency*

Տե՛ս Ծառուտի արդյունավետություն:

ԱՆՏԱՌԻ ԱՐՏԱՊԻՐՈՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Производительность леса; forest productivity, output*

Անտառի կողմից որոշակի ժամանակահատվածում միավոր տարածքում ստեղծած տարբեր մթերքների (բարիքների) քանակությունն է: Անտառի արտադրողականությունը համարժեք է նրա արդյունավետությանը որոշակի ժամանակահատվածում: Ընդունված է տարբերել անտառի փաստացի և պտտեցիալ արտադրողականություն:

ԱՆՏԱՌԻ ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆԱՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՄ, *Содействие естественному возобновлению леса; promotion to natural forest regeneration*

Միջոցառումներ, որոնք ուղղված են նպաստելու անտառի սերմնային բնական վերականգնմանը, ստեղծելու նորմալ պայմաններ սերմերի ծլման և աճի համար: Հիմնականում կիրառում են կոպիտ թաղիքի և հողի փխրեցում, ենթանտառի նոսրացում, անհրաժեշտության դեպքում՝ հիմնական ծառատեսակի սերմերի օժանդակ ցանքս, իսկ չվերականգնված հատատեղերը, հողի թարելաման նպատակով, ժամանակավորապես տրամադրվում են գյուղատնտեսական մշակաբույսերին:

ԱՆՏԱՌԻ (ԾԱՌՈՒՏԻ) ԲՈՆԻՏԵՏ, *Бонитет леса (древостоя); bonitet, stand bonitet (site index)*

Անտառում հողային պայմանների բերրիության չափանիշ՝ արտահայտված ծառերի աճով, պայմանավորված նրանց հասակով, լրիվությամբ, կազմով, ձևով, ծագումով (սերմնային, վեգետատիվ): Որոշում են համապատասխան հասակում՝ ծառերի միջին բարձրությամբ:

ԱՆՏԱՌԻ ԳԼԽԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, *Главное пользование леса; forest principal exploitation*

Անտառի հումքային ռեսուրսների օգտագործման եղանակ, որն ապահովում է անտառից այնպիսի քանակի և որակի բնափայտի ստացում, որն առավելապես բավարարի տնտեսության փայտանյութի պահանջը: Ա.Գ.Օ. ժամանակակից պայմաններում այս կամ այն տարածաշրջանի անտառօգտագործման բնագավառում գրավում է կարևոր, բայց ոչ գլխավոր դեր: Անտառօգտագործման կարգը և ծավալը պայմանավորված են տվյալ անտառի բնությով: Ա.Գ.Օ. կարգավորվում է հատուկ կանոններով, որոնք հետապնդում են հասուն բնափայտի մթերման զուգակցմանը անտառվերականգնման հետ՝ պահպանելով անտառային բնական կենսաբերկրացեմոզը: Այդ կանոնները տարբերակված են ստանդարտային խմբերի՝ ելնելով տվյալ անտառի տնտեսական նշանակությունից: Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքով նախատեսված են անտառօգտագործման հետևյալ ուղիները՝ փայտանյութի մթերում անտառվերականգնման, սանիտարական և անտառի միջանկյալ հատումների ճանապարհով, երկրորդական հումքի (պտուղների, հատապտուղների,

մնկերի, դեղաբույսերի, խոտի և այլն) մթերումը, ինչպես նաև անտառի օգտագործումը գիտահետզոտական, առողջապահական և որսորդական նպատակներով:

ԱՆՏԱՌԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, *Инвентаризация леса; forest inventory*

Անտառի նկարագրման և քարտեզագրման համակրղմանի միջոցառում: Կատարվում է անտառաշինության ժամանակ կամ հատուկ հանձնարարականով:

ԱՆՏԱՌԻ (ԾԱՌՈՒՄԻ) ԼՐԻՎՈՒԹՅՈՒՆ, *Полнота леса (древостоя); forest basal-area, f. completeness*

Անտառի զնահատման կարևոր ցուցանիշներից մեկը, որն օգտագործվում է ծառուտի վիճակի, նրա պաշարի որոշման և անտառտնտեսական միջոցառումների կանխատեսման համար: Ա.Լ. որոշում են ծառերի բների 1.3 մ բարձրության վրա մակերեսների զումարով (անտառզնահատման լրիվություն) կամ ծառերի սաղարթի միակցվածության աստիճանով (անտառաբուծական լրիվություն): Անտառզնահատման և անտառաբուծական լրիվության հարաբերությունը հաստատուն չէ, փոխվում է՝ կախված ծառատեսակից, հասակից, պայմաններից: Տարբերում են անտառի բացարձակ և հարաբերական լրիվություն: Բացարձակ լրիվությունն արտահայտվում է 1 հա-ում բոլոր ծառերի բնի մակերեսների զումարով կամ բոլոր ծառերի սաղարթի պրոյեկցիաների զումարով (մ²): Հարաբերական լրիվությունն արտահայտվում է մեկ ամբողջի տասնորդական մասերով (0.9, 0.7, 0.8 և այլն), ընդ որում, որպես մեկ լրիվություն ընդունվում է լրիվ միակցված տնկարկը: Բարդ և խառը ծառուտներում լրիվությունը որոշում են տարբեր շարահարկերի և տեսակների համար առանձին:

ԱՆՏԱՌԻ ԽՆԱՍՔԻ ԲՈՂԵՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, *Богемский способ ухода за лесом; bohemian method of forest maintenance*

Խնամքի հատումների տարատեսակ՝ զետնամբծ հատում, երբ կտրում են տարբեր դասի (ըստ Կրաֆտի) թույլ աճած ծառերը՝ նպաստելով 2-րդ շարահարկի կազմավորմանը:

ԱՆՏԱՌԻ ԽՆԱՍՔԻ ԴԱՆԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, *Датский способ ухода за лесом; Danish method of forest maintenance*

Հաճախակի կատարվող նորացումների միջոցով անտառի աճի կարգավորումը: Նորացման առաջին հատումը կատարվում է 20-25, հաջորդը՝ 30-40 տարեկան հասակում՝ 3 տարին մեկ, 40-50 տարեկան ծառուտում՝ 4 տարին մեկ, 50 տարեկանում՝ 5 տարին մեկ և այսպես շարունակ, մինչև ծառուտի հասունացումը: Հատումների ժամանակ թույլած ծառերի և անցանկալի ծառատեսակների հետ մեկտեղ հեռացվում են նաև գերաճ ծառերը: Խնամքի այս եղանակի կիրառման դեպքում ծառերը դասակարգվում են 4 խմբում՝ 1. գլխավոր (հիմնական) ծառեր, 2. ծառեր, որոնք խանգարում են հիմնական ծառերին, 3. ծառեր, որոնք նպաստում են հիմնական ծառերի

ամին, 4. չեզոք ծառեր: 40-50 տարեկան հասակում ծառերի բունը նշում են օղակածն և պիտակավորում, այնուհետև, աստիճանաբար հատելով, կարգավորում են նրանց քանակը և տեղաբաշխումը միավոր տարածքում: Ա.Խ.Ղ.Ե. հիմնականում կիրառելի է ստվերատար ծառերից կազմված ծառուտներում, մանրաչափ բնափայտի սպառման մեծ պահանջարկի դեպքում:

ԱՆՏԱՌԻ ԽՆԱՍՔԻ (ՄԻՋԱՆԿՅԱԼ) ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Рубки (Промежуточные рубки леса) уходя за лесом; intermediate forest cuttings*

Կատարվում է ծառուտի ամբողջ կյանքի ընթացքում միևնույն հասունացումը: Նպատակ է հետապնդում բարելավելու անտառի կազմը, ծառաբների ձևը, բնափայտի տեխնիկական որակը, կրճատելու բնափայտի տեխնիկական հասունացման ժամանակաշրջանը, ապահովելու տնտեսությանը որոշակի տեսականու փայտանյութով, բարձրացնելու աճման ընթացքում 1 հա-ից ստացվող փայտանյութի ծավալը և միավոր տարածքի բնափայտի պաշարը, բարելավելու անտառի սանիտարական վիճակը, աճեցնելու բացասական գործոնների նկատմամբ դիմացկուն ծառուտներ:

ԱՆՏԱՌԻ ԽՈՒՄԲ, *Группа леса; forest group*

Համաձայն Անտառային օրենսգրքի, նախկին ԽՍՀՄ պետական անտառային ֆոնդը, ելնելով տնտեսական նշանակությունից, աճման վայրից ու դերից, բաժանվում էր 3 խմբի, իսկ կոլտնտեսային անտառները՝ 2 խմբի: Ելնելով Ա.Խ-ից որոշվում են անտառի ռեժիմը և անտառտնտեսվարման կարգը: 1-ին խմբում դասվում են այն անտառները, որոնք ունեն ջրապաշտպան, սանիտարահիգիենիկ, առողջապահական, պաշտպանական նշանակություն, և նրանց համար սահմանված է անտառօգտագործման խիստ սահմանափակ ռեժիմ: Բնափայտի մթերումը թույլատրվում է միայն անտառվերականգնման, խնամքի և սանիտարական, ինչպես նաև ցածրարժեք ծառատեսակներից կազմավորված ծառուտների վերակառուցման նպատակով կատարվող հատումների ժամանակ: 2-րդ խմբում դասվում են՝ պաշտպանական նշանակություն ունեցող հարթավայրային անտառը, ինչպես նաև 1-ին խմբի մեջ չդասված գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների սահմանափակ հույս ունեցող անտառները, որոնց օգտագործումը կարող է հանգեցնել նրանց պաշտպանական հատկությունների խաթարմանը: 2-րդ խմբի անտառներում թույլատրվում է կատարել համատարած հատատեղային, աստիճանական և ընտրովի հատումներ: 3-րդ խմբում ընդգրկվում են անտառաշատ շրջանների անտառները, որոնք հիմնականում ունեն արդյունաբերական նշանակություն և կոչված են տնտեսությանն անընդմեջ ապահովելու բնափայտով՝ առանց վնասելու անտառի պաշտպանական հատկությունները: Այստեղ թույլատրվում է կիրառել համատարած հատատեղային հատումներ: Հայաստանի անտառներն ամբողջովին դասված էին 1-ին խմբի՝ պաշտպանական անտառներ, սոցիալական նշանակության անտառներ և հատուկ պահպանվող տարածքներ:

ԱՆՏԱՌԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, *Устойчивое управление лесам; forest sustainable management*

Անտառների պահպանություն, պաշտպանություն, վերականգնում, անտառապատում և արդյունավետ օգտագործում՝ պահպանելով անտառների ինքնավերականգնման կարողությունը, միաժամանակ ապահովելով դրանց բնապահպանական, սոցիալական, տնտեսական պոտենցիալի արդյունավետ օգտագործումը ներկա և ապագա սերունդների համար:

ԱՆՏԱՌԻ ԿԱՐԳ, *Категория леса; forest category*

Տե՛ս Անտառի խումբ:

ԱՆՏԱՌԻ ԿՈՂՄԱՐԴՅՈՒՄԻ ԹԱՍԱԳՈՐԾՈՒՄ, *Побочное лесопользование; non-timber forest products utilization and services*

Անտառային ֆոնդի (անտառածածկ և ոչ անտառածածկ տարածքում) ամեն տիպի օգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, մեղվապահություն, վառելիքայտի մթերում, վայրի պտուղների, հատապտուղների, դեղաբույսերի, սնկերի հավաքում և այլն), որոնք կախված չեն փայտանյութի հետ: Անտառտնտեսության համար ունի տնտեսական կարևոր նշանակություն:

ԱՆՏԱՌԻ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Спелость леса; forest maturity*

Անտառային ռեսուրսի վիճակ, որը բավարարում է նրա օգտագործման պահանջները: Համապատասխանում է այն հասակին, երբ անտառային ռեսուրսը մեկ միավոր տարածքից հասնում է առավելագույն արտադրողականության: Տարբերակում են Ա.Հ.-յան մի քանի հասկացություն՝ 1) անտառի քանակական հասունացում. ծառերի կամ ծառուտի այն հասակը, երբ բնափայտի միջին աճը հասնում է վերին սահմանին, այսինքն, երբ միջին և ընթացիկ աճը ունենում են առավելագույն մոտ ցուցանիշներ: Ա.Ք.Հ.-յան գործնական նշանակությունը՝ այն սահմանափակում է հատման հասակը, որը չի կարող ցածր լինել Ա.Հ.-յան տարիքից: 2) անտառի տեխնիկական հասունացում. նման է Ա.Ք.Հ.-մանը, սակայն որոշվում է ոչ թե բնափայտի ողջ ծավալի, այլ միայն նրա կոնկրետ տեսականու համար (զերան, շինափայտ և այլն): 3) անտառի տնտեսական հասունացում. որոշակի հասակում ողջ ծառուտի տնտեսական հասունացում. որոշակի հասակում ողջ ծառուտի արժեքն արժատի վրա (կանգուն ծառերի արժեքը)՝ առանց ընդգրկելու անտառի վերարտադրման համար պահանջվող ծախսերը: 4) անտառի տնտեսական հասունացում. ելնում է տարեկան մաքուր եկամտից, որն ստացվում է անտառային ռեսուրսի մեծածախ գնի և համապատասխան ռեսուրսի մթերման ու վերականգնման արժեքի տարբերությունից: 5) անտառի բնական հասունացում. բնորոշում է այն հասակը, երբ սկսվում է ծառուտի բնական մահացումը: 6) անտառի վերածի հասունացում. հասակ, որում անտառն ապահովում է (սերմնային կամ կոճղաշիվային) բնական վերարտադրությունը:

ԱՆՏԱՌԻ ԴԱՏՈՒՄ, *Рубка леса; forest cutting, f. felling*

Անտառից ծառերի կտրման և դուրսքերման պրոցես: Կարող են հատվել առանձին ծառեր, խումբ ծառեր կամ առանձին անտառամասեր՝ ելնելով ծառի տարիքից, ծառուտի հասակային փուլից, վիճակից, հատման նպատակայնությունից և եղանակից: Դատումները նպաստում են անտառի քնական վերականգնմանը:

ԱՆՏԱՌԻ ԳԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆՏԱՊՊԱԹՈՒՆՈՒԿԱԿԱՆ) ԳԵՏԱՁՈՏՈՒՄ, *Лесопатологическое исследование; forest pathological study*

Կատարում են անտառի սանիտարական վիճակը, վնասատուների ու հիվանդությունների զանգվածային բազմացման և բռնկումների օջախներն ու ժամկետները բացահայտելու նպատակով: Ստացված տվյալները հիմք են դառնում պլանավորելու և կազմակերպելու անտառապաշտպանական միջոցառումներ: Կազմակերպչական առումով Ա.Գ.Գ. կարող է կրել հաշվառման, հատուկ արշավախմբային, օպերատիվ, ընթացիկ և փորձարարական բնույթ:

ԱՆՏԱՌԻ ԳԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՎԱՌՈՒՄ, *Учет болезней леса; forest diseases record*

Ծառերի և քփերի սնկային հիվանդություններով վարակվածության աստիճանի որոշում: Կատարվում է անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների և սիստեմատիկ վերահսկման միջոցով:

ԱՆՏԱՌԻ ՍԱՔՐՍԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ, *Способы лесоразчистки; methods of forest cleaning*

Լինում են լրիվ և մասնակի: Լրիվ անտառաքրման դեպքում տարածքը մաքրում են ինչպես ծառերի և քփերի վերերկրյա մասից, այնպես էլ կոճղերից, իսկ մասնակի դեպքում հեռացվում է միայն վերերկրյա մասը: Լրիվ անտառաքրումը կատարվում է անտառային տնկարկներ հիմնադրելու, անտառի տակ եղած տարածքն այլ հողատեսքի վերածելու, ճանապարհաշինության և այլ նպատակներով, մասնակի անտառաքրումը՝ անտառի քառակուսիների ցանցի ստեղծման կամ լայնացման նպատակով:

ԱՆՏԱՌԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, *Промежуточное пользование лесом; Intermediate forest utilization*

Անտառաճեցման ընթացքում խնամքի և վերականգնման հատումների միջոցով փայտանյութի ստացում: Իրականացվում է բոլոր տեսակի անտառներում, հատման տարիքի չհասած ծառուտներում դադարեցվում է գլխավոր հատումները սկսելուց 10-20 տարի առաջ: 1-ին կարգի անտառներում արգելվում է անտառօգտագործման զլխավոր հատումների կիրառումը, Ա.Մ.Օ. կատարում են նաև հասուն և գերհաս-

սուն ծառուտներում: Ծավալը որոշվում է՝ ելնելով ծառուտի վիճակից, տեսակային կազմի բարելավման անհրաժեշտությունից:

ԱՄՏԱՌԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ (ԴԻՏԱԼՑ), *Мониторинг леса; forest monitoring*

Անտառների և անտառային հողերի վիճակի կանխատեսման նպատակով իրականացվող դիտարկումների, հետազոտությունների և գնահատման գործընթաց:

ԱՄՏԱՌԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱ, *Морфология леса; forest morphology*

Անտառագիտության բաժին՝ ծառուտի կազմի, ձևի, կառուցվածքի և նրա այլ առանձնահատկությունների մասին:

ԱՄՏԱՌԻ (ԾԱՌՈՒՄԻ) ԸՆԴԱՐԱՐՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ, *Ярусность леса; forest layering, f. stratification*

Անտառային համակեցությունը կազմված է մի քանի շարահարկից՝ ծառային, որը երբեմն բաժանվում է 1-3 ենթաշարահարկերի (ընդգրկելով մատղաշը), ենթանտառ, կենդանի ծածկոց (խոտածածկ), մամռաքարաքոսային ծածկույթ: Շարահարկերի մեջ չեն մտնում լիանաները, էպիֆիտ և պարազիտ բույսերը, որոնք աճում և հանդիպում են գրեթե բոլոր շարահարկերում: Տվյալ ծառատեսակը, կախված հասակային (սերնդային) փուլից կամ սաղարթում հարկաբաժանման հետևանքով կարող է միաժամանակ գտնվել տարբեր շարահարկերում: Որպես կանոն՝ բերրի հողերում, կլիմայական բարենպաստ պայմաններում ձևավորվում են բազմաշարահարկ անտառային համակեցություններ: Նման ծառուտներ են առաջացնում նաև լուսասեր ծառատեսակները, որոնց նոսր սաղարթից թափանցած լույսը հնարավորություն է տալիս ձևավորելու երկրորդ շարահարկը ստվերատար ծառատեսակներից:

ԱՄՏԱՌԻ ԴԱԳՊԱՆՈՒԹՅՈՒՆ, *Охрана леса; forest protection*

Չրդեհների, ինքնակամ զավթումների, ապօրինի ծառահատումների, արածեցումների, աղտոտման և օրենսդրությամբ արգելված անտառային կենսաբազմազանությանը և անտառային պաշարներին վնաս պատճառող այլ գործողությունների դեմ ուղղված համալիր միջոցառումների իրականացում:

ԱՄՏԱՌԻ ԴԱԳՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՏԱՌՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ, *Лесозащитные способы защиты леса; forest enterprise methods of forest protection*

Նախազգուշական միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են ստեղծելու անբարենպաստ էկոլոգիական պայմաններ անտառի վնասակար միջատների հիվանդությունների հարուցիչների բազմացման և տարածման համար՝ ապահովելու անտառի կենսունակությունն ու երկարակեցությունը: Ընդգրկում է հետևյալ միջոցառումները՝ անտառաճեցման ժամանակ կենսունակ սերմերի ու տնկանյութի օգտագործում, դրանք պահելու և փոխադրելու կանոնների կիրառում, հողակլիմայական պայմաններ

րին համապատասխան տեսակաշարի ընտրության, խառը և տարահասակ տնկարկների հիմնադրման, վերակառուցման ճանապարհով ծառուտների կազմի փոփոխում, հիվանդ, թույլ աճած, չորագագաթ ծառերի հեռացում, հատատեղերի ժամանակին մաքրում և այլն:

ԱՆՏԱՌԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒՄԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ, *Биологические способы (методы) защиты леса; Biological methods (ways) of forest protection*

Օրգանիզմների կամ դրանց կենսագործունեության ընթացքում առաջացած նյութերի համակողմանի օգտագործումն անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ:

ԱՆՏԱՌԻ ՊԱՏ, *Стена леса; forest wall*

Չատատեղին հարող անտառի առաջնամասը, որն ի տարբերություն անտառեզրի, զգայուն է քամիների նկատմամբ և շուտ ենթարկվում է քամետապավման: Կարևոր դեր է կատարում հատատեղում սերմնային բնական վերականգնման գործում:

ԱՆՏԱՌԻ ՊԱՐԵՏՈՒԹՅՈՒՆ, *Патрулирование леса; forest gardening*

Իրականացվում է գետնից կամ ինքնաթիռի միջոցով՝ բացահայտելու անտառային հրդեհները, հրդեհային անվտանգության կանոնների և այլ տիպի խախտումները: Ա.Պ. կապն անտառպետությունների և անտառտնտեսությունների հետ մշակվում է նախօրոք, ըստ երթուղիների, այն հաշվով, որ յուրաքանչյուր հայտնաբերված հրդեհի կամ նրա մարման մասին անմիջապես տեղեկացվի տնտեսությանը:

ԱՆՏԱՌԻ ՋՐԱՎԱՐԳԱՎՈՐԻՉ ԴԵՐ, *Водорегулирующая роль леса; forest water regulating role*

Անտառները կանխում են մթնոլորտային տեղումներից առաջացած մակերեսային հոսքը՝ վերածելով ստորգետնյա հոսքի: Նպաստում են աղբյուրների և գետերի ջրերի կայուն մակարդակի պահպանմանը: Տրանսպիրացիայի միջոցով գոլորշիացնելով մեծ քանակությամբ ջուր՝ կանխում են ճահճացումը, նպաստում հողի դրենաժին:

ԱՆՏԱՌԻ ՍԱՂԱՐԹ (ԾԱԾԿՈՑ), *Полог леса; forest canopy*

Ծառերի պսակների միասնություն, որը տեղաբաշխվում է մեկ կամ մի քանի շարահարկով: Պարզ ծառուտներում սաղարթն առաջացնում է մեկ շարահարկ, որտեղ ծառերի պսակները դասավորվում են մեկ հարթության վրա, ծառերի միջին բարձրությունից 10-15 % շեղումով: Բարդ և խառը ծառուտներում ձևավորվում է մի քանի շարահարկ: Վերին՝ գլխավոր շարահարկը, կազմում են լուսասեր, ներքին՝ ենթակա շարահարկը, ստվերատար ծառերը: Վերջիններս մեծ հասակում կարող են

դուրս գալ ասաջին շարահարկ: Ածման անբարենպաստ պայմաններում ասաջանում են պարզ միաշարահարկային ծառուտներ: Ա.Ա. ունի կարևոր անտառաբուծական և էկոլոգիական նշանակություն: Նրանով է պայմանավորված հողի մակերես հասնող մթնոլորտային տեղումների քանակը, մակերեսային գոլորշիացման ինտենսիվությունը, օդի հարաբերական խոնավությունը, սաղարթի տակ թափանցած լույսի քանակությունը, խաշամի քանակը և որակը, մակերեսային ու գրունտային ջրերի քանակը, անտառի սերմնային բնական վերականգնումը և այլն:

ԱՆՏԱՌԻ ԱՍԽՏԱՐԱԳԻԳԵՆԻԿ ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Санитарно-гигиеническое значение леса; sanitary-hygienic meaning of forests*

Արտահայտվում է բազմաթիվ դրական հատկանիշներով՝ անտառը կլանում է ածխաթթու գազ և արտադրում թթվածին, նվազեցնում է ուժեղ քամիների բացասական ազդեցությունը, հավաքում է փոշին, նվազեցնում աղմուկը, շնորհիվ բույսերի կողմից արտադրվող ֆիտոնցիդների (ցնդող նյութերի)՝ մաքրում է օդը մանրէներից, գեղեցկացնում շրջապատը և այլն:

ԱՆՏԱՌԻ ՍԵՐՈՒՆՆԵՐ, *Поклоение леса; forest generation*

Ծառուտի հիմնական տարրերից մեկը՝ տարահասակային բարդ ծառուտի միահասակային մասը, որտեղ ծառերի հասակային տարբերությունը չի անցում երկու դասից, և նրանք կազմում են մեկ ուղղահայաց շարահարկ: Դաշվածման ժամանակ անտառի սերունդն առանձնացնում են՝ ելնելով ծառերի արտաթին հատկանիշներից՝ քարծրությունից, տրամագծից, սաղարթից, բնի կեղևի կառուցվածքից:

ԱՆՏԱՌԻ ՎԵԳԵՏԱՏԻՎ ՎԵՐԱՎԱՆՁՆՈՒՄ, *Вегетативное Возобновление леса; vegetative forest regeneration*

Անտառի բնական բազմացման վեգետատիվ եղանակ, իրականացվում է բնաշիվերով, կոճղաշիվերով, արմատային ընձյուղներով, և արհեստական բազմացման եղանակով՝ կտրոնների ու անդալիսների միջոցով:

ԱՆՏԱՌԻ ՍԵՐՄԱՅՆ ԿԵՐԱՎԱՆՁՆՈՒՄ, *Семенное Возобновление леса; seed forest regeneration*

Տե՛ս Անտառի վերականգնում:

ԱՆՏԱՌԻ ՎԵՐԱՎԱՆՁՆՈՒՄ, *Возобновление леса; forest rehabilitation, reforestation*

Հին անտառին փոխարինող երիտասարդ ծառերի նոր սերնդի առաջացումը սաղարթի տակ կամ նախկին հատատեղում: Ա.Վ. կարող է ընթանալ տարբեր ժամանակաընթացքում՝ մեկից մինչև տասնյակ տարիներ: Կուտակյան անտառներում և այնտեղ, ուր պարբերաբար կատարվում են ընտրովի հատումներ, Ա.Վ. ընթանում է անընդհատ, և նրա սկիզբը, վերջը դիտելն անհնար է: Դատված անտառի վերականգ-

Մուճմն ավարտվում է, երբ մատողաշը միակցվում է, և սկսվում է պայքարը առանձին ծառերի արձան ու ձևավորման պրոցեսում: Ունի երկու շրջան՝ նախնական, երբ մատողաշն առաջանում է մայր սաղարթի տակ և հետագա, երբ հատումից հետո անտառը վերականգնվում է բնական սերմնատարածման կամ արհեստական անտառունկման ճանապարհով: Ըստ ծագման՝ Ա.Վ. լինում է սերմնային և վեգետատիվ (մասնավորապես՝ կոճղաշիվային): Ըստ վերականգնման բնույթի՝ բնական և արհեստական: Սերմնային ծագում ունեցող անտառներն այժի են ընկնում երկարակեցությանը և բնապահպանական լավագույն հատկություններով:

ԱՆՏԱՌԻ ՎԵՐԱՎԱՆՉՆԱՄԱՆ ԳԱՏՈՒՄՆԵՐ, *Лесовосстановительные рубки; forest regeneration cuttings*

Գառուն և գերհատուն անտառներում բնական միջավայրի բարելավման և անտառովերականգնման նպատակով իրականացվող հատումներ:

ԱՆՏԱՌԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, *Функции леса; forest functions*

Անտառի տնտեսական նշանակություն: Ընդունված է տարբերել անտառի ջրապահպան, պաշտպանական, սանիտարահիգիենիկ, ռեկրեացիոն, առողջարանային, հատուկ և շահագործական ֆունկցիաներ:

ԱՆՏԱՌԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԳԱՆՎԱՌՈՒՄ, *Учет вредителей леса; record of forest pests*

Վնասատուների դեմ պայքարի կազմակերպման նպատակով վնասակար միջատների քանակական հաշվարկ: Կատարվում է անտառապաթուրոգիական և էնտոմոլոգիական վերահսկման միջոցով՝ համաձայն գործող մեթոդների: Ա.Վ.Գ. հնարավորություն է տալիս բացահայտել անտառի վնասատուների կողմից հասցված վնասի չափը:

ԱՆՏԱՌԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԱՍՈՒՆԱՅՈՒՄ, *Техническая спелость леса; technical forest maturity*

Անտառի կամ ծառուտի այնպիսի հասակ, որի դեպքում ստացվում է տեխնիկական որոշակի պահանջների բավարարող առավելագույն փայտանյութ:

ԱՆՏԱՌԻ ՏԵՂԱԳԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳԱՆՈՒՅԹ, *Реконноцировочная съемка леса; technical survey of forests*

Անտառի քառակուսու սահմանում դիտանի օգնությամբ գնահատման անտառամասի անջատում: Ա.Տ.Գ. կատարում են գործիքային մասնակի համույթից հետո: Դիտանները նախօրոք չափում են և յուրաքանչյուր 100 մ-ի վրա տեղադրում ցցիկներ՝ նշելով սկզբնական քառակուսու՝ անտառուղղոց եղած հեռավորությունը: Քայլելով դիտանով և անտառուղով՝ անտառգնահատողը համույթի վրա նշում է անցումա-

յին գծերի հատման կետերը և կատարում անտառամասի համառոտակի նկարագրությունը՝ միաժամանակ գծելով առանձնացվող հատվածի սահմանները:

ԱՆՏԱՌԻ ՏԻՊԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, *Классификация типов леса; classification of forest types*

Կատարվում է՝ ելնելով անտառի հիմնական հատկանիշների նմանությունից: Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում անտառային տիպերի դասերն են՝ ասեղնատերևավոր անտառներ, բաժանվում են մուօ ասեղնատերևավոր անտառներ (եղևնուտ), լուսավոր ասեղնատերևավոր (սոճուտ, խեժափիճուտ և գիճուտ): Սաղարթավոր անտառները լինում են լայնատերևավոր (կաղնուտ, հաճարկուտ, լորուտ, թեղուտ, քոխուտ և այլն) և մանրատերևավոր անտառների (կեչուտ, ուռուտ, կաղամախուտ և այլն): Լայնատերևավոր և մանրատերևավոր տեսակների բաժանումը պայմանավորված է ոչ միայն անտառկազմող ծառատեսակների տերևային մակերեսով, այլև անտառի ընդհանուր կառուցվածքով, նրա ցենոտիկ բնույթով և անտառտնտեսական հատկանիշներով: Խառն անտառները հանդիսանում են անցումային փուլ:

ԱՆՏԱՌԻ ՏԻՊ, *Tun леса; forest type*

Անտառամաս կամ անտառամասերի զանգված, որը բնութագրվում է անտառածածան միևնույն պայմաններով, ծառատեսակների և ներքին շարահարկի բուսակազմության ու կենդանական աշխարհի համանման կազմով, որոնցում պահանջվում են միևնույն անտառտնտեսական միջոցառումները: Ա.Տ. անտառային տիպըլոգիայի դասակարգման միավոր է: Ըստ ծագման լինում է արմատական և ածանցյալ:

ԱՆՏԱՌԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ, *Экономическая оценка леса; economic assessment of forest*

Անտառային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման շնորհիվ մեկ միավոր տարածքից սպասվելիք տնտեսական առավելագույն արդյունավետ դրամական արտահայտութ. նը:

ԱՆՏԱՌԻ ՑԱՆՔՍ, *Посев леса; forest sowing*

Անտառոձակույթների հիմնադրումը տեղում սերմերի ցանքսի մ.ջրցով: Կիրառվում է ծերացած ծառուտների սաղարթի տակ նոր սերունդ ստեղծելու, ինչպես նաև՝ հատատեղերում անտառի վերականգնումն ապահովելու նպատակով: Կատարվում է ծիսքարչ կամ ձեռքի գործիքներով հողը նախապես փխրեցնելուց հետո: Ցանքսը կատարվում է աշնանը կամ գարնանը, իսկ որոշ տեսակներ, որոնք ծլունակությունը շուտ են կորցնում (թեղի), ամռանը: Սերմերի ծածկումը հողով կատարվում է՝ ելնելով սերմերի խոշորությունից և հողային պայմաններից:

ԱՆՏԱՌԻ ՈՒՂՂԱԶԻԳ ԳՈՏԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Вертикальная зональность леса; vertical zoning of forest*

Ընդունված է տարբերել ստորին, միջին, վերին և մերձալայան գոտիներ: Բնորոշ է լեռնային շրջաններին, որտեղ, ելնելով ծովի մակարդակից ունեցած բարձրությունից, բուսածածկը փոփոխվում է օրինաչափորեն: Երկրագնդի տարբեր մասերում բույսերի ուղղաձիգ գոտիականության բացարձակ բարձրությունները տարբեր են՝ կախված աշխարհագրական լայնությունից, կլիմայական գոտիներից, առաջին հերթին՝ ջերմաստիճանից:

ԱՆՏԱՌՆԱԽՏՈՒՄ, *Лесонарушение; forest violation*

Անտառների կամ անտառի կողմնակի մթերքների ապօրինի օգտագործում, որը քրեորեն հետապնդվում է:

ԱՆՏԱՌԿԱԶՍՈՂ ՏԵՍԱԿՆԵՐ, *Лесообразующие породы (виды); forest formation species*

Ծառատեսակներ, որոնք իրենց տարածման արեալում կարող են կազմավորել անտառի վերին շարահարկը: Ա.Տ., ուղեկցող ծառատեսակների ու բուսական այլ կենսածների և վայրի կենդանիների հետ համագործակցված, ձևավորում են երկարակյաց ծառուտներ՝ իրենց բոլոր հատկանիշներով: Ա.Տ. կազմավորում են անտառի արտաքին ձևը՝ ստեղծելով տվյալ տեսակին բնորոշ համակեցություն: ԳԳ-ում հիմնական անտառկազմող տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, սոճին, գիհին և այլն:

ԱՆՏԱՌԿԱՌՎԱՐՈՒՄ, *Лесоуправление (Управление лесом); forest management*

Անտառների պահպանություն, պաշտպանություն, վերականգնում, անտառապատում և արդյունավետ օգտագործում՝ պահպանելով անտառների կենսաբազմազանության ինքնավերականգնման կարողությունը, ինչպես նաև ապահովելով անտառների բնապահպանական, սոցիալական, տնտեսական պոտենցիալի արդյունավետ օգտագործումը ներկա և ապագա սերունդների համար:

ԱՆՏԱՌԿԱՇՎԱՌՍԱՆ ՆՅՈՒԹԵՐ, *Лесоучетные материалы; forest inventory materials*

Ստացվում են անտառային ռեսուրսների դաշտային և լաբորատոր (սենյակային) ուսումնասիրությունների արդյունքում: Գոյություն ունեն նախնական կամ սկզբնական (դաշտային) և հիմնական (ամփոփիչ) տվյալներ:

ԱՆՏԱՌԳՐԴԵԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, *Лесопожарное районирование; forest fire subdivision*

Անտառային ֆոնդի հրդեհավտանգության տեսակետից միանման տարածքների խմբավորումը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր խմբի (շրջանի) համար մշակելու հակահրդեհային միանման օպտիմալ եղանակներ:

ԱՆՏԱՌԻՂԵ-ԴԱՅԻՆ ՔԱՐՏԵՑ, *Лесопожарная карта; forest fire map*

Մեկ կամ մի քանի անտառայտությունների տարածքի հատուկ քարտեզ, որը ցույց է տալիս անտառային քառակուսում գերակշռող ծառատեսակը և հրդեհակտանգության աստիճանը: Օգտագործում են հրդեհների բացահայտման և մարման աշխատանքների կազմակերպման նպատակով:

ԱՆՏԱՄԵԼԻՈՐԱՑԻԱ, *Лесомелиорация; forest amelioration*

Գյուղատնտեսական մշակարույսերի բերքատվությունը բարձրացնելու նպատակով շրջապատող միջավայրի պայմանների բարելավում կամ բնական պայմանների նպատակային փոփոխում: Չեօք է բերվում անտառմշակման միջոցառումներով՝ անտառտնկմամբ, անտառների տեսակային կազմի կամ տեղադրության փոփոխմամբ:

ԱՆՏԱՊԱՅԵՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, *Лесозаготовительная промышленность; lumbering industry*

Անտառային, թղթի և ցելյուլոզի ու փայտամշակման արդյունաբերության ճյուղ, որն իրականացնում է բնափայտի մթերումը, դուրսբերումը և մասնակի վերամշակումը: Ա.Ա. հումքով և շինանյութով ապահովում է անտառաօդոցման, թղթի և ցելյուլոզի, հիդրոլիզային, վազոնաշինության և տնտեսության այլ ճյուղերին:

ԱՆՏԱՊԱՅԵՐՄԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ, *Отходы лесозаготовительного производства; remnants of lumbering industry*

Անտառանյութի դուրսբերման և մշակման պրոցեսում առաջացող բնափայտի մնացորդներ, որոնք չեն մտնում շինափայտի տեսականու մեջ: Ա.Ա.Թ. երբեմն կազմում են ծառուտի ծավալի 30 %-ը: Սրանց մեջ են մտնում նաև տերևները (ասեղնատերևները), ճյուղերը, կարճ գերանները, թեփը, կեղևը, որոնք հումք են հանդիսանում քիմիական, էներգետիկայի և արդյունաբերական այլ ճյուղերի համար:

ԱՆՏԱՊԱՅԵՐՄԱՆ ՉԵՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ, *Лесозаготовительный пункт; logging (lumbering) enterprise*

Անտառարդյունաբերության գլխավոր արտադրամաս, որտեղ կատարվում է հիմնական աշխատանքների ամբողջ փուլը՝ ծառի հատումից մինչև ցածրարժեք բնափայտի մշակումն ու թափոններից հումքանյութի ստացումը: Ա.Չ.-եր հիմնադրվում են այն անտառարդյունաբերություններում, որոնք ունեն միմյանցից կտրված անտառառնկային բազաներ և անտառանյութի դուրսբերման տարբեր ճանապարհներ: Ընդգրկում են անտառատնային ճանապարհներ, փայտանյութի և նրա թափոնների վերամշակման արհեստանոցներ, ալտոպարկ, մեխանիկական արհեստանոց, երկաթուղային դեպո և օժանդակ ենթաբաժիններ: Ա.Չ.-երը սովորաբար մթերում և վերամշակում են տարեկան 200-250 հազ. խմ բնափայտ:

ԱՆՏԱՌԱՎԹԵՐՈՒՄ, *Лесозаготовка; lumbering*

Անտառանյութի հատում և ամտառից դուրսբերում:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ, *Лесокультурная площадь; forest plantation area*

Տարածք, որը նախատեսված է անտառային մշակույթներ հիմնադրելու համար: Լինում են անտառածածկ սաղարթի տակ նախնական մատղաշ ստեղծելու կամ ցածրարժեք լայնատերևավոր ծառատեսակների վերակառուցման, ինչպես նաև ոչ անտառածածկ տարրեր տիպի հողատեսքեր, գյուղատնտեսական հողեր, ճանապարհամերձ գոտիներ՝ անտառապատման, կանաչապատման ու պաշտպանական անտառաշերտեր հիմնադրելու նպատակով:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄ, *Очистка лесокультурной площади; cleaning of forest plantation area*

Կատարվում է հողամշակման, տնկման և այլ մեքենաների ու մեխանիզմների աշխատանքի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու, ինչպես նաև՝ սանիտարական ու հակահրդեհային նպատակներով: Պայմանավորված է հիմնադրվելիք անտառտնկարկների բնույթով և տարածքի կոնկրետ գործոններով:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒԹԱՅԻՆ ՖՈՆԴ, *Лесокультурный фонд; forest plantation estate (fund)*

Պետական անտառային ֆոնդի մեջ մտնող տարածք՝ նախատեսված անտառային մշակույթներ հիմնադրելու համար: Ընդգրկում է ոչ անտառածածկ տարածք, նոսրուտներ, ամայի տարածքներ, բացատներ, անբավարար վերականգնված հատատեղեր, ցածրարժեք ծառատեսակներից ծառուտներ և այլն: Ա.Ֆ.-ի մեջ են մտնում նաև կանաչ գոտիներում եղած բացատները, ամմատչելի, ճանապարհներից հեռու վայրերը, ետմանտառային տարածքները, որոնցում հնարավոր չէ անտառի ինքնավերականգնումն արժեքավոր ծառատեսակներով:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, *Инвентаризация лесных культур; inventory of forest plantations*

Հիմնադրված անտառմշակույթների որակը և արդյունավետությունը որոշելու անտառմշակութային և անտառտնտեսական հետազա միջոցառումների մշակման նպատակով անցկացվող ստուգումներ: Կատարում են 1-2 տարեկան անտառմշակույթներում, աշմանը, բույսերի աճի լրիվ դադարից հետո: Ա.Գ կատարվում է փորձահրապարակներով: Մինչև 3 հա տարածքով անտառմշակույթներում փորձահրապարակները կետք է զբաղեցնեն տարածքի 5 %-ը, 3-5 հա-ի դեպքում՝ 4 %, 5-10 հա՝ 3 %, 10-50 հա տարածքի դեպքում՝ 2%, 50 հա-ից ավելի դեպքում՝ 1%: 25%-ից ցածր կաչողականությամբ անտառմշակույթները ենթակա են դուրսգրման:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԼՐԱՅՈՒՄ, *Дополнение лесных культур; supplement to forest plantations*

Կատարվում է տնկարկի հիմնադրման առաջին երկու տարում՝ սկզբնական խտությունը պահպանելու նպատակով, չորացած բույսերի փոխարեն ծառերի ու բլիե-րի, տնկիների լրացուցիչ տնկման կամ սերմերի ցանքսի միջոցով: Ա.Լ.-ման անհրա-ճելիությունը և քանակը որոշվում են անտառաշակույթների գույքագրման արդյունք-ներով: Լրացումը կատարվում է 30-80% կաշողականության դեպքում: Օգտագործ-վում են տվյալ տարածքում հիմնադրված անտառտնկիների տարիքին համապատաս-խան միևնույն տեսակի ստանդարտ տնկիներ:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԽՆԱՍԱԶ, *Уход за лесными культурами; maintenance of forest plantations*

Ազրոտեխնիկական ու անտառտնտեսական համակողմանի միջոցառումներ, որոնք ուղղված են ստեղծելու բարենպաստ պայմաններ անտառաշակույթների կաշո-ղականության ապահովման և նորմալ աճի համար: Անտառաշակույթների ազրոտեխնի-կական խնամքը (ջրհիան, հողի փխրեցում) կատարվում է մինչև տնկարկի միակցու-մը, որին հաջորդում են խնամքի անտառտնտեսական միջոցառումներ (լուսավորման, մաքրման, նորացման հատումներ): Տարեկան խնամքի հաճախականությունը պայ-մանավորված է քնակլիմայական պայմաններով: Հայաստանում ընդունված է Ա.Խ.-ի ազրոտեխնիկական միջոցառումներ կիրառել 5-8 տարվա ընթացքում՝ ընդհանուր առմամբ 15 անգամ:

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԿՊՇՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Приживаемость лесных культур; survival of forest plants*

Անտառաշակույթային տարածքում կպած բույսերի հարաբերությունը փաստա-ցի տնկած բույսերի քանակին՝ արտահայտված տոկոսներով: Որոշվում է տնկման 1-ին և 2-րդ տարում: Հաշվարկվում է փորձահրապարակներով կամ շարքերով՝ ընդգր-կելով տարածքի 1-5 %-ը (ելեմելով տնկված տարածքի չափից):

ԱՆՏԱՌԱՄԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՍԱՐ ՆԱԽԱՏԵՆԱԿԱՑ ՀՈՐԻ ՍԱՔՐՈՒՄ, *Расчистка леса под культуры; land preparation for plantation*

Հիմնականում վերաբերում է հատատեղը անտառաշակույթների միջոցով վերա-կանգնելուն: Համատարած տնկման դեպքում, հատումից հետո, տվյալ տարածքից հեռացվում են թողնված առանձին ծառերը, թփատեսակները, մատղաշը, կատարում են կոճղահանում (հարթավայրային պայմաններում): Լեռնային պայմաններում, հողի էրոզիայից խուսափելու նպատակով, հատատեղը մաքրում են մասնակիորեն՝ հեռաց-նելով թողնված ծեր ծառերը և այն թփերը, մատղաշը, որոնք կարող են խանգարել հո-րի մշակմանն ու տնկման աշխատանքներին:

ԱՆՏԱՌՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՏՅԱՆ, *Лесокультурный журнал; journal of forest plantings*

Անտառպատրվումում անտառային մշակույթների պատմության հիմնական փաստաթուղթ, որտեղ գրանցվում են տնկարկների հիմնադրման և մշակման հետ կապված բոլոր միջոցառումները՝ ժամկետով ու ծավալով:

ԱՆՏԱՌՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐՋԱՆԱՅՈՒՄ, *Лесокультурное районирование; subdivision of forest plantations*

Երկրի կամ նրա տարբեր հատվածների բաժանումը շրջանների՝ ելնելով հողակլիմայական պայմաններից և անտառային մշակույթների հիմնադրման եղանակներից ու տեխնոլոգիայից: Ա.Շ. կազմելիս սովորաբար ելնում են անտառածման և անտառտնտեսական շրջանացումից: ԳԳ-ում առանձնացված է անտառմշակութային 5 շրջան՝ 12 ենթաշրջաններով:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԳԵՏԱԶՈՏՈՒՄ, *Обследование лесов; forest research*

Անտառաշինական միջոցառումների նախնական փուլ: Կատարվում է պետական անտառային ֆոնդում չուսումնասիրված տարածքի, ինչպես նաև տարերային աղետների հետևանքով անտառի կազմի և վիճակի խիստ փոփոխման դեպքում: Անտառների հետազոտումը նպատակ է հետապնդում մոտավոր տվյալներ ստանալ անտառի վիճակի, պաշարի, որակի, անտառամասին հարող ճանապարհների վերաբերյալ, որոնք հիմք են տալիս մշակելու անտառի զնահատման հետագա կազմակերպչական աշխատանքները: Ա.Գ. հաճախ կատարում են նաև անտառների ֆիտոպաթոլոգիական վիճակը բացահայտելու, հողի նկարագրության, կեղանիների տեսակը և քանակը պարզելու, վայրի պտուղների ու հատապտուղների, սնկերի, դեղաբույսերի պաշարը որոշելու նպատակով:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԻՐԴԵԳՍԱՆՎՈՒԹՅՈՒՆ, *Пожарная опасность лесов; forest fire danger (hazard)*

Բնորոշվում է անտառի տիպով և քնական պայմաններով: Անտառներն ըստ հրդեհավտանգության բաժանվում են 5 կարգի՝ բարձր հրդեհավտանգ, միջինից բարձր, միջին, միջինից ցածր և ցածր հրդեհավտանգ:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, *Защита лесов; forest protection*

1. Անտառտնտեսության ենթաբաժին, որն իրականացնում է անտառի և անտառային արտադրության մյուս օբյեկտների (անտառմշակույթներ, անտառսեղմնային տնտեսություն...) պաշտպանությունը վնասատուներից ու արտաքին միջավայրի բացասական ազդեցություններից:
2. գիտություն անտառի վնասատուների, վնասակար բուսական օրգանիզմների դեմ պայքարի տեխնոլոգիայի և կազմակերպման մեթոդների մասին: Ա.Պ. ու-

տումնասիրում և մշակում է պայքարի կանխարգելիչ համակողմանի միջոցառումներ:

ԱՆՏԱՌԵՐԻ ՔԱՐՏԵԶ, *Карта лесов; forest map*

Քարտեզ, որտեղ որոշակի պայմանական նշաններով ցույց են տրված անտառների կենսաբանական և տնտեսական առանձնահատկությունները: Լայն կիրառում ունի անտառին ռեսուրսների բացահայտման, նրանց արտադրողականության գնահատման, սլահպանման և պաշտպանության բնագավառներում:

ԱՆՏԱՌԵՎԱԳՈՐԾՈՒՄ, *Лесопользование; forest exploitation*

Անտառային պետական միասնական ֆոնդի օգտակար հատկություններից օգտվելը: Համաձայն անտառային օրենսգրքի՝ թույլատրվում է բնափայտի, անտառային երկրորդական նյութերի (կոճղ, լուբ, կեղև...) մթերում: Անտառի հարակից օգտագործում՝ անտառի օգտագործումը գիտահետազոտական, որսորդական տնտեսության, կուլտուրառողջապահական նպատակներով և այլն: Օգտագործում են նաև անտառի օգտակար, քրապահական, պաշտպանական, սանիտարահիգիենիկ և այլ հատկությունները: Ա. իրագործվում է հատուկ թույլտվությամբ՝ անտառատնային կամ անտառային տոմսերով: Ժամկետները պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ և կառավարության կողմից լիազորված մարմնի որոշմամբ:

ԱՆՏԱՌԵԽՆԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՌՈՒՄ, *Лесоуправительная экспедиция; expedition of forest management planning*

Անտառչինական ձեռնարկության կառուցվածքային միավոր, որն իր խմբերի միջոցով կատարում է անտառչինական բոլոր աշխատանքները: Ա. ա.-ի ղեկավարն աշխատանքները (ծավալը, ֆինանսական միջոցները) քաժամում է անտառչինական խմբերի միջև, իրականացնում է մեթոդական ղեկավարությունը, դաշտային և կամերալ աշխատանքների տեխնոլոգիական պրոցեսները, ապահովում է դրանց ժամանակին և որակով կատարումը, նախագծերի կազմումը, հանդիսանում է անտառչինական իրավաբանական ներկայացուցիչը: Մեկ Ա.Ա. կարող է ունենալ մի քանի խմբեր:

ԱՆՏԱՌԵԽՆԱԿԱՆ ԽՈՒՄ, *Лесоуправительная партия; forest management planning group*

Անտառչինական ձեռնարկության կառուցվածքի սկզբնական միավորում, որի կազմի մեջ մտնում են անտառչինական արշավախմբերը: Ա.Խ.-ում ընդգրկված մասնագետները կատարում են անտառչինական դաշտային և կամերալ ողջ աշխատանքը: Կազմված է լինում 3-5 մասնագետներից, անտառգնահատող ինժեներներից և նույնպես տեխնիկներից: Անհրաժեշտության դեպքում ընդգրկում են նաև հողագետներ, գեոդեզիստներ, անտառաբաթուղուներ և այլ մասնագետներ:

ԱՆՏԱՌՇԻՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ, *Лесоустроительный проект; projection of forest planning*

Անտառչինական տվյալների հիման վրա մեկ ստուգիչ ժամանակաշրջանի համար մշակված համակողմանի փաստաթուղթ, որը բաղկացած է քաղաքագրերից, նախագծված միջոցառումների տեղեկագրից, անտառզնահատման ու քարտեզագրական նյութերից, որոնք արտահայտում են տվյալ անտառային տնտեսության և անտառապետության տնտեսվարման ուղղությունն ու ծավալը մեկ ստուգիչ ժամանակաշրջանում: Ա.Ն. իրականացման ուժ է ստանում կառավարության կողմից հատկապես լիազորված մարմնի կամ հանրապետության անտառտնտեսության վերադասի կողմից հաստատվելուց հետո: Այն հիմք է հանդիսանում անտառտնտեսության գործունեության պլանավորման համար:

ԱՆՏԱՌՇԻՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, *Лесоустроительные знаки; legenda for forest management planning*

Նշաններ՝ քառակուսիներ, սահմանային, ուղեցուցային սյուներ և այլն, որոնք օգտագործվում են անտառչինության ժամանակ:

ԱՆՏԱՌՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՈՒՄ, *Ревизия лесоустройства; control (revision) of forest management planning*

Անտառչինական աշխատանքներ, որոնց նպատակն է վերհանել անտառտնտեսվարման հետևանքով անտառային ֆոնդում և էկոնոմիկայում տեղի ունեցած փոփոխությունները, մշակել անտառտնտեսության կազմակերպման և զարգացման նոր նախագիծ. կատարվում է վերստուգման ժամանակաշրջանն ավարտելուց հետո:

ԱՆՏԱՌՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ, *Разряд лесоустройства; class (category) of forest management planning*

Յուցանիշ, որը բնորոշում է անտառչինության աշխատանքների մանրակրկիտության աստիճանը: Հաստատվում է յուրաքանչյուր անտառտնտեսության համար, մինչև անտառչինական աշխատանքների սկիզբը՝ ելնելով անտառտնտեսվարման ինտենսիվությունից և զարգացման հեռանկարներից:

ԱՆՏԱՌՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, *Объект лесоустройства; object of forest management planning*

Անտառտնտեսություն, ազգային պարկ, արգելոց և արգելավայր, ինչպես նաև անտառային ֆոնդին պատկանող անտառային այլ տարածք, որտեղ պլանավորվում է իրականացնել անտառչինական աշխատանքներ՝ անտառային տնտեսության կազմակերպման և զարգացման նախագծի կազմման նպատակով:

ԱՆՏԱՆՇԻՆՈՒԹՅՈՒՆ, *Лесоуправление*; forest management planning

Տեխնիկական համալիր միջոցառումների իրականացում, որը կոչված է պլանավորելու անտառտնտեսվարումը: Ա-ը անտառի կայուն կառավարման և անընդմեջ օգտագործման հիմքն է, նրա միջոցով որոշում են անտառօգտագործման չափը, նախատեսում հատատեղերի տեղաբաշխումը տարածքի և ժամանակի սահմաններում, հատման եղանակը, անտառվերականգնման միջոցառումները և անտառտնտեսվարման մյուս տարրերը: Որպես կանոն՝ Ա. կատարվում է 10 տարին մեկ:

ԱՆՏԱՌՊՈՒՐԱԿ, *Лесопарк*; forest park

Բնական անտառազանգված (հնարավոր է՝ մասամբ արհեստական կամ բարեկարգված անտառ): Կազմակերպվում է որոշակի լանդշաֆտաձավալախատակագծային համակարգով՝ տնկարկների աստիճանական վերակառուցմամբ, ճանապարհների աստիճանական վերակառուցմամբ, ճանապարհների, ճեմածառուղիների, հետիոտն արահետների, բացատների, ջրամբարների և այլնի նպատակասլաց ստեղծմամբ: Նախատեսված է բնական միջավայրում բնակչության կարճատև հանգստի համար:

ԱՆՏԱՌՈՒՐԱՎԱՅԻՆ ԳՈՏԻ, *Лесопарковый пояс*; forest park zone

Քաղաքամերձ գոտու մի հատված: Դարում է քաղաքի վարչական սահմաններին, ընդգրկում է քաղաքամերձ անտառները, անտառպուրակները, ամառանոցային ավանները, ինչպես նաև գյուղատնտեսական հողահանրակները:

ԱՆՏԱՌԵԶՐ, *Огьшка*; forest edge

Մարզագետիները և բացատները պարագծով եզերող տնկարկատ (խմբեր, ժառանգներ, զանգվածներ):

ԱՆՏԱՌՍԵՐՄԱՅԻՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ, *Лесосеменной заказник*; forest seeds reservation

Արդյունավետության բարձր ցուցանիշներով օժտված անտառամաս, որն առանձնացվում է պահպանվում է սերմեր և կտրոններ մթերելու համար: Առանձնացվում է գլխավոր ծառատեսակների հատումացող և հատում բարձր բոնիտետային ծառատներում: Ա.Ա. ընտրելիս անց են կացվում անձնագրավորում, տարածքը որոշակի ժամանակաշրջանով հանվում է անտառօգտագործումից, մշակվում հատուկ տնտեսվարում, սելեկցիոն աշխատանքներ, կազմվում է թույլաճ և երկրորդական ծառատեսակների հեռացման պլան և այլն: Ա.Ա.-ից ստացված սերմերն առաջին հերթին օգտագործում են անտառային պլանտացիաներ հիմնադրելու նպատակով:

ԱՆՏԱՌՍԵՐՄԱՅԻՆ ՄՇԱԿԱՏԱՐԱԾՔ, *Лесосеменная плантация*; forest seed plantation

Դրական ծառերի սերմերի կամ վեգետատիվ օրգանների միջոցով հատուկ գեներտիկական սխեմայով հիմնադրած տնկարկներ, որտեղից ստացվում են ժառանգա-

կան որոշակի հատկություններով և ցանցային բարձր հատկամիջներով օժտված սերմեր:

ԱՆՏՈՒՎԵՐՄՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, *Лесосеменное районирование; forest seeds subdivision*

Որոշակի էկոլոգաշխարհագրական ծագում ունեցող սերմերի օգտագործումն այս կամ այն տարածքի անտառապատման համար: Ա.Շ. նպաստում է անտառուկարկների տեսակի գենետիկական պոտենցիալի ռացիոնալ օգտագործմանը անտառաճեցման կոնկրետ պայմաններում: Կատարվում է յուրաքանչյուր ծառատեսակի համար առանձին՝ հաշվի առնելով դրանց կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները, տարածման արեալը: Ա.Շ.-ման հիմքում ընկած են անտառսերմնային շրջանը և ենթաշրջանը:

ԱՆՏՈՒՎԵՐՄՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Лесосеменное хозяйство; forest seeds enterprise*

Բարձր բոնիտետային կամ որոշակի դրական հատկամիջներով օժտված անտառամաս, որտեղ տարվում են նպատակասլաց համակողմանի միջոցառումներ (նոսրացում, պարարտացում, պատվաստում...): Բարձրորակ սերմեր ստանալու համար:

ԱՆՏՈՒՎԵՐԱՎԱՆՁՆՈՒՄ, *Лесовосстановление; reforestation, forest regeneration*

Նախկին անտառածածկ տարածքում անտառի վերականգնումը մարդու ակտիվ միջամտությամբ: Կատարվում է պետական անտառային ֆոնդում անտառարդյունաբերական նշանակություն ունեցող ծառատեսակներով՝ առաջնությունը տալով սերմնային վերարտադրությանը: Եթե նախատեսված ժամկետում (առաջին և երկրորդ կարգի անտառներում՝ 6 տարի, երրորդ կարգում՝ 10 տարի) սերմնային վերականգնումը չի ապահովվում, ապա նշված տարածքը փոխանցվում է անտառոձափայտային ֆոնդ, և վերականգնումն իրականացվում է արհեստական եղանակով: Չվերականգնված հատատեղում, որտեղ առկա են անտառաճեցման բարենպաստ պայմաններ, անտառուկումները տարվում են բարձր արդյունավետություն ունեցող ծառատեսակներով: Եթե ոչ անտառածածկ տարածքներում պայմանները բարենպաստ են ընկուզենու, շագանակենու և այլ արժեքավոր ծառատեսակների աճեցման համար, ապա անավելությունը տրվում է դրանց:

ԱՆՏՈՒՎԵՐԱՎԱՆՁՆԱՄԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Рубки лесовосстановительные; reforestation cuttings, r. fellings*

Հասուն և գերհասուն անտառներում բնական միջավայրի բարելավման և անտառվերականգնման նպատակով իրականացվող հատումներ:

ԱՄՏԱՆՏԵՎԱԿԱՐԿ, *Лесное насаждение; forest stand, f. planting*

Տե՛ս: ՏՆԿարկ:

ԱՄՏԱՆՏԵՎԱԿՐԿԻ ՊԼԱՆ, *План лесонасаждения; forest planting plan*

Անտառի տարածքային բաշխվածության քարտեզագրման նյութ՝ քառակուսիների, չափագրական ցանցի, անտառզնահատման առանձին հատվածների և այլ հողատեսքերի տեղակայմամբ: Ա.Պ.-ի մասշտաբը պայմանավորված է անտառչինական կարգով: Այն ներկում են 4 գույնով, համաձայն հասակային խմբերի՝ երիտասարդ, միջին տարիքի, հասունացող, հասուն և գերհասուն:

ԱՄՏԱՆՏԵՎՈՒՄ, *Посадка леса; forest planting*

Տնկարանում աճեցրած սերմնաբույսերի և տնկիների միջոցով անտառի հիմնադրում: Կատարում են համապատասխան մեքենաներով կամ ձեռքով (քահով)՝ ելնելով տնկանյութից, ռելիեֆից և հողի վիճակից:

ԱՄՏԱՆՏԵՎԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ, *Планы / карты лесопосадок; Forest planting plans / maps*

Անտառտնտեսությունների սահմաններում, պլանշետների հիման վրա, ֆոտոմեխանիկական ճանապարհներով կազմում են 1:25 000 - 1:50 000 մասշտաբի անտառտնկման պլաններ: Անտառտնկման պլանների վրա, բացի տեղագրական ծանրաբեռնվածությունից, արտացոլում են նաև պլանշետների վրա եղած տեղեկատվությունը: Հատուկ նշաններով սիմվոլները, քանաձևերը, գունային տարբեր երանգավորումները ցույց են տալիս անտառային ֆոնդի տարածքները ըստ հողերի կատեգորիաների, իսկ անտառածածկ մասը ցույց է տրվում ըստ գերակշռող ծառատեսակների, տարիքային խմբերի (երիտասարդ, միջին հասակի, հասունացող, հասուն և գերհասուն), աճման վայրի պայմանների և այլն:

ԱՄՏԱՆՏԵՍԵՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, *Экономическая эффективность лесозащитных мероприятий; economic efficiency of forest activities*

Օգտակար արդյունքի և նրա ստացման վրա կատարված փաստացի ծախսերի հարաբերությունը՝ հաշվարկված ճյուղային կամ ձեռնարկության մակարդակով: Համընթացում է անտառտնտեսվարման զնահատման հիմնական ցուցանիշներից մեկը:

ԱՄՏԱՆՏԵՍԵՎԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ, *Лесозащитные карты; Forest enterprise maps*

1:25 000 - 1:50 000 մասշտաբի քարտեզներ, որոնք սովորաբար պատրաստվում են 10 տարվա կտրվածքով, և արտացոլում են անտառտնտեսությունների շրջանակներում նախատեսվող անտառտնտեսական միջոցառումները (հատումներ, անտառվերականգնում, անտառի պաշտպանություն և այլն):

ԱՆՏԱՌՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՐԱԾԱՍ, *Лесхозный участок; forest district, forest area*

Անտառարդյունաբերությունում անտառպետությանը համազոր տարածքային արտադրական միավորում: Անտառտնտեսական տեղամասի չափն ու քանակը պայմանավորված են անտառարդտնտեսության ծավալով և խնդիրներով:

ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Лесхоз; forest enterprise*

Արտադրական տնտեսական ձեռնարկություն, որը պետական նշանակության անտառներում իրականացնում է տնտեսվարումը: Ա.-յան իրավական կարգավիճակը որոշվում է կառավարության լիազորված մարմնի կողմից կամ նրա հնաձեռարարությամբ հանրապետական անտառային գերատեսչության հաստատած կանոնակարգով, օրենսդրական ակտերով և հրահանգներով: Նրա իրավասության տակ են գտնվում պետական նշանակության անտառները: Ա. իրականացնում է պետական անտառների հաշվարկը, նրանցում տեղի ունեցող փոփոխությունները, տնօրինում է պետական անտառային ֆոնդին պատկանող հողերը, կազմակերպում է անտառի վերարտադրությունը, ընդարձակում տարածքը, հիմնում կանաչ գոտիներ, պաշտպանական անտառաշերտեր և անտառտնկարկներ, հատատեղերը հանձնում անտառարդյունաբերությանը, հսկում է անտառային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, անտառային տարածքում առանձնացնում խոտհարքերն ու արոտավայրերը, կազմակերպում որսը, անտառները պահպանում հրդեհներից, խախտումներից և այլն: Ա. իր գործունեությունն իրականացնում է անտառպետությունների միջոցով: Նրա չափը կախված է տնտեսական և աշխարհագրական պայմաններից, արտադրական ծավալից, ճանապարհատրանսպորտային ցանցի զարգացվածությունից, տարածքի անտառպատվածության աստիճանից և այլ գործոններից:

ԱՆՏԱՌՏՆՏԵՍԱՎՈՐՈՒՄ, *Хозяйствование в лесу; forest management*

Անտառշինական մախագծերով մախատեսված համալիր միջոցառումների իրականացում: Հիմնական խնդիրն է անտառների ռացիոնալ օգտագործումը, դրանց պահպանումն ու բնական վերարտադրության ապահովումը, ծառատեսակային կազմի բարելավումը, անտառագիտության նվաճումների ներդրմամբ անտառտնտեսության գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը:

ԱՆՏԱՌՓՈՒՆԱԲԵՆՈՆԱՆ ԲԱԶԱ, *Лесопереблочная база; forest reloading base*

Անտառարդյունաբերական ձեռնարկություն, որը կազմակերպում է փայտանյութի ընդունումն ու հետագա տեղափոխումը տրանսպորտի մի ձևից մյուսով (օր.՝ ջրայինից երկաթգծին):

ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾԱՆ ՌԵՅԻՄ, *Режим пользования лесом; forest utilization regime*

Հասկացություն, որն արտահայտում է տնտեսության անտառօգտագործման որոշակի ուղղությունը, ծավալը և բնույթը: Պայմանավորված է անտառային ֆոնդի

ճաբատակայնությանը և ուղղակիորեն կապված է տվյալ տարածքում տնտեսվարման կազմակերպման հետ: Անտառարդյունաբերական գոտում Ա.Ռ. ելնում է փայտանյութի պահանջարկից և չի կարգավորվում վերահով: Պաշտպանական անտառների շահագործման մասում կանոնավորվում է տվյալ անտառամասի տարեկան միջին աճով, ճաբաստում անտառի պաշտպանական հատկանիշների պահպանմանն ու բարելավմանը:

ԱՆՑԱՌՈՉՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ, *Лесопользователи; forest users, stakeholders*

Պետական, կոոպերատիվ և հասարակական ձեռնարկություններ ու անհատ անձինք, որոնց օրենքով սահմանված կարգով տրված է իրավունք օգտվելու անտառից:

ԱՆՑԱՌՈՉՏԱԳՈՐԾՈՒՄ, *Лесопользование; forest utilization*

Անտառային ռեսուրսների օգտագործումը հասարակության ու անձնական կարիքների համար: Անտառանյութի օգտագործման պահանջարկը որպես շինափայտ և արդյունաբերական հումք տարեցտարի ավելանում է, ուստի անտառարդյունաբերական զարգացման հիմքում դրված է անտառանյութի ռացիոնալ օգտագործումը:

ԱՆՁՐՈՊՊՈԳԵՆ ԱՐՏՈՏՈՒՄ, *Антропогенное загрязнение; anthropogen pollution*

Աղտոտում, որն առաջացել է մարդու տնտեսական գործունեության, նաև բնական աղտոտման վրա նրա ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով:

ԱՆՑԱՆԿԱԼԻ ԾԱՌԱՅԵՍԱԿՆԵՐ, *Нежелательные древесные породы; undesirable tree species*

Ծառատեսակներ, որոնք որոշակի անտառածման պայմաններում կամ անտառտնտեսական շրջանում տնտեսական արժեք չեն ներկայացնում: Անցանկալի են համարվում կոճղաշիվային և արմատաընձյուղային ծառում ունեցող փափուկ բնափայտային տեսակները (ուռենի, կաղամախի և այլն), լաստափոխադրման համար ոչ պիտանի տեսակները (խեծափիճի), առաջին կարգի անտառներում բնապահպանական ցածր հատկություններ ունեցող տեսակները և այլն:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՏՈՒՄԵՐ, *Рыбки-паразиты; thinnings*

Չողանային հասակից մինչև հասունացումը կիրառվող նորացման բոլոր տիպի հատումները: Հատկապես կիրառվում է հասունացող ծառատներում, որը նպատակ է հետապնդում բարենպաստ պայմաններ ստեղծել՝ ուժեղացնելու ծառերի աճը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՄԽԱԳԻԾ, *Рабочий проект; working plan*

Կանաչապատման օբյեկտի նախագծման փուլ: Ընդգրկում է գլխավոր հատակագծի մանրամասն մշակումը, տարածքի հատակագծման ու կանաչապատման բա-

ժանիչ զծագրի ու տնկագծագրերի պատրաստումը, ուղղաձիգ հատակագծման, ինժեներական սարքավորումների, ճարտարապետական փոքր ձևերի ու կառուցվածքների, նախագծերի աշխատանքային զծագրերի պատրաստումը: Կազմվում է նախագծային առաջադրանքի հաստատումից հետո և պարունակում է մանրամասն մշակված զծագրեր՝ համապատասխան չափերով, թվական ցուցանիշներով, անվանակարգային մանրամասներով, տեսակաշարի առանձնահատկությունով և տնկարկների քանակով: Այդ զծագրերը փոխադարձաբար համաձայնեցվում են մեկը մյուսի հետ և ճշտորեն համապատասխանում են տեղանքի մանրամասներին: Դրանք ապահովում են բոլոր տիպի աշխատանքների կատարումը ըստ օրացուցային պլանի:

ԱՇԽԱՐԳԱԳՐԱԿԱՆ ՁՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Географическая зональность; geographical zoning*

Երկրագնդի աշխարհագրական բաղանջի տարբերակման օրինաչափություն: Արտահայտվում է արեգակի ճառագայթային էներգիայի (հասարակածից դեպի բևեռները այն փոքրանում է) և խոնավության անհավասարաչափ տեղաբաշխմամբ պայմանավորված աշխարհագրական գոտիների և զոնաների հաջորդական և որաշակի փոփոխմամբ:

ԱՇԽԱՐԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ (ԱՏՀ), *Географические Информационные Системы (ГИС); Geographic Information Systems*

ԱՏՀ-ն երկրի մակերևույթի առարկաների ու երևույթների ժամանակատարածքային պատկերումն է քարտեզագրական-տեղեկատվական ճկուն համակարգերի օգնությամբ, որոնք թույլ են տալիս մուտքագրել, խմբագրել, վերլուծել, տպել և այլն ցանկացած քանակի ու բազմատեսակ տեղեկատվություն: ԱՏՀ-ն լայնորեն կիրառվում է անտառային տնտեսությունների ուսումնասիրությունների տարբեր բնագավառներում:

ԱՇԽԱՐԳԱԳՐԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ, *Географические координаты; Geographic coordinates*

Լայնության և երկայնության կոորդինատային համակարգեր, որոնցով որոշվում է տվյալ կետի դիրքը:

ԱՉՔԱՊԱՍՏՎԱԿԱՆ, *Оккультизм; budding, scion budding, grafting*

Պատվաստի շատ տարածված ձև: Պատվաստացուի միայն մեկ բողբոջը, որի ներքին մակերեսին պահպանված է կամբիումը, տեղափոխում են կեղևի վրա նախորդ բացված T-աձև ճեղք պատվաստակալի վրա և ներկալում այդ ճեղքում: Առանձնապես հարմար է ծառաթփային բույսերի պարտիզային ձևերը և վարդերի սորտերը բազմացնելու համար: Լավագույն ժամկետներն են գարունը և ամառը (օգոստոս): Գարնանային պատվաստը կատարում են ուռած, ամառայինը՝ քնած բողբոջներով:

ՄՐՐԵԼԱՎԱՅՐ, *Местообитание; biotope*

Ցամաքի կամ ջրամբարի այն հատվածը, որը զբաղեցնում է մի տեսակի պուպուլյացիան, և որն ունի վերջինիս գոյության համար անհրաժեշտ բոլոր ոչ կենսական ու կենսական պայմանները:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԼՈՒՅՍ, *Свет передний; front light*

Ընկնում է սաղարթի ուղղահայաց մակերեսի վրա: Օժտված է մեծ ինտենսիվությամբ, օգտվում են անտառեզրի ծառերը, քիերը և կենդանի ծածկոցը:

ԱՈՎՓՆՅԱ ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Прибрежная растительность; coastal (littoral) vegetation*

Ջրամբարների, արհեստական լճակների, լճերի, գետերի ափերին աճող խոնավասեր բույսերի ներկայությամբ բուսական համակեցություն: Գերակշռում են ուռենիները, բարդիները, կարմրամները և ուրիշ տեսակներ:

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Курортные леса; resort forest s*

Անտառներ կամ անտառպուրակներ, որոնք գտնվում են առողջարանների, հանգստյան տների մերձակայքում: Ունեն ջրակարգավորիչ, հողապաշտպան, սանիտարափիզիենիկ խոշոր նշանակություն: Դասվում են սոցիալական նշանակության անտառների խմբում: Հիմնական նպատակն է պահպանել առողջարանների լանդշաֆտային, կլիմայական, ջրային, բուժիչ հատկությունները, բարելավել շրջապատի միկրոկլիման: Ա.Ա.-ում թուլատրվում է կատարել միայն խնամքի, սանիտարական և լանդշաֆտային հատումներ:

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՏԻ (ՇՐՋԱՆ), *Курортный район; resort area (district)*

Առողջարաններում, հանգստյան տներում, հանգրվաններում, ստացիոնարներում բնակչության հանգստի և բուժվելու համար օգտագործվող բարենապաստ բնական պայմաններ ու բուժական գործոններ ունեցող տարածք: Ընդգրկում է կանաչապատման օբյեկտներ՝ առողջարաններին ու առողջավայրային ավաններին կից պարտեզներ ու զբոսայգիներ, հասարակական շենքերին կից պուրակներ, ճանապարհներին ու ավտոմայրուղիներին կից ծառուղիներ ու տնկարկներ:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎ, *Хвой; conifers*

Մերկասերմերի դասին պատկանող գերակշռող տեսակների տերևներ: Սովորաբար ունենում են ասեղի կամ բեփուկի երթեմն նեղ նշտարածև տեսք: Մշտադալար են, երբեմն՝ տերևաթափ: Ա.-ները սովորաբար կոշտ են, ամուր, քսերոմորֆ, հազվադեպ՝ փափուկ (խեժափիճի, տաքսոդիում): Սեզոնիլը հաճախ ունի խեժային առվակներ: Ա.-ները դասավորված են լինում զսպանակած, հակադիր ուստափունք կամ խմբերով:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎ ԼՈՒՍԱՎՈՐ ԱՆՏԱՌՆԵՐ, *Светлозвойные леса; light coniferous forests*

Անտառներ, որոնք կազմավորված են լուսասեր ասեղնատերևավոր ծառատեսակներից (սոճի, խեժափիճի), որոնք նուր, լուսաթափանցելի սաղարթի միջով հողի մակերես է հասնում լույսի զգալի քանակությամբ:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎԱՅԻՆ ԱԼՅՈՒՐ, *Хвойная мука; coniferous flour*

Աղացած չոր ասեղնատերևներ՝ վիտամինային անասնակեր:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎԱՎՈՐ ԱՆՏԱՌՆԵՐ, *Хвойные леса; coniferous forests*

Անտառներ, որոնցում զերիշխում են մեկ կամ մի քանի ասեղնատերևավոր ծառատեսակներ: Հիմնականում տարածված հյուսիսային կիսագնդում՝ զբաղեցնելով անտառային լայն գոտի: Հանդիպում են նաև հարավում՝ լեռնային շրջաններում: Տնտեսական տեսակետից ամենաարժեքավոր տեսակներն են եղևնին, սոճին, մայրին, խեժափիճին և այլն: Ա.Ա.-ները բաժանվում են մուգ և լուսավոր ենթախմբերի: Բնության մեջ մուգ և լուսավոր անտառկազմող ծառատեսակները հանդես են գալիս միասին՝ առաջացնելով ասեղնատերևավոր խառն անտառներ:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎԱՎՈՐ ՍՈՒԹ ԱՆՏԱՌՆԵՐ, *Темнозвойные леса; dark coniferous forests*

Անտառներ, որոնք կազմավորված են ասեղնատերևավոր ստվերատար ծառատեսակներից (եղևնի, մայրի...), որոնք խիտ սաղարթի տակ ստեղծվում է թույլ լուսավորվածություն և ցածր ջերմություն:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐ, *Хвойные породы; coniferous species*

Հիմնականում մշտադալար ծառեր, երբեմն թփեր, որոնք ունեն ասեղանման կամ թփուկանման տերևներ: Պատկանում են մերկասերմերի դասին, ասեղնատերևավորների ենթադասին: Կազմում են շուրջ 600 տեսակ, որոնք ընդգրկված են 8 ընտանիքի 55 ցեղի մեջ: Ծազմամբ հնագույն են, քան լայնատերև սաղարթավոր տեսակները: Կոնակիր են, թեղմնավորվելիս առաջացնում են սերմ և ոչ թե պտուղ:

ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎՆԵՐԻ ԹԱՓՈՒՄ (ԱՍԵՂՆԱՏԵՐԵՎԱՅՈՒՓ), *Опадание игоу; pulling-down of needles*

Տարբեր հիվանդությունների հետևանքով ասեղնատերևների չորացում և թափում: Բնորոշ է մեծահասակ ծառերին:

ԱՍԻՄԻԼԻԱՑԻԱ, *Ассимиляция; assimilation*

Արևի լույսի ազդեցության տակ բույսի տերևներում օրգանական նյութ սինթեզելու պրոցեսը: Պարզ նյութերից թարֆ օրգանական նյութերի սինթեզի ռեակցիաների ամբողջականությունն է:

ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՍԵՅՈՒՆԱՅԻՆ ԴԵՐՅԱԾՈՒՄՈՒՄ, *Сезонная смена аспектов; seasonal following of aspects*

Տնկարկների արտաքին տեսքի փոփոխումը սեզոնի ընթացքում (օր., տերևների գունափոխումը՝ առաջանալուց մինչև տերևաթափ):

ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Постепенные рубки; gradual (progressive) cuttings*

Անտառօգտագործման գլխավոր հատման տարատեսակ, որի դեպքում ծառուտը հատվում է մի քանի փուլով, մեկ կամ երկու հասակային դասի ընթացքում: Լինում են հավասարաչափ աստիճանական և խմբային աստիճանական: Հավասարաչափ աստիճանականի դեպքում ծառուտը հատում են 2-4 փուլով՝ հաջորդաբար նուրբացնելով այն մեկ հասակային դասի ժամանակաընթացքում: Փուլերի քանակի ընտրությունը պայմանավորված է ծառատեսակի անտառտնտեսական հատկություններով, ծառուտի միակցության աստիճանով, մատղաշի ակայությանը և անտառի տիպով: Եթե Ա.Յ.-ով անտառի վերականգնման հետ մեկտեղ հետապնդվում են նաև երիտասարդ ծառերը հասունացող և հասուն տարիքի հասցնելու նպատակ, ապա հատումների միջև ընկած ժամանակաշրջանը ձգում են 30-40 տարի, որը կոչվում է երկարատև Ա.Յ.: Խմբային Ա.Յ.-ի դեպքում ծառերը հատում են որոշակի խմբերով (50-300 ք.մ), որը կոչվում է նաև խմբային ընտրովի հատումներ, զոգափոսային հատումներ: Ա.Յ.-ի տարատեսակ են նաև համատարած ծառախմբային հատումները, որը կիրառում են տարահասակային ծառատնտեսում՝ հատելով հասուն և գերհասուն ծառերի խմբերը: Այդ դեպքում անտառի հատման ժամկետը երկարում է, իսկ ինտենսիվությունը՝ փոքրանում: Ա.Յ.-ի դեպքում պահպանվում են անտառի բնապահպանական հատկանիշները: Կիրառվում է լեռնային անտառներում:

ԱՎՀՌՈՒ, *AVXPP (Радиометр передовой очень высокой разрешимости); AVHRR (Advanced Very High Resolution Radiometer)*

«Առաջատար շատ բարձր թույլատրելիության ռադիոմետր» (AVHRR) նկարահանող սարքը հանդիսանում է ԱՄՆ ՆՈԱԱ (NOAA) ընտանիքի արբանյակների սեփականությանը, որի նադիրում նկարի թույլատրելիությունը 1,1 կմ է, իսկ նկարի լայնությունը՝ 2400 կմ: Այս սեփականության ստացվող տիեզերական նկարների օգնությամբ ուսումնասիրվում են երկրի մակերևութի ընդարձակ տարածությունների բուսականությունը և այնտեղ ընթացող փոփոխությունները:

ԱՏԳ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ, *Источники для ГИС; Geographic Information Systems (GIS) sources*

ԱՏԳ-ի համար տեղեկատվության աղբյուր են հանդիսանում զանազան տեղագրական քարտեզները /ազգային գործակալություններից և մասնավոր ընկերություններից/, հողային պաշարների կադաստրային տվյալները /հողի կադաստրային ծառայություններից/, անտառտնտեսությունների քարտեզագրական տվյալները,

ջրաօդերևութաբանական տվյալները /ազգային ջրաօդերևութաբանական ծառայություններից/, ռազմական կազմակերպություններից ստացվող որոշ տեղեկությունները, հեռահար ուսումնասիրությունների տվյալները, բնապահպանական հիմարկների և կազմակերպությունների տարաբնույթ տվյալները:

ԱՏՀ ԲԱՂԿԱՅՈՒՑԻՑԻՉ ՄԱՍԵՐԸ, *ГИС компоненты; GIS components*

ԱՏՀ-ի բաղկացուցիչ մասերն են համակարգիչը՝ համապատասխան տեխնիկական հնարավորություններով և ծրագրային փաթեթներով /ArcView, ArcGIS, ArcInfo և այլն/, ցանցի մեջ ընդգրկված թվայնացուցիչ սեղանը /թվայնացումը կարելի է նաև ուղղակիորեն իրականացնել համակարգչի էկրանի վրա/, տպիչ սարքերը /տարբեր ֆորմատներով տպիչներ և պլոտերներ/, կոմպակտ դիսկեր /CD/ և այլ բնույթի տեղեկատվության կրիչներ /USB/:

ԱՏՀ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՆԿԸ, *База данных ГИС-а; GIS database*

Տվյալների բանկը ԱՏՀ-ի կարևորագույն քաղաղրիչն է, որտեղ աղյուսակային տեղեկատվության տեսքով, պահվում են ուսումնասիրվող առարկայի կամ երևույթի հատկություններին վերագրվող ամենատարբեր բնութագրիչներ (ատրիբուտներ):

ԱՏՐԻԲՈՒՏ (ԲՆՈՒԹԱԳՐԻՉ), *Атрибут; Attribute*

Չափման ենթակա կամ արժեք ներկայացնող հատկության բնութագրիչ: Ատրիբուտներ կարող են լինել վերնագրերը, կատեգորիաները, թվերը և այլն, այսինքն ցանկացած երևույթ կամ միավոր, որի համար տվյալները հավաքվում և կազմակերպվում են: Ատրիբուտը տվյալների շտեմարանում (աղյուսակում) իրենից ներկայացնում է սյունակը (Օր. ծառուտի մակերեսը, բոնիտետը և այլն):

ԱՐԱԲԵՍԿԱ, *Арабеска; arabesque*

Գորգային ձևավորումներում ծաղիկների զեղազարդ զծային դասավորություն նախշերի ձևով, որոնք ռիթմիկ կերպով կրկնվում են ծաղկաթմբերի կամ ծաղկամարզերի համաչափ հատվածներում:

ԱՐԱԳԱՆ ԾԱՌԱՅՈՒՓԵՐ, *Быстрорастущие деревья и кустарнику; fast-growing trees and bushes*

Գեղազարդային ներգործություն ունեցող և կարճ ժամանակամիջոցում տնկարկներ ստեղծող ծառաթփեր զբոսայգիներում, պարտեզներում: Սովորաբար լինում են անտառազանգվածների եզրերի պահեստային շերտերում: Զբոսայգի հիմնելիս արագած ծառաթփերից ստեղծում են «մուշտակ», որը ծառայում է հիմնական տեսակների հարմարեցման համար: Ծառերից են՝ բարդիները, լորենիները, ռոբինիաները, թեղիները, թխկիները, թփերից՝ կտակենին, ֆորգիցիան, սրնգենին, ճապկին, բլուր լիանները:

ԱՐԲՈՐԵՏՈՒԲՈՒՄ, ԾԱՌԱՍՏԱՆ, *Арборетум; arboreta*

Դենդրոլոգիական (ծառաբանական) պարտեզ, որտեղ ներկայացված է երկրազնդի տարրեր գոտիներից ներմուծված տվյալ վայրի բնափոխում ազատորեն աճող ծառաբույսերի հավաքածուն: Բազա է բույսերի կլիմայավարժեցման և անտառապատման ու կանաչապատման տեսակաչափի ընտրության համար:

ԱՐԳԵԼԱՎԱՅՐ, *Заказник; reservation*

Ա. մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված տարածքներ են, որոնց սահմաններում ապահովվում են էտալոնային, գիտական պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների և նրանց տարրերի տեսակային պահպանությունն ու վերարտադրությունը: Ա. միջազգային ստանդարտների համաձայն ներկայացնում են որպես բնական ռեզերվատներ և իրականացնում են բնական էկոհամակարգերի և նրա բաղադրիչների արդյունավետ պահպանությունն ու նպատակային կայուն օգտագործումը:

ԱՐԳԵԼՈՑ, *Заповедник; reserve*

Էկոլոգիական, գիտական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, զեղազիտական հատկանիշներով օժտված տարածքներ, որտեղ բնական միջավայրի զարգացման պրոցեսներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության: Ա. տարածքում իրականացվում են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություններ, պահպանություն, պաշտպանություն, հաշվառում, գույքագրում, մոնիթորինգ, ինչպես նաև զբոսաշրջության նպատակներով դրանց օգտագործում:

Ըստ մոդելի պետական արգելոցների տարածքները ունենում են սահմանափակ մակերեսներ՝ հիմնականում ներառելով մեկ գետավազան՝ ապահովելով հատուկ պահպանության ենթակա տեսակի կամ օբյեկտի պահպանությանն անհրաժեշտ տարածքը (արեալը):

Ա. հիմնական գործառույթները ռազմավարության իրականացման ժամանակահատվածի համար սահմանվում են ըստ ներկայումս գործող օրենքների: Որպես նորույթ Ա. սեփմում ներառվում է զբոսաշրջության նպատակով տարածքի օտագործման թույլտվությունը:

ԱՐԳԵԼՈՑԱՅԻՆ ԱՆՏԱՈՆԵՐ, *Заповедные леса; reserve forests*

Անտառային պետական ֆոնդում առանձնացված անտառազանգված, որտեղ տարվում են գիտական ստացիոնար ուսումնասիրություններ՝ պարզելու տվյալ պայմաններին բնորոշ կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչների կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները, անտառի և շրջապատի փոխհարաբերությունները, ստացված տեսական դրույթներից գործնական եզրակացուք-

յուճեր են արվում՝ ընդհանուր լանդշաֆտային, քուսական և կենդանական աշխարհի պահպանման, վերարտադրման և ռացիոնալ օգտագործման նպատակով: Համաձայն Անտառային օրենսգրքի, Ա.Ա. մտնում են հատուկ պահպանվող-տարածքների մեջ, և նրանցում սահմանված է անտառտնտեսավորման որոշակի ռեժիմ, որն ուղղված է վերարտադրելու տվյալ շրջանին բնորոշ կենդանական ու քուսական աշխարհը:

ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՏԻՆԵՐ (ՇԵՐՏԵՐ), *Запретные полосы; forbidden zones (belts)*

Ջրապաշտպան անտառային շերտեր, որոնք առանձնացվում են գետերի երկայնքով: Ա.Գ.-ի լայնությունը պայմանավորված է տեղանքի աշխարհագրական դիրքով, տնտեսական նշանակությամբ և այլ գործոններով: Սովորաբար լինում են 4-20 կմ: Հայաստանում, ելնելով ռեյիֆից, ընդունված է 1 կմ:

ԱՐԳՅՈՒԱԲԵՐԱԿԱՆ ԾԱՂԿԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ, *Промышленное цветоводство; industrial flower breeding*

Տնտեսության ճյուղ: Նպատակ ունի աճեցնել ծաղիկներ, ծաղկամանային մշակաբույսեր և սածիլներ՝ շենքերի ներսի ձևավորման և վաճառքի համար:

ԱՐԳՅՈՒԱԲԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ, *Промышленный район; industrial region*

Քաղաքի հատված, որտեղ հիմնականում արդյունաբերական ձեռնարկություններ են և սպասարկող շենքեր, հիմնարկներ, ճանապարհներ և այլն: Ընդգրկում է նաև կանաչապատ տարածություններ՝ զբոսայգիներ, պուրակներ, ծառուղիներ, փողոցներ: Այլ շրջաններից բաժանվում է կանաչապատ սանիտարապաշտպանական գոտիով: Ըստ քաղաքաշինական նորմերի արդյունաբերական շրջանի տարածքի 20 % պետք է կանաչապատված լինի:

ԱՐԵԱԼ, *Areal; areal, natural habitat*

Բույսերի տարածման մարզ: Քարտեզի վրա սովորաբար նշվում է փակ շրջագծով (համատարած արեալ) կամ կետերով (դեպունկտիվ արեալ): Այն տարածությունը, որտեղ ձևավորվում է տեսակը, կոչվում է առաջնային: Արդեն ձևավորված արեալը հետագայում կարող է փոփոխություններ կրել, և առաջանում է երկրորդային արեալ: Բույսի նախկինում (երկրաբանական շրջաններում) զբաղեցրած արեալը կոչվում է օեյլիտային:

ԱՐԿ-ՎՅՈՒ, *АркВЮ; ArcVIEW*

Արկ-վյու-ն (ArcView) համակարգչային ծրագրային փաթեթ է, որը հանդիսանում է ԱՏԴ-ի տեսության պրակտիկ իրականացումը: Այս ծրագրային փաթեթը լայնորեն կիրառվում է անտառային քարտեզագրության մեջ:

Արկ-գիս-ը (ArcGIS) համակարգչային ծրագրային փաթեթ է, որը հանդիսանում է Արկ-վյու-ի ավելի զարգացած, և գործիքներով հագեցած տարբերակ:

ԱՐՄԱՏ, *Корень; root*

Քույսի հիմնական, սովորաբար հողի մեջ խորացող վեգետատիվ օրգան: Քույսը ամրացնում է հողին, նրան մատակարարում ջրով՝ վերջինիս մեջ լուծված հանքային աղերով: Տնկարաններում քույսերի աճեցման ընթացքում պահանջվում է պարբերաբար ձևավորում: Ա. իրականացնում է հողի մարեների, սնկերի հետ կապը, հանդիսանում է պաշարային նյութերի պահեստարան, ծառայում է նաև վեգետատիվ բազմացմանը:

ԱՐՄԱՏԱՆԸՅՈՒՐԱՅԻՆ ԳԵՂԱԶԱՐԴ ԲՈՒՅՍԵՐ, *Корневотпрыскысье декоративные растения; offset decorative plants*

Արմատային ընձուղներ առաջացնելու միջոցով վեգետատիվ բազմացման ունակ քույսեր (տանձենի, սզնի, մասրենի, բալենի, սալորենի, ազնվամորի):

ԱՐՄԱՏԱՎԱՆՈՒՄ, *Укоренение; implanting*

- Նոր քույսերի ստացման եղանակ՝ տերևների, տերևակոթոնների, կանաչ ընձուղների, ձմեռային տնկաշիվերի, անոթախճերի արմատաառաջացումը խթանելու միջոցով:
- Փոխտնկումից հետո քույսի արմատակալումը:

ԱՐԵՎԱՐԿԱՐԴՅԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Тропические леса; tropical forests*

Բիոմայի տիպ, տարածված է հասարակածային և արևադարձային գոտիներում: Ա.Ա.-ները ձևավորվել են բարձր ջերմության և խոնավության պայմաններում: Բաժանվում են 2 ենթատիպի՝

ախտնավ արևադարձային (անձրևային) անտառներ: Արանք հիմնականում տարածված են հասարակածային գոտում՝ ամսվա 24-28^o միջին ջերմաստիճանի և հավասարաչափ բաշխված առատ տեղումների (2000-7000 մմ և ավելի) պայմաններում: Խոնավ Ա.Ա.-ներն ունեն բարդ բազմաշարահարկ կառուցվածք, որտեղ ծառերը կազմում են 3 շարահարկ: Առաջին շարահարկում 50-70 մ բարձրությամբ հսկա ծառեր են, որոնց սաղարթները չեն միակցվում: Երկրորդ շարահարկում (բարձրությունը՝ 20-30 մ) ծառերը կազմավորում են միակցված սաղարթ: Երրորդ շարահարկի ձևավորման ինտենսիվությունը պայմանավորված է լույսի ինտենսիվության աստիճանով: Գառուն ծառտններում երրորդ շարահարկը նոսր է ու խառնվում է ենթաանտառի հետ: Խոնավ Ա.Ա. կազմավորված են ինչպես արագաճ, լուսասեր, համեմատաբար կարճ կյանք ունեցող, այնպես էլ սովորաբար, երկարակյաց ծառատեսակներից:

ը/ սեզոնային (անձրևականաչ կամ ձմեռնականաչ) անտառներ: Չնազիրովել են արևադարձային գոտու օվկիանոսներից և ծովերից հեռու ընկած շրջաններում, որտեղ արտահայտված է տարվա չոր ժամանակաշրջանը, իսկ մեծաքանակ տեղումները (2000-3000 մմ) կրում են սեզոնային բնույթ՝ հիմնականում տեղալով ձմռան ամիսներին: Կազմավորված են մշտադալար ծառատեսակներից՝ էվկալիպտ (Ավստրալիայում), և տերևաթափ ծառատեսակներից՝ մուսսոնային և սավաննային անտառներ, որոնց ձևավորումը պայմանավորված է անձրևային և չորային ժամանակաշրջանի տևողությամբ: Ա.Ա.-ի համակարգը բացարձակ կարևոր նշանակություն ունի կենսոլորտի համար: Այստեղ կենտրոնացած է երկրի կենդանի բնության գենոֆոնդի շուրջ 50 %-ը:

ԱՐԺԵԶԱՎՈՐ ԱՆՏԱՌՆԵՐ, *Ценные леса; valuable forests*

Անտառամասեր, որոնք եզակի են իրենց տեսակային կազմով, արտադրողականությամբ, գենետիկական որակով կամ ունեն հատուկ պաշտպանական դեր: Բաժանվում են 4 խմբի՝ տափաստանային և անտառտափաստանային շրջանների անտառներ, որոնք ունեն ազրոանտառքարելավման նշանակություն, անտառաճեցման ցածր պայմաններում հիմնադրված արհեստական անտառներ կամ առանձնապես արժեքավոր տեսակային կազմ. բարձր արտադրողականություն ունեցող անտառներ. գիտության համար առանձնակի հետաքրքրություն ներկայացնող անտառներ:

ԱՐԴԵՍԱՍՎԱՆ ԱՆՏԱՌ (ԱՆՏԱՌՏԵԿԱՎՈՐԿ), *Искусственный лес (лесонасаждение); artificial forest, forest plantation*

Անտառ, որը հիմնադրվել է մարդու կողմից՝ տնկիներով կամ սերմերի ցանքսի միջոցով:

ԱՐՄ, *Комель; butt*

Ծառաբնի հիմքային (արմատակից) մասը: Իր վրա կրելով ծառի ողջ ծանրությունը և հաճախ ենթարկվելով ճնշման ու ծզման ուժային ազդեցության՝ Ա. ձեռք է բերում բնափայտի ուրույն հատկություններ: Երբեմն դիտվում է որպես բնի արատ:

ԱՐՄՍԱՍԲԱԿ ՇԵՐՏ, *Корнеобитаемый слой; root-inhabited layer (stratum)*

Արմատների կողմից այս կամ այն չափով իրացված հողաշերտ: Ա.Շ.-ի հզորությունը պայմանավորված է բույսի և հողի առանձնահատկություններով:

ԱՐՄՍԱՍԳՆՈՒՄ (ԱՐՄՍԱՍԽԻԼ ԱՆԵԼ), *Корчевание; uprooting*

Ծառերի կոճղերի հանումը հողից արմատներով: Իրագործվում է մեքենաների օգնությամբ, պայթեցման միջոցով, ձեռքի ուժով, կոմբինացված եղանակով:

ԱՐՄՏԱՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Коренные леса; radical (climax) forest*

Անտառներ, որոնք առանց տեսակափոխության երկար ժամանակ աճում են միևնույն տեղում, առանց մարդու միջամտության: Երկարակյաց են, ընդունակ ինքնավերականգնման, կազմված են այն ծառատեսակներից, որոնք կենսաբանաան առանձնահատկությունները միանգամայն համապատասխանում են հողակլիմայական պայմաններին:

ԱՐՄԱՏԱՅԻՆ ԸՆԶՅՈՒՂՆԵՐ, ՄԱԳԱՌՆԵՐ, *Корневые отростки; root descendents, coppice*

Ծառերի կամ բլիերի արմատների հավելյալ բողբոջներից առաջացած բույսեր կամ շիվեր: Սովորաբար առաջանում են մակերեսային արմատներից, որոնք գտնվում են օդափոխման բարենպաստ պայմաններում, հաճախ արմատների մեխանիկական վնասվածքի դեպքում: Առատ Ա. տալիս են բարդին, լաստենին, կեղծ ակացիան, քալենին, արոսենին և այլն: Ընծյուղներ չեն տալիս կամ համարյա չեն առաջացնում ասեղնատերևավոր ծառատեսակները: Այն տեսակները, որոնք բազմանում են արմատաընծյուղներով, ունակ են ընդարձակելու իրենց զբաղեցրած տարածքը:

ԱՐՄԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, *Корневая система; root system*

Սեկ բույսի արմատների ամբողջությունը: Առաջանում է սաղմից՝ առանցքային և կողքային արմատների հետ միասին կազմում է ամբողջական համարկարգ:

ԱՐՄԱՏԱՎՋԻԿԻ ԹԱՈՒՍՈՒՄ, *Опал шейки корня; opal of root neck (pivot)*

Սերմնաբույսերի հիվանդություն: Դիտվում է տնկարկներում. հետևանք է հողի մակերեսի քարձր ջերմության:

ԱՐՄԱՏՆԵՐԻ ԸՆԶՅԱԳԵՂՈՒԹՅՈՒՆ, *Удушение корней; root chove*

Հողում թթվածնի անբավարար քանակի կամ ածխաթթու գազի առատության հետևանքով արմատների և նրանց հետ միասին բույսերի վերերկրյա մասի մահացում: Առաջանում է հիմնականում հողի գերխոնավության և անբավարար օդափոխության հետևանքով: Ծառատեսակների պահանջը հողում թթվածնի քանակի նկատմամբ տարբեր է: Բարդու և ուռենու որոշ տեսակներ բավարարվում են թթվածնի նվազագույն քանակով, այլ տեսակներ, առանձնապես պողպատու ծառերը, հողի թթվածնի նկատմամբ ցուցաբերում են մեծ պահանջ:

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՏԵՐ, *Пастбищезащитные лесные полосы; pastures forest shelter belts*

Պաշտպանական անտառաշերտերի տարատեսակ: Անթափանցելի կառուցվածքի գծային անտառաշերտեր, որոնք հիմնադրվում են քարձրացնելու արոտավայրերի արդյունավետությունը, պահպանելու կենդանիներին քամիներից, փոշեմորիկ-

ներից: Միջբերտային տարածությունը 50-350մ-ից 1000-2000 մ է: Մի հողատարածքից մյուսն անցնելու համար անտառաշերտում 500-900 մ հեռավորության վրա թողնում են 15-30 մ լայնությամբ անցումներ:

ԱՐՏԱԲՆԱՓՈՒՅՏ, *Заболонь; alburnum*

Բնափայտում կամբիումի և բնամիջուկի (կամ հասուն բնափայտի) միջև ընկած հատվածը: Կազմված է կենդանի քեղջներից: Ա. միջուկից տարբերվում է համեմատաբար բաց գույնով: Հասուն բնափայտային տեսակներում այն հնարավոր է տարբերել միայն թարմ կտրվածքում Ա. ծառաբնի ֆիզիոլոգիական ակտիվ մասն է, նրա անոթների միջոցով իրականացվում է արմատներից դեպի տերևները վերելակ հոսքը: Երիտասարդ ծառերի բունը կազմված է համարյա միայն Ա.-ից: Հասակի հետ նրա ծավալը փոքրանում է: Փարթամ պսակ ունեցող ծառերի Ա.-ի ծավալը մեծ է: Կենսադիմացկունության տեսակետից այն զիջում է բնամիջուկին:

ԱՐՏԱԲՆԱՓՈՒՅՏԻ ՓՏԱՆՏ, *Заболонная гмль (заболонка); sap-wood rot*

Հատված կամ չորացած, բայց կանգուն մնացած ծառերի արտաբնափայտում քայքայող սնկերի ազդեցությամբ առաջացած ոչ նորմալ գունավորում է: Բնորոշ է բուրբ ծառատեսակներին և առաջանում է բնափայտի երկարատև, ոչ միշտ պահպանմից: Ասեղնատերևավորների բնափայտում արտաղ երևում է դեղնամոխրագույն, իսկ լայնատերևավորների մոտ՝ խայտաբղետ, մարմար հիշեցնող նկարով: Փտախտով վարակված բնափայտը դառնում է թեթև, փխրուն և զոթթե ամբողջովին կորցնում է արտաքին լարումներին դիմադրելու հատկությունը, սակայն մեծանում է ջրակլանողականությունն ու ջրաթափանցելիությունը:

ԱՐՏԱԶՈՆԱԼ (ԷՔՏՐԱԶՈՆԱԼ) ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Экстрозональная растительность; extrazonal vegetation*

Բնական բուսականություն, որը գտնվում է իր հիմնական արեալի սահմաններից դուրս: Սովորաբար կրում է օջախային բնույթ՝ աճելով բնական արեալի էկոլոգիային նման միկրոպայմաններում: Օրինակ տափաստանային «կղզյակները» անտառային գոտու դիրքադրության լեռնալանջերի վրա:

ԱՓՊԱՇՏՊԱՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Берегозащитные леса; beach forest shelter belts*

Պաշտպանական անտառների տարատեսակ: Լճերի, գետերի, ջրամբարների ափերին գտնվող անտառներ, որոնք ամրացնում են գետերի և ջրավազանների ափերը, պահպանում փլուզումից՝ կանխելով էրոզիոն նյութերի մուտքը ջրամբարներ: Կատարում են կենսաֆիլտրի դեր:

Բ

ԲԱԶՄԱԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՕՂԱՆՈՒՄԱՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ, *Многомаршрутная аэрофотосъёмка; multi-track aerial photography*

Բազմաերթուղանի (մակերեսային) օդայուսանկարահանման դեպքում նկարահանվող տարածքը ծածկվում է օդայուսանկարահանման զուգահեռ երթուղիներից, որոնք սովորաբար ունեն արևմուտքից-արևելք ուղղվածություն:

ԲԱԶՄԱԿՈՄՊԼԿՏ ԽՈՒՄԲ, *Поликомпактная группа; polycorrupt group*

Ծառափերի կամ ծաղիկների խումբ, որը կազմված է երկուսից ավելի տեսակներից: Պահանջում է տեսակային կազմի ճիշտ ընտրություն՝ ելնելով դրանց գեղազարդային և կենսաբանական առանձնահատկություններից:

ԲԱԶՄԱԿՈՒՒՏՆՈՒԿԱՆ ՅՈՂԱՄԱՍ, *Поликультурный участок; polycultural area (district, place)*

Գեղազարդային հատուկ ցուցադրանք, որում օգտագործվում են տարբեր ընտանիքների և ցեղերի ներկայացուցիչներ: Ունի ինչպես գիտական (կոլեկցիոն), այնպես էլ գեղարվեստական-գեղազարդիչ նշանակություն: Գեղազարդային պարիզագործությունում առավելագույն ընդունված են հետևյալ ձևավորումները. կոնիֆերետում (ասեղնատերև բույսերի հողամաս), արքրերետում (ծառափային բույսերի հողամաս), ալպինարիում, քարապարտեզ, երկարածաղկուն և մշտածաղկուն պարտեզներ, բուրաստան և այլն:

ԲԱԶՄԱՍՅԱ ԲՈՒՅԱԵՐ, *Многолетние растения; perennial plants*

Ծառեր, փեր, կիսափեր, ինչպես նաև խոտաբույսեր, որոնք ապրում են երկու և ավելի տարիներ: Բ.Բ. ունեն տարբեր երկարակեցություն: Պոլիկարպ են: Բ.Բ. բաժանվում են կոճղարմատավորների, պալարակոճղարմատավորների, սոխուկավորների և հաստացած արմատներ ունեցողների:

ԲԱԶՄԱԿՅՈՒՆԱՅԻՆ ՎԵԿՏՈՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ, *ПолYGONALные Векторные объекты; Polygonal vector objects*

ԱՏԳ-ի երեք հիմնական վեկտորային տարածական միավորներից մեկը (կետին և գծին զուգահեռ), որի օգնությամբ ցույց են տրվում մակերեսային տարածում ունեցող օբյեկտները՝ լճերը, անտառտնտեսությունները, քառակուսիները, հատվածները և այլն:

ԲԱԶՏԱՐՊՏՆԱԲԵՐ ԲՈՒՅՍ, *Паликарлик; polycaptic plant*

Բազմամյա խոտաբույս, ծառ, թուփ, որը պտղաբերում է բազմաթիվ տարիների ընթացքում:

ԲԱԶՏԱՍՊԴԵԿՏՐԱԼ ՍԿԱՆԱՎՈՐՈՒՄ, *Многоспектральное сканирование; Multispectral scanning*

Բազմասպեկտրալ սկանավորումը արբանյակներից իրականացվող, համակարգչային հազեցած, հեռահար ուսումնասիրման եղանակ է: Սովորական կամերայի և ժապավենի փոխարեն կիրառվում են սկանավորող սարքեր: Էլեկտրամագնիսական սպեկտրի բազմաթիվ նեղ տիրույթներով (ալիքներում) անդրադարձվող լույսի ինտենսիվությունը գրանցվում է յուրաքանչյուր սկանավորող տողի համար: Գետազոտման այս եղանակը նույն անտառտարածքի վերաբերյալ տրամադրում է միաժամանակյա տեղեկատվություն մի քանի սպեկտրներով, ինչն օգնում է ծառուտի բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրմանը: Բազմասպեկտրալ նկարահանումը սովորաբար կատարվում է տեսանելի և ինֆրակարմիր տիրույթի միաժամանակ 3-7 նեղ սպեկտրալ զոնաներում: Երբեմն այս զոնաներին ավելացվում է պանխրոմատիկ (սև և սպիտակ) զոնան:

ԲԱԶՏԱՍՊԴԵԿՏՐԱԼ ՍԿԱՆԵՐԱՅԻՆ ՆԿԱՐՆԵՐ, *Многоспектральные сканерные снимки; Multispectral scanner images*

Բարձր տարածական թույլատրելիություն ունեցող նկարներ ստանալու համար: Նկարների այս խումբը առավել արժեքավոր տեղեկություններ է տալիս անտառածածկի վերաբերյալ:

ԲԱԶՍԱՑՈՒՄ, *Размножение; breeding, reproduction*

Բուսական օրգանիզմի կողմից քանակական ավելացման ու պահպանման նպատակով նոր անհատների առաջացում: Տեղի է ունենում զենքատիվ (սերմերով) և վեգետատիվ (կոճղաշիվերով, արմատային ընձյուղներով, անդալիսով, կտրոնավորման) ճանապարհով:

ԲԱԺՄՆԻՉ ՇԵՐՏ, *Разделительная полоса; separation belt*

Կանաչ տարածություն՝ երթևեկելի մասի և մայթի, հակաօսկ ուղղություններով երթևեկելի մասերի միջև: Փողոցի կամ մայրուղու կանաչապատման կարևոր տարրերից է:

ԲԱՆԱՐԳԵԼՄԱՆ ԶՈՆԱ, *Буферная зона; buffer zone*

Պատմական զբոսայգուն, հուշահամալիրին, արգելոցին հարող հատուկ տարածք: Նախատեսված է այցելուների ակտիվ, ազատ հանգստի և պետության պահ-

պանության ներքո գտնվող օբյեկտները վնասվելուց (տրորել, ծածերը քարոյել և այլն) պաշտպանելու նպատակով, նրանց ուշադրությունը մասնակիորեն շեղելու համար:

ԲԱՂՂԱՏԻ, Дрань; kash

Սղոցանյութի տեսականի, բարակ, մեղ տախտակ՝ պատրաստված հիմնականում ասեղնատերևավոր տեսակների բարձրորակ, առանց ոստերի բնափայտից: Օգտագործվում է կահույքագործության և շինարարության մեջ:

ԲԱՂԴ ԾԱՌՈՒՏ, Сложный древостой; composite stand

Բազմաշարահարկ ծառուտ, որտեղ ծառերը կազմում են 2 և ավելի շարահարկեր:

ԲԱՐՉԱՆՍԱԸ ԲՈՒՅԱԵՐ, Подушкообразные растения; cushion plants

Կենսածև, որը բնորոշվում է գետնահար գաճաճ հասակով, բարձր-կիսագունգ հիշեցնող հավաք՝ խիտ սաղարթով: Օգտագործվում է ցայտերանգ խմբեր, քարաբլուրներ և այլն ստեղծելիս (զազի և ականատալիմոնի տարբեր տեսակներ, կորնգան եղջյուրավոր):

ԲԱՐՉՐԱԴԻՐ ԶԲՈՍԱՅԳԻ, Назорный парк; hillside park

Զրոսայգի լեռան կամ բլրի լանջերին: Այցի է ընկնում ծավալատարածական լուծման բարդությամբ, տարբեր մակարդակների վրա սանդղափուլների ամբայությամբ: Զրոսայգու միավորող և բարձրության ճիշդի տարբերությունը հաղթահարող տարրերն են՝ աստիճաններն ու թեքամուտքերը:

ԲԱՐՉՐ ԼՐԻՎՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌ, Высокополюнный лес; forest with high basal-area

Անտառ, որի լրիվությունը 1.0-0.8 է:

ԲԱՐՉՐԱԲՈՒՆ ԾԱՌՈՒՏ, Высокополюнный древостой; high stem stand

Անտառ, որը կազմված է սերմնային ծագում ունեցող բարձրարուն ծառերից:

ԲԱՐՉՐԱԲՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, Высокоствольное хозяйство; high stem enterprise

Երբ անտառտնտեսվարումը տարվում է սերմնային ծագում ունեցող բարձրարուն ծառուտ ստանալու նպատակով: Վերջինս, համեմատած կոճղաշիվային ցածրարուն ծառուտների հետ, օժտված է երկարակեցությամբ և բարձր արտադրողականությամբ:

ԲԱՐՉՐԱՉԱՓ, Высотамер; altimeter

Աճող ծառի բարձրությունը չափող սարքեր: Օգտագործում են բազմաթիվ բ. սարքեր՝ չափիչ երկճղի, ֆաուստմանի հեռաչափ և այլն, որոնց որոշման հիմքում ընկած է եռանկյունիների նմանության օրենքը:

ԲԱՐՉՈՒՄԻՅՅԱՆ ԿՈՐԱԳԻԾ, *Кривая высоты; curve of height*

Յույց է տալիս ծառատեսակի բարձրության և տրամագծի հարաբերությունը: 20-ից ոչ պակաս ծառերի բարձրության և տրամագծի ցուցանիշները տեղադրում են միլիմետրաթղթի վրա՝ կորաքանոնով կամ ձեռքով միացնում կետերը և ստանում բարձրության կորագիծը:

ԲԱՐՉՈՒՄԻՅԱՅԻՆ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԱՓՈՒՆՈՒՄ, *Вертикальный температурный градиент; vertical thermal (temperature) gradient*

Լեռնալանջով յուրաքանչյուր 100 մ բարձրանալիս ջերմաստիճանի իջեցման քանակական բնութագիր (սովորաբար 0.5⁰-ով):

ԲԱՅԱՍ, *Полянка; glade*

Անտառում խոտաբույսերով պատված, ծառազուրկ տարածք: Բ.-ի տրամագիծը լինում է շրջապատող ծառերի բարձրությունից ավելի, որին բնորոշ է որոշակի ջերմա-լին ռեժիմ, որը կախված է նրա մեծությունից, ռելիեֆից և անտառի վիճակից:

ԲԱՅԱՍԻԿ, *Лужайка; bottom-glade*

Խոտաբույսերով ծածկված ոչ մեծ, 0.5-1.0 հա մակերեսով տարածություն անտառում, անտառապուրակում, զբոսայգում:

ԲԱՅՎԱԾՔ, *Прогалина; gap*

Անտառում ծառերից զուրկ ոչ մեծ տարածություն, որտեղ պահպանված են անտառային բուսականության տարրեր: Առաջանում է քամետապալման, ձնետապալման կամ սխալ հատումների հետևանքով:

ԲԵՐՍՈ, *Берса; bersa*

Կամարածև սրահ, ծառուղի կամ թարմա կեչու, լորենու, րոխու ծառերից: Որպես նեցուկ օգտագործվում է կիսակլոր գործված հիմնակմախքը:

ԲԻՆԴԱԾ

Տե՛ս Բերսո

ԲԻՈՏԻԿ (ԿԵՆՍԱԾԻՆ) ԳՈՐԾՈՆՆԵՐ, *Биотические факторы; biotic factors*

Կենդանի օրգանիզմի համակողմանի ազդեցությունն այլ օրգանիզմների գործունեության վրա: Կենդանի օրգանիզմները կարող են հանդիսանալ կեր կամ միջավայր մեկ այլ խումբ օրգանիզմների համար, նպաստել նրանց տարածմանը և կենսագործունեությանը:

ԲԻՈՏԻՊ: ԿԵՆՍԱՏՈՊ, *Biotop; biotope*

Ջրամբարի կամ ցամաքի տեղամաս, ռելիեֆի, կլիմայի և արհիտոնի այլ գործոնների նմանությամբ, որը զբաղեցված է որոշակի կենսացենոզով: Տվյալ բիոտոպի համար բնորոշ պայմանների կոմպլեքսը որոշում է այստեղ բնակվող օրգանիզմների կազմը: Այլ կերպ ասած, բիոտոպը կենսաերկրացենոզի (էկոհամակարգի) անօրգանական համամասնությունն է:

ԲՆԱՐՆՉՅՈՒՂՆԵՐ, *Волчки; water shoots*

Տե՛ս Բնաշիվեր:

ԲՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՒՄ, *Естественное загрязнение; natural pollution*

Բնական, հիմնականում տարերային երևույթների (հրաբխի ժայթքում, անտառային հրդեհներ, փոշու մորիներ և այլն) հետևանքով առաջացած աղտոտում: Բնական պրոցեսների վրա մարդու ազդեցության հետևանք չէ:

ԲՆԱԿԱՆ (ԲՆՈՒԹՅԱՆ) ԳՈՒՇԱՐՉԱՆՆԵՐ, *Природные памятники; natural monuments*

Անտառում դարավոր ծառեր, մնացուկային ծառատեսակներից կազմավորված ծառուտներ, քարանձավներ, երկրաբանական մերկացումներ, լճեր և այլ բնական օբյեկտներ, որոնք ունեն գիտական, ճանաչողական, բնապատմական որոշակի նշանակություն:

ԲՆԱԿԱՆ ՆՈՍՐԱՅՈՒՄ, *Естественное изреживание; natural thinning*

Անտառում բնական նոսրացումն արդյունք է բնական ընտրության, որն ընթացում է արտաքին միջավայրի և բուսական բարդ համակեցություններում՝ առանձին բույսերի հատկությունների համագործակցության պայմաններում: Բ.ն.-ման պրոցեսում մահանում, շարքից դուրս են գալիս թույլ, տվյալ պայմաններին չհարմարված ծառերը: Այն բույսերը, որոնք որևէ հատկանիշով քիչ թե շատ առավելություն ունեն մյուսների նկատմամբ, պահպանվում են և կազմավորում ծառուտ: Տարերայնորեն, բնական ընտրության ճանապարհով կազմավորված անտառը միշտ չէ, որ համապատասխանում է մարդու գործնական պահանջարկին, ուստի տնտեսական արդյունավետ ծառուտներ ստանալու համար անհրաժեշտ է անտառակառավարման ընթացքում միջամտել նոսրացման պրոցեսին՝ տալով նրան հնարավոր ցանկալի ուղղություն:

ԲՆԱԿԱՆ ՊԱՐԿԵՐԻ ԱՆՏԱՐՆԵՐ, *Леса природных парков; natural parks of forests*

Առաջին խմբի անտառների պաշտպանական կատեգորիա: Բնական պարկերի տարածքում հանդիպող անտառներ, որոնք ծառայում են բնապահպանական, մշակութային և ռեկրեացիոն նպատակներով:

ԲՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆՎՈՒՄ, *Естественное возобновление; natural regeneration*
(*reforestation*)

Բուսականության վերականգնում սերմերով, արմատային ընձյուղներով, շիվերով՝ մայրական կամ այլ առազաստի տակ: Նոր պայմաններում թույսերի կլիմայավարժեցման ցուցանիշներից է:

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳԵՈՄԱԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆ, *Перспективный план озеленения населенных мест; perspective plan for settlements greening*

Բնակավայրում տնկարկներ ստեղծելու պլան: Նախատեսված է 20-25 տարվա համար: Ընդգրկում է քաղաքի, ավանի և քաղաքամերձ գոտու կոնպլեքսային կանաչապատումը:

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԱՅՆԱՋՆԵՐ, *Градостроительные требования к озеленению населенных мест; urban construction requirements to settlements' greening*

Գիմնական հրահանգներ, նորմեր, կանաչապատվող օբյեկտների նախագծման և շինարարության կանոններ, որոնք անհրաժեշտ կապ ունեն ընդհանուր ճարտարապետանախագծային խնդիրների լուծման հետ:

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ, *Озеленение населенных мест; settlements' greening*

Բնակչության աշխատանքի, կենցաղի և հանգստի բարենպաստ միջավայր ստեղծելու, բնակելի թաղամասերի միկրոկլիման, սանիտարահիգիենիկ պայմանները և ճարտարապետանախագծային ձևավորումը բարելավելու նպատակով պարտեզներ, զբոսայգիներ և տարբեր նշանակության տնկարկներ ստեղծելու միջոցառումներ քաղաքներում ու բնակավայրերում:

ԲՆԱԿԵԼԻ ՇՐՋԱՆ, *Жилой район; residential area*

Քաղաքի բնակելի տարածքի մաս: Բաղկացած է միկրոշրջաններից: Սպասարկվում է կուլտուր-կենցաղային հիմնարկների համալիրով: Ունի կանաչապատման զարգացման համակարգ՝ զբոսայգի, պուրակներ, ծառուղիներ, փողոցներ, հասարակական շենքերի մատույցներ ժամանակակից նորմերով, բնակելի շրջանի մինչև 60 %-ը պետք է կանաչապատված լինի:

ԲՆԱԿԵԼԻ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄ, *Возрастная структура населения жилого района; age structure of residential area population*

Բնակելի տարածքի բարեկարգումը և կանաչապատումը պլանավորելու, նախագծելու, բնակիչների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված տարբեր նպատակներով օգտագործվող հրապարակները տեղադրելու համար

անհրաժեշտ ցոցանիչ: Չափվում է բացարձակ (1000-մարդու ընկնող) և հարաբերական (%) մեծություններով:

ԲՆԱԳՈՂ, *Гумус, зрунт; humus*

Երկրակեղևի հողմահարման գոտում, անմիջապես հողածածկի տակ գտնվող և մարդու ինժեներական գործունեության օրյեկտ հանդիսացող լեռնային ապարների ընդհանուր անվանումը: Բնահողի և հողի միջև կատարվում է գազերի, լուծույթների և ջերմային էներգիայի մշտական փոխանակություն:

ԲՆԱՄԻՋՈՒԿ, *Ядро древесины; core of wood*

Գտնվում է պերիֆերիկ (կենտրոնական գլանի արտաքին շերտի) կենտրոնում, որը կազմված է խոշորաբջիջ, նուրբ պատերով պարենցիմից, որտեղ կարող են կուտակվել պաշարանյութեր: Տարիքի հետ որոշ բույսերի (կաղնի, կեռի և այլն.) բնափայտի ավելի հին շերտերում կուտակվում են մետաղլիզմի արգասիքներ՝ դաբադանյութեր, խեժեր, աղեր, որի հետևանքով այն ստանում է մուգ գույն: Դա բնամիջուկն է, կորիզային բնափայտը:

ԲՆԱՅԻՆ ՄԱՅԱՆ, *Левая поросль; stump coppice*

Օտարփայլին որոշ տեսակների (լորենի, սոսի, ուռենի) մահանալուց կամ վերերկրյա մասի հատումից հետո արմատավզիկից վերև առաջացած վերականգնման շիվեր:

ԲՆԱՇԻՎԵՐ, *Водяные побеги, волчки; water shoots*

Տե՛ս Բնաընձյուղներ:

ԲՆԱՊԱՏԿԵՐ, *Пейзаж; landscape, scenery*

Տեսողական ընկալման որոշակի սահմաններով ու պայմաններով սահմանափակված լանդշաֆտի մի հատված: Ըստ տարածական սկզբունքի լինում է բաց, կիսաբաց, կիսափակ:

ԲՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՐՎԵՍ (ԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԱՐՎԵՍ), *Пейзажное искусство; landscape art*

Մարդու տնտեսական գործունեության, ինչպես նաև սողանքների, հեղեղատների և այլնի առաջացման հետևանքով խախտված լանդշաֆտի վերականգնման, զեղարվեստական բարելավման ու ծնավորման միջոցառումների նախագծում ու մշակում: Նպատակ ունի բնակչության համազտի համար ստեղծել բարենպաստ միջավայր:

ԲՆԱՊՈՒՏԿԵՐԱՅԻՆ (ԼԱՆՂԱՖԱՏԱՅԻՆ) ԶԲՈՍԱՅԳԻ, *Пейзажный парк; landscape park*

Լանդշաֆտային որոշակի կոմպլեքսով տարածք (5-100 հա), որի հատակագծային տարրերը բնական դասավորություն ունեն: Օգտագործվում է սահմանափակ ռեժիմով հանգստի համար:

ԲՆԱՊՈՒՏԿԵՐԱՅԻՆ ԴԱՏԱԿԱԳՇՈՒՄ, *Пейзажная планировка; landscape planning*

Չինաստանի և ճապոնիայի հնագույն այգիներին բնորոշ պարտեզպարուկային արվեստի ոճ, որը զարգացել է հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում XVIII-XIX դարերում: Այժի է ընկնում մարզագետիներում ու բաց տարածություններում ազատորեն տեղադրված ծառախմբերի գեղատեսիլությամբ, կածանների ուղեգալարներով, ժայռոտ հատվածների ընդգրկմամբ, սանդղաջրվեժներ ունեցող ջրհոսքերով, ինչպես նաև ճարտարապետական փոքր ձևերով, նստարաններով, տաղավարներով:

ԲՆԱՊՈՒՏԵՉ, *Природный парк; Natural Park*

Տեղանքի որոշակի լանդշաֆտային յուրահատկություններով բնորոշվող տարածք (անտառ, տափաստան, լեռներ, ժայռեր, գետեր, ջրվեժներ, ինքնատիպ բուսական և կենդանական աշխարհ), որը ենթակա է հատուկ պահպանության և միաժամանակ մատչելի է գիտական հետազոտությունների և ուսուցման համար: Ունի որոշակի արգելոցային ռեժիմ:

ԲՆԱՏԵՍԱՐԱՆ, *Вид; scenery*

Բնապատկերի մաս: Լանդշաֆտային ճարտարապետության օբյեկտների նախագծման մեջ լայնորեն օգտագործվող տերմին: Կանաչապատման օբյեկտների նախագծման ընթացքում բնապատկերի գեղարվեստորեն այժի ընկնող առանձին մասերի հմուտ առանձնացման արվեստ:

ԲՆԱՏԵՍԱՐԱՆԱՅԻՆ ԿԵՏ, *Видовая точка, scenery point*

Բնատեսարանը ավելի լավ ընկալելու տեղ՝ անտառպուրակի, զբոսայգու, պարտեզի տարածքում: Սովորաբար ընտրվում է կանաչապատման օբյեկտի հատկազօի գեղարվեստական վերլուծության և ուրվագծային մշակման ժամանակ:

ԲՆԱՓՈՒՅՏ, *Древесина; wood, timber*

Կամրիումից առաջացած հյուսվածք, որը կատարում է նյութերն արմատից դեպի տերևները փոխադրող մեխանիկական և պահեստավորման դեր: Բ-ի հիմնական զանգվածը կազմում են բունը, կմախքային ճյուղերը և արմատները:

ԲՆԱՓՈՒՅՏԱՅԻՆ ԿԱՆԱԿ, *Древесная зелень; wood greens*

Ծառատեսակների չփայտացած բարակ (մինչև 0.8 մմ) ճյուղեր և տերևներ, որոնք օգտագործվում են որպես հումք վիտամինային այլուր պատրաստելու համար:

Պարունակում են վիտամիններ, հիմնականում պեկտիններ (8-15 %), ճարպեր (5-8 %), քաղաճախյին ազոտազուրկ նյութեր, այդ թվում՝ դյուրամարս ածխաջրեր (3%), միկրոտարրեր և այլն: Բ.Կ. մթերում են անտառհատումների ժամանակ:

ԲԱԱՓԱՅՏԻ ԱԼԻՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԱԼԻՔԱՎՈՐ ԲԱԱՓԱՅՏ), *Волнистость древесины; waviness (buckles, corrugation) of wood*

Բնափայտի ոչ կանոնավոր կառուցվածք, որն արտահայտվում է տարեկան օղակների ալիքավոր դասավորությամբ: Բ. Ա. բացասաբար է ազդում նրա մեխանիկական հատկությունների վրա: Սակայն հաճախ առաջանում է փայտի գեղեցիկ կառուցվածք, որը քարծր է զնահատվում կահույքագործության մեջ:

ԲԱԱՓԱՅՏԻ ԱՃ, *Прирост древесины (в древесостое); wood growth (in stands)*

Սեծություն, որի փոփոխությունը ծառի հասակի ընթացքում հանգեցնում է ծառուտի պաշարի ավելացման: Բ.Ա.-ի վրա ազդող գործոններն են՝ ծառերի կենսաբանական առանձնահատկությունները, ծառուտի ծազումը, հասակը, լրիվությունը, սանիտարական վիճակը, աճման պայմանները և կիրառվող անտառտնտեսական վիճակը, աճման պայմանները և կիրառվող անտառտնտեսական միջոցառումները (հիմնականում միջամտյալ հատումները): Դիտվում և զնահատվում է 2 առումով՝ միջին աճ և ընթացիկ աճ, որոնք քացարձակ ցուցանիշները երիտասարդ հասակում մոտավորապես նույնն են: Հասակի հետ աճերն ավելանում են և հասնում իրենց առավելագույն սահմանին, ապա աստիճանաբար փոքրանում՝ ցուցաբերելով տարբեր տեմպ: Ծառուտի աճի ավելացումը սկզբնական շրջանում ընթանում է միջին աճից արագ: Մինչև քանակական հասունացման տարիքը ընթացիկ աճի ցուցանիշը գերազանցում է միջին աճին, այնուհետև՝ զիջում նրան: Աճի ցուցանիշի փոփոխման ինտենսիվությունը հիմնականում պայմանավորված է ծառուտի լրիվությամբ, որը և ծառայում է որպես ծառերի և ծառուտի կենսունակությունը բնորոշող քանակական ցուցանիշ: Ծառուտի աճի ցուցանիշն արտահայտում է նրա աճման բնույթը և հնարավորություն է տալիս դատելու կիրառված ու կիրառվելիք անտառտնտեսական միջոցառումների արդյունավետության մասին:

ԲԱԱՓԱՅՏԻ ԱՍՐՈՒԹՅՈՒՆ, *Твердость древесины; wood steadiness (constancy)* ԲԱԱ

Բնորոշում է բնափայտի դիմադրողականությունն առավել ամուր մարմինների ներթափանցմանը: Որոշում են 11.28 մմ կտրվածքով կիսազնդիկը բնափայտի մեջ 5.64 մմ խորությամբ (որը հավասար է 1 սմ²) ներթափանցման համար պահանջվող ուժով: Որոշում են ընդլայնակի տանգենցիալ և շառավղային կտրվածքներում: Որպես Բ.Ա.-յան միավոր ընդունված է $K^4/սմ^2$, որը եթե ընդլայնական կտրվածքում 4-ից ցածր է, կոչվում է փափուկ բնափայտ (սոճի, եղևնի, մայրի, կաղամախի), 4-8 $K^4/սմ^2$ ամուր բնափայտ (հաճաբենի, հացենի, կաղնի, կեչի), 8-ից ավելի $K^4/սմ^2$ շատ ամուր բնա-

փայտ ունեցող տեսակներ (կեղծ ակացիա, բոխի, վրացական թխկի, երկաթածառ և այլն):

ԲՆԱՓԱՅՏԻ ԱՐԱՏՆԵՐ, *Пороки древесины; wood defects*

Առաջանում են տարբեր վնասվածքների, հիվանդությունների ու կառուցվածքային շեղումների հետևանքով: Լինում են աճող ծառի և կտրված բնափայտի արատներ, որոնք տարբեր են արտաքին տեսքով և առաջացման պատճառով: Ա-ները բացասաբար են ազդում բնափայտի տեխնիկական հատկությունների վրա՝ սահմանափակելով նրա օգտագործման բնագավառները:

ԲՆԱՓԱՅՏԻ ԱՐՏԱԶԻՆ ԿԱՌՈՒԹՎԱԾՔ (ՏԵՔՍՏՈՒՐԱ), *Текстура древесины; wood texture*

Բնափայտի բնական պատկերը տանգենցիալ և շառավղային կտրվածքներում, որը կախված է տարեկան օղակների և անատոմիական տարրերի դասավորման բնույթից: Բ.Ա.Կ.ով պայմանավորված է նրա գեղագաղղ տեսքը:

ԲՆԱՓԱՅՏԻ ԳՈՐՇԱՅՈՒՄ, *Побурение древесины; wood boring*

Բնափայտի արատ, որի ժամանակ արտաբնափայտն ընդունում է տարբեր երանգների գորշ գունավորում: Բնորոշ է թարմ կտրած սաղարթավոր ծառերին (հաճարենի, կեչի, կաղամախի...), որպես հետևանք բջիջների դանդաղ մահացման և բջջահյութի կազմի փոփոխման: Լինում է գլխանիստային, որն սկսվում է գլխանիստային կտրվածքից ու տարածվում էյուսվածքների երկայնքով, և կողային՝ սկսվում է տախտակի եզրային կտրվածքից ու տարածվում դեպի կենտրոն:

ԲՆԱՓԱՅՏԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, *Плотность древесины; wood density*

Ֆիզիկական ցուցանիշ է, որը ցույց է տալիս բնափայտային բուն զանգվածի և ընդհանուր ծավալի հարաբերությունը: Որոշվում է հետևյալ բանաձևով՝ $Q = m/v$, որտեղ m -ը տվյալ փայտամուշի զանգվածն է, v -ն՝ ծավալը:

ԲՆԱՓԱՅՏԻ ԿԱՊՏՈՒԹՅՈՒՆ, *Синева древесины; blue stain*

Մոխրակապտավուն անբնական գունավորում, որն արդյունք է որոշ սնկերի գործունեության: Նկատվում է չորացած ծառերի սխալ պահված, սղոցված փայտանյութում, խոնավ փայտային կառուցվածքներում, բնափայտի եզրային մասերում, հիմնականում արտաբնափայտի սահմանում: Բ.Կ. հաճախ ընդգրկում է նաև բնափայտի միջուկային մասը:

ԲՆԱՓԱՅՏԻ ԿԵՂԵՎԱԳԱՆՈՒՄ, *Окорка древесины; disbarking*

Կեղևի հեռացում չմշակված փայտանյութի վրայից: Կատարվում է ռոտորային, թմբուկային և այլ մեքենաների, գերբարձր հաճախականության ճառագայթավոր-

ման և ձեռքի գործիքների միջոցով: Բ.Կ. նպաստում է փայտանյութի որակի պահպանմանը, բարձրացնում փայտամշակման արտադրողականությունը:

ԲԱՎՓԱՅՏԻ ԳԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, *Комплексное использование древесины; timber complex utilization*

Բնափայտի և նրա թափոնի օգտակար բոլոր տարրերի բազմակողմանի տնտեսական օգտագործում: Բնափայտն օգտագործում են որպես գերան, տախտակ, վառելափայտ, քիմիական և այլ արդյունաբերական հումք (բնափայտից պատրաստում են 20000-ից ավելի առարկաներ):

ԲԱՎՓԱՅՏԻ ԵՄՔՐՈՒՄ, *Потрескивание древесины; wood crackling*

Բնափայտի լայնակի և եզրային կտրվածքներում ճաքերի առաջացում, որոնք մեծ մասամբ ունենում են շառավղային ուղղություն: Հիմնականում հետևանք է չորացման ընթացքում տարբեր ուղղություններով անհավասարաչափ սեղմման: Որքան արագ է ընթանում չորացումը, այնքան շատ է բնափայտը ճաքում:

ԲԱՎՓԱՅՏԻ ՄՅԵՐՈՒՄ, *Заготовка древесины; timber processing*

Անտառօգտագործման հիմնական եղանակ: Ընդգրկում է ծառը կտրելու, հատատեղից դուրս բերելու, ներքին պահեստում մասնակի մշակելու բոլոր գործողությունները:

ԲԱՎՓԱՅՏԻ ՓԱՅԼՔ, *Блеск древесины; wood brightnees*

Բնափայտի կտրվածքի մակերեսից լուսային ճառագայթների արտացոլման ունակությունը: Կախված է ծառատեսակից, կտրվածքի մակերեսի հարթությունից, լուսի բնույթից: Փայլքով առանձնապես աչքի են ընկնում այն տեսակները, որոնց բնափայտային ճառագայթները շատ են՝ թխկին, կաղնին, հացենին, թեղին, հաճարենին և այլն:

ԲԱՎՓԱՅՏԻ ՓՏՈՒՄ, *Гниение древесины; wood decay*

Սնկերի ազդեցության ներքո բնափայտի կենսաբանական քայքայում: Տեղի է ունենում բնափայտ քայքայող սնկերի կենսազորունության համար բարենպաստ պայմաններում (բնափայտի մեջ ազատ օրի թանակը պետք է լինի ոչ պակաս 18-20%, իսկ օդի նվազագույն ծավալը՝ 5-20 %):

ԲՆԻ ՏՐԱՄԱԳԻԾ, *Диаметр ствола; stem diameter*

Անտառզնահատման կարևոր ցուցանիշ: Չափվում է հողի մակերևույթից 1.3 մ - բարձրության վրա:

ԲՆԻ ՔՈՒՅՎԱԾՈՒՄ, *Законелистость; stem buttress*

Ծառաքնի ձևի արատ: Բնորոշ է բոլոր տեսակներին: Հաստացումը լինում է կլոր կամ կողավոր: Դժվարացնում է գերանների օգտագործումը, նվազեցնում շինփայտի ելքը: Սեծացնում է տախտակների հյուսվածքների շառավղային թեք դասավորվածությունը:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ, *Особо охраняемые природные территории; special protected natural territories*

Սակերևութային ու ստորերկրյա ջրերի, ընդերքի, ցամաքի բուսական ու կենդանական աշխարհի և համապատասխան օդային տարածությունների օրենքով սահմանված կարգով առանձնացված հողամասեր (տարածքներ) և առանձին բնական օբյեկտներ, որոնք բնապահպանական, գիտական, ասոցիապահական, մշակութային, տուրիստական գեղազիտատական արժեք են ներկայացնում և լրիվ կամ մասամբ, ժամանակավորապես կամ մշտապես ենթակա չեն տնտեսական շահագործման և որոնք համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներն են՝ պետական արգելոցները, Ազգային պարկերը, Արգելավայրերը, բնության հուշարձանները և այլն:

Հայաստանի հանրապետությունում պետականորեն սահմանված բնության հատուկ պահպանվող տարածքները 28-ն են, 3-ը՝ արգելոցներ, 2-ը՝ ազգային պարկեր, իսկ 23-ը՝ արգելավայրեր: Դրանք ընդհանուր տարածքը կազմում է հանրապետության մոտ 10%-ը՝ 300 հազ. հա:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆ, *Памятник природы; natural monument*

Բնության առանձին օբյեկտ, որը պահպանվում է կամ արժանի է պահպանման իր գիտական, ուսումնալուսավորչական, պատմահուշային նշանակության շնորհիվ (երկրաբանական բացառիկ օբյեկտ, շատ հնագույն ծառ, էկզոտ բույսերի խումբ, քարանձավ, ջրվեժ, աղբյուր և այլն): Հաճախ կապված է որոշակի պատմական իրադարձությունների և անձերի հետ:

ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ, *Охрана природы; nature protection*

Միջոցառումների համակարգ, որն ուղղված է բնության պահպանմանը, վերարտադրմանը և կայուն օգտագործմանը, մարդ-բնություն փոխադարձության կարգավորմանը՝ դարձնելով այն ներդաշնակ և հավասարակշռված: Հիմնական նպատակն է պահպանել գենետիկական բազմազանությունը, վերջինիս զարգացման և փոխազդեցության բնական ընթացքը, բույսերի և կենդանիների, ինչպես նաև առանձին էկոհամակարգերի հիմնավորված, ռացիոնալ օգտագործումը:

ԲՈՒՄՈՒՎԳԾԱՅԻՆ (ԵԶՄՎԳԾԱՅԻՆ) ԴԱՏՈՒՄ, *Каймовая рубка (каймчато-лесосечная рубка); strip cutting*

Անտառագտագործման գլխավոր հատման տարատեսակ, որի ժամանակ ծառուտը հատում են աստիճանաբար կամ համատարած առանձին նեղ շերտերով՝ լայնությունը՝ 12-15 մ, երկարությունը՝ 150-300մ: Աստիճանական հատման դեպքում հեռացվում է եզրաշերտերի պաշարի 20-25 %-ը: Առաջին բուրգագծում քնական վերականգնումն ապահովելուց հետո հատում են երրորդը՝ ընդգրկելով միաժամանակ առաջին և երկրորդ բուրգագծերում թողնված ծառերի որոշակի մասը: Գտման այս եղանակն ապահովում է քնական վերականգնումը՝ մշտապես պահպանելով անտառի քնապահպանական հատկանիշները:

ԲՈՒՌՈՒ ԱՆՏԱՌՆԵՐ, *Гробоые леса; hornbeam forests*

Սովորական բոխուց կազմավորված ծառուտներ, որոնք գլխավորապես ունեն երկրորդական ծագում: Գայաստանում որպես կանոն աճում են կաղնու և հաճարենու նախկին ծառուտների զբաղեցրած տարածքում:

ԲՈՐԲՈՋ (ԲՈՒՅՍԻ ՍԱՂՄՆԱՅԻՆ ԸՆՁՅՈՒՂ), *Почка; bud*

Վեգետատիվ բողբոջ՝ կազմված է ընծյուղի և տերևների սաղմերից, որոնք անհավասարաչափ աճի հետևանքով թեքվում են մերիստեմատիկ կոնի վրա՝ ծածկելով և պահպանելով այն: Գեներատիվ բողբոջ՝ բացի վեգետատիվ օրգաններից ձևավորվում են նաև ծաղկի և ծաղկափթթությունների, կոների սաղմերը, որոնք ըստ դիրքավորման, լինում են զագաթնային և կողքային: Բնափայտային տեսակների զագաթնային քնած բողբոջները ձևավորվում են անոսն և աշնան ընթացքում, կողքայինը՝ զարնանը, ծոցային բողբոջներից աճող շիվի տերևածոցում: Բ.-ները լինում են թաց և փակ: Վերջինը բնորոշ է բարեխառն կլիմայական գոտուն, իսկ թացը՝ արևադարձային գոտում աճող ծառերին: Քնած Բ.-ների գոյությունը պահպանվում է երկար տարիներ, և քացվում են ծառերի ծերացման ժամանակ: Արմատների, երբեմն տերևների, ծեր ճյուղերի վրա առաջացած Բ.-ները կոչվում են հավելյալ կամ ադվենտիվ:

ԲՈՒՆԻՏԵՏԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ, *Бонитетная шкала; grade bonitet*

Շնորհմված է 1-5-րդ րոնիտետ: Սանդղակի չափերը գերազանցող ծառերի համար կիրառվող սանդղակի լրացուցիչ չափանիշն է՝ 1ա, 5ա, 5բ, որոնք ցույց են տալիս, որ տվյալ ծառուտում ծառերի միջին բարձրությունն առաջին րոնիտետից բարձր է (1ա) կամ 5-րդ րոնիտետի սահմանից ցածր (5ա, 5բ):

ԲՈՒՆԻՏԻ ԴԱՍԵՐ, *Классы оонитета; bonitet classes*

Ծառուտի (տնկարկի) արդյունավետության գնահատման միավոր: Անտառչիւնությունում ընդունված է րոնիտետի 5 դաս՝ 1-5: Ելնելով անտառի աճի տեմպից՝ օգ-

տազործվում են նաև 1ա, 5ա, 5բ ենթադասերը, որոնք ցույց են տալիս, որ տվյալ ծառի աճը 1-ին բոնիտետից ավելի է կամ ցածր է 5-րդ բոնիտետի դասի համար ընդունված ցուցանիշներից:

ԲՈՍԿԵՏ, *Боскет; bosket*

Խուլզված ծառերով ու թփերով մեկուսացված ճիշտ երկրաչափական ձևի հողակտոր (բառացիորեն՝ գամբյուր): Բոսկետի ներսում կարող է լինել նաև շատրվան, ծաղկանոց, կանաչ թատրոն:

ԲՈՍԿԵՏԱՍԵՆՅԱԿ, *Кабинет в боскете; room in bosket*

Խուլզված լորենիներից կամ բոխիներից ստեղծված մեկուսացված կանաչ կառույց բոսկետի ներսում: Բնորոշ է ֆրանսիական պարտեզներին և գրոսայգիներին: Եվրոպայում տարածված է եղել XVII-XVIII դարում:

ԲՈՐԵԱԼ ԱՆՏԱՌԱՆԵՐ, *Бореальные леса; boreal forest*

Հյուսիսային կիսագնդի անտառներ, որոնք տարածված են անտառտունդրայից մինչև միջին լայնությունները՝ ցուրտ, չափավոր ցուրտ և բարեխառն կլիմայի պայմաններում: Գերազանցապես ասեղնատերև, իսկ տարածման Հարավային սահմաններում համդիպում են նաև ասեղնատերև և լայնատերև տեսակների խառն անտառներ: Բորեալ անտառների գոտին ընկած է հյուսիսային կիսագնդի 50 և 70⁰-ի միջև, որը համապատասխանում է հուլիսյան իզոթերմի 13 և 18⁰ C-ին:

ԲՈՐԵԱԼ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Бореальная растительность; boreal vegetation*

Տալզային բուսական համակեցությունների միազումարություն: Տարածումը ցիրկումպոյար է (Եվրասիա, Հյուսիսային Ամերիկա): Այքի է ընկնում տեսակային կազմի հարաբերական աղքատությամբ (զգալի չափով նշանակություն ունի սառցակալումը), պարզ կառուցվածքով, մոնո կամ բիոտմիևանտությամբ: Բորեալ բուսականությունը ընդգրկում է տարբեր համակեցություններ, որոնք ծագումով կապված են մուգ ասեղնատերև և լուսավոր ասեղնատերև անտառների հետ (օր.՝ ածանցյալ մանրատերև անտառներ, ցամաքահուն մարգագետիններ, ճահիճներ և այլն):

ԲՈՐՍԱՅԻՆ (ՊԱՂԵՍՍՅՈՒՆ) ՓՏԱԽՏ, *Буржевая гниль; stock decay, s. rot*

Պահեստավորման ընթացքում բնափայտի փտումը սնկերի ազդեցության ներքո: Հաճախ տեղի է ունենում գերաճները բարձր ջերմաստիճանի պայմաններում պահպանելիս:

ԲՐԱՐՈՒ ԲՈՒՅՍԵՐ, *Ископаемые растения; fossil plants*

Երկրաբանական վաղ անցյալում գոյություն ունեցած և ներկայումս իսպառ բնաջնջված բույսերի մասունքներ, որոնց միջոցով գաղափար ենք կազմում անցյալի Հլորայի մասին:

ԲՈՒԼՎԱՐ, *Бульвар; boulevard, avenue*

Կանաչապատման օրյեկտ: Ստեղծվում է մայրուղիների, առափնյա և բնակելի փողոցների երկարությամբ, լայն գոտու ձևով (16մ-ից ոչ պակաս), ծառերի ու թփերի ծառուղու տեսքով:

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, *География растений (фитогеография); plant geography (phytogeography)*

Գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է բուսականության և առանձին բուսատեսակների, ինչպես նաև կարգաբանական այլ միավորների երկրի վրա տեղաբաշխվածության օրինաչափությունները:

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՃ, *Рост растений; plants growth*

Բույսի չափերի և ծավալի մեծացում, որն արդյունք է կառուցվածքային տարրերի նորագոյացման: Աճը ձևավորվում է քիչերների, հյուսվածքների և օրգանների ավելացման գումարելիներից, ինչը տեղի է ունենում հատուկ հյուսվածքների գործունեության շնորհիվ:

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՏՈՒՄԻԱ (ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ), *Анатомия растений (фитотомия); plants anatomy (phytotomia)*

Գիտություն բույսերի կազմության մասին: Ուսումնասիրում է բույսերի առանձին օրգանների և ամբողջ բույսի հյուսվածքային կառուցվածքը:

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՐԱԳ ԱՃԵՑՈՒՄ, *Выгонка растений; forcing plants*

Ծածկած բնահողի պայմաններում բույսերի հանգստի շրջանի արհեստական փոփոխման պրոցես: Նպատակ ունի արագ ծաղկող բույսեր ստանալ ծման ընթացքում (եղրևանիներ, փողաշուշաններ, թրաշուշաններ, վարդակակաչներ և այլն):

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՐԵՎԱԳՆՐՈՒՄ, *Ожог растений солнцем; sun burned plants*

Հիմնականում տարածված են հետևյալ ձևերը՝ արմատավզիկի արևահարում (քնորոշ է չոր, փուխթ հողերում գրեթե բոլոր տեսակներից՝ երիտասարդ հասակում) և կեղևի արևահարում (քնորոշ է հիմնականում հարթ կեղև ունեցող տեսակներից՝ հաճարենի, թոխի, մատղաշ կաղնի, լորենի, հացենի, թխկի...):

ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱՅՈՒՄ, *Размножение растений; plants breeding, p. reproduction*

Բուսական տեսակի քանակական ավելացման ու պահպանման նպատակով նոր անհատների առաջացում: Տեղի է ունենում զենբրատիվ (սերմերով), վեգետատիվ (կոճղաչիվերով, արմատային ընձյուղներով, անդալիսով), կտրոնավորման ճանապարհով:

ԲՈՒՅՍԵՐԻ ԲՆԱԴԱՐՄԱՐԵՑՈՒՄ, *Натурализация растений; plants naturalization*

Բույսերի փոխադրումը և աճեցումը՝ նախկինի նման պայմաններ ունեցող տարածքում, որում բույսերը նորմալ են զարգանում:

ԲՈՒՅՍԵՐԻ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄ, *Окраска растений; plants coloration*

Տերևների գույնի փոփոխությունը՝ տերևաբացից մինչև աշնանային տերևաթափը, ինչպես նաև ծաղիկների, պտուղների, բնակեղևի գունավորումը: Կապված է քրոմոպլաստների առկայության հետ:

ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՂԱԶՈՐԴԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, *Декоративные качества растений; plants decorative features*

Բույսերի որակական և քանակական բնութագրություններ (չափսը, տեսքը, սաղարթի ճարտարակերտությունը և այլն): Հաստատուն են տերևների, ծաղիկների, ծաղկաբույլերի ձևավորման ժամանակաշրջանում և փոփոխվող՝ տարեկան կյանքի ընթացքում: Հաշվի է առնվում կանաչապատվող օբյեկտների նախագծման ժամանակ (տեսական ընտրություն, բույսերի տեղաբաշխում, խմբերի, ծաղկաթմբերի, զանգվածների ձևավորում):

ԲՈՒՅՍԵՐԻ ԴԻՄԱՑՎՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Устойчивость растений; plants resistance*

Բույսերի դիմադրողականությունը հիվանդությունների նկատմամբ: Պայմանավորված է նրանց կառուցվածքային և ֆիզիոլոգ-կենսաքիմիական առանձնահատկություններով: Անբարենպաստ պայմանների դեպքում բույսերի մոտ առաջանում է լարված վիճակ՝ սթրես: Անբարենպաստ պայմաններ կարող են լինել ջրի պակասը, բարձր և ցածր ջերմաստիճանները, աղերի բարձր խտությունը և այլն, որոնց դանդաղ զարգացման դեպքում՝ քանզի այն կարող է արտահայտվել նույնիսկ կոփումով:

ԲՈՒՅՍԵՐԻ ԵԿՈԼՈԳԻԱ, *Экология растений; plant ecology*

Ուսումնասիրում է միջավայրի պայմանների ազդեցությունը բույսերի ձևի, կառուցվածքի, քիմիզմի, ինչպես և տեղաբաշխման վրա: Օրգանիզմը ենթարկվելով միջավայրի (լույս, ջերմություն, խոնավություն և այլն) ազդեցությանը՝ ինքն էլ իր հերթին ներգործում է նրանց վրա: Բնության մեջ յուրաքանչյուր տեսակ, շնորհիվ իր անհատական ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, էկոլոցիայի ընթացքում հարմարվում է էկոլոգիական տարբեր գործոնների ազդեցություններին:

ԲՈՒՅՍԵՐԻ ԷՏ ԵՎ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ, *Обрез и формовка растений; cut and moulding (shaping, moulding) of plants*

Բույսի վրա ազդելու ֆիտոտեխնիկական միջոցառումների համակարգ: Կիրառվում է սաղարթի ձևավորման և նրա խնամքի (կտրված, չոր և հիվանդ ճյուղերի հեռացում), խուզված գեղազարդային ձևեր ստանալու նպատակով: Էտման հիմնա-

կան նպատակներից մեկն էլ արմատասաղարթային հավասարակշռության պահպանումն է: Կախված տնկարկների բնույթից, տարիքից, տեսակից, սորտից, ոռոգումից և բույսի սնուցման բնույթից, էտը կատարվում է տարբեր եղանակներով: Տարբերում են եռման երկու հիմնական ձև՝ նոսրացում, երբ ճյուղերի մի մասը անբողջությամբ հեռացվում է հիմքից և կարճացում (հեռացվում է ճյուղի որոշ մասը):

ԲՈՒՅԱԵՐԻ ԻՆՏՐՈՂՈՒԿՑԻԱ (ՆԵՐՄՈՒԾՈՒՄ), *Интродукция растений; plants introduction*

Տվյալ տարածաշրջանում, տարածքում այլ բուսաաշխարհագրական մարզի (երկրամասի) ծագում ունեցող բույսերի ներմուծում և աճեցում: Կատարվում է երկու ճանապարհով՝ կլիմայավարժեցման, երբ բույսը տեղափոխվում է այլ կլիմայական պայմաններ, և բնական հարմարեցման, երբ բույսը տեղափոխվում և աճեցվում է իր բնական միջավայրին համանման կլիմա ունեցող պայմաններում:

ԲՈՒՅԱԵՐԻ «ԼԱՑ», *"Гляц" растений; plants "weeping"*

Արմատային ճնշման ազեցության տակ բուսափյուրի ((արմատափյուր) արտա-հոսքը կտրված կամ վերջ ունեցող ցողունից: Ծառաթփային բույսերի մոտ դիտվում է գարնանային հյութաշարժի ժամանակ (օր.՝ խաղողի վազի, կեչու, թխկու մոտ): Ա-ծալեագույնը դիտվում է կեսօրին, նվազագույնը՝ նախալուսաբացային ժամերին: Տ-ևում է մի քանի օրից մինչև մի քանի ամիս: Բ. «Լ.»-ով գաղափար են կազմում ար-մատների ֆիզիոլոգիական ակտիվության մասին:

ԲՈՒՅԱԵՐԻ ԾԵՐԱՑՈՒՄ, *Старение растений; ageing of plants*

Ձարգացման ընթացքում օրինաչափորեն երևան եկող հասակային անվերա-դարձ փոփոխություններ, որոնք սահմանափակում են օրգանիզմների հարմարողա-կան հնարավորությունները: Ծերացումն ուսումնասիրող գիտությունը կոչվում է գե-րոնոտոլոգիա: Բ.Ծ. ուղեկցվում է օրգանների կառուցվածքային փոփոխություններով, քջջային օրգանոիդների քայքայմամբ: Ընկճվում է ֆոտոսինթեզը, սպիտակուցների, նուկլեինաթթուների և այլ միացությունների սինթեզի ինտենսիվությունը, ֆերմենտնե-րի մեծ մասի ակտիվությունը: Ակտիվանում են հիդրոլիտիկ ֆերմենտները: Բ.Ծ. ու մաիը ներառում է պտղատվության լրիվ դադարից մինչև օրգանիզմի քնական մահը: Բ.Ծ. ու մաիը ցանկացած բազմամյա բույսի անհատական կյանքի (օնոոգենեզ) եզ-րափակիչ փուլն է: Ծերացումը բնորոշ է ոչ միայն ամբողջական բույսին, այլ նաև նրա առանձին օրգաններին:

ԲՈՒՅԱԵՐԻ ԿԱՐԳԱԸՆՈՒԹՅՈՒՆ, *Систематика растений; plants systematics*

Բուսաբանության բաժին, որն ուսումնասիրում է բույսերի դասակարգումը ըստ կարգաբանական որոշակի հատկանիշների և ծագման: Կարգաբանությունը հնարավորություն է տալիս պարզաբանելու բուսական աշխարհի զարգացման ուղի-

ները: Ծածկաներմ բույսերի կարգաբանության բնագավառում ներկայումս աշխարհում ընդունված է ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի ֆիլոգենետիկական համակարգը:

ԲՈՒՅՍԵՐԻ ՉՍԵՆՎԱԴԻՄԱՅԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Зимостойкость растений; winter-hardiness of plants*

Բազմամյա բույսերի ունակությունը՝ դիմանալու ծմռան անբարենպաստ պայմաններին և ջերմաստիճանային խիստ տատանումներին: Չմեռադիմացկունություն բույսը ձնռք է բերում էվոլյուցիայի ընթացքում, և այն ամրանում է որպես ժառանգական հատկանիշ:

ԲՈՒՅՍԵՐԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱ, *Морфология растений; plants morphology*

Գիտություն բույսերի արտաքին կառուցվածքի և ձևառաջացման պրոցեսների մասին: Ուսումնասիրում է ձևերը բոլոր մակարդակներով, ամբողջ բույսերից մինչև բջջային օրգանոիդները և մակրոմոլեկուլները, իսկ նեղ հասկացությամբ՝ մակրոստրուկտուրաները: Այս դեպքում նրանից առանձնանում են, որպես ինքնուրույն գիտություններ, անատոմիան, սաղմնաբանությունը, բջջաբանությունը: Որոշ բաժիններ իրենց անվանումները ստացել են ուսումնասիրվող օբյեկտներից. պալիմոլոգիա (ուսումնասիրում է ծաղկափոշին), կարպոլոգիա (ուսումնասիրում է պտուղները), ռիզոլոգիա (ուսումնասիրում է արմատային համակարգը):

ԲՈՒՅՍԵՐԻ ՉՈՐՈՎԻՄԱՅԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Засухоустойчивость растений; drought-resistance of plants*

Դարմարողականության ունակություն, որի շնորհիվ առանձին բույսեր դիմանում են երաշտին՝ աճի և արտադրողականության նվազագույն կորստով: Երաշտն ուղեկցվում է բարձր ջերմությամբ, ուստի չորադիմացկուն բույսերը միաժամանակ հանդիսանում են ջերմադիմացկուն: Բ.Չ. պայմանավորված է բուսական քիչքների և հյուսվածքների ունակությամբ՝ կարգավորելու ջրի ծախսը, կանխելու ջրային ծայրագույն դեֆիցիտի առաջացումը՝ տրանսպիրացիայի (զուրոշիացման) նվազեցման, տերևների քանակի պակասեցման կամ տերևաթափի միջոցով:

ԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՆՎԱԿԱՆ ԲԱԶՄԱՅՈՒՄ, *Половое размножение растений; plants sex reproduction (breeding)*

Բուսական օրգանիզմների բազմացման ձև, երբ նոր օրգանիզմը զարգանում է իգական և արական սեռական քիչքների՝ գամետների միաձուլման (թղմնավորության) հետևանքով առաջացած զիգոտից: Բ.Ս.Բ. մյուս ձևերի համեմատությամբ ավելի առաջադիմական է, քանի որ առաջացել է էվոլյուցիոն պրոցեսում՝ որպես սերմնի վերարտադրման բարձրագույն ձև: Բ.Ս.Բ. կենսաբանական նշանակությունն այն է, որ ստացվում են կրկնակի ժառանգականությամբ (մայրական և հայրական) օժտված օր-

զանհիզմներ, որոնք ունեն կյանքի փոփոխվող պայմաններին հարմարվելու մեծ շրջանակ և կենսունակություն:

ԲՈՒՅԱԵՐԻ ԱՆՆՂԱՌՈՒԹՅՈՒՆ, *Plumage restenun, plants feeding*

Բույսերի կողմից ծախսվող էներգիայի վերականգնման և հյուսվածքների կազմավորման համար արտաքին միաջավայրից սննդանյութերի կլանումը, վերափոխումն ու օգտագործումը: Բ.Ս. նյութափոխանակություն է, որտեղ հիմնական դերը պատկանում է ասիմիլիացիային: Սննդառության տիպի տեսակետից անտառում գերիշխում են ավտոտրոֆ օրգանիզմները, որոնք իրականացնում են օդի ածխաթթվից օրգանական նյութերի սկզբնական սինթեզը: Սննդառության հետերոտրոֆ տիպը անտառում բնորոշ է մակարոյծ բույսերին, սնկերին և մեծ թվով բակտերիաներին: Բ. Ս. լինում է օդային կամ ածխաթթվային, ջրային (որպես ջրածնի կամ թթվածնի աղբյուր), ազոտային և հանքային: Ընդ որում ազոտային և հանքային տարրերը բույսերի կողմից իրացվում են աղերի իոնների ձևով: Բույսերի հյուսվածքների մեջ մտնում են 60-ից ավելի քիմիական տարրեր, որոնք նկատմամբ բույսերը ջուլցաբերում են տարբեր պահանջ: Մեծ քանակությամբ կլանում են ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, ծծումբ, մագնեզիում, համեմատաբար քիչ քանակությամբ՝ երկաթ, ցինկ, պղինձ, բոր և այլն: Բ.Ս.-յան օրգաններն են արմատները և տերևները: Արմատները հողից վերցնում են հանքային տարրեր, ջուր, որոշ պարզ օրգանական միացություններ: Սննդարար նյութերի զգալի մասը բույս է մտնում իոնների ձևով՝ ջրի հետ միասին:

ԲՈՒՅԱԵՐԻ ՎԵԳԵՏԱՏՆԻԿ ԲԱԶՍԱՑՈՒՄ, *Vegetativное размножение растений; vegetative plants breeding (reproduction)*

Բույսերի բազմացման եղանակ: Կիրառվում է այն բույսերի աճեցման համար, որոնք սերմերով դժվար են աճում, ինչպես նաև պարտիզային տարրեր ձևերի (լացող, բրզածև, գմղածև...) բազմացման համար: Գեղազարդային ծառաբուծության բնագավառում բազմացման հիմնական եղանակներից մեկն է:

ԲՈՒՅԱԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒ, *Вредитель растений; plant pest*

Մարդու համար արժեքավոր, օգտակար համարվող բույսերը վնասող, տնտեսական տեսակետից անօգտակար կամ այնպիսի օրգանիզմ, որի արժեքը ավելի փոքր է, քան նրա օգտագործած կերի արժեքը: Տերմինի պայմանականությունը ընդգծվում է նրանով, որ վնասատուներով բացարձակապես չվնասվող բույսերը ավելի քիչ օգտակար արտադրանք են տալիս:

ԲՈՒՅԱԵՐԻ ԳԵՆՈՒԼՈԳԻԱ, ՖԻՏՈՑԵՆՈԼՈԳԻԱ, *Ценология растений, фитоценология; plants cenology, phytocenology*

Բուսաբանության բաժին՝ բուսական համակեցությունների՝ ֆիտոցենոզների մասին: Տե՛ս ֆիտոցենոզ:

ԲՈՒՅՍԵՐԻ ԳՐՏԱՂԻՍԱՅԿՈՒՄՆԵՐԻ ԹՅՈՒՆ, *Холодостойкость растений; coldness plants (cold-resistant)*

Բույսերի ունակությունը տեսականորեն դիմանալու ցածր դրական ջերմաստիճաններին (1-10°): Որոշվում է պրոտոպլազմայի նորմալ կառուցվածքի պահպանմամբ, ջերմաստիճանի անկման և բարձրացման ժամանակաընթացքում նյութափոխանակության վերափոխման ունակությամբ: Տարբեր տեսակներ, ինչպես նաև միևնույն բույսի տարբեր օրգաններ ունեն ցրտադիմացկունության տարբեր աստիճաններ:

ԲՈՒՅՍԵՐԻ ԳՐՏԱՅԱՐՈՒՄ (ԳՐՏԱՏԱՐՈՒՄ), *Вымерзание растений; winterkill (winterkilling) plants*

Տեղի է ունենում բքքի ջրազրկման, բջջախյուրը սառչելու, պրոտոպլազմային մեխանիկական վնասվածք պատճառելու և քայքայելու հետևանքով:

ԲՈՒՅՍԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ, *Физиология растений; plants physiology*

Կենսաբանական գիտություն՝ բուսական օրգանիզմների կենսագործունեության ընդհանուր օրինաչափությունների մասին: Ուսումնասիրում է ջրի և հանքային նյութերի կլանման, բույսերի աճման և զարգացման, ծաղկման և պտղակալման, արմատային և օդային (լուսային) սնման, բույսերում տեղի ունեցող կենսասինթեզի պրոցեսները և տեսական հիմք է ստեղծում բուսական օրգանիզմների արդյունավետ օգտագործման համար:

ԲՈՒՅՍԻ ԱՅԼԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ, *Уродливость растения (уродство); malformation plants*

Բույսի կյանքին վտանգ չներկայացնող՝ նորմալ զարգացումից շեղումներ: Օրինակ՝ ֆասցիացիան, որի ժամանակ ճյուղը կամ շիվը ծեռք է բերում տափակ կառուցվածք, կամ տերևների միաձուլումը, բաժանումը: Բ. Ա. առավել հատուկ է ծաղիկներին ու պտուղներին:

ԲՈՒՅՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, *Развитие растения; plants development*

ՕՆտոգենեզի ընթացքում բույսի կառուցվածքի և ֆունկցիայի, նրա առանձին օրգանների հյուսվածքներում, բջիջներում գենետիկորեն պայմանավորված օրինաչափ փոփոխությունները: Բ.Զ. կարող է տեղի ունենալ ավտոնոմ, ներքին գործոնների շնորհիվ, առանց արտաքին պայմանների ազդեցության կամ, հաճախ, որոշակի արտաքին պայմանների առակալությամբ: Վեգետատիվ զարգացումն ընդգրկում է տերևների հաջորդական առաջացումը, նրանց և ճյուղային համակարգի զտյացումը ու չափերի ավելացումը, ծերացմանը զուգընթաց նրանց մահացումը: Բույսերի արմատական փոփոխություններ տեղի են ունենում գենետիկ զարգացման, ծաղկման և պտղաբերման պրոցեսում: Վերջինս բույսի կյանքում կարող է տեղի ունենալ

մեկ անգամ (միանյա, երկանյա թույսեր, արմավենու որոշ տեսակներ): Ենան թույսերը կոչվում են մոնոկարպ, և թույսեր, որոնք պտղաբերում են բազմիցս՝ պոլիկարպ թույսեր:

ԲՈՒՅՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՎԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ, *Относительный покой растений; relative rest (quiet) of plants*

Ֆիզիոլոգիական վիճակ, որի ճամանակ աճի տեմպը և նյութափոխանակության ինտենսիվությունը հասնում են նվազագույնի: Բ.Հ.Հ. առաջացել է էվոլյուցիայի ընթացքում, որպես հարմարողական միջոց կլիմայի սեզոնային բնույթ կրող վայրերում: Հանգստի շրջանում կարող են գտնվել ամբողջական թույսը, ինչպես նաև նրա առանձին օրգանները՝ սերմերը, պալարները, սոխուկները, թողոցները, արմատը: Բ.Հ.Հ. ինչու է խորը՝ պայմանավորված ներքին գործոններով, և հարկադրական՝ կապված ջերաստիճանի անկման, օրվա տևողության կրճատման, արգելակիչ նյութերի սինթեզի ակտիվացման հետ:

ԲՈՒՅՍԻ ԾԱԳԱՍԱՆ ՎԱՅՐ, *Местопроисхождение растения; the site of plants origin, provenance*

Թույսի սկզբնական օրինակի (սերմ, տնկաշիվ, տնկի) ծագման աշխարհագրական շրջան:

ԲՈՒՅՍԻ ՍԵԼԵԿՏԻՎՈՆ ԱՌՈՏ, *Селекционный сорт растения; selective sort plant*
Սելեկցիայի շնորհիվ բարելավված սորտ: Տե՛ս Կուլտիվար:

ԲՈՒՅՍԻ ԱՏՈՐԳԵՏՆԱԾ ՕՐԳԱՆՆԵՐ, *Подземные органы растения; underground (subsurface) plants organs*

Թույսի արմատավազիկից ցածր գտնվող օրգաններ՝ արմատներ, կոճղարմատներ, պալարներ, կոճղեղներ:

ԲՈՒՆ, *Стебель; stem*

Ծառի՝ կմախքային ճյուղերը և սաղարթը կրող կենտրոնական մասը, արմատավազիկից մինչև գագաթնաղնձյուղը:

ԲՈՒՍԱԲԱՆԱՎԱԿԱՆ ԱՅԳԻ, *Ботанический сад; botanical garden*

Գիտահետազոտական, ուսումնաստանողակ և կուլտուր-լուսավորական հիմնարկ, որտեղ մշակվում, ուսումնասիրվում են թույսերը և պրոպագանդվում բուսաբանական գիտելիքներ: Հիմքը կազմում են կենդանի թույսերի հավաքածուները, որոնք աճեցվում են բաց տարածություններում և ջերմառներում: Նախատեսված է բուսաբանության, կլիմայավարժեցման, գեղազարդային պարտիզազոհության և բնակավայրերի կանաչապատման գծով գիտահետազոտական և կուլտուր-լուսավորա-

կան և էկոլոգիական աշխատանքների համար: Ձևավորվում է ինչպես կանոնավոր, այնպես էլ լանդշաֆտային ոճով:

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՖԻՏՈԳԵՈԳՐԱՖԻԱ, *Ботаническая география; фитогеография; botanical geography, phytogeography*

Կենսաաշխարհագրության բաժին, որն ուսումնասիրում է երկրագնդի վրա բուսական աշխարհի առանձին տարրերի տարածման օրինաչափությունները: Ընդգրկում է բույսերի աշխարհագրությունը և բուսական համակեցությունների աշխարհագրությունը:

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, *Ботаника; botany*

Համալիր գիտություն բույսերի մասին: Հիմնական բուսաբանական դիսցիպլիններն են՝ բույսերի կարգաբանությունը, մորֆոլոգիան, անատոմիան, սաղմնագիտությունը, հենաբուսաբանությունը, ֆիզիոլոգիան, ինտորդուկցիան, բուսական հումքագիտությունը: Դրանք էլ իրենց հերթին ստորաբաժանվում են առանձին ենթաճյուղերի: Օրինակ՝ մորֆոլոգիայից առանձնացնում են կարպոլոգիան, պալինոլոգիան, տերաթոլոգիան, կարգաբանության բնագավառում՝ ալգոլոգիան (ջրիմուռագիտություն), բրիոլոգիան (մամռագիտություն), միկոլոգիան (սնկաբանություն), պտերիդոլոգիան (պտերազգիտություն), դենդրոլոգիան (ծառագիտություն) և այլն:

ԲՈՒՍԱԾԱԾԿԻ ԿԼԱՆՈՒՄ ԵՎ ԱՆՂՐԱՂԱՐՉՈՒՄ, *Отражение и абсорбция растительного покрова; Vegetation absorption and reflectance*

Բուսածածկի մոտ կլանման և անդրադարձման առանձնահատկությունները սերտորեն կապված են տերևների ֆիզիոլոգիական վիճակի հետ: Տերևում առկա քլորոֆիլի առատությունը պայմանավորում է կապույտ և կարմիր ալիքների ինտենսիվ կլանումը և կանաչի անդրադարձումը: Դրպես հետևանք տերևները երևում են կանաչ գունավորմամբ: Տերևները առավել կանաչ են երևում հատկապես առնանը, որը քլորոֆիլի հատիկների քանակը տերևում հասնում է առավելագույնի: Աշնանը, ընդհակառակը, քլորոֆիլի հատիկների քանակությունը նվազում է, որի պատճառով ավելի է շատանում անդրադարձումը կարմիրալիքային տիրույթում, ինչն էլ պատճառ է դառնում տերևների կարմրա-դեղնավուն երանգավորմանը: Քլորոֆիլային ինտենսիվության ազդեցությունը կապված է բույսի տեսակից և վիճակից, տերևներում ջրի պարունակության աստիճանից և այլն: Քլորոֆիլային ազդեցության հետևանքով մահացող բույսը ինֆրակարմիր լուսանկարի վրա ակնհայտորեն տարբերվում է առողջ, կենդանի բույսից: Այս օրինաչափությունը կարևոր առավելություն է, երբ իրականացնում ենք բույսերի զույգագրում օդալուսանկարների օգնությամբ: Այն մեզ թույլ է տալիս հասկանալու թե բույսը տառապում է ջրի պակասից կամ որևէ հիվանդությունից:

ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ՆՆՈՐԱ, *Растительный мир, флора; vegetation, flora*

Որևէ տարածաշրջանին, երկրամասին, աշխարհագրական մարզին կամ գոտուն (տվյալ երկրաբանական ժամանակաշրջանի որոշակի հատվածին) բնորոշ բուսատեսակների ամբողջություն, բույսերի կենսաբազմազանություն: Ընդունված է տարբերել վայրի (բնականորեն աճող) և մշակովի, այդ թվում ներմուծված կամ ինտրոդուկցված բուսատեսակներ:

ԲՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, *Растительное сообщество; vegetation community, v. census*

Երկրի մակերևույթի միատեսակ տեղամասեր զբաղեցնող, իրար ու շրջապատող միջավայրի հետ սերտ փոխազդեցության մեջ գտնվող բույսերի ամբողջություն: Տե՛ս նաև ֆիտոցենոզ:

ԲՈՒՄԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, *Ассоциация растительная; vegetation association*

Բուսական ծածկույթի դասակարգման հիմնական միավորը, որն իրենից նկատարար է միատարր ֆիտոցենոզների միագումարությունը՝ միմյանց նման կառուցվածքով, տեսակային կազմով և փոխհարաբերություններով, ինչպես բույսերի, այնպես էլ միմյանց և արտաքին միջավայրի միջև:

ԲՈՒՄԱԿԱՆ ԿԵՆՍԱԶՆԱԳԱՄԾ, *Биомасса растительная; vegetation biomass*

Բուսական կենսացենոզի բոլոր առանձնյակների կամ տեսակների օրգանական նյութի ընդհանուր քանակն է: Սովորաբար կենսազանգվածը արտահայտում են միավոր մակերեսի վրա կամ միավոր ծավալում մասսայի միավորներով (չոր քաշի հաշվով) տոննա/հա: Կենսազանգվածում կարելի է որոշել ընդհանուր բույսերի, կենդանիների կամ առանձին տեսակների կենսազանգվածը:

ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊ, *Тип растительности; vegetation type*

Բուսական համակեցությունների դասակարգման հիմնական միավոր: Բ.Տ. որոշելիս ելնում են համակեցությունը կազմող բույսերի էկոլոգ-կենսաբանական հիմնական առանձնահատկություններից: Բ.Տ. բնութագրում է բուսական գլխավոր համակեցությունը՝ տունդրա, անտառ (տայգա, արևադարձային անտառ, քարեխառն գոտու տերևավոր անտառներ և այլն): Իր բնույթով համընկնում է երկրի բնական (ֆլորիստիկ կենսաաշխարհագրական շրջանացման) գոտիների հետ:

ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Растительность; vegetation*

Երկրագնդի կամ նրա առանձին շրջանների ֆիտոցենոզների միագումարություն: Ի տարբերություն ֆլորային, բնութագրվում է ոչ թե տեսակային կազմով, այլ հիմնականում տեսակների և տարբեր կենսածների թվային քանակությամբ և զուգակցությամբ, դրանց տարածական կառուցվածքով և դինամիկայով: Կենսոլորտի

կարևոր համամասնությունն է (ֆիտոսֆերա), որը սերտորեն կապված է կլիմայի, քրային օբժիմի, հողերի, օբլիեֆի, կենդանական աշխարհի հետ (որի մասնակցությամբ էլ ձևավորվում է կենսաերկրացենոզը): Ունի գոտիական բնույթ: Ելնելով խոնավության նկատմամբ ունեցած վերաբերմունքից՝ բուսականության բնույթը լինում է՝ հիդրոֆիտ, մեզոֆիտ, քսերոֆիտ, կրիոֆիտ, հալոֆիտ և այլն:

ԲՈՒՄԱԳՅՈՒԹ, *Пасока; sap*

Քսիլեմայի կամ ֆլոեմայի հյութ, որն արտահոսում է կտրված բնից կամ ճյուղից: Խոտերից Բ.-ի հոսքը տեղի է ունենում զարգացման բոլոր փուլերում: Ծառային ձևերում դիտվում է հիմնականում վաղ զարմանը: Քսիլեմային բուսափուլը պարունակում է ազոտային նյութեր, օրգանական թթուներ, հանքային տարրեր, որոնք հոսում են դեպի տերևները:

ԲՈՒՄԱԸԽԱՐԳԱԳՐԱԿԱՆ ԳՈՏԻ, *Ботанико-географическая зона, botanical-geographical zone*

Աշխարհագրական տարածքի բաժանում՝ ելնելով նրանում աճող բուսականությունից՝ տունդրա կամ արկտիկական, անտառային կամ տայգայի, տափաստանային, անապատային և այլն: Հիմնական գոտիների միջև ընկած են անցողիկ գոտիները (անտառտափաստանային, կիսաանապատային և այլն), որոնք երբեմն դիտվում են որպես ինքնուրույն գոտիներ:

ԲՈՒՄԱՐԿՂ, *Контейнер; plant container*

1. Խոնավացման ինքնուրույն պայմաններ ունեցող ապակյա շարժական կառուցվածք: Օգտագործվում է շենքերի ներսի ազատ տարածությունների, սրահների, սենյակների, լսարանների և դահլիճների կանաչապատման համար:
2. Գեղազարդային ծառաբուծությունում ջերմաստիճանի և խոնավության ինքնուրույն կարգավորմամբ, փայտից ու մետաղից արկղ, որն օգտագործվում է բույսեր աճեցնելու կամ դրանք կանաչապատման օբյեկտ տեղափոխելու համար:

ԲՈՒՄՈՒՍՅԻՆ ԴԱՆՈՒՅԹ, *Бульонная съемка; compass survey*

Տարածքի հորիզոնական հանույթի եղանակ: Բուսուղով ազիմուտային հաշվարկ կատարելով, որոշում են հողամասի մշտակայուն առարկաների ձևերը, փոխդասավորությունը: Նման եղանակով արված հատակագիծը պատկերացում է տալիս հողամասի սահմանների և ուղվազօհի մասին:

ԲՈՒՐԱՍՍԱՆ, *Душистый сад; odoriferous (odorous) garden*

Պարտեզ, որտեղ գերակշռում են քուրումնավետ, հոտավետ, այտոժարույր բույսերը: Ամենայն հավանականությամբ պատմական Հայաստանում եղել են այդպիսի պարտեզներ, քանզի պատմիչները հաճախ են գործածում այդ բառը:

ԲՈՒՐՈՎԿԵՏ ԲՈՒՅՍՆԵՐ՝ *Дышущие растения; odoriferous (odorous) plants*

Բույսեր, որոնց արտադրում են բուրավետ, զնդող եթերային յուղեր (տերպեններ, կումարիններ), օր.՝ եղևանի, սրնգենի, լոբենի, փշատենի, մազնուխա:

Գ

ԳԱԶԱՂԻՄԱՅԿՈՒՆ ԲՈՒՅՍԵՐ, *Газоустойчивые растения; gas-resistant plants*

Բույսեր, որոնք դիմանում են արդյունաբերական օրբյակտների և ավտոտրանսպորտի օդ արտանետած թունավոր գազերի մեծ քանակին:

ԳԱԳԱԹՆԱՅԻՆ ԲՈՂԲՈՋ, *Верхушечная почка; top bud*

Վերաբերում է առանցքային ճյուղի ծայրային բողբոջին, երբեմն օգտագործվում է նաև ծառապսակի մյուս ճյուղերի ծայրային բողբոջների համար:

ԳԱԱՐՎԳԻԾ, *Забиток; local irregularity of annual rings*

Տարեկան օղակների տեղական բնույթ կրող կառուցվածքային խախտում (ծոմովածություն): Բնափայտի արատ, որն առաջանում է ուտերի, մահացած ճյուղերի շրջանում: Բնորոշ է բուրբ ծառատեսակներին:

ԳԱԼԵՐ, *Галлы; galloy*

Բույսի տարբեր մասերում հյուսվածքների աննորմալ աճի հետևանքով առաջացած տարբեր ձևի և մեծության գոյացումներ: Առաջանում են արտաքին զրգռիչների, հիմնականում միջատների, սարդանման տիզերի և այլ վնասատուների կենսագործունեության հետևանքով:

ԳԱՐԻԳԱ, *Garuga; Garrigue*

Սիջերկրածովյան ավազանի ժայռոտ և քարքարոտ լանջերի, մշտականաչ չորասեր թփուտների (հիմնականում թփուտային կաղնի) կամ գաճաճ արմավենու խիստ նոսր, ցածրահասակ համակեցություններ:

ԳԵՂԱԶԱՐԴ ԲՈՒՅՍԵՐ, *Декоративные растения; decorative plants*

Հատուկ տնկարաններում, ջերմոցներում, ծաղկատնտեսություններում կանաչ շինարարության համար աճեցվող թփեր, ծառեր, խոտաբույսեր: Այլի են ընկնում ուրվագծի բարեկազմությամբ, սաղարթի գեղատեսիլությամբ, ծաղիկների առատությամբ և ծաղկման երկարատևությամբ, տարվա ընթացքում փոփոխվող գույնով և վերջապես, կայունությամբ՝ անբարենպաստ պայմանների, հատկապես քաղաքային միջավայրի ազդեցության նկատմամբ:

ԳԵՂԱԶԱՐԴ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Жизнеспособность декоративных растений; survival of decorative plants*

Անբարենպաստ պայմանների (երաշտ, ավելցուկային խոնավացում, հողի առակալում, ցածր ջերմաստիճան և այլն) ազդեցության նկատմամբ գեղազարդային բույսերի կայունությունը:

ԳԵՂԱԶԱՐԻ ԲՈՒՅՍԵՐԻ ՇՐՋԱՆՍՈՒՄ, *Рационализация декоративных растений; zoning of decorative plants*

Երկրագնդի կամ նրա առանձին խոշոր մասերի ստորաբաժանումը րույների որոշակի խմբերի աճման ընդհանուր պայմաններ ունեցող ավելի փոքր միավորների՝ մարզերի, պրովինցիաների, օկրուգների, շրջանների:

ԳԵՂԱԶԱՐԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Декоративная растительность; decorative vegetation*

Կանաչ շինարարությունում որոշակի համակեցությանը օգտագործվող գեղազարդային պաշտպանական և սանիտարահիգիենիկ հատկություններ ունեցող ծառաթփերի ու խոտաբույսերի ամբողջություն:

ԳԵՂԱԶԱՐԻ ԾԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *Декоративная дендрология; decorative dendrology*

Գիտություն գեղազարդային ծառաթփերի մասին: Կանաչ շինարարությունում օգտագործելու նպատակով ուսումնասիրում է դրանք կազմաբանությունը, կարգաբանությունը, գեղազարդ ա յ ի ն որակները:

ԳԵՂԱԶԱՐԻ ԾԱՂԿԱԲՈՒՅՍԵՐ, *Декоративные цветочные растения; decorative floristic plants*

Բույսեր, որոնք օգտագործվում են ծաղկեփնջերի համար ծաղիկներ ստանալու, պարտեզների և զբոսայգիների ծաղկային ձևավորման, ծաղկամարզերում ու ծաղկաթմբերում աճեցնելու համար: Ստորաբաժանվում են միամյաների, երկամյաների, բազմամյաների:

ԳԵՂԱԶԱՐԻ ԾԱՌԱԲՈՒՇՈՒԹՅՈՒՆ, *Декоративное деревоводство; decorative dendrobreeding*

Գիտություն գեղազարդային ծառաթփերի, դրանք կենսաբանական և էկոլոգիական յուրահատկությունների, տնկարաններում ու կանաչապատման օբյեկտներում բազմացման, աճեցման և ձևավորման եղանակների մասին:

ԳԵՂԱԶԱՐԻ ԾԱՌԱՏՆԿԱՐԱՆ, *Декоративный древесный питомник; decorative tree nursery*

Կանաչ շինարարության համար տնկանյութ (գեղազարդային ծառաթփեր, պարտիզային պատվաստված և խուզված ձևեր) աճեցնող տնտեսություն: Ըստ ենթակայության լինում են հանրապետական (150-300 հա տարածությամբ), քաղաքային (150-150 հա), տարածաշրջանային (մինչև 50 հա) տնկարաններ:

ԳԵՂԱԶԱՐՈՂ ԴԱՐՏԵՋՊՈՒՐԱԿԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԴԱՆՏԴԱՆՈՒԹՅՈՒՆ, *Защита декоративных садово-парковых растений; protection of decorative garden-park plants*

Գեղազարդային բույսերի վնասատուների, հիվանդությունների դեմ պայքարի տարբեր միջոցների կիրառում:

ԳԵՂԱԶԱՐՈՂԱՅԵՐԵՎԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, *Декоративно-лиственные растения; decorative leaved plants*

Վառ գունավորված կամ յուրատեսակ ձևի գեղեցիկ տերևներով ծառեր, թփեր և խոտաբույսեր, որոնք օգտագործվում են զբոսայգու մերկ հատվածների, եզրաշերտերի, ծաղկամարգերի ձևավորման համար:

ԳԵՂԱԶԱՐՈՒԹՅՈՒՆ, *Декоративность; decoratinity*

Հատկանիշների բազմազանությամբ բնութագրվող առանձին բույսերի, խմբերի, զանգվածների գեղագիտական արժեքավորության ցուցանիշ: Գնահատվում է բույսերի գեղազարդային հատկությունների ուսումնասիրման հիման վրա:

ԳԵՂԵՑԻԿ ԾԱԿԱՌՈՒ ԹՓԵՐ, *Красивоцветущие кустарнику; beautifully blooming bushes*

Գեղազարդային բույսեր, որոնք լայնորեն օգտագործվում են կանաչ շինարարությունում և այլքի են ընկնում վառ գունավորված կամ ինքատիպ խոշոր ծաղիկներով ու ծաղկաբույլերով, ինչպես նաև երկարատև ծաղկմամբ (30-ից 120 օր):

ԳԵՆԵՏԻԿ ՖՈՆԴ, ԳԵՆՈՖՈՆԴ, *Генетический фонд, генофонд; genetic fund, genofund*

Տվյալ պոպուլյացիայի, պոպուլյացիաների խմբի կամ տեսակի, անհատների ունեցած գեների միագումարությունը:

ԳԵՆԵՐԱԼԻԶԱԿՑԻԱ, *Генерализация; Generalization*

Սեկ մասշտաբի քարտեզից մյուսին (տվորաբար ավելի փոքր մասշտաբի) անցման գործընթացն է, որն ուղեկցվում է մանրամասների պարզեցմամբ և ոչ դետալային պատկերմամբ: 1:25 000 մասշտաբի անտառտնտեսությունների քարտեզներից կազմվում են 1:50 000 մասշտաբի տարածաշրջանային քարտեզ, որտեղ մանրամասներն համեմատաբար քիչ են:

ԳԵՈԲՈՏԱՆԻԿԱ (ԵՐԿՐԱԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ), *Геоботаника; geobotanics*

Գիտություն երկրագնդի բուսական ծածկույթի, նրա տարածման, տեղաբաշխման օրինաչափությունների, բուսական տարբեր համակեցությունների բնույթի մասին (աշխարհագրական բուսաբանություն): Սովորաբար տարածքատու էն հետևյալ հասկացությունները. պատմական գեոբոտանիկա (բուսական ծածկույթի ձևավորման

պատմական ասպեկտները), էկոլոգիական գեոբոտանիկա (բուսականության կախվածությունը բնական միջավայրի պայմաններից), խորոլոգիական գեոբոտանիկա (բուսականության տեղաբաշխման օրինաչափությունները):

ԳԵՈԲՈՏԱՆԻԿԱԿԱՆ ԵԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, *Описание геоботаническое; geobotanical description*

Բուսականության լրիվ կազմի բացահայտումը և դրանց դերի սահմանումը բուսական համակեցությունում:

Կատարվում է տեսակների առատության և բուսապատմական այջայափային հաշվառում, գրանցվում է էքսպոզիցիոն, հողի և ռելիեֆի բնույթը, գրունտային ջրերի մակարդակը և այլ բուսական համակեցության բնույթը բնորոշող այլ ցուցանիշներ:

ԳԵՈՍՏԱՑԻՈՆԱՐ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐ, *Геостационарные спутники; Geostationary satellites*

Գեոստացիոնար արբանյակների ուղեծրերը գտնվում են 36 000 կմ բարձրության վրա: Երանց անկյունային շարժման արագությունը, այդ բարձրությունների վրա հավասարվում է Երկրի պտույտի անկյունային արագությանը, ինչը թույլ է տալիս արբանյակին, իր ուղղությամբ գտնվող Երկրի մակերևույթի կետի նկատմամբ, սինխրոն տեղաշարժ կատարել: Արդյունքում գեոստացիոնար արբանյակը, հասարակաֆային ուղեծրի վրա կարծես թե «կախված է» Երկրի մակերևույթի որոշակի շրջանի վրա և ապահովում է նրա մշտական դիտարկումը: Այս արբանյակները կարևոր տեղեկատվություն են տալիս հասարակածային և արևադարձային շրջանների բուսական տիպերի նկարահանման և քարտեզագրման համար:

ԳԵՏԱՅՈՎՏԱՑՅՈՒ ԱՆՏԱՌՆԵՐ, *Пойменные леса; flood-plain plants*

Անտառներ, որոնք աճում են ժամանակավոր ողողվող գետահովիտներում: Գ.Ա.-ի տեսակային կազմը պայմանավորված է բնակլիմայական գործոններով, ողողման քաղցածր, ջրի քիմիական կազմով, անտառտնտեսվարման բնույթով:

ԳԵՏԱՏԱՐԱՍ ԲՈՒՅՍԵՐ, *Ползучие растения; creeping plants*

Բաղեղների խմբին պատկանող, արմատակալվող ընձուղներով բույսեր (թաղեղ, կուսածաղիկ և այլն):

ԳԵՏԱՏԱՐԱՍ ԳՐՈՒԵՂ, *Низовые пожары; primary fire*

Գրոնիի այս տեսակի ժամանակ այրվում են թափուկը, խաշամը, մամռային և խոտային ծածկույթը: Գրոնիի տարածման արագությունը 1-3 մ/րոպե: Արագընթաց գետնատարած հրդեհի դեպքում այրվում են նաև ենթանտառը, մատղաշը: Գ.Գ.-ների դեպքում հիմնական ծառերը քիչ են վնասվում:

ԳԵՐԱԿԵՆՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ, Преобладающие древесные породы; prevailing tree species

Այս ծառատեսակները կազմում են ծառուտի պաշարի կամ տարածքի մեծ մասը: Որպես Գ.Ծ. կարող են առանձնացվել ինչպես մեկ ծառատեսակ, այնպես էլ խումբ ծառատեսակներ:

ԳԵՐԱԿԵՆՈՂ ՀԱՏՎԱՆԻՇ, Доминантное свойство; dominant feature

Գեղարվեստական արտահայտչականության ազդեցության տեսակետից գլխավոր տարր զբոսայգու բնապատկերում, որին ենթարկվում են մյուս տարրերը: Կարող է լինել ըստ գույնի, ֆակտուրայի և այլն:

ԳԵՐԱՆ, Кряж; log

Ծառաբնի որոշակի հատված, որն օգտագործվում է որպես հատուկ նշանակության սղոցամուրճ՝ օդանավաշինական, դահուկային, ռեզոնանսային արտադրության մեջ, ինչպես նաև լուցկի, տախտակաթերթ և այլ տեսականի ստանալու համար:

ԳԵՐԱՆԻ ԾԱՎԱԼ, Объем бревен (кряжей); logs volume

Որոշում են ծավալների միջին մեծության ստատիկ մշակված աղյուսակներով, որոնք կազմված են տարբեր երկարության գերանների համար՝ ելնելով նրանց վերին կտրվածքի տրամագծից: Կարելի է որոշել նաև ծավալի հաշվարկման բանաձևով:

ԳԵՐԻՇՆՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿ, Господствующая порода; dominant tree species

Ծառատեսակ, որը խառը ծառուտներում փայտանյութի պաշարով գերիշխում է: Մյուս տեսակները կոչվում են ստորադաս: Տնտեսական տեսակետից Գ.Ծ. համարվում է նաև գլխավոր: Անտառամեցման ընթացքում խնամքի բոլոր միջոցառումները նպատակամուղ են բարելավելու գերիշխող տեսակի աճը: Եթե Գ.Ծ. տնտեսական առումով ունի երկրորդական նշանակություն, ապա խնամքի հատումների միջոցով ջանում են, որպեսզի ենթակա տեսակը գրավի գերիշխող դիրք:

ԳԵՐՎԱՍՈՒՆ ԾԱՌ, Перестойное дерево; overmature tree

Տե՛ս Գերհասուն ծառուտ:

ԳԵՐՎԱՍՈՒՆ ԾԱՌՈՒՏ, Перестойный древостой; overmature stand

Անտառի հասակային վիճակ, որը հաջորդում է ծառուտի հասուն փուլին: Բնորոշվում է վերին շարահարկում բնափայտի թույլ աճով: Գ.Ծ.-ները հաճախ հիվանդանում են, հեշտ են ենթարկվում քամու և ձնետապալման: Բացարժակ տարիքը, երբ ծառուտը համարվում է գերհասուն, պայմանավորված է ծառատեսակով և աճման պայմաններով: Ծառուտի գերհասուն տարիքը միշտ բարձր է հատման տարիքից, որը որոշվում է տվյալ տեսակի տեխնիկական հասունացումով:

ԳԵՐՍԱՆՎՈՐԱՍՏԵՏԱԲ ԺՊԱՆՈՒՄԱՆԿԱՐԱՆԵՐ, *Сверх-малкомасштабные аэрофотоснимки; super-small scale air photos*

1:10 000 000-1: 100 000 000 մասշտաբի օդալուսանկարներ, որոնք ստացվում են գեոստացիոնար արբանյակներից և մերձերկրային ուղեծիր ունեցող օդերևութաբանական արբանյակներից:

ԳԻՉՈՒՏ, ԳԻՉՈՒ ՆՈՍՐԱՆՏԱՈՒ, *Махжебеловое редколесье, арчевник; juniper light forest*

Գիիուց կազմավորված միատարր ծառուտներ, որոնք որպես կանոն լինում են նոսր (տիվությունը՝ 0.3 և ցածր): Աճում են Սիջին Ասիայի և Գարավային Կովկասի հարավային կողմնադրության չոր, էրոզացված լեռնալանքերին: Հայաստանում գիիուտները զբաղեցնում են շուրջ 6 հազար հա՝ Ձանգեզուրում, Վայքում, կենտրոնական և հյուսիսային շրջաններում՝ աճելով ծովի մակարդակից 600-2200 մ բարձրություններում, առաջացնելով միատարր, իսկ անտառային ստորին գոտիներում՝ նշնուռ, փռշուռ, դաժուռ հետ միասին, նաև խառը նոսր արիդային ծառուտներ, որոնք կատարում են խոշոր բնապահպանական դեր:

ԳԼԽԱՎՈՐ ԾԱՌԱՏԵՍԱԿ, *Главная порода; main tree species*

Ծառատեսակ, որն անտառածեցման որոշակի պայմաններում ապահովում է տնտեսության պահանջները: Տալիս է բարձր աղյուսակետություն և որոշակի տեխնիկական (ֆիզիկոմեխանիկական) ու քիմիական հատկություններով օժտված բնափայտ:

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ, *Генеральный план; general plan*

Կանաչապատման օբյեկտի հիմնական գծագիրը: Պատկերում է ապագա կանաչ զանգվածի տեղը ընդհանուր տարածքում, նրա կապը բնակավայրերի տարբեր տարրերի, հատկապես այլ կանաչ տարածությունների հետ, ոռոգման, լուսավորության ցանցերի անցկացման հնարավորությունները, շրջակա կառույցները, լանդշաֆտի ինքնատիպ տարրերը՝ ծորակը, ժայթերը, լճակը, գետակը, անտառակը, մենավոր ծառերը:

ԳԼԽԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Рубки главного пользования; clearcuttings*

Լինում են ընտրովի, համատարած հատատեղային և աստիճանական: Հատման մյուս եղանակները՝ պայմանական համատարած, միջշերտային, գոգավիտային, կոմբինացված, կամովի ընտրովի, խմբային ընտրովի, շերտավոր աստիճանական և այլն, հանդիսանում են նշված երեք եղանակների տարբերակներ կամ անցումային ծանր: Օրինակ՝ զոգավիտային հատումը լինում է խմբային կամ ընտրովի հատատեղային, այսինքն՝ հանդիսանում է ընտրովի հատումներից աստիճանական հատումների անցումային եղանակ:

ԳԼՈՒԲԱԼ ՏԵՐԱԲԱՆՇՆԱԿԱՆ ԴԱՍԱԳԱՐՊԵՐ (ԳՏԴ), Система глобального позиционирования (СГП); Global positioning systems (GPS)

Ամերիկայի Միացյալ Նահանգների օդային ուժերի կողմից հիմնադրված ուղեծրային արբանյակների օպերացիոն համակարգ, որոնք երկրի մակերևույթի վրա գտնվող ընդունիչին ուղարկում են կողավորված ազդանշաններ: Վերջիններիս կոնվերտացիայի արդյունքում որոշվում են տվյալ օբյեկտի տեղադիրքը (աշխարհագրական լայնություն և աշխարհագրական երկայնություն) և բարձրությունը:

ԳԼՈՒԲԱԼ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, Глобальный космический снимок: Global satellite image

Գլոբալ պատկերները սովորաբար ընդգրկում են երկրի մակերևույթի լուսավորված հատվածը և զոնայի լայնությունը կազմում է ավելի քան 10 000 կմ, իսկ զբաղեցրած մակերեսը տասնյակ միլիոն կիլոմետրեր:

ԳԼՈՆԱՍ, ГЛОНАСС (Глобальная навигационная спутниковая система); GLONASS (Russian counterpart for USA GPS system)

ԳԼՈՆԱՍ-ը (GLONASS) Ռուսաստանի Դաշնության գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ է, որը հանդիսանում է ԱՄՆ Գլոբալ տեղաբաշխման համակարգերի (GPS) նմանատիպը:

ԳԾԱՅԻՆ ՎԵԿՏՈՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ, Линейные векторные объекты; Linear vector objects

ԱՏԴ-ի երեք հիմնական վեկտորային տարածական միավորներից մեկը (կետին և բազմանկանը զուգահեռ), որի օգնությամբ ցույց են տրվում գծային տարածում ունեցող օբյեկտները՝ զետերը, անտառային ժանապարհները և այլն:

ԳՆԱԴԱՏՍԱԿԱՆ ԱՉԹԱՉԱՓ, Глазомер таксационный; ocular inventory

Ունակություն, որով առանց չափելու բնորոշում են ծառուտի բարձրությունը, տրամագիծը, հասակը, կազմը, լրիվությունը, աճը և այլն: Գ.Ա. ծեռք է բերվում տարիների ընթացքում կատարած անտառզնահատման ճշգրիտ չափումների շնորհիվ:

ԳՆԱԴԱՏՍԱԿԱՆ ԲԱՐՏ, Карточка таксации; inventory card

Դաշտային փաստաթուղթ, որտեղ անտառի զույգագրման ժամանակ գրի են առնվում տվյալ անտառամասի զնահատման բնութագիրը և նախատեսվող անտառտնտեսական միջոցառումները:

ԳՆԴԱՉԵՎ ԲՈՒՅՍԵՐ, Шаровидные растения; spherical plants

Բույսեր, որոնք առաջացնում են խիտ և ուժեղ ճյուղավորված գնդաձև ցածրաճախարհ: Դրանց թվին կն պատկանում են բարձանման բույսերը և գնդաձև բույսերի

կտրոնները սովորական բույսերի բներին պատվաստելու միջոցով ստացվող բույսերը (թեղի, ոտրիճիա գնդածև, թխկի սրատերև գնդածև):

ԳՈԳՓՈՍԱՅԻՆ ՉԱՏՈՒՄ, *Композинная рубка; lot cutting*

Խմբային աստիճանական հատման տարատեսակ, որի ժամանակ ծառերը հատում են շրջաչերտերով, հասակային երկու դասի ժամանակամիջոցում: Շրջաչերտերի մակերեսը՝ 300-500 քմ, ծեղ՝ ծվածկից մինչև նեղ ժապավենածև: Ծառուտի հասուն մասը հատվում է 2-4 փուլով: Վերականգնման ժամանակաընթացքը՝ 40 տարի: Այսպես ծառուտն ստացվում է տարահասակային՝ պահպանելով անտառի պաշտպանական բոլոր հատկանիշները:

ԳՈՐԳԱԲՈՒՅՍԵՐ, *Ковровые растения; carpet plant*

Կարճ (2-10սմ), գեղեցիկ տերևներով, աստ Ծաղկող կամ ավելի բարձր, բայց լավ խուզվող, սովորաբար փոփոխ խոտաբույսեր: Օգտագործվում են զարդանկար սիզամարգերի, ծաղկաթմբերի, ծաղկամարգերի, գորգանման ծաղկանոցների ստեղծման համար:

ԳՈՒՆԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ, *Цветаевая композиция; colour composition*

Ակտիվ և պասիվ գույների ճիշտ համադրում, որի շնորհիվ ստեղծվում են ներդաշնակ զուգակցումներ: Գույների և երանգների լրիվ ներդաշնակություն ստեղծելու նպատակով մուգ գույները զուգակցվում են բաց գույների հետ, միայն այնպես, որ երանգներն աստիճանաբար հաջորդեն մեկը մյուսին՝ թուլացնելով գունային անցումների ցայտագունությունը:

ԳՈՒՆԱԳԵՂՈՒԹՅՈՒՆ, *Калорит; taint*

Ծաղիկների գույնի և ներդաշնակության ընդհանուր բնույթը կոմպոզիցիայում: Տարրերում են տաք գունեղություն՝ տաք գուներանգների գերակշռման դեպքում և սառը գունեղություն՝ սառը գուներանգների տիրապետման դեպքում:

ԳՈՒՄ, *ГОЕС (GOES) (Геостационарные оперативные спутники окружающей среды); GOES (Geostationary Operational Environmental Satellite)*

Ամերիկայի Միացյալ Նահանգների "Գեոստացիոնար օպերատիվ շրջակա միջավայրի արբանյակ" (GOES): Գոյություն ունեն GOES-1 և GOES-2 արբանյակներ, որոնք 36 000 կմ բարձրություն ունեցող գեոստացիոնար ուղեծրում պտտվելով արևմտյան կիսագնդի հասարակածային, արևադարձային և մասամբ բարեխառն գոտիներն ապահովում են օպերատիվ դիտարկումներով և արբանյակային պատկերներով: Այս արբանյակների դերը բացառիկ է արևադարձային փոթորիկների, արևադարձային անտառային հրդեհների հայտնաբերման և նախազգուշացման համար:



ԴԱԲԱՂԱՆՅՈՒԹԵՐ, *Дубильные вещества; tanning matter*

Որոշ բույսերի բջիջներում կուտակվող, ազոտ չպարունակող բարդ օրգանական նյութեր (շաքարների և հալաթթվի բարդ եթերներ), որոնք օգտագործվում են կաշվի մշակման նպատակով, օր.՝ ուռնու, կաղնու բջջախյութում: Դաքաղանյութերից են տանինները, որոնք կուտակվում են որոշ բույսերի օրգաններում (կեղևում, արմատներում, տերևներում և այլն) և օգտագործվում են բժշկության և ներկարարության մեջ:

ԴԱՆԴԱՂԱԾ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ, *Медленнорастущие древесные породы; slow growing tree species*

Գեղազարդային ծառաֆային բույսեր, որոնք տարեկան աճը չի գերազանցում 10-30 սմ (սերկևիլենի, գիհի կազակական և այլն):

ԴԱՇՆԱԿՈՒՄ, *Аранжировка; arrangement*

Հասարակական և բնակելի շենքերի ներսը ձևավորելու նպատակով առանձին բույսերից, ճյուղերից, կանաչ ծաղկաշղթաներից, պսակներից, ծաղիկներից, տերևներից ծաղկեփնջեր կազմելու ու դրանք սկահակներում ու զամբյուղներում դասավորելու արվեստ:

ԴԱՇՏԱՊԱՇՏՊԱՆ ԱՆՏԱՌԱՇՆՈՒԹՅԱՆ ԼԵՏԱՌԱՇՆՈՒԹՅԱՆ ՊՈՅՆԻՆԵՐ, *Полезащитные лесные полосы; field protective forests, shelter belts*

Պաշտպանական անտառաբուծության տարատեսակ, որի նպատակն է մեղմացնել կլիման, պաշտպանել գյուղատնտեսական դաշտերը խորշակներից: Դ.Ա. գծային, ժապավենաձև տնկարկներ են, որոնք հիմնադրվում են տափաստանային գոտում, հարթ և թույլ զոգավոր վայրերում: Լինում են հիմնականում 3-5 շարքանի, միջշարային տարածությունը՝ 2.5-4 մ, բույսը բույսից՝ 1-3 մ: Երտերը հիմնադրվում են գերակշռող քամիների հանդիպակաց ուղղությամբ, միջշերտային տարածությունը՝ 200-600 մ (նայած հողի տիպին): Դ.Ա.-ի կառուցվածքը լինում է քամեթափանց, ցացկեն, միատարր կամ խառը (մի քանի ծառատեսակից): Տեսակների ընտրությունը կախված է բնակլիմայական պայմաններից և պաշտպանվող դաշտերում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերից:

ԴԱՐՍԱԿՈՒՅՏ, *Штабель; roundwood pile*

Պահպանման նպատակով որոշակի ձևով դարսված փայտանյութ: Լինում է հատած ծառերի, գերանների, սղոցանյութի դարսակույտ:

ԴԱՐՍՎԱԾ ԽՈՐԱՆԱՄԻՒՒ ՍԵՏՐ (ՌԱՌՄԵՏՐ), *Складочный кубометр (ракуметр); stacked cubic meter (roumeter)*

1մ³ տարածություն փայտի դարսվածքով, նրանց միջև ազատ տարածության՝ օդի հետ միասին: Դ.Խ.Ս. փայտանյութի բուն ծավալը պայմանավորված է դարսվող փայտի ծևով և չափով:

ԴԵԳՐԱՂԱՅՎԱԾ ԼԱՆԴՇԱՅՏ, *Деградуированный ландшафт; degraded landscape*

Լանդշաֆտ, որը վատթարացել է մարդու ոչ նպատակահարմար տնտեսական գործունեության՝ անտառների հատման, օգտակար համաժողովրդի շահագործման, արտադրության մնացորդներով աղտոտելու, ինչպես նաև բնական ծորագոյացման, փվածքների և այլնի հետևանքով:

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԲՈՒՅՍԵՐ, *Декоративные растения; decorative plants*

Տե՛ս Գեղազարդային բույսեր:

ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐ, *Лекарственные растения; medical plants*

Բույսեր, որոնք օգտագործվում են բժշկության մեջ բուժման կամ հիվանդության կանխարգելման նպատակով: Անտառային տարրեր համակեցություններում աճող ծառաբույսերից և խոտաբույսերից շատերը ունեն բուժիչ հատկություն և օգտագործվում են բժշկության մեջ:

ԴԵՆՂՐԱՐԻ, *Дендрарий; dendrorium, arboretum*

Կանաչապատման ինքնուրույն օբյեկտ կամ բուսաբանական այգու, գրոսայգու, տնկարանի կոլեկցիոն հավաքածու: Նախատեսված է տարբեր տեսակի ծառերի և թփերի ներմուծման և կլիմայավարժեցման նպատակով կատարվող գիտական աշխատանքների համար, ինչպես նաև ծառայում է որպես բարձր գեղազարդ հատկություններով օժտված ռեկրեացիոն գոտի, օջախ: Կազմակերպվում է աշխարհագրական, կարգաբանական, էկոլոգիական և գեղազարդային սկզբունքներով:

ԴԵՆՂՐՈԼՈԳԻԱԿԱՆ (ԾԱՌԱԲԱՆԱԿԱՆ) ՆԱԽԱԳԻԾ, *Дендрологический проект; dendrological project*

Ծառաբույսային բուսականության նախագծային տեղաբաշխումն է կանաչապատվող օբյեկտի հատակագծի վրա: Նշվում է ծառաբույսային բուսականության տեսադաշտը, տեսակների բաշխումը խմբերում, զանգվածներում, մանրապուրակներում: Առանձնացվում են նաև սիզամարգերը, ծաղկանոցները: Տեսակաշարը նշվում է համարներով կամ պայմանական նշաններով:

ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ (ԾԱՌԱՔԱՆԱԿԱՆ) ՇՐՋԱՆ, *Дендрологический район;*
dendrological region

Ծառաբույսերի շրջանացման տարրական միավոր: Բնորոշվում է վայրի ծառաթփային բույսերի նույն տեսակային կազմով, ֆիզիկաաշխարհագրական համանման պայմաններով և նոր բուսատեսակների ներմուծման համար նմանատիպ հնարավորություններով:

ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ (ԾԱՌԱԳԻՏԱԿԱՆ) ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, *Дендрологическое районирование; dendrological subdivision*

Երկրագնդի կամ նրա առանձին խոշոր մասերի ստորաբաժանումը բույսերի որոշակի խմբերի աճման ընդհանուր պայմաններ ունեցող ավելի փոքր միավորների՝ մարզերի, պրովինցիաների, օկրուգների, շրջանների:

ԴԵՆԴՐՈԿԼԻՄԱՏՈԼՈԳԻԱ, *Дендроклиматология; dendroclimatology*
 Տե՛ս դենդրոքրոնոլոգիա:

ԴԵՆԴՐՈԴՅԱՎԱՔԱԾՈՒ, *Дендроколлекция; dendro collection*

Բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում աճեցվող ծառաբույսերի հավաքածու, որը ստեղծվում է կարգաբանական (ընտանիք, ցեղ, տեսակ և այլն), էկոլոգո-աշխարհագրական, գեղազարդային և այլ սկզբունքներով:

ԴԵՆԴՐՈՄԵՏՐԻԱ, *Дендрометрия; dendrometry*

Անտառային գնահատման (տաքսացիայի) բաժին, որն ուսումնասիրում է անտառային օբյեկտների, ծառերի, ծառուտների և անտառային արտադրանքի տաքսացիոն ցուցանիշների չափման մեթոդները և եղանակները:

ԴԵՆԴՐՈՔՐՈՆՈԼՈԳԻԱ, *Дендрохронология; dendrochronology*

Գիտություն, որն ուսումնասիրելով ծառերի տարեկան օղակների բնույթը, բացահայտում է անցյալի կլիմայական պայմանները: Այդ նպատակի համար մեծ արժեք են ներկայացնում երկարակյաց՝ մի քանի հազար տարի ապրող ծառատեսակները (սեջվոյադենդրոն հսկա, Ճառագայթածև սոճի, մայրիներ, սոսիներ, շագանակենի և այլն): Այդ տեղեկությունների հիման վրա կարելի է գուշակել նաև ապագայի կլիման:

ԴԻՍԱՅԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Устойчивость; stability, resistance*

Բույսի դիմակայության ունակություն շրջակա միջավայրի էքստրեմալ պայմանների դեպքում, բույսերի մոտ առաջանում է լարված վիճակ՝ սթրես: Անբարենպաստ պայմանների դանդաղ զարգացման դեպքում հարմարողականությունը ավելի հեշտ է, որը կարող է արտահայտվել նույնիսկ կոփումով: Բույսերի դիմացկունության կենսաքիմիական և ֆիզիոլոգիական ռեակցիան ամբողջական է: Սթրես առաջացնող

անբարենպաստ պայմաններն են. ջրի պակասը, բարձր և ցածր ջերմաստիճանները, աղբի բարձր խտությունը և այլն: Յուրաքանչյուր գործոնի նկատմամբ բույսի դիմացկունությունը զնահատվում է ֆիզիոլոգիական, կենսաքիմիական մի շարք առանձնահատկություններով:

ԴԻՏԱՆ, *Busup; sighting strip, viewfinder*

Անտառում անցման համար 1 մ լայնությամբ հատված շերտ: Սովորաբար քաղում են միատարր ծառուտներում՝ միջբառակուսիների սահմանները նշելու համար:

ԴՐԱՆՏ, *Парадиз; paradise*

Չին պարսկական պարտեզ, որի՞ ընդող էր վարդերի, շատրվանների, ջրամբարների առատությունը:

ԴՐԱԿԱՆ ԾԱՌ, *Плюсовое дерево; plus tree*

Մեկ կամ մի քանի հատկանիշների համապատասխանող լավագույն ծառ, որն ընտրվում է սերմնաբուծական կամ սելեկցիոն նպատակներով: Արագաճության տեսանկյունից ընտրելիս դրական ծառի տրամագիծը պետք է լինի 30%, իսկ բարձրությունը՝ 10 % ավելի տվյալ տեսակի միջին ծառերից:

ԴՐՈՇԱԿԱՆՄԱՆ ԾԱՌԵՐ, *Флагообразные деревья; flag figurative trees*

Երկարատև միակողմանի քամու ազդեցությամբ ձևավորվող սաղարթով ծառեր:

Ե

ԵՁՐԱՇԵՐՏ, *Бордюр; braid*

Որոշակի տեսակի ոչ բարձր (ոչ ավելի՝ 50 սմ), ծաղկող թփերի կամ գեղազարդատերև խոտաբույսերի մեկ կամ երկու շարքով, նեղ (10-30 սմ) տնկարկ: Ծառայում է ծաղկաթմբերի, ծաղկամարգերի կամ արահետների եզրապատման, ծաղկանոցների զարդանկարի ընդգծման համար:

ԵՁՐԱՇԵՐՏԱՅԻՆ (ԱՅՁԵԳՈՐԾԱԿԱՆ) ՍԿՐԱՏ, *Бордюрные ножницы; braid scissors*

Կանաչ ցանկապատերը և եզրաշերտերը էտելու մկրատ: Չեռքի մկրատների հետ կան նաև էլեկտրականությամբ աշխատող օդամղիչ մկրատներ կամ կանաչ ցանկապատերի մեքենայացված խուզված ագրեգատներ:

ԵՁՐԱՊԱՏ, *Paranet; parapet*

Ոչ բարձր պատ, սովորաբար քարից: Ծառայում է որպես սանդղափուլերի, առափերի, աստիճանների, թեք լանջերի, ճանապարհների պարիսպ:

ԵՁՐԱՌՈՒ, *Кювет; edge canal*

Անտառպուրակի, զբոսայգու ճանապարհային պատասափ մակերեսային ջրերը հավաքելու և հեռացնելու համար հատուկ կառույց՝ ճանապարհի երկարությամբ:

ԵՁՐԱՏԱԽՏԱԿ, *Гарбул; edge board*

Սղոցափայտի տեսակ, որը ստացվում է գերանի եզրային մասից:

ԵԹԵՐԱՅՈՒՂԵՐ, *Эфирные масла; essential oils*

Բույսի կողմից սինթեզվող բարդ քիմիական կազմով ցնրող նյութեր, որոնց հիմնական տարրերը հանդիսանում են տերպենները: Հիմնականում պարունակում են ծառաբույսերի կեղևը, տերևը, բնափայտը: Օժտված են ֆիտոնցիդային բարձր ունակությամբ և կարևոր դեր են խաղում բույսերի փոխազդեցության գործում (ալելոպատիա):

ԵԹՄ+, *ETM+ (Тематический картограф плюс); ETM+ (Enhanced Thematic Mapper plus)*

ԵԹՄ+-ը (ETM+) ԱՄՆ "Լանդսատ-7" բնառեսուրսային արբանյակի սենսորի անվանումն է: ԵԹՄ+-ը ապահովում է տիեզերական պատկերների ստացումը յոթ տարբեր սպեկտրալ տիրույթներում: Վերջինս լայն կիրառություն ունի երկրի բնական պաշարների, այդ թվում և անտառածածկի, ուսումնասիրման և մոնիթորինգի հարցերում:

ԵԼՈՒՆԻ, *Каллыс; tylosis*

Հյուսվածքների (արմատների) առաջացումը և տարբերակումը ապահովող նորագոյացություն (խիլ)՝ բույսի կամ տնկաչիլի վրա:

ԵԼՈՒՆԴ (ԾԱՌԱԿՈՇՏ, ԽԻԼ), *Наплыв; knob*

Ծափի բնի, ճյուղերի, արմատների վրա զնդածև հաստացում: Առաջանում է քնած այքերի ինտենսիվ աճի կամ ծոող միջատների, մանրէների գործունեության հետևանքով (քիչքներն արագ բազմանում են): Ե. լինում է սովորական (բնափայտային նորմալ կառուցվածքով) կամ շերտավոր (խիլի նման): Սովորական ելունը զցում է բնափայտի արծեքը, իսկ շերտավորը, շնորհիվ գեղեցիկ կառուցվածքի, բարձր է գնահատվում:

ԵՂԵՎԱՆՈՅ, *Сирингария; lilacum*

Էքսպոզիցիոն կոլեկցիոն հողամաս, որտեղ աճեցվում է եղրևանու տեսակների և սորտերի գեղազարդ հավաքածու:

ԵՂԵՎՈՒՒ ԱՆՏԱՌ, ԵՂԵՎՆՈՒՏ, *Еловые леса, Ельник; spruce forest*

Եղևնու երիտասարդ անտառ:

ԵՆԹԱԿԱ (ԱՏՈՐԱՂԱՍ) ԾԱՌԱՏԵՍԱԿ, *Подчиненная древесная порода; subordinated tree species*

Ծառատեսակ, որն ինքնուրույն մասնակցում է ծառուտի կազմավորմանը՝ տեղ գրավելով երկրորդ շարահարկում:

ԵՆԹԱՆՏԱՌ, *Подлесок; undergrowth (shrub) forest*

Թփեր, երբեմն երրորդ կարգի ծառեր, որոնք աճում են անտառի սաղարթի տակ: Հիմնականում կազմավորված է լինում սովորատար տեսակներից: Նոսր անտառների Ե.-ում հանդիպում են նաև լուսասեր տեսակներ: Նրա կազմը և քանակը պայմանավորված է անտառակազմող ծառատեսակներով, աճման համակողմանի պայմաններով: Ե. ունի անտառաբուծական կարևոր նշանակություն: Նրա չափավոր առկայությունը նպաստում է անտառում հողի ձևավորմանը, հիդրոլոգիական ռեժիմի բարելավմանը անտառի սերմնային բնական վերարտադրությանը, մատղաչի աճին և այլն: Ե.-ի մեծ քանակությունը բացասաբար է ազդում անտառի սերմնային բնական վերականգնման վրա:

ԵՆԹԱՏԵՍԱԿ, *Подвид; subspecies*

Ինքնուրույն տարածասահման ունեցող դասակարգային միավոր, որն ընդգրկված է տեսակի մեջ: Ենթատեսակի մեջ միավորված բույսերը տարբերվում են տեսակի մյուս առանձնյակներից ձևաբանական որոշ հատկանիշներով, ազատ խաչասերվում են դրանց հետ՝ առաջացնելով կենսունակ սերունդ:

ԵՆԹԱՆՏԱՆՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅՈՒՄ, *Омалозривание подростка; rejuvencescence of undergrowth*

Ծառուտի խնամքի տարատեսակ: Ենթանտառային տեսակների ծերացած վերերկրյա մասի հեռացում: Թփատեսակները համեմատաբար կարճ կյանք ունեն, մինչդեռ նրանք օժտված են հողապաշտպան բարձր հատկություններով, ուստի նրանք երիտասարդացումը հանգեցնում է տնկարկի բնապահպանական հատկությունների բարելավմանը: Ե.Ե. սովորաբար զուգակցում են ծառուտում խնամքի հատումների հետ: Լեռնային անտառներում, որտեղ ջրային էրոզիայի վտանգը մեծ է, այն կատարվում է 2 փուլով:

ԵՆԹԱՆՏԱՆՈՒ ԽՏՈՒԹՅՈՒՆ, *Густота подростка; undergrowth density*

Որոշում են 1 միավոր տարածքում անտառի սաղարթի տակ եղած բիատեսակների զբաղեցրած մակերեսով: Պայմանավորված է անտառի սաղարթի միակցության աստիճանով:

ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ, *Маршрутная съёмка; track photography*

Երկրի մակերևույթի երթուղային նկարահանումը իրականացվում է արբանյակի թռիչքի ուղղությամբ: Նկարահանվող գոտու լայնությունը կախված է թռիչքի բարձրությունից և նկարահանող ապարատի դիտանցքի անկյունից: Նեղ դիտանցք ունեցող, բարձր թույլատրելիության նկարահանող ապարատների մոտ նկարահանվող գոտիների լայնությունը 0,2 H է, իսկ լայն դիտանցք ունեցողների մոտ՝ 2,5 H:

ԵՐԱՇՏ, *Засуха; drought*

Բարձր ջերմաստիճանի պայմաններում մթնոլորտային տեղումների տեսակի անբավարար քանակ, որը նվազեցնում է հողի խոնավությունը՝ հանգեցնելով բույսերի աճի անկման, երբեմն էլ պատճառ դառնում չորացման: Ծառերի վրա Ե.՝ի ազդեցությունը զգացվում է հաջորդ տարում՝ արտահայտվելով աճի զգալի անկմամբ:

ԵՐԱՇՏԱԴՌՄԱՅԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ՉՈՐԱԴՌՄԱՅԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Засухоустойчивость; drought resistance*

Բույսերի կողմից բջիջների հյուսվածքների ու օրգանների ջրազրկվելուն և ջերմաստիճանի բարձրացմանը դիմանալու հատկություն: Ջրազրկումը առաջացնում է ցիտոլպլազմայի կոլոիդների և քիմիական հատկությունների խախտում: Չորադիմացկունությունը բույսերի ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված համալիր ցուցանիշ է՝ առանց աճի թուլացման և քերքատվության անկման:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆՏԱՌ, *Молодняк; young stand*

Անտառի առաջին հասակային շրջան, ընդգրկում է մատղաշից մինչև ծողանային հասակը: Ունի 2 փուլ՝ մինչև սաղարթի միակցումը և միակցումից հետո, երբ ծառերի ներքին ճյուղերն անբավարար լույսի հետևանքով սկսում են չորանալ: Ե.Ա.՝ի

երկրորդ փուլում սկսվում է ծառերի բների և սաղարթի ձևավորումը, թույլ աճած ծառերի մահացումը: Ասեղնատերևավոր և կարծրատերևավոր տեսակների Ե.Ա.-ի շրջանն ավարտվում է 20-30 տարեկան հասակում, փափկատերևավոր և մացառային ծառում ունեցող ծառերին՝ 10 տարեկան հասակում: Ե.Ա.-ների աճի և զարգացման համար նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով կիրառում են խնամքի (լուսավորման և մաքրման) հատումներ:

ԵՐԿԱՄՅԱ ԲՈՒՅԱԵՐ, *Двулетние растения; biennial plants*

Բույսեր, որոնք ապրում են 2 տարի: Առաջին տարում զարգացնում են միայն վեգետատիվ օրգաններ, կուտակում սննդանյութեր, երկրորդ տարում դրանցից բացի՝ առաջանում են նաև գեներատիվ օրգաններ, որից հետո մահանում են: Այս խմբին են պատկանում բազմաթիվ մշակովի խոտաբույսեր, մշակաբույսեր (կաղամբ, ճակնդեղ, գազար, բողկ):

ԵՐԿԱՐԱՎՅԱՅ ԲՈՒՅԱԵՐ, *Долговечные растения; longevous plants*

Կյանքի 100 տարուց ավելի տևողությամբ բույսեր: Ստորաբաժանվում են գերերկարակյացների՝ 500 և ավելի (սեքվոյա, էվկալիպտ, սեքվոյադենդրոն, կենի), երկարակյացների՝ 200-500 (լորենի, սոսի, կաղնի, հաճարենի), նվազ երկարակյացների՝ 100-200 տարի ապրողներ (բարդի, ուռենի, կեչի, կաղամախի):

ԵՐԿԱՐԱՏԵԿ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՀՍՈՒՄՆԵՐ, *Длительно-постепенные рубки; long-term gradual cuttings*

Աստիճանական հատման տարատեսակ, որը կիրառվում է բարձր ջրաթափանցելի հողերի վրա աճող ծառերից կազմավորված ծառուտներում: Հատումը կատարվում է 2 փուլով, սկզբում հասուն և գերհասուն ծառերը, ապա 30-40 տարի անց, մնացած ծառերը, որոնք այդ ժամանակաընթացքում հասնում են շահագործման համար պիտանի չափերի: Յուրաքանչյուր փուլում վերցվում է պաշարի 50-80%-ը: Նպաստում է ծառուտի հուսալի վերականգնմանը տարահասակային ծառերով:

ԵՐԿԱՐԱՏԵԿ (ԱՆԸՆԴԴՅԱՏ) ԾԱՂԿՈՂ ՊԱՐՏԵՑ, *Сад длительно (непрерывного) цветения; long-run flowering (blooming) garden*

Վաղ զարնանից մինչև ուշ աշուն ծաղկող բույսերով ձևավորված պարտեզ: Գեղազարդային տպավորության համար միաժամանակ օգտագործվում են գեղեցիկ պտուղներ ունեցող բույսեր և տերևների աշնանային գունափոխումը:

ԵՐԿԱՐՈՐՅԱ ԲՈՒՅԱԵՐ, *Длиннодневные растения; long-day plants*

Բույսեր, որոնք զարգացման (ծաղկման ու պտղաբերման) համար անհրաժեշտ է ցերեկվա երկարատևություն: Սովորաբար բարձր լայնությունների բույսեր են (օր.՝ խեծափիճի սիրիդան):

ԵՐԿԱՍՏ ՉԱՓԻՉ, *Вилка мерная; caliper*

Աճող ծառի հաստությունը չափող գործիք: Ընդունված է շտանգել կարկինի սկզբունքով փայտից կամ դյուրալումինից պատրաստված քանոնը: Ե.Չ. օգտագործում են նաև ծառերի բարձրության չափումների համար:

ԵՐԿՐԱՊԼԱՍՏԻԿԱ, *Геопластика; geoplastics*

Կանաչապատման ենթակա տարածքի ուղղածից հատակագծման եղանակ: Նպատակ ունի ճարտարապետագեղարվեստորեն վերափոխել օբլիեֆը: Տես միկրոգեոմորֆոպլաստիկա:

ԵՐԿՐԱՖԻՏՆԵՐ, *Геофиты; geophytes*

Բազմամյա խոտաբույսեր, որոնց վերականգնման բողբոջները հողում են: Գիմնականում սոխուկավոր, կոճղարմատավոր, պալարավոր բույսեր են (վարդակակաչ, սոխ, հակինթ, հիրիկ, նարգիս, շուշաններ):

ԵՐԿՐԻ ԲՆԱՌԵՍՈՒՐԱՍՅՒՆ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐ, *Ресурсы спутники Земли; Earth Resources Satellites*

Երկրի բնական ռեսուրսները և երևոյթները ուսումնասիրելու նպատակով տիեզերք արձակված արբանյակային համակարգեր (Օր. Լանդսատ, Սպոտ, Իկոնոս և այլ արբանյակային համակարգեր):

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅՈՒԹ, *Второстепенные лесные материалы; secondary forest materials*

Մթերված կոճղ, կեղև, չորացած ճյուղ, շիվ, խեժ:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԿԱՄ ՈՒՂԵԿՑՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿ, *Второстепенная древесная порода; secondary tree species*

Ծառատեսակներ (թխկի, հացենի, լորենի, արոսենի և այլն), որոնք անտառկազմման պրոցեսում ուղեկցում են գլխավոր տեսակին (կաղնի, հաճարենի, կեչի և այլն):

Զ

ԶԱՆԳԱԼԾ, *Massud; massive*

Ծառաթփայլին բուսականությունից կազմված խառը ոճի կանաչապատ տարածք: Զբոսայգու բնապատկերի հիմնական տարրերից է: Բնորոշվում է կառուցվածքով, խտությամբ և տեսակային կազմով: Լինում է անտառային տիպի, նոսր և պուրակային:

ԶՐՈՍԱՅԳԻ, *Парк; park*

Ծառուղիներով, ջրային մակերեսներով, խաղահրապարակներով, քանդակներով, ճարտարապետական փոքր ձևերով, զվարճանքի կառույցներով, քնական կամ արհեստական կանաչապատ հողամաս՝ զբոսայգի, հանգստի, կուլտուրական ժամանցի և այլնի համար: Կանաչապատման համակարգի ամենախոշոր օբյեկտն է: Զբոսայգիները ըստ նշանակության լինում են մշակույթի և հանգստի, մանկական, մարզական, զբոսանքային, հուշահամալիրային: Ըստ տեղադրության և բնակչության օգտագործման ստորաբաժանվում են համաքաղաքային, շրջանային, քաղաքային, քաղաքամերձ զբոսայգիների, ըստ ռելիեֆի բնույթի՝ գետափնյա, բարձրադիր զբոսայգիների և այլն:

ԶՐՈՍԱՅԳՈՒ ԶԱՆԳԱԼԾ, *Massud parkovան; park massive*

Զբոսայգու հատված: Կազմված է հորիզոնական կամ ուղղանկյալ խտություն ունեցող զբոսայգուն բնորոշ և զուգակցող ծառերից ու թփերից: Տարբերում են զբոսայգու մաքուր (սոճուտ, եղևնուտ) և խառը (կեչի, եղևնի) զանգվածներ: Զբոսայգիներում զանգվածները 0.5-4 հա են, անտառպուրակներում՝ 10 հա-ից ավել:

ԶՐՈՍԱՅԳՈՒ ԽԱՂԱՂ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ, *Зона тизого отдыза парка; quite zone of recreational park*

Զբոսայգու մի հատված, որը նախատեսված է այցելուների խաղաղ հանգստի համար:

ԶՐՈՍԱՅԳՈՒ ԿԱՄՐԶԱԿ, *Паркован мостик; park bridge*

Գեղազարդային կառուցվածք զբոսայգում: Ստեղծվում է ջրային արգելքների կամ ձորակների հաղթահարման համար: Տարբերում են կախված, կամարասապատակոր և այլ կամուրջներ:

ԶՐՈՍԱՅԳՈՒ ՀՐՄՊԱՐԱԿ, *Парковая площадь; park area (square)*

Զբոսայգու կամ պուրակի կոմպոզիցիոն առանցքի վրա գտնվող, առավել գեղազարդված հատված, որը մի ամբողջության մեջ կապում է ծառուղիները, կաճանները:

րը: Սովորաբար այստեղ են զբոսայգու կարևորագույն կառույցները՝ կինոթատրոնը, էստրադան, կանաչ թատրոնը, տաղավարները, խաղասենյակները, ցուցասրահները՝ և այլն:

ԶԲՈՍԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԻ ԿՈՄՊՈԶԻԹԻՎՈՆ ԶՈՆԱՅԱՎՈՐՈՒՄ, *Композиционное зонирование территории парка; composition zoning of park area*

Զբոսայգու տարբեր մասերի ձևավորման սկզբունքի հիման վրա նախագծային և ճարտարապետագեղարվեստական կազմակերպման հատկանիշների զոնայավորում:

ԶՈՆԱՅԱՎԱՆ (ԶՈՆԱԼ) ԲՈՒՄԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, *Зональная растительность; zonal vegetation*

Բնական բուսականություն, որը քնորոշվում է համապատասխան քիմով (տունդրա, տայգա, տափաստան, անապատ, կիսաանապատ և այլն) բնական գոտիներով և զոնաներով: Սովորաբար զբաղեցնում է հարթ, ջրածան տարածություններ, այսպես կոչված՝ պակորներ: Գյուսիսից հարավ ընկած բնական գոտիներում, կախված բուսականության կազմից և կառուցվածքից, առանձնացնում են ենթազոնաներ: Այսպես, օրինակ, տափաստանային գոտում առանձնացնում են մարգագետնային, իսկական և անապատացող տափաստաններ: Զ.Բ. փոխվում է նաև արևելք-արևմուտք ուղղությամբ (օր.՝ Ռուսաստանի եվրոպական մասում եղևնու անտառները Սիբիրում փոխարինվում են խեժափիժու անտառներով): Զ.Բ. կառուցվածքի և կազմի վրա ազդում են նաև ռելիեֆի պայմանները:

Է

ԷՐԱՅԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ, *Эдафические условия; edaphic conditions*

Հողի հետ կապված էկոլոգիական պայմանների համալիր՝ հողի քիմիական կազմը, խոնավությունը, հողում օդի քանակն ու բաղադրությունը, ջերմությունը, մեխանիկական կազմը, ռեակցիան, որոնք բնորոշում են հողի բերրիությունը, նրանում եղած տարրերի մատչելիությունը բույսերի համար:

ԷՐԱՅԻԿ ՑԱՆՑ, *Эдафическая сетка; edaphic grid (net)*

Երկրաչափական կոորդինատային համակարգ: Օգտագործվում է անտառային տիպոլոգիայում էկոլոգիական 2 գործոնների՝ հողի խոնավության (նախնական անոթաքցով) միջոցով ածանա պայմանների տիպը որոշելու համար: Ընդ որում, նշված գործոնների որակական բնորոշումը տրվում է ինդիկատորային բույսերով և հումուսի տիպով, բոնիտետային դասով և այլն: Է. Ց.-ի 2 առանցքի վրա առանձնացնում են բնորոշ գործոնները. համեմատաբար միատարր հատվածներում, որոնք խաչաձևման բնիկը ցույց է տալիս ածանա տվյալ պայմանների տիպը (անտառաձևման պայմանների տիպը):

ԷՐԱՅՈՏԻՊ, *Эдафотип; edaphotype*

Հողի աղդեցության տակ առաջացած կենսատիպ:

ԷՐԻՅԻԿԱՏՈՐՆԵՐ, *Эдификаторы; edifcators*

Բուսածածկում բուսատեսակների խումբ, որը բնորոշում է նրա կառուցվածքը և որոշ չափով կազմը: Որպես է. հաճախ հանդես են գալիս բուսածածկի առաջին շարահարկի դոմինանտ բույսերը, որոնք աչքի են ընկնում վերականգնման բարձր ունակությամբ և կազմում են ընդհանուր ֆիտոզանգվածի զգալի մասը: Անտառային համակեցություններում որպես է. միշտ հանդես են գալիս հիմնական շարահարկի ծածկերը: Ներքին շարահարկերից որպես է. հանդես եկող բույսերը կոչվում են սուբէդիֆիկատորներ (օր.՝ եղևուտներում որոշ կանաչ մամուսներ): է.-ի արմատային համակարգը մրցունակության պատճառով, բացասաբար է ազդում մյուս բույսերի սերմերի ժլման և աճի վրա: Սուկցեսիայի հետևանքով անտառային բուսածածկում է.-ի փոփոխությունը կոչվում է ծառատեսակային կազմի հերթափոխում: Անտառագիտության մեջ համապատասխանում է «զլխավոր ծառատեսակ» հասկացությանը:

ԷԹՈՒԼԱՑՈՒՄ, *Этoлoзaцuя; etholisation*

Լույսի անբավարար քանակի հետևանքով աճի թուլացում, բույսի դիմադրողականության ակնում:

ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԵՒՍԱԿԱՆ ՍՊԵԿՏՐ, *Электромагнитный спектр; Electromagnetic spectrum*

Էլեկտրամագնիսական ալիքների հաջորդականությունը, որը դասակարգված է ըստ ալիքների երկարությունների:

ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԵՒՍԱԿԱՆ ՍՊԵԿՏՐԻ ՈՒՆՏՐԱՍԱՆՈՒՇԱԿԱՊՈՒՅՆ ՏԻՐՈՒՅԹ, *Ультрафиолетовая часть электромагнитного спектра; Ultraviolet range of electromagnetic spectrum*

Էլեկտրամագնիսական սպեկտրի 0,001-0,4 մկմ տիրույթը, որը թույլ է տալիս երկրի մակերևույթի որոշակի առարկաների ու երևույթների գրանցումը արթնյակային սենսորների կողմից, որոնք հնարավոր չէ իրականացնել այլ սպեկտրալ տիրույթներում:

ԷԼԵԿՏՐՈՄԱԳՆԵՒՍԱԿԱՆ ՍՊԵԿՏՐԻ ԻՆՖՐԱԿԱՐՄԻՐ ՏԻՐՈՒՅԹ, *Инфракрасная часть электромагнитного спектра; Infrared range of electromagnetic spectrum*

Ինֆրակարմիր ճառագայթման տիրույթը բաժանվում է հետևյալ ենթազոնաների՝ մոտիկ – 0,8-1,3 մկմ, միջին- 1,3-3 մկմ և հեռու- 3-1000 մկմ: Այստեղ տարբերությունը նրանում է, որ մոտիկ և միջին ինֆրակարմիր տիրույթների դեպքում անդրադարձվող էներգիայի աղբյուրն արեգակն է, իսկ հեռու ինֆրակարմիրի դեպքում՝ երկրի մակերևույթն ու դրանից անջատվող ջերմությունը:

ԷԿՉՈՏ ԲՈՒՅՍԵՐ, *Экзотические растения; exotic plants*

Կանաչապատման և անտառապատման մեջ օգտագործվող բուսատեսակներ, առանձնապես ծառեր և թփեր, որոնք տվյալ շրջանում բնականորեն չեն աճում: Բարեխառն գոտում հիմնականում էկզոտները հանդիսանում են արևադարձային և մերձարևադարձային գոտիներից, ինչպես նաև հյուսիսային գոտու շրջաններից ներմուծված և կլիմայավարժեցված բույսերը: Է.Բ. Նոր միջավայրում հաճախ ցուցաբերում են ավելի բարձր դիմացկունություն, ինտենսիվ աճ և երկարակեցություն, ջան տեղական բույսերը, ինչը հանդիսանում է կանաչ շինարարությունում դրանց ներդրման հիմնական նախապայմանը:

ԷԿՈԲԻՈՍՈՐՖ, *Экобиоморфа; ecobiomorphs*

Բույսերի կառուցվածքային հարմարողականության որոշակի տիպ և նրա հետ կապված ֆիզիոլոգիական հարմարողականության որոշակի խումբ, որոնք ապրում են միջավայրի նման պայմաններում: Օգտագործվում է «կենսական ձև» արտահայտության փոխարեն: Բույսը այս կամ այն էկոբիոմորֆին դասելու համար, ի տարբերություն կենսաձևի, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն մորֆոլոգիական, այլ նաև էկոլոգոֆիզիոլոգիական հատկանիշները:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՄՊԼԻՏՏՈՒՄ (ԱՅՆՈՒՅՅՅ), *Экологическая амплитуда; ecological amplitude*

Միջավայրի պայմաններին բուսատեսակի կամ համակեցության հարմարողականության սահմանները:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՂԱԳՐԱՄԱՍԵՐԻ ԳԱՇՎԵԿԵԻՌ, *Баланс экологических компонентов; balance of ecological components*

Բնական հավասարակշռություն ապահովող էկոլոգիական քաղաղրամասերի աճի համար անհրաժեշտ են որոշակի խոնավություն և հողային պայմաններ: Խոնավությունը կախված է անտառային բուսականության առկայությունից, իսկ հողերը ծալվորվում են վերջինիս կենսագործունեության հետևանքով:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ, *Экологические факторы; ecological factors*

Միջավայրի գործոնների խումբ (կլիմայական, հողային, տոպոգրաֆիկ, բիոտիկ), որոնք պայմանավորում են բույսի կամ բուսական համակեցության զոյությունը, աճը, և զարգացումը տվյալ վայրում: Է.Գ.-ները փոփոխական են: Նրանք բույսի վրա ազդում են անմիջապես կամ այլ գործոնների միջոցով՝ պայմանավորելով կամ ձևափոխելով ընդհանր: Բուսականության կողմից պայմանավորող գործոնները կրում են էնդոգեն բնույթ, աշխարհագրական ընդհանուր պայմաններից բխող գործոնները, հողի և օդի խոնավությունն այլ են, քան նույն տեղում քաջ դաշտում, այսինքն՝ անտառում հիշյալ գործոնները կրում են էնդոգեն բնույթ:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԱՄԱԿԱՐԳ (ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳ), *Экологическая система; ecological system (ecosystem)*

Կենսավայրի բոլոր գործոնների (բիոտիկ և աբիոտիկ) ազդեցության տակ ձևավորված պայմաններում համատեղ ապրող օրգանիզմների համակեցություն փոխադարձ կապերով և փոխհարաբերություններով ինչպես օրգանիզմների, այնպես էլ միջավայրի գործոնների հետ:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԱՎԱՍԱՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ, *Экологическое равновесие; ecological balance*

Բնական համակեցություն, որտեղ բոլոր տարրերը գտնվում են հավասարակշռված վիճակում, ձևավորում կայուն էկոհամակարգ, ուր տարբեր ֆունկցիոնալ մակարդակի վրա գտնվող օրգանիզմների հարաբերական մասնակցությունը մշտապես կտնվում է համեմատաբար կայուն վիճակում: Գավախարակշռված համակեցության կազմը, հարմարվելով արտաքին պայմանների փոփոխմանը (սուկցեսիային), անընդհատ վերափոխվում է, այսինքն՝ է.Գ. պահանջվում է ոչ միայն բիոտոպ, այլ նաև բիոտիկ և աբիոտիկ տարրերի մեջ: Էկոլոգիական տեսանկյունից համեմատաբար կայուն են հասուն կենսաերկրացենոզները, որոնք ձևավորվել են բուսական որոշա-

կի գոտիներում: Երկրագնդի վրա մարդկության թվի ավելացումը և արդյունաբերության զարգացումը հանգեցրել են անտառային էկոհամակարգերի հավասարակշռության զգալի խաթարման:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՐՄՆԱԽՈՐՇ, *Экологическая ниша; ecological niche*

Համակեցության մեջ մեկ տեսակի ֆունկցիոնալ տեղը մյուս տեսակի նկատմամբ՝ որոշակի տարածության և ժամանակի պայմաններում: Է.Ո. ոչ միայն ցույց է տալիս տեսակի կամ նրա պոպուլյացիայի տեղը աննդառության շրջայում, էկոհամակարգի տրոֆիկական մակարդակում, այլ նաև բնութագրում է այդ տեսակի փոխաբերությունը ռեսուրսների (տարածքի, սննդանյութերի, լույսի և այլն) յուրացման պրոցեսում, հարմարվողականության ռեակցիան էկոլոգիական տարբեր գործոնների նկատմամբ:

ԷԿՈՏԻՊ, *Экотип; ecotype*

Որևէ տեսակից կազմավորված բույսերի խումբ, որը բնորոշում է նրանց ժառանգական հարմարվածությունը էկոլոգիական որոշակի միջավայրի: Բույսերը էկոլոգիական այլ պայմաններ փոխադրվելիս էկոտիպի ժառանգապես ամրացած հատկանիշները պահպանում են: Ըստ ձևավորվող գործոնների՝ է.-երը լինում են կլիմատիպեր, որոնք առաջանում են կլիմայի ազդեցության ներքո. եղաֆոտոպեր՝ հողային պայմանների հետևանքով. ցենոտիպեր՝ բուսական տարբեր համակեցություններում:

ԷԿՈՏՈՊ, ԲԻՈՏՈՊ, *Экотоп, биотоп; ecotope, biotope*

Կենսաերկրագեոնոզի աբիոտիկ տարրերի (եղաֆոտոպ, աերոտոպ, կլիմատոպ) հանրագումարը: Կենսաերկրագեոնոզի սահմաններում է. ներկայացնում է համակեցության աճման տեղի պայմանները:

ԷԼԻ, *Элита; elite*

Խառը ցանքսից կամ մշակվող բույսերից նոր սորտի կամ տեսակի ստացման նպատակով ընտրած անհատ: Է. բույսն իր բոլոր հատկանիշներով պետք է գերազանցի նույն տեսակի մյուս անհատներին:

ԷՆԴԵՄԻԿ ԲՈՒՅՍԵՐ, ԷՆԴԵՄԻԿՆԵՐ, *Эндемичные растения, эндемики; endemic plants, endemics*

Սահմանափակ արեալով կարգաբանական տաքսոններ: Հաճախ դրանք աշխարհագրական չնչին տարածք են զբաղեցնում: Էնդեմիզմի զարգացմանը նպաստում են աշխարհագրական մեկուսացումը, կլիմայական և եղաֆիկական պայմանները, քիոտիկ գործոնները (մակաբուծություն, մրցակցություն): Հայաստանի ֆլորայի շուրջ 3500 տեսակներից 180-ը էնդեմներ են (6%):

ԷԿՎ-ն (ENVI) տիեզերական պատկերների և օդալուսանկարների մշակման և վերլուծություններ կատարելու տարածված համակարգչային ծրագիր է: Այս ծրագիրը օգտագործվում է բազմաթիվ հետազոտողների կողմից՝ անտառտարածքների ուսումնասիրման համար:

ԷՊԻԴԵՐՄԱ, Эпидерма; epiderma

Վերնամաշկ, բուսական օրգանների մակերեսը ծածկող հյուսվածք, որը կազմված է խիտ դասավորված կենդանի կուտիկուլապատ, մոմի շերտով կամ մազիկներով ծածկված քջիջներից: Բույսի բազմամյա օրգաններում է. փոխարինվում է պերիդերմայով:

ԷՊԻՖԻՏՆԵՐ, ԿԻՍԱՍԱԿԱԲՈՒՅԾ ԲՈՒՅՆԵՐ, Эпифиты; epiphytes

Կիսամակարայծ բույսեր: Է.-ները ապրում են այլ բույսերի, հիմնականում բնի և ճյուղերի վրա: Ի տարբերություն իսկական մակարայծերի՝ սրանք կենսագործունեության համար անհրաժեշտ սննդանյութերը ստանում են արտաքին միջավայրից: Հանդիպում են բույսերի թուր դասերում: Է.-ները կարող են անմիջապես օդից ստանալ ջուր և հանքային աղեր: Դրան նպաստում է արմատների վրա զտնվող սպունգային ծածկույթը, որի ներսում առաջանում են այսպես կոչված արմատային բնիկներ, որոնց մեջ կուտակվում է փոշի, թափված տերևներ: Ունեն նաև ծագարանման տերևներ, որոնց մեջ ջուր է կուտակվում:

ԷՎՈԼՅՈՒՑԻԱ, Эволюция; evolution

Բուսական և կենդանական օրգանիզմների աստիճանական զարգացում, որը հանգեցնում է նրանց բարդացմանը:

ԷՏԱԼՈՆԱՅՈՒՄ, Эталонирование; etaloning

Էտալոնացումը օդալուսանկարների վերծանման հետ կապված անհրաժեշտ աշխատանք է, երբ նկարի վրա առկա պատկերները համեմատվում են բնության մեջ առկա նրանց «էտալոնների» հետ:

ԷՏԵԼՈՒ (ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ) ՄԿՐԱՏ, Секатор; garden scissors, secator

Ընձյուղներ, ճյուղեր կտրատելու, պատվաստաշիվեր կտրելու պարտեզային մկրատ:

ԷՐԴԱՍԻՄԵՋԻՆ, ЭРДАСИМЕДЖИН; ERDASIMAGINE

Էրդասիմեջին-ը (Erdasimagine) արբանյակային պատկերների և օդալուսանկարների մշակման և վերլուծման ամենատարածված ծրագրային փաթեթներից է, որը ճկուն կերպով աշխատում է ԱՅԳ միջավայրի ամենատարբեր ֆորմատների հետ:

ԷՐՈՍ, *ЭРОС (Наблюдательные системы ресурсов Земли); EROS (Earth Resources Observation Systems)*

Երկրի բնական պաշարների դիտարկումների համակարգ (EROS), որը գործում է ԱՄՆ Գարավային Դակոտայի Սիուքս Ֆոլս բնակավայրում և իրականացնում տիեզերական ուսումնասիրություններ:

ԷՔՍՊՈԶԻՑԻՈՆ ԾԱՂԿԱՆՈՑ, *Экспозиционный цветник; exposition flower bed*

Ծաղկային միակուլտուրային հողամաս՝ զեռոզեանոց, հիրիկանոց, եղրևանոց, վարդանոց, ինչպես նաև սեզոնային էֆեկտների հատուկ պարտեզներ, մշտածաղկուն վարդանոցներ և այլն:

ԷՖԵՄԵՐՆԵՐ, *Эфемеры; ephemers*

Սիամյա, հաճախ մեզոֆիլ խոտաբույսեր, որոնք ունեն զարգացման կարճ ժամանակ՝ ժլելուց մինչև սերմերի հասունացումը տևում է 4-8 շաբաթ, ավարտված է հիմնականում զարնանային, աշնանային խոնավ ամիսներին: Է. հանդիսանում են տերոֆիտ բույսեր, որոնք տարվա անբարենպաստ ժամանակաշրջանն անց են կացնում սերմ վիճակում, հողում կամ նրա մակերեսին: Անապատային և չոր տափաստանային համակեցությունների տարրեր են: Անտառային համակեցություններում հանդիպում են նոսր կաղնուտներում և գիհու արիդային ժառուտներում:

ԷՖԵՄԵՐՈԻԴՆԵՐ (ԷՖԵՄԵՐԱՆՄԱՆՆԵՐ), *Эфемероиды; ephemeroids*

Բազմամյա խոտաբույսեր, որոնց վերերկրյա զանգվածի (վեգետատիվ և վերարտադրող շիվերի) զարգացման ողջ ցիկլն անցնում է խոնավ ամիսներին (զարնանը կամ աշնանը) կարճ ժամանակամիջոցում: Տարվա անբարենպաստ շրջանը բույսերն անց են կացնում հողում՝ սոխուկի, պալարի, կոճղարմատի ձևով: Անտառային ֆիտոցենոզում բնորոշ են արիդային և նոսր անտառներից:



ԸՆԿԱԼԱԿԵՏ, Точка Восприятия; point of perception

Երբուրու կամ գրոսայգու կոմպոզիցիայի որոշակի տեղ, որտեղից լավ է ընկալվում բնապատկերը:

ԸՆՉՅՈՒՂ, Стыд, Лобыз; shoot

Բույսի հիմնական օրգաններից մեկը: Բաղկացած է առանցքից, նրա վրա դասավորված տերևներով և բողբոջներով (երբեմն բազմացման օրգաններով), որոնք ունեն միասնական փոխադրող համակարգ և ձևավորվում են մերիստեմային միևնույն զանգվածից (աճման կոնից): Միամյա բույսերի Ը. ապրում է մեկ տարի, բազմամյա բույսերինը՝ երկար և ապահովում է տվյալ անհատի գոյությունը: Աճման մեկ ընթացքում առաջացած Ը. կոչվում է պարզ, իսկ տարվա ընթացքում առաջացածը՝ տարեկան Ը.: Բարեխառն գուտում պարզ Ը. հիմնականում համընկնում է տարեկանի հետ, սակայն որոշ տեսակների (կաղնի, թեղի, ցիտրուսներ) տարեկան ընծյուղները բաղկացած են լինում պարզերից: Ը.-ները կամ նրանց առանձին մասերը հաճախ ենթարկվում են խորը դիֆերենցված մետամորֆոզի, ստորգետնյա Ը.: սոխուկի, պալարի և այլն, կամ վեր են ածվում փշի, բեխիկների: Նրա բազմազանությամբ որոշվում են բուսական կենսական ձևերը: Այդ բազմազանությունն արդյունք է հարմարողական երկարատև էվոլյուցիայի:

ԸՆՏՐՈՎԻ ՉԱՏՈՒՄՆԵՐ, Выборочные рубки; selective cuttings

Անտառօգտագործման գլխավոր հատման եղանակ, երբ անտառամասը հատում են պարբերաբար՝ ընտրելով որոշակի հասակի և չափի ծառեր: Ը.Չ. ժամանակ պահպանվում են անտառի հիմնական հատկությունները: Կիրառում են տարահասակային ծառատներում: Ը.Չ. ունի 3 տարբերակ՝ ա/հարկադրական, երբ հատում են հատուկ տեսակաճու փայտանյութ ստանալու նպատակով ընտրվում ծառեր (1 հա-ում մի քանի ծառ), բ/պարտադրված, երբ հատման համար ընտրվում են որակապես բարձր տեսակի և հասակի հատուկ ծառեր (հանգեցնում է ծառուտի քայքայման, գենոֆոնդի վատացման). բացասական երևույթներից խուսափելու համար զուգահեռ պետք է ընտրել նաև հիվանդ, գերհասուն ծառերը, գ/կամավոր, որը կիրառվում է ծառուտի վիճակի բարելավման և բնափայտի ժամանակին օգտագործման նպատակով: Առաջին հերթին հատվում են գերհասուն, հասուն, հիվանդ, ապա թույլ ևճ ցուցաբերող ծառերը՝ վերցնելով տվյալ անտառամասի պաշարի մինչև 30%-ը:

ԸՆՏՐՈՎԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԴԱՏՈՒՄՆԵՐ, *Выборочные постепенные рубки; selective gradual cutting*

Անտառօգտագործման գլխավոր հատումների տարատեսակ: Մշակել է Մ.Ա. Օռլովը (1921թ.) եղևուռ և սոճու գերհասուն ծառուտներում կիրառելու նպատակով: Զուգակցում է ընտրովի և աստիճանական հատումների հատկանիշները: Հատման ինտենսիվությունը պայմանավորված է ծառուտի լրիվությամբ՝ 0.7-ի դեպքում հատվում է պաշարի 25%-ը, 0.5-0.6-ի դեպքում՝ 33, իսկ 0.4 և ավելի ցածր լրիվության դեպքում, եթե այն մատղաշով ապահովված է՝ 50%-ը, եթե մատղաշը բացակայում է՝ 33%-ը: Ամբողջ ծառուտը հատվում է 3 փուլով, 1-ին փուլում կատարվում են ընտրովի հատումներ՝ հեռացնելով հիվանդ և թույլ աճ ունեցող ծառերը, խուսափելով նոսրուտների և բացատների առաջացումից: 10 տարի անց հատումները կրկնվում են:

ԸՆՏՐՈՎԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Выборочное хозяйство; selective farming*

Անտառտնտեսություն, որտեղ կիրառվում են ընտրովի հատումներ: Տնտեսվարման ձև, որը կիրառվում է տնտեսական զարգացման պայմաններում, պաշտպանական անտառներում, անտառապարկերում: Հատվող ծառերն ընտրվում են՝ ելնելով նրանց վիճակից:



ԹԱՂԱՐ, Кадка; coop

Հողային սննդարար խառնուրդից պատրաստված տարրեր մեծության զվաններ, բուրգեր, խորանարդներ: Կիրառվում են բանջարանոցային բույսերի և ծաղիկների սածիլներ ածեցնելու համար:

ԹԱՍԱՍՈՒՄ, Завѣдание; wilting

Ջրի անբավարար հագեցվածության հետևանքով տերևների կամ կանաչ ճյուղերի տուրգորի անկում: Տեղի է ունենում տրանսպիրացիայի հետևանքով ծախսված և հողից կլանված ջրի անհամապատասխանության ժամանակ:

ԹԱՎՈՒՏ, Чома; thicket

Բարձր խտության և լրիվության անտառամաս: Առկորաբար բնորոշ է երիտասարդ և միջին հասակի ծառուտներին:

ԹԱՐՄԱ, Переола; pergola

Ծածկի, կամարի կամ թունելի ձև ունեցող փայտյա կամ մետաղյա հենարաններ, որոնք պատված են փաթաթվող բույսերով: Որպես փաթաթվող բույս Պայաստանում հիմնականում օգտագործվում է խաղողը: Ներկայումս գեղազարդային պարտիզազործության մեջ թարմայի համար օգտագործվում են նաև բազմատեսակ թաղեղներ (լիաններ), հնգատերև կուսախաղողը, չինական վիստերիան, փաթաթվող ցախակեասղնները:

ԹԱՓՎԱԾՔ, Отноб; attrition

Մահացած, բայց չտապալված բույսերը և չորացած, բայց կենդանի բույսից չբաժանված մասերը:

ԹԱՓՈՒԿ, Опод, Валожник; debris, breakage, keeks

Բնական որևէ պատճառով ընկած ծառ կամ ծառի ճյուղեր: Հիմնականում վերաբերում է չորացած ծառերին: Տեղի է ունենում բնական մահացման, քամետապալման, ձնաջարդի, վնասատուներով և հիվանդություններով խիստ վարակվածության, հրդեհների հետևանքով: Առանձնապես բնորոշ է փակվատերևավոր ծառատեսակներից (կաղամախի, լորենի, կեչի և այլն) կազմավորված երիտասարդ խիտ ծառուտներին՝ քների դասակարգման և ինտենսիվ ինքանուսրացման ընթացքում:

ԹԵՂՈՒՏ, Вязоѣник; elm forest

Թեղու ծառերից կազմավորված միատարր ծառուտ:

ԹԵՐՄՈՒՄ ԱՆՏԱՈՒՆԵՐ, *Ильмовые леса; elm forests*

Ծառուտների բեղու գերակշռությամբ:

ԹԵՄԱՏԻԿ ԶԱՐՏԵԶՆԵՐ, *Тематические карты; Thematic maps*

Որոշակի (հողածածկ, բուսականություն, անտառածածկ և այլն) թեմա պատկերող քարտեզ:

ԹԵՐՄՈՖԻԼ ԲՈՒՅԱՆԵՐ, *Термофильные растения; thermophilic plants*

Բույսեր, որոնք հարմարվել են աճելու տաք պայմաններում, որտեղ մշտապես իշխում են բարձր ջերմաստիճանները, իսկ ցածր ջերմաստիճաններ ընդհանրապես չեն լինում: Հիմնականում արևադարձային երկրների բույսեր են:

ԹԵՐՄՈՖԻՏՆԵՐ, *Термофиты; thermophits*

Բուսական կենսածնի պատկանող որոշակի բույսեր, որոնք տարվա անբարենպաստ պայմանները (ձմեռ, երաշտ) անց են կացնում սերմի ձևով: Դրանց թվին են պատկանում միջերկրածովյան ծազման միամյա բույսերը, որոնք բնորոշ են անապատներին, կիսաանապատներին, Հյուսիսային կիսագնդի հարավային տափաստաններին: Մեծ թիվ են կազմում էֆեմերները:

ԹԶՈՒԿ ԲՈՒՅԱՆԵՐ, *Карликовые растения; elfin plants*

Ծառաթփայլի բույսերի պարտիզային ձևի ներկայացուցիչներ, որոնց բարձրությունը չի անցնում 0.5-0.6 մետրից: Օգտագործվում են պարտեզային ձևավորումների մեջ, ինչպես նաև քարապարտեզներում և ալպինարիումներում: Ճապոնիայում արհեստական եղանակով ստանում են խոշոր ծառերի (կաղնի, եղևնի, սոճի, սոֆորա և այլն) թզուկ ձևեր, որոնք օգտագործվում են սեղանայգիների ձևավորման համար:

ԹԶՈՒԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, *Карликовость; brachysm, dwarfism, nanism*

Մեծ մասամբ կրում է ժառանգական բնույթ: Բնորոշ է հյուսիսային շրջաններին և բարձրալեռնային բույսերին:

ԹԻՐԱՆԱՅԻՆ (ԸՆՏՐՈՒԿ) ՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ, *Прицельная (выборочная) съемка; Targeted (selective) photography*

Թիրախային (ընտրովի) նկարահանումը նախատեսված է երկրի մակերևույթի որոշակի, տրված տարածքների համար, որոնք նկարահանման գոտուց դուրս են: Այս նպատակի համար նկարահանման ուղղությունը նաղիրից շեղվում է հաշվարկային անկյան մեծությամբ: Ծրագրային-թիրախային նկարահանումը ամենաբարձր թուլադրելիության տիեզերական նկարների ստացման հիմնական եղանակն է:

ԹՎԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԳՈՒՄՆԻՄ, Числовая съёмка; digital photography

Թվային լուսանկարահանման ժամանակ լուսախցիկներում, որպես դետեկտորներ, սովորական լուսաժապավենի փոխարեն օգտագործվում են էլեկտրոնային դետեկտորներ: Թվային լուսանկարի քաղային միավորը պիքսելն է, որը կախված է երկրի մակերևույթի վրա գտնվող տվյալ առարկայի արեզակնային ճառագայթարձակման անդրադարձման ունակությունից:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՍԵՂԱՆ, Стол для дигитализации; digitizing table

ԱՏՀ-ի բաղկացուցիչ մաս, որն օգտագործվում է կիսա-ավտոմատ թվայնացման միջոցով գեոկոդավորում իրականացնելու համար: Թվայնացման սեղանի վրա, մկնիկի օգնությամբ, օբյեկտները ընտրվում են, վերափոխվում թվերի և ապա ուղարկվում համակարգիչ:

ԹՈՒՆԱՅՈՒԹԵՐ, ԹՈՒՆԱԹԻՍԻՎԱՏԵՐ, Ядохимикаты; toxic chemicals

Քիմիական հատուկ պատրաստուկներ, որոնք օգտագործվում են վնասատուների (ինսեկտիցիդներ, պեստիցիդներ, զոոցիդներ, ակարոցիդներ), սնկային (բակտերիոցիդներ) և վիրուսային հիվանդությունների, մոլախոտերի (հերբիցիդներ) դեմ պայքարելու համար: Ներկայումս խիստ սահմանափակվում է նման նյութերի կիրառումը և, քանի որ, դրանք անվտանգ չեն շրջակա միջավայրի համար, աստիճանաբար փոխարինվում են պայքարի կենսաբանական եղանակով:

ԹՈՒՓ, Кустарник; bush

Բազմամյա բնափայտային բույս: Բույսի հիմնական կենսածներից մեկը, որը չունի արտահայտված բուն, ճյուղավորվում է անմիջապես հողի մակերեսից: Թ-ի կյանքի տևողությունը, նայած տեսակի, 10-50 (100) տարի է, քարձրությունը՝ 0.5-1.5 մ (5): Բազմաճյուղ է սերմերով, արմատամացառներով, կոճղաշիվերով: Ստնում է ենթաճառքի կազմի մեջ: Հայաստանում տարածված թփատեսակներն են՝ մալբենի, հաղարջենի, կտտկենի, գերիմաստի և այլն:

ԹՓԱՆՈՒՄԸ, Группа кустарников; bush group

Ձրուսայգու բնապատկերի օժանդակակ տարր: Կարող է ունենալ ինքնուրույն նշանակություն, լանջերի վրա հողը պահպանում է երզիայից:

ԹՓՎԿԱԼՈՒՄ, Окушение; bunched wood

Ճյուղավորման ձևերից մեկը, որը թուփ է առաջացնում: Բնորոշ է դաշտավայրերում կազմակերպում և մի շարք այլ բույսերին (հատկապես թփերին, թփիկներին, կիսաթփերին): Միամյա հացաբույսերի մոտ այն տեղի է ունենում վաղ հասակում և դադարում է խողովակակալման փուլում:

ԹՓԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ, *Формирование кустарникоз; bushes forming (formation)*

Տե՛ս Բույսերի տ և ձևավորում:

ԹՓԻԿ, *Кустарничек; subshrub*

Յածրած՝ մինչև 50-60 սմ բարձրությամբ բազմամյա բույս՝ փայտացող, խիտ ճյուղավորված ընծյուղներով, որը սովորաբար չունի պարզ արտահայտված գլխավոր բուն (ցողուն): Հաճախ ունենում է երկար կոճղարմատներ (հապալասենի): Ընծյուղները երբեմն սողացող են: Բարձր լեռնային պայմաններում հաճախ բարձիկանման տեսք են ստանում:

ԹՓՈՒՏՆԵՐ, ՄԱՑԱՌՆԵՐ, *Заросли; overgrowth, tangle*

Թփատեսակներից և արմատամացառներից կազմավորված անանցանելի բուսական խմբավորում: Հաճախ լինում է երկրորդային ծագման: Առաջանում է անկանոն հատումների հետևանքով:

ԹԵՎԱՊՏՈՒՂ, *Крылатка; key fruit*

Չոր, միասերմ, ցենոկարպ պտուղ՝ բարակ կաշեկերպ կամ թաղանթանման սիմետրիկ (թեղի, կեջի, այլանթ) կամ ասիմետրիկ (հացենի) ելուստներ, որոնք նպաստում են քանու միջոցով տարածվելուն:

Ժ

ԺԱՅՈՎԱԲՈՒՅՍԵՐ, *Скальные растения; rocky plants*

Ժայռերի ճեղքերում, շենքերի պատերին աճող բույսեր: Լայնորեն օգտագործվում են քարապարտեզներ, բլրակներ ստեղծելիս (ճեճուկ արծաթագույն, բոցնի թփային, զանգակածաղիկ զարմանահիաշ):

ԺԱՆՐ, *Жанр; genre*

Գեղարվեստական ստեղծագործության որոշակի տեսակ: Արվեստում արտացոլվող կենսական երևույթների, ինչպես նաև հեղինակային մտեցման բազմազանության շնորհիվ, պատմական զարգացման ընթացքում ամեն մի արվեստում զոյացել են ստեղծագործության տարբեր ժանրեր: Պարտեզպուրակային արվեստում ժանրային տարատեսակությունների կարելի է վերագրել ավտոճանապարհների, քնակելի համալիրների, շրջանային պարտեզների և զբոսայգիների կանաչապատումը:

ԺՄՊԱՎԵՆԱԶԵՎ ՅԱՆՔՍ, *Ленточный посеб; band sowing*

Ցանքսի եղանակ, երբ միմյանց մոտ 2 և ավելի գծաշարք ցանքը կազմում է ժապավեն: Կիրառվում է մեքենայացված խոշոր տնկարաններում: Ընդունված է 4 գծային ժապավեն, լայնությունը՝ 75 սմ, գիծը գծից՝ 25 սմ, միջժապավենային տարածությունը՝ 60 սմ: Երկգծային ժապավենի դեպքում՝ գիծը գծից 15-20 սմ:

ԺՄՊԱՎԵՆԱԶԵՎ ՓՈՐՉԱՅՐԱՊԱՐԱԿ, *Ленточная пробная площадь; tape pilot area*

Չեստագոտվող անտառամասի կենտրոնով 10 մ լայնությամբ ընկած շերտ, որտեղ առկա են տվյալ անտառամասին բնորոշ բոլոր հատկանիշները: Օգտագործում են խոշոր անտառամասերի առանձին տարրերի համակողմանի ուսումնասիրման ժամանակ: Ժ.Փ.-ի բնորոշ հատվածներում առանձնացվում են 0.25-0.5 հա տարածությամբ փորձահրապարակներ, որոնցում մանրազմին չափազորման տվյալների մաթեմատիկական ստատիկ հաշվարկների միջոցով ստանում են անտառամասը բնորոշող միջին ցուցանիշներ:

ԺՄՈՆԳՎԿՎՆՈՒԹՅՈՒՆ, *Наследственность; heredity*

Օրգանիզմի անհատական զարգացման հատկանիշներ և հատկություններ, որոնք փոխանցվում են սերնդից սերունդ: Ժառանգական հատկանիշների փոխանցումը դուստր օրգանիզմ ապահովվում է գեների միջոցով: Ելնելով գեների տեղայնացումից՝ ժ. լինում է միջուկային (երբ գենը տեղայնացված է քրոմոսոմներում) և ցիտոպլազմային (երբ գենը գտնվում է ցիտոպլազմայում):

ԾՈՐՈՒՎՈՒՄ ԿԱՆ ԴՈՒՐԿ, *Народный парк; Public Park*

Լանդշաֆտի ակնառու յուրահատկություններ՝ լեռներ, ջրամբարներ, գետեր ունեցող տարածք, որն ունի համապատասխան արժեք և պահպանվում է օրենքով: Նախատեսված է կազմակերպված հանգստի ու տուրիզմի, գիտահետազոտական աշխատանքների համար:

Ի

ԻԿՈՆՈՍ, ИКОНОС; IKONOS

Իկոնոսը (IKONOS) երկրի քնական պաշարների ուսումնասիրման առաջին կոմերցիոն, բարձր թույլատրելիության արբանյակն է, որը հաջող կերպով տիեզերք է դուրս բերվել 1999 թվականի սեպտեմբերին: Ձբաղեցնելով 682 կմ բարձրությամբ արեգակնային-սինթրոն ուղեծիրը ապահովում է 11X11 կմ չափերով նկարի ստացումը, որտեղ թագմասպելտրալ տիրույթը ապահովում է 4 մ թույլատրելիություն գծտնի վրա, իսկ սև ու սպիտակ տիրույթում՝ 1մ:

ԻԿԵԲԱՆԱ, ԾԱՂԿԱՅԱՐՂԱՐՈՒՄ, Икэбана; ikebana

Ծաղիկներից, ընծյուղներից, չորացած պտուղներից հատուկ տարաներում կոմպոզիցիաներ ստեղծելու, ձևավորելու և դրանք շենքի ներսում տեղադրելու արվեստ: Սկզբնավորվել է XV դարում, Ճապոնիայում, որպես «թեյի ծխակատարության» մաս: Կոմպոզիցիայում վճարոշ են 3 հիմնական ծառայությունները կամ ծաղիկները, որոնք խորհրդանշում են բարձրը՝ երկինքը, միջինը՝ մարդը, ցածրը՝ երկիրը:

ԻՆՍԵԿՏԻԳԻՂՆԵՐ, Инсектициды; insecticide

Տե՛ս Միջատասպաններ:

ԻՆՏՐԱԶՈՆԱԼ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Интразональная растительность; intrazonal vegetation

Բնական բուսականություն, որն ինքնուրույն զոնա չի առաջացնում, այլ միայն հանդիպում է մեկ կամ մի քանի զոնաների սահմաններում (չի ենթարկվում հորիզոնական կամ ուղղածիզ գոտիականության օրինաչափություններին): Օր.՝ ողողադաշտերի մարգագետնային բուսականությունը, սֆագնումային ճահճուտները և այլն:

ԻՆՔՆՆՆՈՒՄՈՒՄՍՈՒՄ, Самоурезывание; self-pruning

Մինչև հասունացման տարիքն անտառում ներտեսակային և միջտեսակային պայքարի շնորհիվ միավոր տարածքում ծառերի քանակի ինքնակարգավորում: Ի. առավել ինտենսիվ է ընթանում մատղաշ և ծողանային փուլերում: Հասակի հետ տեմպը նվազում է:

ԻՆՁԱՑԱՆ, Самосеб; self-sowing

Երիտասարդ քույսեր, որոնք առաջացել են սերմերի քնական տարածման հետևանքով: Անտառում Ի. բուսակների առկայությունը և քանակը պայմանավորված

են միավոր տարածքում սերմերի բավարար քանակով և նրանց ծլման համար բարենպաստ միջավայրով: Չասուճացող և հասուն լիարժեք ծառուտները միշտ ապահովված են սերմերի անհրաժեշտ քանակությամբ: Այստեղ Ի. բույսերի բացակայությունը հիմնականում հետևանք է լույսի և խոնավության անբավարարության: Ծառուտի նոսրացումը հանգեցնում է սերմնարույսերի զանգվածային առաջացման, սակայն ինտենսիվ նոսրացումը նպաստում է խոտաբույսերի արագ զարգացմանը, հողի ճճակալմանը, որոնք խոչընդոտում են ծառերի սերմնարույսերի առաջացմանը և աճին:

ԻՆՖՐԱՎԿՐԱՄԻՐ ԼՈՒՄԻՆԿԱՐԱՅՆՈՒՄ, *Инфракрасная съёмка; Infrared photography*

Այս ու սպիտակ ինֆրակարմիր լուսանկարահանումը իրականացվում է 0,3-0,9 մկմ տիրույթում, ինչը շատ օգտակար է բուսածածկում առկա փոփոխությունները նկատելու համար, որովհետև այդ տիրույթում անդրադարձումը մեծ է:

ԻՎԱՆՈՎԻ ԾԻՎԵՐ (ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԾԻՎԵՐ), *Ивановы (вторичные) побеги; Lammas shoots*

Առաջանում են որոշ ծառատեսակների վրա (կաղնի, հաճարենի, հացենի և այլն), երբ ամռանը երկրորդական բողբոջների արթնանալու հետևանքով մեկ տարվա ընթացքում ձևավորվում է 2 ամ: Երկրորդական շիվերը երբեմն լինում են թույլ զարգացած, չեն հասցնում փայտանալ և ձմռանը ցրտահարվում են:

ԻՎԼԵՎԻ ՈՍՏ, *Ивлев сучок (заросший сучок); ivliv snag (blind knot)*

Ոստ, որը լրիվ շրջապատված է առողջ բնափայտով, սակայն ինքը սկսում է փտել:

ԻՐԱՏՎՈՂ ԲՆԱՓՈՒՅՑԻ ՊԱՇԱՐ, *Запас древесины ликвидной; stocked merchantable wood*

Ընդդրվում է շինափայտի (առանց կեղևի) վառելափայտի որջ ծավալը: Ի.Բ.Պ. արտահայտում է ծառուտի ապրանքային փայտանյութի իրական քանակը: Պլանային հաշվարկների ժամանակ այն ընդունում են 90%-ի չափով: Սնացած 10%-ը կազմում են մանր ճյուղերը՝ շինափայտի կեղևի հետ միասին:

L

ԼԱՅՆԱՏԵՐԵՎԱՎՈՐ ԱՆՏԱՆՆԵՐ, *Широколиственные леса; broad-leaved forests*

Անտառներ, որոնք կազմավորված են լայն տերևաթիթեղ ունեցող ծառատեսակներից՝ կաղնի, հաճարենի, թելի, թխկի: Տարածված են Եվրոպայում, Կովկասում, Ասիայում, Գյուսիսային Ամերիկայում: Բուսական արմատական տիպերից է: Աճում են խոնավ, տեղումների հավասարաչափ բաշխվածությամբ, ամառային բարձր ջերմաստիճանի պայմաններում:

ԼԱՆԴՍԱՏ, *ЛАНДСАТ; LANDSAT*

«Լանդսատը» (Landsat) Ամերիկայի Միացյալ Նահանգների ամենահայտնի քննասետուրսային արբանյակների ընտանիքի անվանում է: «Լանդսատ» արբանյակները, որոնք սկզբում կոչվում էին «Երկրի օբսերվացիայի տեխնոլոգիական արբանյակներ» (ERTS) տիեզերք բարձրացան 1972 թվականին՝ հիմք դնելով Երկրի բնական պաշարների տիեզերական ուսումնասիրություններին: «Լանդսատ» արբանյակներից վեջինը՝ Լանդսատ-7-ը տիեզերք բարձրացավ 1999 թվականի ապրիլին: Այս ընտանիքի արբանյակները, ՄՊՈՏ արբանյակների հետ միասին, ապահովում են Երկրի բնական պաշարների ուսումնասիրմամբ զբաղվող ամենամեծաքանակ գիտնականներին՝ աշխարհի զոթեթ բոլոր երկրներում:

ԼԱՆԴՇԱՖՏ, *Ландшафт; landscape*

Աշխարհագրական թաղանթի բնական զարգացման ընթացքում առաջացած համասեռ տեղամաս, որը այլ տեղամասերից որակապես տարբերվում է ներքին կառուցվածքով, տարածքային փոքր միավորներով, երևույթների սեզոնային ուժեղ յուրօրինակությամբ և այլն: Բնութագրվում է բնորոշ հատկանիշների գումարով, որում տարրերը՝ կլիման, ռելիեֆը, հողածածկը, քուսական և կենդանական աշխարհը, մարդը և նրա մշակույթը կազմում են մի ամբողջություն, փոխադարձաբար ներգործելով միմյանց վրա և օրինակափորեն կրկնվելով տարածության վրա: Լանդշաֆտները լինում են բնական, կուլտուրական, դեզրադասված:

ԼԱՆԴՇԱՖՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *Ландшафтоведение; landscape science*

Ֆիզիկական աշխարհագրության բաժին կամ ինքնուրույն գիտություն, որի ուսումնասիրության օբյեկտներն են բնական բարդ և բնական-անբոլորագեն աշխարհագրական համակարգերը՝ լանդշաֆտները:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԱՐՎԵՍ, *Ландшафтное искусство; landscape art*

Ցե'ս Բնապատկերային արվեստ:

ԼԱՆԴՇԱՖՏՏԱՅԻՆ ԳՆԱԴԱՏՈՒՄ, *Ландшафтная таксацա; landscape inventory*

Կանաչապատման օբյեկտների ստեղծման միջնախազգծային փուլ: Բնակավայրերի անտառագոտիները անտառապուրակների վերածելու նպատակով բնական տնկարկների գեղազիտական արժանիքների պայմանական գնահատում: Հիմնական խնդիրն է բնության մեջ հայտնաբերել և հատակագծում նշել լանդշաֆտային առանձին միավորներ, տալ դրանց ճարտարապետագեղարվեստական ու կենսատեխնիկական լրիվ բնութագիրը: Գնահատականը տրվում է պայմանական 5 կատեգորիաներով՝ բարձր, միջինից բարձր, միջին, միջինից ցածր, ցածր: Գնահատման հիմնական գործոններն են՝ բույսերի գերակշռող տեսակները, դրանց խմբավորումները, տարիքը և շարահարկությունը, ռելիեֆի և հողածածկի բնույթը, ենթատարածի, քաղցրահամքի, ջրամբարների առկայությունը և այլն:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳԻ, *Ландшафтный парк; landscape park*

Տե՛ս Բնապատկերային զբոսայգի:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԶՈՒԱՅԱՎՈՐՈՒՄ, *Ландшафтное зонирование; landscape zoning*

Մեծ մակերես ունեցող տարածքի և նրա առանձին տարրերի գնահատումը լանդշաֆտային վերլուծության մեթոդով:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ, *Ландшафтная композиция; landscape composition*

Կանաչապատման օբյեկտների նախազգծման հիմնական եղանակ: Հաշվի առնելով տեղական յուրահատկությունները, կառույցների և ճարտարապետական փոքր ձևերի հետ զուգորդված՝ ազատորեն ու գեղեցիկ տեղադրվում են բուսականությունը, քարերը, ջրավազանները:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՀՈՒՏՈՒՄՆԵՐ, *Ландшафтные рубки; landscape cutting*

Լանդշաֆտի ձևափոխման նպատակով կատարվող հատումներ: Կիրառվում են ռեկրեացիոն անտառներում՝ մեծացնելու անտառապուրակային կոմպոզիցիոն լանդշաֆտները, ակտիվ և պասիվ հանգստյան գոտիները, զբոսաշրջիկային երթուղիները:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՀՈՂԱՍԱՍ, *Ландшафтный участок; landscape plot*

Տարածքի լանդշաֆտային վերլուծությամբ հայտնաբերված տեղամաս, լանդշաֆտային շրջանի հատված: Բնութագրվում է տեսանելի պատկերի միատարրությամբ, տարիքի և որակավորման դասերով, տնկարկների ստվարությամբ և շարահարկությամբ, ռելիեֆով և այլնով:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԵՐԿՐԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, *Ландшафтная архитектура; landscape architecture*

Արվեստի բարդ տեսակ, որը զբաղվում է մարդուն շրջապատող միջավայրի կազմակերպմամբ: Քաղաքաշինության պարտադիր տարրերից է: Բնակչության կեն-

սագործունեության և հանգստի համար նպաստավոր միջավայր ստեղծելու գործառական, գեղագիտական ու տնտեսական պահանջները հաշվի առնելով՝ լուծում է լանդշաֆտի, քաղաքի և քաղաքամերձ գոտու ձևավորման տեսական ու գործնական խնդիրները:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ, *Ландшафтное проектирование; landscape projection*

Լանդշաֆտային ճարտարապետության մեջ կիրառվող մեթոդ, ըստ որի մշակվում են քաղաքային միջավայրի, ինչպես նաև քաղաքամերձ գոտու բաց տարածությունների վերակառուցման, գեղարվեստական ձևավորման եղանակները:

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՏԱՔԱՍՑԻԱ

Տե՛ս Լանդշաֆտային գնահատում:

ԼԱՆԴՇԱՖՏԻ ԳԵՂԱՏԵՍԻԼՈՒԹՅՈՒՆ, *Живописность ландшафта; landscape scenery*

Այս կամ այն անձի համար լանդշաֆտի գեղագիտական կերպարի սուրբելտիվ գնահատական:

ԼԱՆԴՇԱՖՏԻ ՀԱՐՍԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, *Комфортность ландшафта; landscape comfort*

Սարդու համար սովորական կամ նոր միջավայրում հանգստի սուրբելտիվ զգացում և օրբելտիվ վիճակ, որը լիցքաթափում է նրա նյարդային համակարգը և ապահովում բազմակողմանի հանգիստ:

ԼԱՑՈՂ ԲՈՒՅՍԵՐ, *Плакучие растения; pendent plants*

Տե՛ս Վարսավոր բույսեր:

ԼԵՈՒԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Горные леса; mountainous forests*

Աճում են լեռնալանջերին և ունեն բնապահպանական կարևոր նշանակություն: Ենթարկվում են ուղղածիզ գոտիականության օրինաչափություններին, որոնց բացարձակ արտահայտությունները պայմանավորված են տվյալ անտառազանգվածի աշխարհագրական դիրքով և լեռնազանգվածի բացարձակ բարձրությամբ:

ԼԻԱՐՈՒՆ, *Полнодревесность ствола; stem nonpareity*

Ծառաբնի ձևի դիտարկումը որպես գլան: Ծառուտի սահմաններում տատանվող մեծություն է: Պայմանավորված է տեսակային թվի մեծությամբ և ծառաբնի ձևի գործակցով, ինչպես նաև տեսակով ու աճի գործոններով: Լիարնությունը նվազում է բնի բարձրության, ինչպես նաև տեղի բացարձակ բարձրության ավելացմանը զուգընթաց:

ԲԱԹՅԵՐԻՑ ԾԱՌԻԿ, *Maxrobesii* պեթոկ; *double flower*

Բազմաթիվ պսակաթերթիկներով ամուլ ծաղիկ: Ծաղկի առեջները և վարսանդները ձևափոխվելով վերածվել են պսակաթերթերի: Բնորոշ օրինակ է կուլտուրական վարդը: Լիաթերթիկությունը հատուկ է ծաղկային թույսերին:

ԼԻԱՆ, ԲՆԱՓԱՅՏԱՎՈՐ (ՓԱՅՏԱՑՈՂՈՒՆ) ՓԱԹԱԹՎՈՂՆԵՐ, *Лиана; liana*

Երկարացողուն թույսեր, որոնց ցողունի (բնի) մեխանիկական հյուսվածքները թույլ են զարգացած, որի հետևանքով ինքնուրույն ուղղածիզ վիճակ ընդունել չեն կարող և հենարանի կարիք են զգում, որին ամրանում են փաթաթվելով (զայլուկ), կառչելով բեխիկներով (խաղող), ցողունային արմատներով (թաղեղ) և այլն: Կանաչապատման բնագավառում օգտագործվում են ինչպես ծառային, այնպես էլ խոտային լիանները: Ծառային լիաններից մեր պայմաններում օգտագործում են կուսախաղողը, մշակովի խաղողը, վիստերիան, մամրիչը, բաղեղը, խոտային ձևից՝ ցայգածաղիկը, զայլուկը, պատատուկը, և այլն:

ԼԻԲՐԻՖՈՐՄԱ, *Либриформа; libriform*

Սաղարթավոր տեսակների բնափայտի անատոմիական տարր: Բավական ձգված, սրածայր վերջավորությամբ բնափայտի բջիջներ, որոնք նրան ամրություն և կարծրություն են տալիս: Կազմում են բնափայտի զգալի մասը: Լ-յան բջիջների չափը, քանակը, բջջապատի հաստությունը, ծակոտկենի ձևն ու քանակը տեսակային առանձնահատկություններ են և բնորոշվում են աճման պայմաններով:

ԼԻԴԱՐ, *ЛИДАР; LIDAR*

Լիդարը (Lidar) ակտիվ հեռահար ուսումնասիրման մեկ այլ տեսակ է, որի էներգիայի աղբյուրը լազերն է: Ուսումնասիրությունները լազերի օգնությամբ դեռևս սկզբնական փուլում են, բայց արդեն տալիս են խոստումնալից արդյունքներ:

ԼՈԿԱԼ ՆՎԱՐՆԵՐ, *Локальные снимки; local images*

Լոկալ նկարները ընդգրկում են փոքր տարածքներ և իրականացվում են առարկայական դիտարկումների և խոշորամասշտաբ տեղագրական քարտեզագրման համար՝ ընդգրկելով 10x10 կմ² տարածքներ: Այսպիսի նկարի վրա կարող են պատկերվել խոշոր տնտեսություններ, ոչ մեծ քաղաքներ և այլն:

ԼՈՐԵՆՈՒ ՊՆՏԱՆ, ԼՈՐՈՒՏ, *Липняк; lime-tree forest, lime plantation*

Ծառուտ՝ լորենու գերակշռությամբ:

ԼՎԱԳԱԾ ԳՈՂԵՐ, *Смытые почвы; eroded soils*

Գողեր, որոնցում խախտված է կտրվածքի նորմալ կառուցվածքը, մակերեսային հոսքերի հետևանքով ողողատարված վերին պարարտ շերտը:

ՈՐԻՎԱՉԱՓ, *Planotomometer; inventory goniometer*

Ծառերի քննիչի ընդլայնական կտրվածքների մակերեսների գումարը չափելու սարք: Կիրառվում է ծառուտների տաքսացիայի ժամանակ (Քիտերլիտի սարք, Անուչինի պրիզմա և այլն):

ԼՅԱԿՈՒՅՏ, *Терпуков; cone-shaped dump*

Անօդազործնելի ապարի կոնաձև կուտակում: Սովորաբար կուտակվում է հանքավայրի կամ հանքահորի մոտ: Անտառապատման կամ կանաչապատման օրյեկտ է հողերի վերաօդազործման պրոցեսում:

ԼՈՒՅԱԸ ՈՐՊԵՆ ԱՆՏԱՌԻ ԱՃՄԱՆ ԳՈՐԾՈՆ, *Свет как фактор роста леса; light as forest growth factor*

Լույսը ասիմիլացիայի համար անհրաժեշտ պայման է: Արեգակնային էներգիայի շնորհիվ անտառը սինթեզում և պատրաստում է օրգանական նյութ՝ փայտանյութի ձևով: Անտառում ֆիզիոլոգիական պրոցեսների ընթացքը, մասնավորապես քլորոֆիլի կազմավորման և ածխաթուր ցազի յուրացման համար կարևոր նշանակություն ունի լուսային սպեկտրը: Ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթների մեծ քանակը բացասաբար է անդրադառնում ծառաբույսերի կենսազործունեության վրա: Անտառում կարևոր նշանակություն ունեն երկարալիջ տեսանելի ճառագայթները, որոնք կլանվում են բույսերի կողմից և կոչվում են ՖԱՌ (ֆոտոսինթեզի ակտիվ առդիացիա): Ֆոտոսինթեզի համար առանձնակի նշանակություն ունեն արեգակնային ռադիացիայի կարմիր, դեղին ու նարնջագույն ճառագայթները, իսկ ծառերի ու թփերի աճի, բողբոջների և մյուս օրգանների ձևավորման համար կարևոր են մանուշակագույն, կապույտ և երկնագույն ճառագայթները: Լույսի նկատմամբ ունեցած պահանջով ծառատեսակները բաժանվում են 2 խմբի՝ լուսասեր և սովերատար: Ծառերի արտաքին տեսքից կարելի է դատել նրանց լուսասիրության մասին: Անտառի սաղարթի տակ լույսի թափանցումը, բացի արեգակի դիրքից, տեղի օբլիեֆից, մթնոլորտի թափանցելիությունից, պայմանավորված է ծառերի կենսաբանական առանձնահատկություններով, տերևակալվածության աստիճանով, ծառուտի ձևով և հասակով: Ելնելով ինտենսիվությունից՝ անտառում տարբերում են լույսի հետևյալ ձևերը.

Վերին լույս՝ թափանցում է վերևից անտառի հորիզոնական սաղարթի վրա: Օժտված է մեծ ինտենսիվությամբ, օգտվում են սաղարթի վերին ճյուղերը:

Առաջնային լույս՝ ընկնում է սաղարթի ուղղահայաց մակերեսի վրա: Օժտված է մեծ ինտենսիվությամբ, օգտվում են անտառագրի ծառերը, թփերը և կենդանի ծածկուցը:

Չեղին լույս՝ անդրադառնում է ծառերի քնից և տերևներից: Օժտված է թույլ ինտենսիվությամբ, օգտվում են ստորին շարահարկի ծառերը, ենթանտառը, մատղաշը:

Ներքին լույս-անդրադառնում է հողի մակերեսից: Ունի թույլ ինտենսիվություն, օգտվում են հիմնականում սերմնաբույսերը, կենդանի ծածկոցը, մատղաշը և ստորին շարահարկի մյուս բույսերը:

ԼՈՒԱԱՅԻՆ ԱՃ, *Светолюбн пророст; light growth*

Ծառուտի կամ առանձին ծառերի աճ, որը տեղի է ունենում լուսային օբժիմի բարելավման հետևանքով: Հիմնականում նկատվում է խնամքի հատումներից հետո կամ համատարած հատումների դեպքում փարոսային ծառերի մոտ:

ԼՈՒՍԱՆԿԱՐՎԱԾՓՈՒԹՅՈՒՆ (ՖՈՏՈԳՐԱՄԵՏՐԻԱ), *Фотограмметрия; photogrammetry*

Լուսանկարաչափությունը գիտություն է և տեխնոլոգիա օդալուսանկարներից երկրաչափորեն վստահելի տեղեկատվություն և տարածական չափումներ իրականացնելու վերաբերյալ: Լուսանկարաչափության շնորհիվ հնարավոր է կատարել հեռավորությունների, մակերեսների և բարձրությունների չափումներ, իսկ ավելի բարդ սարքավորումներով՝ տեղանքի թվային մոդելը (DEM), օրթոֆոտոներ, թեմատիկ ԱՏՀ տվյալներ և այլն:

ԼՈՒՍԱՊԼԱՆ (ՖՈՏՈՊԼԱՆ), *Фотоплан; photo-plan*

Լուսապլանները ստացվում են տրանսֆորմացված (հորիզոնական) օդալուսանկարների մոնտաժից: Հարթ տեղանքի օդալուսանկարի հորիզոնական պրոյեկցիան իր չափումներ կատարելու հնարավորություններով մոտ է օրթոգոնալ պրոյեկցիային, որի պատճառով նկարներից մոնտաժված լուսապլանները համապատասխանում են նույն մասշտաբի տեղագրական քարտեզներին: Լուսապլանը թույլ է տալիս պլանավորել անտառային դաշտային գույքագրմանաշխատանքները:

ԼՈՒՍԱՍԵՐ ԾԱՈՂԱՏԵՍԱԿՆԵՐ, *Светолюбивые древесные породы; light tolerant tree species*

Տեսակներ, որոնք չեն կարող տանել երկարատև սովերացում: Անկախ տեսակի լուսասիրության աստիճանից, երիտասարդ բույսերն ավելի սովերառար են: Լ.Ծ. - ի տերևներին բնորոշ է պոլիսադային պարենքիման, հերձանցքների մեծ քանակությունը: Սովերատարներին՝ սպունգանման պարենքիման և քլորոֆիլի մեծ քանակությունը: Ծառատեսակների լուսասիրության աստիճանը որոշելու համար օգտագործում են տարբեր ցուցանիշներ՝ տեսակի հարաբերական բարձրությունը, տերևների անատոմիական կառուցվածքը, տերևակալման խտությունը, ծառուտի ինքնամոսրացման ընթացքը, ներքին ճյուղերի մահացման արագությունը և այլն: Ըստ լուսասիրության աստիճանի՝ Յա. Ս. Մեղվեղով տվել է (նվազող հաջորդականությամբ) հետևյալ սանդղակը՝ կեչի, սոճի, հացենի, կաղամախի, կաղնի, լորենի, բոխի, եղևնի, հաճարենի:

ԸՆԴՈՍՈՒՆԵՄԱ (ՖՈՏՈՍՈՒՆԵՄԱ), *Фотосхема; Photo-schema*

Լուսասխեման (և՛ մեկ երթուղանի և՛ բազմաերթուղանի օդալուսանկարահանման դեպքում) տեղանքի մոտավոր, սխեմատիկ պլանն է: Այն սովորաբար ստացվում է պլանային օդալուսանկարներից՝ օգտագործելով միայն միջին զօնրով սահմանափակվող վերածածկված աշխատանքային մակերեսը՝ կտրելով նրանց եզրերը:

ԼՈՒՍՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, *Фотостатистическая инвентаризация; Photo-statistic inventory*

Լուսավիճակագրական գույքագրումը հենվում է տիեզերական պատկերների համատարած վերծանման վրա, որոնցով իրականացվում են տարածքի շերտավորում-ստրատիֆիկացիա (առանձին հատվածների-շերտերի սահմանազատում), ինչպես նաև ոչ մեծ տարածքի (1 հա) ընտրված տեղամասերի վերծանում՝ 1:5000 և 1:10 000 մասշտաբի օդալուսանկարների օգնությամբ: Այս ձևով, ըստ շերտերի, տեղեկություններ են ստացվում տաքսացիոն միջին ցուցանիշների (բարձրություն, սաղարթի կցվածություն և այլն) վերաբերյալ, ինչպես նաև վերահսկվում է տիեզերական պատկերների վերծանման ճշտությունը: Արդյունքում ստացվում են անտատնտեսությունների 1:5000 և 1:10 000 մասշտաբի անտատնական պլանները և քարտեզները:

ԼՈՒՍՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Рубки осветления; cleaning*

Կատարում են մատղաշ հասակում (մինչև 10 տարեկան)՝ բարելավելու արժեքավոր, զլխավոր ծառատեսակների աճման պայմանները, հիմնականում լուսավորման ռեժիմը: Հեռացվում են անցանկալի տեսակները, խանգարող, թույլ զարգացած, հովանոցածև սաղարթ ունեցող ծառերը:

ԼՈՒՍԱՄԻՏՈՒԹՅՈՒՆ, *Фототропизм; phototropism*

Լույսի արդյուրի ազդեցության տակ բույսերի օրգանների աճի ուղղության փոփոխումը դեպի լույսը (դրական լուսամիտություն) կամ հակառակ կողմը (բացասական լուսամիտություն):

ԼՈՒՍԱՊՈՐԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Фотопериодизм; photoperiodism*

Օրվա ընթացքում ցերեկային լուսավորվածության տևողության (լույսի և մթության պարբերական հերթափոխման) արդեցությունը բույսերի զարգացման վրա: Տարբերում են երկար օրվա (բարձր լայնությունների), բարեխառն ու կարճ օրվա (արևադարձների և մերձարևադարձների) բույսեր: Լայնորեն օգտագործվում է ծաղիկների ծնեռային աճեցման ժամանակ: Վերջինս տեղի է ունենում ծածկած քնահողում անհրճոհատ կամ պարբերաբար ընդհատվող էլեկտրալուսավորության պայմաններում:

ԼՈՒՍՈՒՄՆԵՅ (ՖՈՏՈՒՄՆԵՅ), *Фотосурма; Photo-sur*

Լուսաքարտեզները կազմվում են տիեզերական նկարների հիման վրա: Նախ տիեզերական նկարները տրանֆորմացվում ու բերվում են նույն պրոյեկցիայի, ապա նկարները մոնտաժվում են ու ստացվում է մեկ, միասնական պատկեր:

ԼՈՒՍԱՍՎԵՐԱՅԻՆ ԷՖԵԿՏ, *Светотеневой эффект; light-shadow effect*

Լույսի և ստվերի խաղ, որի նպատակահարմար տեղաբաշխումը որոշիչ գործոն է տնկարկների կոմպոզիցիոն ձևավորման գործում: Զբոսայգու կոմպոզիցիաներում լույսի և ստվերի զանազան փոխհարաբերությունները՝ խաղերը, կախված են արևի ճառագայթումից, կանաչապատվող օբյեկտի աշխարհագրական դիրքից, տարվա եղանակից և օրվա պահից: Լույսը լուսաստվերային էֆեկտի գլխավոր գործոնն է: Այն ընդգծում է զբոսայգու տարրերի ուրվագիծը, չափը, զույնը, բնույթը, նպաստում է բնապատկերի պլաստիկությանը և կենսունակություն է հաղորդում նրան, քաջահայտում զբոսայգու կոմպոզիցիայի զեղեցիկ և զեղարվեստական կողմերը: Լ.է. ունի ոչ միայն զեղարվեստական, այլ նաև գործառական նշանակություն, հատկապես հարավում, որտեղ ստվերը խիստ կարևոր նախապայման է այցելուների նորմալ հանգիստը ապահովելու համար: Լ.է.-ների ստեղծելիս հաշվի են առնվում բույսերի կենսաբանական առանձնահատկությունները, որպեսզի լուսասեր բույսերը մշտապես ապահովված լինեն արեգակնային ուղղակի լուսավորությամբ, իսկ ստվերասեր բույսերը որոշակի ժամերի գտնվեն ստվերում՝ այրվածքներից խուսափելու համար:

Խ

ԽԱՐԱՂ ԳՆԱԳՍԻ ԳՐԱՊՈՐԱԿ, *Площадка для мусоро отбора; square, area of rest*

Կանաչապատման օբյեկտի հատակագծային տարր: Նախատեսվում է այցելուների խաղաղ հանգստի համար: Կան սեղանի զանազան խաղեր, հարմարավետ ճտտարաններ: Լինում է ծառերի ստվերում, ջրամբարի մոտ և այլն:

ԽԱՆՉՎԱԾ ԱՆՏԱՈՒ, *Гапы; slash, burned-out forest*

Գրդեհված անտառի այն մասը, որտեղ ամպս են կիսայրված, չորացող, կանգուն և վայր ընկած ծառեր:

ԽԱՇԱՍ, *Onad; litter, litter fall*

Անտառում տարվա ընթացքում թափված տերևները, նյուղերը, կեղևը, պտուղները և բուսական այլ մնացորդները: Խ. մասնակցում է անտառային թաղիքի կազմավորմանը և հողի ծակվորմանը: Ձուրաքանչյուր տարի նրա շնորհիվ հող է մտնում մեծ քանակությամբ օրգանական նյութ: Խ.-ի և հող մտնող սննդանյութերի քանակը պայմանավորված է ծառուտի կազմով, հասակով և լրիվությամբ: Տարեկան Խ.-ի ամենաքիչ քանակը լինում է ասեղնատերևավոր անտառներում՝ 1.5-3 տ, ամենաշատը՝ լայնատերև ծառատեսակներից կազմավորված ծառուտներում՝ 3.5-5 տ չոր քաշով:

ԽԱՈՐ ԾԱՌՈՒՏՆԵՐ, *Смешанный древостой; mixed stands*

Ծառուտ՝ կազմավորված երկու և ավելի ծառատեսակներից:

ԽԱՈՆ ԱՆՏԱՈՒՆԵՐ, *Смешанные леса; mixed forests*

Անտառներ, որոնց կազմավորմանը մասնակցում են ասեղնատերևավոր և մանրատերևավոր կամ լայնատերև սաղարթավոր ծառատեսակներ: Եթե առաջինը լայն տարածում ունի եվրասիայի տայգայում, ապա երկրորդը՝ ասեղնատերևավոր և լայնատերևավոր Խ.Ա., հանդիսանում է անցումային տիպ լայնատերև սաղարթավոր անտառներում:

ԽԱՐՍԽԱՅԻՆ ԱՐՄԱՍՆԵՐ, *Якорные корни; deeply descending roots*

Գրիզոնական այն արմատները, որոնք խարսխանման խորանալով՝ ապահովում են ծառի կանգունությունը: Հաճախ առաջացնում են հավելյալ արմատներ, որոնք դուրս են գալիս շաքիլատակ ծնկամասից և խորանում հողի մեջ որոշ անկյան տակ: Արևադարձային անտառներում մի շարք ծառատեսակների բնորոշ են բնից առաջացող հավելյալ արմատներ, որոնք բնի հետ տախտակածև միանալով խորանում են հողի մեջ՝ կատարելով խարսխի դեր:

ԻՆԵՑԻՐ (ԲՆԱՎԱՆ), *Смолы природные; natural pitches, resin*

Պինդ նյութեր են, որոնք առաջանում են խեժատու բույսերում բնական ֆիզիոլոգիական փոփոխության, ինչպես նաև վնասվածքների դեպքում: Կազմում են փշատերև բույսերի հյութի հիմնական մասը (65%), առավել հարուստ են արևադարձային բույսերը: Բնական խեժերը ջրում չեն լուծվում: Մի քանիսն ունեն բնական հոտ ու համ ու (օր.՝ խուճկը), կարող են պարունակել նաև եթերային յուղեր և ջուր: Ավելի շատ օդ-տազործվում են բեկնախեժը, և սաթը:

ԽԱՉԱՍԵՐՈՒՄ, ՏՐԱՍԱԽԱՉՈՒՄ, *Скрещивание; crossing mating*

Ժառանգականորեն տարասեռ ծնողական ձևերի, տարատեսակների կամ տեսակների, երբեմն նաև ցեղերի սեռական բջիջների միավորման ճանապարհով նոր բույսերի ստացման կենսաբանական մեթոդ: Հիբրիդային տեսակներ են. օր.՝ բեռլինյան, պետրոլյան, կանադական և այլ բարդիները:

ԽԵԺ, ԳՈՒՄՄԻ, *Жувица, камедь; resin; turpentine, gum*

Պոլիսախարիդներ են կամ դրանց խառնուրդ, որոնք բույսերի հյուսվածքների մեխանիկական կամ ինֆեկցիոն վնասվածքների դեպքում արտազատվում են մածուցիկ լուծույթի ձևով և ապակենման զանգվածի են վերածվում արտազատվելուց հետո: Առաջանում են բազմաբջիջ սելերտորային համակարգերում (լորձանցքեր, գեղձեր): Հետերոպոլիսախարիդներ են, որոնց կազմում բացի չեզոք մոնոսախարիդներից մտնում են սովորաբար մեկ կամ մի քանի ուրոնաթթուներ: Կազմությանը հիշեցնում են պեկտինային նյութեր և հեմիցելյուլոզ: Որոշ խեժեր (գումիապիկ, տրագականտային) ստանում են գազի մի շարք տեսակներից:

ԽԵԺԱՆՈՐՈՉ, *Засмолок; gum spot*

Ասեղնատերևավոր ծառերի արատ: Ծառերի մեխանիկական վնասվածք, որն ուղեկցվում է խեժայլունով: Վերջինս պաշտպանում է բնափայտի վնասված հատվածը չորանալուց, սնկերի ներթացափանցումից ու միջատների վնասակար գործունեությունից:

ԽԵԺԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Камедетечение; gummosis*

Գորշավուն մածուցիկ նյութի արտահոսք: Նկատվում է կորիզավորների (բալենու, ծիրանենու, դեղձենու, սալորենու և այլն) բնի կամ ճյուղերի վրա: Հաճախակի առաջանում է մեխանիկական վնասվածքների դեպքում: Բացասաբար է ազդում ծառի աճի և պտղաբերման վրա:

ԽԻԼ (ԿԱՊ), *Коп (напыль со свиловатой структурой); sprink*

Ծառաբնի վրա տձև ուռուցք: Հանդիպում է ընկուզենու, կեչու և այլ սաղարթավոր ծառատեսակների վրա: Ղիտվում է որպես ժառանգապես փոխանցվող հատկանիշ:

Այգի է ընկնում շեղաշերտավոր ածով: Խ.-ի ածի տեմպը շուրջ 3 անգամ մեծ է նորմալ բնափայտի ածի տեմպից: Խ.-ի բնափայտը կտրվածքում ունենում է գեղեցիկ տեսք, որը բարձր է գնահատվում կահույքագործության մեջ:

ԽԻՂԲԵՐ, *Усуку; dendriis*

Օրգան, որով փաթաթվող բույսերը (վիկ հոտավետ, խաղող և այլն) ամրանում են հենարանին: Չնափոխված ընծյուղ կամ տերև է:

ԽԻՍ ՂԱՆՂԱՂԱԾ ԲՈՒՅՍԵՐ, *Очень медленнорастущие растения; very slow growth plants*

Բույսեր, որոնց տարեկան աճը չի գերազանցում 0.15 մ (ծառերից՝ տոսախ, մայրու մացառաթուփ, գիհի բարձր, կենի հատապտղային, փիերից՝ գայլահատ, մրտավարդ, գազի մի քանի տեսակներ և այլն):

ԽԻՏ (ԼԻՄԻԾԵՔ) ԽՈՐ. Ս, *Плотный кубометр; stacked cubic meter*

Մեկ խոր. մ. ծավալ՝ լրիվ զբաղեցված բնափայտով: Օգտագործում են աճող ծառի բնափայտի, ինչպես նաև սղոցված անտառանյութի տեսականու ծավալը որոշելիս: Դարսված ճյուղերի և ծողանի լիարժեք ծավալի որոշման համար 1 մ³ դարսված փայտանյութը բազմապատկում են տվյալ բնափայտի խտության գործակցով, որը ել-նելով դարսված փայտանյութի երկարությունից, ձևից (ճղած, կլոր) և հաստությունից, կազմում է 0.5-0.81:

ԽՍԲԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՄ, *Групповая-постепенная рубка; group gradual cutting*

Աստիճանական հատման տարատեսակ, որի ժամանակ ծառուտը հատում են հասակային 2-3 դասի ընթացքում, մի քանի փուլով՝ խմբերով: Կիրառվում է սովետատար ծառերից կազմավորված ծառուտներում: Ապագա ծառուտը ձևավորվում է տարահասակային:

ԽՍԲԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԿԻ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Групповые-выборочные рубки; group selective cutting*

Աստիճանական հատման տարատեսակ, որի ժամանակ ծառուտը հատվում է մի քանի փուլով՝ խմբերով հասակային մեկ դասի ժամանակաընթացքում: Կիրառվում է այն ծառուտներում, որտեղ առկա է հուսալի մատղաշի անհրաժեշտ քանակություն:

ԽՆՉՈՐԵՆՈՒ ԾԱՌՈՒՏ (ԽՆՉՈՐՈՒՏ), *Яблоневым древостой; apple stand (orchard)*

Վայրի խնձորենու որևէ տեսակի գերակշռությամբ բնական անտառային համակցություն:

ԽՈՒՆԱՎ ԱՐԵՎԱՐԱՐԻՉԱՅԻՆ ԱՆՏԱՈՒ, *Влажный тропический лес; humid tropical forest*

Արևադարձային գոտու օվկիանոսամերձ անտառամաս (ծառուտ):

ԽՈՒՇՈՐ ՏԱՐԱԾԱԵՐՁԱՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ, *Крупнорегиональные снимки; Large regional images*

Խոշոր տարածաշրջանային պատկերներն ընդգրկում են մայրցամաքներ կամ նրանց մասեր և զոնայի լայնությունը կազմում է 300-500 կմ, իսկ ընդգրկած տարածքը՝ միլիոնավոր կիլոմետրեր: Այսպիսի նկարներ սովորաբար ստացվում են մերձերկրային ուղեծիր ունեցող օդերևութաբանական արբանյակներից: Այսպիսի մի նկարի վրա կարող է ընդգրկվել ամբողջ Արևմտյան Եվրոպան, Ավստրալիան, Սիբիր Ասիան:

ԽՈՒՇՈՐԱՄԱՍՇՏԱՐ ՕՂԱԼՈՒԿԱՆԿԱՐՆԵՐ, *Крупномасштабные аэроснимки; Large-scale aerial photos*

Խոշորամասշտաբ օդալուսանկարները 1:10 000-1: 100 000 մասշտաբի օդալուսանկարներ են, որոնք ստացվում են արբանյակներից առարկայական ուսումնասիրությունների և խոշորամասշտաբ տեղագրական քարտեզագրման համար:

ԽՈՒՏԱՔՈՒՅՍԵՐ, *Травянистые растения; herbs*

Ամբարենպաստ սեզոնային պայմաններին դիմանալու ունակ բույսերի կենսածն: Լինում են միամյա (տերոֆիտներ) և բազմամյա, որոնց վերականգնման բողբոջները գտնվում են հողի մակերեսին (հեմիկրիպտոֆիտներ) կամ հողում (կրիպտոֆիտներ) և տեղավորված են կոճղարմատների, կաուղեքսների, պալարների, սոխուկների, հազվադեպ՝ սողացող ստորգետնյա ընձուղների վրա:

ԽՈՒՏԱԹՓԱՅԻՆ ԾԱԾԿՈՑ, *Травяно-кустарниковый покров; grass-bush cover*

Տե՛ս Ծառուտի կենդանի ծածկոցը:

ԽՈՒՏԱՅԻՆ ԵԶՐԱՇԵՐՏ, *Травянистый бордюр; grass border (braid)*

Ծաղկանոցը կամ պարտերը եզերող, առանձին տարրերը ցայտուն և ընդգծված դարձնող բուսաշերտ (լոբելիա, զեղմախոտ, ակնտակ, մոխրածաղիկ ծովային, պերիլա նանկինյան և այլն):

ԽՈՒՏԵՐ, *Травы; herbs*

Կանաչ շինարարությունում օգտագործվող բույսերի մեծ խումբ: Դրանցով ստեղծվում են զբոսայգու հիմնական կոմպոզիցիաները՝ սիզամարգերը, ծաղկախմբերը, պարտերները, ծաղկաթմբերը և այլն:

ԽՈՐԸԱԿ, *Суховеи; dry wind*

Տաք (23-25^o) քամի, որն ուղեկցվում է օդի 30%-ից պակաս հարաքերական խոնավությամբ:

ԽՏԱՅՎԱԾ ՏՆԿԱՐԿ, *Засыщенная посадка; inter planting*

Ձրոսայգու բնապատկերի ձևավորման եղանակ: Նպատակ ունի արագորեն ստանալ ուղիղ բներով խիտ տնկարկներ: Հետագայում անհրաժեշտ է պարտադիր նոսրացում կատարել:

ԽՈՒԶՈՒՄ, *Смриважа; shearing*

Ծառերի և թփերի ձևավորման հատուկ ձև, երբ պարբերաբար խուզելով, բույսերին որոշակի ձև են տալիս: Կիրառվել է հատկապես հին աշխարհում և անվանվել է տոպիար արվեստ: Ձրագացման բարձր մակարդակի է հասել հատկապես ֆրանսիական պարտեզներում և մասնավորապես Վերսալի թագավորական պարտեզում, որտեղ բույսերից ստեղծում էին պալատներ, արձաններ, շատրվաններ, կենդանիների ֆիգուրներ, սյունաշարեր և այլն: Ներկայումս կորցրել է իր նշանակությունը որպես արվեստ: Կիրառվում է կենդանի ցանկապատերի և եզրաշերտերի ձևավորման համար: Որոշ զբոսայգիներում դեռևս պահպանվել է խուզման եղանակով կենդանիների ֆիգուրներ ստեղծելու արվեստը:

ԽՈՒԹ (ԽԻԼ), *Нарощ; punk*

Ծառաբնի որևէ հատվածի մասնակի հաստացում: Բանփայտի արատ, որն առաջանում է որևէ զրգռիչի (վնասակար սնկերի և այլն) ազդեցության հետևանքով հյուսվածքների գերաճից: Լինում է նորմալ կառուցվածքով, հարթ մակերեսով (խութ) և խորդուբորդ մակերեսով, աննորմալ կառուցվածքով (խիլ):

ԽՈՒՄԱՐ, *Группа; group*

Կանաչապատման տիպ, զբոսայգու բաց տարածությունների ծավալային և երանգային ձևավորման հիմնական տարր: Ձևավորում է զբոսայգու առաջին, միջին և ետին պլանները, այցելուների ուշադրությունը կենտրոնացնելով նրա հիմնական տարրերի վրա: Կազմվում է մեկը մյուսից 4-5 մ հեռավորությամբ տնկված 2 և ավելի ծառերից: Խ. կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի տեսակներից՝ ինչպես ծառերից, այնպես էլ թփերից: Մեկ տեսակից կազմված խումբը կոչվում է միակոմպակտ, 2 տեսակից կազմվածը՝ երկկոմպակտ, 2-ից ավելի տեսակներից՝ բազմակոմպակտ:



ԾԱԾԿԱՍԵՐՍԵՐ, *Покрытосеменные; angiospermae*

Երկրագնդի վրա ժամանակակից պայմաններին առավել հարմարված բույսեր, որոնք գերիշխում են բոլոր մայրցամաքների բուսածածկում: Ծառեր, թփեր և խոտաբույսեր են, ունեն մասնագիտացված վեգետատիվ օրգաններ՝ պալարներ, կոճղարմատներ, սոխուկներ: Հայտնի է շուրջ 250-300 հազար ծածկասերմ բուսատեսակ:

ԾԱՂԻԿ, *Цветок; flower*

Բույսի օրգան, որն ապահովում է ծաղկավոր բույսերի սեռական բազմացումը: Ծ. իր մորֆոլոգիական բնույթով սահմանափակված ռեպրոդուկտիվ օրգան է: Ունի տարբեր ֆունկցիաներ՝ փոշեհատիկի և սերմնարանի ձևավորում, նրանցում իգական և արական բջիջների գոյացում, փոշոտման ագենտների ներգրավում, փոշոտում, սերմերի ու պտուների կազմավորում, որոնք էլ նպաստել են Ծ.-ների մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական մասնագիտացված բազմազանությանը: Ծ.-ները ճյուղին (ընծյուղին) միանում են ծաղկակոթի միջոցով կամ ճատում են տերևածոցում: Լինում են միասեռ և երկսեռ: Ծ.-ի ձևը, կազմությունը, կառուցվածքը ժառանգապես ամրացած ցուցանիշ է:

ԾԱՂԿԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ, *Цветообразование; flower breeding*

Բուսաբուծության ճյուղ, որն ուսումնասիրում է բաց և փակ գրունտում աճող տարբեր կենսածների պատկանող ծաղկաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները, բազմացման եղանակներն ու մեթոդները, ինչպես նաև նրանց օգտագործման հնարավորությունները կանաչապատման տարբեր տիպերում ու կատեգորիաներում:

ԾԱՂԿԱՐՈՒՅԼ, ԾԱՂԿԱՓԹՅՈՒԹՅՈՒՆ, *Соцветник; flower blooming*

Բույսի տարեկան ընծյուղի ծաղիկներ կրող մասը: Կազմված է ճյուղավորված համակարգից և ծաղիկներից, որոնք զարգանում են տերևածոցերում: Առաջացել է հիմնականում ծաղիկների ծաղկակիր ընծյուղների կարճացման հետևանքով: Ունի ուղկույզի (թխենի, եղրևանի), ծաղկաբույլի (ոսկեշիվ), զամբյուղի (քրիզանթեմ, աստղածաղիկ), հովանոցի (ծախ) և այլ ձևեր:

ԾԱՂԿԱՐՈՒՅՍԵՐ, *Цветочные растения; perianth plants*

Խոշոր, վառ գունավորված, գեղեցիկ կամ հոտավետ ծաղիկներով միամյա, երկամյա և բազմամյա խոտաբույսեր: Աճեցվում են ծաղիկներ և ծաղկաբույլեր ստանալու, ինչպես նաև գեղազարդային ձևավորումների համար: Բաժանվում են մի շարք

խմբերի (գորգային, պարտերային, սոխարմատավոր, կոճղարմատավոր, էֆեմերային, քաղարային, ամպելային, բուրավետ, տերևագեղազարդային և այլն):

ԾԱՂԿԱԳՈՐԳԱՅԻՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ, *Цветоно-ковровое оформление; flower-carpet design*

Ծաղկային ձևավորում ցածրահասակ գորգային բույսերով (սառնենի, ճոճուկ, փոխագեղման քանթոնիկ և այլն):

ԾԱՂԿԱՅՈՒՐԱՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍ, *Цветоно-кадочная культура; floristic coops culture*

Թաղարներում աճեցվող բազմամյա արևադարձային (երբեմն՝ մերձարևադարձային) բույս: Օգտագործվում է բնակարանների, ձմեռային պարտեզների, աշխատասենյակների, արտադրամասերի, լսարանների ձևավորման համար: Երբեմն օգտագործվում է նաև բաց բնահողի պարտերային ժամանակավոր (մինչև ձմեռ) ձևավորումներում:

ԾԱՂԿԱԹՈՒՄԲ, *Клумба; flower-bed*

Ձրոսայգու ազատ հատվածներում տեղադրված ճիշտ երկրաչափական ձևի (կլոր, ուռուցիկ, տափակ, ճկված, ուղղանկյուն) ծաղկանոց: Տարբերում են Ծ.-եր, ինչպես գունային լուծմամբ (միագույն և բազմագույն), այնպես էլ տեսակային կազմով (պարզ՝ կազմված մեկ և բարդ՝ 2-3 բուսատեսակներից) և ըստ կենսացիկլի (միամյա, երկամյա, բազմամյա բույսերով):

ԾԱՂԿԱԲՆՈՐԱՐՈՒՄ, *Иkebana; Ikebana*

Տե՛ս Իկեբանա:

ԾԱՂԿԱՄԱՐԳ, *Робатка; ridge*

Ծաղկաբույսերի աճեցման, գեղազարդային ձևավորման համար առանձնացված հողաշերտի նեղ, երկար մարզանման հատված: Լայնությունը ընդունված է 0.5-1.5 մ, երկարությունը՝ 1-25 մ: Տնկում են մեծ մասամբ միամյա, հաճախ նաև՝ բազմամյա ծաղկային և տերևածաղկային բույսեր, երբեմն ստեղծելով գեղեցիկ նախշեր (հատկապես գորգային ձևավորումներում): Եզրային մասերում ցածրաճ, խսկ կենտրոններում համեմատաբար բարձրաճ բույսեր են: Տեղադրվում են զրոսայգու կենտրոնական, շքամուտքային մասերում, ճանապարհների միջին մասում կամ եզրերում, մայրուղիների բաժանարար շերտերում, պուրակներում և այլուր:

ԾԱՂԿԱՅԻՆ ՋԱՆԳԱԿ, *Цветоный массив; floristic massive*

Բացառապես բազմամյա ծաղկաբույսերից ստեղծված մեծածավալ ծաղկային կոմպոզիցիա (80-150մ²-ից մինչև 1000 մ² տարածքով): Տպավորիչ են միագույն (վառ

կարմիր, սպիտակ, ոսկեդեղին) կամ 2-3 գույների հակադրական զուգակցումով ստեղծված Ծ.Ձ.-երը: Լայնորեն կիրառվում է զբոսայգու պարտերային հատվածներում:

ԾԱՂԿԱՅԻՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ, *Цветоная группа*; floristic group

Ծաղկային ձևավորման ներգործուն տեսակ: Կազմված է տարբեր չափսի շրջանների, բառակուսիների, անկանոն երկրաչափական ձևերի կոմպլեքսից՝ հազեցված ծաղկաբույսերով (սովորաբար նույն տեսակի, բայց տարբեր սորտերի՝ բազմամյաներ, երկամյաներ և միամյաներ):

ԾԱՂԿԱՅԻՆ ԿՈՆՏԵՅՆԵՐ, *Цветоный контейнер*; floristic container

Տե՛ս Բուսահող:

ԾԱՂԿԱՅԻՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ, *Цветоное оформление*; floristic design

Ծաղկապատ տարածություններ շենքերի և կառույցների առջև, փողոցների մայթերի երկարությամբ, ինչպես նաև պարտեզներում և զբոսայգիներում:

ԾԱՂԿԱՅԻՆ ՄԱՐԳԱԳԵՏԻՆ, *Цветоный луг*; floristic meadow

Բնական, ծաղկավետ ընդարձակ սիզամարգային մարգագետին՝ շրջապատված ծառերով ու թփերով: Ծառայում է հանգստի, խաղերի, մարզական միջոցառումների համար: Միջին դարերում նման մարգագետիններում կազմակերպում էին ասպետական մրցաշարեր:

ԾԱՂԿԱՅԻՆ ՍԻԶԱՄԱՐԳ, *Цветоный газон*; floristic grassplot

Տե՛ս Մավրիտանական սիզամարգ:

ԾԱՂԿԱՆՈՑ, *Цветоchnik*; flowerplot

Զբոսայգու, պարտեզի, պուրակի, փողոցի, արդյունաբերական ձեռնարկության տարածքի և այլնի ձևավորման ծաղկագեղազարդային տարր: Ծ.-ների համար առանձնացվում է կանաչապատվող տարածության 3-5 %-ը:

ԾԱՂԿԱՇՂԹԱ, *Гирлянда*; garland

- Ծաղիկներից, ճյուղերից հյուսված շղթա, որով հնում պսակում էին հերոսներին, մրցումներում հաղթողներին:
- գեղեցիկ ծաղկող լիաններով (հիմնականում փաթաթվող լիաթերթ վարդերով) հատուկ ձևավորում զբոսայգիներում, պուրակներում, բուլվարներում: Լիանները տնկվում են իրարից 2-3 մ հեռավորության վրա: Շիվերը ձևավորում են այնպես, որ ստացվեն կիսակլոր ֆիգուրներ, իրար հաջորդող օղակներ:

ԾԱՂԿԱՍՏԱԿԱԿԱ, Цветошниця; floristic pot

Տարբեր նյութերից (փայտ, խեցեղեն, երկաթբետոն) պատրաստված հատուկ ամաններ, որոնցում սածիլվում են ծաղկաբույսեր՝ փողոցներում, շենքերի ներսում կամ սահմանափակ տարածություն ունեցող ձևավորումներում դրվելու համար:

ԾԱԾԿԱԾ ԱՐԱԴԵՏ, Крытая дорожка; covered lane

Տե՛ս Թարմա, բերս:

ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, Цветошые растения; покрытосеменные; floristic plants; angiospermae

Տե՛ս Ծածկասերմեր:

ԾԱՂԿԵՓԼՏԱԿԱԼ, Бутоньерка; buttonhole

Դոտակվետ բույսերի (մանուշակ, անմոռուկ, երիցուկ) ոչ մեծ փնջերի ամրացման հարմարանք: Փնջի հետ ազուցվում է բաճկոնի լամբակին:

ԾԱՂԿԵՓՈՒՆՁ, Букет; bouquet

Ծաղիկների և տերևազեղազարդային բույսերի գեղեցիկ զուգակցում սկստակներում, ափսններում, ասեղների վրա: Տե՛ս մեկ ծաղկափարդարում, իլեքրամա:

ԾԱՂԿԱՄՆ ՕՐԱՑՈՒՅՑ, Календарь цветения; blooming calendar

Կենսաբանական առանձնահատկություններով, ֆենոլոգիայով և տեղանքի կլիմայով պայմանավորված ամբողջ վեգետացիայի ընթացքում, ըստ ամիսների, գեղեցիկ, ծաղկող բույսերի ընտրություն: Կազմվում է կանաչապատման օրյեկտների մախագծման և ծաղկատեսակների ընտրության ժամանակ: Նպատակ ունի ստեղծել հնարավորին չափ երկար ժամանակահատվածում ծաղկող առանձին կոմպոզիցիաներ:

ԾԱՂԿՈՒՄ, Цветение; blooming

Բարձրակարգ ծաղկող բույսերի ծաղկի օրգանի զարգացման ժամանակաշրջան, որը պայմանավորում է բույսերի սեռական բազմացումը: Ծ. վերարտադրող օրգանի զարգացման սկիզբն է: Այն սկսվում է ծաղկային բողբոջի բացվելով և ավարտվում է ծաղկաթերթերի ու առեքների թառամումով, որը տեղի է ունենում փոշոտումից և բեղմնավորումից հետո: Այի ծաղկի ծաղկումը, կախված տեսակից, տևում է 20- 25-ից մինչև 70-80 օր: Ծառային բույսերն սկսում են ծաղկել մատղաշ հասակից՝ 5-10 և 20-30 և ավելի տարեկան հասակում՝ ծաղկելով կյանքի ընթացքում բազմաթիվ անգամ (պոլիկարպ են): Ծերացման հետ ծառերի Ծ. թուլանում է և աստիճանաբար կանգ է առնում: էվոլյուցիայի ընթացքում բույսերը ձեռք են բերել որոշակի պայմանների՞ հարմարվողական ռեակցիա, որի հետևանքով այս կամ այն տեսակի Ծ. տեղի է ունե-

նում նրան հարմար սեզոնում, օրվա լուսային տևողության որոշակի ժամանակաշրջանում (ֆոտոպերիոդիզմ):

ՕԱՌ, *Дерево; tree*

Բազմամյա բույսերի կենսածն, որն ունի ընդգծված (արտահայտված) գլխավոր ցողուն՝ բուն: Կերքինս պահպանվում է ծառի ամբողջ կյանքի ընթացքում և իր վրա է կրում բազմամյա կմախքային ճյուղերը և սաղարթն ամբողջությամբ: Բունն ամեն տարի հաստանում է (աճում է լայնությամբ) կամրիումի շնորհիվ: Ծառերը բուսական աշխարհի ամենախոշոր և ամենաերկարակյաց բուսատեսակներն են՝ ապրում են 100-300 (500) տարի, հազվադեպ մինչև 3-5 հազ. տարի (սեքվոյադենդրոն հսկա), ունենում են մինչև 30-50 (60), հազվադեպ մինչև 150 մ բարձրություն (ավստրալիական էվկալիպտ):

ԾԱՌԱԲՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ (ԴԻՖԵՐԵՆՑԻԱՑԻԱ), *Дифференциация стволов; stems differentiation*

Տե՛ս Ինքնանոսրացում:

ԾԱՌԱԲՆԵՐԻ ՄԱՔՐՈՒՄԸ ՄԱՀԱՑԱԾ ՃՅՈՒՂԵՐԻՑ, *Очищение стволов от сучьев; stems cleanings from snags*

Սկսվում է սաղարթի միակցման փուլից, երբ ճյուղերը միմյանց կցվելիս ստեղծում են լուսային անբավարար ջեժիմ, որը հանգեցնում է ներքին ճյուղերի տերևների ասիմիլյացիայի դադարեցման և ճյուղերի չորացման: Հետագայում կողային մնացած ճյուղերը բնի մակերեսով հոսող ջրերի և սապրոֆիտ սնկերի ազդեցության ներքո փտում, քայքայվում և թափվում են: Նախկին ճյուղի տեղը գոյանում է ոստ, որն աստիճանաբար ծածկվում է տարեկան օղակներով: Ճյուղերի մահացման ինտենսիվությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ առաջին հերթին տվյալ տեսակի լուսասիրության աստիճանով:

ԾԱՌԱԲՆԻ ԱՆԱԼԻԶ, *Анализ ствола; stem analysis*

Հատուկ հետազոտություններ, որոնք ուղղված են ուսումնասիրելու հասակի հետ կապված ծառի չափերի փոփոխությունները անտառզբնահատման հիմնական տարրերով՝ հասակ, տրամագիծ, բարձրություն, ընդլայնական կտրվածքի մակերես, տեսակային թիվ:

ԾԱՌԱԲՆԻ ԸՆԴԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍ, *Площадь поперечного сечения ствола; basal area*

Շրջագծի մակերեսը, որի տրամագիծը հավասար է ծառաբնի տրամագծին՝ $g_1=0.785 d^2$: Բանաձևն օգտագործվում է նաև բնի և նրա առանձին հատվածների ծավալը որոշելիս: Օրինակ՝ $v=g_{1,3} hf$, որտեղ hf -ը տեսակային բարձրությունն է, $g_{1,3}$ -ը

ընդլայնական կտրվածքի մակերեսը 1,3 մ բարձրության վրա: $v_1 = G_{0,3}H$, որտեղ H-ը բնի որոշակի հատվածի երկարությունն է, $G_{0,3}$ լայնական կտրվածքի մակերեսն է տվյալ հատվածի միջին մասում:

ԾԱՌԱՔՆԻ ԾԱՎԱԼ, Объем ствола; stem volume

Ծառի բնի քնափայտի քանակը (խոր. մ): Որոշվում է մոտացված ստերեոտիպ քանաձևով, որտեղ ծառաբունը պայմանականորեն դիտվում է որպես պտտվող մարմին:

ԾԱՌԱՔՆԻ ԿՈՂԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍ, Боковая поверхность ствола; stem lateral surface

Ծառաբնի կամրիալ շերտի մակերեսը: Չնահատման ցուցանիշ, որը հաշվի է առնվում ընդլայնակի ընթացիկ աճը չափելիս:

ԾԱՌԱՔՆԻ ԿՈՐԱԳԻԾ, Кривая древесного ствола; tree stem curve

Ծառաբնի տրամագծի աստիճանական փոքրացում: Ծառաբնի ընդլայնական կտրվածքը սահմանափակող գիծ: Արտահայտվում է հետևյալ բանաձևով՝ $y = a + bx + cx^2 + dx^3 + \dots$, որտեղ y-ը բնի շառավիղն է արմատավզից x հեռավորության վրա, a, b, c, d... որոշակի գործակիցներ տարբեր գերանների համար: Ծառաբունը դիտելով որպես պտտվող մարմին՝ նշված բանաձևից կարելի է ստանալ հավասարում, որը ցույց է տալիս բնի ընդլայնակի մակերեսը (g) և բարձրության (x) փոխհարաբերությունը՝ $g = A + B + Cx^2 + Dx^3$, որտեղ A, B, C, D-ն գործակիցներ են տարբեր ծառատեսակների համար: Այս հավասարման ինտեգրումը 0-ից մինչև x ըստ x-ի տալիս է բնի կամ նրա առանձին հատվածի ծավալը (v) 0-ից մինչև x սահմանում՝

$$v = \int_0^x (A + Bx + Cx^2 + Dx^3) dx = Ax + B \frac{x^2}{2} + C \frac{x^3}{3} + D \frac{x^4}{4}$$

Այս արտահայտությունից դուրս է բերվում անտառի զննահատման Դուբերի հայտնի պարզ բանաձևը

$$v = Ax + B \frac{x^2}{2},$$

որը ցույց է տալիս ծառերի տրամագծի և նրանց ծավալների հարաբերությունները:

ԾԱՌԱՔՆԻ ԿՏՐՎԱԾ ՀԱՏՎԱԾ, Топец; cross-cut end clearance face

5-10 սմ հաստությամբ ծառաբնի կտրվածք: Վերցնում են մոռելային ծառերից ածի ընթացքն ուսումնասիրելու համար:

ԾԱՌԱՐԱՆԻ ԴԱՍՏՈՒԹՅԱԸ ԱՍՏԻՃԱԼՆԵՐԻ, *Ступени толщины ствола; stem thickness grades*

Աճող ծառերի հաստությունը հաշվարկելու նպատակով պայմանական ընդունված է 4 կամ 2 սմ աստիճանավորում: Անտառի գնահատման ժամանակ հաշվարկումը կատարում են սկսած 8 սմ-ից ավելի բնի տրամագիծ ունեցող ծառերից: Ընդունված աստիճանաչափի կեսից պակասը չի հաշվարկվում, իսկ ավելին ընդունվում է որպես մեկ աստիճան: Սանդղակի (4 կամ 2 սմ) ընտրությունը պայմանավորված է ծառուտում ծառերի միջին տրամագծով և չափումների նպատակով:

ԾԱՌԱՐԱՆԻ ՉԵՎ, *Форма ствола; stem form*

Անտառգնահատման հասկացություն է, որը կիրառում են դիտելու ծառի բունը՝ որպես երկրաչափական ձև: Ծառի լիաբնության ցուցանիշ է, որով որոշում են ստացվելիք շինափայտի տեսականին և ծավալը:

ԾԱՌԱՐԱՆԻ ՉԵՎԻ ԳՈՐԾԱԿԻՑ, *Козэффициент формы ствола; diameter quotient, stem form coefficient*

Ցույց է տալիս ցանկացած բարձրության վրա ծառաբնի տրամագծի հարաբերությունը 1.3 մ բարձրության վրա տրամագծի նկատմամբ (d): Գաճախ որոշում են 4 բարձրություններում՝ հիմքում (d⁰), ծառաբնի 1/4 բարձրության վրա (d 1/4), ծառաբնի կեսում (d1/2) 7 մ բարձրության վրա (d 3/4): Նշված ցուցանիշները, միասին վերցրած, մեծ ճշտությամբ բնորոշում են ծառաբնի ձևը:

ԾԱՌԱՐԱՆԻ ՉԵՎԻ ԴԱՍ, *Класс формы ствола; stem form class*

Ծառուտում ծառերի դասակարգումը լիաբնության աստիճանով: Նպաստում է ծառերի բնի ծավալի և ծառուտի պաշարի ճշգրիտ որոշմանը: Ծ.Ձ.Դ.-ի թվային արտահայտությունը ծառուտի ձևի գործակիցն է, որն ըստ բարձրության բաժանվում է 3 խմբի՝ բարձր (ստճու և եղևնու համար)՝ 0.71-0.80, միջին՝ 0.65-0.70, ցածր՝ 0.59-0.80: Ծառուտի գնահատման համար սովորաբար օգտվում են ծառաբնի ծավալային աղյուսակից:

ԾԱՌԱՐԱՆԻ ՄԵՆԱՆԻԿՎԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՋՆԵՐ, *Механические повреждения ствола; stem mechanical damages*

Առաջանում են տարբեր պատճառներով, հիմնականում անտառահատումների ժամանակ հարևան ծառերի տապալումից, անտառանյութը դուրս բերելիս: Ազդում են բնափայտի ապրանքայնության վրա:

ԾԱՌԱՐԱՆԻ ՏՐՈՒՄԳԾԻ ԱՆԿՄԱՆ ՏԵՄՊ, *Сбежистость ствола; degree of stem taper*

Երբ ծառաբնի տրամագծի փոքրացումն ըստ բարձրության կազմում է տրամագծի հարաբերական նվազման 1 %-ից ավելի, հանդիսանում է տրամագծի արտա:

ԾԱՌԱԲՆԻ ՏՐԱՍՎԳԾԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԵՎԱՑՈՒՄ, *Свеи древесного ствола; stem taper*

Արմատավզից դեպի ծառի զագաթը յուրաքանչյուր 1 մ-ի վրա ծառաբնի տրամագծի նվազումը (սմ): Ամենափոքր նվազումը նկատվում է ծառաբնի միջին մասում, ամենամեծը հիմքում և ծառաբնի ծայրային մասում: Բնի տրամագծի նվազումը պայմանավորված է ծառատեսակով, իսկ միևնույն տեսակի և հասակի ծառերի Օ.Տ.Ա.Ն. մեծանում է բնի ձևի 2-րդ գործակցի (գ₂) փոքրացմանը զուգընթաց: Որքան ծառը բարձր է, այնքան փոքր է բնի տրամագծի նվազումը:

ԾԱՌԱԲՈՒՅԱԵՐ, *Древесные растения; tree plants, wood plants*

Ցողունի բնափայտային կազմություն ունեցող բույսեր՝ ծառեր, թփեր, թփիկներ, կիսաթփեր և բնափայտավոր (փայտացողուն) լիաններ:

Անտառազիտության և ծառազիտության մեջ մեծ մասամբ նույնացվում է «ծառեր և թփեր» հասկացության հետ:

ԾԱՌԱԲՈՒՅԱԵՐԻ ԴՊՐՈԹԱԿԱՆ ԳՈՂԱՍԱՍ, *Школьный участок с древесными растениями; wood school plot*

Տնկարանի այն մասը, որտեղ անցվում են ծառերի և թփերի խոշոր տնկիներ՝ հիմնականում կանաչապատման նպատակներով:

ԾԱՌԱԲՈՒՅԱԵՐԻ ԵՏ, *Обрезка древесных растений; scrap (cutting) of wood plants*

Ձևավորման, ինչպես նաև աճի կարգավորման նպատակով տնկարանի դպրոցական բաժնում ծառերի ու թփերի ճյուղերի մասնակի հեռացում: Հիմնականում կիրառվում է կանաչապատման համար տնկանյութ անեցնելիս:

ԾԱՌԱԲՈՒՅԱԵՐԻ ՏԵԿԱՍԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ, *Густота посадок древесных растений; density of wood plants planting*

Սեկ հա կանաչապատվող տարածքի բույսերի քանակը բնութագրող ցուցանիշ: Կախված է տեղանքի բնակլիմայական պայմաններից:

ԾԱՌԱԲՈՒՆ, *Штаб, ствол; wood stem*

Բնի անտերև և ճյուղերից մաքրված մասը՝ արմատավզիկից մինչև սաղարթի առաջին կմախքային ճյուղերը: Որպես կանոն, ծառաբնային ծառերով ձևավորում են փողոցները, բուլվարների ծառուղիները, օգտագործվում են որպես մեծածառեր:

ԾԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ, *Дендрологический проект; dendrological project*

Տե՛ս Դենդրոլոգիական նախագիծ:

ԾԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ, *Дендрологический район; dendrological region*

Տե՛ս Դենդրոլոգիական շրջան:

ԾԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅՈՒՄ, *Дендрологическое районирование; dendrological subdivision*

Տե՛ս Դենդրոլոգիական շրջանացում:

ԾԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱ, *Дендрология; dendrology*

Հունարեն բառ է, որը բաղկացած է dendron-ծառ, և logos- ուսմունք (զիտություն) արմատներից:

Բուսաբանության բաժին, որն ուսումնասիրում է ծառաթփային, դրանց մորֆոլոգիան և անատոմիական կառուցվածքը, կարգաբանական պատկանելությունը, ներքին կենսաբանական պրոցեսները, էկոլոգիական առանձնահատկությունները, աշխարհագրական տարածվածությունն ու տնտեսական նշանակությունը:

ԾԱՌԱԹՓԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Древесно-кустарниковая растительность; tree-bush vegetation*

Տե՛ս Անտառային բուսականություն:

ԾԱՌԱՆՄԲԱՅԻՆ ՏՆԿԱՐԿ, *Куртинное насаждение; clump plantation, cluster stand*

Ոչ մեծ տարածություններով ծառերի և քփերի բազմաշարք կամ խմբային տնկարկներ: Հիմնադրվում են լեռնալանջերին, գետաբերաններին, կղզյակների վրա, կարճատև հանգստյան վայրերում և այլուր:

ԾԱՌԱՆՈՒՄԲ, *Древесная группа; tree group (plantation group)*

Տե՛ս Տնկարկների խումբ:

ԾԱՌԱՊՍԱԿ, ՍԱՂԱՐԹ, *Крона деревьев; tree crown, canopy*

Ծառի ճյուղերից կազմավորված ամբողջություն: Նրա մեջ մտնում են նաև տերևները, ծաղիկները, պտուղները: Ծ.-ում տեղի են ունենում ծառի աճը և զարգացումն ապահովող հիմնական կենսական պրոցեսները (ֆոտոսինթեզ, շնչառություն, տրանսպիրացիա և այլն): Նրա չափը կախված է տեսակից, ծառի հասակից, աճման տեմպից, տեսակի գենետիկորեն ամրացած կառուցվածքային առանձնահատկություններից: Ծ. լինում է գնդաձև, բրգաձև, հովանոցաձև, լացող, փակող և այլն:

ԾԱՌԱՏԵՍԱԿ, *Древесная порода; tree specie*

Ծառային բուսատեսակ: Գոյություն ունեն ասեղնատերևավորներ (սոճի, եղևնի, կեճի, գիհի և այլն) և լայնատերևավորներ (կաղնի, հաճարենի, կեչի, լորենի և այլն): Ըստ անտառտնտեսական նշանակության ծառատեսակները լինում են անտառային,

անտառաքարելավող, զեղազարդ, պտղատու և այլն: Անտառագիտության տեսակետից ծառատեսակները դասվում են՝ զլխավոր (կաղնի, հաճարենի, սոճի և այլն), երկրորդական (թխկի, թեղի, հացենի և այլն) և ենթանտառային: Միևնույն ծառատեսակը, ելնելով ածանց պայմաններից, կարող է հանդիսանալ զլխավոր կամ երկրորդական: Անտառաշինությունում ընդունված է «զլխավոր» և «զերիշտող» ծառատեսակ հասկացությունը:

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԽԱՈՆՈՒՄ, *Смешение древесных пород; mixture of tree species*

Կատարում են արհեստական անտառտնկարկներ հիմնադրելիս, երբ օգտագործում են միևնույն տարածքում 2 և ավելի տեսակի ծառեր ու թփեր: Հիմնադրվող ապագա անտառի երկարակեցությունը, դիմացկունությունը, բնապահպանական հատկանիշները և բարձր արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն: Ընդունված է ծառատեսակների խառնման 2 տիպ՝ ծառաթփային, երբ տնկելիս կատարում են ծառերի ու թփերի խառնում, և ծառային տիպ, երբ օգտագործում են 2 և ավելի ծառատեսակներ: Երկու դեպքում էլ խառնուրդը կատարում են շարքերով կամ շարքամիջև՝ համաձայն նախօրոք մշակված սխեմայի:

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿՐԱՎՈՒԿԱՅՎՈՒՄԻՆՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱՎԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ),

Огнестойкость древесных пород; tree species fire-resistance

Պայմանավորված է ծառուտի կազմով, հասակով, շարահարկայնությամբ և ծառատեսակների առանձնահատկություններով: Հրդեհավտանգության տեսակետից առաջին տեղը զրավում են ասեղնատերևավորները՝ սոճին, խեժափիճին, եղևնին: Հաստ կեղև, բարձր սաղաթթ և խորաթափանց արմատներ ունեցող ծառատեսակների ավելի բարձր հրակայունությունը պայմանավորված է նրանց բնափայտում և տերևներում քրի մեծ քանակով: Ասեղնատերևավոր և սաղաթթավոր տեսակներից կազմավորված խառը ծառուտներն օժտված են բարձր հրադիմացկունությամբ:

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ, *Группа величин древесных пород; rate group of tree species*

Ծառատեսակների խմբավորումը ըստ բարձրության: Ընդունված է տարբերել.

I մեծության ծառեր, որոնց բարձրությունը հասնում է 25 մ և ավելի. եղևնի սովորական, խեժափիճի սիրիական, սոճի սովորական, հաճարենի արևելյան, կաղնի ամառային, թխկի սրատերև, բարդու գրեթե բոլոր տեսակները և այլն:

II մեծության ծառեր՝ 15-25 մ բարձրությամբ. կենի հատապտղային, կեչի թավոտ, բոխի սովորական, տանձենի սովորական, թխկի դաշտային, լորենի մանրատերև և այլն:

III մեծության ծառերն ունեն 7-15 մ բարձրություն. գիհի վիրգիյան, թխկի վրացական, պիստակենի քթատերև (խնկենի) և այլն:

IV մեծության ցածրած ծառեր, որոնց բարձրությունը չի գերազանցում 5(7) մ. սերկևիլենի սովորական, տխլենի սովորական, նշենի ֆենցլի, բալենի սովորական և այլն:

Միևնույն տեսակը, կախված էկոլոգիական պայմաններից, կարող է լինել տարբեր մեծության ծառ կամ թուփ, օրինակ, տեսակի տարածման արեալի ծայրամասերում (հյուսիսում և հարավում) և կենտրոնական մասերում, ինչպես նաև ծովի մակերևույթից տարբեր բարձրություններում:

ԾԱՌԱՏԵՍԱԿԵՆՐԻ ՔԱՄԵՏԱՊԱԼՈՒՄ, *Ветревальность древесных пород; tree species windblown*

Պայմանավորված է տեսակի արմատային համակարգի տիպով, հողային և սուպոգրաֆիկ գործոններով:

ԾԱՌԱՏԵՍԱԿԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Смена древесных пород; tree species rotation, tree species succession*

Միևնույն տարածքում ծառերի տեսակային կազմի փոփոխություն: Տեղի է ունենում անտառային բուսածածկի զարգացման ընթացքում (ավտոգեն փոփոխություններ) կամ կլիմայի, մարդու գործունեության, տարերային գործոնների, աճման պայմանների փոփոխման պատճառով (էկզոգեն փոփոխություններ): Ծառատեսակային կազմի ավտոգեն փոփոխությունները կատարվում են անտառային կենսացենոզի բարդ, հաճախ հակասական պրոցեսների հետևանքով և ընթանում են դանդաղ: Այն միջտեսակային պայքարի բարդ մրցակցության հետևանք է: Բնության մեջ գերակշռում են մարդու ներգործության հետևանքով (էկզոգեն) արագ ընթացող փոփոխությունները:

ԾԱՌՆՐԻ ԱՃ, *Прирост деревьев; increment of trees*

Բնափայտի նախորդ տարվա շերտի վրա ամեն տարի նոր շերտի ավելացումը, որը հանգեցնում է կամբիումի ընդհանուր շերտի և ծառի չափերի (բարձրություն, հաստություն, ծավալ) ավելացման: Ցուցանիշն արտահայտում է ծառի աճման դինամիկան և հնարավորություն է տալիս կանխագուշակելու Ծ.Ա. որոշակի ժամանակահատվածում:

ԾԱՌՆՐԻ ԱՃԱՆ ՊԱՍԵՐ, *Классы роста деревьев; tree increment classes*

Ծառերի աճի գնահատման ցուցանիշներ: Անգամ միատարր, միահասակ ծառուտներում ծառերը բարձրությամբ, տրամագծով, սաղարթի ձևով և այլ հատկանիշներով միմյանցից տարբերվում են: Ծառուտի գնահատման ժամանակ, ելնելով ծառերի աճից, նրանց խմբավորում են ըստ բարձրության և տրամագծի:

ԾԱՌԵՐԻ ԱՆԿՈՒՄ, *Отнод Ժըրեթեծ: tree attrition*

Ծառուտում ինքնանորոգման հետևանքով ծառերի մահացում: Հիմնական պատճառներն են՝ ժառանգական առանձնահատկությունները, տարրեր ծառերի փոխհարաբերությունները, աճման պայմանները և այլն: Միատարր ծառուտներում երիտասարդ հասակում, մինչև սաղարթի միակցումը, Ծ.Ա. հիմնականում հետևանք է միջտեսակային պայքարի, ընդ որում մահանում են թույլ, հիվանդոտ ծառերը: Սաղարթի միակցումից հետո Ծ.Ա. տեղի է ունենում հիմնականում առանձին անհատների միջև՝ լույսի, խոնավություն, հողի սննդառության նկատմամբ մրցակցության հետևանքով: Ծառուտի միակցությունից մինչև հատումացման փուլը միավոր տարածքում անկումը կազմում է ծառերի քանակի մոտ 95 %-ը: Հասունացումից հետո Ծ.Ա. հետևանք է նրանց անհատական ծերացման:

ԾԱՌԵՐԻ ԱՐԱՆՉՆԱԳՈՒՄ ՀԱՏԱՆ ՀԱՄԱՐ, *Отнод Ժըրեթեծ 8 րյծխյ: tree separation for cutting*

Տարածքային որոշակի սահմաններում հատվելիք ծառերի ընտրությունը, նրանց չափումները, նշումները: Ծառերի ընտրության եղանակը (համատարած կամ ընտրովի) կախված է նախատեսվող հատումների եղանակից: Աստիճանական, ընտրովի, սանիտարական և խնամքի հատումների դեպքում կատարում են ծառերի անհատական ընտրություն: Համատարած հատատեղային հատումների համար ընտրում են բոլոր ծառերը, բացի սերմնավորման և այլ նպատակների համար թողնված անհատներից: Ընտրությանը զուգընթաց կատարում են չափումներ՝ սպասվող անտառանյութի ծավալը, տեսականին և արժեքը որոշելու համար:

ԾԱՌԵՐԻ ԲԱԾԹՈՂՈՒՄՆ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ, *Отпуск Ժըրեթեծ на корню; out turn*

Անտառանյութի արժեքի վճարման կարգ, որը հաստատված է օրենսդրությամբ: Կիրառվում է մթերող կազմակերպություններից անտառանյութի արժեքը գործող գներով գանձելու համար: Գանձվում է ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական ծառատեսակների քնափայտի արժեքը: Նույն սակագնով քնափայտի արժեքը գանձվում է նաև քաղաքացիներին անտառանյութ բաց թողնելիս: Բնափայտի արժեքի վճարումից ազատվում են միայն խնամքի հատումներից կամ անտառի գնահատման և անտառշինական աշխատանքների ժամանակ հատված ծառերի քնափայտն օգտագործելիս:

ԾԱՌԵՐԻ ԳՅՈՒՄ, ԳԵՏՆԱՏԱՊԱԼՈՒՄ, *Валка Ժըրեթեծ: tree milling*

Արմատից ծառի կտրումը և զցումը նախատեսված ուղղությամբ: Փայտանյութի մթերումն սկսվում է Ծ.Գ.-ից: Նախատեսված ուղղությամբ ծառը վայր գցելու համար ծառաբնի հիմքում, հողի մակերեսից 30-40 սմ քարձրության վրա, կատարում են բնի հաստության 1/3-1/4 չափով կտրվածք և հատված կտորը հեռացնում, ապա կտրվածքի հակառակ կողմից բունը սղոցելով ապահովում են ծառի գետնատապալումը:

ԾԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԲԱՐՉՈՒԹՅԱՆ, *Категория (классификация)**деревьев по высоте; tree category (classification) by height*

Տե՛ս Ծառատեսակների մեծությունների խումբ:

ԾԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԿՐԱՅՏԻ, *Классификация деревьев по Крафту; tree classification by Kraft*

Բնորոշվում է ծառուտում ծառերի աճի ցուցանիշով: Բաժանվում են 5 դասի՝ առաջին դասի մեջ մտնում են գերաճ ծառերը, որոնց սաղարթը դուրս է գալիս ծառուտի ընդհանուր սաղարթից և գերիշխում է նրա վրա: Երկրորդ դասում՝ այն ծառերը, որոնք կազմում են ծառուտի հիմնական սաղարթը: Երրորդ դասի ծառերն իրենց բարձրությամբ մտնում են հիմնական սաղարթի մեջ, սակայն նրանց պսակն ունենում է ճնշված տեսք: 1-3-րդ դասի ծառերը կազմում են անտառի հիմնական սաղարթը: 4-րդ դասի ծառերի բարձրությունը հասնում է մինչև հիմնական սաղարթը, ունենում է ճնշված տեսք: 5-րդ դասի ծառերը գտնվում են հիմնական սաղարթի տակ, երբեմն լինում են կիսաշոր: Առանձին դասերում եղած ծառերի քանակը պայմանավորված է ծառուտի կազմով և հասակով: Տարբեր դասի ծառերի մասնակցությունն ընդհանուր պաշարի մեջ մոտավորապես կազմում է. 1-ին դասը սոճու միատարր ծառուտներում՝ 12 %, կաղնուտներում՝ 11-27%, 2-րդ և 3-րդ դասերը համապատասխանաբար՝ 50-60% և 48-71%: Մյուս դասերի մասնակցությունն ընդհանուր պաշարում չնչին է:

ԾԱՌԵՐԻ ԵՎ ԹՓԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅՈՒՄ, *Омолаживание деревьев и кустарников; rejuvenation of trees and bushes*

Խոր էտման եղանակ, երբ հին (ծեր) ծյուղերի փոխարեն խթանվում է երիտասարդ, ուժեղ շիվերի առաջացումը:

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ՋԵՐՍԱՍԻՐՈՒԹՅԱՆ, *Группировка древесных пород по теплолюбю; tree species grouping by thermophile feature*

Ընդունված է տարբերել ջերմասեր, ցրատադիմացկուն, միջին ցրատադիմացկուն և միջին ջերմասեր ծառատեսակների պայմանական խմբեր:

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ԱՏՎԵՐԱՏԱՐՈՒԹՅԱՆ, *Группировка древесных пород по теневыносливости; tree species grouping by shade-bearing feature*

Ծառերի մոտ ընդունված է տարբերել ստվերատար, լուսասեր, միջին լուսասեր: Լույսի նկատմամբ ունեցած պահանջը տեսակային մորֆոլոգիական հատկանիշ է, որն ազդում է ծառի սաղարթի, տերևի, կեղևի և այլ օրգանների ձևի կազմավորման վրա: Անկախ լուսասիրության աստիճանից, բոլոր տեսակի ծառերի մատղաշն ունակ է տանելու որոշակի ստվեր: Հասակի աճին զուգընթաց՝ պահանջը լույսի հանդեպ մե-

ծանում է և ծողանային հասակում ծառը ձեռք է բերում լույսի նկատմամբ տվյալ տեսակին բնորոշ պահանջ:

ԾԱՌԱՍՏՆԿԱՐԱՆ, *Расса́дник дре́весных поро́д, питомник; nursery seed plot*

Տնկանյութի բազմացման և աճեցման հատուկ տնտեսություն: Ըստ ենթակայության լինում է հանրապետական, քաղաքային, շրջանային: Ըստ նպատակային նշանակության՝ գեղազարդային, անտառային, պողատու, ինչպես նաև առանձին մշակաբույսերի (խաղողի, ցիտրուսների և այլն) աճեցման: Բաժիններն են՝ մայրական կամ դեմդրարի, բազմացման (բաց և ծածկած բնահող)՝ ցանքսային և պատվաստման քաժանունքներով, ձևավորման:

ԾԱՌԱՍՏՆԿԻՉ ՄԵՔԵՆԱ, *Деревопосадочная машина; tree planting machine*

Ծառափեր, պտղատու ծառեր, սերմնարույսեր, տնկաշիվեր ու խաղողի մատեր տնկող մեքենա: Լինում է միաշարք, երկշարք, կախովի կամ կցովի: Տնկիչների հեռավորությունը շարքերում կարող է տատանվել 0.5-1.5 մ, իսկ միջշարքայինը՝ 1.0-2.5 մ սահմաններում:

ԾԱՌԵՐԻ ԽԱՐԱՆՈՒՄ (ՆՇՎԱՐԿՈՒՄ), *Клеймение деревьев; tree branding*

Աճող ծառի, գերանի, կոճղի դրոշմումը հատուկ խարանով: Անտառտնտեսություններում խարանները երկզվխանի մուրճ են: Անտառի հատման կամ փայտանյութի քացթողման համար օգտագործվող մուրճի մի կողմում հինգթևանի աստղ է, մյուս կողմում «СП» տառերը (նշվարկվում է ինքնակամ հատումը): Անտառապետի և նրա օգնականի խարանի մի կողմում «П» տառն է, որով նշվարկվում է անտառանյութի քացթողումը, մյուս կողմում՝ «К» տառը: Տեխնիկի կամ վարպետի խարանի վրա «РУ» տառերն են, իսկ հակառակ կողմում թվանշան է, որը ցույց է տալիս անտառտնտեսության համարը: Խարանը դրվում է աճող ծառի բնին՝ 1.3 մ բարձրության վրա և հիմքում:

ԾԱՌԱՍՏԵՍԱԿՆԵՐԻ ՍՏՎԵՐԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, *Теневыносливость древесных пород; shade-bearing of tree species*

Ծառերի ունակությունը դիմակայելու լույսի թույլ ինտենսիվության պայմաններում: Պայմանավորված է տերևների անատոմիական կառուցվածքով և նրանցում քլորոֆիլի պարունակությամբ: Անատոմիական կառուցվածքի տեսակետից տերևները բաժանվում են՝ լուսային և ստվերային: Լուսային տերևները ստվերայինի համեմատությամբ լինում են 1.5-4 անգամ հաստ, տերևաթիթեղը կաշեկերպ, վերին մակերեսը՝ փայլուն, մուգ կանաչ գույնավորված, առատ հերձանցքներով (լուսային ասեղնատերևները լինում են խիտ, ուղղված դեպի վեր), քլորոֆիլի համեմատաբար քիչ քանակությամբ: Ստվերատար տեսակներ են լորենին, բոխին, հաճարենին, կենին, եղևնին և այլն:

ԾԱՌԵՐԻ ԵՎ ԾԱՌՈՒՄՆԻ ԸՆԹԱՅԻՆՎ ԱՃ, *Текучая прирост деревьев и древостоев; annual forest increment (basic increment)*

Որոշում են որոշակի տարիների (5-10 տարի) աճը բաժանելով տվյալ խմբի տարիների թվի վրա: Աճն ըստ բարձրության

$$z_h^{ըս} = \frac{h_a - h_{a-n}}{n}; \quad z_d^{ըս} = \frac{d_a - d_{a-n}}{n};$$

$$z_g^{ըս} = \frac{g_a - g_{a-n}}{n}; \quad z_v^{ըս} = \frac{v_a - v_{a-n}}{n}$$

որտեղ h_a , d_a , g_a , v_a ծառի բարձրությունն է, d -ն տրամագիծը, g -ն ընդլայնակի կտրվածքի մակերեսը (առանց կեղևի) և v ծավալը a հասակում, h_{a-n} , g_{a-n} , v_{a-n} նույն տարրերն են $a-n$ հասակում: n -ը հետազոտվող տարիների թիվն է (5-10 տարի):

ԾԱՌԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ, *Пересчет деревьев; tree counting*

Չափումներ, որոնք կատարում են ծառուտում ծառերի միջին տրամագծի, բարձրության, բնի մակերեսի գումարի, պաշարի որոշման նպատակով: Ծ.Գ. լինում է համատարած, երբ չափվում է տվյալ տարածքում եղած բոլոր ծառերի տրամագիծը, և մասնակի, երբ չափում են առանձին փորձափարակներում եղած ծառերը: Հաշվարկային մատյաններում, բացի տրամագծի տվյալներից, զրահնցվում է նաև ծառի պիտանիությունը (չինափայտ, կիսաչինափայտ, վառելափայտ):

ԾԱՌԵՐԻ ԵՎ ԾԱՌՈՒՄՆԻ ՄԻՋԻՆ ԱՃ, *Средний прирост деревьев и древостоев; mean annual increment of trees and stand*

Որոշում են հետևյալ բանաձևերով՝

1. Միջին աճը ըստ բարձրության (h)
$$z_n^{միջ} = \frac{h_a}{a};$$

2. Միջին աճը ըստ տրամագծի (d)
$$z_d^{միջ} = \frac{h_d}{a};$$

3. Ընդլայնակի կտրվածքի մակերեսի միջին աճը (g)
$$z_g^{միջ} = \frac{g_a}{a};$$

4. Միջին աճը ըստ ծավալի (v)
$$z_v^{միջ} = \frac{v_a}{a};$$

Այստեղ a ծառերի տարիքն է: Տնկարկի (ծառուտի) տարեկան միջին աճը հաշվարկ-

վում է $z_v^{օրգ} = \nu A / A$, որտեղ A ծառուտի հասակն է, νA ամկա պաշարը: Տվյալ հաշվարկի մեջ չի մտնում ծառուտի կյանքի ընթացքում խնամքի հատումներից և բնական անկումից ստացված բնափայտի ծավալը: Ծառուտի լրիվ արտադրողականությունը հաշվարկելու համար, որը հիմնականում կատարվում է հետազոտական աշխատանք-

ների ժամանակ, օգտագործում են $z_v^{օրգ} = \nu A + \sum m$ բանաձևը, որտեղ $\sum m$ խնամքի հատումներից և բնական անկումից գոյացած բնափայտի ծավալն է, որը երիտասարդ ծառուտներում կազմում է առկա պաշարի շուրջ 20%-ը. իսկ հասուն և զերհասուն ծառուտներում՝ մինչև 50 %-ը:

ԾԱՌԵՐԻ ՎԵՐԱՏՆԿՈՒՄ, *Пересадка деревьев; replanting of trees*

Պտղարևոծության և զեղազարդային պարտիզագործության ազդուեխնիկական միջոցառում: Զբոսայգիներ, պարտեզներ, պուրակներ ստեղծելու նպատակով կարճ ժամկետում ծառերը տեղափոխվում են մի տեղից մյուսը: Կիրառվում է վաղ գարնանը կամ ուշ աշնանը: Ծառերը վերատնկում են հողազանգվածով կամ առանց դրա: Հիմնականում կատարվում է բույսերի աճման վաղ շրջանում (սովորաբար 4-5 տրեկան): Հասուն ծառերի տեղափոխում հազվադեպ է կատարվում:

ԾԱՌԻ ՉԱՎԱԹ, *Вершина дерева; tree top*

Առանցքային և կողային երիտասարդ ճյուղերի բողբոջներից առաջացած ծառի վերին սաղարթի 1/3 կազմող մասը: Բնորոշվում է ճյուղերի տարեկան ինտենսիվ աճով, որոնք կրում են տերևների ընդհանուր զանգվածի մոտ 50%-ը: Ծ.Գ.-ին հատուկ է լուսային մորֆոլոգիական կառուցվածքը: Անտառզնահատման ժամանակ գազաթնային մասի բնափայտը, որը կազմում է պաշարի 5-23%-ը, չի ընդգրկվում տեսակաճու ընդհանուր հաշվարկի մեջ: Այն հանդիսանում է տեխնոլոգիական տաշելի հիմք, իսկ տերևներն ու ասեղնատերևներն օգտագործվում են վիտամինային ալյուր և քլորոֆիլային մածուկ պատրաստելու համար:

ԾԱՌԻ ՍԱՂԱՐԹԻ ՏՐԱՄԱԳԻԾ, *Диаметр кроны дерева; tree crown diameter*

Ծառի սաղարթի ընդլայնական չափսը, որը որոշվում է հողի մակերեսին նրա պրոյեկցիայով:

ԾԱՌԻ ՏԱՐԻՔ, *Возраст дерева; tree age*

Որոշում են ծառի հիմքում (արմատավազիկի մոտ) տարեկան օղակների քանակով: Ասեղնատերևավոր և կարծրատերևավոր օղակաճառվոր կառուցվածք ունեցող տեսակների տարեկան օղակները լավ տեսանելի են: Փափկատերևավոր, ցրիվանո-

թային տեսակների տարեկան օղակները, անկախ լայնությունից, դժվար նշմարելի են՝ բաժանման սահմանի թույլ արտահայտվածության հետևանքով:

ՕԱՌԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԹԻՎ, *Видовое число дерева; tree species number*

Որոշում են ծառի ծավալի (բունը ճյուղերի հետ միասին) և գլանի ծավալի հարաբերությամբ: Որպես գլանի մակերես ընդունում են տվյալ ծառի բնի մակերեսը 1.3 մ բարձրության վրա:

ՕԱՌԻ ՏՐԱՄԱԳԻԾ, *Диаметр дерева; tree diameter*

Անող ծառի տրամագիծը չափում են բնի 1.3 բարձրության վրա: Առանձին դեպքերում չափում են նաև հիմքում: Հանդիսանում է անտառզնահատման կարևոր ցուցանիշ:

ՕԱՌԻ ԵՎ ՏՆԿԱՐԿԻ ԸՆԴԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԻ ՍԱԿԵՐԵՍ (ԼՐԻՎՈՒԹՅՈՒՆ), *Площадь поперечного сечения деревьев и древостоев (полнота); basal area of tree and stand*

Ծառուտի (տնկարկի) անտառզնահատման ցուցանիշ, որը ցույց է տալիս 1.3 մ բարձրության վրա ծառերի բնի մակերեսների գումարը միավոր տարածքում՝ արտահայտված քառ. մ: Կատարվում է ծառերի համատարած կամ մասնակի չափումների

միջոցով՝ $\sum s = g_1 n_1 + g_2 n_2 + \dots + g_i n_i$, որտեղ g -ն բների մակերեսների գումարն է, n -ն ծառերի թիվը, i -ն բնի տրամագիծը համապատասխան սանդղակում:

ՕԱՌԻԿ, *Дерецо; small tree, sapling*

Մինչև 5(7) մ բարձրության հասնող միաբուն կամ բազմաբուն, ցածրածառ (նշենի, տիլենի, դժնիկ, սզնիներ, տանձենու որոշ տեսակներ):

ՕԱՌՈՒՂԻ, *Аллея; alley*

Իրարից հավասար հեռավորությամբ տնկված և թփերով եզրավորված հետիոտնի կամ տրանսպորտային ճանապարհ:

ՕԱՌՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ԲՈՒՏԵՏԵՏ, *Бонитет древостоя (насаждения); stand bonitet*

Տնկարկի (ծառուտի) արտադրողականության ցուցանիշ, որը պայմանավորված է անտառաճման պայմանների բարենպաստությամբ Տես՝ նաև անտառի բոնիտետ:

ՕԱՌՈՒՏ, *Древостой; stand*

Անտառային առանձին ֆիտոցենոզ: Ծառերի և թփերի համակեցություն, որն իր գնահատման տարրերով (կազմով, ծևով, հասակով, բոնիտետով և այլն) միատարր է և տարբերվում է շրջապատից: Իր մեջ ընդգրկում է մատղաշ, ենթանտառ, կենդանի

ծածկոց (խոտային կամ մամռային): Առանձին կանգնած ծառերը Շ. կոչվել չեն կարող: Շ. լինում է խառը, երբ նրա կազմավորմանը մասնակցում են 2 և ավելի ծառատեսակներ: Խառը ծառուտը անվանվում է գլխավոր կամ գերիշխող տեսակի անվամբ (կաղ: նուտ, բոխուտ, կեչուտ կամ կաղնեբոխուտային և այլն): Միատարր, երբ կազմավորված է հասակային մեկ դասի (10-20 տարի) պատկանող ծառերից, և տարահասակ, երբ կազմավորմանը մասնակցում են հասակային տարբեր դասերի պատկանող ծառեր: Ծ-ները լինում են պարզ, երբ բոլոր ծառերի պսակը դասավորված է մեկ հարթության վրա՝ առաջացնելով մեկ սաղարթ, և բարդ, երբ ծառերն առաջացնում են 2 և ավելի շարահարկի սաղարթ: Բարդ ծառուտներն օժտված են առավել բարձր արդյունավետությամբ ու բնապահպանական հատկություններով:

ՇԱՆՈՒՏԻ ԱՃԻ ՏԻՊ, *Tun pacma ծրեբոստա; stand growth type*

Անտառզնահատման ցուցանիշների (բարձրություն, տրամագիծ, տեսակային թիվ, բների կտրվածքի մակերեսային զուևար, պաշար, ծառերի քանակ և այլն) որոշակի ժամանակամիջոցում փոփոխությունների տեմպի և հետագծի թվային արտահայտություն:

ՇԱՆՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, *Продуктивность дрeбoстoя; stand productivity*

Չատուն տարիքում մեկ միավոր տարածքում բնափայտի (բուն, ճյուղեր), տերևների, արմատների, ենթանտառի, մատղաշի թափուկի պաշար: Կարևոր ցուցանիշ է ծավալային (մ³) կամ քաշային (տ) միավորներով: Շ.Ա. պայմանավորված է ծառատեսակով, աճման միջավայրով, լրիվությամբ և խտությամբ:

ՇԱՆՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ԲՆԱԿԱՆ ՇԱՐՔ, *Естественный ряд дрeбoстoя (насаждения); natural wood line*

Ծառուտներ, որոնք տարբերվում են հասակով, քայց օժտված են աճման ընթացքի և զարգացման կենսաբանական ու էկոլոգիական համակողմանի հատկանիշների միասնությամբ, ինչը հնարավորություն է ընձեռում մեկ ընդհանուր շարքում բնութագրելու նրանց անտառզնահատման առանձնահատկությունները որպես միևնույն հասակի տնկարկ և տտանալ այդ շարքի աճման ընթացքի մաթեմատիկական կամ գրաֆիկական պատկերը: Շ.Բ.Շ. օգտագործում են աճման ընթացքի արյուսակներ կազմելիս: Որպես հիմնական ցուցանիշ վերցվում է ծառի բարձրությունը հասակային տվյալ փուլում:

ՇԱՆՈՒՏԻ ԴՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԳՍԱԿԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ, *Классификация дрeбoстoеб по возрастным этапам; stand classification by age-stage*

Ելնելով տարբեր տարիքում ծառերի աճի և զարգացման առանձնահատկություններից՝ առանձնացվում են հասակային 5 փուլ՝ մատղա, ծողանային, միջին տա-

րիքի, հասունացող, հասուն և գերհասուն: Առաջին 3 փուլերի բացարձակ տարիքը պայամանվորված է տվյալ տեսակի երկարակեցությամբ:

ԾԱՌՈՒՄԻ (ՏՆԿԱՐԿԻ) ԼԱՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ, *Добротность древостоя (касаждаения); stand with good quality*

Ի տարբերություն բոնիտետի, ցույց է տալիս ոչ թե հողային պայմանները, այլ ծառուտի համակողմանի որակը: Անտառգնահատման ժամանակ Ծ.Լ.-յան փոխարեն հիմնականում օգտագործում են ծառուտի ապրանքայնություն կամ որակ հասկացությունները՝ արտահայտված դասերով: Վարակված չոր ծառերի առկայության դեպքում ծառուտի որակի դասը (ապրանքայնությունը) ընկնում է: Եթե պետք է կատարվի շտապ հատում, հատվող ծառերը նշվում են մատյանում կարմիր գույնի P տառով:

ԾԱՌՈՒՄԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ, *Освещение древостоя; cleaning*

Միակցված երիտասարդ ծառուտներում (տնկարկներում) կազմի կարգավորման նպատակով խնամքի հատումների կիրառում: Կատարում են մինչև 10 տարեկան (հյուսիսային շրջաններում՝ 20 տարեկան) տնկարկներում: Հատման համար ծառերի ընտրությունը կատարում են ելնելով ծառուտը ձևավորող կազմից, վիճակից և գլխավոր ծառատեսակների անտառաբուծական առանձնահատկություններից: Խառը և քարոլ երիտասարդ անտառներում հեռացվում են այն ծառերը (անկախ տեսակից, քարծրությունից, տրամագծից), որոնք խանգարում են ծառերի աճին: Լ. հատման ինտենսիվությունը կախված է տվյալ ծառուտի խտությունից, որակից, վիճակից և կազմից: Միատարր ծառուտներում նման հատումներից հետո սաղարթի միակցությունը 0.7 –ից չպետք է իջնի: Լ. հատումները կրկնում են 2-5 տարին, տայգայի անտառներում՝ 5-10 տարին մեկ անգամ, ինչը պայամանվորված է մատողաչի կազմով և վիճակով: Խառը ծառուտներում Լ. հատումները կատարվում են ավելի հաճախ, քան միատարր ծառուտներում:

ԾԱՌՈՒՄԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, *Густота древостоя; stand density*

Որոշում են մեկ հա-ում եղած ծառերի քանակով և քների հաստությամբ: Ծառուտը լինում է խիտ, միջին խտության և նոսր: Ընդունված է օգտագործել ծառուտում մատողաչի և ենթանտառի գնահատման նկարագրության ժամանակ: Ծ.Խ.-յան բացահայտումն ունի կարևոր նշանակություն անտառաշակույթների հիմնադրման և խնամքի հատումների ժամանակ: Որոշում են համատարած կամ փորձահրապարակներում եղած ծառերի հաշվարկով: Նրանով պայամանվորված է ծառերի աճը՝ քարծրությամբ և ընդլայնակի, բնի ինքնամաքրումը Ճյուղերից, ինքնանոսրացումը: Հասակին զուգընթաց ծառերի քանակը մեկ միավոր տարածքում պակասում է:

ԾԱՌՈՒՄՏԻ ԾԱԳՈՒՄ, *Присоставление древности; stand origin*

Լինում է քնական և արհեստական: Բնական ծագում՝ սերմնային, վեգետատիվ՝ կոճղաշիվային, արմատաընձյուղային: Արհեստական ծագում՝ հիմնադրվում են ցանքսի միջոցով, սերմնարուսակների, տնկիների ու կտրոնների տնկման եղանակով: Սերմնային ծագում ունեցող անտառներն օժտված են ասավել բարձր արդյունավետությամբ և երկարակեցությամբ:

ԾԱՌՈՒՄԻ ԿԱԶՄ, *Состав древности; stand composition*

Բնորոշվում է ծառուտի կազմավորմանը մասնակցող տեսակների և նրանցից յուրաքանչյուրի մասնակցության չափով ծառատեսակների կազմում: Որոշում են առանձին շարահարկերով՝ ցույց տալով յուրաքանչյուր տեսակի հարաբերությունն ընդհանուր պաշարի նկատմամբ, արտահայտելով բանաձևով, որտեղ բոլոր ծառատեսակների գործակիցների գումարը հավասար է 10-ի: Օրինակ՝ 10ս (սոճու միատարր ծառուտ) կամ 8 կ 2ք (կաղնու ծառուտ բոխու մասնակցությամբ, որտեղ բոխու պաշարը 20% է): Մատղաշում և երիտասարդ ծառուտում Ծ.Կ. որոշելիս հիմք են ընդունում ոչ թե պաշարը, այլ ծառերի ցանակական հարաբերությունը: Տարահասակային ծառատներում Ծ.Կ. որոշում են ըստ հասակային փուլերի, իսկ եթե հնարավոր չէ հասակային փուլերի բաժանումը, ապա փակագծի մեջ ցույց է տրվում տարիքը՝ 6ս/40/ 2կ/80/ 2ե/40/:

ԾԱՌՈՒՄԻ ՀԱՍԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, *Классификация древности по возрасту; stand classification by age*

Ծառուտը լինում է միահասակ, երբ այն կազմավորված է հասակային մեկ դասին պատկանող ծառերից, և տարահասակ, երբ ծառուտի կազմավորմանը մասնակցում են 2 և ավելի հասակային դասի պատկանող ծառեր:

ԾԱՌՈՒՄԻ ՀԱՍԱԿԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ, ԲՈՆԻՏԵՏԻ, ԼՈՒԿՈՒԹՅԱՆ, ՊԱՇԱՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՅՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ, *Таблицы классов возраста, бонитета, полноты, запаса и товарности древности (насаждения); stand tables of age, bonitet, basal-area, volume and marketability*

Կազմում են անտառի զնահատման արդյունքներով, յուրաքանչյուր ծառատեսակի համար՝ ելնելով անտառների կարգի և խմբի պատկանելությունից, անտառպետությունների, անտառռուսային բազաների, անտառշահագործման բաժինների, անտառտնտեսական մասերի համար առանձին, նրանց անտառային քառակուսիների հերթականությամբ:

ԾԱՌՈՒՄԻ (ՏՆԿԱՐԿԻ) ՉԵՎ, *Форма древности (насаждения); stand form*

Ըստ կառուցվածքի ծառատները լինում են պարզ, երբ կազմված են 2 և ավելի շարահարկերից: Պայմանավորված է ինչպես աճման պայմաններով, այնպես էլ ծա-

ռուտի կազմավորմանը մասնակցող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով: Աճման բարենպաստ պայմաններում ծակվորվում են բարդ ծառուտներ: Գյուսիսային շրջաններում, որտեղ կլիման ցուրտ է և վեգետացիայի տևողությունը կարճ ծառուտները պարզ են: Լուսասեր ծառատեսակները, շնորհիվ նոսր սաղարթի, որի միջով զգալի լույս է թափանցում, նպաստում են իրենց սաղարթի տակ աճելու համեմատաբար ստվերատար ծառատեսակների, որոնց և կազմավորում են անտառի երկրորդ և երրորդ շարահարկերը: Բնական անտառներում ծառուտի ձևը պայմանավորում են միջավայրի տարրերը, արհեստական տնկարկներում այն կանխատեսում է մարդն իր ընտրությամբ՝ համապատասխանեցնելով աճման պայմաններին:

ԾԱՌՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ՄԻՋԻՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, *Средняя высота древостоя (насаждения); stand average height*

Բարձր լրիվության անտառ, որի լրիվությունը 1.0-0.8 է: Բարձրաբուն ծառուտ. անտառ, որը կազմված է սերմնային ծազում ունեցող բարձրաբուն ծառերից:

Բարձրաբուն տնտեսություն. երբ անտառտնտեսվարումը տարվում է սերմնային ծազում ունեցող բարձրաբուն ծառուտ ստանալու նպատակով: Վերջինս համեմատած կոճղաշիվային ցածրաբուն ծառուտների հետ, օժտված է երկարակեցությամբ և բարձր արտադրողականությամբ:

Բարձրաչափ. աճող ծառի բարձրությունը չափող սարքեր: Օգտագործում են բազմաթիվ Բ. սարքեր՝ չափիչ երկճղի, ֆաուստմանի հեռաչափ և այլն, որոնց որոշման հիմքում ընկած է եռանկյունիների նմանության օրենքը:

ԾԱՌՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ՈՐԱԿԻ ՄՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՍ, *Класс качества товарности древостоя (насаждения); stand quality marketability class*

Ծառուտում բնափայտի ապրանքայնության ցուցանիշ: Որոշվում է շինափայտի ելքով: Օգտագործում են հասունացող և հասուն ծառուտների գնահատման ժամանակ: Սահմանված է Ծ.Ո.-ի 4 դաս՝

1. երբ շինափայտի ելքը 1 հա-ի պաշարում 70%-ից ավելի է ասեղնատերևավոր ծառուտներում և 45 %-ից ավելի՝ լայնատերևավորների մոտ,
2. համապատասխանաբար՝ 51-71% և 31-44%
3. 30-40% և 10-30%
4. 30 և 10%-ից պակաս:

ԾԱՌՈՒՏԻ ՊԱՇԱՐ (ԱՐՄԱՍԻ ՎՐԱ), *Запас древостоя (на корню stand growth stock (on root)*

Արտահայտում է ծառուտում եղած բոլոր ծառերի կամ մոդելային ծառերի ծավալի գումարը: Որոշվում է բոլոր ծառերի կամ մոդելային ծառերի չափումներով կամ այքաչափով: Ծ.Պ. հաշվարկելիս ծառերը դասակարգում են ըստ տրամագծի, ապա

բարձրաչափով որոշում են տարբեր ծառերի բարձրությունը: Խառը և բարդ ծառուտներում ծառերի դասակարգումն ու հաշվարկումը կատարվում է ըստ տեսակի: Ցրամագծի և բարձրության տվյալներով դուրս է բերվում յուրաքանչյուր հաստության աստիճանում միջին ծառի ծավալը, որը բազմապատկելով համապատասխան խմբում եղած ծառերի թվով՝ ստանում են այդ խմբի ծավալը: Տարբեր խմբերի ծավալների գումարը տալիս է արմատի վրա Ծ.Պ.: Այն արտահայտվում է

$$M = \sum QHF$$
, որտեղ $\sum \rho$ ծառերի բնի մակերեսի գումարն է արտահայտված մ², F տեսակային թիվը, իսկ H ծառերի միջին բարձրությունը:

ԾԱՌՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, *Высотная структура древостая (насаждения); stand form height*

Որոշվում է ծառուտի միջին բարձրության (H) և ծառուտ կազմող տվյալ տեսակի միջին բարձրության (F) արտադրյալով, նշանակվում է HF:

ԾԱՌՈՒՏԻ (ՏՆԿԱՐԿԻ) ՏՐԱՄԱԳԻԾ (ՄԻՋԻՆ), *Диаметр (средний) древостая (насаждения); stand average diameter*

Անտառզնահատման ցուցանիշ է: Միատարր և միահասակ ծառուտում միջին տրամագիծը հաշվարկվում է ծառերի բնի 1.3 մ բարձրության վրա կատարված չափումներով, խառը և բարդ ծառուտներում՝ ըստ տեսակների և շարահարկերի: Տարբեր շարահարկերում հանդիպող միևնույն ծառատեսակի բների հաստության տատանումները կրում են օրինաչափ բնույթ: Ամենաբարակ ծառի հաստությունը լինում է Ծ.Մ.Տ.-ից շուրջ 2 անգամ պակաս, իսկ ամենահաստ ծառինը՝ շուրջ 2.7 անգամ ավելի: Ծ.Տ. ցուցանիշը պայմանավորված է նրա հասակով և բոնիտետով: Այն ապրանքայնության դասի հետ միասին բնորոշում է ծառի տեսակն ու կազմը: Անտառի համատարած գույքագրման ժամանակ, եթե միջին տրամագիծը չի անցնում 32 սմ-ից, ծառերը դասակարգվում են 2 սմ տարամագծի տարբերությամբ, ավելի բարձր միջին տրամագծի դեպքում՝ 4 սմ տարբերությամբ: Փորձահրապարակներում չափելիս Ծ.Տ. հաշվարկում են 0.1 սմ ճշտությամբ:

ԾԱՌՈՒՏԻ ՏՐԱՆՍՊԻՐԱՅԻԱ, *Транспирация древостая; stand transpiration*

Ծառուտում եղած բոլոր ծառերի կողմից ֆիզիոլոգիական գոլորշիացման վրա ծախսված ջրի քանակը: Որոշում են ծառուտի ջրային հաշվեկշիռը հաշվարկելիս:

ԾԱՌՈՒՏՈՒՄ (ՏՆԿԱՐԿՈՒՄ) ԲՆԵՐԻ ԿՈՂԱՅԻՆ ՍԱԿԵՐԵՍ, *Боковая поверхность стволов в древостое (насаждения); stem lateral surface in stands*

Գնահատման ցուցանիշ: Ցույց է տալիս ծառուտում ծառերի կողային (կամքիալ շերտի) ընդահանուր մակերեսը: Օգտագործվում է ծառերի ընթացիկ աճը հաշվար-

կելիս՝ 1 հա-ի հաշվով 1000 ք.մ: Սիճևույն լրիվության և հասակի ծառատներում սովորաբար ծառերի կողային մակերեսն ավելի է, քան լուսասերներինը:

ԾԱՎԱԼԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ, *Массовые (объемные) таблицы; volume tables*

Ընդգրկում են ծառի բնի ծավալի տվյալները: Կազմված են հիմնականում 2 ցուցանիշներից՝ բարձրություն (մ) և տրամագիծ (սմ) 1.3 մ բարձրության վրա: Բարձրության հաջորդականությունն ընդունվում է 1 մ, իսկ տրամագիծը՝ 2 սմ (420 սմ հաստությամբ ծառերի համար): Բնի յուրաքանչյուր հատվածի համար բերվում է 3 ծավալային ցուցանիշ՝ վերին (ամենամեծը), բնի ձևի գործակիցը՝ 0.78, միջին գործակիցը՝ 0.68 և ներքին (ամենափոքրը) գործակիցը՝ 0.58: Եթե հայտնի են ծառի բարձրությունը, տրամագիծը և բնի ձևի գործակիցը, աղյուսակով կարելի է որոշել առանձին ծառի ծավալը: Սովորաբար օգտագործում են բնի ձևի միջին գործակիցը: Ծ. Ա. կազմում են յուրաքանչյուր ծառատեսակի համար առանձին:

ԾԱՎԱԼԱՅԻՆ ԲԱԼԱԶԵՎԵՐ, *Формулы объемные; volume formulas*

Ծառայում են ծառաբնի կամ նրա առանձին հատվածների ծավալի որոշմանը:

Ամենակիրառականը Գուբերի պարզ $V = \gamma \alpha$ / և բարդ $V = (\gamma_1 + \gamma_2 + \dots + \gamma_n) I$ + ծառի զագաթնային հատվածը/ բանաձևերն են, որտեղ V -ն հաշվարկվող ծավալն է, γ -ն բնի կամ գերանի միջին կտրվածքն է (պարզ բանաձևի համար) և բնի տարբեր հատվածների կտրվածքը (բարդ բանաձևի համար), α -ն բնի (կամ գերանի) երկարությունը, I -ն մտովի հատվող առանձին հավասար հատվածների (սովորաբար 1-2 մ) երկարությունը:

ԾԵՐՍՏՈՒՄ, *Кильчевание; tree plants roots ceasing in nurseries*

Տնկարաններում ծառային սերմնարույսերի արմատիկների հատումը ժլման փուլում: Նպատակ ունի խթանել արմատագոյացումը: Փեղազարդային նպատակներով հաճախ ծեբատում են նաև սերմնարույսերի զագաթնային հատվածը:

ԾԻԼԵՐ (ՍԵՐՄՆԱԾԻԼԵՐ, ՍԵՐՄՆԱԲՈՒՄԱԿՆԵՐ), *Всходы; shoots*

Սերմերի կամ բույսի վեգետատիվ բազմացմանը ծառայող որևէ այլ օրգանից (պալարից, սոխուկից և այլն) առաջացած, արմատային համակարգ և առաջին զույգ կանաչ տերևներ ունեցող ինքնուրույն բույսեր, որոնք սնվում են նաև սերմի կամ ձևափոխված օրգանի մեջ գտնվող պահեստային սննդանյութերով:

ԾՈՒԾ, *Сердцевина; pith stock, heartwood*

Բնի, ճյուղի և արմատի կենտրոնում գտնվող հիմնական պարենքիմային հյուսվածք: Ծ., ինչպես նաև սկզբնական կեղևը, փուխր կառուցվածքի անգույն, երբեմն

կանաչավուն հյուսվածք է: Բնակաշտային տեսակների Ծ. հիմնականում պահպանվում է մինչև կյանքի վերջը: Որոշ տեսակներինը քայքայվում է մեկ (օր.՝ կտտկենի) կամ մի քանի տարվա (կաղնի) ընթացքում: Ծ. ծառայում է որպես պաշարող օրգան:

ԿԱԼՅՈՒՄ, *Каллюс (с/х); callus, tylosis*

Հյուսվածք, առաջանում է բնափայտային բույսերի վնասված տեղերում, կտրվածքներում՝ նպաստելով նրանց փակմանը: Կազմված է բարակ պատերով պարենքիմային բջիջներից, որոնք առաջանում են վնասված մերիստեմայից: Կ-ի բջիջների շնորհիվ վերականգնվում է կամբիումի ամրողջականությունը: Նրա արտաքին բջիջները խցանվում են՝ առաջացնելով կամբիումի պաշտպանական շերտ՝ պերիդերմա: Մաավորում է հավելյալ արմատներ և բողբոջներ՝ ապահովելով վնասված կամ կտրված բույսերի կենսագործունեությունը:

ԿԱԾԱՆ (ԱՆՏԱՌՈՒՂԻ), *Просека; clearance*

Անտառում ծառերից ազատված շերտ, որն անց է կացվում էլեկտրահաղորդանալ լարերի, գազամուղի երկայնքով, անտառի քառակուսիների ու անտառաժամասերի սահմաններն ընդգծելու և այլ նպատակներով: Անտառում ճիշտ կողմնորոշվելու համար միջքառակուսային Կ.-ներն անց են կացնում հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք: Կ.-ի սկզբնամասում դրվում են սյուներ, որոնց համարակալումը կատարվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Կ.-ի լայնությունը 4-8 մ է: Կ.-ները պարբերաբար մաքրում են մնացորդներից, հողը պահում հանքայնացված վիճակում:

ԿԱՂՄԱՍԽՈՒ ԱՆՏԱՌՆԵՐ, *Осиновые леса; aspen forests*

Անտառներ, որոնց կազմում գերակշռողը կաղամախին (դոդոդուն կամ անտառային բարդին) է: Նախկին ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր 18.5 մլն հա՝ 2.6 միլիարդ խոր.մ բնափայտի պաշարով:

ԿԱՂԻՆ, *Желудь; acorn*

Կաղնու միասնոր պտուղ, ամուր շագանակագույն կեղևով: Չը՝ երկար սիգարանմանից մինչև կլորավուն: Չափսերը՝ մի քանի մմ-ից մինչև 5-6 սմ: Աերմնաշաքիլները հարուստ են հեշտ յուրացվող ածխաջրերով (մինչև 50 %), հիմնականում օսլայով և դաբաղանյութերով: Մեծ քանակի սննդանյութերի պարունակության շնորհիվ Կ.-ների զգալի մասը ծլում է առանց հանգստի շրջան անցնելու: Մեկ հա կաղնուտից ստացվում է 500 կգ-ից մինչև 2 տոննա բերք: Ցանքսի համար Կ. պահում են հատուկ սերմապահեստներում՝ +2-4° C ջերմության պայմաններում:

ԿԱՂՆՈՒՏ, *Дубрава; oak-wood, oak forest*

Կաղնու անտառ:

ԿՍՄԱՎՈՐ ԸՆՏՐՈՒՄ ԴԱՏՈՒՄ, *Добровольно-выборочная рубка; selective improving cutting*

Ընտրովի հատման տարատեսակ: Կիրառվում է ինտենսիվ անտառտնտեսվարման պայմաններում: Կ.Ը.Գ.-ման ժամանակ առաջին հերթին հատվում 'են հիվանդ, գերհասուն, ինչպես նաև ճնշված և ճ ունեցող ծառերը: Ապահովում է ծառերի անընդմեջ վերականգնումը և շահագործումը: Պայմաններ է ստեղծում տարահասակային և բազմաշարահարկ ծառուտների առաջացման, պաշտպանական և սանիտարահիգիենիկ հատկությունների բարելավման համար: Հատման փուլերի հաջորդականությունը 5-10 և ավելի տարի է՝ պայմանավորված ծառերի վիճակով և վերկանգնման ընթացքով: Հատման մեկ փուլում վերցվում է պաշարի 15-20%-ը:

ԿԱՄԱՐ, *Арка; arc*

Կամարակերպ կառուցվածք պարտեզպուրակային ճարտարապետության մեջ (փաթաթվող րույսերով պատված քարե, երկաթե, փայտե կամար):

ԿԱՄԲԻՈՒՄ, *Камбий; cambium*

Բույսի առաջնային հյուսվածք, որից առաջանում են երկրորդական փոխադրող հյուսվածքները, քսիլեման և ֆլոեման՝ ապահովելով բնափայտային րույսերի ընդլայնական աճը: Կ. մեղ շերտով ընդգրկում է բնափայտը, իսկ արտաքին մասով շրջափակվում ֆլոեմայի շերտով և որոշակի հաջորդականությամբ առաջանում է դեպի ներս բնափայտի նոր շերտ (կտրվածքում տեսանելի է որպես տարեկան օղակ), իսկ դեպի դուրս՝ ֆլոեմա (լուր):

ԿԱՍԱԿ ԳՈՏԻ, *Зеленая зона; green zone*

Քաղաքների սահմաններից դուրս գտնվող բնական կամ արհեստական անտառներ, տնկարկներ, անտառ պարկեր: Նպաստում է օդային ավազանի բարելավմանը, պաշտպանում քաղաքները քամիներից, փոշուց, շարժվող ավազից և բնական անբարենպաստ այլ գործոններից, ծառայում է նաև որպես հանգստի գոտի:

ԿԱՍԱԿ ԹԱՏՐՈՆ, *Зеленый театр; green theatre*

Բացօթյա ներկայացումների համար նախատեսված կառույց: Ստեղծվում է զբոսայգիներում և պարտեզներում՝ տեղանքի բնական ռելիեֆի օգտագործմամբ: Որպես պատեր օգտագործվում են կենդանի ցանկապատեր կամ հատուկ հենակների ու հենքերի վրա փաթաթվող լիաններ:

ԿԱՍԱԿ ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՃԵՆԵՐ, *Инженер зеленого строительства; engineer of green construction*

Կանաչ շինարարության ասպարեզի բարձրագույն որակավորմամբ մասնագետ: Նախագծում և իրագործում է կանաչապատման օբյեկտների շինարարությունը, ծառային և ծաղկային տնկանյութի աճեցումը:

ԳՆԱԸՉ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԳԱՄՈՒԲՈՒՄ, *Реконструкция объектов зеленого строительства; green construction*

Ջրոսայգու, պարտեզի, պուրակի, բնակելի շրջանի կանաչապատման վերակառուցման համալիր միջոցառում: Կատարվում է տնկարկների փոխարինում, ծառուղակածանային ցանցի մասնակի փոփոխում, առանձին կոմպոզիցիոն խմբերի վերապլանավորման նախագծային առաջարկությունների մշակում և, վերջապես, պատմական զբոսայգու կամ պարտեզի տեսքը պահպանված տարրերով կամ նկարագրություններով, փորագրանկարներով և այլնով վերականգնում:

ԿԱՆԱԸ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, *Зеленое строительство; green constuction*

Տնտեսության ճյուղ, քաղաքաշինության բաղկացուցիչ բաժին: Ընդգրկում է կանաչապատման տարրեր տիպերի ու կատեգորիաների ստեղծման համակարգը: Նպատակ ունի բնական միջավայրը մոտեցնել մարդուն: Կանաչ շինարարության խնդիրներն են՝ քաղաքային միջավայրի սանիտարահիգիենիկ մակարդակի բարձրացումը, քաղաքի, բնակավայրի, ամբողջ լանդշաֆտի գեղագիտական տեսքի հարստացումը, աշխատանքի, կենցաղի և հանգստի համար հարմարավետ պայմանների ստեղծումը, արդյունաբերության անբարենպաստ ազդեցությունից շրջապատող միջավայրի պահպանումը, օդի ջերմաստիճանի կարգավորումը:

ԿԱՆԱԸ ՊԱՏ, *Зеленая стена; green wall*

Խիտ տնկված ծառերից ու թփերից ստեղծված հատուկ կառուցվածք, որը պարսպում է զբոսայգու, պարտեզի, տնտեսության մի հատվածը, առաջացնելով խիտ, անանցանելի շերտ:

ԿԱՆԱԸ ՊԱՐԱՐՍԱՅՈՒՄ, *Зеленое удобрение; green fertilizing, green singling*

Պարարտացման հատուկ ծա: Պարարտացվող հողամասում աճեցվում են տերևացողունային հարուստ զանգվածով թիթեմնածաղկավոր բույսեր (մաշ, շամբալա): Ծաղկման շրջանում հողը հերկելով, բույսերը վարելաշերտի տակ են տալիս, որտեղ դրանք քայքայվելով հողը հարստացնում են օրգանական նյութերով և ազոտով:

ԿԱՆԱԸ ՍԱԾԻՆՈՒՄ (ԵԻԹԻՆՈՒՄ), *Зеленая пикуровка; green singlingtands*

Սածիլում՝ գլխավոր արմատի ծերատումով:

ԿԱՆԱԸ ՏՆԿԱՐԿ, *Зеленое насаждение; green stand*

Բոլոր տիպերի և կատեգորիաների կանաչապատ տարածություն: Ստեղծվում է գեղագիտական, սանիտարահիգիենիկ, կլիմայակարգավորիչ նպատակներով:

ԿԱՆԱՉ ՏՆԱԿՈՒԿՆԵՐԻ ԽՆԱՍՔ, *Уход за зелеными насаждениями; green stands management*

Քաղաքների կանաչ ֆոնդի պահպանման համար կիրառվող միջոցառումներ՝ հողի մշակում, քնի և սաղարթի ձևավորում, մարգախտների ու ծաղկանոցների ձևավորում ու խնամք, ճանապարհային ցանցի, անցուղիների, եզրապատերի, ջրավազանների և այլ օբյեկտների կառուցում, քարեկարգում և այլն:

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ, *Календарь озеленительных работ; greening activities calendar*

Գեղազարդային բույսերը տնկելու և խնամելու աշխատանքներն ըստ տարվա եղանակների, բույսերի կենսաբանական առանձնահատկությունների և տեղանքի կլիմայական պայմանների բաշխելու ժամանակացույց պլան:

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿ, *Прием озеленения (метод); greening method*

Կանաչապատման ձևավորման համակարգ: Ընդգրկում է հատակագծային (լանդշաֆտային կոմպոզիցիա, կանոնավոր և ազատ հատակագծում) և ազդոտխնդիկական (ծառերի, քիերի, ծաղկաբույսերի տնկման, դրանց խնամքի, սիզամարզի ստեղծման տեխնոլոգիական կանոններ) եղանակներ:

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ, *Категория озеленения; greening category*

Գործառական կարևոր նշանակություն ունեցող խոշորամասշտաբ տնկարկ (զբոսայգի, պուրակ, անտառպուրակ, անտառայգի, պաշտպանիչ կանաչ գոտի, բուսաբանական այգի, կենդանաբանական այգի, հատուկ նշանակության այլ տնկարկներ և այլն):

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ, *Система озеленения; greening system*

Ընդհանուր հատակագծային կառուցվածքին ու բնակչության մշակութա-կենցաղային սպասարկման համակարգին ներդաշնակ կանաչապատման օբյեկտների կազմակերպված, փոխակապված տեղադրում բնակավայրի և քաղաքամերձ գոտու տարածքում: Այդ համակարգի ստեղծման և ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ կանաչապատման օբյեկտների տեղադրման համապետությունը և հավասարամատչելիությունը, տնկարկների անընդհատությունը, փոխակապվածությունը:

ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՆՈՐՄԱ, *Норма озеленения; greening norm (standart)*

Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող կանաչապատ տարածքի նվազագույն քանակը՝ արտահայտված քառակուսի մետրերով (500 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքի համար այն կազմում է 21 մ², 250-500 հազար բնակիչ ունեցող քաղաքի համար՝ 14 մ², մինչև 30 հազար բնակիչ ունեցող բնակավայրերի համար՝ 12 մ²):

ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ՏԱՐԻ, *Элемент озеленения; greening element*

Տարրեր հողամասերի ձևավորման համար օգտագործվող ծառեր, (տնկված և առանձին-առանձին, խմբերով, զանգվածներով, շարքերով), ծաղկանոցներ, սիզամարգեր, զանազան խոտաբույսերի խմբավորումներ, քարաբլուրակներում, բուսարկղերում, ծաղկամաններում, արկղերում տնկված ջերմոցային բույսեր:

ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ՏԻՊ, *Тип озеленения; greening type*

Կանաչ տնկարկների բաղադրիչ մաս՝ զանգված, խումբ, մենածառ, ծառուղի, կենդանի ցանկապատ, եզրաշերտ, ուղղաձիգ կանաչապատման տնկարկ, ալպինարիում, քարապարտեզ, երկարածաղկուն, մշտածաղկուն պարտեզներ և այլն:

ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ՏՆԿԱԳԾԱԳԻՐ, *Посадочный чертеж озеленения; greening planting drawing*

Կանաչապատման օբյեկտի աշխատանքային գծագիր: Մովորաբար կազմվում է 1:500, 1:250 մասշտաբով և նախատեսվում է տնկման վայրերը ծառեր, թփեր, ծաղկաբույսեր տեղափոխելու համար: Կից ցուցակում նշված են լինում փոսերի, խրամատների կտրվածքները, արմատամերձ գուղձի և տնկատեղերի չափսերը:

ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏ, *Объект озеленения; greening object*

Որոշակի հատակագծային համակարգով կազմակերպված տարածք (պուրակ, պարտեզ, զբոսայգի և այլն): Կանաչապատման համակարգի հիմնական կառուցվածքային տարր:

ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ԲԱԺԱՆԻՉ ԳԾԵՐ, *Разделительные линии проекта объекта озеленения; dividing (separating) lines for greening object projection*

1:500 մասշտաբի, այդ թվում նաև առանձին մանրամասերը 1:10, 1:20, 1:50 մասշտաբի աշխատանքային գծագիր: Համաձայնեցված է քաղխային գծերի հետ, նշում է հատակագծման բոլոր տարրերի չափսերը: Վերջիններս բաժանիչ գծագրից գեոդեզիական մեթոդների օգնությամբ տեղափոխվում են քնական միջավայր: Բաժանիչ գծագրի վրա տրվում է տարածքի հաշվեկշիռը, ճեմուղիների, հրապարակների կառուցվածքը, ճանապարհների լայնակի կտրվածքը:

ԿԱՆԱԶՄՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, *Водоснабжение объекта озеленения; water supply of greening object*

Տնկարկների ոռոգման, տնտեսական նպատակներով ջրամբարի լցման, ինչպես նաև այցելուներին խմելու ջրով ապահովելու համար ջրատարի շինարարական աշխատանքներ:

ԳՆԱԿՉԱՊԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԱՐԱԾՔ, *Territoria ob'ekta ozeleneniya; greening object territory*

Կարմիր գծերի սահմաններում տվյալ օբյեկտի հատակագծային տարրերն ընդգրկող տարածք: Օրինակ՝ գյուղատնտեսական հողահանդակներով սահմանափակված անտառապուրակ, փողոցներով սահմանափակված պուրակ և այլն:

ԿԱՆԱԿՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆԿԵԿԵՒՈՒ, *Баланс территории объекта озеленения; balance of greening object territory*

Տնկարկների, ծառուղիների, ճանապարհների, հրապարակների, շենքերի, կառույցների, ջրամբարների հատակագծային տարրերի մակերեսների քանակական հարաբերակցությունը: Արտահայտվում է բացարձակ (մ², հա) և հարաբերական (%) մեծություններով:

ԿԱՆԱԿՉԱՊԱՏՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՈՒՂՂԱԶԻԳ ՀԱՏԱԿԱԳՃՈՒՄ, *Вертикальное проектирование объектов озеленения; vertical project of greening object*

Կոնսրվացիոն նպատակներով ռելիեֆի ձևափոխման ու հարմարեցման, տարածքի մակերեսային հոսքի կազմակերպման, գոյություն ունեցող արժեքավոր բուսականության և հողածածկի պահպանման նպատակով կիրառվող կոմպլեքս միջոցառումներ: Դրանք թվին են պատկանում աստիճանների, հեմարանային պատերի ստեղծումը, հեղեղուտների լցումը, ջրամբարների փոսերի փորումը:

ԿԱՆԱԿՉԱՊԱՏՎՈՂ ՏԱՐԱԾՔ, *Озеленяемая территория; greening territory*

Տնկարկներով՝ ծառերով, թփերով, սիզամարգով, ծաղկանոցներով զբաղեցված տարածություն: Այս կատեգորիայի մեջ չեն մտնում ճեմուղիների, հրապարակների, կառույցների զբաղեցրած տարածքները:

ԿԱՆԱԿՉԱՊԱՏՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՈՌՈՂՈՂՄ, *Орошение озеленяемой территории; irrigation of greening territory*

Չորային պայմաններում բույսերի կենսագործունեության ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների կոմպլեքս:

ԿԱՆԱԿՉԱՊԱՏՈՒՄ, *Озеленение; greening, green construction*

Տե՛ս Կանաչ շինարարություն:

ԿԱՆԳՈՒՆ ԾԱՌԵՐԻ ԳԻՆ, *Стоимость леса на корню; stumpage price*

Ծառերի (անտառի) արժեքը արմատի վրա: Այն չի ընդգրկում հատումից հետո սնտառվերականգնման հետ կապված ծախսերը:

ԳԱՆՐՅՈՒ, ԲԵՎԵԿԱՆՈՒՆԵԾ, *Канифоль; rosin, colophony*

Ասեղնատերև ծառերի խժժանյութերի կարծր մաս, որն ստացվում է քեկնայուղի թորումից: Օգտագործվում է թղթի և ատվարաթղթի սուսնձման համար, սինթետիկ կաուչուկի, ռետինի, պլաստմասաների, արհեստական կաշվի, լինոլիումի, օճառի, լաքերի և ներկերի արտադրությունում, որպես հալանյութ՝ գողելիս:

ԿԱՆՈՆԱՎՈՐ ՊԱՐՏԵԶ, *Регулярный сад; regular garden*

Կանոնավոր աճի պարտեզ: Նրանում բույսերը, կաժանները, ջրամբարները, ծաղկաթմբերը և այլ տարրերը տեղադրված են զուգաչափորեն:

ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀՍԱՎԱԳԾՈՒՄ, *Регулярная планировка; regular planning*

Պարտեզպարակային արվեստի ոճ: Ակզբնավորվել է հնագույն ժամանակներում (Բաբելոն) և լայն տարածում ստացել Իտալիայի և Ֆրանսիայի XVI-XVIII դարերի պարտեզներում: Աչքի է ընկնում երկրաչափական ճիշտ ուրվագծերի օգտագործմամբ՝ ծառուղիների, ճանապարհների ուղիղ գծերով, զուգաչափ կոմպոզիցիաներով, բույսերի շարային տնկարկներով, ճարտարապետական մանր ձևերի, ջրային տարածությունների ասկայությամբ: Բույսերը դիտվում են որպես խիստ որոշակի արտաքին ձև և դասավորություն ունեցող շինանյութ:

ԿԱՏԵԳՈՐԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Категорийность; categoriality*

Զրոսայգու կոմպոզիցիայի ընդհանուր համակարգում աչքի ընկնող, իշխող տարր: Զրոսայգու կոմպոզիցիայում առանձնացվող տարրը (տնկարկներ, խմբեր, ճարտարապետական կառույցներ, ծաղկանոց-պարտեզներ...), որը ամենից ավելի է աչքի ընկնում, իշխող է: Կատեգորիականության գործոնը վերաբերում է նաև զրոսայգու կոմպոզիցիայի գունեղությանը: Իշխող գունավորումը պետք է որոշակիորեն աչքի ընկնի այն ժամանակ, երբ մյուս գույները նպաստում են դրան: Եթե այցելուն առաջին իսկ հայացքից չկարողանա որոշել զրոսայգու կոմպոզիցիայի ամենակարևոր տարրը, ապա նշանակում է, որ նրա Կ.-ը անորոշ է:

ԿԱՐԾՐԱՏԵՐԵՎԱՎՈՐ ԱՆՏԱՐ, *Жестколиственный лес; sclerophyllous forest, hard-leaved forest*

Մշտադալար անտառներ, զխավորապես կազմավորված քսերոֆիլ կարծրատերևավոր ծառերից: Տարածված է մերձարևադարձային գոտում զբաղեցնում է անտառների ընդհանուր տարածքի 3% ը: Առանձնապես բնորոշ է միջերկրածովյան շրջաններին, որտեղ անտառները հիմնականում կազմավորված են մշտադալար կաղնիներից, պիստակենուց, ձիթենուց, փշատենուց և այլն:

ԳԱՐԾՐԱՏԵՐԵՎՎՈՐ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ, *Твердолиственные древесные породы; hardwood tree species*

Տերևավոր ծառատեսակներ, որոնք օժտված են ամուր բնափայտով (ոռիմիա կեղծակցիա, րոխի, կաղնի, հաճարենի, հացենի, վրացական թխկի և այլն):

ԿԱՐՏՈՐՅԱ ԲՈՒՅՍԵՐ, *Короткодневные растения; plants of short days*

Աճի և զարգացման համար կարճ լուսային օր պահանջող (առավելապես հարավային լայնությունների) բույսեր:

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔ (ԲՈՒՅՍԵՐԻ), *Красная книга; Red Book*

Միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղիկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և դրանց համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:

ԿԱՌԻԼՆՆՈՐԻԱ, *Каулифлория; cauliflora*

Ծառի բնի քնած բողբոջներից ծաղիկներ առաջացնելու բույսերի կենսաբանական ունակությունը: Հատուկ է արևադարձային ծառաբուսականությանը (կակաոյի ծառ, հուդայածառ):

ԿԵԳԼԱՐԱՇՏ, *Боулингрин; bowling field*

Ապրտային տիպի հատուկ սիգամարզ կեզվախաղի համար: Կենտրոնական մասը տափակ փոսորակի տեսք ունի: Օգտագործվում է զբոսայգիների և պարտեզների ընդարձակությունը ընդգծելու համար:

ԿԵՂԾ ՄԻՋՈՒԿ, *Ложное ядро; false heart*

Բնափայտի տարածված արատ: Արտաբնափայտային կամ հասուն բնափայտային տեսակների բնի միջին մասի գորշ գունավորում, որը նմանվում է միջուկի: Աճող ծառի Կ.Մ. սովորաբար առաջանում է ծառի վնասված մասերից տարբեր սնկերի ներթափանցման հետևանքով: Կերջիններս, առաջացնելով որոշ նյութեր, օքսիդացնում են բիջները՝ փոխելով նրանց գույնը: Կ.Մ. հաճախ նկատվում է հաճարենու, կեչու, կաղամախու և այլ տեսակների մոտ: Ցարբեր տեսակների մոտ ունենում է տարբեր գունավորում: Եթե բնափայտում փոման երևույթներ չկան, Կ.Մ. բացասաբար չի ազդում բնափայտի տեխնիկական հատկությունների վրա:

ԿԵՆՂԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՐ, *Зоологический сад; zoological park (garden)*

Հատուկ նշանակության այգի, որտեղ պահպանվում են կենդանական աշխարհի տեղական և ներմուծված ներկայացուցիչներ: Հաշվի առնելով կենդանիների կեն-

սահկրողիական առանձնահատկությունները և այգու ծանրաբեռնվածությունը այցելուներով, ձևավորվում է կանոնավոր կամ լամդաֆտային հատակագծմամբ:

ԿԵՆԴԱՆԻ ԾԱԾԿՈՑ, *Живой покров; alive cover*

Անտառի սաղարթի տակ աճող խտաբույսերի, մամուլների, քարաքոսերի, կիսաթփերի և թփիկների համակեցություն: Կ.Ծ.-ի կազմը և բնույթը պայմանավորված է հողային, կլիմայական, տոպոգրաֆիական գործոններով, անտառում վայրի կենդանիների քանակով, մարդու տնտեսական գործունեությամբ և այլն: Կ.Ծ. միջավայրի պայմաններն արտահայտող ցուցանիշ է, միաժամանակ ազդում է հողի միկրոկլիմայի, անտառի սերմնային վերակազմման ու ծառուտի զարգացման վրա: Խտաբույսերի որոշ տեսակներ, դարերի ընթացքում հարմարվելով որոշակի պայմանների, հանդիսանում են առանձին ծառուտների ուղեկիցը: Կ.Ծ.-ի կազմը և տարածվածությունը պայմանավորված է ծառուտի հասակով, լրիվությամբ և սաղարթի միակցվածության աստիճանով: Դաշտավայրկազգի խտաբույսերից կազմավորված Կ.Ծ. բացասաբար է ազդում հողի ջրաֆիզիկական հատկությունների և քիմիական կազմի վրա: Տարատեսակային խտաբույս բուսածածկը, ընդհակառակը, ունի դրական ազդեցություն: Կ.Ծ. ազդելով հողի և հողի մակերես հասնող լուսային էներգիայի վրա՝ դրական կամ բացասական ներգործություն է թողնում անտառի սերմնային վերակազմման և մատղաշի զարգացման վրա:

ԿԵՆԴԱՆԻ ԴՈՂԱԾԱԾԿՈՑ, *Напочвенный живой покров; ground alive cover*

Sb՝ս Կենդանի ծածկոց:

ԿԵՆԴԱՆԻ ՑԱՆԿԱՊԱՍ, *Живая изгородь; alive fencing*

Ձևավորվող և ազատ աճող ծառերից կամ թփերից (երբեմն՝ դրանց զուգակցումից) կազմված հոծ, անանցանելի տնկարկ: Սովորաբար խուզման միջոցով դրան տրվում է կանաչ պատի ձև: Կ.Ց.-ների համար օգտագործվում են լավ խուզվող բույսեր (սզնի, գլեղիչիա, չմենի, կենսածառ արևելյան, կիպրոս և այլն), ինչպես նաև լիաններ (կուսախաղող, մշակովի խաղող, մամրիչ և այլն):

ԿԵՆԿՈՆԵ, *Кенконе; kenkone*

Չնզյակներով ծառերի տնկման եղանակ: Իրար մոտեցված շարքերով և մի գծով սաղարթը խուզված, ներքևում քաց բներով տնկում, որն ապահովում է անկյունագծային ուղղություններով բների միջև տեսանելիությունը: Այս եղանակը օգտագործվել է հին Դոմոսի պարտեզների ձևավորման ժամանակ:

ԿԵՆՍԱՌԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ, *Биопродуктивность; bioproductivity*

Որոշակի տարածքում կենդանի օրգանիզմների առաջացրած կենսազանգվածը կամ նրա պտտեցիալ էներգիան:

ԳԵՆԵՍԱԳՑՍԱՆՈՒԹՅՈՒՆ, *Bioresource; biodiversity*

Յամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ հանդիսացող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը:

ԿԵՆՍԱՁԱՆԳՎԱԾ, *Biomassa; biotass*

Անհատի, որոշակի տեսակի կամ խմբի ու ամբողջական համակենցության ընդհանուր զանգվածը մեկ միավոր տարածքում: Բույսերի կենսազանգվածը ընդունված է անվանել ֆիտոզանգված, իսկ կենդանիներիը՝ զոոզանգված:

ԿԵՆՍԱԿԱՆ ՉՐՈ, *Жизненный ноль; life zero*

Ձերմաստիճան, որի ժամանակ սկսվում են բույսերի հյութաշարժը և կենսական պրոցեսները: Բարեխառն գոտում ծառատեսակների մեծ մասի համար այն հավասար է +8-8°C:

ԿԵՆՍԱԶԵԿ, *Жизненная форма; life form*

Բուսատեսակի կամ որոշ բուսախմբերի արտաքին տեսքը, որով արտահայտվում է նրանց կյանքի բնույթը և հարմարողականությունը արտաքին պայմաններին: Կ.-ով որոշվում են վեգետատիվ օրգանների (ճյուղեր, արմատներ) աճման և մահացման առանձնահատկությունները: Կ.-ի կատեգորիաներն են՝ ծառեր, թփեր, խոտաբույսեր, մազվող և սողացող, արմատապալարավոր և սոխուկավոր բույսեր: Բուսական Կ. պայմանավորված չէ ցեղային պատկանելությամբ: Այն աճման միանման պայմաններում բույսերի հարմարողականության արդյունք է: Հիմնականում ընդունված է Ռասաունկելի բուսական Կ.-երի դասակարգումը, որը հիմնված է հողի մակերևույթի նկատմամբ բույսերի վերականգնման բողբոջի դիրքադրումից՝ անբարենպաստ (ցուրտ կամ չորային) ժամանակաշրջանում: Կախված բողբոջ պաշտպանող ծածկույթի բնույթից լինում են *ֆաներոֆիտներ*, որոնց վերականգնման բողբոջը գտնվում է հողից և ծյան ծածկույթից վերև (ծառեր, թփեր, լիաններ, էպիֆիտներ), *հեմերոֆիտներ*՝ ցածրահասակ բազմամյա բույսեր, որոնց վերականգնման բողբոջը գտնվում է 20-30 սմ բարձրության վրա և հաճախ ծմեռում է ծյան տակ (թփիկներ, կիսաթփեր, որոշ բազմամյա խոտաբույսեր), *հեմիկրիպտոֆիտներ*՝ բազմամյա խոտեր, որոնց բողբոջները ծմեռում են վերգետնյա ծնածածկ շերտում և թեփուկի տակ, *գեոֆիտներ*՝ բազմամյա խոտաբույսեր, որոնց վերերկրյա մասը լրիվ մահանում է, իսկ բողբոջները ծմեռում են հողի մեջ. *հիդրոֆիտներ*՝ միամյա բույսեր, որոնք անբարենպաստ ժամանակաշրջանն անց են կացնում ջրում. Ի. Սեբերյակովը, ելնելով բույսերի կառուցվածքից և վերերկրյա առանցքների երկարակենցությունից, տվել է Կ.-ի այլ դասակարգում. ծառեր՝ երկարակյաց (10-50 տարի և ավելի), բույսեր՝ լավ արտահայտված բնով, թփեր՝ վերերկրյա մասը կազմավորված է կմախքային առանցքներից, ապրում են 5-10 տարի, կիսաթփեր և թփիկներ՝ կիսափայտացած բույսեր, որոնց կմախքային ճյու-

ղերի զգալի մասն ամեն տարի մահանում է. պոլիկարպ բազմամյա խոտեր, որոնց վերերկրյա մասը մինչև հողի մակերեսն ամեն տարի մահանում է:

ԿԵՆՍԱՑԵՆՈՋ, *Биоценоз; biocenosis*

Համեմատաբար միատարր տարածքում (ջուր, ցամաք) գտնվող բույսերի, կենդանիների ու միկրոօրգանիզմների միասնություն, որոնք միմյանց նկատմամբ և շրջապատի հետ գտնվում են որոշակի փոխհարաբերության մեջ: Կ. տվյալ պայմաններում տարբեր օրգանիզմների երկարամյա պայթարի, հարմարողականության և քնական ընտրության պրոցեսի արդյունք է: Կենսաբանական շրջանառության մեջ Կ.-ի մասնակցությունն ընդգրկում է 3 խումբ օրգանիզմներ՝ ավտոտրոֆ, հետերոտրոֆ և քայքայող:

ԿԵՆՍԱՑԵՆՈԼՈԳԻԱ, *Биоценология; biocenology, synecology*

Կենսաբանական գիտության բաժին: Ուսումնասիրում է կենսացենոզների ծագումը, կառուցվածքը, զարգացման դինամիկան և այլն:

ԿԵՉՈՒՏ, *Березняк; birch forest*

Կեչու միատարր կամ նրա գերակշռությամբ ծառուտ: Հայաստանում հանդիպում է զրեթե բոլոր անտառային շրջանների վերին անտառային գոտում՝ կազմավորելով մերձալպյան կորաբուն ծառուտներ:

ԿԵՏԱՅԻՆ ՎԵԿՏՈՐԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ, *Точечные векторные объекты; Point vector objects*

ԱՏԳ-ի երեք հիմնական վեկտորային տարածական միավորներից մեկը (զծին և բազմանկյանը զուգահեռ), որի օգնությամբ ցույց են տրվում կետային օբյեկտները՝ բարձրությունները, միայնակ ծառերը, անտառապահի տնակը և այլն:

ԿԻՍԱՄԱԿԱԲՈՒՅԾ ԲՈՒՅՍԵՐ, ԿԻՍԱՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐ, *Эпифиты; epiphytes*

Բույսեր, որոնք ապրում են այլ բույսերի՝ գլխավորապես ծառերի հաստ ճյուղերի խեչակներում և քների վրա: Ունեն ասիմիլացիոն մակերես, սակայն ձևափոխված ծծիչ արմատները այլ բույսերից ջուր և նրա մեջ լուծված հանքային աղեր են վերցնում: Բնորոշ են արևադարձային և մերձարևադարձային տարածաշրջաններին: Դրանց մեծ մասը կարող է օգտագործվել ծնեռային պարտեզներ ստեղծելիս և որպես ամպելային բույսեր (ծաղիխոտեր, խլորձներ և այլն):

ԿԻՍԱԹՈՒՓ, *Полукустарник; subshrub*

Բազմամյա բույս, որի ճյուղի ստորին վերականգնման բողբոջ կրող մասը փայտանում է և պահպանվում մի քանի տարի, մինչդեռ վերին մասն ունենում է խոտային կառուցվածք և ամեն տարի մահանում է: Կ.-ն ըր հիմնականում քնորոշ են չորային

շրջաններին: Օրինակ մոշենի՝ էվոլյուցիոն զարգացման պրոցեսում անցողիկ (միջանկյալ) կենսաձև է ծառաբույսերից դեպի խոտաբույսերը:

ԿԻՍԱՓԹԻԿ, *Полукустарничек; dwarf semishrub*

Ցածրաճ բազմամյա բույս, որի վերգետնյա ընձույզների մեծ մասը, ինչպես խոտաբույսերի մոտ, ամեն տարի ոչնչանում է, բայց մնում են դրանց փայտացած հիմքերը վեղարտադրության քողոքներով, հողի մակերեսից որոշ քարձրության վրա (օշինդրի որոշ տեսակներ, ուրց և այլն): Պատկանում են քսամեֆիտների կենսաձևին:

ԿԻՍԱՅԱՍԱԾ, *Хедорыб; crest*

Համատարած կամ ընտրովի հատումների ժամանակ հատման համար նախատեսված ծառերի ոչ լրիվ հատում: Կ.-ի պատճառներն են՝ արտադրական պլանների թերակատարում, անտառաճյուղի տեսակաճու պահանջարկի փոխում, անտառի և պահանջվող տեսակների անհամապատասխանություն և այլն:

ԿԻՍԱՇԻՆԱՓԱՅՏԱՅԻՆ ԾԱՌ, *Полуделовое дерево; semi-merchantable tree*

Ծառ, որն օժտված է շինափայտի փոքր ելքով: Կ.Ծ.-ի շինափայտ ապահովող մասի երկարությունը կազմում է 2-6.5 մ: Ծառաբույսը որոշ քարձրության վրա կարող է լինել փտած կամ ունենալ այլ արատ:

ԿԼԻՄԱՅՎԱՐԺԵՑՈՒՄ, *Акклиматизация; acclimatization, seasoning*

Մարդուն օգտակար բուսատեսակներով բնական համակեցությունը հարստացնելու նպատակով նախկինում այդտեղ չաճող որևէ բույսի նպատակային ներմուծում և գոյության նոր պայմաններին այդ բուսատեսակների վարժեցում:

ԿԼՈՆ, *Клон; klon*

Սեկ բույսից վեգետատիվ եղանակով բազմացված (տնկաշիվերով, պալարներով, սոխուկներով, անդախներով) առանձնյակներ, որոնք ժառանգականորեն կրկնում են ելանյութի հատկանիշները:

ԿԼՈՆԱՅԻՆ ՍՈՐՏԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, *Клоновое сортоводство; klon sort breeding*

Ընտրության և խաչասերման միջոցով արժեքավոր ձևերի ստացում և դրանց լավագույն օրինակների հետագա վեգետատիվ բազմացում (եղրևանի, սրճեցնի, բարդի):

ԿՇԵՊ, ԿԵՐՆԱԿԵՂԵՎ, *Корка; crust*

Կեղևի արտաքին մաս, որն ամեն տարի աճելով ավելանում է՝ ի հաշիվ պերիդերմի մակերեսային շերտի մահացման: Հատկապես հզոր վերնակեղևային շերտ է առաջանում ծեր ծառերի բնի և արմատների վրա: Թփերի վրա չի կազմավորվում, քանի

որ վաղ է թափվում: Որոշ ծառերի մոտ (հաճարենի) քացակայում է: Խաղողի վազի մոտ անջատվում է կյանքի առաջին իսկ տարում, տամծենու, խնձորենու մոտ՝ 6-8-րդ, լորենու մոտ՝ 10-12-րդ, կաղնու մոտ՝ 25-30-րդ տարում և այլն:

ԿՈՂԱՆՈՐՈՇՈՒՄ, *Ориентация; orientation*

Չատակագծային տարբեր տարրերի տեղաբաշխումը ըստ աշխարհի կողմերի՝ հյուսիս-հարավի և արևելք-արևմուտքի նկատմամբ դրանց ունեցած տեղադիրքի: Կարևոր նշանակություն ունի փողոցների նախագծման, ինչպես նաև տնկարկներում, ջերմոցներում և ջերմատներում տնկանյութի աճեցման համար:

ԿՈՇՂ, *Пень; stump*

Չատումից հետո մնացած ծառի արմատակից մասը: 4-ի բարձրությունը պետք է լինի ծառի տրամագծի 1/3 չափով: Ժամանակի ընթացքում, 5-10 տարուց (նայած ծառատեսակի) Կ. փտում է: Այն հաճախ օգտագործում են արմատահյութ ստանալու համար:

ԿՈՇՂԱՅԱՏՈՒՄ, *Посадка на пень; stumpplanting*

Երիտասարդ ծառերի և թփերի հատումը կոճղաշիվեր ստանալու նպատակով: Կիրառվում է վնասված, կորաբուն ծառերը նոր կոճղաշիվերով փոխարինելու համար:

ԿՈՇՂԱՐՄԱՍ, *Корневище; rhizome*

Բույսի ստորգետնյա բազմամյա շիվ: Կատարում է սննդանյութերի պահեստավորման, վեգետատիվ բազմացման դեր, նպատում է նաև բույսի հողից ամրանալուն: Կ. արագ փայտանում է, արտաքինից նմանվում է արմատին, որից տարբերվում է հորիզոնական դիրքով, ծայրապատյանի քացակայությամբ: Կ.-ի ծոցերում ստորգետնյա նոր ընծյուղների բողբոջներ են առաջանում:

ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ (ԶՈՒԳԱԳՅՎԱԾ) ՉՏՈՒՄՆԵՐ, *Комплексная рубка; complex cutting*

Միևնույն տարածքում անտառի խնամքի և գլխավոր օգտագործման հատումների զուգակցում: Կիրառվում են բարդ ծառուտներում, երբ առաջին շարահարկի ծառերը գտնվում են հասունացման տարիքում, իսկ ներքին շարահարկում՝ ծողանային (ենթակա է նոսրացման կամ անցումային հատումների): Կ.Չ. կատարվում է 1-2-3 փուլերով, ինչը պայմանավորված է շարահարկի կազմով, հասակային դասերով, սաղարթի միակցության աստիճանով, լրիվությամբ, անտառի զնահատման մյուս ցուցանիշներով և անտառաճման պայմաններով: Կ.Չ.-ի տարրերությունը կոմքինացված հատումներից այն է, որ վերջինիս դեպքում կիրառում են գլխավոր օգտագործման կամ խնամքի հատումների տարրեր եղանակներ:

ԿՈՄՊԼԵՔՍՈՅԻՆ (ԶՈՒԳՎԳՎԱԾ) ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, Комплексное предприятие; complex enterprise

Անտառային զուգակցված ձեռնարկություն, որը միավորում է մի շարք մասնագիտացված բնագավառներ՝ անտառաճեցում, անտառօգտագործում, անտառամայրի սկզբնական մշակում և այլն: 4.2. լինում են միատարր, երբ միավորում է անտառային հումքի օգտագործման միևնույն բնագավառի ձեռնարկություններ (անտառօգտագործում), և բազմաճյուղային՝ անտառաճեցում, անտառօգտագործում, անտառից ստացվող մթերքների (պտուղներ, սունկ և այլն) վերամշակում և այլն:

ԿՈՄՊՈԶԻԹԻՎ ՊԱՐՏԵԶՊՈՒՐՎԱԿԱՅԻՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ, Композиция в садово-парковом искусстве; composition in garden-park art

Պարտեզի, զբոսայգու կամ ամբողջ տարածքի առանձին բնապատկերի ստեղծումը որոշակի գեղարվեստական համակարգով, որն ապահովում է քաղաքիչ մասերի (տնկարկներ, ռելիեֆ, ջրային մակերեսներ) փոխադարձ կապը, պայմանավորում է կանաչապատման օբյեկտի հիմնական մտահղացումը և դերը: Օգտագործվում են կոմպոզիցիայի բազմազան միջոցներ և եղանակներ (գլխավորի և երկրորդականի առանձնացում, մասշտաբայնություն և համաչափություն, համամասնություն, ռիթմ և տպավորությունների հերթափոխում, զուգաչափություն և անզուգաչափություն, ցայտերանգություն և նմանություն, կողմնորոշում, լույս և գույն, նյութի ֆակտուրա և այլն):

ԿՈՄՊՈԶԻԹԻՎՅԻ ԱՈՍԱՑՔ, Ось композиции; composition axis

Կանաչ զանգվածի ճարտարապետական անսամբլի հիմնական ուղղություն: Տարբերում են կոմպոզիցիոն գլխավոր և երկրորդական առանցքեր: Կանոնավոր ոճի դեպքում կոմպոզիցիոն առանցքերը երկրաչափական կանոնավոր գծեր են: Լանդշաֆտային ոճի դեպքում դրանք ուղիղ գծեր չեն, այլ բնական կոմպլեքսի կարևորագույն տարրերն են:

ԿՈՄՊՈԶԻԹԻՎՅԻ ԿԵՆՏՐՈՆ, Центр композиции; center of composition

Զբոսայգու յուրաքանչյուր կոմպոզիցիայի գլխավոր տարր: Կանոնավոր ոճի դեպքում կոմպոզիցիայի կենտրոն կարող է լինել հրապարակը, շատրվանը, ճարտարապետական կառույցը, ծաղկանոցը, լճակը և այլն: Լանդշաֆտային ոճի դեպքում 4. Կ. կարող է համարվել բնության աչքի ընկնող, գեղեցկագույն տարրը՝ ջրային տարածությունը, քլոակը, մակրոլանդշաֆտի հեռավոր տեսարանները, որոշ դեպքերում՝ նաև արհեստական կառույցները: Զբոսայգու կոմպլեքսում կարող են լինել կոմպոզիցիոն մի քանի կենտրոններ:

ԿՈՄՊՈԶԻԹԻՈՆ ԴԱՆԳՈՒԹՅՈՒՆ, Композиционный узел; composition unit

Պարտեզի կամ զբոսայգու հատված կամ մաս, որը մեկ ամբողջության մեջ է միավորում ու կապում մի քանի հատվածներ կամ մասեր՝ դրանցով կազմելով միաս-

նական կոմպոզիցիա: Օրինակ, քացատ, որը միավորում է բնապատկերի առանձին տեսարաններ:

ԿՈՆ, *Шушак; cone*

Սերկասերմ բույսերի, հիմնականում ասեղնատերևավորների սերմնային օրգան: Համակուռ հավաքված թփուկներ, որոնք հասունանալիս փայտանում են ստանալով մոխրագույն կամ շականակագույն գունավորում: Հաճախ սերմնաթեփուկները միածուլվում են, դառնում մսալի, հյութալի (հիշեցնելով ծածկասերմերի պտղակից) կոնահատապտուղ (զհիի, կեմի): Սերմերը հասունանալիս թփուկները սովորաբար բացվում են և սերմերը դուրս են թռչում: Ասեղնատերևավոր անտառների թափուկում Կ.-երը զգալի մաս են կազմում:

ԿՈՆԱՉՈՐԱՅՆՈՂ ՍԱՐՔ, *Шушкочушилка; conedryer*

Ասեղնատերևավոր ծառատեսակների կոներից սերմերի անջատման սարք: Լինում են տարբեր կառուցվածքի, ստացիոնար և շարժական: Կ.Ս.-ում բարձր ջերմաստիճանի (30-60°) օդի հոսանքի տակ կոների թփուկները բացվում են, պտտվող թմբուկներն անջատում են սերմերը սերմնաթեփուկներից: Չորացման և սերմերի մաքրման մեկ փուլը տևում է 12 ժամ: Արտադրողականությունը մեկ օրում՝ 30 կգ - սերմ:

ԿՈՆԻՖԵՐԵՏՈՒՄ, *Кониферетум; coniferetum*

Ասեղնատերև ծառաբույսերով ձևավորված կոլեկցիոն էքսպոզիցիոն հողամաս: Բնորոշ է բուսաբանական այգիներին, դեմդրոպարկերին:

ԿՈՐԱԲՆՈՒԹՅՈՒՆ, *Кривизна ствола; stem curvature*

Ծառաբնի մեկ կամ մի քանի տեղում ծոռավածություն (կորություն): Լինում է միակողմանի, քազմակողմանի, հավասարաչափ և անհավասարաչափ: Վերջինս առավել բնորոշ է կոճղաշիվային ծագում ունեցող ծառերին, երբ առկա է թրանսման կորություն: Կորության աստիճանը որոշվում է կորության ամենամեծ նիզակի և երկաթաբերության հարաբերությամբ՝ արտահատված տոկոսներով:

ԿՏՐՈՆ, *Черенок; slip, shank*

Կտրոնավորման համար բույսից առանձնացված վեգետատիվ որևէ մաս: Լինում են փայտացած (աշնանը կամ վաղ գարնանը), ոչ լրիվ փայտացած կամ կանաչ (ամռանը՝ տերևով), արմատային (պատրաստում են աշնանը և պահում մինչև գարուն), տերևային (տերևի որևէ մաս) և այլն:

ԿՏՐՈՆԱՊԱՏՎԱՍՏ, *Прививка черенком; slip grafting*

Պատվաստի տարածված եղանակ: Պատվաստացուն կտրոնի ձևով անջատվում է մայրական բույսից: Տարբերում են հասարակ և լեզվակավոր կտրոնապատ-

վաստներ: Դասարակի դեպքում պատվաստակալը և պատվաստացուն թեք կտրում են և հպելով մեկը մյուսին՝ կապում: Լեզվակալոր 4.-ի դեպքում պատվաստակալի և պատվաստացուի թեք կտրվածքի վրա լրացուցիչ ելուստ և ճեղք են պատրաստում, որոնք համապատասխանում են իրար, և հպելիս պատվաստացուն ամուր միանում է պատվաստակալին: Դրանով սերտաճումը ավելի լավ է կատարվում: Գարնանային 4.-ը կատարվում է մինչև բողբոջների րացվելը:

ԿՏՐՈՆԱՎՈՐՈՒՄ, Черенкование; propagation by cutting

Բույսի վեգետատիվ բազմացման եղանակ: Կտրոններ վերցնում են միամյա, երկամյա շիվերից, արմատից, տերևի մասերից, որոնք բարենպաստ պայմաններում արժատակալեցվում են և աճեցվում որպես նոր բույս:

ԿՏՐՎԱԾՔ, Отрѳб; breakoff

Ծառարնի վերին լայնակի կտրվածք, որի տրամագծով սովորաբար հաշվարկում են գերանների ծավալը:

ԿՐԿՆԱԿԻ ԱՐՏԱԲՆԱՓՈՒՅՑ, Двойная забалонь; blown sap

Բնափայտի արատ, երբ միջուկում մի քանի տարեկան օղակներն ընդունում են արտաքնափայտի տեսք և գույն:

ԿՐԿՆԱԿԻ ԾՈՒԾ, Двойная сердцевина; double pith

Երբ ընդլայնակի կտրվածքում զազաթնային ճյուղերի միաձուլման հետևանքով դիտվում է երկու ծուծ:

ԿՐԿՆԱՃՈՒՄ, Отростание; regrowth

Ջարդվելուց կամ կտրելուց հետո սաղարթը կամ արմատային համակարգը վերականգնելու բույսերի ունակություն:

ԿՑԱՃՈՒՄ, Срастание; intergrowth

Պատվաստված 2 բույսերի միակցման վեգետատիվ պրոցես: Հատուկ է բույր տեսակի պատվաստներին, այքապատվաստներին: Կանաչ շինարարությունում օգտագործվում է բույսերի բազմացման ու պահպանման նպատակով, հատկապես այնպիսի սորտերի, որոնք սերմեր չեն առաջացնում (թանջի պարտեզային՝ բուլղոնեժ) կամ ստացված սերմերը անկայուն սերունդ են տալիս:

ԿՑԱՏՈՒԿ, Подзем; underplants

Ծառատեսակներ, որոնք նպաստում են գլխավոր ծառատեսակի բունը կողային ճյուղերից ազատելուն և քնի ձևավորմանը, զազաթնային աճի արագացմանը: Այ-

քի է ընկնում համեմատաբար արագ աճով, խիտ սաղարթով՝ կեչի, թեղի, դաշտային և սրատերև թխկի և այլն:

ԿՑԱՆ ՍՈՆՏԱՍ, *Накидной монтаж; making a mosaic*

Օղալուսանկարները դասավորվում են թաշղ սարքի թռչքի ուղղությամբ, որտեղ կոնտակտային հատվածները իրար վրա են դրվում ինչպես երթուղու երկայնքով, այնպես էլ հարևան երթուղիների միջև:

ԿՈՒԼԻՍ, *Кулусы; coulisse, belt of trees*

Բազմապլանային հեռանկարի ստեղծման նպատակով տարածության մեջ մեկը մյուսին զուգահեռ մի քանի հարկ բույսերից կազմված վարագույր: Ծածկում է գրոսայգու կամ շրջապատող լանդշաֆտի աչքի զարնող ոչ հիմնականը, ընդօժնում՝ գլխավորը: Ծառայում է նաև ստորին շարահարկի բույսերը արևից կամ տրորելուց պաշտպանելուն: Անտառում՝ կուլիսը համատարած հատատեղերի միջև ընկած նեղ անտառաշերտ է: Կ. թողնվում է բնական սերմնային վերականգնումն ապահովելու նպատակով:

ԿՈՒԼԻՍԱՅԻՆ ՉԱՏՈՒՄՆԵՐ, *Кулусные рубки; alternate-strip fellings*

Երտավոր հատումների տարատեսակ: Կուլիսները հատվում են ոչ թե մեկ ստուգիչ ժամանակաընթացքում (10 տարի), այլ թողնվում են արմատի վրա մինչև միջկուլիսային տարածքում մատղաշի լրիվ ձևավորումը:

ԿՈՒԼԻՍԱՅԻՆ ՏՆԿԱՐԿՆԵՐ, *Кулусные насаждения; belt of stands*

Վվազուտներն ամրացնելու նպատակով հիմնադրած անտառաշերտեր: Պաշտպանական անտառտնկարկների տարատեսակ: Սովորաբար հիմնադրում են էրոզավտանգ վայրերում, քամիներին ուղղահայաց՝ օգտագործելով լայնատերև սաղարթավոր ծառատեսակներ: Կ.Տ.-ի լայնությունը 30-50 մ է, միջկուլիսային տարածությունը՝ 100-150 մ, միջշարային տարածությունը՝ 3-4 մ, շարքում բույսը բույսից՝ 0.8-1.5 մ:

ԿՈՒԼՏԻՎԱՐ, *Культивар; cultivar*

Վեգետատիվ եղանակով ստացված պարտիզային ձև, տարատեսակ, սորտ: Անվանումը գրվում է մեծատառով և վերցվում է չակերտների մեջ. օր.՝ մանդարինի «Ուն-չիո» սորտ, գեղազարդ ծառաբույսերի բազմաթիվ լացող, գնդաձև, բրգաձև, կոնաձև սաղարթով ձևեր և այլն:

ԿՈՒՎԱՎԱՆ ԱՆՏԱՐ, *Девственный лес; virgin forest*

Բնական անտառ, որը զերծ է մնացել մարդու տնտեսական գործունեությունից: Գիմնականում վերաբերում է արևադարձային գոտու անտառներին: Իրականում Կ.Ա.-ներ չկան: Բոլոր անտառներն էլ ուղղակի կամ անուղղակի ենթարկվել կամ ենթարկվում են մարդու ներգործությանը (անթրոպոգեն ճնշում):

ՀԱՐԻՏՈՒՄ (ՃԱՐՏԱՐԱՎԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ), *Габитус; habitus*

Առարկայի արտաքին ձև: Ծառի առարկայական տեսքը: Անտառագիտության մեջ հաթիտուսով ընդունված է նշել ծառերի ձևը: Ազատ և անտառում աճող նույն տեսակի ծառի Գ.-ը միմյանցից խիստ տարբերվում է: Տե՛ս նաև Ճարտարակերտություն:

ԳՆՁԱՎԱՅՈՒՏ ԾԱՌԱՁՓՈՒՍԵՍԱԿ, *Редкий вид деревьев и кустарников; rare species of trees and bushes*

Բնության մեջ (բնական բուսական համակեցություններում) հազվադեպ հանդիպող և Կարմիր գրքում գրանցված կամ գրանցման ենթակա ծառա- կամ թփատեսակ: Օրինակ՝ կենի հատապտղային, մրտավարդ կովկասյան, տանձենու բազմաթիվ էնդեմիկ տեսակներ Գայաստանի դեմոկրաֆիորայի համար, որոնք գրանցված են ԳԳ - Բույսերի Կարմիր գրքում:

ՀԱՃԱՐՈՒՏ (ՀԱՃԱՐԿՈՒՏ), *Бучина; бучняк; beech forest*

Գաճարենու միատարր կամ նրա գերակշռությամբ ծառուտ: Գայաստանում տարածված է Կուսխային անտառային շրջաններում, որտեղ 1200-1650 մ բարձրությունների վրա առաջացնում է բարձր արդյունավետության ծառուտներ:

ՀԱՄԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Симбиоз; symbiose*

Երկու օրգանիզմների փոխադարձ օգտակար համակեցություն: Գ. գոյություն ունի նաև կենդանի օրգանիզմների և բույսերի, սնկերի և քարձրակարգ թույսերի միջև (միկորիզա):

ՀԱՍՎԿԵՑՈՒԹՅՈՒՆ, *Сообщество; cenosis, assemblage*

Ֆիզիկաաշխարհագրական որոշակի միատարր պայմաններում աճող տարբեր ֆունկցիոնալ պատկանելության օրգանիզմների միագումարելիություն: Տարբերում են բուսական (ֆիտոցենոզ), կենսաբանական, անտառային, տունդրային Գ. և այլն:

ՀԱՍՎԵՆՏՐՈՆԱԳՎԱԾ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Концентрированные рубки; concentrated cuttings*

Համատարած հատումներ, որոնց հատատեղերը կենտրոնացված են տրանսպորտային ճանապարհների մոտ: Առանձին հատատեղերի լայնությունը երբեմն հասնում է հարյուրավոր մետրերի՝ 1-3 տարի միակցման ժամկետով: Գ.Գ.-երի ընդհանուր տարածքը մի քանի տարում կարող է ընդգրկել հազարավոր հեկտարներ: Նման հատումները սովորաբար կիրառում են քիչ իրացված անտառային խոշոր զանգվածներ:

րում՝ բարձր արդյունավետությամբ օգտագործելով տեխնիկան: Գ.Գ.-ները խաթարում են անտառի ջրակարգավորիչ հատկությունները և ինքնավերականգնման ունակությամբ:

ՀԱՍԱՅՆՔԱՅԻՆ ԱՏՏԱՌԱՅԻՆ ՔԱՐՏԵՁՆԵՐ, *Карты общинных лесов; Community forest maps*

1:10 000 -1:25 000 մասշտաբների անտառային քարտեզներ, որոնք ընդգրկում են նախկին սովխոզային-կոլխոզային անտառները: Վերջիններս, սկսած 2005 թվականից, համաձայն Հայաստանի Հանրապետության անտառային նոր օրենսգրքի (2005 թվականին ընդունված), ժամանակի ընթացքում կտրամադրվեն անտառամերձ համայնքներին:

ՀԱՍՏԱՐԱԾ ԽՄԲԱԿԱՅԻՆ ՀԱՏՈՒՄ, *Сплошнокуртинная рубка; clean group cutting*

Գլխավոր օգտագործման հատման տարատեսակ (աստիճանական), որի ժամանակ ծառուտում ծառերը հատում են խմբերով՝ 2, երբեմն 3 փուլով: Առաջին փուլում հատում են հասուն և գերհասուն ծառերի խմբեր՝ վերցնելով պաշարի 65-80%-ը, թողնելով երիտասարդ, միջին հասակի ու հասունացող ծառերի խմբերը, որոնք զբաղեցնում են տարածքի 20-35 %-ը: Այնուհետև 30-40 տարի անց կատարում են հատման երկրորդ փուլը: Սովորաբար Գ.Խ.Հ. կիրառում են տարահասակային ծառուտներում: Համեմատած հատատեղային հատումների հետ Գ.Խ.Հ. ունի մի շարք առավելություններ՝ նպաստում է անտառային ֆոնդի առավել ռաջինակ օգտագործմանը, անտառի բնապահպանական հատկանիշների պահպանմանը, կրճատում անտառածեցման ժամկետը:

ՀԱՍՏԱՐԱԾ ՀԱՏԱՏԵՂԱՅԻՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Сплошнолесосечные рубки; clearcutting*

Գլխավոր օգտագործման հատումների տարատեսակ, որի ժամանակ հատատեղում ողջ ծառուտը հատում են մեկ փուլով՝ թողնելով միայն փարոսային ծառերը և մատղաշը: Ետ տարածված է նեղ հատատեղային հատումը (հատատեղի լայնությունը՝ 200 մ-ից ավելի, տարածքը՝ 50 հա-ից ավելի): Վերջինս հաճախ անվանում են նաև պայմանական համատարած հատում: Կիրառում են հարթավայրային 3-րդ կարգի անտառներում:

ՀԱՍՏԱՐԱԾ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Сплошные рубки; clear-cuts*

Լույնն է, ինչ որ համատարած հատատեղային հատումները:

ՀԱՍՏԱՐԱԾ ՑԱԼՔՍ, *Сплошной посев; broadcast seeding*

Կատարվում է տնկարանում շատ մանր սերմերի (կեչի, կաղամախի) ցանքսի կամ անտառնշակության տարածքում ինքնաթիռներով ցանքսի դեպքում:

ՀԱՍՏԱՉՈՒԹՅՈՒՆ, *Соразмерность; гармония*

Ջրոսայգու տարրեր հատվածների միջև ստեղծվող հավասարակշռություն: Արտահայտվում է զուգաչափ կողմերի առանձին տարրերի հայելանման կրկնությամբ (առանցքային զգի երկու կողմերում տեղադրվում են նույնանման բույսեր, որոնց դասավորությունը, քանակը և փոխադարձ դիրքը միանման են): Նույնը վերաբերում է նաև զրոսայգու կառույցներին և մանր ճարտարապետական ձևերին:

ՀԱՆԳԱՍԻ ԳԻՆԱՐԿՆԵՐ ԵՎ ՎԱՅՐԵՐ, *Учреждения и места отдыха; recreational establishments and plants*

Բնակչության հանգստի օբյեկտներ անտառապուրակներում, հանգստի գոտիներում (ամառային ճամբարներ, տուրիստական հանգրվաններ, լողափեր, նավակայաններ, նավամատույցներ և այլն):

ՀԱՆԳԱՍԻ ԵՎ ԵԱՐԺԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ, *Мотивы спокойствия и движения; motives of rest and movement*

Ջրոսայգու կոմպոզիցիաներում ստեղծվող մոտիվներ: Հանգստի մոտիվը ստեղծվում է սիզամարզերի, ջրամբարների, ծաղկային ձևավորումների, իսկ շարժման մոտիվը՝ ծառերի, թփերի, հոսող ջրերի, դարավանդների, աստիճանների, քանդակների միջոցով: Բույսերի սաղարթներն ըստ արտահայտչականության նույնպես լինում են դինամիկ՝ շարժուն և պասսիվ կամ հանգիստ: Դինամիկ են բոլոր ջրված, անկանոն սաղարթները, հատկապես, երբ արտակենտրոն են, մի կողմ թեքված: Պասսիվ են բույսերի այն պուրակային ձևերը, որոնք ունեն գնդի, այսն կամ բրգի ձև:

ՀԱՆԴԻՊԱԿԱՅ ԿԱՆՉԱՊԱՍՏՈՒՄ, *Встречное озеленение; opposing (cut-up) greening*

Ուղղաձիգ կանաչապատման եղանակ: Ներքևից բարձրանում են փաթաթվող բույսերը, իսկ վերևից՝ պատշգամբներից ու տանիքներից կախվում կամ «ընդառաջ են գնում» ամպելային բույսերը: Ստացվում է համատարած և զեղեցիկ կանաչ պատ:

ՀԱՆԴԻՊԱԿԱՅ ԿՐԱԿ, *Встречный огонь; opposing fire*

Անտառում հրդեհի մարման եղանակներից մեկը:

ՀԱՆՔԱՅՆԱՅՎԱԾ ԸՆԵՐՏ, *Минерализованная полоса; mineralized forest strip*

Անտառում հրկիզվող նյութերից մաքրված, մինչև կմայքը վարած հողաշերտ: Կատարվում է հակահրդեհային նպատակով:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՆՏԱՌԳՆԱՀԱՏՈՒՄ, *Перечислительная таксация; enumerative inventory*

Կատարվում է ծառերի տրամագծի չափումներով, ինչը հնարավորություն է տալիս ստանալ ծառերի գնահատման ստույգ բնութագիրը: Օգտագործվում է առան-

ծին ծառուտների, փորձահարապարակների գնահատման ժամանակ: Կատարում են համատարած կամ մասնակի հաշվարկային եղանակով, ստացված տվյալները վերահաշվարկում են 1 հա-ի կամ գնահատվող ողջ անտառատվածի համար: Գ.Ա.-ման դեպքում ծառերն առանձնացնում են ըստ տեսակի, շարահարկի, սերնդի, տրամագծի: Ելնելով ծառուտի գնահատման նպատակայնությունից, առանձնացվում են՝ ըստ տեխնիկական պիտանիության, տնտեսական նշանակության, սաղարթի ձևի, սանիտարական վիճակի և այլ հատկանիշների: Ընդունված է ծառերի տրամագծի հետևյալ աստիճանավորումը՝ մինչև 6 սմ բնի միջին տրամագծի դեպքում՝ 1 սմ, 7-16 սմ-ի դեպքում՝ 2 սմ, 16 սմ-ից բարձրի դեպքում՝ 4 սմ: Հատատերի առանձնացման դեպքում պաշարը որոշում են ծավալային կամ տեսականու աղյուսակով: Գիտական աշխատանքների ժամանակ՝ միջին մոդելային ծառերով՝ օգտագործելով հետևյալ բանաձևը՝ $M = \sum QHF$, որտեղ $\sum Q$ -ն ծառերի բնի մակերեսի գումարն է (քառ. մ), H-ը միջին բարձրությունը, F-ը միջին տեսակային թիվը:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌ, *Учетное дерево; registration tree*

Ի տարբերություն մոդելային ծառերի, որոնք ընտրվում են որպես միջին մոդել, ծառուտի համար Հ.Ծ. ընտրում են պատահական կամ ելնելով ծառուտի գնահատման չափումների արդյունքներից: Հ.Ծ.-երի քանակն ընտրում են՝ ելնելով ուսումնասիրվող օբյեկտի տատանման աստիճանից կամ անտառգնահատման չափումների ճշտությունից:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂ, *Расчетная лесосека; yield logging site*

Անտառի գլխավոր օգտագործման նորմատիվներով անտառաշինության ժամանակ կատարվող հաշվարկներ, որոնց նպատակն է բացահայտել հատուն բնափայտի պաշարները, անտառի վերարտադրման բնույթը, արտադրողականությունը, բնափայտի պահանջարկն ըստ անտառային ձեռնարկությունների և անտառի կարգերի: Հ.Հ. որոշում են ըստ տնտեսությունների, մարզերի, հանրապետության՝ ելնելով անտառի անընդմեջ (առանց քայքայելու) օգտագործման չափերից:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀՐՄՈՐԱՎԿՆԵՐ, *Учетные площадки; registration areas*

Անտառում ոչ մեծ տարածության (1-25 մ²) հրապարակներ, որոնք ընտրվում են տվյալ ծառուտին բնորոշ հատվածներում, հիմնականում մատղաշի (քանակի և որակի), անտառային սերմերի և հատապտուղների, բնական վերածի, հողում վնասատուների հարսնյակների առկայության հաշվարկի նպատակով: Հ.Հ.-ի քանակը կախված է հաշվառման պահանջվող ճշտությունից:

ՀԱՍՍԿԱՅԻՆ ԴԱՍ, *Класс возраста; age class*

Ծառի հասակի գնահատման ցուցանիշ: Գործածվում է ծառուտի տարիքը որոշելու համար: Գ.Գ. բնորոշվում է ժամանակամիջոցով, ծառերի աճման տեմպով ու կլիմայական պայմաններով: Բարեխառն զոտում կարծրատերևավոր և խառը ծառուտների համար հասակային մեկ դասը հավասար է օրացուցային 20 տարվա, արագաճ ծառատեսակների համար՝ 10 տարվա և 5 տարվա՝ թփատեսակների համար: Արևադարձներում հասակային մեկ դասը հավասար է 5 տարվա, մերձարևադարձներում՝ 10 տարվա:

ՀԱՍՈՒՆԱՅԻՆ ԾԱՌՈՒՄՆԵՐ, *Приспевающие древостои; ripening stands*

Ծառուտի հասակային փուլ, որը նախորդում է հասուն փուլին: Հիմնականում կազմավորված են լինում արագաճ ծառատեսակների դեպքում՝ 4-րդ և 5-րդ, դանդաղաճ տեսակների դեպքում՝ 7-10-րդ հասակային դասին պատկանող ծառերից: Հասունացող փուլում դադարում է ծառուտի ինքնանորսացումը և բների դիֆերենցումը, նվազում է ծառերի աճն ըստ բարձրության և տրամագծի, փոքրանում է սաղարթի միակցությունը, ինտենսիվանում է պտղաբերումը և, որպես արդյունք, առաջանում է մատղաշ:

ՀԱՍՈՒՆ ԲՆԱՓՈՒՅՑ, *Спелая древесина; mature timber*

Բնի և կմախքային ճյուղերի ծուծը շրջապատող չզուլնավորված միջուկ: Նման բնափայտ ունեցող տեսակները կոչվում են հասուն բնափայտային տեսակներ՝ հաճարենի, կաղամախի, եղևնի, խեժափիճի, թխկի, հացենի և այլն: Միջուկավոր տեսակների մոտ (թեղի, սոճի, կաղնի) Հ.Բ. կոչվում է ծուծի և արտաքնափայտի միջև ընկած շերտը: Տեխնիկական հատկություններով Հ.Բ. նման է արտաքնափայտին:

ՀԱՍՈՒՆ ԾԱՌՈՒՄ, *Спелый древостой; mature stand*

Ծառուտի հասակային փուլ, որը հաջորդում է միջին հասակին: Հ.Ծ.-ում դադարում է ծառերի դիֆերենցումը, դանդաղում է զագաթնային աճը, թուլանում է բնի ընդլայնական աճը: Ծառերը ցուցաբերում են առավելագույն պտղաբերում և բնափայտի որակական առավելագույն պաշար:

ՀԱՎԱՍԱՐԱՉՍՓ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՄ, *Равномерная постепенная рубка; regular (continued) gradual cutting*

Անտառի գլխավոր օգտագործման տարատեսակ, որի ժամանակ ծառուտը հատում են 2-4 փուլերով, հավասարաչափ նորացնելով անտառը մեկ հասակային դասի ժամանակամիջոցում:

ՀԱՎԱՍԱՐԱՉԾԵՐԻ (ԻՋՈՂԾԵՐԻ) ՔԱՐՏԵԶ, *Карта изолиний; isoline map*

Տարածության մեջ միևնույն արժեքներ ունեցող կետերը միացնող գծերից կազմված քարտեզ: Օրինակ միևնույն ջերմաստիճան ունեցող (իզոթերմները) կամ

միևնույն տեղումների քանակ ունեցող (հզոհիթներ) հավասարազանքը պատկերող քարտեզները և այլն:

ՀԱՏԱԿԱԳԻԾ, *План; plan*

Աշխատանքային հիմք, պաստառ, որի վրա ծավալվում են կանաչապատման օբյեկտների նախագծման հետագա աշխատանքները: Այն հատուկ կերպով արտահայտում է կանաչապատման ենթակա հողամասի ռելիեֆի բոլոր մանրամասները (բարձրությունների տարբերություններ, դիրքորոշումներ), ճշգրիտ պատկերացում է տալիս կառույցների, ճանապարհային ցանցի, ջրային տարածությունների, առվակների, ոռոգման ցանցի, առկա կանաչ զանգվածների և այլնի մասին:

ՀԱՏԱՊՏՈՒՂ, *Ягода; berry*

Բարակ արտապտղապատով (ցենոկարպ) բազմասերմ կամ միասերմ հյութալի պտուղ, որը հանդիպում է տարբեր բույսերի մոտ, օր.՝ խաղողի, հաղարջենու, թթենու, թզենու, ցիտրուսայինների պտուղներ:

ՀԱՏՍՏԵՂ, *Лесосека; cutting plot, wood-cutting area*

Հատուկ նշացույցերով (սյուներով) կամ բնական սահմաններով անջատված անտառամաս, որտեղ նախատեսված է կատարել անտառօգտագործման հատումներ: Հ. կարող է լինել տարբեր ձևի՝ քառանկյունի, ուղղանկյուն, սեպածև և այլն: Նրա հիմնական տարրերն են՝ լայնությունը, միակցման ժամկետը և եղանակը, հատման ուղղությունը, սերմնավորման աղբյուրները, անտառահատման սեզոնն ու տեխնոլոգիան, մաքրման ժամկետները և այլն: Հ.-ի չափը պայմանավորված է անտառի կարգով:

ՀԱՏՍՏԵՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, *Лесосечные работы; cutting area operations*

Հատատեղերում կատարվող նախապատրաստական և օժանդակ աշխատանքներ, որոնք հանդիսանում են անտառմթերման տեխնոլոգիական պրոցեսների բաղկացուցիչ մասը:

ՀԱՏՍՏԵՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐ, *Лесосечные отходы; felling waste, logging residue*

Կազմված են հատումներից հետո մնացած կենսազանգվածից՝ ոստերից, ճյուղերից, տերևներից ու անեղնատերևներից, շինափայտի համար անպիտան գերաններից, կոճղերից և այլն, որոնք քաշը մեկ հա-ում կարող է լինել մի քանի տոննա: Հանդիսանում են անտառօգտագործման հումքային լրացուցիչ աղբյուր: Նրանցից կարելի է պատրաստել վիտամինային ալյուր, քլորոֆիլային մածուկ, վառելափայտ, փայտածուխ, տեխնոլոգիական տաշեղ և այլն: Հ.Թ.-ի օգտագործումը նպաստում է անտառի սանիտարական վիճակի բարելավմանը և հորեհավտանգության նվազեցմանը:

ՀԱՏԱՏԵՂԱՅԻՆ ՖՈՆԴ, *Лесосечный фонд; cutting fund, cutting estate*

Հատման համար նախատեսված հատուն ծառուտի քննափայտի պաշարը: Որոշվում է հանրապետության տնտեսական պլաններով՝ ըստ անտառների կարգի: Հ.Ֆ. նախատեսվում է տարրեր ժամանակաշրջանների համար՝ տեխնիկաֆինանսական պլանների կազմման նպատակով կազմվում է հատատեղի և համապատասխան տեսականու փայտանյութի դուրսբերման տարեկան պլան: Ելնելով հաշվարկային հատատեղերի չափից՝ կազմվում են անտառատնտեսությունների Հ.Ֆ.-երը, որոնք ներկայացվում են հանրապետության կառավարության հաստատմանը:

ՀԱՏԱՏԵՂԻ ԱՌԱՆՉԱՑՈՒՄ, *Отвод лесосек; allocation of cutting area*

Անտառաօգտագործող և անտառաբերող ձեռնարկությունները համատեղ առանձնացնում են անտառտնտեսությունները, համաձայն արմատի վրա անտառանյութի բացթողման կարգի, որը միասնական է բոլոր անտառների համար: Հ.Ա. անտառտնտեսությունները պարտավոր են կատարել անտառվերականգնման հատումներից 2 տարի առաջ՝ ելնելով հաշվարկային հատատեղի ֆոնդից, տալով նրա նյութական և դրամաարժեքային սահմանները, ներառյալ անտառվերականգնման միջոցառումները:

ՀԱՏԱՏԵՂԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԱՆՏՈՒԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ), *Оценка лесосек (оценка лесосечного фонда); forest estate inventory (assessment)*

Հատման նախատեսված ծառուտից ստացվելիք քննափայտի ծավալի, կանգուն ծառերի ընդհանուր արժեքի և անտառահատման աշխատանքների նորմաների որոշումը: Հ.Գ.-ման ժամանակ կազմում են հատատեղի քարտեզը, որոշում մատղաշի առկայությունը և նրա պահպանման անհրաժեշտությունը, ծառուտի ընդհանուր պաշարը, շինափայտի ելքը ըստ տեսականու, վառելափայտի և տեխնոլոգիական մշակման հումքի քանակը, ծառերի գումարային արժեքը՝ $\pm 10\%$ -ի սահմաններում: Հ.Գ. կատարում են հատումներից 2 տարի առաջ՝ ելնելով նախատեսված հաշվարկային ճանապարհների առկայությունից և այլ տվյալներից:

ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՄԻԱԿՑՈՒՄ, *Примыкание лесосек; bordering of logging sites*

Անտառային քառակուսիներում հատատեղերի տեղադրման կարգ: Կարևոր նշանակություն ունի նեղ հատատեղային հատումների ժամանակ: Տարբերակում են 4 եղանակ՝

- հատատեղերի անմիջական միակցում, երբ նոր հատատեղն անմիջապես հարում է նախկինին,
- մեկընդմեջ, երբ նոր հատատեղը տեղադրվում է՝ թողելով նույն լայնությամբ անտառաշերտ,

- կուլիսային, երբ 2 հատատեղերի միջև թողնվում է հատատեղի 2-3 լայնությամբ չհատված շերտ,
- շախմատաձև, երբ հատատեղը դասավորում են շախմատաձև՝ քառակուսի հատվածներով: Հիմնականում օգտագործում են հատատեղի անմիջական միակցման եղանակը:

ՀԱՍՏԵՂԵՐԻ ՄԻԱԿՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ, Срок примыкания лесосек; period (time) of bordering of logging sites

Հատատեղի և նրան հարող անտառի հատման միջև ընկած ժամանակաշրջանը: Ելնելով անտառկազմող ծառատեսակի անտառտնտեսական և էկոլոգ-կենսաբանական հատկություններից, բնապահպանական նշանակությունից, ծառուտի ծագումից, կենսունակ մատղաշի առկայությունից և այլ գործոններից: 2-րդ կարգի անտառներում հատատեղերի միակցման ժամկետը հաճախ ընդունում են 4-6 տարի, մանրատերև փափուկ բնափայտ ունեցող տեսակներից կազմավորված անտառներում՝ 2-3 տարի:

ՀԱՍՏԵՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐՏ, Технологическая карта разработки лесосек; technological card of logging sites exploitation

Տիպային փաստաթուղթ, որն ընդգրկում է հատատեղի սխեման, նրա բնութագիրը, տեխնոլոգիական և քանակային հիմնական ցուցանիշները: Կազմում է անտառային տեղամասի գլխավոր ինժեները՝ վարպետի մասնակցությամբ, յուրաքանչյուր հատատեղի համար առանձին՝ ելնելով տոպոգրաֆիկ առանձնահատկություններից: Հ.Մ.Տ.Զ. համաձայնեցվում է գլխավոր անտառապետի հետ և հաստատվում անտառտնտեսության ավագ անտառապետի կողմից:

ՀԱՍՏԵՂԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ, Освидетельствование мест рубок; logging site examination

Անտառառդյունաբերական ձեռնարկությունների կողմից անտառահատման կանոնների պահպանման, արմատի վրա անտառանյութի բացթողման ճշտության ստուգումն անտառտնտեսական մարմինների կողմից: Կատարվում է անտառաթերող ձեռնարկության պաշտոնական ներկայացուցիչների մասնակցությամբ, սակայն նրանց անհարգելի բացակայությունը չի խոչընդոտում հատատեղի վավերացման ակտի կազմմանը: Հ.Վ. բացառապես է մթերված փայտանյութի փաստացի ծավալը և համադրում այն հատման համար թույլատրված ծավալի հետ: Լինում է միջանկյալ և վերջնական: Այն կատարվում է նաև բացառապես համար առանձին հատատեղի սահմանների խախտումը, անտառաբաժանային սահմանայությունների հատման համար ընտրված ծառերի թերհատումը, հատատեղի մաքրման վիճակը, մատղաշի վնասվածության աստիճանը և այլն:

ՀԱՏԱՏԵՂԻ ՈՒՐՄԱԿԱՅՈՒՄ, *Направление лесосек; direction of cutting area*

Որոշվում է երկրի կողմնադրության նկատմամբ հատատեղի դիրքով: Հ.Ու.-յամբ է պայմանավորված անտառի սերմնային վերականգնումը և մատղաշի աճը, ուստի խիստ կլիմա ունեցող վայրերում Հ.Ու. ընտրում են հյուսիսից հարավ, որպեսզի մեծացնեն հողի մակերեսին ընկնող ջերմային ճառագայթների քանակը, իսկ չոր ու շոգ շրջաններում՝ ընդիակառակը՝ սերմնաբույսերն արեգակի ուղիղ ճառագայթներից պաշտպանելու համար: Հ.Ու. ընտրում են նաև արևմուտքից արևելք: Լեռնային շրջաններում, հողի էրոզիայից խուսափելու նպատակով, առաջնորդվում են լանջի հորիզոնականներով:

ՀԱՏԱՏԵՂԻ ՄԱՔՐՈՒՄ, *Очистка лесосек; cleaning of cutting area*

Կատարվում է անտառատման աշխատանքները հեշտացնելու, աշխատանքային անվտանգությունը բարձրացնելու, անտառանյութի, դուրսբերման արդյունավետ կազմակերպման ու ինքնարժեքի իջեցման, հրդեհի ծագման, վնասատուների ու հիվանդությունների տարածման վտանգի կանխման նպատակներով: Կիրառում են մաքրում այրման միջոցով, քափոնը տարածքում հավասարաչափ շաղ տալով կամ առանձին խրճերով տեղում թողնելով, քափոնը օգտագործելով որպես երկրորդական հումք:

ՀԱՏԿՈՒՅՑՈՒՄ (ԱՏԳ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ), *Свойства / особенность (в ГИС среде); Feature in GIS environment*

Լանդշաֆտի պարզագույն, ամբողջական միավոր: Օր. գետը, ճանապարհը, լիճը, քլուրը և այլն, որոնք կարելի է արտահայտել կետային, գծային և քաղմանկյունային վեկտորային միավորներով: Հատկությունը և ատրիբուտը աշխարհագրական տարածքում գտնվող օբյեկտի հիմնական բնութագրիչներին են ԱՏԳ միջավայրում:

ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Рубки; cuttings, fellings*

Որոշակի անտառային տարածքում նշված ժամկետում ծառերի հատման կարգ: Բոլոր տիպի Հ. պայմանականորեն բաժանվում են 2 խմբի՝ գլխավոր օգտագործման, որոնք իրականացվում են հատուն ծառուտներում, և միջանկյալ օգտագործման, որոնց անվանում են նաև խնամքի Հ.:

ՀԱՏՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒՅՑՈՒՄ, *Оборот рубки; cutting cycle*

Որոշակի ժամանակաշրջան, որի ընթացքում անտառատունը լրիվ ընդգրկում է տվյալ տնտեսության անտառները: Հ.Շ. ավարտելիս սկզբնական հատված անտառամասում ծառուտը պետք է գտնվի հասակային հասուն փուլում: Որպես անտառատնտեսվարման ելակետ, անմիջականորեն կապված է անտառի հասունության հասկացության հետ: Բնորոշ է այն տնտեսություններին, որտեղ կիրառվում են հատատեղային կամ աստիճանական համատարած հատումներ:

ՀԱՏԱՍԱՆ ՊԼԱՆ, *План рубок; cutting plan*

Անտառշինության կողմից մեկ ստուգիչ ժամանակաշրջանում անտառօգտագործման համար նախատեսված անտառամասերի ըստ հատման հերթականության տարածքային տեղաբաշխումը քարտեզի վրա: Հ.Պ. ընգրկում է նաև հատման եղանակն ըստ տնտեսական մասերի, հաստատված կանոնների՝ արտացոլելով գլխավոր և միջանկյալ անտառօգտագործման ծավալները՝ ելնելով անտառային կարգի պահանջներից:

ՀԱՏԱՍԱՆ ՏԻՊ, *Тип вырубок; type of logging site*

Համատարած հատումից հետո անտառային տարածքների քնական առանձնահատկությունների դասակարգման միավոր, որտեղ որպես էդիֆիկատոր (որոշիչ) հանդիսանում է կենդանի ծածկոցը, որն աճման համալիր պայմանների արգասիք է:

ՀԱՏԱՍԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ, *Направление рубок; cutting direction*

Այն ուղղությունն է, որի դեպքում հատատեղերը միակցվում են մեկը մյուսին՝ այսինքն՝ հատատեղի ուղղությունն ուղղահայաց է Հ.ՈՒ.-յանը և, որպես կանոն, սերմերի տարածմանը նպաստելու նպատակով, ընտրվում է գերիշխող թափներին հակառակ: Լեռնային անտառներում, էրոզիայից խուսափելու և մատղաշը քիչ վնասելու համար, Հ.ՈՒ. ընտրում են վերից վար:

ՀԱՏՈՒԿ ՍԻԶԱՄԱՐԳ, *Специальный газон; special grassplot*

Ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղային դարալանքերի, արհեստական լցակույտերի վրա, սանիտարապահպանական գոտիներում, օդանավակայաններում, մարզադաշտերում ստեղծվող ճանաձով:

«ՀԱՐԲԱԾ» ԱՆՏԱՌ, *“Пьяный” лес; “drunk” forest*

Ծուռումուռ, պառկած, թեք բներով անտառ, որը սովորաբար առաջանում է շարժվող գրունտների, սողանքների և մշտական ձնախյունների ենթակա վայրերում:

ՀԱԳԵՆՈՒ ԱՆՏԱՌ, *Ясеневиый лес; ash forest*

Հացենու գերակշռությամբ ծառուտ: Սովորաբար լինում է կազմով խառը, ձևով բարդ (2-3 շարահարկերից): Հանդիպում են եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում: ՀՀ-ում Հ. Ա.-ները բացակայում են: Այստեղ հացենին աճում է կաղնուտներում՝ որպես ուղեկցող ծառատեսակ:

ՀԵՂԵՂԱՏԱՍԵՐԶ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐ, *Прибалочные лесные полосы; sub-bayrak woods*

Պաշտպանական անտառտնկարկների տարատեսակ: Հիմնադրվում են էրոզացված ձորակների եզրերին՝ ծապավենաձև և շերտերով:

ՉԵՂԵՂԱՏԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Балочные леса; Bayrak woods*

Տափաստանային և անտառտափաստանային գոտու անտառներ, որոնք տեղաբաշխված են հեղեղատների լանջերին: Դասվում են առաջին կարգի անտառների շարքը:

ՉԵՈՎԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, *Активные системы дистанционного зондирования; Remote sensing active systems*

Չեռահար ուսումնասիրության համակարգ, երբ հեռազննման սենսորները և սարքերն իրենք են արձակում, ստանում և գրանցում երկրի մակերևույթից անդրադարձած էներգետիկ ալիքները:

ՉԵՈՎԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՍԻՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, *Пассивные системы дистанционного зондирования; Remote sensing passive systems*

Չեռահար ուսումնասիրության համակարգ, որը պասիվ կերպով գրանցում է արթնայակի կամ այլ կրիչի սենսորին հասած, երկրի մակերևույթից անդրադարձած, ճառագայթային էներգիան և տեղեկատվությունը պահում է հիշող սարքի մեջ:

ՉԵՏԵՐՈՖԻԼԻԱ, *Гетерофиллия; heterophilya*

Չուղ, մեծությամբ և կառուցվածքով տարբերվող տերևների առկայությունն ունյն բնյաի վրա, օր.՝ որոշ ջրային թույսերի տերևները, եփրատյան բարդի, պարսկական եղևանի և այլն:

ՉԵՏԻՆ ԼՈՒՅԱ, *Свет задний; back light*

Անդրադառնում է ծառերի բնից ու տերևներից: Օժտված է թույլ ինտենսիվությամբ: Օգտվում են ստորին շարահարկի ծառերը, ենթանտառը, մատղաշը:

ՉԵՏԻՈՏՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ, *Пешеходная доступность; pedestrian accessibility (availability)*

Բնակարանից մինչև կանաչապատման օբյեկտը (շրջանային պարտեզ, գրասայգի) հետիոտն հաղթահարվելիք հեռավորությունն արտահայտող ցուցանիշ: Այն ընդունված է 1,5-2 կմ:

ՉԵՐԲԱՐԻՈՒՄ, *Гербарий; herbarium*

Ուսումնական կամ գիտական նպատակներով հատուկ հավաքած և չորացված թույսերի հավաքածու: Այդպես է կոչվում նաև այն հաստատությունը, որտեղ պահվում են հերբարիումի խոշոր հավաքածուները: Չ.-ները լինում են ընդհանուր (օր.՝ որոշակի տարածքի թուղթ թույսերի հ.-երը) և մասնագիտացված (օր.՝ դեղաթույսերի, սննդի, տեխնիկական թույսերի, անտառագիտական, դեմոդոլոգիական և այլն): Թույսերն ամ-

րացնում են հաստ թօթի վրա՝ նշելով ցեղը, տեսակը, հավաքման վայրը, ժամկետը և հավաքողի ու որոշողի ազգանունը:

ԳԵՐԲԻՑԻՂՆԵՐ, *Гербуцады; herbicides*

Քիմիական նյութեր, որոնք օգտագործվում են մոլիստերի ոչնչացման համար, մասնավորապես սիզամարզում: Լինում են համատարած ազդեցության հերբիցիդներ, որոնք ոչնչացնում են բույսերի բոլոր տեսակները, և ընտրողական ազդեցության Գ.-ներ, որոնք ոչնչացնում են միայն որոշակի տեսակի բույսեր:

ԳԻՐԻՒՂ, *Гибрид; hybrids*

Տարբեր ժառանգական հատկություններ ունեցող ծնողական ձևերից կամ առաջնային հոմոզիգոտի մուտացիաների արդյունքում առաջացած առանձնյակ՝ հետերոզիգոտային օրգանիզմ: Սովորաբար ցեղի տարբեր տեսակների կամ մեկ տեսակի ենթատեսակների (եղևանի, ասպիրակ, վարդ, գեորգենիներ, թրաշուշան) խաչասերումից ստացվող սեռական սերունդ:

ԳԻՐԻՒՂԱՑՈՒՄ, *Гибридизация; hybridization*

Տե՛ս խաչասերում:

ԳԻՐԻՒՂ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄ, *Гибридная классификация; hybrid classification*

Գիրիղի դասակարգումը ներառում է և՛ վերահսկվող և՛ չվերահսկվող դասակարգումների տեխնիկաները և հատկապես կիրառվում է ոչ միատարր բուսականություն և տեղագրական պայմաններ պատկերող նկարների վերլուծության և դասակարգման ժամանակ:

ԳԻՂՈՊՈՒՆԻԿԱ, *Гидропоника; hidroponics*

Անհող, խճի և ավազի վրա, հանքային որոշ նյութեր պարունակող ջրային միջավայրում բույսեր աճեցնելու եղանակ: Օգտագործվում է ծաղիկների, բանջարեղենի գյուղատնտեսական այլ մշակաբույսերի արագ աճեցման համար:

ԳԼԵԱ, *Глея, тропические дождевые леса; Hylea, tropical rain forest*

Խոնավ արևադարձային կամ մերձարևադարձային անձրևային անտառի բրազիլական անվանումը:

ԳԼՍԱՃՅՈՒՂԵՐ (ԿՍԱԽՔԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐ), *Скелетные ветви; skeletal branches*

Ծառի ամենահաստ (3-4 սմ-ից ոչ պակաս) ճյուղերը: Լինում են առաջին, երկրորդ և երրորդ կարգի: Կազմում են սաղարթի կմախքը:

ԳՅՈՒԹԱՇԱՐԻՄ, *Сакотбуженуе; sap ascent*

Ծառաբնի միջով ջրի և նրա մեջ լուծված նյութերի տեղաշարժ արմատներից դեպի տերևները և տերևներից դեպի արմատները: Բարեխառն գոտում աճող ծառերի Գ. սկսվում է վաղ գարնանը: Վերելակ հոսքը կատարվում է բնի և ճյուղերի բնափայտով: Տերևաթափ ժամանակ այն տեղի է ունենում արմատային ճնշման ուժի շնորհիվ, որը պայմանավորված է անոթներում արմատափայտի խտության օսմոտիկ ճնշմամբ: Տերևակալումից սկսած արմատափայտի շարժումն ինտենսիվանում է շնորհիվ տարնափիրացիայի հետևանքով առաջացող ձգողական ուժի, որը մի քանի անգամ գերազանցում է արմատների ճնշման ուժին: Արմատափայտը (քսիլեմային հյուսք) հիմնականում պարունակում է հանքային տարրեր և արմատներում կենսասինթեզի հետևանքով առաջացած նյութեր: Դեպի ներքև հոսքը կատարվում է ֆլոեմայի միջոցով՝ դեպի արմատները և պահեստավորող օրգանները տեղափոխելով շաքարներ և տերևային այլ մետաբոլիտներ:

ԳՅՈՒԿԱԾԹՆԵՐԻ ԵՆՂԱՇԵՐՏ (ԵՆՂԱՇԵՐՏՈՒԹՅՈՒՆ), *Наклон волокон; slope of grain*

Բնափայտի տարածված արատ, արտահայտվում է հյուսվածքների շեղ աճով: Ենդաշերտությունը զցում է բնափայտի ամրությունը, դժվարացնում փայտանյութի մշակումը:

ԳՅՈՒԿԱԾԹՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ, *Направление волокон; grain direction*

Լինում է ուղիղ, երբ դասավորված է ծառի առանցքի ուղղությամբ, շեղաշերտ, երբ շեղվում է ծառի առանցքից: Վերջինս լինում է բնական և արհեստական (երբ շեղաշերտությունն առաջանում է գերանի սխալ սղոցման հետևանքով):

ԳՈՂԱԲՐԵԼԱՎՈՒՄ, *Мелуорация; amelioration, improvement*

Տե՛ս Մելիորացիա:

ԳՈՂԱԾԱԾԿՈՒՅԹԱՅԻՆՆԵՐ, *Почвопокровные; ground covering, plant group*

Բույսերի խումբ, որը կանաչապատման մեջ օգտագործվում է ճանապարհամերձ թեքությունները, լցակույտերը և ընդհանրապես հողը ծածկելու, զորոգ առաջացնելու և դրանք էրոզիայից, լվացումից պաշտպանելու համար: Այդ խմբի բույսերը բնորոշվում են գեղազարդային որակներով՝ տերևների խճանկարով, վերերկրյա փովող զանգվածով (պուերարիա, բաղեղ, գիհի կազակական, կուսածաղիկ ցածրաճ) և այլն:

ԳՈՂԱՃՆԱՊՈՍՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Задерненность почвы; ground cover*

Հողի՝ խոտաբույսերով ծածկվածության աստիճանը: Նկատի է առնվում վերերկրյա և արմատային համակարգերի միակցումը: Հատկապես խիտ ճմաժածկույթ է առաջանում մարդագետնային պայմաններում և արհեստական ճմաշերտում:

ՀՈՐԱՍՏԱՌԻ ԵՐԿՐԱՊԼԱՍՏԻԿ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ, Геопластическое оформление участка; geoplastic forming of plot

Տե՛ս Միկրոգեոմորֆոլոգիայի ստիվա:

ՀՈՐԱՍՏԱԻ ՀԱՐԹԵՑՈՒՄ, Планировка; plot subgrading, leveling

Կանաչապատման նախագծի իրականացման առաջին փուլ: Հեռացվում են աղբը և ավելորդ քարերը, կտրված ժառերի բները, հնձվում է խտածածկը: Ծնակալած հողակտորների առկայության դեպքում ճիճը կտրատվում է 25-30 սմ² մակերես և 8-10 սմ հաստություն ունեցող շերտերով, դարսվում ստվերոտ, հարմար տեղում և կանոնավոր ջրվում մինչև օգտագործելը: Հողամասի հարթեցման ժամանակ վերացվում են անցանկալի բլրակները, լցվում չնախատեսված փոսերը և բուսահողը տեղափոխվում է, հարմար տեղում կուտակվում:

ՀՈՐԱՍՏԱԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, Описание участка; plot description

Հողամասի նյութական գնահատման բնութագիրը:

ՀՈՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՐՏԱԳԻՐ, Картограмма земляных работ; cartogram of digging

Ուղղաձիգ հատակագծման աշխատանքային գծագիր: Քանակային ցուցանիշներով պատկերում է հողային զանգվածների տեղաշարժը, փորվածքների լիցքը, բլրակների հարթեցումը, ավելորդ բնահողի հեռացումը:

ՀՈՐԱՊԵՏՐՈՒՄ և ՆՏԱՌԱՅԻՆ ՏՆԿԱՐԿՆԵՐ, Почвозащитные лесные насаждения; soil protection forest stands

Նույնն են՝ ինչ որ հակաէրոզիոն անտառային տնկարկները:

ՀՈՐԱՅՐՈՒՄ, Землевание; soil improvement

Սիզամարգի խնամքի միջոցառում: Հողակտորի մակերեսին բուսահողի, խառնաղբի շերտ է փռվում: Սովորաբար կատարվում է աշնանը:

ՀՈՐԸ ԲԱՐԵԼԱՎՈՐ ԾԱՌԱՅԵՍԱԿՆԵՐ, Почвоулучшающие древесные породы; soil-enrichment tree species

Ծառաթփային տեսակներ, որոնց տերևները թափվելիս ոլորվում են և նպաստում մուլի առաջացմանը՝ կեչի, թեղի, բոխի, հաճարենի և այլն:

ՀՈՐԸ ՎԱՏՁԱՐԱՅՆՈՂ ԾԱՌԱՅԵՍԱԿՆԵՐ, Почвоухудшающие древесные породы; soil-degraded (aggravated) tree species

Ծառատեսակներ, որոնք նպաստում են պոդզոլի առաջացմանը, բացասաբար ազդում հողի ֆիզիկական հատկությունների վրա, գոյացնում կամ ձևավորում կոպիտ թաղիք՝ եղևնի, խոնավ ու ցուրտ պայմաններում՝ սոճի, գիհի, մայրի:

ՀՈՂԵՐԻ ԴՍՍԱԿԱՐԳՈՒՄ, Классификация почв; soil classification

Կատարվում է ըստ բնական, գենետիկական խմբերի՝ անտառային, պողզուային և ճմապուղզղային, ճահճային, ճմամարգագետնային, միխրագույն անտառափաստաճահճային, գորշ անտառափաստաճահճային, սևահողեր, շագանակագույն հողեր, մերձարևադարձային դեղին հողեր և այլն: Յուրաքանչյուր հողային տիպ բաժանվում է ենթատիպերի և նրանց կուլտուրական տարբերակների: Ենթատիպերի բաժանման նպատակն է ցույց տալ մի տիպից մյուսին անցումները:

ՀՈՂԻ ԷՐՈԶԻԱ, Эрозия почв; soil erosion

Ջրի և քամու հետանցքով հողի քայքայումը և տեղատարումը: Ջրային է. լինում է լեռնային շրջաններում, հիմնականում հողի չիամակարգված օգտագործման հետևանքով, ինչը թուլացնում է հողի դիմադրությունը մակերեսային հոսքերի նկատմամբ: Ջրային է. լինում է մակերեսային, երբ տեղի է ունենում համատարած մակերեսային ողողում. գծային երբ մակերեսային հոսքերը լանջի երկայնքով առաջացնում են ոչ խորը ակոսներ. խորքային, երբ հոսքերը, ողողելով հողը և մայր ապարները, առաջացնում են ձորակներ: Քամու է. տեղի է ունենում օբլիեֆային բոլոր պայմաններում: Քամին վեր է հանում հողի մասնիկները՝ տեղափոխելով հեռու տարածություններ:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄ, Обработка почв; soil treatment (processing)

Անտառային տնկարկներում և տնկարաններում ծառային բույսերի արմատային սննդառության պայմանները բարելավելու նպատակով հողի վրա ներգործող միջոցառումներ: Կատարվում է մեխանիկական (հողամշակման) մեքենաներով, կրակի (այրման) և քիմիական եղանակներով: Եղանակի ընտրությունը կախված է բնակլիմայական պայմաններից, հողի ջրային և ջերմային ռեժիմից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից:

ՀՈՂԱՅԱԴՐՈՒՄ, Выветривание почв; eolation, land retirement

Մթնոլորտի, մակերեսային ջրերի, քամիների, բույսերի և կենդանիների օրգանիզմների գործունեության ներքո լեռնային ապարների ձևափոխում ու քայքայում: Լինում է ֆիզիկական և քիմիական: Ֆիզիկական Հ. ջերմաստիճանի տատանման արդյունք է, որը ջրի ներգործությամբ հանգեցնում է կարծր, ամուր ապարների քայքայման: Քիմիական Հ.-ման հիմնական գործոնը ջուրն է, քայքայման պրոցեսի ակտիվությունը պայմանավորված է նրա մեջ լուծված ածխաթթու զազի քանակով: Ջրի ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց մեծանու մ է նրա քայքայիչ ազդեցությունը:

ՀՈՂԱՅԱՐԻ, Бурелом; rolled timber slash, breakage

Երբ քամին ծառի բունը կտրում է սաղարթից ցած:

ՀՈՂՕՎՏԱՆԳՈՒԾՍԱՆ ՔԱՐՏԵՅ, *Карта пользования землей; Land-use map*

Քարտեզ, որը ցույց է տալիս տարբեր հողօգտագործման կատեգորիաների (առտավայր, անտառ, ճահիճ և այլն) տարածական տեղաբաշխումը:

ՀՈՎԻՌ, *ХРВИР (Инфракрасный видимый спектр высокой разрешимости); HRVIR (High Resolution Visible Infrared)*

ՀՈՎԻՌ –ն (HRVIR) ՄՊՈՏ 4 արբանյակի նկարահանող ապարատն է, որն ապահովում է 20 մ թույլատրելիության նկարների ստացումը 4 ալիքային տիրույթներում և 10 մ –ի ստացումը՝ կարմիր տիրույթում: Բացի ՀՈՎԻՌ–ից ՄՊՈՏ 4 բնաօստւրսային արբանյակի վրա տեղադրված է "Բուսականություն" նկարահանող ապարատը՝ 1150մ թույլատրելիությամբ և 2250 մ լայնությամբ գոտու ընդգրկմամբ: Այն օգտագործվում է երկրի մակերևույթի ընդարձակ տարածաշրջանների բուսածածկի մոնիթորինգի համար:

ՀՈՈԱԾԱԴԻԿ, *Стерильный цветок; sterile flower*

Անպտուղ ծաղիկ, թերզարգացած անդամներով (վարսանդ, առջ), որոնք երբեմն ձևափոխված են ծաղկաթերթերի: Ընդունակ չէ սերմեր առաջացնել (բռնչի, վարդ, դրախտավարդ և այլն): Տես նաև՝ Լիաթերթ ծաղիկ:

ՀՈՈԱՇԻՎ, *Стерильный побег (жировой, волчек, Ивановы побеги); sterile outgrowth*

Սովորաբար բնի ստորին մասում առաջացող, շատ փարթամ, խոշոր տերևներով անպտուղ ընձյուղ: Խոշոր տերևներով բույսեր ստանալու նպատակով, սովորաբար, երիտասարդ ծառերը (երկնածառ, թխկի հացենիատերև և այլն) պատվաստում են կոճղի վրա:

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, *Пожарная безопасность; fire security, fire-safety*

Նախագզուչական միջոցառումներ, որոնք անտառում հրդեհառաջացման վտանգը հասցնում են նվազագույնի, ստեղծում պայմաններ արագությանը մարելու ծագած հրդեհը: Հրդեհային նախագզուչական միջոցառումներից են՝ արգելել հրդեհավտանգ ժամանակամիջոցում ասեղնատերևավոր անտառներում խարույկ վառելը (մյուս անտառներում խարույկի տրամագիծը պետք է չանցնի 0.5մ-ից), այրվող լուցկի գցել անտառում, թողնել հեշտ բռնկվող նյութերով ներծծված լաթեր, շարժիչ գործարկելիս մեքենաները լիցքավորել վառելիքով, որսի ժամանակ օգտագործել հեշտ բռնկվող խցաններ և այլն:

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԴԻՏԱԿԵՏ, *Пожарный наблюдательный пункт; fire observation point*

Հատուկ կառուցվածք և սարքավորված դիտակետ, աշտարակներ, սրահներ: 15 մ բարձրությամբ դիտակետից դիտման տեսադաշտը կազմում է 15 կմ, 25 մ բարձրությունից՝ 19 կմ, 35 մ՝ 23 կմ:

ՀՐԴԵՎՈՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ՝ *Классы пожарной опасности; fire hazard classes, groups*

Ելնելով եղանակային պայմաններից՝ անտառը տարբերակում են ըստ հրդեհավտանգության, ինչը հնարավորություն է տալիս կանխել կամ կազմակերպել հրդեհի մարումը: Ընդունված է հրդեհավտանգության 4 դաս՝

1. արտակարգ հրդեհավտանգ. դիտվում է երկարատև տաք, չոր եղանակի պայմաններում՝ օդի միջին ջերմաստիճանը 20⁰-ից բարձր, օդի հարաբերական խոնավությունը՝ 40%-ից ցածր.
2. ուժեղ հրդեհավտանգ. այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, հարաբերական խոնավությունը՝ 40-60%.
3. աննշան հրդեհավտանգ. անձրևները հաճախակի են, հարաբերական խոնավությունը՝ 60-80%, անտառային թաղիքը՝ խոնավ.
4. ոչ հրդեհավտանգ. երկարատև անձրևներ են, հարաբերական խոնավությունը՝ 80 %-ից բարձր:

ՀՐԿԻԶՈՒՄ, *Пал; burning*

- Արտավայրերի խտտածածկույթի բարելավման, անցանկալի րույսերի և թափվածքի ոչնչացման նպատակով անտառի ստորին շարահարկի խտուրի ու թփերի այրում:
- Մարդու գործունեության հետևանքով կամ բնական ծագման, երբեմն կանխամտածված, անտառային հրդեհ՝ անտառահատվածը արոտավայր կամ վարելահող դարձնելու համար:

ՀՈՒՍՈՒՄ, *Դյույս; humus*

Քայքայված կամ մասամբ քայքայված օրգանական մնացորդներ հողում: Հատկանշական է մուգ գույնը: Պարունակում է րույսերի սննդառության հիմնական տարրերը, որոնք մանրէների ներգործությունից դարձել են մատչելի նրանց համար: Անտառային հողերում հանդիպում են կոպիտ և փափուկ հումուս: Կոպիտ Գ.-ը լինում է ամուր կապված սնկերի հիֆերով: Առաջանում է ասեղնատերևավոր ծառուտներում՝ քարձր խոնավության և ցածր ջերմաստիճանի պայմաններում: Փափուկ Գ.-ը (մուլ) սովորաբար առաջանում է լայնատերև ծառերից կազմավորված ծառուտներում՝ քարձր ջերմաստիճանի և ցածր խոնավության պայմաններում:

ՀՈՒՍՈՒՍԱՅԻՆ ՀՈՐԻԶՈՆ, *Դյույսօծան հորիզոն; humus horizon*

Հանքահողային կտրվածքի վերին մասում հումուսի կուտակման «Ա» հորիզոն:

ՀՈՒՄԱՆ ՐԱԶՄ, *Сырьебա ծառ; resource base*

Անտառադյունաբերական ձեռնարկություն, անտառային ֆոնդի տարածք, որը հանդիսանում է անտառմատակարարման օբյեկտ: Հ.Բ.-ի սահմանները որոշելիս ելնում են անտառային ֆոնդի տարածքային առանձնահատկություններից, փայտանյութի տեսականու կազմից, տրանսպորտային պայմաններից, անտառանյութն օգտագործող ձեռնարկությունների տեղաբաշխվածությունից, անտառածրերման ծախսերից և այլն:

ՉՄԵՆԱՅԻՆ ՊԱՐՏԵԶ, *Зимний сад; winter garden*

Տարածք հասարակական շենքերի ներսում, որը գեղարվեստորեն ձևավորված է մեծ ծաղկամաններում, արկղերում, բուսարկղերում կամ հողում փոխտնկված տարբեր տեսակի, հիմնականում, արևադարձային և մերձարևադարձային բույսերով: Չմեռային այգիներում օգտագործվում են նաև մանր ճարտարապետական ձևեր (խեցեղեն, քար, փոքրիկ ջրավազաններ, քանդակներ): Նախատեսված է կարճատև հանգստի համար:

ՉՄԵՆԱՂԻՄԱՅԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Зимостойкость; winter resistant*

Չմռան աննպաստ պայմաններին (ցածր ջերմաստիճան, ձմեռային երաշտ, ջերմաստիճանների հաճախակի փոփոխություններ, սառցակալում և այլն) բույսերի դիմանալու ունակությունը:

ՉՄԵՆԱՎԱԿԱՆԱՉ ԱՆՏԱՈՆԵՐ, ՏՆԿԱՐԿՆԵՐ, *Зимнезеленые леса, насаждения; winter-green forest, stand*

Արևադարձային և մերձարևադարձային տերևաթափ անտառների (սավանների) անվանումներից մեկը: Ելնելով մթնոլորտային տեղումների տարեկան բաշխման բնույթից՝ ծառերը տերևաթափ են լինում ամռանը, իսկ ձմռանը կանաչում են:

ՉՄԵՆԱՎԱԿԱՆԱՉ ԲՈՒՅՍԵՐ, *Зимнезеленые растения; winter-green plants*

Բարեխառն լայնությունների բույսեր, որոնց ձմեռում են կանաչ տերևներով: Իսկական ձմեռնականաչ բույսերի ընձյուղները հանդես են գալիս աշնանը կամ ձմռան սկզբին և գործում ամբողջ ձմռան ընթացքում: Գարնանը սկսվում է դրանց բուռն աճը, ծաղկումը, որից հետո վերգետնյա ընձյուղները (հաճախ ամբողջ բույսը) մահանում են: Դրանք հիմնականում միամյաներ են («ձմեռող էֆեմերներ») և մի շարք բազմամյա էֆեմերոիդներ: Միջերկրածովյան կլիմայի արգասիք են:

ՉՄԵՆԱՏԵՐԵՎԱԹԱՓ (ԱՍԱՌՆԱՎԱՆԱՉ) ԱՆՏԱՈՆԵՐ, *Зимнелистопадное леса; cold-deciduous woodland*

Տեղաբաշխված են բարեխառն գոտու հարավային և միջին մասերում: Կազմավորված են լայնատերևավոր ծառատեսակներից՝ կաղնի, հաճարենի, թխկի, թռի, հացենի և այլն:

ՉՆԱԾԱԾԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԱԴՐԱՐՉՈՒՄ, *Отражение снега; Snow reflectance*

Չնածածկույթն ունի սպեկտրալ անդրադարձման առավելագույն արժեքները, որը միայն մոտիկ ինֆրակարմիր տիրույթում է մի քիչ փոքրանում: Ապեկտրալ նույն

հատկություններով են օժտված նաև ամպային զոյացությունները, որոնք նույնպես շատ բաց գունավորումներով են հանդես գալիս, բացառությամբ երկարալիքային տիրույթի որոշ հատվածների, որտեղ կլանման պրոցեսները ինտենսիվ են և նկատվում են մուգ գունավորումներ:

ՉԱՆԱՅՎԱԹ ԱՆՏԱՌԱՇՆՈՒՄ, *Снегосборные лесные полосы; snow-protection forest belts*

Անտառաշերտեր, որոնք հիմնադրվում են տրանսպորտային ուղիները ճնախուսերից պաշտպանելու համար: Չ.Ա. մեղմացնում են քամին և նպաստում ծյան փաթիլների ազատ անկմանը: Անտառաշերտն ընդլայնակի կտրվածքում պետք է ունենա սահուն տեսք, իսկ ծառերի դասավորվածությունը լինի շախմատաձև: Դաշտի հատող կողմում տնկվում են ցածրահասակ փփեր, որոնց հաջորդում են 2 շարք բարձր փփեր, այնուհետև առաջին և երկրորդ կարգի ծառեր, որոնց միջև տնկվում են թփատեսակներ, որոնք ապահովում են անտառաշերտի առավելագույն խտությունը: Անտառաշերտի տրանսպորտային ուղուն հարող եզրը պետք է լինի ամրվազն 10 մ հեռավորության վրա: Տեսակաչարի ընտրության և տեղաբաշխման ժամանակ հաշվի է առնվում նաև անտառաշերտի գեղազարդությունը:

ՉՆԵՋԱՐԴ, *Снеголом; snow breakage*

Ծառեր, որոնց բունը կամ գագաթը ջարդված է ծյան ծանրության հետևանքով: Չ.-ի առավել ենթակա են սոճին, կաղամախին, հիմնականում միատարր, խիտ, երիտասարդ տնկարկները, ինչպես նաև բնի փտախտով հիվանդ ծառերը: Պայքարի եղանակները՝ խնամքի և սանիտարական հատումների պարբերական կիրառում, ինչպես նաև խառը ծառաբների հիմնադրում:

ՉՆԵՏԱՊԱԼՈՒՄ, *Снеговал; lean or uprooting due to snow pressure*

Ծյան ծանրության տակ ծառերի տապալում, քների, գագաթնային և կմախքային ճյուղերի ծռում: Ի տարբերություն ձնեջարդի, ծառերը ոչ թե ջարդվում, այլ ծռվում կամ արմատախիլ են լինում: Չ.-ից հիմնականում տուժում են երիտասարդ, մեծ խտություն ունեցող ծառուտները: Պայքարի եղանակները՝ խնամքի հատումների ժամանակին և ճիշտ կիրառում:

ՉՈՂ (ՉՈՂԵՐ), *Жерды; pole*

Ծառաբնի 3-6.5 մ, որի վերին կտրվածքի տրամագիծը 3-7 սմ է: Եինափայտի տեսականի, որն օգտագործվում է տնտեսության մեջ առանց վերամշակման:

ՉՈՐԱՄԵՐԶ ԱՆՏԱՌԱՇՆՈՒՄ, *Приовражные лесные полосы; ravine forest belts*

Պաշտպանական անտառաշերտերի տարատեսակ: Չորերի և ձորակների էրոզիոն պրոցեսները կանխելու նպատակով նրանց եզրերից (3-5 մ հեռավորության

վրա) հիմնադրվում են ժապավենաձև անտառաշերտեր: Չորակի եզրային շարքերում տնկում են արմատամացառներով զարգացող տեսակներ՝ չիչխան, բալենի, ռոբինիա կեղծ ակացիա և այլն:

ՉՈՐԱՆ, Жердняк; perch stand

Մատղաշին հաջորդող ծառուտի հասակային փուլ: Բնորոշվում է ծառերի ինտենսիվ աճով, տերևային և ջախի մեծ զանգվածով, ծառաբնի ու պսակի խիստ տարաբերակումով, բնի ինտենսիվ մաքրմամբ և առանձին ծառերի անկմամբ: Չ-ային ծառուտները դասում են հասակային երկրորդ կարգին: Այն սկսվում է 15-20 տարեկանից և ավարտվում 30-40 տարեկան հասակում: Չ-ային ծառուտների զնահատման ցուցանիշները պայմանավորված են անտառակազմող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով, անատառաճեցման պայմաններով և ծառերի միակցվածության աստիճանով:

ՉՈՐԱՅԱՍԱԿԱՅԻՆ ՏՆԿԱՐԿՆԵՐ, Донные насаждения; ground stands, bottom-dwelling stands

Հիմնադրվում են խմբային զանգվածներով կամ շերտերով՝ ջրահավաք ավազանների գլխամասում, ծորակների հատակում, գետերի երկայնքով: Պաշտպանական անտառների տարատեսակ է: Կատարում են անտառաբերելավման դեր՝ ամրացնում են գետերի հունը, ծորակների հատակը, գետաբերանները, կանխում կոպիտ հոսքը, պաշտպանում ջրամբարները տղմոտումից, նվազեցնում ջրի մակերեսային գոլորշիացումը, բարելավում ջրօդազտրոման, ջրամբարների և նրանց շրջապատի սանիտարահիգիենիկ վիճակը և ձկնաբանության պայմանները: Չ.Տ.-ի երկարությունը որոշվում է տեղի կոնկրետ պայմաններով և նպատակայնությամբ: Սովորաբար լինում են 10-250 մ (1-2-ից մինչև 50 մ լայնությամբ շերտերով): Հիմնականում օգտագործում են ուռենի, բարդի, լաստենի, խոնավասեր այլ տեսակներ:

ՉԵՎ, ՖՈՐՄԱ, Форма; form

Ներտեսակային տաքսոնոմիական կատեգորիա: Բուսաբանական դասակարգման մեջ (երբեմն առանձնացվում է ենթաձև) հիերարխիական աստիճաններում ամենաստորին տեղն է գրավում:

ՉԵՎԱՎՈՐՎԱԾ ԾԱՌԵՐ, Формированные деревья; formed trees

Ծառեր, որոնք էտման ու խուզման միջոցով ձևավորվում են կանաչապատման նախագծին համապատասխան:

ՉԵՎԱՎՈՐՈՒՄ, Формовка; formation

Էտման, խուզման տեսակ: Նպատակ ունի քույսին տալ նրան ոչ բնորոշ արտաքին տեսք (զնդի, խորանարդի, մեկ-երեք շարքանի, աստիճանաձև կանաչ ցանկապատ): Տե՛ս նաև քույսերի էտում և ձևավորում:

ՉԵՎԱՓՈՒՆՎԱԾ ԱՐՄԱՏՆԵՐ՝ *Деформированные корни; crashed roots*

Ծառերի և թփերի արմատները, որոնց մորֆոլոգիական կառուցվածքը սխալ տնկման կամ հողային անբարենպաստ պայմանների հետևանքով շեղված է տեսակին բնորոշ բնական տեսքից: Հիմնականում նկատվում է անտառային մշակույթներում: Նման արմատաներ ունեցող ծառերը ցուցաբերում են թույլ աճ և սովորաբար մահանում են:

Ղ

ՂԱԺՈՒ ԱՆՏԱՈՒՆԵՐ (ՂԱԺՈՒՏ), *Гробинниковые леса; oriental hornbeam forest*

Ծառուտների դաժու (արևելյան բոխու) գերակշռությամբ: Մեծ մասամբ ունեն երկրորդական ծաղում: Որպես կանոն առաջանում են վրացական կաղնու ծառուտների տեղը՝ նրա ինտենսիվ հատումից հետո:

Ճ

ՃԱԳՃԱՅԱԾ ԳՈՂ, *Заболоченная почва; waterlogged soil, boggy ground*

Գողամաս, որն այժի է ընկնում ստորգետնյա ջրերի բարձր մակարդակով: Դրա հետևանքով վատթարանում են հողի օդային ռեժիմը և ընդհանրապես՝ ազոտոմիակա պայմանները: Դժվարանում է արմատների թափանցումը հողի խոր շերտերը, երբեմն դրանց փտման պատճառ դառնում:

ՃԱՆԱՊՐԳԱՍԵՐԺ ԱՆՏԱՈՒՇԵՐՏԵՐ, *Придорожные лесные полосы; roadside forest belts*

Ժապավենաձև անտառաշերտեր, որոնք հիմնադրվում են պաշտպանելու երթուղիները, ավտոճանապարհները ծնափլուզումներից, փոշուց, ավազից, սողանքներից: Ունեն մեծ գեղազուտական և սանիտարափոփոխիչ նշանակություն: Ճանապարհամերձ անտառաշերտերը լինում են միաշերտ և բազմաշերտ: Շերտի լայնությունն ընդունված է 10-25 մ, լեռնային շրջաններում կարող են լինել ավելի լայն, շարքերի թիվը ժապավենում՝ 2-7: Անտառաշերտի հեռավորությունը ճանապարհաեզրից, երկաթգծից 10-25 մ, ավտոուղիներից՝ 1-70 մ:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ, *Японский сад; Japanese garden*

Ճապոնական պարտեզային արվեստի ավանդական տեսակ: Բնորոշվում է փոքր տարածությունների վրա բնության ճշգրիտ վերարտադրմամբ, պարտեզի մանրամասերի նուրբ մշակմամբ:

ՃԱՐՏԱՐԱՎԵՐՏՈՒԹՅՈՒՆ, *Архитектоника; architectonics*

Ծառի սաղարթի կառուցվածքը գեղազարդային ծառաբանությունում: Բնորոշվում է նրա չափսերով, ձևով, ճյուղավորման բնույթով, ճյուղերի և շիվերի փոխադարձ դասավորության գեղեցկությամբ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, *Архитектурная графика; architectural graphics*

Գծանկարչական արվեստի հատուկ տեսակ, որի օգնությամբ պատկերվում է նախագծման, վերակառուցման օբյեկտը: Ճարտարապետական գծանկարչության ուճաձևերով բացահայտվում են օբյեկտի և նրա մասերի (զբոսայգու հեռանկար, ճարտարապետական ձևեր) գեղարվեստական որակները:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ, *Архитектурный проект; architectural project*

Լանդշաֆտի կազմակերպման կամ վերակառուցման նախագիծ: Մշակվում է լանդշաֆտային տաքսացիայի հիման վրա: Գծանկարչական ենթահիմք է ծառայում գլխավոր հատակագծի պատճեն: Նախագիծը պարունակում է տարածքի լանդշաֆտի սկզբունքային լուծումները մաթոզությամբ, ցուցադրելով նրա կոմպոզիցիոն տարրերի՝ ռելիեֆի, ջրամբարների, հատակագծային ցանցի և կանաչ տնկարկների փոխադարձ կապվածության հեռապատկերային գծերը: Պայմանական նշաններով ցույց են տրվում պահպանվող և նախագծվող կանաչ տնկարկները: Հատուկ կերպով առանձնացվում են խիտ ու նոսր տնկարկները, բաց տարածությունները, բացատները, ճանապարհները, կաժանները, կառույցները: Նշվում են հաղորդակցության բոլոր ուղիները, ճարտարապետական փոքր ձևերը, լուսավորության ցանցը և այլն:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ, *Архитектурные элементы в парке; architectural elements in parks*

Ենթեր և կառույցեր (կանաչ թատրոն, պարահրապարակ, ընթերցարան, բեմահարթակ, քանդակ և ճարտարապետական փոքր ձևեր) զբոսայգու: Զուգակցող դեր են խաղում զբոսայգու ընդհանուր հատակագծային լուծման մեջ և ներդաշնակում լանդշաֆտի տարրերի հետ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐ ՉԵՎԵՐ, *Малые архитектурные формы; small architectural forms*

Պարտեզպուրակային կոմպոզիացիայի տարրեր՝ տաղավարներ, քարմաներ, նստարաններ, կամարներ, բույսերով պատրաստված արձաններ, աղբամաններ, կրպակներ, մանկական հրապարակներ, ծածկեր և այլն:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, *Архитектура; architecture*

Ենթերի, կառույցների նախագծման ու շինարարության, գեղարվեստական արտահայտիչ անսամբլների ստեղծման արվեստ: Ե-ը դրսևորվում է արդյունաբերական ճարտարապետության, գյուղատնտեսության, բնակելի, հասարակական, պարտեզպուրակային արվեստի և այլ բնագավառներում: Ե-ը սերտորեն կապված է պարտեզպուրակային արվեստի, կանաչ շինարարության հետ: Պարտեզները, պուրակները և կանաչապաճան մյուս օբյեկտները ծառայում են ինչպես առանձին շենքերի և

կատույցների, այնպես էլ ամրոջ ճարտարապետական անսամբլների գեղարվեստական արժանիքներն ընդգծելու, ի հայտ բերելու համար:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՈՒՋԱՂՐՈՒՄ, *Архитектурно-планировочное задание; architecture-planning task*

Կանաչապատման կարևոր և խոշոր օբյեկտի (հուշահամալիր, քաղաքային խոշոր զբոսայգի) նախագծման առաջին փուլ: Մշակվում է հիմնական նախագծային գաղափարը: Կազմված է քաղաքի կանաչապատման սխեմայից, օբյեկտի գլխավոր հատակագծից, ինժեներական բարեկարգման ուղևագծից, բացասական գրությունից և բոլոր աշխատանքների ֆինանսական նախահաշվարկից:

ՃԱՔ, *Трещина; shake*

Բնավայտի արատ, որն առաջանում է տարբեր ուղղություններով անհավասար չորանալու հետևանքով: Տարբերակում են ներքին. ընդլայնակի կամ միջուկային ճ. և արտաքին ճ, որը մակերեսից անցնում է միջուկ:

ՃԵՂՔԿՊԱՏՎԱՍՏ, *Прививка под кору; bark grafting*

Պատվաստման եղանակ: Պատվաստակալի կեղևի տակ ճեղք են բացում, այնտեղ մտցնելով պատվաստացուի կտրոնը՝ մերկացված կամբիոմով: Պատվաստի այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ կտրոնների հաստությունը 2-4 սմ է: Լավագույն ժամկետը վաղ գարունն է, մինչև հյութաշարժը: Կտրոնները նախապատրաստվում են վաղօրոք: Պատվաստի հաջողությունը կախված է կտրվածքի լրիվ մեկուսացումից, օդից և խոնավությունից: Այդ նպատակով ճեղքը ծածկում են պարտիզային մածուկով և ամուր կապում խոնավության համար անթափանց հատուկ գործվածքով կամ սինթետիկ նյութերով:

ՃՆԱԳՈՅԱՅՆՈՂ ԲՈՒՅԱԵՆ, *Дернообразующие растения; turf-forming plants*

Չողը հյուսապատող, ճիմ առաջացնող արմատային համակարգով բազմամյա խոտեր: Հիմնականում պատկանում են հացազգիների ընտանիքին: Ճ.Բ.-երը ըստ թփակալման լինում են կոճղարմատայիններ, կոճղարմատաթփայիններ, փխրուն թփայիններ և խիտ թփայիններ:

ՃՆԱՅՈՂ, *Дерновая почва; turfen soil*

Սարգագետինների և տափաստանների հողի վերին շերտը: Օգտագործվում է պարտիզահող ստեղծելու համար:

ՃՆԱՆՍՏԱՐՈՒՄ, *Дерновая скамья; turfen bench*

Ելուստաձև ճմային կառուցվածք զբոսայգիների պարտիզների և կածանների մոտ: Բնորոշ է եղել միջնադարյան պարտեզներին, ժամանակակից մի շարք զբոսայգիներում դեռևս պահպանվում է:

ԾԱԱՇԵՐՏ, *Дерн; greensward (turf)*

Բազմամյա հացազգի և տարախոտային բույսերից ստեղծված սիզամարզեր, որտեղ բույսերի մեծ խտության և արմատային համակարգի խիտ ցանցի շնորհիվ առաջանում է թաղիքանման զանգված: Կիրառվում է էրոզիայի ենթակա թեք լանջերի ամրացման և զեղազարդային ձևավորման համար: Օգտագործվում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով աճեցված ճմաշերտ: Վերջինս գերադասելի է, քանի որ էժան է և բնության մեջ էրոզիոն օջախներ չի առաջացնում:

ԾԱԱՊԱՏՈՒՄ, *Одерновка (одренование); turfing*

30⁰-ից ավելի թեքություն ունեցող լանջերի և հողաթմբերի վրա կարճ ժամկետում սիզամարզում, զբոսայգու կածանների երկարությամբ և հարթ վայրերում սիզամարզի եզրաշերտեր ստեղծելու եղանակ: Կատարվում է տնկարաններում պոլիէթիլենային հիմքի վրա, աճեցված ճիմի կամ սիզամարզի փոման միջոցով:

ԾՅՈՒՂԱԽԱՐԱԶԱՆՈՒՄ, *Озеленявание; landscaping*

Մի ծառի տերևների և դալար ճյուղերի վնասումը կից ծառի ճյուղերի քամեհարման հետևանքով: Բնորոշ է ասեղնատարակալոր տեսակներին, առանձնապես եղևնուն ու սոճուն, որոնց ճյուղերը կտրվում են կեչու ճկուն և ամուր ճյուղերի հարվածից: Ծ-ից խուսափել հնարավոր է խնամքի հատումի ճիշտ կազմակերպմամբ:

ԾՅՈՒՂԱՊԱՏՎՈՂ ՈՍՏԻՎՆԵՐ, *Обрастающие веточки; overgrowing branches*

Սովորաբար փոքր ոստիկներ, որոնց վրա առաջանում են ծաղկող ընձյուղներ:

ԾՅՈՒՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, *Ветвление; branching*

Բազմամյա ճյուղերի և կոճղարմատների նոր ընձյուղների առաջացումը և դրանց փոխադարձ դիրքը ցողունի վրա: Տարբերում են ճյուղավորության հետևյալ տիպերը, դիխոտոմիկ, մոնոպոդիալ և սիմպոդիալ: Ծ.-ը որոշում է բույսի արտաքին տեսքը: Հացաբույսերի մոտ (դաշտավայրկազգիների) գոյություն ունի Ծ.-թյան յուրահատուկ ձև՝ թփակալում, երբ ընձյուղները դուրս են գալիս հանգույցից (թփակալման հանգույց):

ԾՅՈՒՂԱՏՈՒՄ, *Подрезка; pruning*

Տե՛ս Բույսերի էտ և ձևավորում:

ԾՅՈՒՂԵՐԻ ՏԱՇՏԱԹԱՂ (ԱՆԴԱԼԻՍ), *Отщедок; layers*

Երբ ծառի կամ թփի ճյուղը, որը բնական կամ արհեստական թեքվում է մի կողմի վրա, հավում է հողին և առաջացնում հավելյալ արմատներ: Հետագայում արմատակալած ճյուղերը բնական կամ արհեստական ճանապարհով կարող են անջատվել մայր բույսից և անցնել անհատական կյանքի: Անտառում Ա.-ով բազմանում են լորենին, եղևնին, սիբիրյան խեժափիճին, դողդոջուն բարդին բամաթիվ թփատեսակներ (կազակական գիհի, կոկոռչենի, հաղարջենի) և այլն:

Մ

ՄԱԳԼՏՈՂ ԲՈՒՅՍԵՐ, *Лазяющие растения; scandent plants*

Խիղբերով և փշերով հեմարանների ամրացող լիաներ: Օգտագործվում են կամարների, տաղավարների, թարմաների ստեղծման, շենքերի պատերի, պատշգամբների կանաչապատման համար (մամրիչ, վարդեր, խաղող, պարիլյակ):

ՄԱԶԱՐՍԱՏՆԵՐ, *Корневые волоски; root fuzz*

Արմատի մակերեսային բջիջների ելուստներ, որոնք հողից կլանում են ջուր և հանքային նյութեր՝ կատարելով միևնույն ժամանակ որոշ բարդ օրգանական նյութերի սինթեզ:

ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՉՈՒՔ, *Сток поверхности; surface run-off*

Անձրևների և ձյան հալոցքից առաջացած ջրերի հոսքը գետնի մակերեսով: Մ.Չ.-ի ինտենսիվությունը պայմանավորված է տեղումների քանակով և առատությամբ, հողի կազմով, վիճակով, բուսածածկի տիպով, խտությամբ և ռելիեֆով: Ամտառը Մ.Չ.-ի կանխման հզոր միջոց է: Նրա այդ հատկությունը պայմանավորված է անտառի հասակով, լրիվությամբ:

ՄԱԿՎԻՍ, *Маквис; Maquis*

Միջերկրածովյան երկրների մշտականաչ կոչտատերև, երբեմն փշոտ թփուտներ և ոչ բարձր ծառեր: Այս բուսական համակեցությունը հիմնականում առաջանում է հատված անտառների տեղում:

ՄԱԿՐՈՒՍԼԱՆԴՇԱՓՏ, *Макроландшафт; macrolandscape*

Աշխարհագրական լանդշաֆտի հորիզոնից հորիզոն ձգվող խոշոր հատված: Թելադրում է զբոսայգու աճը: Նրա առանձին տարրերը ֆոն են ծառայում զբոսայգու կոմպոզիցիաների համար (օր.՝ Սևանա լիճը, Արարատ լեռան համայնապատկերը):

ՄԱԿՐՈՎԿԼԻՄԱ, *Макроклимат; macroclimate*

Աշխարհագրական զոնաների, մայրցամաքների, օվկիանոսների և այլ խոշոր սեզոնների կլիմա: Ծառաբանական և կանաչապատման շրջանացման ժամանակ հաշվի առնվող կարևոր գործոն է:

ՄԱԿՐՈՐՈՒԵԼԻԵՖ, *Макрорельеф; macror relief*

Երկրագնդի մարևերույթի խոշոր անհարթություններ, ռելիեֆի խոշոր ձևեր, որոնց բարձրությունները տատանվում են մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար

մետր (լեռնաշղթաներ, միջլեռնային իջվածքներ, հրաբխային կոներ, գետերի ավազաններ և այլն):

ՄԱՅՐԱԿԱՆ ՊԼԱՆՏԱԳԻԱ, *Плантация маточная; stock plantation*

Տնկարկային բաժին կամ առանձին հատուկ տնկարկ, որտեղից մթերում են կտրոններ անտառմշակութային կամ կանաչապատման համար՝ արմատակալեցնելու նպատակով:

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ, *Детский парк; children's park, Juvenile Park*

Միկրոշրջանային կանաչապատման օբյեկտ, երեխաների հանգստի համար նախատեսված տնկարկների խոշոր զանգված: Ընդգրում է երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնող մի շարք խաղահրապարակներ, ֆիզկուլտուրիական կառույցներ և այլն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱՊԼԱՐԱԿ, *Детская площадка; children's playground*

Զբոսայգու, պարտեզի կամ բնակելի տարածքի հատակագծային տարր: Նախատեսված է երեխաների հանգստի և շարժուն խաղերի համար: Ստորաբաժանվում է առանձին հատվածների՝ մինչև 3 տարեկան, 4-6 տարեկան, 7-14 տարեկան երեխաների համար:

ՄԱՆՐԱԿԵՐՏ, *Макет; model, mock up*

Կանաչապատման օբյեկտի տարածական մոդել: Պատրաստվում է տարբեր նյութերից՝ փոքրացված մասշտաբով: Արվում է նախագծի լուծումները ստուգելու և կատարելագործելու նպատակով:

ՄԱՆՐԱԳԱՏ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Подсеточное хозяйство; tray farm*

Անտառտնտեսվարում, որը հետապնդում է ստանալ մանրափայտ (ջախ): Անգազաթ անտառտնտեսվարման տարատեսակ: Ծառի կողային կմախքային ճյուղերը հատում են՝ թողնելով փոքր կոճղիկներ, որոնց վրա առաջանում են նոր շիվեր: Երբեմն 5-6 մ բարձրության վրա հատում են նաև առանցքային ճյուղերը:

ՄԱՆՐԱԳՈՂ, *Мелкозем; fine-earth*

1 մմ-ից փոքր տրամագիծ ունեցող հողային տարրական մասնիկ:

ՄԱՆՐԱՄԱՍԵՏՏԱԲ ՕՂԱԼՈՒՄՆԱԿԱՐՆԵՐ, *Мелкомасштабные аэрофотоснимки; Small-scale aerial photos*

Ամրամասշտաբ օդալուսանկարներն ունենում են 1:1 000 000- 1: 10 000 000 մասշտաբ, որոնք տիպիկ են բնառեսուրսային արբանյակներին, ինչպես նաև օդանավավարվող տիեզերանավերին և ուղեծրային կայաններին:

ՍԱՆՐԱՊՈՐՏՈՒՄ, *Kypruno; clump of trees*

Ծառուղիներով, կածաններով կամ զրոսայգու կառույցներով ու հրապարակներով սահմանազատված կանաչ տարածություն: Չհավորված է սիզամարզով, ծառերով ու թփերով, ինչպես նաև ծաղկային օջախներով: Կանաչապատման նախագծման հիմնական միավորն է, ըստ որի կազմվում են աշխատանքային գծագրերը և ֆինանսական նախահաշվարկի առանձին բաժինները:

ՍԱՆՐԱՏԱՆՏԱԿ, *Parquet; parquet*

Փայտի մանր հղկված կտրոններ, որոնք որպես շինափայտ օգտագործվում են հատակը երեսպատելու համար: Մ. լինում է հատով, վահանային և մոզայիկ: Պատրաստում են ամուր բնափայտ ունեցող տեսակներից (կաղնի, հաճարենի, թելի, թխկի, հացենի և այլն):

ՍԱՆՐԱՏԵՐԵՎԱՎՈՐ ԱՆՏԱՌՆԵՐ, *Мелколиственные леса; microphyllous forests, small-leaved forests*

Անտառներ, որոնք կազմավորված են մանր տերևավոր ծառատեսակներից՝ կեչի, կաղամախի, լաստենի և այլն, որոնք ի տարբերություն լայնատերևավոր ծառատեսակների, ունեն փափուկ բնափայտ: Մ. Ա. հիմնական երկրորդական ծագման են, աճաքաջել են մարդու ներգործության հետևանքով՝ ասեղնատերևավոր և լայնատերևավոր անտառների տեղում:

ՍԱՌԱՆՈՒՂԱՏԵՐԾ ՍԱՐՔԵՐ, *Туманообразующие установки; mist-forming installations*

Ծածկած բնահողի պայմաններում (ջերմատներում, ջերմոցներում) մինչև մասխտուղի վիճակի ջրի փոշիացում ստեղծելու հատուկ սարքեր՝ գլխադիրներ ջրմուղի խողովակների վրա: Ապահովում են հողամերձ օդի հավասարաչափ խոնավացումը, պակասեցնում բույսերի կողմից ջրի կորուստները և նպաստում, հատկապես, կանաչ տնկաշիվերի արագ արմատակալմանը:

ՍԱՍՇՏԱՐ, *Macramé; scale*

Հատակազօի, աշխատանքային գծագրի կամ քարտեզի վրա որոշակի հատվածի երկարության հարաբերությունը բնության մեջ իրեն համապատասխանող հատվածի երկարությանը: Եթե այդ հարաբերությունը արտահայտվում է թվով (1: 500՝ 1 սմ:5 մ)՝ թվային մասշտաբ: Կազմվում է նաև գծային մասշտաբ: Այն հավասար միավորների բաժանված ուղիղ գիծ է, որի թվերը ցույց են տալիս, թե այդ միավորներից յուրաքանչյուրը իրականում քանի կմ-ի կամ մ-ի է հավասար:

ՕՆԿՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԻՋՍՄՈՐԳ, *Мабританский газон; Moorish grassplot*

Ծաղկաբույսերի (կակաչներ, տերեփուկներ, երեքնուկ) կամ դրանց ու բազմամյա հացազգիների խառնուրդի ցանքսով ստեղծվող խոտածածկ:

ՍԱՏՂԱՇ, *Подросец; young growth, undergrowth*

Հատատեղում կամ անտառի սաղարթի տակ եղած երիտասարդ ծառեր, որոնց վիճակված է կազմավորել ապագա մայր անտառը՝ առաջին շարահարկը: Ըստ ծաղման լինում է սերմնային և վեգետատիվ: Մ. լինում է բավարար, երբ նրա քանակը բավարար է ապագա ծառուտի կազմավորման համար և բաշխված է հավասարաչափ, և անբավարար՝ երբ այն քանակով քիչ է կամ բաշխված է անհավասարաչափ:

Հուսալի է, երբ Մ. ունենում է լավ զարգացած քրզածև սաղարթ, և անհուսալի, երբ այն ունի հովանոցածև սաղարթ: Մ.-ի բավարար և հուսալի վիճակը կախված է անտառի լրիվությունից ու սաղարթի միակցվածության աստիճանից:

ՍԱՏՂԱՇԻ ՄԻՎԿՑՈՒՄ, *Смыкание молодняка; closing of young stand*

Անտառի սկզբնական հասակային փուլ, երբ մատղաշ ծառերի սաղարթները միակցվում են: Մ.Մ.-ն տարիքը պայմանավորված է նրա ծաղումով (սերմնային, կոճղաշիվային, արմատաընծյուղային), տեսակի առանձնահատկություններով (արագած, դանդաղած), հողային պայմաններով, աշխարհագրական դիրքով և անտառի տիպով: Համազոր պայմաններում Մ.Մ. արագ է տեղի ունենում՝ շիվային ծաղում ունեցող ծառուտներում, արագած ծառատեսակների մոտ և հողային բարենպաստ պայմաններում:

ՍԱՏՂԱՇԻ ՎԵՐԱՎԱՌՈՒՅՈՒՄ, *Реконструкция молодняков; reconstruction of young stands*

Երիտասարդ ցածրաժժեք ծառատեսակների ու տնկարկների վերափոխում խնամքի հատումների կամ անտառմշակութային եղանակով:

ՍԱՐԳԱԳԵՏԻՆ, *Луг; meadow*

Կենսաերկրացնոզ, որի բուսականությունը կազմված է հիզոնֆիլ խոտաբույսերից: Մեծ մասամբ առաջացել է անտառների տեղում՝ մարդու գործունեության հետևանքով: Տարբերում են հովտային (գետահովիտների ողողվող դարավանդներում) և մայրցամաքային (չորահուն և ցածրավայրային), ինչպես նաև լեռնային (այդ թվում՝ բարձրլեռնային Մ.-եր): Արժեքավոր խոտհարքեր և արոտավայրեր են:

ՍԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՍԻԶՍՄՈՐԳ, *Луговой газон; meadow grassplot*

Մարգագետնային բազմամյա խոտաբույսերի մի շարք տեսակների խառնուրդից կազմված սիզամարգ:

ՄԱՐԳԱՐՈՒՄ, *Tazon; grassplot*

Տե՛ս Սիգամարգ:

ՄԱՐԳԻԿ, *Грядка; garden-bed*

Ճնով, տախտակներով, ձողերով, քարերով կամ աղյուսով ամրացած եզեր կամ շեպեր ունեցող, մշակվող նեղ հողաշերտ: Նախատեսված է բանջարեղենի, դեղաբույսերի կամ ծաղիկների աճեցման համար: Գերիտոնավության պայմաններում ստեղծվում են գետնից բարձր մարզիկներ, իսկ չորային պայմաններում՝ գետնի մեջ խորացված մարզիկներ:

ՄԱՐԶԱԿԱՆ ԶԲՈՍԱՅՅՐԻ, *Спортивный парк; sport park*

Շրջանային կամ քաղաքային կանաչապատման օբյեկտ, որի հիմնական տարրը մարզական կառույցների և հրապարակների լավ զարգացած համալիրն է: Տարածքի ոչ պակաս 50 %-ը տնկարկներ են, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում հանգստի և սպորտով զբաղվելու համար:

ՄԱԲՐՄԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Прочистка (рубку прочистки); cleaning*

Խնամքի հատման տարատեսակ: Կիրառվում է երիտասարդ, 11-20 տարեկան ծառուտներում՝ աճի պայմանները բարելավելու նպատակով: Կատարում են վեգետացիայի ընթացքում:

ՄԵԶՈՆԱՆԴՇԱՓՄ, *Мезоландшафт; mezolandscape*

Տեղանքի միկրոգեոմորֆոլոգիական որոշակի առանձնահատկություններ (ծորակներ, բլրիկներ, գետակ, ճանապարհային ցանց, ժայռաբեկորներ, զանազան կառույցներ, կանաչ տնկարկներ և այլն) և որոշակի սահմաններ ունեցող հատված: Հիմք է ծառայում զբոսայգու նախագծման համար:

ՄԵԶՈԿԼԻՄԱ, *Мезоклимат; mezoclimate*

Միատարր քնական պայմաններ ունեցող, համեմատաբար ոչ մեծ տարածքի (անտառզանգած, ծովափ, ոչ մեծ քաղաք) կլիմա: Սովորաբար բնութագրվում է միևնույն տեղում, նույն օդերևութաբանական կայանում կատարվող դիտումներով: Տարածման մասշտաբով միջանկյալ տեղ է զբաղվում մակրոկլիմայի և միկրոկլիմայի միջև:

ՄԵԶՈՌԵԼԻԵՖ, *Мезорельеф; mezorelief*

Միջանկյալ ռելիեֆ, որը փոքր է մակրոռելիեֆից և մեծ՝ միկրոռելիեֆից: Երկրի մակեևտոյթի կոնկրետ հատված, ձև (օր.՝ գետի սանդղափուլ, իջվածք, հեղեղատ, ոչ մեծ կիրճ և այլն), որի բարձրությունը տատանվում է մի քանի տասնյակ մետրի սահ-

մանում: Կանաչ շինարարության քնագավառում, հատկապես ուղղածիզ հատակագծման ժամանակ, ենթարկվում է զգալի վերափոխումների:

ՄԵԶՈՖԻՏՆԵՐ, *Мезофиты; mezophytes*

Չափավոր խոնավության պայմաններում աճող բույսեր: Այս խմբին է պատկանում բարեխառն և մերձարևադարձային գոտու բույսերի զգալի մասը՝ եղևնի, կեչի, լորենի, հաճարենի և այլն, ինչպես նաև էֆեմեր և էֆեմերոիդ բույսերը:

ՄԵԶՈՏՐՈՖ ԲՈՒՅՍԵՐ, *Мезотрофные растения; mezotrophic plants*

Աննդանյութերի միջին պարունակության հողերի վրա աճող բույսեր: Զբաղեցնում են օլիգոտրոֆ և էվոտրոֆ բույսերի միջին տեղը: Ծառային բույսերից այս խմբին է պատկանում եղևնին, որն աճում է թթու ռեակցիա ունեցող հողերում:

ՄԵԶՈՖԻԼ ԱՆՏԱՌՆԵՐ, *Мезофильные леса; mezophylie forests*

Մերձարևադարձային և բարեխառն գոտու անտառներ, որոնք կազմավորված են մեզոֆիտ ծառատեսակներից:

ՄԵԼԻՈՐԱԳԻԱ (ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, *Мелиорация; amelioration, improvement*

Բնական միջավայրի բարելավման կազմակերպական-տնտեսական ու տեխնիկական միջոցառումների գիտականորեն հիմնավորված ամբողջություն: Տարբերում են ոռոգիչ և ցամաքեցնող մելիորացիա, հողերի և շրջապատող միջավայրի բարելավման զանազան ձևեր, անտառմելիորացիա (պաշտպանական անտառների հիմնադրում):

ՄԵԿԸՆԴԱԵՋ ԵՐԲՏԱԳԻԼ ՉԱՏՈՒՄ, *Чересполосная рубка; interlaced cutting*

Անտառօգտագործման գլխավոր հատում, որի ժամանակ հատատեղերը տեղադրում են մեկումեջ՝ թողնելով միևնույն լայնության չհատվող անտառաշերտեր, որոնք հատվում են հետագայում (10 տարի հետո): Նպաստում է հատատեղի նորմալ վերականգնմանը: Թողնված շերտերում հաճախ տեղի է ունենում ծառերի քամետապալում:

ՄԵԿՈՒՄԱԳՎԱԾ ՏՆԿԱՐԿՆԵՐ, *Одиночные посадки; separated plantings*

Պարտեզպուրակային կոմպոզիցիայում գեղազարդային բարձր որակ ունեցող ծառեր, թփեր և խոշոր խոտաբույսեր:

ՄԵՆԱԾԱՌ, *Солитер; soliter*

Պարտեզպուրակային բաց տարածությունում իր ճարտարակերտությամբ այլի ընկնող կամ հատուկ ուշադրություն գրավող միայնակ տնկի (ծառ, թուփ կամ խոշոր խոտաբույս):

ՍԵՆՁՈՒԼԱՅԻՆ ԴՍՆՈՒՅԻՑ, *Манзюльная съёмка; plane-table survey*

Անմիջապես տեղանքի հանույթի ժամանակ հատակագծի կամ քարտեզի ստեղծման աշխատանքների ամբողջություն: Կատարվում է մենզուլի և կիարեզելի (բարձրաչափ-հեռաչափ) միջոցով: Կիրառվում է այն հողամասերում (անտառապուրակներ, խոշոր զբոսայգիներ, պաշտպանիչ գոտիներ), որտեղ այս կամ այն պատճառով հնարավոր չէ օդալուսահանույթ կատարել:

ՄԵՐՎԱՍԵՐՄԵՐ, *Голосеменные; gymnosperms*

Սերմնավոր բույսերի ամենափին բաժինը: Մշտադալար (հազվադեպ՝ տերևաթափ) ծառեր կամ թփեր, խիստ հազվադեպ՝ լիաններ են (էֆեդրայի որոշ տեսակներ): Տերևների ձևը, կախված բույսերի դասերից, խիստ փոփոխական է (ամբողջաեզրից՝ թեփուկանման, ասեղնակերպ, մինչև դիխոտոմիկ ճյուղավորությամբ, երկրթականի, փետրածև, կրկնակի փետրածև և այլն): Մերկասերմերին բնորոշ են սերմնաբողբոջները, որոնք կազմված են մեկ մեգասպորանգիումից (նուցելուս) և դրան շրջապատող հատուկ պաշտպանական ծածկոցից (ինտեգումենտ): Սերմնասկզբնակները մերկ են:

ՄԵՐՉԱԼՊՅԱՆ ԲԱՐՉՐԱՍՏՈՏԵՐ, *Субальпийские высокогорья; subalpine tall herbage*

Սերձալպյան գոտուն բնորոշ փարթամ աճող խոտային բուսածածկ:

ՄԵՐՉԱԼՊՅԱՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, *Субальпийская растительность; subalpine vegetation*

Բարձր լեռնային բուսականություն, որը միջանկյալ տեղ է զբաղեցնում տափաստանային և մարգագետնային գոտիների միջև: Գողաշերտն այստեղ հզոր ու խոնավ է, բուսականությունը արտակարգ փարթամ, այսպես կոչված՝ «բարձրախոտային»: Տիրապետող տեսակներն են ընձախոտը, հալևորուկը, շուշանը, ժախը և այլն, որոնց բարձրությունը անցնում է 1.5-2.5 մ-ից:

ՄԵՐՉԱԼՊՅԱՆ ՆՈՍՐԱՆՏԱՈՒ, *Субальпийское редколесье; subalpine thin stand, subalpine light forest*

Բարձր լեռների բնորոշ անտառային լանդշաֆտ, որը կազմված է կորարուն կամ նոսր անտառային ոչ մեծ խմբերից: Մ.Ն.-ները ծակվորվում են ցածր ջերմաստիճանի, համեմատաբար բարձր խոնավության, ուժեղ քամիների և արեգակնային բարձր ճառագայթման պայմաններում: Այստեղ ծառերը լինում են ցածրահասակ, կորարուն, նստած սաղարթով, երբեմն մի ցանի բնանի: Սեզանում Մ.Ն.-ները կազմավորված են Լիտվինովի կեչուց, արոսենուց, արևելյան կաղնուց: Փամբակի լեռնաշղթայի վրա առանձին հատվածներով այն եզերվում է մրտավարդի թփուտներով: Մ.Ն.-ները ունեն հակաերզոհոն, ջրակարգավորիչ, հակաձմնաշոտային կարևոր նշանակություն: Պահպանում են արմատական անտառները բարձր լեռնային կլիմայական անբարենպաստ գործոններից:

ՕՆԵՂՊՊՍԿԱՍՍ, *Аблактировка; side grafting*

Պատվաստի եղանակ: Պատվաստացում, մինչև պատվաստակալի հետ սերտաճումը, չի անջատվում մայրական բույսից: Պատվաստի այս եղանակի համար ամենահարմար ժամանակը հյութաշարժի շրջանն է: Պատվաստակալի և պատվաստացուի ընծյուղները մոտեցվում են երկարաբույսերի ընծյուղների կեղևները և կամբիումները հպելով իրար՝ կապում: Լրիվ սերտաճումը տեղի է ունենում կես տարվա ընթացքում:

ՍԵՐԶՐԱՆՑՔԱՅԻՆ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐ, *Приканальные лесные полосы; subchannel forest belts*

Պաշտպանական անտառաշերտերի տարատեսակ: Հիմնադրվում են ջրանցքերի, միջոտնեսային ոռոգման ցանցի երկայնքով՝ 3-5 մ հեռավորությամբ, 4-5 շաբաթանի ժապավենով: Միջշարային տարածությունը 2.5-3 մ է: Նվազեցնում է ջրանցքից ջրի մակերեսային գոլորշիացումը:

ՍԵՐԶՏՈՒՆԴՐԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Притундровые леса; subtundra forests*

Հյուսիսային անտառային գոտում խոշոր զանգվածներով կամ տունդրային բուսականությամբ ընդհատվող կղզյակներով նոսր զածած անտառներ: Ռուսաստանում Մ.Ա.-ները զբաղեցնում են շուրջ 45 մլն հա՝ կազմավորված կեչուց, սիբիրյան խեժափիճուց:

ՍԵՌՅԱԼ ԾԱԾԿՈՑ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԹԱԴԻՔ, *Мертвый покров (лесная подстилка); dead cover, forest mat*

Երբ սաղարթի տակ կենդանի ծածկոցը բացակայում է և հողը ծածկված է անտառային թաղիքով: Տե՛ս Անտառային թաղիք:

ՍԵՐԻՍԹԵՄ, *Мерцстема; meristem (formative tissue)*

Բուսական հյուսվածք, որը երկար ժամանակ պահպանում է կիսման ճանապարհով նոր բջիջների առաջացման ունակությունը:

ՍՅԵՐԱՎԱՅԱԼ (ՍՅԵՐՄԱՆ ԿԵՏ), *Заготовительный пункт; storing point*

Կազմակերպվում է անտառտնտեսությունների կամ սպառողական կոոպերատիվների կողմից վայրի պտուղների ու հատապտուղների, ընկույզի, սնկերի, դեղաբույսերի և անտառից ստացվող այլ ոչ բնափայտային մթերքների մթերման ու զննման համար:

ՍԻԱԳՈՒՅՆ ՊԱՐՏԵՐ, *Однотонный партер; monophonic parter*

Գունային ձևավորված պարտեր: Բնորոշվում է միագույն բույսերի (կանաչ) գերակշռությամբ: Առանձին հատվածները կարող են ունենալ այդ գույնի տարրեր երանգներով (բաց կանաչ, մուգ կանաչ) բույսեր:

ՄԵԲԻՅԻՐՈՒՄՆԵՐ ԾՐԱԼՈՐՄԱՆԿԱՐԱԳԱՆՈՒՄ, *Однамаршрутная аэрофотосъемка; Single-track aerial photography*

Միերթուղանի օդալուսանկարահանումը կիրառվում է գետահովիտների, առափնյա հատվածների, ճանապարհների և այլ զծային տարածում ունեցող առարկաների ու երևույթների ուսումնասիրությունների դեպքում:

ՄԻՎՈՒՄՊՈՒՄՆԵՐ ԽՈՒՄԲ, *Монокompактная группа; monocotract group*

Ծառաբուսական կամ ծաղկային մեկ տեսակից կազմված խմբեր:

ՄԻՎՈՒՄՍՈՒՐՎԱԾԻՆ ԳՈՂԱՍԱՍ, *Монокультурный участок; monocultural plot*

Գեղազարդային հատուկ էքսպոզիցիա, որի ձևավորման համար օգտագործվում են բույսերի միայն մեկ ցեղի ներկայացուցիչներ կամ նույն տեսակի այլատեսակներ ու սորտեր: Օգտագործվում են վարդեր (վարդանոց), եղրևանիներ (եղրևանոց) քաջվարդեր (քաջվարդանոց), շուշաններ (շուշանների հողամաս), սրնգեմիներ (սրնգեմիների հողամաս), վարդակակաչներ (վարդակակաչանոց) և այլն:

ՄԻՎՈՒՄՍԱԿ ԱՆՏԱՈՒ, *Одновозрастный лес; even-aged forest*

Ծառուտ, որտեղ բոլոր ծառերը պատկանում են հասակային միևնույն դասին: Բացարձակ միահասակ ծառուտներ են արհեստական տնկարկները, այն էլ միայն երիտասարդ և միջին հասակում: Բնական անտառներում բացարձակ միահասակ ծառուտներ հանդիպում են հազվադեպ՝ միայն երիտասարդ հասակում:

ՄԻՎՈՒՄ ԲՈՒՅՍԵՐ, *Однолетние растения; annual plants*

Ծածկասերմերի դասին պատկանող խոտաբույսեր, որոնք իրենց զարգացման փուլն ավարտում են մեկ վեգետացիոն ժամանակաընթացքում: Մ.Բ. մոնոկարպ են, զուրկ վեգետատիվ բազմացման օրգաններից: Ծաղկումից ու սերմնակալումից հետո մահանում են: Մ.Բ.-երի մի մասը էֆեմերներ են, որոնք իրենց զարգացման ողջ փուլն անցնում են մի քանի շաբաթվա ընթացքում, մյուս մասն ունակ է ծննդու վեգետատիվ կամ ծաղկման շրջանում և շարունակում է զարգացումը հաջորդ սեզոնում (մանուշակ և այլն): Անտառում Մ.Բ.-երը հանդիպում են հիմնականում կածաններում, այրված անտառամասերում, բացատներում, հատատեղերում:

ՄԻՎՈՒՄՏԵՁ, *Моносад; monogarden*

Պարտեզ (վարդանոց, գեորգենանոց, վարդակակաչանոց), որտեղ տիրապետողը որևէ բուսատեսակ է: Տե՛ս նաև Միակուլտուրային հողամաս:

ՄԻՎՈՒՄՏՈՒՄԵՐ ԲՈՒՅՍԵՐ, *Монокарпические растения; monocarpic plants*

Բույսեր, որոնք իրենց կյանքի ընթացքում ծաղկում և պտղաբերում են մեկ անգամ, որից հետո սովորաբար մահանում են: Միապտղաբեր են բոլոր միամյա և եր-

կամյա բույսերը, իսկ բազմամյաներից՝ որոշ տեսակներ (ըլդրդան Մոսնովսկու, ազա-վա ամերիկյան, հնդկեղեգ, արմավենու որոշ տեսակներ):

ՄԻԱՏԱՐԻ ԾԱՌՈՒՏ, *Чистый образцовый; monotype stand*

Ծառուտ, որը կազմավորված է մեկ ծառայտեսակից և կոչվում է այդ ծառատեսակի անունով:

ՄԻԿՈՏՐՈՖ ԲՈՒՅՍԵՐ, *Микотрофные растения; micotrophyc plants*

Բույսեր, որոնց արմատների վրա կան սնկարմատներ և հողից սնվում են սնկի օգնությամբ: Միկոտրոֆ է միաշաքիլ բույսերի 75 %-ը և երկշաքիլավորների 80-90%-ը: Ծառային ձևերի գերակշռող մասը (ասեղնատերևավորները, կաղնին, բոխին, հաճա-րենին և այլն) առանց արմատասնկի չեն կարող աճել:

ՄԻԿՐՈՐԻՉ, *Микориза; micorrhiza*

Բարձրակարգ բույսերի հետ որոշ հողային սնկերի համարնակություն: Տարբե-րում են արտաքին՝ էկոտրոֆ, երբ սնկի հիֆերը արմատի շուրջը առաջացնում են արտաքին ծածկոց և ներքին՝ էնդոտրոֆ, երբ հիֆերը արմատի բջիջների ներսում են առաջացնում միկորիզներ: Այն բարերար ազդեցություն է ունենում բույսերի վրա: Սուսնը մեծացնում է արմատի կլանող մակերեսը, քայքայում է բույսի համար անմատ-չելի որոշ օրգանական միացություններ, արտադրում վիտամիններ և աճը խթանող նյութը: Իր հերթին սուսնը բույսի արմատներից ստանում է ածխաջրեր: Դոլում միկո-րիզայի բացակայության դեպքում, գեղազարդային որոշ բույսեր (մրտավարդ) վատ են արմատակալում: Անտառտնկումների ժամանակ խորհուրդ է տրվում կատարել հո-րի միկորիզացում:

ՄԻԿՐՈԳԵՈՄՈՐՓՈՒՍՏԻԿԱ, *Микрогеоморфопластика; microgeomorphoplastics*

Արհեստական եղանակով ռելիեֆի միկրոտարրերի փոփոխություն: Երբեմն անհրաժեշտություն է զգացվում բոլորովին հարթ հողամասում ստեղծել փոքրիկ բլուրներ, ձորակներ, փոսորակներ՝ զբոսայգու բնապատկերներն առավել հետաքր-քիր ու ընդգծված դարձնելու համար: Նման շինարարության հարուստ փորձ են ունե-ցել հին չինացիները, որոնք հսկայական հարթ տարածությունների վրա ստեղծել են արհեստական լեռներ, ձորեր, բլրակներ, լճեր և այլն: Մ.-ի կանոններին լավ տիրապե-տելով կարելի է ապագա զբոսայգու տարածքի զանազան անհարթությունները հաջո-ղությամբ օգտագործել տարբեր կոմպոզիցիաներում:

ՄԻԿՐՈԹԵՐՄԵՐ, *Микротермы; microtherms*

Բույսեր, որոնք աճում են ցածր ջերմաստիճանների պայմաններում:

ՄԻԿՐՈԼԱՆԴՇԱՓՄ, *Микроландшафт; micro landscape*

Դողակտորի փոքրիկ հատված՝ բնության անշարժ տարրերի որոշակի զուգակ-ցությամբ: Համապատասխանում է բնապատկեր հասկացությանը: Մ.-ները զբոսայգու

կոմպոզիցիաների համար հիմք են հանդիսանում: Ելնելով Մ.-ի կոնկրետ առանձնահատկություններից, այդ կոմպոզիցիաները ձևավորվում են առանձնակի խնամքով:

ՄԻԿՐՈԿԼԻՄԱ, *Микроклимат; microclimate*

Երկրագնդի մակերևույթի ոչ մեծ հատվածների (քաղաքային զբոսայգի, պարտեզ, բնակելի թաղամաս) օդի երկրամերձ շերտի կլիման: Չնավորվում է միջավայրի տարբեր գոտիների (տաքացում, սառեցում, խոնավացում) փոխազդեցության հետևանքով ու շենքերի, կառույցների, բուսականության, ջրամբարների և այլնի ազդեցության տակ:

Փակ շինություններում (գերմատներ, ցեմոցներ) արտաքին անբարենպաստ ներգործությունից պաշտպանվելու համար ստեղծվող կլիմա:

ՄԻԿՐՈՊԼՐՈՐՏԱՆՅՈՒԹԵՐ, *Микроудобрения; microfertilizers*

Միկրոտարրեր պարունակող պարարտանյութեր: Ստորաբաժանվում են 2 խմբի՝ միամիկրոպարարտանյութեր և բազմամիկրոպարարտանյութեր (պարունակում են 2 և ավելի միկրոտարր): Օգտագործում են սերմերի նախացանքային մշակման, տնկումների ժամանակ:

ՄԻԿՐՈՆԵԼԻԵՅ, *Микроэлеф; microelief*

Ուլտրամանր, երկրագնդի մակերևույթի անհրաքություններ, որոնց առաջացել են արտաքին պրոցեսների ազդեցությամբ: Գրավում են ոչ մեծ տարածություններ (մինչև մի քանի հարյուր մ²) և ունեն բարձրությունների ոչ մեծ տատանումներ (մինչև մի քանի մետրի սահմաններում), օր.՝ թումբ, բլրակ, ձորակ և այլն:

ՄԻԿՐՈՏԱՐՐԵՐ, *Микроэлементы; microelements*

Չողում, լեռնային ապարներում, ջրերում պարունակվող քիմիական որոշ տարրեր: Օգտագործվում են որպես պարարտանյութեր: Մեծ մասը մետաղներ են (Fe, Ca, Zn, Mn, Mo և այլն), մյուսները՝ ոչ մետաղներ (Se, Br, F, As): Խիստ անհրաժեշտ են բույսերի աճի ու զարգացման համար և չեն կարող փոխարինվել P, K, N-ով: Չողերում տարբեր միացությունների կազմում գտնվելով և անլուծելի կամ դժվար լուծելի լինելով՝ բույսերին անմատչելի են: Տարբեր հողերում Մ.-ի պարունակությունը տարբեր է: Դրանց շարժունակության և բույսերի համար մատչելի լինելու վրա ազդում են հողի ռեակցիան, խոնավությունը, օրգանական նյութերի պարունակությունը:

ՄԻՆՈՒՍԱՅԻՆ (ԲԱՑԱՍԱԿԱՆ) ԾԱՌ, *Минусовое дерево; minus tree*

Ծառ, որն օժտված է տնտեսական մեկ կամ մի քանի բացասական հատկանիշներով (ճնշված աճ, տրամագիծը միջինից 20% և ավելի պակաս, ցածրորակ բնափայտ, ցածրադիր պսակ և այլն): Բ.Ծ.-երից չի թույլատրվում բազմացման նպատակով սերմեր կամ կտրոններ հավաքել:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԾԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԿԱՍ ԽՆՈՄՔԻ ԴՏՈՒՄՆԵՐ՝ *Рубки промежуточного пользования (рубка ухода); intermediate cuttings*

Կատարվում են ծառուտի ամբողջ կյանքի ընթացքում մինչև հասունացումը: Նպատակ է հետապնդում բարելավելու անտառի կազմը, ծառաբների ձևը, բնափայտի տեխնիկական որակը, կրճատելու բնափայտի տեխնիկական հասունացման ժամանակաշրջանը, ապահովելու տնտեսությանը որոշակի տեսականու փայտանյութով, բարձրացնելու աճման ընթացքում 1 հա-ից ստացվող փայտանյութի ծավալը և միավոր տարածքի բնափայտի պաշարը, բարելավելու անտառի սանիտարական վիճակը, աճեցնելու բացասական գործոնների նկատմամբ դիմացկուն ծառուտներ:

ՄԻՋԱՎԱՅՐ ԳՈՅԱՑՆՈՂ ԲՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ, *Средообразующая природная территория; environment creator natural territory*

Բնական կոմպլեքս ռեսուրսների (միջավայրի ռեսուրսների) անուղղակի շահագործման (տեղում կամ կից տարածքներում) նպատակով էկոլոգիական հավասարակշռությունը հարաբերակաճորեն հաշվելիչաձևած ռեժիմով տարածք: Այդպես են հյուսիսային կլիմայապաշտպան նոսր անտառները, մարդկանց հանգստի համար նախատեսված քաղաքամերձ կանաչ գոտիները, բնական պուրակները և ազգային պարկերը, առողջարանային գոտիները և այլն:

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՌԵԱԿՑԻԱ, ՉՈՂԻ ՌԵԱԿՑԻԱ, *Реакция среды; environment reaction, soil reaction*

Չողում ջրածնային իոնների խտությունը: Անկերը գերադասում են միջավայրի թթու (PH-ը 7 –ից պակաս), բակտերիաները՝ չեզոք կամ հիմնային ռեակցիա: Որոշ ծառատեսակներ (եղևնի, շագանակենի, լաստենի, ուռենի և այլն) կարող են աճել թթու ռեակցիայի միջավայրում: Ծառատեսակների հիմնական մասն աճում է չեզոք կամ թույլ հիմնային ռեակցիայի պայմաններում:

ՄԻՋՏԱՍԱՊԱՆՆԵՐ, *Инсектициды; baits, insecticides*

Վնասատու միջատների դեմ պայքարի քիմիական միջոցներ: Ունեն ինչպես անօդաչուական, այնպես էլ օրգանական (բուսական) ծագում: Վերջիններս կոչվում են բուսական միջատասպաններ (երիցուկ):

ՄԻՋԻՆԱՍԱՍՇՏԱԲ ՕՂԱՆՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ, *Среднемасштабные аэрофотоснимки; medium-scale aerial photography*

Միջինամասշտաբ օդալուսանկարները 1:100 000-1:1 000 000 մասշտաբի օդալուսանկարներ են, որոնք ստացվում են բնառեսուրսային-քարտեզագրական արբանյակներից:

ՄԻՋԻՆ ԳՍՍԱԿԻ ԾԱՌՈՒՄՏ, *Средневозрастной дровостой; middle-age stand*

Չողանային հասակին հաջորդող ծառուտի հասակային փուլ: Բնորոշվում է ծառերի դանդաղ դիֆերենցմամբ, լուսասեր տեսակների զազաթնային աճի թուլացումով, իսկ ստվերատարների մոտ՝ առավելագույն աճի դրսևորումով, առատ պտաղաբերման և սերմնակալման սկզբով: Մ.Յ.Ծ.-ի շարքին են դասվում 4-դ և ավելի հասակային դասին պատկանող ծառուտները:

ՄԻՋԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Среднее хозяйство; average farming*

Անտառտնտեսվարման կարգ, որի դեպքում միևնույն տարածքում խոշորաչափ շինափայտից բացի աճեցվում է վառելափայտ և փոքրաչափ շինափայտ: Միևնույն տարածքում զուգակցվում է անտառի բարձրաբուն և ցածրաբուն տնտեսվարումը՝ ընդունելով անտառաճեցման ժամանակաշրջան, մեզանում՝ համապատասխանաբար 160 և 80 տարի: Մ.Տ.-ում կիրառում են ընտրովի հատումներ:

ՄԻՋՈՒԿ, *Ядро; heartwood, kernel, core*

Բնափայտի այն հատվածն է, որն ընկած է ծուծից մինչև արտաբնափայտը և վերջինին հետ համեմատած ունի մուգ գունավորում: Առաջանում է պարենջիմային քիչքնների մահացման, փոխադրող անոթների խցանման հետևանքով: Արտաբնափայտից տարբերվում է խոնավության համեմատաբար փոքր պարունակությամբ, էկստրակտիվ նյութերի մեծ քանակով և ցածր զազաթափանցելիությամբ: Մ.ունեցող ծառատեսակները (կաղնի, սոճի, հացենի, ընկուզենի և այլն) կոչվում են միջուկավոր տեսակներ:

ՄԻՋԱՐՈՐԴԵՐ, *Миксбордер; mixborder*

Կանաչ հարդարման մեջ օգտագործվող ծաղկային ծևավորման տարատեսակ: Բնորոշվում է վեգետացիոն շրջանում քազմակի ծաղկմամբ, որը ստեղծվում է հիմնականում քազմամյա, տարբեր ժամանակներում գեղեցիկ ծաղկող խոտաբույսերի ընտրությամբ: Հաճախ օգտագործվում են նաև միամյա տեսակներ:

ՄԱՅՈՐՈՂԱՅԻՆ (ՌԵԼԻԿՎՍԱՅԻՆ) ՏԵՍԱԿՆԵՐ, *Реликтовые породы; relict species*

Այլ երկրաբանական ժամանակաշրջաններից մեզ հասած բուսատեսակները: Երրորդական շրջանում, երբ կլիման եղել է տաք և մեղմ, հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում աճել է քոլորովին այլ բուսականություն, որը տարածքի սառցապատման և ռելիեֆի ծևավորման հետևանքով հիմնականում վերացել է: Որոշ տեսակներ պահպանվել են՝ տեղափոխվելով հարավ, ուր սառցապատում չի եղել: Կլիմայի տաքացմանը զուգընթաց՝ սառցադաշտերը ետ են քաշվել, և նրանց տեղը պատվել է նոր բուսականությամբ: Այսպիսով, ռելիկտային բույսերը ըստ հասակի կարող են պատկանել ինչպես 3-դրական, այնպես էլ սառցապատման ժամանակաշրջանին: Հանդիպում են նաև սառցապատման ժամանակաշրջանի բույսեր, որոնք տաք կլիմայի արդյունք են: Ո. բույսերով հարուստ են Կովկասը, Անդրկովկասը, որտեղ ծառաբույս-

րից հանդիպում են երկաթածառը, արջատխլենին, ձեկվան, շագանակենին, հատապտղային կենդին, պիցունոյան սոճին և այլն:

ՄՇԱԿՈՎԻ ԲՈՒՅՍԵՐ, ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐ, *Культурные растения; cultural plants*

Սելեկցիայի, խաչասերման միջոցով վայրի նախնիներից ստացված կամ այլ մարզերից ներմուծված բույսեր, որոնք այժի են ընկնում տնտեսական օգտակար հատկանիշներով:

ՄՇԱԿՈՎԻ (ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ) ԼԱՆԴՇԱՓՏ, *Культурный ландшафт; cultural landscape*

Մարդու տնտեսական գործունեության հետևանքով փոփոխված բնական լանդշաֆտ:

ՄՇԱԿՈՎԻ (ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ) ՍԻԶԱՍԱՐԳ, *Культурный газон; cultural grassplot*

Արհեստական ճմաժածկ: Ստեղծվում է ցանքսով կամ որոշակի, հիմնականում բազմամյա հացազգիների աճեցմամբ: Մշտապես պահպանվում է որոշակի մակարդակի վրա:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԶԲՈՍԱԶԳԻ, *Парк культуры и отдыха; cultural and recreational park*

Կուլտուր-լուսավորական հիմնարկ: Լինում է քաղաքային կամ միկրոշրջանային, 30 հա-ից ոչ պակաս տարածությամբ: Կուլտուրական ժամանցի, զանգվածային հանգստի կազմակերպման հետ քաղաքատիրակազմական միջոցառումների անցկացումը մշակույթի և հանգստի զբոսայգու հիմնական խնդիրն է: Մ.և Հ. Զ.-ում նախատեսվում է կանաչ թատրոն, գրադարան-ընթերցասրահներ, մարզական համալիր, պարահրապարակ, խաղահրապարակներ, մանկական հրապարակներ և այլն: Ամբողջ տարածքի հատակագծման հիմքը կազմում են տնկարկները, բացատները, ջրամբարները, ծաղկանոցները:

ՄՇԱՂԱԼԱՐ ԱՆՏԱՌ, *Вечнозеленый лес; evergreen forest*

Կազմված է անեղնատերևավոր և մշտադալար սաղարթավոր ծառատեսակներից:

ՄՇԱՂԱԼԱՐ ԲՈՒՅՍԵՐ, *Вечнозеленые растения; evergreen plants*

Ամբողջ տարին կանաչ տերևներով պատված անեղնատերև և լայնատերև բույսեր: Պրանց տերևաթափը և տերևակալումը տեղի են ունենում ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար (յուրաքանչյուր տերև կարող է ապրել մինչև մի քանի տարի), մշտապես պահպանելով կանաչ սաղարթը: Մեծ դեր են կատարում, հատկապես ձմեռանը, պարտեզների և զբոսայգիների բնապատկերում: Պետք է տարբերել ձմեռնականաչ (կիսամշտադալար) բույսերից, որոնց տերևները ձմեռելուց հետո թափվում են և փոխարինվում նորերով:

ՄՃՏԱԾԱՊԿՈՒՄ ԴՊԱՐՏԵԶ, *Сад вечного цветения; everblooming garden*

Ձրոսայգում կամ բուսաբանական այգում զանազան ժամկետներում ծաղկող ծառաբլային և խոտային բույսերի հատուկ հողամաս, որտեղ ամբողջ տարվա ընթացքում ծաղիկներ կան: Մ.Պ.-ներ կարող են լինել միայն մերձարևադարձային և արևադարձային գոտիներում (հայաստանում նման պարտեզներ կարելի է ստեղծել հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան մերձարևադարձային միկրոշրջաններում):

ՄՈՂԵՐ, *Модер; moder*

Անտառային հումուսի տիպերից մեկը: Փափուկ և կոպիտ անտառային թաղիքների միջինանցումային տիպ: Կազմված է մի քանի շերտ բուսական մնացորդներից, որոնք գտնվում են քայքայման տարբեր փուլերում: Շերտերը տարբերվում են գույնով և կառուցվածքի խտությամբ:

ՄՈՂԵԼԱՅԻՆ ԾԱՌ, *Модельное дерево; model tree*

Ուսումնասիրվող տնկարկում կամ ծառուտում եղած ծառերին քնորոշ անհատ: Մ.Ծ. ընտրում են անտառի գնահատման և հետազոտական աշխատանքերի ժամանակ ծառուտի պաշարի, աճի, անտառամայրի տեսականու վերաբերյալ ճշգրիտ տվյալներ ստանալու նպատակով: Ելնելով նպատակայնությունից՝ Մ.Ծ. -երի ընտրությունը լինում է՝ ա/ միջին մոդել, երբ ընտրում են տվյալ ծառուտին քնորոշ մեկ կամ մի քանի ծառ, բ/ համեմատական սանդղակային, երբ Մ.Ծ.-երի քանակի ընտրությունը պայմանավորված է տրամագծի գերակշռության աստիճանով, գ/ ըստ ծառերի դասի պատկանելության՝ յուրաքանչյուր դասից ընտրվում են հավասար քանակությամբ մոդելներ:

ՄՈՂԵԼԱՅԻՆ ՏՆԿԱՐԿ (ԾԱՌՈՒՏ), *Модельное насаждение (древостой); model stand*

Անտառային զանգվածում որոշակի հատկանիշներով գերակշռող ծառուտ (տնկարկ), որը քնորոշ է տվյալ զանգվածի համար: Մ.Տ.-ի քնութագրումը կատարում են ծառերի համատարած հաշվարկով կամ ընտրվի հրապարակների գնահատմամբ:

ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ, *Моделирование; Modelling*

Գիտության զարգացման փուլ, երբ որևէ երևույթի վերաբերյալ առկա են թավարար գիտելիքներ իրական համակարգը վերացական (աբստրակտ) համակարգ կառուցելու համար:

ՄՈՂՈՒԼԱՅԻՆ ԴՊԱՐՏԵԶ, *Модульный сад; modul garden*

Ծաղկանոցի, պարտեզի ոչ մեծ տարածության կամ զրոսայգու ձևավորված հատված: Ստեղծվում է որոշակի տարածություններից հետո կրկնվող մոդուլների երկրաչափական համակարգով: Օրինակ՝ եզրերից շարված առիկներ և տարբեր

կամ միատեսակ լիցք (ծաղիկներ, գեղազարդային ծառեր ու թփեր, սիզամարգ) ունեցող քառակուսիներ:

ՄՈՆՈԿԱՐՊ ԲՈՒՅԱԵՐ, *Монокарпные растения; monocarps*

Տե՛ս Միապտղաբեր բույսեր:

ՄՈՆՈԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ, *Монокомпактная группа; monocompact group*

Տե՛ս Միակոմպակտ խումբ:

ՄՈՆՈԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍ, *Монокультурный участок; monocultural plot*

Տե՛ս Միակուլտուրային հողամաս:

ՄՈՆՈՊԱՐՏԵԶ, *Моносад; monogarden*

Տե՛ս Միապարտեզ:

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐԿԵՍ, *Монументальное искусство; monumental art*

Արվեստ, որի պարզ ու խոշոր ձևերով արտահայտված ստեղծագործություններն աչքի են ընկնում գաղափարագեղարվեստական բովանդակության խորությամբ և վեհությամբ, լանդշաֆտի տարրերի՝ բուսականության, ռելիեֆի ձևերի, ջրային մակերեսների հետ ունեցած օրգանական կապով: Իր արտահայտությունն է գտնում հուշահամալիրներում:

ՄՈՐ, *Мор; MOR*

Կուպիտ կամ խոնավ թթու հումուս: Անտառային հումուսի տարատեսակ: Կազմված է վատ քայքայված, մահացած, բայց սկզբնական ձևը պահպանած բուսական մնացորդներից: Մ. Կազմված է անտառային շերտերից, որոնք միմյանց հետ միացած են սնկերի հիֆերով: Մ. իսկական հումուս չէ, այլ խոնավ միջավայրում ասեղնատերևներից կազմավորված անտառային թաղիք, որը հեշտությամբ անջատվում է հողից:

ՄՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, *Турбулентность; turbulence*

Օդի մրրկային շարժում: Խառնում է մթնոլորտի օդային շերտերը: Սանիտարապաշտպանական զոնաների համար հատուկ մշակված կանաչապատման նախագծերը և ծառաթփային բույսերի տնկմամբ սխեմաները նպաստում են Մ.-յան օգնությամբ դեպի մթնոլորտի վերին շերտերը վնասակար խառնուրդների դուրսբերմանը:

ՄՈՒԼ (ՓԱՓՈԿ ԳՈՒՄՈՒՍ), *Муль (Мягкий гумус); mull, soft humus*

Կենսաքիմիական ակտիվ հումուսի տեսակ, որը հանդիսանում է լիովին հումիֆիկացիայի ենթարկված օրգանական նյութ: Մ. հողի վերին շերտի հետ կազմում է

հոմոգեն փուխր զանգված: Հաճախ ձևավորվում է կաղնուտններում և լայնատերև այլ ծառատեսակներից կազմավորված ծառուտններում: Նրա ձևավորման օժանդակում են անձրևորդները և կրծողները: Միաշերտ է, անցումը Մ.-ից հող՝ անցկատելի է:

ՄՈՒԼՉԱՊԱՏՈՒՄ, *Мульчирование; mulching*

Ագրոտեխնիկական եղանակ: Անտառային տնկարաններում, երբեմն անտառաձակույթներում բույսի շրջակա հողի մակերեսի ծածկումը որևէ մուլչանյութով (տորֆ, բուսահող, թեփ, հատուկ մուլչաթուղթ կամ թաղանթ և այլն): Մ. նվազեցնում է մակերեսային գոլորշիացումը, կանխում հողի կեղևակալումը, մուխտտերի ծլումը, հողի էրոզիան: Մուլչի շերտի հաստությունը պայմանավորված է օգտագործվող նյութով: Առանձնապես օգտակար է անբավարար խոնավության պայմաններում:

ՄՈՒՄՆԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Муссонные леса; monsoon forests*

Արևադարձային գոտու մուսոնային շրջաններին բնորոշ անտառներ, որտեղ ծառերը չոր ժամանակաշրջանում (4-5 ամիս) տերևաթափ են լինում:

Ն

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՐԱՋԱԴԻՎԱԼՔ, *Проектное задание; project task*

Տեխնիկական փաստաթուղթ, որը զադափար է տալիս ապագա կանաչ զանգվածի չափերի, ճարտարապետական բնույթի, ծառաբանական կազմի, միկրոկլիմայական և սանիտարափոփոխիկ նշանակության մասին: Ն.Ա.-ին կցվում է նաև կանաչապատման տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, նախագծային բացատրագիրը և նախահաշվաֆինանսական հաշվարկի հիմնական պայմանները (այն գումարի չափը, որի սահմաններում պետք է կազմել կանաչապատման նախագիծը)՝ ելնելով համանման զբոսայգիների կառուցման գոյություն ունեցող փորձից: Ն.Ա. կազմում է պատվիրատու կազմակերպությունը:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՇՐՋԱՆ, *Проектный период; project period*

Ժամանակամիջոց, որի ընթացքում նախատեսվում է իրագործել կանաչապատման օբյեկտի նախագծումը: Բնակավայրերի կանաչապատման Ն.Շ. կարող է տևել մինչև 20 տարի, որը պայմանավորված է կանաչ շինարարության առանձնահատկություններով (տնկարկների դանդաղ աճ և աստիճանական ձևավորում):

ՆԱԽԱԳԾԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՄՆԱՎՈՐՈՒՄ, *Технико-экономическое обоснование проекта; technical-economic project justification*

Նախագծային առաջարկների տեխնիկական լուծման ճիշտ ընտրության և տնտեսական նպատակահարմարության հիմնավորում:

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ, *Стадия проектирования; projection stage*

Կանաչապատման օբյեկտների նախագծման փուլ: Գոյություն ունեն հետևյալ փուլերը՝ աշխատանքային նախագիծ, տեխնիկաաշխատանքային նախագիծ, տեխնիկական նախագիծ:

ՆԱԽԱՊԱՐՏԵԶ, *Палсадник; front garden*

Կանաչ գոտի փողոցի կարմիր գծի և քնակելի շենքի միջև: Ունենում է մեկից մինչև 10-20 մ լայնություն: Պաշտպանում է շենքի ճակատային մասը արեզակի կիզիչ ճառագայթներից և միաժամանակ գեղեցկացնում է այն: Սովորաբար օգտագործվում է քարաթմբեր, ծաղկամոցներ, բլիներից կամ պտղատու ծառերից, փաթաթվող լիաններից կոմպոզիցիաներ ստեղծելու համար:

ՆՐՎԻ, ՈԴՅՈՒ (Индекс нормализованной разницы растительного покрова); NDVI (Normalized difference vegetation index)

ՆՐՎԻ-ն (NDVI)՝ «Բուսածածկի նորմալացված տարբերության գործակից»-ը ԱՎՀՈՒ (AVHRR)-ի երկու սպեկտրալ տիրույթների տարբերությունների հարաբերությունն է նույն տիրույթների գունարին: Այս գործակիցը օգտագործվում է բուսածածկի, հատկապես, խոշորամասշտաբ քարտեզագրման և բուսածածկի դասակարգման համար:

ՆԵՐՎԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ, Гармония; harmony

Կանաչ զանգվածի առանձին մասերի համաչափությունը, զբոսայգու կոմպոզիցիոն մտադրացման համապատասխանությունը նրա ստեղծման պայմաններին: Ծարտարապետական Ն. Խասկացոթյունը ընդգրկում է նաև շրջապատի հետ զբոսայգու մասշտաբային համապատասխանությունը, զեղազարդային մանրամասների և տարրերի փոխադարձ համաձայնեցվածությունը, նրա առանձին մասերի ռիթմիկությունը, կոմպոզիցիայի ամբողջականությունը և միասնությունը:

ՆԵՐԹՎԱՍՍՍԱՅԻՆ ՏՆԿԱՐԿՆԵՐ, Внутриквартальные насаждения; in-slot stands

Ունեն սանիտարափոփոխիկ կարևոր նշանակություն: Ծառայում են պահպանելու բնակելի կամ արդյունաբերական թաղամասերը փողոցի աղմուկից, փոշուց, արեգակի կիզիչ ճառագայթներից: Տե՛ս նաև Նախապարտեզ:

ՆԵՐՎԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ, Красильные растения; coating plants

Բույսեր, որոնք իրենց օրգաններում և հյուսվածքներում պարունակում են ներկող նյութեր (պիգմենտներ) գունանյութեր: Վերջիններս գտնվում են պլաստիդներում կամ բջջափափուկի մեջ լուծված վիճակում:

ՆԵՐԹԻՆ ԼՈՒՅՍ, Свет снизу; interior (bottom) light

Անդրադառնում է հողի մակերեսից: Ունի թույլ ինտենսիվություն, օգտվում են հիմնականում սերմնաբույսերը, կենդանի ծածկոցը, մատղաշը և ստորին շարահարկի մյուս բույսերը:

ՆԵՐԹԻՆ ՂԱՏՈՒՄՆԵՐ, Рубки низовые; bottom cutting

Նոսրացման հատման տարատեսակ: Հեռացնում են հիմնական սաղարթի մեջ մտնող անցանկալի, թույլ և՛ ունեցող ու խանգարող ծառերը: Կիրառվում են ծառատներում, որտեղ պարզ արտահայտված ներքին շարահարկը բացակայում է:

ՆՈՍՐԱՆՏԱՈՒ, Редколесье; thin stand, light forest

Ցածրահասակ, ցածրաճ ծառերով նոսր անտառներ, որտեղ ծառերի սաղարթները չեն միակցվում: Հանդիպում են լեռնային շրջաններում, մերձալպյան գոտում,

հարթավայրային պայմաններում: Ն.-ները լինում են միատարր և խառը: Արիդային պայմաններում, տափաստաններում և կիսաանապատներում Ն.-ի տեսակային կազմը բազմազան է, պայմանավորված է բնակլիմայական ու տոպոգրաֆիական պայմաններով: Արևելյան և Հարավային Անդրկովկասում Ն.-ի կազմավորմանը մասնակցում են գիհին, նշենին, փոշնին, պիստակենին և այլն:

ՆՈՍՐԱՅՈՒՄ, *Прорезывание; cleaning*

Խնամքի հատման տարատեսակ: Կիրառվում է միջին հասակի ծառուտներում՝ լավազույն ծառերի բնի և սաղարթի աճի ձևավորմանը նպաստող բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Սերմնային և առաջին սերնդի շվային ծագում ունեցող ծառուտներում Ն. կատարում են 20-40 տարեկան հասակում, փափկատերևավոր տեսակների և բարձր սերնդի շվային ծառուտներում՝ 21-30 տարեկան հասակում: Ն.-ման հատումները կատարում են 0.6 և ավելի լրիվության ծառուտներում: Առաջին հերթին հետացվում են անցանկալի ծառատեսակները, բնի արատ ունեցող ծառերը:

ՆՈՍՐՈՒՏ, *Редина; under stocked stand*

Նոսրացած ծառուտ, որի լրիվությունը կազմում է 0.3-0.1: Կարող է առաջանալ ուժեղ քամետապալումից, վնասատուների կամ երկարատև երաշտի հետևանքով առանձին ծառերի ու ծառախմբերի մահացումից, ընտրովի հատումների սխալ կիրառումից: Անտառտնտեսական տեսանկյունից Ն. ցանկալի չէ, նվազեցնում է ծառուտի արտադրողականությունը և ստացվող փայտանյութի որակը: Ն.-ում խոտածածկը ինտենսիվ զարգանալով՝ առաջացնում է ճմակալում՝ արգելակելով անտառի սերմնային բնական վերականգնումը, կորցնում հողապաշտպան, ջրակարգավորիչ հատկությունները:

Շ

ՇԱՐԱՆ, *Шабло́н; pattern, gauge*

Հարմարանք, որի օգնությամբ հատակագծից բնություն են փոխանցվում ծաղկանոցների նկարները, ստուգվում են զբոսայգիների ճեմուղիների, հրապարակների լայնակի թեքությունները:

ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՇԱՐ, *Запас эксплуатационный; exploitation stock*

Ծառուտում բնափայտի այն քանակը, որը ենթակա է շահագործման, այսինքն՝ տարիքով, տիվությամբ, ծառուտի վիճակով և այլ հատկանիշներով ենթակա է հատման:

ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ, *Эксплуатационный участок; exploitation plot*

Անտառային ֆոնդի շահագործման հաշվարկային միավոր:

ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՖՈՆԴ, *Эксплуатационный фонд; exploitation fund*

Արդյունաբերական շահագործման նշանակություն ունեցող հասուն և գերհասուն անտառամասի հաշվարկային տարածքն ու բնափայտի պաշարը: Որոշվում է անտառաշինության կողմից անտառի զույգագրման նյութերի հիման վրա:

ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՐՏԵՋՆԵՐ, *Сады Семiramиды; Semiramids gardens*

Աշխարհի 7 հրաշալիքներից մեկը: Սանդղափուլերի վրա ստեղծած կախովի պարտեզներ Բաբելոնում: Աչքի էին ընկնում ծաղիկների (վարդերի) և ջրի առատությամբ: Վերջինս մղվում էր հատուկ սարքերի օգնությամբ: Ժամանակակակից կախովի պարտեզների նախատիպը:

ՇԱՌԱՎՂԱՅԻՆ ԱՃ, *Радиальный пророст; radial increment*

Ծառի բնի աճը շառավղային ուղղությամբ: Լինում է ընթացիկ, ծառաբնի հաստության ավելացումը մեկ տարվա կամ «ո» տարիների ընթացքում. միջին պարբերական՝ որոշակի հաշվարկային «ո» տարիների միջին աճ:

ՇԱՏՐՎԱՆ, *Фонтан; fountain*

Ջրահավաք և ճնշման տակ ջուր ցայտող մեկ կամ բազմաթիվ փողոյակներից կազմված կառույց: Երբեմն զարդարվում է քանդակներով, զուսմավոր լույսերով: Պարտեզապուրակային ձևավորման հիմնական տարրերից մեկն է:

ՇԱՐԱՅԱՐԿ, ՅԱՐՈՒՄ, *Ярус; layer, stage*

Բուսական համակեցության ուղղահայաց կառուցվածքի տարր: Անտառային համակեցությունը սովորաբար կազմված է լինում մեկ կամ երկու (երբեմն էլ ավելի)

շարահարկերից՝ ծառերից, ենթանտառից, մատղաշից, կենդանի ծածկոցից: Անտառզնահատման ժամանակ առանձնյակի ուշադրություն է դարձվում ծառերն ըստ Ե.-ի հաշվարկելու վրա: Ընդ որում ծառերի երկրորդ Ե.-ի առանձնացման հիմքում ընկած են տնտեսական հատկանիշները՝ նրա պաշարը պետք է լինի 1 հա 30 մ³ ավելի և առաջին Ե.-ի պաշարի 20 %-ից ոչ պակաս:

ՇԱՐԱԳԱՐԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, Ярусность; layering

Անտառային համակեցությունը կազմված է մի քանի շարահարկերից՝ ծառային, որը երբեմն բաժանվում է 1-3 ենթաշարահարկերի՝ ընդգրկելով մատղաշը, ենթանտառ, կենդանի ծածկոց (խոտածածկ), մամռաքարաքոսային ծածկույթ: Շարահարկերի մեջ սովորաբար չեն մտնում բաղեղները, էպիֆիտ և պարագիտ բույսերը, որոնք ընդունվում են որպես արտաշարահարկային: Մինևույն ծառատեսակը, ելնելով հասակային վիճակից կարող է միաժամանակ գտնվել տարբեր շարահարկերում: Որպես կանոն բերրի հողերում, կլիմայական բարենպաստ պայմաններում ձևավորվում են բազմաշարահարկ անտառներ:

ՇԵՆՈՒԳՎՎՈՐՈՒՄ, Шелюгование; planting

Տարբեր տեսակի ուռենիների (ու. սրատերև, շելուգա կարմիր, շելուգա դեղին և այլն) տնկման միջոցով ավազուտների մակերեսի նախնական ամրացում: Կատարում են ճյուղերով, կտրոններով, տնկիների միջոցով (հազվադեպ): Օգտագործում են 1-2 տարեկան շիվերը, որոնք մթերում են աշնանը, պահում խոնավ ավազի մեջ խրամատներում, զարմանը տնկում ակոսներով: 1 օջախային հեռավորությամբ՝ 60-70 սմ: 1 հա-ում՝ 60-70 հազար կտրոն:

ՇԵՂԱՇԵՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, Свилеватость; cross grain

Բնափայտի արատ, որն արտահայտվում է հյուսվածքների ալիքավոր կամ խառը դասավորությամբ: Ե. իջեցնում է փայտանյութի որակը, երբեմն գնահատվում է բարձր՝ կտրվածքի գեղեցիկ տեսքի համար: Հանդիպում է բոլոր ծառատեսակների, առանձնապես լայնատերև սաղարթավորների մոտ:

ՇԵՂԱՇԵՐՏ ՀՅՈՒՎՎԱԾՔ, Наклон волокон; slope of grain

Բնափայտի տարածված արատ, արտահայտվում է հյուսվածքների շեղ աճով: Ե. զցում է բնափայտի ամրությունը, դժվարացնում փայտանյութի մշակումը:

ՇԵՂԱՇԵՐՏՈՒԹՅՈՒՆ, Косослой; roe

Երբ բնափայտի հյուսվածքներն աճում են պտուտակաձև, այլ ոչ թե առանցքի զուգահեռ: Բնափայտի տարածված արատ, բնորոշ է գրեթե բոլոր ծառատեսակներին: Ե. լինում է բույլ, ուժեղ և միջին, որը բնորոշվում է բնի մեկ միավոր երկարության հատվածում շեղվածության աստիճանով:

ՇԵՇՏՈՒՄ, *Акцент; accent*

Պարտեզպտրակային արվեստում մանրամասների (ծառերի խմբի, ծառի կամ թփի) ընդգծում (ուրվագծով, գունավորմամբ, լուսավորվածությամբ) ընդհանուր բնապատկերում:

ՇԵՐՏԱՐԱՐՈՒՄ, *Стратификация; stratification*

Դժվար ծլող սերմերը (լորենու, մասրենու, արոսենու, սզնու) պահվում են լավ օդափոխություն և բարձր խոնավություն, ոչ բարձր ջերմաստիճան (0+7°) ունեցող ավազի մեջ, թեփում (1:3 հարաբերությամբ):

ՇԻՔԼՅԱԿ, *Шубляк; sibirjak*

Միջերկրկրածովյան բուսականություն, որի կազմում ավելա են չորադիմացկուն, ջերմասեր, տերևաթափ թփատեսակներ և ցածրած ծառեր: Հայաստանում հանդիպում է հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջաններում (Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզերի սահմաններում): Հիմնական տեսակներն են ցաքին, դրախտածառը, փոշնիները, դաժին և այլն:

ՇԻՆԱԳԱՐՄԱՐ ԾԱՐ, *Деловое дерево; merchantable tree*

Լիարուն, բնափայտի տեխնիկական լավագույն հատկություններով օժտված ծառ: 20 մ բարձրությամբ ծառի շինափայտի բարձրությունը կազմում է 6.5 մ և ավելի: Յածրահասակ ծառերի դեպքում կազմում է բարձրության 1/3-ից ոչ պակաս: Շ.Ծ.-ի հաշվարկը կատարվում է ծառուտի նյութադրամային գնահատականը որոշելու համար:

ՇԻՆԱՓԱՅՏ, *Древесина деловая; industrial wood*

Անտառանյութից ստացվող, տնտեսության մեջ օգտագործման համար պիտանի տեսականու մեծ խումբ: Օգտագործվում է որպես գերան կամ որպես հումք հետագա մշակման համար: Շ.-ի ելքը կազմում է անտառանյութի մինչև 72%-ը:

ՇԻՎԱԳՈՅԱՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Побегопроизводительная способность; shoot-forming capacity*

Ծառի՝ նախորդ տարվա աճածի վրա ուժեղ ընձյուղներ առաջացնելու ունակությունը: Որքան շատ են առաջանում ուժեղ ընձյուղներ, այնքան բարձր է շիվագոյացման ունակությունը, որից էլ կախված է ետման քմությամբ:

ՇԻՎԱՅԻՆ ՑԱԾՐԱԲՈՒՆ ԱՆՏԱՐ, *Порослевой низкоствольный лес; coppice lowstem forest*

Անտառ, որն առաջանում է կոճղաշիվերից և արմատային ընձյուղներից:

ՇԻՎԱՆՍԱՆ ԲՈՒՅՍԵՐ՝ *Прутьевидные растения; latices plants*

Երկար, չճյուղավորված շիվերով բույսեր (ուռենի, օրոճ և այլն):

ՇՈԳԵՂԻՄԱԳՎՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Жаростойчивость; heat resistance, heat tolerance*

Բարձր ջերմաստիճաններին դիմանալու բույսերի ունակությունը: Հատուկ է հիմնականում հարավային և հատկապես կիսաանապատային ու անապատային ծագում ունեցող բույսերին: Պայմանավորված է գոլորշիացման փոքր գործակցով և պաշտպանիչ մի շարք հարմարանքներով (տերևները ծածկված են մոմաշերտով, խավով, մազմզուկներով, տերևների գույնը բաց մոխրավուն է): Շատ հաճախ տերևները խիստ մանրանում են, որոշ դեպքերում (հատկապես խոնավության խիստ պակասի դեպքում) վերածվում են փշերի:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՈՒՄ, *Загрязнение окружающей среды; environmental pollution*

Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում մարդու ներգործությունը բնության վրա, որը հանգեցնում է հողի, ջրի, մթնոլորտի անցանկալի, երբեմն անդառնալի փոփոխությունների: Մթնոլորտի աղտոտվածությունը քացասաբար է ազդում անտառի աճի և զարգացման վրա, պատճառ դառնում է կոհամակարգերից կենդանական և բուսական առանձին տեսակների վերացման: Անտառը միևնույն ժամանակ հանդիսանում է մթնոլորտը մաքրող բնական ֆիլտր:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՂՊԱՆՈՒԹՅՈՒՆ, *Охрана окружающей среды; nature protection*

Բնապահպանական միջոցառումների համալիր, որն ուղղված է նրա առանձին բաղադրիչների՝ հողի, ջրային, բուսական ու կենդանական պաշարների, օդային ավազանի և այլնի կայուն պահպանությունը: Շ.Մ.Պ.-ն իրականացումը կարգավորվում է համապատասխան բնապահպանական օրենսդրությամբ:

ՇՐՋԱՆԱՅՐՈՒՄ, *Разоупование; subdivision*

Լանդշաֆտի բնորոշ մասերի առանձնացում կանաչապատման խոշոր օբյեկտների նախագծման ժամանակ (օր.՝ հանգստի գոտիներ անտառպուրակների մոտ):

Ո

ՈՂՈՂՎՈՂ ԱՆՏԱՌ, *Галеёвые леса (тузайные леса); riparian woodland*

Անտառագուրկ շրջաններում գետերի և գետակների ափով ձգվող նեղ անտառաշերտ, որը զարմանը գետերի վարարման ժամանակ ողողվում է:

ՈՃ, *Стиль; style*

Տվյալ պատմական ժամանակահատվածում պարտեզպուրակային արվեստում տիրապետող կոմպոզիցիոն–հատակագծային, շինարարագրոտիստիկական սկզբունքների և եղանակների ամբողջություն: Սերտորեն կապված է և արտացոլում է հասարակության սոցիալական կարգը, կանաչ շինարարության մակարդակը և բնույթը, գեղագիտական մտահղացումները և գեղարվեստական ճաշակները:

ՈՍՏ, *Сук; knot, branch*

Ծառի բնից աճած խոշոր կողային ճյուղ, որը կրում է ընծյուղներ, տերևներ, ծաղիկներ, պտուղներ:

ՈՍՏԱՎՏԻՉ, *Сучкорез; knot-cutter*

Գործիք, որով կտրում են հաստ ճյուղերը: Լինում է մկրատածև և սղոցածև: Օգտագործում են կանաչ շինարարության և պտղարուծության մեջ ծառերը ձևավորելու համար: Հատած ծառերի ճյուղերը կտրելու համար օգտագործում են հատուկ Ո. մեքենաներ կամ սարքեր:

ՈՍՏԱՓՈՒՆՁ (ՏԵՐԵՎԱՓՈՒՆՁ, ԾԱՂԿԱՔՈՒՅԼ), *Мытошка; dasher*

Յողունի միևնույն բարձրության վրա առաջացած տերևներ, ճյուղեր կամ պտուղներ: Ծառերի տերևները հազվադեպ են դասավորվում օղակաձև, մինչդեռ սոճու բոլոր տեսակների ճյուղերը դասավորված են օղակաձև, ինչը արդյունք է այն բանի, որ կողային բոլոր բողբոջները դասավորված են զազաքնային բողբոջի շուրջը: Տարվա ընթացքում սոճին առաջացնում է մեկ օղակ (ոստափունք), ինչը հնարավորություն է տալիս դասել ծառի տարիքի մասին:

ՈՍՏԵՐ, *Сучку; snag*

Աճող ծառի ոստերը լինում են կենդանի, որոնք օրգանապես կապված են շրջապատող բնափայտի հետ, և մահացած, որոնք շրջափակված են բնափայտով՝ առանց օրգանապես կապված լինելու նրա հետ: Աղոցելիս մահացած ոստը կարող է տախտակից անջատվել: Ոստը նվազեցնում է բափայտի մեխանիկական հատկությունները, դժվարացնում սղոցման և հղման աշխատանքերը:

ՈՍՏԵՐԻ ԷՏ, *Обрезка сучьев; snags cutting, scraping*

Աճող ծառերի բնից և ներքին ճյուղերից կենդանի և մահացած ոստերի հեռացում: Կատարվում է տեխնիկական բարձր հասկություններով օժտված բնափայտ աճեցնելու նպատակով: Կիրառվում է 15-20 տարեկան պլանտացիոն տնկարկներում հատուկ տեսականու բնափայտ աճեցնելիս:

ՈՐՈՂԵԼԻ ԳՈՂԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՈՆԵՐ, *Защитные насаждения на орошаемых землях; protection forests for irrigated lands*

Պաշտպանական անտառտնկարկների տարատեսակ: Ժապավենածև անտառտնկարկներ, որոնք հիմնադրվում են պաշտպանելու ոռոգվող դաշտերը արտաքին անբարենպաստ գոծոններից:

ՈՐՄԱՊԱՐՏԵՃ, *Настенный сад; wall garden*

Թեք լանջի, մեցուկապատի տեսք ունեցող, բնական ձևի քարերից դասավորված գեղազարդային կառուցվածք: Քարերի միջև եղած ճեղքերը լցված են հողով և աճեցվում են գեղազարդային խոտարույսեր (չորասեր, ավելի քիչ՝ խոնավ ժայռերի բույսեր):

ՈՐՈՆՈՒՄՈՎ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Пруисковая рубка; selection fellings*

Ընտրովի հատումների տարատեսակ, որի ժամանակ ընտրում են հատուկ տեսականու (ոեզոնանսային, դահուկային և այլն) բնափայտ ապահովող ծառեր: Ո.Հ. անտառտնտեսական և անտառշահագործման տեսակետից ունեն բացասական նշանակություն՝ վատացնում են անտառի սանիտարական վիճակը, մեծացնում հրդեհավտանգությունը, աշխատատար են, բարձրացնում են ստացվող բնափայտի ինքնարժեքը:

ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԱԿ, *Охотничье хозяйство; game husbandry*

Անտառային, գյուղատնտեսական, ջրային տարածք, որը պիտանի է վայրի կենդանիների, թռչունների բնակության և բազմացման, որսորդական տնտեսություն կազմակերպելու համար: Ո. Հ.-ի օգտագործումը կարգավորվում է որսորդության և որսորդական տնտեսության կանոնադրությամբ:

ՉԱՊՊԱՐԱԼ, Чанпораля; Chapporai

Քիուտային կաղնու և մերձարևադարձային թփուտային երկրորդային համակեցություններ, որոնք կազմված են կոշտատերև մշտականաչ թփուտներից և տարածվում են Հյուսիսային Ամերիկայում (Կալիֆորնիա, Մեքսիկա):

ՉԱՓԱՎՈՐ ԱՃՈՂ ԾԱՌԵՐ, Умереннорастущие деревья; moderate growing trees

Ծառեր, որոնք բնորոշվում են վեգետացիայի ընթացքում ընձյուղների 0.5-0.6 մ հասնող աճով: Այդպիսի ծառերից են թեղին, Ժայռային կաղնին, սովորական բոխին, մանրատերև լորենին, կովկասյան և սիրիոյան, էնգելմանի և փշավոր եղևնիները, վիրգինյան զիհին, արևմտյան կենսածառը, թփերից՝ դրախտածառը, եղևանին, խենոմեխեղ, սրնգենին և այլն:

ՉԵՁՈՔ ԲՆԱՊԱՏԿԵՐ, Нейтральный пейзаж; neutral landscape

Զրոսայգու տարածքի մի հատված, որը և հատուկ ձևավորմամբ ուշադրություն չի գրավում:

ՉԵՁՈՔ ԲՈՒՅՍԵՐ, Нейтральные растения; neutral plants

Ցեբեկվա տևողության կամ հողի քի-ի նկատմամբ անտարբեր բույսեր:

ՉԻՆԱՎԱԼ ՊՈՒՐԱՎԻԿ, Китайская рошца; Chinese grove

Ծառերի տնկարկն ամֆիթատրոնի ձևով: Օգտագործվել է Մոսկվայում XVIII դարի վերջում (Շերեմետևների կալվածք, Օստանկինո):

ՉԿԱՆՉԱՊԱՏՎՈՐ ՏԱՐԱԾՔ, Неозеленяемая территория; no-greening territory

Քաղաքամերձ գոտու կանաչաման ոչ ենթակա հատված: Այդպիսին են, օրինակ, դաշտային և բանջարանոցային մշակաբույսերի, խոտհարքների, արոտավայրերի համար նախատեսված գյուղատնտեսական հանդակները, ինչպես նաև քարոտները, աղուտները, օգտակար համածոների գործող հանքերը և այլն:

ՉՈՐԱԲՈՒՅՍԵՐ, Ксерофиты; xerophytes

Անբավարար խոնավության պայմաններում աճող, մթնոլորտային և հողային չորայնությանը դիմացող բույսեր: Սովորաբար, այդ բույսերը հարմարված են 500 մմ-ից պակաս տեղումներ ունեցող վայրերում աճելուն: Ունեն գոլորշիացումը նվազեցնող մի շարք հարմարանքներ (նեղ, կոշտ տերևներ, թավտոություն և այլն): Հիմնականում տափաստանների, կիսանապատների և անապատների բույսեր են:

ՉՈՐԱԾԱՐԻԿՆԵՐ՝ *Сухобетмы, иммортели; immortelles*

Տե՛ս Անթռաններ:

ՉՈՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ՉՈՐԱԳԱՎԱԹՈՒԹՅՈՒՆ), *Сухобершинность; die back, top drying*

Արդյունք է ջրային հաշվեկշռի և նյութափոխանակության վատացման: Աճող ծառերի զագաթի և վերին ճյուղերի մահացում: Բնորոշ է ծեր ծառերին, առաջանում է նաև երաշտի, գրունտային ջրերի մակարդակի անկման, հողին ամրանալու, օդի աղտոտման, բնափայտում անոթների խցանման հետևանքով, ինչպես նաև սնկային հիվանդություններով, վնասատուներով վարակվելու և այլ պատճառներով:

ՉՈՐԱԿՈՂ, *Сухобокость; bundle scar*

Բնափայտի արատ, որն առաջանում է աճող ծառի բնի կամ կմախքային ճյուղերի մոտ, կեղևի և կամբիումի մեխանիկական վնասվածքի հետևանքով: Բնորոշ է բոլոր տեսակներին:

ՉՈՐԱԿՈՏՐՈՒԿ, *Сухолом; deadwood breakage*

Չորացած կամ չորակատար ծառի կամ նրա հատվածի քնական կոտրվածք:

ՉՈՐԱՅԻՆ ՆՈՍՐ ԱՆՏԱՌ, *Ксерофильное редколесье; xerophilous light forest*

Ծառաթփային խիտ բուսականության զարգացման համար անհրաժեշտ խոնավության անբավարարության պայմաններում աճած նոսր անտառ: Այդպիսին են պուրակային, լեռնային արիդային նոսր անտառները:

ՉՐԱՏՈՒՄ, *Скарификация; scarification*

Որոշ բույսերի (մասրենի, գիհի, հոնի, լորենի) դժվար ծլող սերմերի նախացանքային մշակում: Կատարվում է սերմային թաղանթը մեխանիկական (ավազով, զմռնիտի թրթով) վնասելու միջոցով: Նպատակ ունի արագացնել ծլման պրոցեսը:



ՊԱԼԱՐ, *Клубень; tuber, podule*

Ստորգետնյա ընձյուղի հաստացած, կարճացած մաս, որը կրում է բողբոջներ (աչքեր): Աննդանյութերի պահեստավորման ու վեգետատիվ բազմացման օրգան է:

ՊԱԼԱՐԱՐՈՒՅՍԵՐ, *Клубневые растения; tuberous plants*

Հողում աննդանյութեր պահեստավորող օրգաններ՝ պալարներ առաջացնող բույսեր:

ՊԱԼԱՐՎՍՈՒՆԻԿ, *Клубмелюковица; corn*

Բույսերի վեգետատիվ բազմացման ստորգետնյա օրգան: Ունի պալարային ծաղու: Տեսքով նման է սոխուկի, բայց զուրկ է թփուկներից:

ՊԱԼԱՐԱՐՄԱՏ, *Клубнекорень; tuber-root*

Պալար հիշեցնող ձևափոխված արմատ: Օրինակ՝ գեորգենու արմատները:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՏՈՒՄ, *Условно-слошная рубка; conventional clear felling*

Համատարած հատատեղային հատման տարատեսակ, որի ժամանակ հատում են խոշոր, մեծածախկ շինափայտով օժտված ասեղնատերևավոր և սաղարթավոր ծառերը: Կիրառում են տայգայում, որտեղ փայտանյութի սպառողական պահանջը փոքր է:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄԻԱՀԱՍԱԿ ԾԱՌՈՒՄՆԵՐ (ՏՆՎԱՐԿՆԵՐ), *Условно-одновозрастные насаждения (древостой); conventional annual stands*

Մեկ սերնդի ծառերից կազմավորված ծառուտներ: Բնորոշ է լուսասեր ծառատեսակներին, հիմնականում համատարած հատատեղերում, հրդեհված մասերում և այլ բաց տարածքներում: Պ.Մ.Ծ. արտաքինից բնորոշվում են տարբեր խորությամբ սաղարթի հորիզոնական միակցվածությամբ, ծառերը՝ ըստ ածման դասերի, դիֆերենցվածությամբ, բունը՝ ճյուղերից լավ մաքրվածությամբ: Պ.Մ.Ծ.- հասակային տատանումները պայմանավորված են վերականգնման ժամանակաշրջանով, որը տևում է 1-2 (երբեմն էլ 3) հասակային դաս: Հանդիսանում են հասակային կառուցվածքի տիպի դասակարգման ցուցանիշ:

ՊԱՅՔԱՐ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐՈՂԵՋՆԵՐԻ ՂԵՄ, *Борьба с лесными пожарами; wildfire suppression*

Նայած հրդեհի բնույթին, կիրառում են տարբեր եղանակներ՝ քիմիական, պայթեցման, հանդիպակաց կրակով և այլն:

ՊԱՆՄՆՈՍԱՏԻԿ (ՍԵՎ ԵՎ ՍՊԻՏԱԿ) ՕՊԱՆՈՒՄԱՆԿԱՐԱՎԱՆՈՒՄ, *Панхроматическая (черно-белая) аэрофотосъемка; Panchromatic (black and white) photography*

Պանխրոմատիկ օդալուսանկարահանումը օգտագործվում է բարձր տարածական թույլատրելիության նկարներ ստանալու համար:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՈՒԲՈՒԹՅՈՒՆ, *Защитное лесоразведение; protective afforestation, protective silviculture*

Զանգվածային, էքսպոզիցիոն, շերտավոր և դարավանդավոր անտառային մշակությունների ստեղծում և աճեցում՝ տարածքի պաշտպանության, ինչպես նաև գյուղատնտեսական հանդակների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՈՒՆԵՐ, *Защитные леса; protective forests*

Բնական և արհեստական անտառներ, որոնց միջավայրը բարելավող հատկություններն անհրաժեշտ են բնական մերարենպաստ երևույթներից պաշտպանելու որոշակի օբյեկտներ: Ընդհանուր առմամբ պաշտպանական հատկություններով օժտված են բոլոր անտառները: Սակայն անտառների այն մասը, որի բազմաթիվ ֆունկցիաներից առաջնությունը տրվում է պաշտպանական բարելավող հատկություններին, դասվում է Պ.Ա.-ի շարքը: Այստեղ առանձնացվում են հատուկ անտառներ, որոնցում սահմանվում է անտառտնտեսվարման խիստ սահմանափակ ռեժիմ: Պ.Ա.-ու, անտառտնտեսվարումը պարտադիր հետապնդում է անտառի բնական վերականգնման նպատակ՝ թույլ չտալով անտառի տակ զբաղեցրած տարածքը փոխարինել հողատեսքի:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՈՒՆԿԱՐԿՆԵՐ, *Защитные лесные насаждения; protective forest stands*

Արդյունաբերական և ավտոտրանսպորտի արտանետումներից, աղմուկից, քամուց, փոշուց, ձնահյուսերից, էրոզիայից պաշտպանվելու, շրջապատող միջավայրի պահպանության գործում կարևոր դեր ունեցող կանաչապատման օբյեկտներ: Հատուկ նշանակության տնկարկներ են: Ստեղծվում են զազափոշեկայուն բուսատեսակներից, 20-30 մ լայնության գոտիների տեսքով: Լինում են քամու համար միջանցիկ կամ ցացկեն (մինչև 80% բացվածքներով), քամու համար ոչ միջանցիկ (սաղարթի ցացկենությունը 30%) և, ձնակուտակման նպատակով, խիտ տնկված:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՆԿԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՄ, *Реконструкция защитных лесных насаждений; reconstruction of protective forest stands*

Անտառաշերտերի քամեթափանցելիությունը մեծացնելու, ինչպես նաև տնկարկների վիճակի բարելավման նպատակով շարքերի քանակի, ծառատեսակային կազմի, սխեմայի և կառուցվածքի արմատական փոփոխություններ: Կիրառում են հետևյալ միջոցառումները. հեռացնում են անտառաշերտերի եզրային, երբեմն միջին

շարքերը, շարքամիջուկ՝ առանձին ծառեր կամ թփեր, կատարում են խնամքի հատումներ:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԱԳՐՈՒՆՏԱՌՔԱՐԵԼԱՎԱՆՆ ԵՒՆԱՐԱՌՈՒԹՅՈՒՆ, *Агроресамелиоративное устройство защитных насаждений; agroforest amelioration of protective stands*

Պաշտպանական անտառներում տնտեսվարման նախագծի մշակման նպատակով հետախուզական և տնտեսակազմակերպչական միջոցառումների համակարգ: Նախագիծը կազմում են հաշվարկային մեկ ժամանակահատվածի (5-10 տարի) համար:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՊԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Защитная лесистость; protective forest cover*

Հողային տարածքի կամ գյուղատնտեսական հանդակների՝ անտառներով պաշտպանվածության ցուցանիշ: Որոշվում է պաշտպանական անտառների և տվյալ վայրի, շրջանի կամ մարզի գյուղատնտեսական հողահանդակների տարածքի հարաբերությամբ՝ արտահայտված %-ներով: Առանձնացվում են նաև դաշտապաշտպան անտառաշերտերը, որպես վարելահողերի Պ.Ա.: Հաշվարկը կատարվում է երկու տարբերակով՝ փաստացի գոյություն ունեցող անտառապատվածություն և անհրաժեշտ անտառապատվածություն, որը ցույց է տալիս տվյալ օբյեկտի պաշտպանության համար անհրաժեշտ անտառտնկարկների օպտիմալ քանակը:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՊԱՏՈՒՄ, *Защитное лесоразведение; protective afforestation*

Գյուղատնտեսական հանդակները, վարելահողերը, ճամպարհները, ջրանցքերը, բնակավայրերը և այլ օբյեկտներ բնական անբարենպաստ երևույթներից պաշտպանող անտառտնկարկների հիմնադրում: Պ.Ա. տարածքի կենսարդյունավետությունը բարձրացնելուց բացի տնտեսությանը լրացուցիչ տալիս է բնափայտ, պտուղներ, հատապտուղներ, կատարում սոցիալական և գեղագիտական դրական դեր:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՆԱԾ ԳՈՏԻ, *Защитная зеленая зона; protective green zone*

Բնական կամ արհեստական անտառտնկարկներ քաղաքների, ձեռնարկությունների շուրջը: Բնակչության հանգստի վայր է, միաժամանակ քաղաքը ապահովում է մաքուր օդով:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐ, *Государственные защитные лесные полосы; protective state shelter belts*

Հիմնադրվում են կլիմայի և հիդրոլոգիական պայմանների բարելավման, գյուղատնտեսական մշակաբույսերը խորշակներից ու հողմահարումից, ճանապարհները ճնահյուսներից պաշտպանելու նպատակով: Դաշտապաշտպան անտառաշերտերի հետ մեկտեղ Պ.Պ.Ա. կազմում են պաշտպանական անտառտնկարկների համալիր, դասվում են 1-ին խմբի անտառների կարգը:

ՊԱՍԻՎ ԳՈՒՅՆ, *Пассивный колер; passive colour*

Երկնագույն, կապույտ, կանաչ գույներ: Ընդհանուր հանրանկարի վրա դրանք կարծես «մի կողմ են քաշվում», անցնում են հետապատկերի խորքը: Ամենապասսիվ, մութ և «սառը» գույնը կապույտն է: Պուրակային կոմպոզիցիաներում սովորաբար պասսիվ գույները տեղադրվում են շեշտելու տվյալ օբյեկտի հեռավորությունը, քնապատկերի ետին պլանը հագեցնում են պասսիվ գույներով:

ՊԱՍՏԱՍՏՈՂՈՒՆ, *Плеть, плетень; vine, wattle fence*

Հիմնականում փաթաթվող բույսերի միամյա ընծյուղ կամ ուռենու և ուրիշ բույսերի երկար, բարակ շիվ:

ՊԱՍՍԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ, *Исторический парк; historical park*

Անցյալի պարտեզաչինական մշակույթի նմուշ: Որպես հնության հուշարձան: Պետության կողմից ենթակա է պահպանության:

ՊԱՍՍԱՆՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԶՈՆԱՅԱՎՈՐՈՒՄ, *Историко-архитектурное зонирование; historical-architectural zoning*

Մշակույթի հուշարձանների տարածքի զոնայավորում: Սկզբնականին մոտ միջավայրի պայմաններ ստեղծելու նպատակով պատմական հատակագծման հայտնաբերում:

ՊԱՍՎԱՍՏ, *Прущивка; graft, grafting, inoculation*

Մի բույսի վեգետատիվ օրգանի որոշ մասի տեղադրումը այլ բույսի վրա և վերջինիս հետ սերտաճումը: Պ-ը հնարավոր է միայն նույն ցեղի տարբեր տեսակների կամ ազգակից ցեղերի ներկայացուցիչների միջև: Բազմացման կարևոր եղանակ է հատկապես զեղազարդային պարտիզագործության քնազավաթում: Պ-ի միջոցով կարելի է բազմացնել պարտեզային ձևեր (վարսավոր, քրզած, կոնած, կլորասաղարթ, սպիտակատերև, ոսկեգույն, կարմրասաղարթ, գաճաճ և այլն), որոնց սերմերի ցանքից մայրական հատկանիշներ կրող շատ քիչ բույսեր են ստացվում: Պ-ի ձևերն են՝ մերձապատվաստը, կտրոնապատվաստը, ճեղքապատվաստը, այքապատվաստը:

ՊԱՍՎԱՍՏԱԿԱԼ, *Подбой; rootstock, stock*

Բույս, որի վրա է պատվաստ կատարվում: Մեծ մասամբ սովորական, վայրի հատկանիշներով բույսեր են:

ՊԱՏՎԱՍՏԱՅԻՆՐ, *Привод; scion*

Բույս, որից վերցնում են կտրոնը կամ այլը՝ պատվաստակալի վրա տեղափոխելու նպատակով: Այլի է ընկնում գեղազարդային արժեքավոր հատկանիշներով (սաղարթի գեղեցիկ ձև, գույն, ծաղիկների լիաթերթություն, մեծություն և այլն), որոնք փոխանցվում են պատվաստակալին:

ՊԱՏՈՒԴԱՆ, *Окна; window*

Բնապատկերին գեղատեսիլություն տալու նպատակով անտառային զանգվածներում կամ ծառախմբերում արված լուսաճառագներ: Սինչև 1 հա, ծառերից և քփերից ազատ, խոտածածկ տարածք է: Նպաստում է բնապատկերի ընկալման փոփոխմանը:

ՊԱՐԿՐՏԱՆՅՈՒԹ, *Удобрение; fertilizer*

Բույսերի լավագույն աճի և զարգացման համար անհրաժեշտ սնուցման տարրեր: Լինում են հանքային (ազոտ, ֆոսֆոր, կալիում), միկրոտարրերի (երկաթ, մանգան, մագնիում), օրգանական (միզանյութ, գոմաղբ), օրգանահանքային պարարտանյութեր:

ՊԱՐՁ ԾԱՌՈՒՄ, *Простой древостой; single-story stand*

Միաշարահարկ ծառուտ, որտեղ բոլոր ծառերի սաղարթները կազմում են մեկ շարահարկ:

ՊԱՐԵՆՔԻՄ, *Паренхима; parenchyma*

Բուսական հիմնական հյուսվածք, որի ներսում ձևավորվում են մասնագիտացված (փոխարդող, մեխանիկական) հյուսվածքները: Պ. կազմված է բոլոր կողմերից միաշափ կենդանի քջիջներից, որոնք կատարում են քազմաթիվ ֆունկցիաներ և ունակ են փոփոխելու իրենց զործունեության բնույթը: Նրանով է պայմանավորված բույսերի վնասվածքների ինքնաբուժումը, հյուսվածքների ինքնավերականգնումը, հավելյալ արմատների և շիվերի զոյացումը: Պ.-ի հիմնական ֆունկցիան սննդանյութերի պահեստավորումն է, այն ածխաջրերի հիմնական օգտագործողն է: Նրա քջիջների քջջախորշներում կուտակվում են սպիտակուցներ, ծարսեր, պիգմենտներ, դաբաղալին և այլ նյութեր:

ՊԱՐՏԵՁ, *Сад; garden*

Կանաչապատման օբյեկտ, կատեգորիա: Որոշակի հատակագծային կոմպոզիցիայում միավորված բեմահարթակ, մարգահրապարակներ, ծառուղիներ, մանկական խաղահրապարակներ, ջրամբարներ ունեցող և տնկարկներով, մարգագետիններով, ծաղկանոցներով ծածկված 5-10 հա-ից ոչ պակաս տարածք: Նախատեսված է հետիոտն մատչելիության սահմանում ապրող բնակչության կարածատև համզատի հա-

մար: Լինում են քաղաքային, միկրոշրջանային բնակելի թաղամասի և հատուկ նշանակության (ակումբներին, հիվանդանոցներին, առողջարաններին, դպրոցներին, արդյունաբերական ձեռնարկություններին կից) պարտեզներ:

ՊԱՐՏԵԶԱԲՈՒՅՍ, *Садово́е растение; garden plant*

Պարտեզում աճող, մշակվող գեղազարդային բույս: Գոյություն ունեն ծառափային տարբեր բույսերի պարտիզային ձևեր (գնդաձև, լացող, բրգաձև, խայտաբղետ տերևավոր, կարմարատերև, լիաթերթիկ ծաղկավոր և այլն), որոնք լայնորեն օգտագործվում են կանաչապատման պրակտիկայում: Օրինակ՝ ձնագունդը (բուլդոնեժ), ի տարբերություն վայրի աճող սովորական բանջու, աչքի է ընկնում գեղեցիկ սաղարթով և լիաթերթիկ ծաղիկներով:

ՊԱՐՏԵԶՊՈՒԲԱԿԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ, *Садово-парковое искусство; garden park art*

Կանաչապտման օբյեկտների (գրոսայգիներ, անտառապուրակներ, պարտեզներ, պուրակներ, ճեմուղիներ) նախագծման և ստեղծման արվեստ: Գիմնված է բնական (հող, բույս, ջուր, քար) և այլ նյութերի կոմպոզիցիայի, հեռանկարի, լույսի և գույնի տեսության օրենքները օգտագործելու ունակության վրա: Գեղարվեստական պատկերներով արտահայտվում է որոշակի գաղափարական բովանդակություն:

ՊԱՐՏԵԶՊՈՒԲԱԿԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ, *Садово-парковый ландшафт; garden park landscape*

Կուլտուրական կամ բնական լանդշաֆտի մի հատված, որը վերափոխվել է մարդու նպատակասլաց գործունեության հետևանքով: Սահմանափակված է որոշակի սահմաններով, որում բնական տարրերը (աելինՖ, ջուր, բուսականություն, հող) զուգորդվում են նպատակահարմար տեղադրված արհեստական կառուցվածքների (ճարտարապետական փոքր ձևեր և այլն) հետ, առաջացնելով փոխկապված և փոխպայամանավորված ամբողջություն: Մարդկանց կարճատև հանգստի վայր է:

ՊԱՐՏԻԶԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, *Садоводство; gardening*

Այգեպարկային շինարարության ամենակարևոր օղակ, որն իր մեջ ներառում է կանաչապատման նախագծում, բաց և փակ գրունտի ծաղկաբուծություն, գեղազարդ ծառաբույսերի տնկարանի հիմնադրում և կանաչապատման փուլերի իրականացում:

ՊԱՐՏԵԶՊՈՒԲԱԿԱՅԻՆ ԵՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, *Садово-парковые строительные работы; garden park construction activities*

Արահետների, հրապարակների, ջրամբարների, պարտեզապուրակային տարրեր կառույցների շինարարության, կանաչապտման օբյեկտում սարքավորումների մոնտաժի և տեղադրման աշխատանքներ:

ՊԱՐՏԵՑԻՊՈՒՄԿԱԳՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, Садово-парковое строительство; garden park construction

Կանաչապատման օբյեկտների ստեղծման տեսություն և պրակտիկա: Ընդգրկում է տարածքը ազդոտինիկական և ինժեներական տեսակետից նախապատրաստելու և բարեկարգելու աշխատանքներ, որոնք կատարվում են նախատակահարմար ծախսով մշակված նախագծերի ու նախահաշիվների հիման վրա:

ՊԱՐՏԻՉԱՅԻՆ ՉԵՎ, ԿՈՒՏԻՎԱՐ, Садовая форма; garden form, cultivar

Տացսոնոմիական միավոր: Չատկապես լայնորեն օգտագործվում է կանաչ շինարարության բնագավառում (զեղազարդային ծառաբուծություն, ծաղկաբուծություն), սելեկցիայում: Բույսի ցեղի և տեսակի անուհից հետո նշվում է պարտեզային ձևը: Օրինակ՝ *Acer platanoides* Schwedleri (C.Koch) Schhwerin.

ՊԱՐՏԵԶԻ, ԶՐՈՍԱԳՈՒ ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, Емкость сада или парка; garden park capacity

Այցելուների որոշակի քանակ սպասարկելու հնարավորությունը բնութագրող ցուցանիշ: Չափարկվում է ըստ կանաչապատման օբյեկտի շրջակայքի բնակչության քանակի: Արտահայտվում է բացարձակ (մարդ/հա) և հարաբերական (%) մեծություններով: Օգտագործվում է բնակավայրերի կանաչապատման հեռանկարային պլանի կազմման հետ կապված հաշվարկներում:

ՊԱՐՏԵՐ, ՍԵՐՄԵՐ; parter

Գեղազարդային ցածրահասակ բույսերից հորիզոնական հարթությունում երկրաչափական ձևերով ստեղծված կոմպոզիցիա: Ստեղծվում է զբոսայգիների գլխավոր ծառուղիներում, վեհակերտ կառույցների և հուշարձանների, ինչպես նաև հասարակական ու վարչական շենքերի, կանոնավոր պարտեզների մուտքերի մոտ: Պ.-ում հատկապես շատ տեղ է հատկացվում գորգային բուսատեսակներից ստեղծված սիզամարգին: Ջրամաբարների, արձանների, շրջակայքի գեղազարդային սալարկման հետ միասնական պատկեր է ստեղծում: Բնութագրվում է գծերի ու ձևերի խստությամբ:

ՊԱՐՏԵՐԱՅԻՆ ՊԱՐՏԵԶ, ՍԵՐՄԵՐՆԻՍ ՍԱԶ; parter garden

Սիզամարգերի, ծաղկանոցների և ջրամբարների զերակշռությամբ կանոնավոր ոճի պարտեզ: Օգտագործվող ծառերը և թփերը սովորաբար տեղադրվում են սիզամարգի և ծաղկանոցների ծայրամասերում, ենթարկվում են կանոնավոր խուզման (դրանց տրվում է զնդի, խորանարդի, քառակուսու և այլնի ձև):

ՊԱՐՏԵՐԱՅԻՆ ՍԻՉԱՍԱՐԳ, ՍԵՐՄԵՐՆԻՍ ՍԱԶ; parter grassplot

Կանոնավոր պարտեզներում և խառը տիպի զբոսայգիների կանոնավոր հատակագիծ ունեցող հողամասերում, վարչական և հասարակական շենքերի, զբոսայ-

գիւնների մուտքի մոտ, փողոցների վայելչատես մասերում ստեղծվող ճանաչողությունը: Ստեղծվում է հիմնականում հացազգի այնպիսի խոտաբույսերի ցանքսով, ինչպիսիք են դաշտավուկը կամ շյուղախոտը: Բնորոշվում է գույնի միատեսակությամբ, գեղազարդային բարձր հատկանիշներով:

ՊԱՐՏԻՉԱԳՈՐԾ, *Садобод; garden worker*

Նախկինում տերմինը վերաբերում էր ինչպես ծաղկաբուծության, գեղազարդային ծառաբուծության, այնպես էլ պտղաբուծության ու քանջարաբուծության մասնագետին (այժմ՝ գիտական պարտիզագործ):

ՊԱՐՏԻՉԱՅՐՈՂ, *Садобая земля; garden mold*

Մի շարք բաղադրամասերից (ճմախող, տերևախող, տորֆախող, փտած զոմաղր, ավազ և այլն) կազմված հողային խառնուրդ: Բնորոշվում է տարբեր սննդարարությամբ և մեխանիկական կազմով: Ըստ մեխանիկական կազմի լինում է թեթև, միջին, ծանր: Թեթև պարտիզախողը կազմված է տորֆախողի 3, տերևախողի 1, գետային ավազի 2, փայտածուխի 1.5 մասերից: Միջին Պ.-ը կազմված է տորֆախողի 2, տերևախողի 1, փտած զոմաղբի 1, գետային ավազի 1.5, փայտածուխի 1 մասերից:

ՊԱՐՏԻՉԱՍՆԱԿ, *Садобный домик; garden house*

Բաց կամ մասամբ ծածկված շենք: Հանգստի կամ վատ եղանակից պատրաստվելու համար օգտագործվող կառույց պարտեզում:

ՊԱՐՏԻՉՈՒՂԻ, *Садровая дорожка; garden lane*

Կանաչապատման օբյեկտների հատակագծային տարր: Ծառայում է այցելուների անցուղարձի կազմակերպմանը: Լինում են գլխավոր, երկրորդական և լրացուցիչ (միացնող պարտիզուղիներ):

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴ, *Государственный лесной фонд; state forest fund, state Forest Estate*

ՀՀ-ում անտառներն ազգային անբաժան սեփականություն են և կազմում են պետական անտառային հողերը (ֆոնդը), որտեղ տնտեսվարումը կատարվում է պետության, հատկապես նրա լիազորված մարմնի կողմից:

ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Леса государственного значения; state forests*

Անտառային ֆոնդի բաղկացուցիչ մասը, որ գտնվում է անտառային պետական մարմինների տնօրինության տակ:

ՊԵՐԻՄՍԻԼ ՊՈՐՏԵՉ , *Сад перистиль; garden pristyle*

Ուղղանկյունների բաժանված հարթ, կանոնավոր պարտեզ: Ունի հատուկ առանցքային կառուցվածք: Ստեղծվում է քաղաքից դուրս գտնվող շենքերի առջև: Զևավորվում է սիզամարգոլ եզրոված ծաղկավոր եզրաշերտերով, քանդակով կամ շատրվանով: Ենթարկվում է շենքի հատակագծին ու ճարտարապետությանը:

ՊԼԱՆԻՄԵՏՐ , *Планиметр; planimeter*

Գործիք, որով անկանոն, հիմնականում կորագիծ ֆիգուրների մակերեսների ճշգրիտ մեխանիկական հաշվարկ են կատարում:

ՊՈԼԻԿԱՐՊ ԲՈՒՅՈՒ , *Поликарпик; polycarpic*

Տե՛ս Բազմապտղաբեր քույս:

ՊՈԼԻԿՈՄՊԱԿՏ ԽՈՒՄԲ , *Поликомпактная группа; multi (poly-) compact group*

Տե՛ս Բազմակոմպակտ խումբ:

ՊՈԼԻԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԳՈՂԱՄԱՍ , *Поликультурный участок; polycultural area*

Տե՛ս Բազմակուլտուրային հողամաս

ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱ , *Популяция; population*

Որոշակի տարածք զբաղեցնող որևէ տեսակի անհատների խումբ, որը ընդունակ է զոյատևելու և վերարտադրվելու: Պ.-ն համարվում է էվոլյուցիայի տարրական միավոր:

ՊՏՈՒՂՆԵՐԻ ԳՍՈՒՆԱՑՈՒՄ , *Созревание плодов; fruits maturing*

Սկսվում է, երբ ավարտվում է նրանց աճը: Գատուացման ընթացքում պտուղների մեջ տեղի են ունենում խորը մետաբոլիկ փոփոխություններ, հյութալի պտուղներում պակասում է թթուների քանակը, իսկ շաքարներն ավելանում են, առաջանում են արոմատիկ նյութեր, քայքայվում են ջլորոֆիլը և դաբաղանյութերը, կուտակվում է էթիլենը, որը կտրուկ կերպով արագացնում է պտուղների զարգացման եզրափակիչ փուլը՝ հասունացումը:

ՊՏՂԱԲԵՐՈՒՄ , *Плодоношение; fruitage*

Բույսի զարգացում, որի ընթացքում այն ծաղկում և առաջացնում է պտուղներ: Արտահայտված սեզոնային կլիմա ունեցող վայրերում Պ. կրում է ընդհատվող, ամեն տարի կրկնվող բնույթ: Խոնավ արևադարձային կլիմա ունեցող շրջաններում Պ.-ման արտահայտված սեզոնայնություն չի նկատվում: Ասեղմատերևավորները, քանի որ, պտուղ չեն ձևավորում, նրանց Պ.-ման պրոցեսն անվանում են սերմնակալում:

ՊՏՂՄԲԲԵՐՄԱՆ ՊՈՐԲԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, *Периодичность плодоношения; fruitage frequency, fruitage periodicity*

Որոշվում է առատ պտղաբերման տարիների միջև եղած ժամանակաշրջանով: Կախված է ծառատեսակների էկոլոգո-կենսաբանաան առանձնահատկություններից և աճման պայմաններից: Որքան ծառի պտուղը խոշոր է կամ աճման պայմաններն անբավարար, Պ.Պ-յան ժամանակաշրջանը մեծանում է:

ՊՏՂՍԱՏՈՒ ԾԱՌ, *Плоδοное дерево; sweet woods, fruit tree*

Գեղազարդային նպատակներով մշակվող բույս, որը նաև ուսելի պտուղներ է տալիս (ֆեյխա, ծիթենի, խնձորենի, տանձենի, բալենի և այլն):

ՊՏՈՒՂ, *Плод; fruit*

Ծաղկավոր բույսերի բազմացման օրգան, որն առաջանում է սերմնարանից և պարունակում է սերմեր: Պ.-ների բազմազանությունը կախված է սերմնարանի տիպից, սերմերի անջատման եղանակից, պտղակցի կառուցվածքից: Պ. լինում է բազմաընկուզանի (ելակ, մասուր և այլն), չոր միասերմային, չոր ընկուզային (բոխի, կաղնի, հաճարենի, շագանակենի) չոր կորիզավոր (պիստակենի, ցաքի, ընկուզենի), սերմնյակ և թևավոր (կեչի, թեղի, հացենի), հյութալի սերմնյակ (փոշնի, ծիթենի, չիչխամ): Պ.-ների մորֆոլոգիական բազմազանությունը հիմնականում թխում է սերմերի տարածման բնույթից, որով և պայմանավորված է տարբեր տեսակների շարահարկային դասավորվածությունը անտառում: Առաջին շարահարկում գերակշռում են միասերմ չոր թևիկավոր սերմեր ունեցող տեսակները՝ թեղի, հացենի, թխկի և այլն: Երկրորդ շարահարկում և հատկապես ենթանտառում տեղաբաշխվում են հյութալի, գունեղ սերմ ունեցող տեսակները, որոնք ուտվում են թռչունների կողմից: Մերկասերմերին պատկանող տեսակները Պ. չեն կազմավորում, այլ առաջացնում են սերմեր՝ կոնեռի թեփուկների տակ:

ՊՐԱՏՈ, *Прато; Prato*

Միջնադարին քնորոշ հասարակական պարտեզ: Ստեղծվում էր ունևոր քնակիչների գրոսանքի համար, քաղաքի բերդապարիսպներից դուրս:

ՊՈՒՐԱԿ, *Сквер; square*

Քաղաքի կանաչապատման օբյեկտ: Տեղադրվում է հրապարակում, փողոցների խաչմերուկում կամ բնակելի թաղամասի փողոցային հարող հատվածում: Գրավում է 0.15-2.0 հա տարածություն: Ունի կածաններ, փղջրիկ հրապարակներ, սիզամարգեր, ծաղկանոցներ, ծառերի, թփերի առանձին խմբեր: Նախատեսվում է հետիոտների կարճատև հանգստի, ճարտարապետական անսամբլի զեղարվեստական ձևավորման համար:

ՁԱՍ, *Жёлочет; brushwood*

Մինչև 4 սմ հաստությամբ, 2-6 մ երկարությամբ ծառաբներ, ճյուղեր. ստացվում են խնամքի հատումներից և անտառմթբերման ժամանակ: Օգտագործվում է որպես վառելիք, զամբյուղագործության մեջ, գյուղատնտեսական գործիքների կոթեր պատրաստելիս, պարսպապատելիս:

ՋԵՐՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Жаростойкость; heat resistance*

Օդի ցածր հարաբերական խոնավության պայմաններում դրական բարձր ջերմաստիճաններին դիմանալու բույսերի ունակություն: Ջերմակայուն բույսերից են փոշնին, կարմրանները, գիհինները և այլն:

ՋԵՐՄԱՏՈՒՆ, *Оранжерея; greenhouse, stove*

Արհեստական կլիմա ունեցող ապակե տանիքով կառույց: Նախատեսված է կանաչ շիվապատվաստման, մերձարևադարձային և այլ էկզոտ բույսերի հավաքածուների, ինչպես նաև ձմռանը ծաղիկների և բանջարեղենի աճեցման համար:

ՋԵՐՄՈՑ, *Теплица, парник; greenhouse, forcing bed*

Սածիլների, սերմնաբույսերի աճեցման, տնկաշիվերի արմատակալման կամ քաղաճածածկ կառուցվածքով, հանվող շրջանակներով մարզ: Ըստ նշանակության լինում է սառը, կիսասառը և տաք: Ներկայումս կենսավառելիքի՝ գոմադրի քայքայման ընթացքում անջատվող ջերմության փոխարեն լայն կիրառում են ստանում տեխնիկական ջեռուցում ունեցող (գոլորշաօդային, էլեկտրական, արդյունաբերական ձեռնարկությունների բափոն տաք ջրերով և այլն) ջերմոցները:

ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐ, *Парниковые газы; greenhouse gases*

Ջերմոցային գազեր են համարվում ածխաթթու գազը (CO₂), մեթանը (CH₄), ազոտի օքսիդները (N₂O₂), օզոնը (O₃), ջրային գոլորշին և հալոգենային ածխաջրածիները (կազմված հալոգեններից և ածխածնից): Ջերմոցային գազերն իրենց միջով բաց են թողնում արեգակից եկող կարճալիք ճառագայթային էներգիան, սակայն կանոն են երկրի տաքացած մակերևութից եկող ջերմային, երկարալիք ճառագայթները: Դետևարար ջերմոցային գազերի քանակի շատացումը մթնոլորտում նպաստում է երկրի մակերևութի օդի ջերմաստիճանի բարձրացմանը:

ՋԵՐՄՈՑԱՏԵՍԱԳԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Теплично-парниковое хозяйство; greenhouse enterprise*

Կանաչ շինարարությունում օգտագործվող տնկանյութի արտադրության կոմպլեքս: Ընդգրկում է ջերմատներ, ջերմոցներ, օժանդակ հողամասեր

(շծածկված գրուևտ), կտրոնների արմատակալման տեղամասեր, տնկանյութի տեսակավորման բաժին, շրջանակների վերանորոգման արհեստանոցներ, տնտեսական րակ, պահեստ, կաթսայատուն:

ՋԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՄ ԱՆՏԱՒԻ ԱՃԱՆ ԱՐՈՇՈՆ, *Тепло как фактор роста леса; heat as a forest growth factor*

Ջերմությամբ են պայմանավորված բույսի կենսական պրոցեսները՝ տրանսպիրացիան, նյութափոխականությունը, շնչառությունը, ասիմիլացիան, աճը, բազմացումը, և այլն, որոնց նորմալ ընթացքի համար պահանջվում են ջերմային որոշակի քարենպաստ, առավելագույն և նվազագույն պայմաններ: Ջերմային բացարձակ ցուցանիշները յուրաքանչյուր տեսակի կամ նրա առանձին օրգանների կենսագործունեության համար տարվա տարբեր ժամանակաշրջաններում տարբեր են: Անտառում կարևոր նշանակություն ունի ոչ միայն օդի, այլև հողի ջերմաստիճանը, որով պայմանավորված է արմատների կենսագործունեությունը: Ջերմության նկատմամբ իրենց պահանջով ծառատեսակները բաժանվում են ջերմասեր, ցրտադիմացկուն և ծնեռնադիմացկուն տեսակների:

ՋՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, *Жилкование; pervation*

Տերևի ջղերի ցանցը, որոնց միջև գտնվում է փափուկ զանգվածը: Չանդիսանում է փոխադրող օրգան, տերևներին մատակարարում է ջուր, հանքային նյութեր և արմատային մետաբոլիտներ, իսկ տերևներից փոխադրում է սինթեզված օրգանական նյութերը: Ջղերի դասավորությունը տարբեր տեսակների մոտ տարբեր է և հանդիսանում է կարգաբանական հատկանիշ: Ըստ դասավորության լինում է զուգահեռ (դաշտավունկազգիներ), կորաշեղավոր (հովտաշուշան), ճյուղավորված (կաղնի, կեչի), մատնանման (թխկի):

ՋՐԱՄԲԱՐ, *Водоєм; reservoir, basin*

Լանդշաֆտի կամ կանաչապատման օբյեկտի քնական կամ արհեստական տարր (լիճ, արհեստական լճակ, գետակ), որը զբոսայգու կոմպոզիցիայում ուժեղացնում է նրա գեղազիտական ազդեցությունը: Ջրամբարները ստորաբաժանվում են ջրավազանների և արհեստական լճակների:

ՋՐԱՊԱԳՊԱՆ ԱՆՏԱՈՆԵՐ, *Водоохраные леса; water protection forests*

Անտառներ, որոնք նպաստում են աղբյուրների ջրի հավասարաչափ ելքին, առավել չոր ժամանակաշրջանում ավելացնում կամ պահպանում գետերի ջրի քանակը: Ջրապահպան անտառների դրական ազդեցությունը պայմանավորված է ծառուտի հասակով, լրիվությամբ, տեղանքի ֆիզիկաաշխարհագրական, տոպոգրաֆիական և այլ գործոններով:

ՋՐԱԴԱՐՊԱՆ ԳՈՏԻ, *Зона водоохранная; water protection zone*

Ընդգրկում է հիմնականում գետերի ավազաններում գտնվող անտառները: Ունի ջրակարգավորիչ նշանակություն: Ջրապահպան գոտիներում առանձնացվում են արգելված գոտիներ որոնցում չի թույլատրվում կիրառել անտառօգտագործման գլխավոր հատումներ: Արգելված գոտիներից դուրս, որը կոչվում է ջրապահպան գոտու շահագործման մաս, թույլատրվում է կիրառել հատումներ, որոնց ծավալը չպետք է գերազանցի տարեկան միջին ամից: Հայաստանի ջրապահպան գոտու անտառներում թույլատրվում է կիրառել խնամքի և սանիտարական հատումներ:

ՋՐԱՎԱԶԱՆ, *Бассейн; water basin*

Կանաչապատման օրյեկտի վայելչատես մասի գեղազարդային ձևավորման կամ երեխաների լողալու համար նախատեսված արհեստական ջրամբար:

ՋՐՈՒՄ, *Полив; watering*

Չորային շրջանում բույսերի մշակման համար կամ գեղազարդային բույսերի տեղափոխումից անմիջապես հետո հողի անհրաժեշտ խոնավության պակասը լրացնելուն նպատակաուղղված ագրոտեխնիկական միջոցառում: Ջրման համար կիրառվում են ինքնահոս ջրանցքներ, խողովակների վերգետնյա և ստորգետնյա ցանց:



ՈԱԲԱՏԿԱ, *Рабатка; ridge, border bed*
Տե՛ս Ծաղկամարգ:

ՈԱՂԱՐ, *Радар; Radar*

Ոաղարը սովորական տեխնիկա է, որն օգտագործվում է ծովում, օդում, մթության մեջ և մառախուղի ժամանակ առկա վտանգները որսելու համար: Այն օգտագործվում է նաև հեռահար ուսումնասիրություններում: Ամենաշատ հանդիպող աղարի տիպը կողային դիտման ինքնաթիռային աղարն է (*SLAR-Side-Ways Looking Airborne Radar*), որ «տեսնում» է իրեն ընթացքի ուղիղ ներքևը և կողքերը: *SLAR* համակարգի աշխատանքին չեն խանգարում ոչ ամպամածությունը և ոչ էլ խիտ բուսածածկը:

ՈԱՂԱՐՍԱՏ, *РАДАРСАТ; RADARSAT*

Ոաղարսատ-1-ը Կանադայի հեռահար ուսումնասիրությունների առաջին արբանյակն էր, որ տիեզերք արձակվեց 1992 թվականին Կանադայի տիեզերական գործակալության կողմից՝ ԱՄՆ ՆԱՍԱ-յի հետ համագործակցությամբ: Այս սերնդի աղարային արբանյակները, ունենալով դիտման 45-510 կմ լայնություն ապահովում են 8-100 մ թույլատրելիության նկարների ստացում: Այս արբանյակներից ստացված աղարային նկարներն ունեն ամենալայն կիրառություն, օր. հատատեղերի ֆիքսում, մոնիթորինգ և այլն:

ՈԱՈՒՄԵՏՐ, *Рајметр; raumeter*
Փայտի խորանարդ մետր:

ՌԵԳԵՆԵՐԱՑԻԱ (ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ), *Регенерация; regeneration*

Բույսի վնասվածքի առողջացումը (ծածկումը) հատուկ հյուսվածքով՝ կալյուսով, կամ կորցրած օրգանի (օր.՝ արմատի ծայրը) վերականգնումը:

ՌԵԴՈՒԿՑԻՈՆ ԹԻՎ, *Редукционное число; reduction number*

Մեծություն, որն ստացվում է՝ ծառի որևէ ցուցանիշի բացարձակ մեծությունը բաժանելով ծառերի համար այդ ցուցանիշի միջին արտահայտության վրա: Օգտագործվում է բացահայտելու որևէ գործոնի ազդեցությունը ծառուտի կազմավորման և աճման օրինաչափությունների վրա:

ՌԵԶԵՐՎԱՅԻՆ ԱՆՏԱՌԱՆԵՐ, *Резервные леса; reserve forests*

Տրանսպորտային ճանապարհներից կտրված, չիրացված անտառներ, որոնց արդյունաբերական օգտագործումն առաջիկա 15 և ավելի տարիներին չի նախատեսվում: Դասվում են 3-րդ կարգի անտառների շարքը:

ՌԵԶԵՐՎԱՅԻՆ (ՓԱՌՈՍԱՅԻՆ) ԾԱՌ, *Резервное дерево (мал); reserve tree*

Ծառեր, որոնք հատումների ժամանակ թողնվում են անտառում՝ լիարուն դասնալու և հետագայում հատելու համար կամ որպես սերմնային, մինչև հատման հաջորդ փուլը՝ հատատեղի սերմնային վերականգնումն ապահովելու նպատակով:

ՌԵԶԵՐՎԱՍ, *Резерват; reservat*

Պահպանվող բնական տարածք, որի ռեժիմը մոտ է արգելավայրին և որտեղ պահպանության գլխավոր օբյեկտը հանդիսանում է բնական կոմպլեքսի տարրերից մեկը (օր.՝ բույսերի և կենդանիների հազվագյուտ տեսակ, հազվագյուտ ցենոզներ):

ՌԵԼԱՍԿՈՊ, *Реласкоп; reliascope*

Սարք, որով որոշում են ծառերի ընդլայնական կտրվածքի մակերեսների գումարը, ծառերի բարձրությունը, բնի տեսակային թիվը, տեղանքի թեքությունը:

ՌԵԼԻԿՏԱՅԻՆ (ՄԱՍՑՈՐԴԱՅԻՆ) ԱՐԵԱԼ, *Ареал реликтовых; relict areal*

Երկրաբանական հնագույն ժամանակներում այս կամ այն բույսի տարածման արեալն է, որը ներկայումս գոյություն չունի: Օրինակ՝ երկրթականի գինկգոն հնում հսկայական տարածքներ է զբաղեցրել Եվրասիայի բարեխառն գոտու ներկա տարածքներում, սակայն այժմ հանդիպում է միայն մշակութային մեջ: Գլխատոստրոբային մետասեքվոյայի նախկին արեալը կրճատվել, հասել է ընդամենը մի քանի քառակուսի կմ-ի:

ՌԵԼԻԿՏՆԵՐ, *Реликты; relicts*

Բույսերի տեսակներ են և այլ տաքսոններ, որոնք պահպանվել են նախկինում լայնորեն տարածված և ներկայումս անհետացած ֆլորայից: Դրանք պալեոենդեմիկներ են: Տարբերում են ըստ երկրաբանական որոշակի ժամանակաշրջանների (երրորդականներ, պլեյստոցենյաններ, հետպլեյստոցենյաններ և այլն):

ՌԵԿՐԵԱՑԻԱ, *Рекреация; recreation*

Ուժերի վերականգնում արձակուրդի, հանգստյան ու տոնական օրերի, դպրոցական արձակուրդների, դասամիջոցների, ընդմիջման ժամանակ:

ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԱՆՏԱՌՆԵՐ՝ *Рекреационные леса; recreational forests*

Այս խումբը ներառում է քաղաքամերձ անտառները, անտառապուրակները, կամայ գոտիները, առողջարանային անտառների մեջ մտնող հանգստի գոտիները: Ռեկրեացիոն ֆունկցիա կարող են կատարել նաև 50-100մ լայնությամբ պաշտպանական անտառաշերտերը, զբոսաշրջիկային բազաներին հարող 50-250մ անտառային գոտին: Ռեկրեացիոն անտառները բաժանվում են ինտենսիվ և չափավոր հաճախման գոտիների:

ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՁՈՆԱ, *Рекреационная зона; recreational zone*

Մարդկանց ուժը և առողջությունը վերականգնող հանգստի համար առանձնացվող տարածք քաղաքում և քաղաքամերձ վայրերում: Քաղաքում սեզոնացիոն գոնա են հանդիսանում պարտեզները, զբոսայգիները, մերձքաղաքային վայրերում՝ անտառապուրակները, հանգստի գոտիները:

ՌԵՍՈՒՐՍ, *РЕСУРС; RESURS*

Ռեսուրս Երկրի քննադատության արքանյակը տիեզերք բարձրացավ 1988 թվականին Նախկին ԽՍՀՄ-ում: Գետազայում և ներկայումս այս սերնդի արքանակների արձակումը և տնօրինումը իրականացնում է Ռուսաստանի դաշնությունը: Այս սերնդի արքանյակները ունենալով 60X60, 120X120, 110X160 կմ ընդգրկում՝ ապահովում են նկարների ստացումը բազմասպեկտրալ (10-12 մ թույլատրելիություն), տեսանելի (20մ թույլատրելիություն), ինֆրակարմիր (30 մ թույլատրելիություն) և պանխրոմատիկ (5-8 մ թույլատրելիություն) նկարների ստացումը: Սա Նախկին ԽՍՀՄ-ի համար քնական ռեսուրսների, այդ թվում և բուսածածկի մասին օբյեկտիվ տեղեկատվության ստացման փակ աղբյուրն էր:

ՌԻՉՈՍՖԵՐԱ (ԱՐՄԱՍԱՄԵՐՉ ԳՈՂԱՇԵՐՏ), *Puzocфера; rhizosphere*

Արմատին կից (2-3մմ) հողաշերտ, որը բնորոշվում է միկրոօրգանիզմների մեծ պարունակությամբ, որոնք սնվում և զարգանում են արմատների արտադրած նյութերով: Որոշ միկրոօրգանիզմներ (միկոռիզա, պալարաբակտերիաներ և այլն) արմատների հետ առաջացնում են սիմբիոզ: Ռիզոսֆերայի ակտիվությունը պայմանավորված է հողի տիպով և էկոլոգիական գործոններով:

ՌԻԹՄ, *Pumm; rhythm*

Վեգետացիայի ընթացքում ընձուղի աճի բնույթը (մեկ կամ մի քանի աճ, դանդաղ կամ արագ աճ, արմատների և ընձուղների աճի հերթազայում): Ռիթմը նրա ծագման վայրի ցուցանիշներից մեկն է:

ՌՈԿԱՐԴՈՒՄ, *Рокарий; rock garden*

Տե՛ս Քարապարտեզ:

Ս

ՍԱԾԻՆՈՒՄ ԵՆԱՆ ՓՈՒԼՈՒՄ, *Пикировка в стадии прорастания; singling in regrowth stage*

Ցանված բույսերի սածիլումը՝ շաքիլային տերևների երևան գալուց հետո:

ՍԱՂԱՐԹԱԶՄՆԳՎԱԾ, *Массы кроны; crown mass, canopy mass*

Սաղարթի ամրոցություն: Եյուղավորման համակարգի բնույթով որոշվող հատկանիշ: Տարբերվում են ծայրամասային խոշոր, քիչ եյուղեբով ցանցկեն՝ դիտվող (ընկուզենի մոխրագույն, թեղի գետնահար, սոճի սովորական), խիտ, զանգվածեղ՝ դիտվող (լորենի, եղևնի արծաթափայլ, սպիտակ ակացիա) և ծայրամասային բազմաթիվ եյուղեբով՝ զնդածև սաղարթներ:

ՍԱՂԱՐԹԱԹՎԱՆՑՈՒԹՅՈՒՆ, *Сквозистость кроны; canopy penetration*

Սաղարթի ցանցկեն լինելը: Որոշվում է սաղարթի եյուղերի ու տերևների դասավորության խտությամբ:

ՍԱՂԱՐԹԱՅԻՆ ԴՐԴԵՅ, *Верховой пожар; canopy fire*

Դրդեհ, որի ժամանակ այրվում է անտառի վերին մասը՝ սաղարթը: Ծագում է ուժեղ քամիների ժամանակ գետնատարած հրդեհներից: Տարածման արագությունը հաճախ հասնում է 15-20 կմ/ժամ:

ՍԱՂԱՐԹՎՈՐ ԱՆՏԱՌՆԵՐ, *Лиственные леса; deciduous forests*

Լայնատերև կամ մանրատերև ծառատեսակներից կազմավորված անտառներ: Այս խմբի մեջ մտնում են արևադարձային խոնավ անձրևային, բարեխառն գոտու սեզոնային մշտադալար և սեզոնային տերևաթափ անտառները, մերձարևադարձային գոտու կարծրատերևավոր և ձմեռնականաչ (սավաննային) անտառները: Սաղարթավոր անտառների տեսակային կազմը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով:

ՍԱՂԱՐԹՎՈՐ ԵՄՈՎՏԵՍԱԿՆԵՐ, *Лиственные древесные породы; broad-leaf tree species*

Ծառեր և թփեր՝ հիմնականում կոթունավոր տերևաթիթեղով, պարզ արտահայտված ջղավորությամբ: Պատկանում են ծաղկավոր, մեծ մասամբ երկշաքիլավոր բույսերի դասին: Աճում են բոլոր աշխարհամասերում, բացի Ամտարկտիդայից: Գրում հիմնականում տարածված են կեչազգիների, թեղազգիների, հաճարազգիների, վարդազգիների ներկայացուցիչները:

**ՍՐԱՐԱԹԻ ԴՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, *Горизонтальная сомкнутость крон;*
*horizontal crown closure***

Երբ ծառերի պսակները, որոշակի բարձրության վրա մտնենալով իրար, առաջացնում են միակցվածություն: Միակցվածության աստիճանը որոշում են 10 բալային համակարգով, որը ցույց է տալիս, թե սաղարթի միջով որքան ուղիղ ճառագայթներ են թափանցում (հողի մակերեսի որ տոկոսն է լուսավորվում արեզակնային ուղիղ ճառագայթներով):

ՍԱՐԱԹԻ ԴՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՄԻՎԿՑՈՒԹՅՈՒՆ

Сомкнутость полого горизонтальная; horizontal canopy density

Երբ ծառերի վերին ճյուղերը միակցվում են՝ առաջացնելով հորիզոնական մեկ սաղարթ: Ծառուտի գնահատման ցուցանիշ է:

ՍԱՐԱԹԻ ՉԵՎ, *Форма кроны; crown form, canopy form*

Լինում է բրգածև, կոնածև, զնդածև, հավաքված, փռված, թափվող, լացող և այլն: Դանդիսանում է տեսակի մորֆոլոգիական հատկանիշ, լիովին դրսևորվում է ազատ աճող ծառերի մոտ: Անտառում բազմաթիվ ծառերի փոխազդեցության հետևանքով ծառերի սարդարթը լինում է վեր ձգված, փոքր:

ՍԱՐԱԹԻ ՄԻՎԿՑՈՒԹՅՈՒՆ, *Сомкнутость полого; canopy density*

Երբ ծառերի սաղարթերը միակցվում են՝ ստեղծելով մի ընդհանուր շարահարկ: Ս.Մ. ցույց է տալիս ծառերի սաղարթի մակերեսի զումարի (առանց նրանց չփման մակերեսի) և ծառուտի ընդհանուր մակերեսի հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով կամ մեկ միավորի տասնորդական մասերով (0.1-1.0): Ս.Մ.-յան աստիճանը պայմանավորված է ծառատեսակով, նրա կենսաբանական առանձնահատկություններով, ծառուտի հասակով, աճման պայմաններով և այլ գործոններով: Ատվերատար ծառատեսակները (հաճարենի, լորենի) առաջացնում են սաղարթի ավելի խիտ միակցություն, քան լուսասեր տեսակները (կեչի, սոճի, կաղնի): Միավոր տարածքում ծառուտի խտության մեծացմանը զուգընթաց Ս.Մ. կարող է մեծանալ մինչև որոշակի սահման (1.0): Դավասար պայմաններում ասեղնատերևավոր տեսակները սաղարթի մեծ միակցություն կարող են ապահովել 20-80, իսկ տերևավոր տեսակները՝ 20-50 տարեկան հասակում, որից հետո, տարիքի մեծացմանը զուգընթաց, Ս. Մ. աստիճանաբար նվազում է: Այն անտառի գնահատման ցուցանիշ է, որն օգտագործվում է ծառուտի լրիվությունը որոշելիս, խնամքի հատումները և ծառուտի սերմնային վերականգնման միջոցառումները նախատեսելիս:

ՍԱՐԱԹԻ ՈՒՂՂԱՆԱՅԱՑ ՄԻՎԿՑՈՒԹՅՈՒՆ, *Сомкнутость полого вертикальная; canopy vertical closure*

Երբ ծառերի սաղարթերը միակցվում են ամբողջությամբ՝ ուղղահայաց կտրվածքում առաջացնելով մեկ մակերես: Ծառուտի գնահատման ցուցանիշ է:

ՕՐՈՐՈՐԹԻ ՖԱԿՏՈՐԻԱ, Фактура кроны; crown pattern

Օռառի, բախի մակերեսի կառուցվածքի կազմությունը, յուրահատկությունը: Կախված է տերևների մեծությունից և ճյուղերի վրա դրանց տեղադիրքից: Լինում են սաղարթի մանր ֆակտուրայով (տոսախ, ծյունաշարուկ) և խոշոր ֆակտուրայով (կատալպա, ընկուզենի մոխրագույն, աղտոր բուրավետ) թույսեր:

ՍԱՆԴՂԱՋՐՎԵԾ, Каскад; cascade

Սանդղակուլերով գահավիժող բնական կամ արհեստական ջրվեժ: Արհեստական սանդղաջրվեժը իրենից ներկայացնում է գահավիժող ջրհոսքի ճանապարհին քարից կամ քետոնից պատրաստված բազմաստիճան կառուցվածք:

ՍԱՆԴՂԱՓՈՒԼ, Терраса; terrace

Հովիտների լանջերի, լճերի և ծովերի ափերի աստիճանաձև ուղիք: Կանաչ շինարարությունում՝ ուղիքի թեքության վրա սանդղափուլ առաջացնող բնական կամ արհեստական ստեղծված հորիզոնական կամ փոքր թեքությամբ հարթակ: Բնորոշ էր հնագույն պարտեզներին, Վերածննդի և Բարոկկոյի ժամանակաշրջանի գրասայրիներին, որոնք ստեղծվում էին ծորակների լանջերին, լեռնային պայմաններում:

ՍԱՆԻՏԱՐԱՎԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, Санитарные рубку; sanitary cutting

Առողջ բնափայտ աճեցնելու նպատակով անտառից հիվանդ, վնասատուներով վարակված ծառերի հեռացումը: Ս.Հ. միաժամանակ նպատակում են անտառածման պայմանների կարգավորմանը, տնտեսությանը լրացուցիչ քանփայտով ապահովմանը: Ընտրովի Ս.Հ. կատարվում են հասակային բոլոր դասերում, ընդ որում հեռացվում են հիվանդ, վարակված, քամետապալ, ծնաքարոջ և ցցաչոր ծառերը: Համատարած Ս.Հ. կիրառում են ոչ լրիվ հատած հատատեղերում, հողմատապալ ծառուտներում, հրդեհված և մասսայական վարակված անտառամասերում, որտեղ ընտրովի հատումները չեն կարող լինել արդյունավետ:

ՍԱՆԻՏԱՐԱՎԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ, Санитарный минимум; sanitary minimum

Անտառտնտեսական և անտառաշահագործման ընթացքում պարտադիր կիրառվող միջոցառումներ (հատատեղի մաքրումը թափոններից, փայտանյութի շտապ դուրսբերումը, անտառում թողնվող փայտանյութի կեղևահանումը, հատման ժամանակ վնասված ծառերի հեռացումը և այլն), որոնց նպատակն է պահպանել անտառը և անտառանյութը վնասատու միջատներից և սնկային հիվանդություններից:

ՍԱՆԻՏԱՐԱՎՊՈՇՏՊԱՆԱՎԱՆ ՁՈՆԱ, Санитарно-защитная зона; sanitary-protective zone

Հատուկ տարածք, որը արդյունաբերական ձեռնարկությունը բաժանում է բնակելի շրջանից: Ընդգրկում է պաշտպանական տնկարկների հատուկ համակարգ՝ զու-

գորդված բաց հողամասերով, տնկարաններով, տնտեսական շինություններով: Եախատեսված է արդյունաբերության անբարենպաստ ազդեցությունից (զազերի, փոշու, ծխի, գոլորշու և այլնի արտազատումներից) քնակելի թաղամասերը պաշտպանելու համար: Տե՛ս նաև Պաշտպանական տնկարկներ:

ԱՆՎԱՆԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Саванновые леса; savanna*

Արևադարձային գոտում սեզոնային բնույթի ցածրոֆիտ անտառներ, որոնք աճում են բարձր ջերմաստիճանի և կարճ ժամանակաընթացքում քիչ տեղումների պայմաններում: Ա.Ա.-ում ծառերը նոսր են, բները ծուռումուռ, հաճախ փշոտ, սաղարթը՝ թափանցիկ, ամռան չոր ամիսներին տերևաթափ, որի պատճառով հաճախ անվանվում են ձմեռնականաչ անտառներ:

ԱԵԼԵԿՑԻԱ, *Селекция; selection*

Գեղազարդային բույսերի նոր տրտերի ստեղծման և ընտրության միջոցով գոյություն ունեցող հին տրտերի բարելավման տեսություն և պրակտիկա: Ներկայացնում է փոփոխականության և ժառանգականության պրոցեսների ուսումնասիրման հիման վրա կատարված սկզբնական նյութի ընտրության և գեղազարդային բույսերի նոր ձևերի ու տրտերի ստացում:

ԱԵԼՎԱ, *Сельва; Selva*

Ամազոն գետի ավազանի, պարբերաբար ջրածածկվող, խոնավ արևադարձային անտառների բրազիլական անվանումը:

ԱԵՂԱՆԱՅՁԻ, *Бонсай; bonsai*

Գաճաճ ծառեր ու թփեր աճեցնելու և այդ բույսերը շենքում տեղադրելու ճապոնական արվեստ:

ԱԵՆԵԿԱՇԱՐՔ, *Анфилада; enfilade*

Պարտեզպուրակային արվեստում տնկարկներով շրջափակված տարածություններ, որոնք իրար միացած են մեկ առանցքի վրա տեղադրված անցումներով:

ԱԵՆՅԱԿԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ, *Комнатные растения; indoor plants*

Շենքի ներսի միկրոկլիմայական պայմաններում աճելուն ու զարգանալուն հարմարված բույսեր: Օգտագործվում են շենքերի ներսի կանաչապատման համար:

ԱԵՐՄ, *Семя; seed*

Սերկասերմ և ծածկասերմ ծաղկող բույսերի օրգան, որը ձևավորվում է սերմնաբողբոջից (սերմնասաղմից): Հիմնականում առաջանում է բեղմնավորման ճանապարհով, երբեմն առանց բեղմնավորման (ապամիկսի հետևանքով):

ՍԵՐՄԱՆՈՒՄ, *Обсеменение; sowing*

Սերմերի տարածումը տարածքում: Վերարտադրության նորմալ ապահովման համար անհրաժեշտ է հողի հավասարաչափ և ժամանակին Ս.: Վերիջինս պայմանավորված է ծառերի պտղաբերման առանձնահատկություններով և սերմերի տարածման քնույթով: Հատատեղում Ս. ապահովելու նպատակով առանձին ծառեր կամ փոքր խմբեր թողնում են կանգուն (տե՛ս Փարոսային ծառեր):

ՍԵՐՄԱՍՏՈՒ ԾԱՆԵՐ, *Семенники; seed trees, mother tree*

Համատարած հատումների ժամանակ հատատեղերի սերմնային վերականգնումն ապահովելու նպատակով թողնված ծառեր: Ս.Ծ. պետք է լինեն առողջ, լիաբուն, լավ զարգացած սաղարթով, առատ պտղաբերող: Հատատեղերում Ս.Ծ.-ի քանակը և բաշխվածությունը պայմանավորված են տվյալ տեսակի սերմերի մեծությամբ, նրանց տարածման քնույթով, հատատեղի չափով ու ձևով, իսկ լեռնային պայմաններում՝ նաև ռելիեֆով: Խաչածև փոշոտվող և քամետարալման ենթակա տեսակների Ս.Ծ. թողնվում են սերմերի մասսայական տարածման հեռավորությամբ, սպասվող բերքի (սերմնատվության) քանակով, սերմերի ծլման և սերմանքուսակների աճման պայմաններով: Աճման միջին քարենպաստ միջավայրում 1 հա-ում թողնվում է տճու 20-30 ծառ, եղևնու՝ 10-20, կեչու՝ 5-10, հաճարենու՝ 40-50 և այլն:

ՍԵՐՄԵՐԻ ԱՃԻ ՈՒՇ, *Сила роста семян; seed growing energy*

Բնորոշում է այն ուժը, որով ծիլերը, հաղթահարելով հողի դիմադրությունը, դուրս են գալիս մակերես:

ՍԵՐՄԵՐԻ ԱՆՋԱՍՏՈՒՄ ԹԵՎԻԿՆԵՐԻՑ, *Обескрыливание семян; seeds dewinging*

Ծառերի, քիերի (սոճի, եղևնի, հացենի, լորենի և այլն) սերմերի ու պտուղների արհեստական անջատումը թևանման հավելվածներից: Նպաստում է պահվող սերմերի քաշի և ծավալի նվազեցմանը, ապահովում սերմնացան մեքենաների անխափան աշխատանքը, ցանքսի նորմայի ճիշտ պահպանումը և այլն:

ՍԵՐՄԵՐԻ ԱՎԱԶԵՑՈՒՄ, *Пескование семян; seeds sandsing*

Ծառափայլին թույլսերի սերմերի ծլումը արագացնելու նպատակով դրանց երկարատև պահումը 0-+5⁰ ջերմաստիճանի խոնավ ավազում:

ՍԵՐՄԵՐԻ ԲԱՏԱՐԶԱԿ ԿԵՒՈ, *Абсолютный вес семян; seeds absolute weight*

Յուրաքանչյուր թույսի 1000 սերմի քաշը՝ օդաչոր վիճակում:

ՍԵՐՄԵՐԻ ԲԱՅԱՐԶԱԿ ԾՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Абсолютная всхожесть семян; absolute germinating of seeds*

Որոշակի քանակի սերմերից սահմանված ժամանակամիջոցում ծլած սերմերի քանակը՝ արտահայտված տոկոսներով:

ՕՔՐՄԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՍԵՐՄԱՏՎՈՒԹՅՈՒՆ), *Урожайность семян; seed yield*

Սեկ միավոր տարածքից ստացվող անտառային տեսակների սերմերի քանակը՝ կգ/հա: Անտառային սերմնաբուծության մեջ ընդունված են Ա. Բ.-յան տարբեր ցուցանիշները. *պոտենցիալ բերքատվություն*, երբ ծառը դրսևորելով վերարտադրման իր ժառանգական հատկությունները, տալիս է առավելագույն բերք, *հնարավոր կամ սպասվելիք բերք*՝ տվյալ անտառամասից սպասվելիք սերմերի քանակը, որը լինում է պոտենցիալ բերքատվությունից ցածր, *փաստացի բերքատվություն*՝ հավաքված և հաշվարկված սերմերի փաստացի քանակը: Ա.Բ.-յան հաշվարկը կատարում են՝ ելնելով երկարատև կամ կարճատև դիտումներից: Սերմնային հողամասերում բերքատվության բարձրացման նպատակով կատարում են հողի փխրեցում, պարարտացում և այլն:

ՍԵՐՄԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՇՎԱՌՄԱՆ ՍՏԱՏԻԿ ԵՂԱՆԱԿ, *Статистический метод учета урожайности семян; statistic method of seed yield record*

Օգտագործում են ծառերի բերքատվության բազմամյա աչքաչափով հաշվաման հետ միասին, որը նպաստում է հաշվարկի ճշտության աստիճանի բարձրացմանը:

ՍԵՐՄԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԾՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Грунтовая всхожесть семян; seeds ground germination*

Ցույց է տալիս հողում ցանված և ծլած սերմերի քանակական հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով:

ՍԵՐՄԵՐԻ ԼԱՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ, *Доброкачественность семян; seeds quality*

Սերմերի որակական ցուցանիշ: Որոշվում է սերմերի տեսքով, տեսակի ընդունող գույնով, առողջ սերմերի քանակով: Միջին նմուշից վերցվում է 100 սերմ, թրջվում 18-20° ջրում, մինչև ուռչելը կտրվում շաքիլների երկայնքով՝ բացելով սաղմը: Կան նաև սերմի լավորակության որոշման ռենտգենային և այլ եղանակներ:

ՍԵՐՄԵՐԻ ԼԻՔՈՒԹՅՈՒՆ (ՏՈՒՈՒՁՈՒԹՅՈՒՆ), *Полнозернистость семян; seed full stippling (granularity)*

Սերմերի ցանքային ցուցանիշ: Ցույց է տալիս ընդհանուր քաշում լիարժեք սերմերի քանակը՝ արտահայտված տոկոսներով, ինչը որոշվում է շոշափելով, կտրելով և այլ եղանակներով:

ՍԵՐՄԵՐԻ ԾԱԾԿՈՒՄ, *Заделка семян; seed closing up (embedding)*

Ցանքսի ժամանակ, նայած սերմերի խոշորությանը և ցանքսի տեխնոլոգիային, սերմը ծածկում են հողով, ավազով, տորֆով, քուսահողով, ինչպես ձեռքով, այնպես էլ մեքենաների և գործիքների միջոցով:

ՍԵՐՍԵՐԻ ԾԱՎԱԼԱՅԻՆ ԿԵՐՈՒ, *Объемный вес семян; seed volume weight*

Սեկ լիտր սերմերի քաշը՝ արտահայտված գրամներով:

ՍԵՐՍԵՐԻ ԾԼԱՍՆ ԷՆԵՐԳԻԱ, *Энергия прорастания семян; energy of seed germination*

Որոշակի ժամանակաընթացքում ծլած և ցանված ընդհանուր սերմերի քանական հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով:

ՍԵՐՍԵՐԻ ԾԼԱՍՆ ԽՁՆԱՆՈՒՄ, *Стимуляция прорастания семян; seed germination stimulation*

Ջերմային, խոնավության, օդափոխանակության, լուսային բարենպաստ պայմանների ստեղծմամբ սերմերի արագ ծլման նպաստումը: Որոշ տեսակների սերմերի համար ընդունված է նաև քիմիական (թթուներով), մեխանիկական (կեղևի ջարդման), եռման ջրով խաշման եղանակներով սերմերի մշակումը:

ՍԵՐՍԵՐԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Всхожесть семян; seed germination capacity*

Ընդունված է տարբերել սերմերի քացարծակ ծլունակություն (ցույց է տալիս գործնական աշխատանքներում ծլած սերմերի քանակը, անկախ ժամանակաընթացքից՝ արտահայտված տոկոսներով) և տեխնիկական ծլունակություն (սահմանված ժամանակաընթացքում առանց ընտրության ցանած սերմերից ստացված ծիլերի քանակը՝ արտահայտված տոկոսներով):

ՍԵՐՍԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, *Жизнеспособность семян; seed vitality (grow power)*

Սերմերի ծլունակության պահպանման ունակություն: Սերմերի ցանքային հատկանիշներից մեկը: Որոշվում է հետազոտման համար վերցված առողջ սերմերի քանակից (%-ներով): Սերմերը ծլունակությունը կարող են պահպանել մի քանի օրից (ուռենի, բարդի) մինչև մեկ տարի (թեղազգիներ, կաղնի, հաճարենի, շագանակենի, ընկուզենի) և ավելի (լորենի, սիզամարգային շատ խոտաբույսերի սերմեր):

ՍԵՐՍԵՐԻ ՀԱՆԳՍՏԻ ՇՐՋԱՆ, *Период покоя семян; seed resting period*

Թերմոստատում տեղադրված օրից սերմերի նրանց ծլելու ժամանակաշրջանը:

ՍԵՐՍԵՐԻ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Спелость семян; seed maturity*

Գյուղատնտեսության մեջ տարբերում են հատունացման հետևյալ փուլերը՝ կաթնային, մոմային և լրիվ: Անտառային տեսակների Ա.Գ. անբավարար է ուսումնասիրված: Սովորաբար օգտագործում են լրիվ հատունացում հասկացությունը, որը համընկնում է տեխնիկական կամ տնտեսական հատունացման հետ, երբ սերմերը հավաքում են:

ՍԵՐՄԵՐԻ ՍԱՔՐՈՒԻՅՅՈՒՄ, Чистота семян; seed cleanness, purity

Դետազոտվող տեսակի մաքուր սերմերի քաշ՝ արտահայտված հավաքված ողջ սերմերի քաշով՝ արտահայտված տոկոսներով: Սերմերի ցանքային որակի ցուցանիշներից մեկը:

ՍԵՐՄԵՐԻ ՉՈՐԱՑՈՒՄ, Сушка семян; seed drying

Սերմերի ծլունակությունը պահպանող միջոցառումներից մեկը: Կատարվում է հատուկ չորացնող պահարաններում, կայուն բարձր (20-35°) կամ փոփոխվող ջերմաստիճանում՝ մշտական օդափոխության պայմաններում: Գործնականում Ս.Չ. կատարում են լավ օդափոխվող սենյակներում կամ չոր եղանակին՝ բաց երկնքի տակ: Չորացման ժամանակ սերմերը փոում են մանրը 3-5 սմ, խոշոր սերմերը՝ 5-10 սմ շերտով և օրվա ընթացքում մի քանի անգամ խառնում:

ՍԵՐՄԵՐԻ ՊԱԳՊԱՆՈՒՄ, Хранение семян; seed storage

Օդափոխիչ չոր սենյակներում անգամ լրիվ հասուն չոր սերմերը բաց պահելիս կորցնում են իրենց ծլունակությունը: Սերմերի ծլունակությունը պահպանելու նպատակով նրանց վրա լցնում են մոխիր, չոր ավազ կամ թեփ, որոնք արգելակելով թարմ օդի շփումը սերմերի հետ՝ կանխում են նրանցում կենսական պրոցեսները, սերմերն ընկնում են հարաբերական հանգստի մեջ: Ասեղնատերևավոր տեսակների սերմերի ծլունակությունը լավ պահպանվում է հերմետիկ փակվող ապակյա կամ մետաղյա անոթներում: Սերմերի պահեստը պետք է լինի չոր, լավ օդափոխվող, ջերմաստիճանը՝ 0-5°: Ս.Պ.-ման տևողությունը կախված է նրանց ծլունակության պահպանման տևողությունից, որը պայմանավորված է ժառանգական հատկանիշներով և արտաքին գործոններով: Բարդու և ուռենու սերմերը ծլունակությունը պահպանում են մի քանի օր, կաղնու, հաճարենու սերմերը՝ մեկ ձմեռ, հացենու, լերունու, լաստենու, կեչու՝ 2-3 տարի, ասեղնատերևավորների սերմերը՝ 5-6 տարի:

ՍԵՐՄԵՐԻ ՍՏՐԱՏԻՖԻԿԱՑԻԱ, Стратификация семян; seed stratification

Որոշ ծառատեսակների սերմերի ծլումն արագացնելու նախացանքային մշակման եղանակ (բառացի մշանակում է շերտավորում): Ջերմային, խոնավության, օդափոխության նորմալ պայմաններ ստեղծելով՝ նպաստում են սերմնաթաղանթի փափկելուն, սաղմի ուռչելուն, կորիզում ֆիզիոլոգիական պրոցեսների նորմալ ընթացքին: Ս.Ս. կատարում են հատուկ խրամատներում, ստրատիֆիկացիոն հորերում, արկղերի մեջ: Ստրատիֆիկացիայի համար նախապատրաստված սերմերը խառնում են մաքուր լվացված գետի ավազի կամ տորֆի հետ (1 մաս սերմ, 3 մասավազ կմ տորֆ): Ստրատիֆիկացիայի ժամկետը տարբեր սերմերի համար տարբեր է:

ՍԵՐՄԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ, Сортирование семян; seed sorting

Սերմերի բաժանում (առանձնացում) ըստ չափի, ձևի, ծավալի և այլ հատկանիշների:

ՍԵՐՄԵՐԻ ԾԱՆՏԱԿԱԿԱՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆ, *Хозяйственная водность семян; seed viability*

Լույսն է, ինչ որ սերմերի ցանքային պիտանիությունը:

ՍԵՐՄԵՐԻ ԾԱՆՔՍԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ, *Глубина заделки семян; seed closing up depth*

Ցանքսից հետո սերմերը ծածկող հողաշերտի հաստությունը: Մանր սերմերը (կեչի, լաստենի, քթենի) ծածկում են հողախառնուրդի բարակ շերտով կամ ուղղակի ցանում ավազի հետ խառնված վիճակում: Սոճու, եղևնու սերմերը ծածկում են 0.5-2 սմ մանր ավազով կամ հողախառնուրդով: Թեղու, լոբենու սերմերը՝ 1-4 սմ շերտով, հացենու, թխկու սերմերը՝ 3-5 սմ, խոշոր սերմերը՝ կաղնի, շագանակենի, ընկուզենի, նշենի և այլն, ծածկում են 5-10 սմ հողաշերտով:

ՍԵՐՄԵՐԻ ԾԱՆՔՍԻ ՆՈՐՄԱ, *Норма высева семян; seed dropping norm*

Ակոսային ցանքսի դեպքում մեկ գծամետրում ցանվող սերմերի քանակը (գրամ) և 1 քառ. մ ցանվող սերմերի քաշը (գրամ): Ս.Ց.Ն. պայմանավորված է սերմերի որակական դասով, հողի տիպով, խոնավության աստիճանով, անտառածեցման շրջանով:

ՍԵՐՄԵՐԻ ԾԱՆՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆ, *Посевная водность семян; seed sowing validity*

Յույց է տալիս սերմնանյութի մեջ ծլունակ սերմերի պարունակությունը: Որոշում են միայն կոնդիցիոն սերմնանյութի համար, բազմապատկելով սերմի ծլունակությունը և սերմերի մաքրությունը՝ արդյունքը բաժանելով 100-ի: Ունի գործնական նշանակություն ցանքսի նորման որոշելիս:

ՍԵՐՄԵՐԻ ԾԱՆՔԱՅԻՆ ՈՐԱԿ, *Посевное качество семян; seed sowing quality*

Ցանքային պիտանիությունը բնորոշող հատկանիշների (սերմերի ծլունակությունը, ծլման էներգիան, կենսունակությունը, խոնավությունը, մաքրությունը, 1000 սերմի կշիռը, սնկերով վարակվածությունը, մեխանիկական վնասվածությունը և այլ) համրագումարը: Արգելված է սերմերի օգտագործումն առանց նախապես որոշելու նրանց ցանքային որակը, երբ սերմերի պիտանիության բոլոր հատկանիշները դրական են, սերմնանյութը կոշվում է կոնդիցիոն:

ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԴՎԱՔՈՒՄ, *Сбор семян и плодов; seeds and fruits collection*

Կատարվում է միջին տարիքի, հասունացող և հասուն բարձր բունխտեսային ծառատներում, առողջ, լավ զարգացած ծառերից: Այդ նպատակով առանձնացված անտառամասերը նախօրոք ուսումնասիրվում են, կիրառում ծառերի նորմալ պտղաբերմանը նպաստող համապատասխան անտառատեսակային միջոցառումներ: Սերմե-

րը և պտուղները հավաքում են հասուն վիճակում՝ նշելով հավաքելու վայրն ու ժամկետը:

ՍԵՐՍԵՐԻ ԵՎ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՍՁԵՐՍԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ, *Сроки заготовки семян и плодов; seed and fruits harvesting schedule*

Որոշվում է նրանց հասունացման և թափման ժամանակով: Սովորաբար մանր և շուտ թափվող սերմերը հավաքվում են մինչև լրիվ հասունացումը, իսկ խոշոր սերմերը և պտուղները հասուն վիճակում:

ՍԵՐՄՆԱՐՈՒԾԱՎԱՆ ԱՆՏԱՈՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ, *Семенное лесное хозяйство (семлесхоз); seed forest enterprise*

Անտառոտեսական ձեռնարկություն, որը մասնագիտացված է որոշակի գոտու համար արտադրելու ժառանգական բարձր հատկանիշներով օժտված անտառային տեսակների սերմեր:

ՍԵՐՄՆԱՐՈՒՅՍ, *Семя; seedling*

Սերմից աճեցված բույս տնկարանի ցանքային բաժանմունքում (մինչև 1-3 տարեկան), ծաղկաջերմոցի բուժման բաժանմունքում (մինչև 1-3 ամսական):

ՍԵՐՄՆԱՐՈՒՅՍԵՐԻ ՂՈՒՐՍՄՈՒՄ, *Выжимание всходов; pressing-out of germination seedlings*

Տեղի է ունենում աշնանը, երբեմն գարնանը, երբ հողի վերին 15-20 սմ շերտը սառչելու հետևանքով ուռչում, իսկ հալչելուց հետո նորից նստում է, և սերմնաբույսերը, անգամ 4-5 տարեկան բուսակների արմատները կամ նրանց զգալի մասը, մնում են հողից դուրս և վնասվում՝ հանգեցնելով բուսակների մահացման կամ աճի խիստ անկման:

ՍԵՐՄՆԱՐՈՒՅՍԵՐԻ ԵԼՔԻ ՀԱՇՎԱՐԿ, *Учет выхода семян; inventory of survived seedlings*

Կատարվում է փորձահրապարակներում եղած սերմնաբույսերի հաշվարկի միջոցով: Հաշվարկային հրապարակները տեղադրում են միջին խտության ցանքատարածքում, յուրաքանչյուր տեսակի համար առանձին: Հաշվարկային հրապարակների տարածքը պետք է լինի տվյալ տեսակի ցանքատարածքի 5 %-ից ոչ պակաս:

ՍԵՐՄՆԱՐՈՒՅՍԵՐԻ ԹԱՂԱՍՈՒՄ, *Увядание семян; seedling wilting*

Սերմնաբույսերի աստիճանական մահացում սնկային հիվանդությունների, մետաղիկական և ֆիզիոլոգիական պատճառներով:

ՕԵՐՄՆԱԲՈՒՅՍԵՐԻ ԴՎՆՈՒՄ, *Выкопка семян; seedlings outplanting*

Կատարում են զարմանը կամ աշնանը տերևաթափից հետո: Աշնանը նպատակահարմար է հանել այն տեսակների սերմնաբույսերը, որոնց բողբոջները զարմանը ուշ են բացվում:

ՍԵՐՄՆԱԲՈՒՅՍԵՐԻ ՆՈՍՐԱՅՈՒՄ, *Изреживание всходов; thinning of germinated seedlings*

Տեղի է ունենում տնկարաններում սնկային հիվանդությունների, հաճախ ֆուզարիոզի հետևանքով: 10-15 օրական սերմնաբույսերն արմատավզի մոտից ձգվում են, քոյաը պատկում է ու թառածում:

ՍԵՐՄՆԱԲՈՒՅՍԵՐԻ ՊԱԴՊԱՆՈՒՄ, *Хранение семян; seedling storage*

Տնկանյութը հանելուց մինչև տնկման վայր տեղափոխելը պահպանում են տնկարանում: Հանված սերմնաբույսերի հաջող պահպանումը կախված է հողի և օդի խոնավությունից, առանձին տեսակների առանձնահատկություններից: Չոր պայմաններում թաղած սերմնաբույսերը ծածկում են հարդով, չոր խտով և ջրում: Գարնանը հանած Ս.Պ.-ման տևողությունը չպետք է անցնի մի քանի օրից: Տերևաթափ տեսակները կարելի է պահել ավելի երկար:

ՍԵՐՄՆԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՍԱԲՈՒՄ (ՋՐԱՋՐԿՈՒՄ), *Выпревание всходов; perishing of germinated seedlings*

Տեղի է ունենում ամռանը չորության պատճառով նոր ծլած սերմնաբույսերի թառածման ու մահացման կամ վերատնկման համար հանված սերմնաբույսերը չոր պայմաններում պահելու դեպքում:

ՍԵՐՄՆԱԲՈՒՍԱԿՆԵՐԻ ԸՆԶԱԳԵՂԶՈՒԹՅՈՒՆ, *Удушение семян; seedlings suffocation*

Սերմնաբույսերի հիվանդություն, որն ախտորոշվում է նրանց չորացմամբ: Տեղի է ունենում մեխանիկական վնասվածքների հետևանքով շնչառական պրոցեսների խախտման կամ ցածրակարգ բույսերի (մամուռների, քարաքոսերի, սնկերի) ազդեցության ներքո, որոնք շրջափակում են 1-2 տարեկան բուսակներին և խանգարում նրանց աճը:

ՍԵՐՄՆԱԹԻՆ ԱՆՏԱՈՒ, *Семенной лес; seed forest, high forest*

Անտառ, որն առաջացել է սերմերից: Ի տարբերություն վեգետատիվ ծաղում ունեցող անտառների, Ս.Ա.-ները երիտասարդ հասակում աճում են դանդաղ, այնուհետև աճն արագանում է: Կուլմինացիոն աճը, վեգետատիվ ծաղում ունեցող անտառների հետ համեմատած, 20-40 տարի ետ է ընկնում: Ս.Ա.-ում ծառերը լինում են լիարուն, կողջային ճյուղերից լավ մաքրված, որի համար նրանց անվանում են նաև թարծրաբուն անտառներ:

ՕՏԻՄՆԱՅԻՆ ԴՍԿՈՒԲՍ, Семенной контроль; seed control

Պետական, ներտնտեսական պլանային միջոցառումները՝ ուղղված վերահսկելու սերմերի որակը հավաքման, մաքրման, պահեստավորման և նախացանցային մշակված ընթացքում: Խանդիսանում է սերմանաբուծության բաղկացուցիչ մասը: Իրականացվում է անտասերմնակայանների կողմից, որոնք ունեն սպասարկման որոշակի գոտիներ:

ՍԵՐՄՆԱՅԻՆ ՎԵՐԱՎԱՆՁՆՄԱՆ ՁՆԱԴՆՏՄԱՆ ՍԱՆԴՊԱԿ, Шкала оценки семенного возобновления; seed regeneration assessment scale

Անտառի սաղարթի տակ սերմնային վերականգնման որակական ու քանական զնախատման նորմատիվներ: Մշակվում է յուրաքանչյուր խոշոր տարածաշրջանի համար առանձին՝ ելնելով ծառատեսակների անտառտնտեսական հատկություններից, անտառի տիպից, վերականգնման բնույթից, մատղաշի հասակից ու բարձրությունից: Ս.Վ.Գ.-ման ժամանակ, բացի հուսալի մատղաշի քանակից, հաշվարկում են նաև նրանց բաշխվածությունը /B/ տվյալ տարածքում, այսինքն՝ մատղաշով ակա հաշվարկային հրապարակների հարաբերությունները /N/ տեղադրված հրապարակների քանակին /N/, արտահայտված տոկոսներով՝ $B=100/N$: Վերականգնումը բավարար է համարվում, երբ բաշխվածությունը 60%-ից բարձր է:

ՍԵՐՄՆԱՅԻՆ ՏԱՐԻ, Семенной год; mast year

Առատ պտղաբերման տարիներ, որոնց հաջորդականությունը պայմանավորված է տեսակների կենսաբանական առանձնահատկությամբ և աճման համակողմանի գործոններով: Նորմալ պայմաններում ամեն տարի առատ պտղաբերում են կեչին, բարդին, ուռնին և այլն, նաև թփատեսակների ճնշող մեծամասնությունը:

ՍԵՐՄՆԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ, Семенники; spermaties

Սերմեր ստանալու նպատակով աճեցվող առանձին բույսեր:

ՍԻԶԱՄԱՐԳ, Газон; grassplot

Միահասակ վառ կանաչ հանրանկար ստեղծելու նպատակով արհեստական ճնածածկույթ՝ հիմնականում հացազգի խոտերով ցանված հողամաս: Ըստ օգտագործման նպատակների լինում է զեղազարդային (պարտեզային, սովորական, մակրիտանական), սպորտային, միամյա ծաղկող սիզամարգ:

ՍԻԶԱՄԱՐԳԱԳՆԼՉԻՉ, Газонокосилка; grass mower

Սիզամարգերը հաճախակի հնձելու և ձևավորելու հատուկ մեքենա: Ապահովում է սիզամարգի համաչափ, որոշակի բարձրությամբ և ձևով հնձումը:

ՕՐՋԱՍՄՐՎՈՅՐԻՆ ԲՈՒՅՍԵՐ՝ *Газонные растения; grassplot plants*

Լավ ճիմ առաքացնող խոտաբույսեր, հիմնականում հացազգիների, ծաղկախոտեր (դաշտավայել մարգագետնային, ոլոռնախոտ անզլիական, ոլոռնախոտ ֆրանսիական) և այլն:

ՍԻՄԲԻՈՋ, *Симбиоз; symbiose*

Տե՛ս Համաքնակություն:

ՍԻՆՈՒԶԻԱ, *Синюзия; synusium*

Բուսական համակեցության կառուցվածքային մաս, որը կազմված է էկոլոգիապես համանման մեկ կամ մի քանի կենսածներից: Ս. սահմանափակված է տարածքով: Բուսական մեկ շարահարկը կարող է ընդգրկել մեկ կամ մի քանի Ս.: Անտառային համակեցությունում, որը կազմված է մի քանի շարահարկից, կարելի է առանձնացնել տասնյակ Ս.-ներ, որոնցից ամենակարևորը ծառերի շարահարկն է: Անտառնտեսության քննազննում Ս.-ով պայմանավորված է անտառնտեսական մի շարք միջոցառումների (քնական սերմնային վերականգնմանը օժանդակող) ճիշտ կենսագործումը:

ՍխեՄԱ, *Схема; scheme*

Ընդհանուր գծերով պատկերման կամ նկարագրման հոմանիշ օգտագործվող տերմին: Օրինակ՝ այցելուների շարժման երթուղու ուրվագիծ, քաղաքի կանաչապատման ուրվագիծ, ուղղաձիգ հատակագծման ուրվագիծ, քնտեսարանային կետերի ուրվագիծ, տարածքի զոնայացման ուրվագիծ և այլն:

ՍխեՄԱՏԻԿ ՔԱՐՏԵՋՆԵՐ, *Схематические карты; Schematic maps*

Ընդհանուր աշխարհագրական և անտառային քարտեզներ, որտեղ գեներալիզացված, պարզեցված և սխեմատիկ ձևով ցույց են տրվում որոշակի տարածքի անտառնտեսությունների կամ ավելի փոքր միավորների տարածական տեղաբաշխումը: Այս քարտեզների վրա սովորաբար տրվում են նաև տեղագրական հիմքի տարրեր, ճանապարհներ, սահմաններ և այլն:

ՍԿԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՐԹՈՒՂՈՒ ԵՐԿԱՅՆՔՈՎ, *Сканирование вдоль маршрута; Scanning along track*

Ինքնաթիռից իրականացվող բազմասպեկտրալ սկանավորման տեսակ, որի արդյունքում ստացվում է տեղանքի երկչափ պատկերը: Ինքնաթիռի սկաները, օգտագործելով պտտվող հայելին, թափչի ուղղությամբ ուղղահայաց սկանավորման գծերի ուղղությամբ սկանավորում է տեղանքը: Սա ինքնաթիռի սկաներին թույլ է տալիս հաջորդաբար գրանցել ինքնաթիռից ծախ և աջ ընկած տարածքներից անդադարձվող էներգիան:

ՈՎԱՆԱՎՈՒՐՈՒՄ ԵՐՈՅՈՒՄԸ ԼԱՅՆՔՈՎ, *Сканирование поперек маршрута; Scanning across track*

Ինքնաթիռից իրականացվող բազմասպեկտրալ սկանավորման տեսակ, որի դեպքում նույնպես ստացվում է տեղանքի երկչափ պատկերը: Այս դեպքում կիրառվում են սկանավորում երթուղու երկայնքով սկզբունքները, սակայն եական տարբերությունը դրանում է, որ սկաներային հայելու փոխարեն օգտագործում են դետեկտորների գծային մարտկոցներ: Վերջիններս բաղկացած են բազմաթիվ փոքր, զգալուն էլեմենտներից:

ՍԿԼԵՐԵՆՔԻՄ, *Склеренхима; bast-cell*

Բուսական օրգանիզմի կարծրաբջիջ հյուսվածք: Երկարավուն, հաստապատ, հաճախ փայտացած բջջաթաղանթներով բջիջներից կազմված մեխանիկական հյուսվածք, որը ապահովում է առանցքային օրգանների ամրությունը ծգման, ծածան, սեղմման դեպքում:

ՍԿՐԵՐ, *Скреб; Scrub*

Մինչև երկու մետր բարձրությամբ, չորասեր, ցածրահասակ թփուտային համակեցություններ Ավստրալիայի չորային շրջաններում: Այս համակեցություններում գերակշռում են թփուտային էվկալիպտը, ակացիան և այլն:

ՍՂՈՑԱՆՅՈՒԹ, *Пиломатериал; sawn timber*

Գերանի սկզբնական մշակումից (սղոցումից) ստացված արտադրանք: Տեսակավորվում է ըստ չափերի և ուղարկվում հետագա մշակման ու օգտագործման: Ըստ մշակման աստիճանի, Ս-ը բաժանվում է՝ կտրվածքով, երբ տախտակի չորս կողմը սղոցված է, և ոչ կտրվածքային՝ երբ սղոցված է երկու կողմից: Ելնելով ընդլայնական կտրվածքի մակերեսից՝ Ս. բաժանվում է՝ քառալող (50-100մմ) և տախտակ (հաստությունը՝ 13-100 մմ): Գ-ում օգտագործման համար Ս. բաժանվում է՝ բարակ (մինչև 32 մմ) և հաստ, արտահանվող Ս.՝ բարակ (մինչև 22 մմ), միջին հաստության (25-44 մմ) և հաստ (45-100 մմ): Ելնելով տեխնիկական պահանջներից և մշակման թերություններից՝ ասեղնատերևավորների Ս. բաժանվում է 5 տեսակի՝ ընտրովի և 1-ից 4-րդ, իսկ լայնատեսակավորներինը՝ 3 տեսակի (1-ից 3-րդ):

ՍՅՈՒՆԱՆԱՆ ՍԱՂԱՐԹ, *Колонновидная крона; column crown, column canopy*

Ծառաթփային բույսերի բնամերձ ճյուղավորությամբ սաղարթ: Օրինակ՝ Յարուկոյի բարդի, բրզածև նոճի և այլն:

ՍՆԿԱՐՄԱՏ, *Микориза; mycorrhiza*

Տե՛ս Սիկորիզ:

ՕՍԵՐԱՊԱՐԻՆԱՌՆՈՒՄ, Питательная смесь; nutrient mixture

Հումուսով հարուստ հողի և հանքային ու օրգանական պարարտանյութերի որոշակի խառնուրդ: Օգտագործվում է թաղարներում ծաղկաբույսեր կամ արկղերում ծաղկային սածիլներ աճեցնելու համար: Արդյունավետ են ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութեր խառնած անտառային բուսահողը և խառնաղբը:

ՄՆՈՒՅՈՒՄ, Подкормка; supplementary feeding

Վեգետացիայի ընթացքում բույսերին լրացուցիչ սննդանյութերի մատակարարում: Հիմնականում օգտագործվում են ջրում հեշտ լուծվող ազոտային աղեր կամ գոմաղբահեղուկ:

ՄՈՒԽՏԵՐ, Солитар; soliter

Տե՛ս Մեծածառ:

ՄՈՒՈՒԿ, Луквица; bulbus

Ստորգետնյա (հազվադեպ՝ վերգետնյա), ընձյուղ՝ կարճ, ամրացած ցողուններով (այսպես կոչված հատակով) և մսալի, խիստ մերձացած, թփուկանման տերևներով: Ամբարում է ջուր և սննդանյութեր: Վեգետատիվ բազմացման օրգան է: Բնորոշ է հիմնականում չոր և շոգ մարզերի էֆեմերոիդներին (վարդակակաչ) և լայնասաղարթ անտառներին (ծնածաղիկ, մկնասոխ):

ՄՈՒՈՒԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, Луквицные растения; bulbous plants

Սոխուկի տեսքով պահեստավորող հյուսվածքներ առաջացնող բույսեր: Ծառայում են որպես բույսի բազմացման օրգաններ: Տարբերվում են ցողունասոխուկավորներ (դաշտավուկ սոխուկավոր) արմատասոխուկավորներ (վարդակակաչներ, նարգեսներ, սոխ), պայմանական պալարասոխուկավորներ (թաշուշաններ):

ՄՈՂԱՅՈՂ ԲՈՒՅՍԵՐ, Стелющиеся растения; prostrate plants

Թույլ զարգացած մեխանիկական կառուցվածքով բույսեր, որոնք ուղղահայաց դիրք չեն գրավում, այլ տարածվում են հողի մակերեսին կամ կաշույն: Օգտագործվում են մեծ մասամբ ուղղածիգ կանաչապատման բնագավառում, իսկ քնորոշ սողացողները՝ որպես սիզամարգախոտ: Ամենաքնորոշ տեսակներն են բաղեղը, արմատակալող կամպիսը, ճապոնական իլենու սողացող այլատեսակը, կուսախաղողի որոշ այլատեսակները, ամպելոպսիսները և այլն:

ՄՈՆՈՒՏ, Сосняк; pine stand

Մոճու անտառ:

ՕՌԵՆՈՒ ԱՆՏԱՌ, ԹԱՎՈՒՏ, *Бор; pine forest*

Ավազային հողերի վրա աճած սոճու ծառուտ: Երբեմն օգտագործում են նաև այլ ասեղնատերևավոր (եղևնի) կամ սաղարթավոր (կեչի) ծառերից կազմված ծառուտների համար:

ՍՈՎՈՐԱՎԱՆ ՍԻԶԱՍԱՐԳ, *Обыкновенный газон; ordinary grassplot*

Բացատներում, լայն բուլվարներում ստեղծվող ճանաժողովուրդ: Այդպիսի սիզամարզ ստեղծելու համար օգտագործվում է դաշտավայրային, շյուղախոտի, դաշտախոտուկի որոշակի հարաբերությամբ սերմնախառնուրդը:

ՍՈՐՏ, *Сорт; specie, sort*

Սերմնային բազմացմամբ առաջացող, շեղվող հիբրիդային ձևերի սելեկցիոն ընտրության միջոցով ստացված տնտեսական միավոր:

ՍՊԵԿՏՐԱԼ ԱՆՂՐԱՎԱՐՉՈՒՄ, *Спектральное отражение; spectral reflectance*

Սա հաշվվում է, որպես ակիցի երկարության ֆունկցիա և կոչվում է սպեկտրալ անդրադարձում, որը մաթեմատիկորեն որոշվում է, որպես օբյեկտից անդրադարձված տվյալ երկարության ակիցի էներգիայի ու տվյալ առարկայի վրա ընկած տվյալ ակիցային երկարության էներգիայի հարաբերություն, արտահայտած տոկոսներով:

ՍՊԵԿՏՐԱԼ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ, *Спектральная разрешимость; spectral resolution*

Սենսորի տեխնիկական ունակությունն է, էլեկտրամագնիսական սպեկտրի տարբեր տիրույթների հստակ անջատման համար: Օրինակ տեսանելի և մոտիկ ինֆրակարմիր սպեկտրալ տիրույթը թույլ է տալիս հստակ տարանջատել բուսածածկը և ջրային մակերևույթները:

ՍՊԵԿՏՐՈՍԵՏՐ, *Спектрометр; spectrometer*

Սպեկտրոմետրերը սարքավորումներ են, որոնք ապահովում են երկրի մակերևույթի առարկաների կողմից արեգակնային ճառագայթաբաժանման անդրադարձման սպեկտրալ ուսումնասիրություններ: Սպեկտրոմետրային ուսումնասիրությունները լինում են լաբորատոր, դաշտային, օդային և տիեզերական:

ՍՊՈՏ, *SPOT (SPOT) SPOT (Systems pour l'Observation de la Terre)*

ՍՊՈՏ-ը (SPOT) 1986 թվականին Ֆրանսիայից արձակված երկրի բնաօսուրսային երկրորդ խոշոր արբանյակների ընտանիքն է ԱՄՆ Լանդսատ ծրագրից հետո: Գետագայում ՍՊՈՏ ծրագրին միացան Բելգիան, Շվեդիան ու այլ երկրներ և այն վերածվեց Եվրոհամայնքի հիմնական բնաօսուրսային արբանյակի: 1986 թվականից մինչև այսօր տիեզերք են արձակվել ՍՊՈՏ 1-5 արբանյակներ, որոնք տասնյակ մի-

լիտնավոր նկարներ են արել ամենատարբեր նկարահանող սարքավորումներով՝ ՅՈՎ(HRV), ՅՈՎԻՈ (HRVIR), ՅՈԳ (HRG), ՅՈՍ (HRS), Բուսականություն (Vegetation): ՄՊՈՏ սերնդի արքանյակները հատկապես կարևոր են 1990-ական թվականների կտրվածքով, քանի որ նրանք ապահովում են (այն ժամանակաշրջանի համար) բազմասպեկտրալ և պանխրոմատիկ տիրույթների ամենամեծ տարածական թուլատրելիություն ունեցող պատկերները և ստերեոսկոպիկ նկարները:

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՍԻԶԱՄԱՐԳ, *Спортивный сезон; sport grassplot*

Հատուկ մարզահրապարակների (ֆուտբոլ, թենիս...) ու մասսայական խաղերի, զբոսահանդեսների համար նախատեսված ճմաժածկույթ: Կայուն են կոխտման հանդեպ, լավ վերականգնվող են: Ստեղծվում են ինչպես մեկ բուսատեսակի (արվանտակ՝ ֆուտբոլային դաշտի համար), այնպես էլ խոտախառնուրդի (40% դաշտավլուկ մարգագետնային, 30% ոռայգրաս արոտավայրային, 30% կարմրան) սերմերի տեղում կատարվող ցանքսով, ինչպես նաև սերմերից հատուկ աճեցրած ճիմակուճղերի շարման միջոցով:

ՍՍԱԴԻՈՆ, *Стадион; stadion*

Սպորտային զբոսայգու տարատեսակ: Սպորտային հրապարակների, մարզահաշտերի, մարզապարտեզների և այլնի զարգացած համալիր: Տնկարկները պետք է կազմեն ստադիոնի ընդհանուր տարածքի ոչ պակաս 50%:

ՍՍՆԱԴԻՐՏԱՅԻՆ ԱՐՅՈՒՄԱԿՆԵՐ, *Стандартные таблицы; standard tables*

Ծառերների մակերեսի գումարի և բնափայտի պաշարի նորմատիվ աղյուսակներ, որոնք ունեն էտալոնային նշանակություն, հաշվարկված են 1,0 լրիվության նորմալ ծառուտների բնի մակերեսի գումարի (d^2/h) և պաշարի (d^3/h) հաշվարկով: Լայնորեն օգտագործվում են անտառզնահատման ժամանակ՝ որոշելու ծառուտի հարաբերական լրիվությունը (P) և մոդելային ծառի պաշարը (Md) հետևյալ բանաձևերի օգնությամբ՝

$$P = \sum Qd / \sum Qn$$
, $Md = nP$, որտեղ Qd գնահատվող ծառերի բնի կտրվածքի մակերեսների գումարն է, $\sum Qn$ և Md համապատասխանաբար նորմալ ծառուտի կտրվածքների մակերեսների գումարը և պաշարը Ս.Ա.-ի տվյալներով:

ՍՍՆԱԴԻՐՏԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՏԱՌՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ, *Стандартизация в лесном хозяйстве; standartization in forest enterprise*

Անտառտնտեսվարման պրոցեսի համալիր միջոցառումների տեխնիկական նորմատիվների մշակում և կիրառում: Անտառտնտեսությունում ստանդարտավորման նպատակն է անտառային ռեսուրսների ռացիոնալ անընդմեջ օգտագործումը, նրա արդյունավետության բարձրացումը, բնապահպանական հատկությունների և ստաց-

վող քնափայտի որակի բարելավումը և այլն: Անատատնտեսության ստանդարտները հաստատվում են համապատասխան մարմինների կողմից: Ստանդարտները լինում են հանրապետական, ճյուղային (տնտեսության համապատասխան ճյուղերում), ձեռնարկության, միավորման սահմաններում:

USULYAPC CԵՎԱՆՅՈՒԹ, *Стандартный посадочный материал; standart seedlings (planting material)*

Տնկանյութ, որը համապատասխանում է գործող ստանդարտին: Հիմնական ցուցանիշներն են՝ տնկիի բարձրությունը, արմատավզի տրամագիծը, արմատների զարգացածության աստիճանը:

USԵՐԵՈՏՈՒՅՁ, *Стереопары; Steropair*

Նկարահանող թռչող սարքի երթուղու ուղղությամբ իրար հաջորդող երկու օդալուսանկարների զույգ, որոնք երկայնակի իրար ծածկում են 40-80 % - ի չափով, ինչը թույլ է տալիս տեղանքի ստերեոսկոպիկ (եռաչափ) մոդելի ստացումը: Երկու հարևան երթուղիների օդալուսանկարները իրար սովորաբար ծածկում են 30-40% - ի չափով, որպեսզի ապահովեն նույն ստերեոէֆեկտը:

USԵՐՈՍԿՈՊ, *Стереоскоп; Stereoscope*

Ստերեոսկոպը տեղանքի ստերեոսկոպիկ (եռաչափ) մոդելի ստացման պարզագույն սարքավորումն է: Ստերեոսկոպները լինում են սովորական, հայելային և խոշորացույցով, որոնց վրա հնարավոր է լինում իրականացնել չափումներ: Ստերեոսկոպի և պարալաքսոմետրի օգնությամբ կարելի է չափել ծառերի բարձրությունները: Իմանալով այս ցուցանիշը և օգտագործելով ծառուտների լրիվության աղյուսակները օդալուսանկարների վրա միանգամից կարելի է ստանալ պաշարները:

USԵՐԵՍԿՈՊԻԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՎԱՆՈՒՄ, *Стереоскопическая фотосъемка; Stereoscopic photography*

Տիեզերքից իրականացվող ստերեոսկոպիկ լուսանկարահանումն ունի մի քանի տարատեսակներ՝ միերթուղանի, երբ ստերեոզույգերը ստացվում են օպտիկական առանցքի տարբեր ուղղությունների դեպքում, երկերթուղանի, երբ լայնական վերածածկումը կատարվում է օպտիկական առանցքի միևնույն ուղղության դեպքում:

USՎԵՐԱՂԻՄԱՑԿՈՒՆ ԾԱՌԱԹՓԱՅԻՆ ԲՈՒՅԱՆԵՐ, *Теневыносливые древесные растения; shadow tolerant wood plants*

Լուսիս անբավարարությանը հարմարված բույսեր: Աճում են ծառերի կամ պատերի ստվերներում (ջրընկալ, բաղեղ և այլն): Ստվերադիմացկուն ծառերից են հաճառենին, լորենին, սրատերև թխկին, կենին, եղևնին, տոսախը, թփերից՝ փշարմավը, թաթարական ցախակեռասը և այլն:

ՕՏԻՊՈՂՊԱԿԱԸ ԸՏՏՐՈՎԻ ԴՍՏՈՒՄՆԵՐ, Поднебально-выборочные рубки; obligatory selection fellings

Ընտրովի հատումների տարատեսակ, որի ժամանակ հատում են որոշակի տրամագծով մեկ ծառատեսակ: Ելնելով ծառուտի վիճակից, կազմից, հասակից, բաց թողնվող փայտանյութի անհրաժեշտ ծավալից՝ վերցվում է ծառուտի պաշարի 10-80 տոկոսը: Գերհասուն միահասակ ծառուտներում Ս.Ը.Դ. առաջ են քերում քամետապալումներ, քայքայում ծառուտը, բարձրացնում անտառանյութի սանիտարական վիճակը: Կիրառվում են հազվադեպ:

ՍՏՈՐԻՆ ՆՍՈՐԱՅՈՒՄ (ԴՍՏՈՒՄՆԵՐ), Извозное прореживание (рубки); basal fellings

Խնամքի հատման եղանակ, որը կիրառվում է ձողանային հասակից մինչև գլխավոր հատմանը նախորդող հասակային դասը: Կարող է լինել տարբեր ինտենսիվությամբ՝ թուլից (սկզբնական սաղարթի 15-20 տոկոս նորացում) մինչև ինտենսիվ (երբ հատում են սկզբնական սաղարթի 35 տոկոսից ավելին): Սովորաբար կիրառվում է ասեղնատերևավոր միատարր ծառուտներում: Ս.Ն. պայմաններ է ստեղծում երկրորդ շարահարկի առաջացման համար՝ բարելավելով թողնված ծառերի քերի ձևավորումը:

ՍՏՎԵՐՎՈՂՍՄԱՅԿՈՒՆ ԲՈՒՅՍԵՐ, Теневыносливые растения; shade tolerant plants

Բույսեր, որոնք տանում են որոշակի ստվերը, սակայն լավ են զարգանում նաև արեգակնային անմիջական լույսի պայմաններում: Տերևներն աչքի են ընկնում թույլ դիֆերենցված սյունաման պարենքիմով, քիչընելում քլորոպլաստներն անհամեմատ մեծ են, բայց ֆոտոսինթեզի ինտենսիվությունը, համեմատած լուսասերների հետ, մեծ չէ:

ՍՏՎԵՐԱՅՄԱՆ ՎԱՅՄՆԵՐ, Щиты отпечнения; shadowing plates (board)

Պատրաստում են 2-4 սմ լայնությամբ կավարից: Կավարը մեխում են շրջանակի վրա կամ կապում վուշի թելով, մետաղալարով՝ ստեղծելով 1-2 սմ² ցանց: Ս.Վ.-ի չափսերը՝ 1X1 մ կամ 1X2 մ: Կավարը կարելի է փոխարինել նաև ուռնու շիվերով, եղեգնի ցողուններով, ծղոտով և այլ նյութերով:

ՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԵՐ, Контрольные деревья; control trees

Ենտոֆիտոպաթոլոգիական վիճակի բացահայտման նպատակով ընտրված ծառեր, որոնց վրա կատարվում են դիտարկումներ՝ կեղևակերների զարգացման ընթացքն ուսումնասիրելու և ծառերի կեղևահանումը կազմակերպելու նպատակով:

ՍՈՒԿՈՒԼԵՆՏՆԵՐ, Суккуленты; succulent plants

Անբավարար խոնավության պայմաններում աճող և կենսագործունեության համար անբարենպաստ պայմանները հեղուկի կուտակված պաշարների հաշվին հաղ-

թահարող բույսեր: Ունեն հաստացած, հյութալի ցողուններ (ցողունային սուկուլենտներ) կամ տերևներ (տերևային սուկուլենտներ): Պատկանում են բույսերի շատ ընտանիքների: Հաճախ ունենում են արտասովոր ձև (կողմեր, թանձրատերևավորներ, իշակաթնուկ, ազավա, հալվե):

ՍՈՒԿՑԵՍԻԱ, *Сукцессия; succession*

Որոշակի տարածքում մի ֆիտոցենոզի (կենսացենոզի, կենսաերկրացենոզի) հաջորդաբար փոխարկվումը մյուսով: Անտառում Ս. հիմնականում ընթանում է աճման պայմանների փոփոխման (էրոզիոն հրաբխային ժայթքումներ և այլն), ինչպես նաև մարդու ներգործության հետևանքով (հատումներ, հրդեհներ, հողի ժամանակավորապես գյուղատնտեսական մշակաբույսերով օգտագործում և այլն), որոնք հանգեցնում են անտառում տեսակային կազմի փոփոխման:

ՎԱՐ ԾԱՂԿՈՂՆԵՐ, *Раннецветущие; early-flowerings*

Վաղ գարնանը (մերձարևադարձներում՝ ծմաանը) ծաղկող բույսեր: Հատկապես տպավորիչ են տվորական բույսերի տերևազուրկ վիճակի ժամանակ (նշենի, ծիրանենի, բոնջի, խենոմեխես ճապոնական, հուդայածառ):

ՎԱՂԱՆՅԻԿ ԲՈՒՅՍԵՐ, *Эфемеры; ephemerals*

Տե՛ս էֆեմերներ:

ՎԱՂԱՆՅԻՎԱՆԱՆ ԲՈՒՅՍԵՐ, *Эфемероиды; ephemeroids*

Տե՛ս էֆեմերանմաններ:

ՎԱՅՐԱԿ, *Дюк; nonlined-out plant*

Բնական պայմաններում սերմերից աճած 2-3 տարեկան ծառաբույս: Տնկարանում աճեցրած նույն հասակի սերմնաբույսից տարբերվում է թույլ զարգացմամբ, նրանց օգտագործումը որպես տնկանյութ տալիս է ցածր կաշտողականություն ունի բավարար աճ: Պտղաբուծության մեջ Վ. անվանում են տնկարանում աճեցրած սերմնաբույսերը, որոնք պատվաստի միջոցով ենթակա են ազնվացման:

ՎԱՌԵԼԱՓՈՒՅՏ, *Дрова; firewood*

Վառելիքի համար օգտագործվող փայտանյութ: Մթերում են շինափայտի համար ոչ փիտանի ծառատեսակներից և ծառերի կողային ճյուղերից, որոնց տարածագիծը վերին կտրվածքում 3 սմ-ից ավելի է:

ՎԱՌԵԼԱՓՈՒՅՏԱՅԻՆ ԾԱՌ, *Дровяное дерево; firewood tree*

Ծառ, որի բունն ունի բնափայտի արատներ կամ շինափայտի համար կարճ է. երկու մետրից չի անցնում:

ՎԱՐՂԱՆՈՑ, *Розарий; roseary*

Վայրի մասրենիների մացառուտ, վարդերի կոլեկցիոն կամ գեղազարդային հողամաս (զբոսայգու, պարտեզի հատված): Նախատեսված է վարդերի տարբեր տեսակների և սորտերի աճեցման ու ցուցադրման համար:

ՎԱՐՂԱՍՏԱՆ, *Розовый сад; rose garden*

Պարտեզ, որում զերակշռում են վարդերը: Այդպիսի պարտեզը հատակազովում է կանոնավոր ոճով: Հայտնի են հնագույն ժամանակներից (պարսկական «դրախտ», Շամիրամի կախովի պարտեզներ, հայկական «վարդաստաններ»):

ՎԱՐՍՍՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ, *Плакучие растения; pendent plants*

Գեղազարդային բույսեր: Բնականորեն ստացվում են պատվաստաչիվերով վեգետատիվ բազմացման (ուռենի բարելոնյան, ուռենի սպիտակ) և պատվաստման (թթենի սպիտակ, հացենի տվիրական, հացենի վարսավոր, արոսենի վարսավոր և այլն) միջոցով: Լայնորեն օգտագործվում են ջրամբարների կանաչապատման ժամանակ և հուշահամալիրներում (զերեզմանատներում):

ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՍՑՈՒՄ, *Vegetативное размножение; vegetative reproduction*

Բազմացման անսեռ եղանակ, երբ օգտագործվում են բույսերի վեգետատիվ օրգանները (արմատ, ցողուն, ընծյուղ, տերև)՝ պատվաստ (կտրոնապատվաստ, ճեղքապատվաստ, աչքապատվաստ, լեզվակապատվաստ), անդալիս: Կիրառվում է պարտեզային ձևերը բազմացնելիս՝ բույսերի զեղազարդային կարևոր հատկանիշները (սաղարթի ձև, գույն և այլն) պահպանելու նպատակով:

ՎԵԳԵՏԱՏԻՎ ՎԵՐԱՎԱՆԳՆՈՒՄ, *Vegetативное возобновление; vegetative regeneration*

Անտառի բնական բազմացման վեգետատիվ եղանակ՝ բնաչիվերով, անդալիսով և արհեստական բազմացման եղանակով՝ կտրոնների ու անդալիսների միջոցով:

ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ԺՄԱՍՆԱՎԱՇՐՋԱՆ, *Vegetационный период; vegetation period*

Երբ օդերևութաբանական պայմանները նպաստում են բույսերի աճին և զարգացմանը (վեգետացիային): Վ.ժ.-ի տևողությունը կախված է աշխարհագրական լայնությունից, կլիմայական պայմաններից, հողից: Կարող է լինել կարճ, երկար կամ ընդգրկել ամբողջ տարին: Կենսակլիմայական ցուցանիշ է բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման համար:

ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆ, *Vegetационный период; vegetative period*

Տարվա ժամանակահատված, որի ընթացքում օդերևութաբանական պայմանները բույսերի նորմալ աճի և զարգացման համար տալիս են հնարավորություն: Բարեխառն գոտում որպես դրա սահման պայմանականորեն ընդունված է այն ժամանակահատվածը, որի ընթացքում օդի միջին օրական ջերմաստիճանը բարձր է 5⁰-ից:

ՎԵԿՏՈՐ, *Вектор; Vector*

Քարտեզագրական տվյալների կառուցվածք, որն օգտագործում է կետը կամ հանգույցը և միացնող սեգմենտները, որպես աշխարհագրական հատկությունների ներկայացման կառուցման հիմնական տարր:

ՎԵՐԳՎՈՎՉԵՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՑԱՆ, *Период возобновления; renewal period, regeneration period*

Անտառի հատումից մինչև հատատեղի վերականգնումը (գլխավոր ծառատեսակներով) ընկած ժամանակաշրջանը: Պայմանավորված է ծառատեսակով, ածման պայմաններով, տնտեսվարման եղանակով և վերականգնմանն օժանդակող միջոցառումներով: Վ.Ժ. որոշում են այքաչափային դիտումներով և սերմնաքույսերի մանրազնին հաշվառման եղանակով: Համատարած հատումների ժամանակ Վ.Ժ., ելնելով հատատեղի լայնությունից, ընդունված է 5 տարուց ավելի, իսկ աստիճանական հատումների դեպքում՝ ավելի երկար:

ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, *Рекультивация; recultivation*

Անբերրի հողերի, աղքատավայրերի, լցակույտերի, քաց եղանակով շահագործվող հանքավայրերի վրա քամու և ջրային էրոզիայի երևույթները կանխելու համար կանաչապատման (կամ անտառապատման) միջոցառումների համակարգ: Կատարվում է ինժեներական նախապատրաստման ու պարտեզպլուրակային շինարարության մեթոդներով:

ՎԵՐԻՆ ԼՈՒՅՍ, *Свет Верхний; top light (over light)*

Թափանցում է վերևից անտառի հորիզոնական սաղարթի վրա: Օժտված է մեծ ինտենսիվությամբ, օգտվում են սաղարթի վերին ճյուղերը:

ՎԵՐԻՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ, *Рубку верховые; top (crown, over) cuttings*

Լոսրացման հատման տարատեսակ, որը կիրառելիս հեռացնում են գերաճ, հիմնական սաղարթի վրա իշխող ծառերը: Նպատակն է քարելավել հիմնական սաղարթը կազմող ծառերի աճը, նրանց լիարճությունը:

ՎԵՐԻՆ ԼՈՍՐԱՅՈՒՄ (ՎԵՐԻՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ), *Верховое прореживание (верховые рубку); top (crown) thinning*

Ծառուտի Լոսրացման եղանակ, որի ժամանակ պահպանում են երկրորդ շարահարկի ծառերը՝ ստեղծելով քարենպաստ պայմաններ գլխավոր ծառատեսակի և ծառուտը կազմավորող հիմնական ծառերի բների ձևավորման համար: Ընդունված է կիրառել ստվերատար ծառերի կազմավորված ծառուտներում:

ՎԵՐԱՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՑԱՆ, *Ревизионный период; revision period*

Ժամանակաշրջան, որի համար մշակվում են տվյալ անտառատնտեսության անտառչինության նյութերը: Վ.ժ.-ի տևողությունն ընդունված է 10 տարի: Այն կարող է լինել կրճատված, մինչև 5 տարի (անտառշահագործման օրյեկտներում), և երկարածագված (15-20 տարի)՝ քիչ իրացված անտառշահագործական շրջաններում:

ՎԻՍՏԱ, *Vista; vista*

Բացվածք պարտեզի գլխավոր ամանքքի երկարությամբ կամ սանդղափուլից դեպի շրջապատող լանդշաֆտի հեռապատկերը:

ՎՆԱՍՎԱԾ ԲՆԱՓԱՅՏԻ ՈԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, *Рациональное использование поврежденной древесины; rational using (utilization) of damaged wood*

Բնափայտի մթերման ու մշակման տարրեր փուլերում կիրառվող միջոցառումներ, որոնք ուղղված են բարձրացնելու շինափայտի ելքը՝ նվազագույնի հասցնելով վնասված փայտանյութի և թափոնի քանակը: Այդ նպատակին հնարավոր է հասցնել՝ միաժամանակ մթերելով և արտադրելով բնափայտի տարրեր որակի և չափսի տեսականի:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԾԱՌԵՐ, *Опасные деревья; dangerous trees*

Կիսատապալված, ցցաչոր, փտած ծառեր, որոնք քանուց կարող են ընկնել մարդկանց կամ մեքենաների վրա:

S

ՏԱԽՈՆԵՏՐՎԱԿԱՆ ՀԱՆՈՒՅԹ, *Taxametрическая съёмка; taxometric survey*

Տարածքի տեղագրական հանույթ: Միաժամանակ որոշվում է իրադրության հորիզոնական և ռելիեֆային (ուղղածիզ) վիճակը: Հանույթը կատարվում է թեոդոլիտի միջոցով:

ՏԱԽՏԱԿ, *Доска; wood board*

13-100 մմ հաստությամբ սղոցված բնափայտ: Մինչև 32 մմ հաստությունը հաշվվում է բարակ, 32 մմ-ից ավելին՝ հաստ Տ.:

ՏԱԿԿՏՐՈՒՄ, *Подпол; undercut*

Ծառ հատելու սկզբնական գործողություն: Ապահովում է հատած ծառի ունկումն անհրաժեշտ ուղղությամբ: Կատարում են ծառի հիմքում տրամագծի 1/4 չափով՝ մեկ կամ երկու կտրվածքով:

ՏԱՂԱՎԱՐ, *Павильон; pavilion*

Համեմատաբար հավաք ծավալով թեթև կառուցվածք պարտեզներում և զբոսայգիներում: Նախատեսված է խաղաղ հանգստի համար և տեղադրված է լինում քաղաքում, ծառուղիների շրջադարձերում:

ՏԱՂԱՎԱՐԻԿ, *Беседка; lower*

Պարտեզպուրակային կառուցվածք: Հանգստի, ստվերի, անձրևից պաշտպանվելու համար ծածկված թեթև շինություն է, որի ծածկի մետաղական կամ փայտե հիմնակմախքը պատված է լիաններով:

ՏԱՅԳԱ, *Тайга; taiga*

Ասեղնատերևավոր բորենալ անտառներ, որոնք տարածված են հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում (բառացի՝ անտառ): Չլավորվել են համեմատաբար քիչ տեղումների (250-700 մմ), կարճ վեգետացիոն ժամանակաշրջանի (4 ամիս), ցուրտ ձմեռան, կայուն ձնածածկի պայմաններում: Զբաղեցնում են ցամաքի մոտ 10 տոկոսը: Ռուսաստանում կազմում է անտառների շուրջ 90 %-ը: Հարավային անտառների հետ համեմատած՝ աչքի է ընկում սահմանափակ տեսակային կազմով և կենսազանգվածի ցածր արտադրողականությամբ:

ՏԱՆԻՔԱՊԱՐՏԵՁ, *Сад на крыше; garden on roof*

Ենթերի տանիքների լցովի հողաշերտով սահմանափակ հատված՝ ծառերի, թփերի, խոտաբույսերի աճեցման համար: Լայնորեն կիրառվում է հյուրանոցներում,

արդյունաբերական ձեռնարկություններում, ավտոպարկերում, հանրակացարաններում: Նախատեսված է կարճատև համգտի համար: Պահանջում է մանրամասերի կոմպոզիցիոն և կառուցվածքային մանրագնին մշակում:

ՏԱՐԱԾԱՎԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ, *Пространственная разрешимость; Spatial resolution*

Օդալուսանկարի և տիեզերական պատկերի վրա ֆիքսված երկրի մակերևույթի առարկաների նվազագույն չափը: Սովորաբար օդալուսանկարների տարածական բույլատրելիությունը ավելի բարձր արժեքներ ունի, քան տիեզերական պատկերներինը, չնայած այդ տարբերությունը, տիեզերական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, վերանում է:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՎԱՐՆԵՐ, *Региональные снимки; Regional images*

Տարածաշրջանային նկարներն ընդրկում են 50-500 կմ լայնության զոնաներ և իրականացվում են բնառեսուրսային ու քարտեզագրական արքանյակներից: Առավել տարածված են նկարների հետևյալ ընդգրկումները՝ 350x350 կմ², 180x180 կմ² և 60x60 կմ²: Այսպիսի նկարների վրա կարող են տեղավորվել Բելգիան, Հայաստանը, Մոսկվայի մարզը և այլն:

ՏԱՐԱԾՔԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՎԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԿԱՆԱԾ ԵՒՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, *Агротехническая подготовка территории в зеленом строительстве; agrotechnical preparation of territory in greening construction*

Կանաչապատման աշխատանքեր (ցանք, տնկում, հարդարում, բուժում) կատարելու համար հողամասերի նախապատրաստումը տնկարանում ու կանչապատվող օբյեկտներում:

ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, *Благоустройство территории; land improvement*

Կանաչապատման օբյեկտի ինժեներական նախապատրաստման, ջրամբարների ավերի ամրացման, ճանապարհների և ջրիոսքերի կարգավորման, բուսածածկույթի պահպանման, ուղղածիզ հատակագծման, հին հիմքերի և անօգտագործելի շինությունների մաքրման կոմպլեքս միջոցառումներ:

ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, *Функциональная организация территории; functional organization of territory*

Կանաչապատման խոշոր օբյեկտի տարածքի ստորաբաժանումը սպորտով զբաղվելու, զբոսանքի և խաղաղ հանգստի, մանկական իրապարակների, մասսայական զբոսանքների վայրերի և այլնի: Միաժամանակ հաշվի են առնվում օբյեկտի բոլոր մասերի փոխադարձ գործառնական կապերը:

ՏԱՐԱԾՔԻ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ, *Инженерная подготовка территории*

Պարտեզպուրական շինարարությունում ուղղաձիգ հատակագծման, չորացման, ոռոգման, ջրամբարների և հեղեղատների ակերի ամրացման, Նրոգիայից հողածածկույթի պաշտպանության, սողանքների դեմ պայքարի, հանքավայրերի [ցակույտների վերաօգտագործման և այլ աշխատանքների ամրոջություն:

ՏԱՐԱԾՔԻ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, *Ландшафтный анализ территории; landscape analysis of territory*

Կանաչապատման օբյեկտի նախագծման նպատակով տարածքի վերլուծություն: Ընդգրկում է տնկարկների, ռելիեֆի, լանդշեքի տեղադրիչի գնահատումը, տեսարանային կետերի ընտրությունը, բնապատկերի հարստացման պոտենցիալ հնարավորությունների բացահայտումը:

ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԿԱՊԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆ, *Озеленяемость территории; territory greening*

Կանաչապատվող տարածքի մակերեսի հարաբերությունը օբյեկտի ընդհանուր մակերեսին՝ արտահայտված տոկոսներով:

ՏԱՐԱԳԱՍԱԿԱՅԻՆ ԾԱՌՈՒՄ, *Разновозрастной древостой; all-aged stand*

Ծառուտ, որում ծառերը պատկանում են մի քանի հասակային դասի: Բնական անտառները մեծ մասամբ լինում են տարահասակային: Արհեստական տնկարկները մինչև 3-րդ դասը միահասակ են: Հետագայում տնկարկի նոսրացմանը զուգընթաց պսակի տակ սկսվում է սերմնային վերականգնումը, և տնկարկը աստիճանաբար վեր է ածվում տարահասակայինի:

ՏԱՐԱԳԱՍԱԿԱՅԻՆ ՏՆԱՎՐԿՆԵՐ, *Разновозрастные насаждения; all-aged planting*

Տե՛ս Տարահասակային ծառուտ:

ՏԱՐԱՏԵՍԱԿ, *Разновидность; type species*

Տեսակի սահմաններում անհատներ, որոնք հիմնական տեսակից առանձնանում են որոշակի շեղումներով, սակայն վերջիններս անբավարար են առանձնացվելու համար որպես տեսակ կամ ենթատեսակ: Տարատեսակն իր մորֆոլոգիական կառուցվածքով հիմնական տեսակից քիչ է տարբերվում և հանդիպում է ածման որոշակի պայմաններում:

ՏԱՐԱՏԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ, *Разнолистность; heterophyllia*

Տե՛ս Հետերոֆիլիա:

SAPԵԿԱՆ ՀԱՏԱՏԵՐ, *Годичная лесосека; annual cutting area (wood-cutting area)*

Բնորոշվում է անտառտնտեսության բնափայտի բացթողման տարեկան չափով, որի հիմքում ընկած է անտառաանյութի մթերման հանձնարարական պլանային ցուցանիշը: Վերջինիս հիման վրա կազմվում է հատատեղի ֆոնդը՝ ըստ ծավալի, տարածքի և տեսականու: Ընդգրկում է անտառօգտագոծման բոլոր եղանակներից ստացվող փայտանյութի ծավալը, ընդհուպ մինչև մեռած, գետնատապալ ծառերի ծավալը:

SAPԵԿԱՆ ՕՂԱՎՆԵՐ, *Годичные слои (кольца); annual rings*

Առաջանում են կամբիումի բջիջների կիսվելուց, որոնք դեպի ներս վեգետացիայի ընթացքում առաջացնում են բնափայտ, իսկ դեպի դուրս՝ ֆլոեմայի շերտ: Վեգետացիայի սկզբում բնափայտում առաջանում են համեմատաբար խոշոր, իսկ ամռանը՝ մանր բջիջներ: Ընդլայնական կտրվածքում դրանք նշմարվում են բաց և մուգ գույներով, ինչը և տեսանելի է դարձնում տարեկան աճի սահմանները:

SAPՓԱՍՏԱՆ, *Степь; steppe*

Հիմնականում դաշտավուկազգիների ներկայացուցիչների համակեցություններից կազմված բիոմ: Տարածված է բարեխառն լայնություններում, ինչպես Գյուսիսային, այնպես էլ Հարավային կիսագնդերում: Բնորոշվում է ցուրտ և բավականին երկարատև ձմեռներով, շոգ ամառային կլիմայով, 200-ից մինչև 550 մմ տեղումների տարեկան գումարով (տեղումները բաշխված են միջերկրածովյան ռիթմով): Գյուսիսային Ամերիկայում տափաստանների անալոզը պրերիաներն են, Հարավային Ամերիկայում՝ պամպասները: Բնորոշ են ծառաթփային բուսականության խստոր բացակայությամբ:

SAPՔՍՈՆ, *Таксон; taxon*

Բույսերի կարգաբանական խումբ, որոնք միմյանց հետ կապված են այս կամ այն աստիճանի ազգակցական կապերով և միաժամանակ մեկը մյուսից բավականաչափ մեկուսացած են՝ այս կամ այն տաքսոնոմիական միավոր շնորհիլու համար (տեսակ, ցեղ, ընտանիք...): Ի տարբերություն տաքսոնոմիական կատեգորիայի՝ տաքսոն ասելով հասկանում ենք կոնկրետ կենսաբանական օբյեկտներ՝ «պտերներ», «գետնամուշկներ» և այլն, որոնք հանդիսանում են դասակարգման օբյեկտներ: Այսպիսով, «տեսակ», «ընտանիք» և այլն տաքսոններ չեն հանդիսանում, սակայն կոնկրետ տեսակը (ասենք՝ արևելյան սոսի) տաքսոն է:

SAPՔՍՈՆՈՍԻՎԱԿԱՆ (ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ) ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ, *Таксономические категории; taxonomical categories*

Կարգաբանության բնագավառում ընդունված հասկացություն՝ ընդգծելու համար բույսերի ստորադաս խմբերը՝ ըստ ազգակցական աստիճանի: Տ.Կ.-ներ են շնորհվում տարբեր մակարդակի կամ աստիճանի բույսերի խմբերին՝ տաքսոններին:

Ի տարբերություն տաքսոնների՝ Տ.Կ.-ներ ասելով հասկանում ենք ոչ թե կոնկրետ օրգանիզմներ, այլ դասակարգման որոշակի մակարդակ, որոշակի հիերարխիական աստիճաններ:

ՏեխնիկԱԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ, *Техника-рабочий проект; technical-working project*

Կանաչապատման օբյեկտի նախագծի մշակման փուլ: Ընդգրկում է տարածքի գլխավոր հատակագծի, ուղղածիզ հատակագծման նախագծերի, ինժեներական կահավորման ու ճարտարապետական փոքր ձևերի, նախագծի աշխատանքային գծագրերը: Կազմվում է կանաչապատման ոչ մեծ օբյեկտների համար:

ՏեխնիկԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ, *Технический проект; technical project*

Կանաչապատման օբյեկտի նախագծի մշակման փուլ: Ընդգրկում է գլխավոր հատակագիծը, ծառաբանական, ուղղածիզ հատակագծման, ինժեներական կառուցվածքների ու կահավորման և այլ առանձին նախագծերը, ինչպես նաև օբյեկտի շինարարության նախահաշիվը: Կազմվում է մեծ պարտեզների, զբոսայգիների, անտառպուրակների, ինչպես նաև կարևոր նշանակություն ունեցող կանաչապատման օբյեկտների համար:

ՏեխնիկԱՄՐՏԱԳՐԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆ, *Техпромфинплан; technical-production financial plan*

Չիմնարկ-ծեռնարկության արդյունաբերական, տեխնիկական, ֆինանսական և կոլեկտիվի սոցիալ-տնտեսական զարգացման գործունեության համակողմանի պլան: Տ.Պ. եետապնդում է արտադրական միջոցների արդյունավետ օգտագործման միջոցով կատարել պլանային առաջադրանքները: Այն մշակվում է՝ ելնելով գործող տեխնիկատնտեսական նորմատիվներից: Անտառտնտեսությունում Տ.Պ. բաղկացած է միմյանց հետ շաղկապված 3 բաժիններից՝

- ընդհանուր տնտեսական պլաններից ու նախահաշիվներից
- անտառտնտեսական պլաններից ու նախահաշիվներից
- արտադրական գործունեության պլաններից ու նախահաշիվներից:

ՏեխնիկԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՅԱՆԻՇ, *Технико-экономический показатель; technical-economical parameter*

Կանաչապատման օբյեկտի պլանավորման արժեքի վիճակը, արդյունավետությունը և որակը բնորոշող հիմնական տվյալներն արտահայտող բացարձակ կամ հարաբերական թվային ցուցանիշ:

ՏեխնՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔ, *Технологический коридор; technological corridor*

Բացում են խնամքի հատումների համար նախատեսված երիտասարդ ծառուտներում տեխնոլոգիական սարքավորումների շարժի և կտրած ծառերի դուրսբերման

համար: Տ.Մ.-ի լայնությունը և միջանցքների միջև ընկած տարածությունը պայմանվորված է ծառերի բարձրությամբ՝ 5 մ բարձրության դեպքում միջանցքի լայնությունը 2 մ՝ միջանցքների միջև ընկած տարածությունը՝ 10մ: 10մ ծառի բարձրության դեպքում՝ համապատասխանաբար՝ 3 մ և 20 մ: Եթե ծառերի բարձրությունը 11 մ-ց ավելի է, ապա միջանցքի լայնությունը չի փոխվում, իսկ նրանց միջև ընկած տարածությունը հասցվում է 40 մ:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՇԵՂ, *Цвета технологическая; technological chips*

Որոշակի չափսի և ձևի փայտի տաշել, որն օգտագործվում է ցելյուլոզի արդյունաբերության մեջ, փայտե սալիկների պատրաստման, անտառաքիմիական հիդրոլիզի նյութեր ստանալու համար: Պատրաստում են կեղևը հանած ցածրարժեք բնափայտից, բարձրարժեք բնափայտի եզրատախտակներից, ծողափայտերից, տախտակի կտորներից:

ՏԵՂԱԾՈՒՄ, *Разбивка; break down*

Կանաչապատվող հողամասում, անմիջապես բնության մեջ, նախագծի իրականացման առաջին փուլ: Ըստ մաշտաքի, հողամասում նշում են հիմնական կետերը, ճանապարհները, ապագա կառույցի տեղերը, հաղորդակցության ուղիները, ծաղկանոցները, մանրապուրակները և այլն: Պահանջվում է մեծ հմտություն՝ նախագծից չջեղվելու համար:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ, *Топографическая карта; Topographic map*

Տեղանքի սահմանափակ հատկություններ ցույց տվող քարտեզ, որտեղ սակայն պարտադիր ցույց են տրված ռելիեֆը, ջրագրական ցանցը, ճանապարհները և որոշ այլ մանրամասներ:

ՏԵՂԱԴԻՐՔ (ՏՈՊՈԼՈԳԻԱ), *Топология; Topology*

Տարածության մեջ վեկտորային օբյեկտների դասավորությունը իրար նկատմամբ:

ՏԵՂԱԹԻ ԳԱՆՈՒՅԹ, *Съемка участка; plot (area) survey*

Կանաչապատման նախագծման ամենասկզբնական՝ հատակագծի հիմքի պատրաստման փուլ: Կատարվում են հորիզոնական, ուղղածիզ և տեղագրական հանույթներ: Գորիզոնական հանույթի ժամանակ, առանց ռելիեֆի մանրամասերի, որոշվում է հողամասի հաստատուն (անշարժ) առարկաների միայն եզրագծերի ձևերը, չափերը և փոխադարձ դասավորությունը: Երբ կատարվում է միայն ռելիեֆի մանրամասերի որոշումը, ապա դա ուղղածիզ հանույթ է: Տեղագրական հանույթի ընթացքում միաժամանակ որոշում են ինչպես առարկաների եզրագծերը, այնպես էլ ռելիեֆի մանրամասերը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԿՐԻՏԵՐԻԱԿԱՆ ՍԵՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, *Информационная система; Information system*

Որոշակի չափանիշներով ստեղծված տվյալների համակարգ, որից հնարավոր է հարցումների օգնությամբ պատասխաններ ստանալ:

ՏԵՂՈՒՄՆԵՐ (ՍՁՆՈՒՆՈՐՏԱՅԻՆ), Օսадки (атмосферные); precipitation

Ջուր (հեղուկ կամ կարծր վիճակում), որը տեղում է մթնոլորտից: Լինում են հորիզոնական (ցող, եղյամ) և ամպերից տեղացող (անձրև, ձյուն): Անտառի ֆիզիոլոգիական պրոցեսներում ունեն կարևոր դեր: Տ.-ի հետ միասին մթնոլորտից թափվում են նաև հանքային տարրեր՝ ամֆակ, ազոտական թթուների աղեր և այլ նյութեր: Տ. պահպանում են հողածածկը սառչելուց, բույսերի ծիլերը՝ ցրտահարությունից, ծնեալից հատումների ժամանակ մատղաշը կտորվելուց: Անտառի կողմից օգտագործվող Տ.-ի նվազագույն քանակությունը կազմում է տարեկան 150-700 մմ, բարեխառն գոտում՝ մոտ 400 մմ: Արևելյան Սիբիրում անտառն աճում է տարեկան նվազագույնը 200 մմ Տ.-ի պայմաններում:

ՏԵՂԱՓՈՒՆՈՒՄ (ՈՒՂԵՍԵՐՉՈՒՄ), Трележка; skidding

Հատած ծառերը ճյուղերով կամ փայտանյութի տարրեր տեսականու տեղափոխումը հատատեղից մինչև անտառանյութի բարձման բազա՝ տրակտորներով, վերհան և փոխադրող այլ մեքենաների ու մեխանիզմների օգնությամբ: Լեռնային մեծ թեքության պայմաններում բնափայտը հաճախ տեղափոխում են անտառանյութի տեսականու վիճակով, կենդանի քարշող ուժի, փորակի կամ մավրանի օգտագործմամբ:

ՏԵՍԱԿ, Буд; species

Գենետիկական միանման ծագումով օրգանիզմների միացություն՝ օժտված մորֆոլոգիական և էկոլոգիական միևնույն հատկանիշներով: Բույսերի և կենդանիների կարգաբանության հիմնական ցուցանիշն է: Յուրաքանչյուր Տ. պատկանում է որոշակի ցեղի: Յուրաքանչյուր Տ. ունի իր կենսաքիմիական բնույթը, ֆիզիոլոգիական ռեակցիան, բազմացման և տարածման առանձնահատկությունները:

ՏԵՍԱԿԱԿԱԶՄ, ՏԵՍԱԿԱՄԻ (ՏԵՍԱԿԱՇԱՐ), Ассортимент, Видовой состав; assortment, species composition

Տվյալ վայրի կանաչապատման կամ կանաչապատման որոշակի օբյեկտի ստեղծման ժամանակ օգտագործվող բույսերի տեսակային, ցեղային կազմը:

ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆ, Видовая высота; species height

Որոշվում է տվյալ տեսակի հասուն ծառերի բացարձակ բարձրությամբ:

ՏԵՍԱԿԱՏՈՒՄ ԱՐՅՈՒՄԱԿՆԵՐ, *Сортиментные таблицы; log classification tables*

Տարբեր ծառատեսակներից, տարբեր չափի և որակի փայտանյութի տեսակաճու ստացման՝ աղյուսակի ծևով տրված նորմատիվ տվյալներ: Տ.Ա. կազմվում են փորձափարպարակներում վերցված մոդելային ծառերի մշակման տվյալների հիման վրա: Օգտագործվում են անտառահատման ֆոնդը զմահատելիս, որպեսզի գլխավոր և միջանկյալ անտառօգտագործման ժամանակ հաշվարկեն սպասվելիք տեսակաճու շինափայտի չափը, տեխնոլոգիական մշակման ենթակա փայտանյութի ելքը:

ՏԵՍԱԿԱՆՈՒ ՊԼԱՆ, *Сортиментный план; log classification plan*

Ըստ տեսակաճու անտառից բնափայտի դուրսբերման պլան: Տեսակաճու չափերը և որակը (տրամագիծը, երկարությունը, թույլատրելի արատները և այլն) որոշվում են պետական ստանդարտներով և պատվիրատուին են հանձնվում համաձայն նախօրոք հաստատված պլանի, որի հիմքում ընկած են փայտանյութի տարեկան ծավալից արժեքավոր տեսակաճու առավելագույն ելքը, բնափայտի ռացիոնալ օգտագործումը:

ՏԵՍՈՂԱԿԱՆ (ԱԿՆԱԴԻՏԱԿԱՆ) ԳՆԱԳԱՏՈՒՄ, *Визуальная таксация; visual-based inventory*

Անտառի նկարագրությունն ինքնաթիռից կատարվող դիտարկումների միջոցով: Անտառային զանգվածի վրա 1-1.5 կմ զուգահեռ չվերթեր կատարելով՝ անտառզմահատողը կազմում է տեղանքի հատակագծի ուղվագիծը և անտառի ակնադիտական նկարագրությունը:

ՏԵՐԵՎ, *Лист; leave*

Բույսի հիմնական վեգետատիվ օրգաններից, որի գլխավոր ֆունկցիան ֆոտոսինթեզն է:

ՏԵՐԵՎԱԹԱԾ, *Листопад; leaf fall*

Ֆիզիոլոգիական պրոցես, որը պայմանավորված է տերևների ծերացումով: Լայնատերև սաղարթավոր տեսակների տերևները թափվում են գրեթե միաժամանակ, մինչդեռ ասեղնատերևավորների տերևները թափվում են աստիճանաբար: Սովորաբար բարեխառն գոտում աճող լայնատերև սաղարթավոր տեսակների տերևներն ապրում են մեկ վեգետացիոն սեզոն, երբեմն 2-5 տարի: Տերևաթափից առաջ տերևներում տեղի են ունենում կենսաքիմիական, ֆիզիոլոգիական և կառուցվածքային խորը փոփոխություններ:

ՏԵՐԵՎԱԹԱԾ ԱՆՏԱՈՆԵՐ, *Листопадные леса; leaf fall forests*

Վեգետացիայի համար կլիմայական անբարենպաստ ժամանակաշրջանում տերևաթափ ծառատեսակներից կազմավորված անտառներ: Բնորոշ են կլիմայական քարեխառն գոտում:

ՏԵՐԵՎԱԹՎ ՔՈՒՅՍԵՐ՝ *Листопадные растения; leaf fall plants*

Տարվա որոշակի ժամանակներում՝ աշնանը (թարթխառն լայնություններում), ամռանը (արևադարձային տարածաշրջաններում), տերևաթափ կատարող բույսեր: Տարբերվում են ամառնականաչ անտառներ (տերևները թափվում են ծմռանը) և ծմռանականաչ անտառներ (ծառերը տերևաթափ վիճակում են ամռանը):

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԳՈՒՆԱԹՈՒՆՈՒՄ, *Осеннее расцвечивание листьев; leaves autumn colouring*

Բույսերի վեգետացիայի վերջում տեղի ունեցող սեզոնային երևույթ: Քլորոփլաստները վերափոխվում են քրոմոփլաստների (անտոցիան, կարոտին, քսանտոֆի) կամ քայքայվում են: Առավել ինտենսիվությամբ է արտահայտվում վաղ աշնանային սառնամանիքներից հետո: Համարվում է գեղազարդության կարևոր տարր:

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԱՐՄԱՍՊՈՎՈՒՄ ԿՎԾՈՒԹՅՈՒՆ, *Корнеобеспеченность листьев; root-coverage of leaves*

Սեկ միավոր տերևների մակերեսին ընկնող ֆիզիոլոգիական ակտիվ արմատների ցանակը: Ցույց է տալիս երկու մետարոլիկ օրգանների՝ տերևների և արմատների ֆունկցիոնալ կապի ակտիվությունը: Տերևների Արմատապահովվածություն տերմինն առաջին անգամ օգտագործել է ակադեմիկոս Վ. Ղազարյանը 1989թ.: Այս ցուցանիշը բույսի օժտոգնեցիկ ընթացքում փոփոխվում է: Գերհատուն ծառերի դեպքում նվազագույնն է:

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԹԱՈՒՍՈՒՄ, *Увядание листьев; leaf wilt, leaf flac*

Հանդիպում է թեղազգիների ներկայացուցիչների, եղևուռ և այլ տեսակների ծառուտներում: Հետևանք է սնկերի կենսազորոններության: Առաջանում է հողի չորության, ցրտահարության և այլ պատճառներով:

ՏԵՐԵՎՆԵՐԻ ԽԱՅՏԱԲՆՏՈՒԹՅՈՒՆ, *Пестролистность; variegation*

Բուսական պիգմենտների կրած փոփոխությունների հետևանքով տերևների գույնի փոփոխություններ (սպիտակ-մարմարավուն, դեղին սպիտակավուն, կարմրավուն և այլն), որոնք զեղեցիկ տեսք է տալիս սաղարթին և բարձր գնահատվում գեղազարդային պարտիզազորության բնագավառում:

ՏԻԵԶԵՐՎԱԿԱՆ ՆԿԱՐԱՅԱՆՈՒՄ, *Спутниковая съемка; Satellite photography /imaging*

Տիեզերական նկարահանումը սկսվում է 150 կմ բարձրությունից և իրականացվում է այն արբանյակից, որը երկնային մեխանիկայի օրենքներով տեղաշարժվում է խիստ որոշակի ուղծերով: Այս պատճառով, ի տարբերություն ինքնաթիռների, արբանյակների մանևրումակությունը խիստ սահմանափակ է:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, *Автоматическая классификация космического снимка; Unsupervised classification of satellite image*

Տիեզերական պատկերի դասակարգում պիքսելների սպեկտրալ անդրադարձման ցուցանիշների ավտոմատ դասակարգման հիման վրա: Պատկերի վերլուծման համակարգչային ծրագիրը սպեկտրալ նույն ցուցանիշներ ունեցող պիքսելները խմբավորում է նախօրոք նշված որոշակի թվով խմբերի մեջ:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՎԵՐԱԳՍԿԵԼԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, *Контролируемая классификация космического снимка; supervised classification of satellite image*

Տիեզերական պատկերի դասակարգում պիքսելների սպեկտրալ անդրադարձման ցուցանիշների ցանկալի ու վերահսկելի դասակարգման հիման վրա: Պատկերի վերլուծման համակարգչային ծրագրին խնդիր է տրվում որոշակի տարածքի սպեկտրալ նույն ցուցանիշներ ունեցող պիքսելները խմբավորել, նախօրոք նախանշված, որոշակի թվով խմբերի մեջ:

ՏԻՐՈՍ, *ТИРОС (Спутник телевизионного и инфракрасного наблюдения); TIROS (Television and Infrared Observation Satellite)*

ՏԻՐՈՍ-ը (Tiros) ԱՄՆ 20-րդ դարի 60-ական թվականների առաջին օդերևութաբանական արբանյակների սերունդն էր, որ հեռուստատեսային և ինֆրակարմիր տիրույթների ուսումնասիրմամբ հիմք դրեց ոչ միայն ամպամածության, այլ նաև երկրի մակերևույթի դիտարկումներին:

ՏՆԿԱՄԱՍ, ՔԱՌԱՎՈՒՄԻ, *Квартил; compartment*

Պարտեզպուրակային կոմպոզիցիայի դեռևս միջնադարում օգտագործված տարր: Զբոսայգու մի հատվածն է՝ ծաղկանոցներով, տաղավարիկներով, արձաններով, բնատեսարանային բլուրներով, գեղազարդային ծառափային բույսերի տնկարանի մի հատված, անտառպուրակի տարածքի մի հատված:

ՏՆԿԱՆՅՈՒԹ, *Посадочный материал; planting material*

Ծառերի և թփերի սերմնաբույսեր և տնկիներ, որոնք աճեցվում են տնկարանում՝ սերմերից, կտրոններից, արմատային ընձյուղներից: Որպես Տ. օգտագործում են նաև անտառի սաղարթի տակ աճած սերմնաբույսերն ու արմատային ընձյուղները: Տ. օգտագործում են մերկ արմատներով կամ հողի հետ: Տ. են համարվում նաև ծաղկաբույսերի սածիլները, արմատածիլերը, կոճղարմատները և սոխուկները: Տ. պետք է լինի առողջ, չունենա մեխանիկական վնասվածքներ և չպիտրով համապատասխան պետական ստանդարտին:

ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԹԱՂՈՒՄ, *Прикопка посадочного материала; helling*

Ծառափային տեսակների տնկիների և սերմնաբույսերի պահումը հանելուց մինչև տնկման ժամանակաընթացքը: Տ.Թ. կատարում են 20-40 սմ խորությամբ,

ցուրտ շրջաններում՝ հեռացնելու ավելորդ խոնավությունը, բարելավելու հողի ջերմային ռեժիմը: Ելնելով հողակլիմայական պայմաններից, աճեցվող ծառերի ու թփերի տեսակային առանձնահատկություններից՝ կատարվում են խնամքի հետևյալ աշխատանքները՝ հողի մուլչապատում, փխրեցում, քաղիան, սերմնաբույսերի ստվերում, ոռոգում, անհրժեշտության դեպքում՝ բուժում:

ՏԼԿԱՐԿ, *Насаждения; stand (plantation, planting)*

Արհեստական հիմնադրած անտառային միատարր զանգված: Կարելի է քննաթաղել նաև որպես որոշակի սահմաններում անտառզնահատման տարրերով միատարր, շրջապատից տարրերվող բնական անտառային զանգված:

ՏԼԿԱՐԿՆԵՐԻ ԽՆԱՍՔ, *Уход за насаждениями; planting management, stand maintenance*

Ամբողջ տարվա ընթացքում կանաչապատման օբյեկտներում անցկացվող ագրոտեխնիկական միջոցառումների կոմպլեքս: Ընդգրկում է ժամանակին կատարվող քաղհանները, պարարտացումը, հողացրումը, բույսերի ծնունդից նախապատրաստումը, ոռոգումը, էտումը, մաքրումը: Ստորաբաժանվում է ետտնկումային (ծառերի ու թփերի տնկումից անմիջապես հետո՝ առաջին 2-3 տարվա ընթացքում, մինչև բույսերի լրիվ արմատակալումը) և բուն շահագործման (տնկարկների գոյության ամբողջ ժամանակաշրջանում) խնամքի:

ՏԼԿԱՐԿՆԵՐԻ ԽՈՒՄԲ, *Группа насаждений; stands group*

Ծառաթփային բույսեր, որոնք տնկվում են իրարից որոշակի հեռավորության վրա և նախազծողի մտահղացմանը համապատասխան որոշակի կոմպոզիցիոն դեր են խաղում պարտեզի, զբոսայգու բնապատկերի ստեղծման մեջ: Սովորաբար նախատեսվում են անտառազերերին, մարզագետնիկներում, բացատներում, կաժանների շրջադարձերի մոտ: Ստորաբաժանվում են ըստ տեսակային կազմի (միատեսակներ կամ բազմատեսակներ), ըստ մեծության (ոչ մեծ՝ 3-5 ծառ, խոշոր՝ 11 և ավելի ծառ, ուրոնք տարածությամբ չեն գերազանցում ծառերի բարձրությունը), ըստ հոծության և ցացկենության (հոծ, փնջային, միջանցիկ, ծանծաղ տնկարկներ և այլն):

ՏԼԿԱՐԿԻ ԿԱԶՄ, *Состав насаждения; stand composition (stock, structure)*

Արհեստական անտառների տեսակային կազմը, որը կարգավորվում է նախօրոք մշակված սխեմայով՝ ելնելով հիմնադրվող տնկարկի նպատակայնությունից: Որոշվում է 10 բալային սանդղակով, որը ցույց է տալիս ծառատեսակների քանակական հարաբերությունը տնկարկում (տոկոսներով):

ՏԼԿԱՐԿԻ ԿԱՌՈՒԹՎԱԾՔ, *Строение насаждения; stand structure*

Ծառուտում ծառերի դասակարգումն ըստ բարձրության, հաստության և ծավալի: Տ. Կ. -ի գործնական կիրառման համար մշակված են հատուկ աղյուսակներ:

ՏԵԿԻ, *Саженец; transplant, sapling*

Աբրժիբից կամ կտրոնների տնկարանի դպրոցական բաժնում աճեցրած ծառերի երիտասարդ բուսակներ: Անտառային տեսակների տնկիները սովորաբար օգտագործում են բնակավայրերի կանաչապատման ու պարկաշինական նպատակներով:

ՏԵԿԻՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԳԱՆՈՒՄ, *Пикировка саженцев; picking out of saplings*

Այգեգործության մեջ ընդունված եղանակ, որը նպատակ ունի խթանել հոծ արմատային համակարգի զարգացումը: ՏԵԿԻՆԵՐԻ տեղափոխման ժամանակ արմատի մի մասը հատվում է:

ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱԿ, *Возраст хозяйственного; economical age*

Պայմանավորված է ծառի տարիքով և աճման գործոններով: Ծեր ծառերի կամ վատ պայմաններում գտնվող երիտասարդ ծառերի տարեկան օղակների աճը խիստ կրճատվում է (ընդլայնական աճի տեմպն ընկնում է): Նշված ծառերի համար, բացի իրական բացարձակ տարիքից, ընդունված է հաշվարկել նաև տնտեսական տարիքը, հետևյալ բանձնով՝

$$a_{տնտ.} = \frac{(a_{իրական} - a_{օղակած մասի})}{a - d^1}$$

որտեղ a -ն ծառի տարիքն է, d -ն բնի տրամագիծն առանց կեղևի, d^1 -ը ճնշված մասի տրամագիծը:

ՏԵՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ, *Хозяйственная часть; economical part*

Անտառային ֆոնդի տնտեսակազմակերպչական միավոր: Անտառտնտեսության կամ անտառարդյունաբերության տարածքի մաս, որը տնտեսական և արդյունաբերական առումով միատարր է: Անտառի Տ. Ա.-երի բաժանման հիմքում ընկած է պաշտպանական տեսակետից նրանց կարգերի բաժանումը, տեղաբաշխվածությունը, տրանսպորտային ճանապարհի առկայությունը, հեռավորությունը օգտագործման վայրից: Միևնույն կարգի մեջ մտնող անտառում անտառօգտագործման տարբեր եռօժիմներ կիրառելիս առանձնացնում են 2 և ավելի Տ.Ա.-եր: Օրինակ՝ շահագործման ենթակա 2-րդ կարգի անտառներում առանձնացնում են արդյունաբերական և տեղական օգտագործման նշանակություն ունեցող Տ.Ա.-եր:

ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, *Оборот хозяйства; enterprise turnover*

Ժամանակաշրջան, որի ընթացքում տվյալ տնտեսությունում եղած բոլոր ծառերը, որոնք կարող էին իրացվել, հատվում են և փոխարինվում նույն ծառատեսակով, տվյալ պայմանների համար բնորոշ արտադրողականություն ունեցող նոր սերնդով: Տ.Ե. ընտրովի հատումներից տարբերվում է նրանով, որ այս դեպքում հատվում և վե-

րականգնվում է տնտեսության ամբողջ անտառը, իսկ ընտրովի հատման դեպքում՝ միայն անտառամասը:

ՏՈՊԻԱՐ ԱՐՎԵՍ, *Топиарное искусство; topiar art*

Ծառերի և բույսերի ձևավոր խուզման, դրանց՝ կենդանիների և ուրիշ երկրաչափական ու երևակայական ձևեր տալու արվեստ: Այդպիսի մշակումը լավ են տանում ազնիվ դափնին, կենսածառը, կիպրոսը և սաղարթի մանր ֆակտուրա ունեցող այլ բույսեր:

ՏՐԱՍԽԵԻՆԵՐ, *Трахеиды (прободящие ткани); tracheida*

Պրոզենքիմային մեռած բջիջներ, ծայրերում սեղմված, թաղանթները հաստացած և լիզնիֆիկացված, ծայրերին ունեն երիզված ծակոտիմեր: Մտնում են քսիլեմայի կազմի մեջ (բացառություն են կազմում որոշ ծածկասերմեր) և կատարում են ջուր փոխադրող ու մեխանիական ֆունկցիա: Կախված թաղանթի հաստացման բնույթից՝ տարբերում են օղակաձև, պարուրաձև, աստիճանաձև, ցանցաձև, կետածակոտիմերով և պարուրակետածակոտիմերով տրախեիդներ: Տե՛ս նաև Փոխադրող հյուսվածքներ:

ՏՐԱՄԱԽԱՉՈՒՄ, *Скрещивание; mating, crossing*

Հիբրիդային, զույգ ճնդղական ձևերի հատկանիշները կրող սերմնային սերնդի (նոր տորտերի և տեսակների) ստացման մեթոդ: Լայնորեն օգտագործվում է կանաչ շինարարության մեջ:

ՏՐԱՆՍՊԻՐԱՑԻԱ, *Транспирация; transpiration*

Բույսի կողմից ջրի ֆիզիոլոգիական գոլորշիացում: Հիմնականում կատարվում է տերևների կողմից՝ հերձանքների միջոցով, որոնց բացվելով և փակվելով կանոնավորվում է Տ.-ի ինտենսիվությունը: Կատարվում է նաև ծածկող հյուսվածքների տերևամաշկի (կուտիկուլայի) միջոցով, որի ինտենսիվությունը 10-20 անգամ թույլ է տերևների Տ.-ից: Այն անհրաժեշտ պայման է ապահովելու բույսը ջրով և նրա մեջ լուծված հանքային աղերով, պահպանելու տերևները տաքանալուց: Առավելագույն Տ. տեղի է ունենում կեսօրին և տարվա շոգ եղանակին, նվազագույնը՝ վաղ առավոտյան: Չմոռանը մշտադալար և առանձնապես տերևաթափ տեսակների Տ. խիստ կրճատվում է: Ջրի այն ջանակը, որը ծախսվում է 1 գ օրգանական նյութ սինթեզելու համար, կոչվում է Տ.-ի գործակից, որը ծառատեսակների դեպքում հավասար է 150-350-ի, ընդ որում՝ լուսասեր տեսակների գործակիցը, համեմատած սովորատար տեսակների հետ, քարձր է:

ՏՈՒՆԴՐՈՒՄ, *Tundra; tundra*

Բիոմի տիպ: Տարածված է բևեռային գոտում: Չլավորվել է ցուրտ, խոնավ հողերում հավերժ սառցապատման պայմաններում: Տ.-ին բնորոշ է անտառի բացակայությունը:

ՏՈՒՆԳՈՐ, *Tyrsop; turgescence*

Բույսի ջրային ուժեղացումը, որը ցույց է տալիս բարձր ջրահագեցվածության պայմաններում բջջի պարունակության ճնշումը նրա պատերի վրա:

ՑԱԾՐԱԲՈՒՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Низкоствольные леса; coppice forests*

Դիմնականում կոճղաշիվային ծագում ունեցող անտառներ, որոնք համեմատած միևնույն պայմաններում նույն տեսակի սերմնային ծագում ունեցող անտառների հետ, օժտված են ցածր արդյունավետությամբ:

ՑԱԾՐԱԲՈՒՆ ԾԱՌԵՐ, *Низкоствольники; coppice*

Կոճղաշիվային ծագում ունեցող ծառեր, ինչպես նաև կարծարուն ծառատեսակներ:

ՑԱԾՐԱԳ ԾԱՌ ԿԱՄ ԹՈՒԹ (ԱՏԱՆԻԿ, ՓՈՎԱԾ, ԳԵՏԱՏԱՐԱԾ), *Стланик; elfin woodland*

Աճման այսպիսի ձևերը հատուկ են մերձբևեռային և բարձրլեռնային բույսերին (օր.՝ բևեռային ուռենի, մրտավարդի տեսակներ, սիբիրյան մայրու (սոճու) այլատեսակ, կազակական և ցածրաճ գիհիներ, հորիզոնական չմեմի, օրոճի տեսակներ և այլն):

ՑԱԾՐԱԲՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, *Низкоствольное хозяйство; coppice enterprise*

Անտառտնտեսվարման եղանակ, որը տարվում է կոճղաշիվային և արմատամաքառային ծագում ունեցող ծառուտներում: Անտառատունը կատարվում է համեմատաբար երիտասարդ հասակում, որի հետևանքով անտառը վերականգնվում է վեգետատիվ՝ կոճղաշիվային ճանապարհով: Նման տնտեսվարման ժամանակ ծառերը ստացվում են ցածրահասակ, նվազ արդյունավետությամբ, այդ պատճառով էլ կոչվում են ցածրաբուն: Յ.Տ. կիրառում են բնաշիվային ծագում ունեցող կարինետներում, ցածր ունակությամբ օժտված ծառատեսակներից (կեչի, բոխի, դաժի, լորենի, կաղամախի և այլն) կազմավորված ծառուտներում: Կոճղաշիվային վերականգնման համար կարևոր են ծառի հասակը, հատման ժամանակը և կոճղի բարձրությունը:

ՑԱԾՐԱՐԺԵՔ ԾԱՌՈՒՏՆԵՐ (ՏՆԿԱՐԿՆԵՐ), *Малоценные древостои (посаждения); low-valuable stands (plantations)*

Ուռենու, բարդու, լաստենու և այլ ցածրաբույս ծառատեսակներից կազմավորված ծառուտներ:

ՑԱՅՏԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ, *Контраст; contrast*

Պարտեզպուրակային արվեստում կիրառվող տեսողական հնարք: Առաջին պլան են մղվում լանդշաֆտի կարևորագույն տարրերը կամ բաղադրիչ մասերը և

դրանով ընդգծվում են այլի ընկնող մանրամասերը: Այդ հնարքի կիրառման կարևոր պայմանն է բնական և ներդաշնակության չափի պահպանումը, հակառակ դեպքում ցայտերանգությունը կարող է վնասել գեղարվեստական կոմպոզիցիաներին՝ դրանք դարձնելով անբնական ու տգեղ: Օրինակ՝ ներդաշնակ ցայտերանգություն է ստացվում, երբ բլրի կողքին հարթություն է տեղադրված, երբ գնդաձև սաղարթով ծառի կողքին բրգաձև ծառ է (ուրվագծային ցայտերանգություն), երբ կանաչ սաղարթ ունեցող ծառը տեղադրված է արծաթագույն սաղարթ ունեցողի մոտ (գունային ցայտերանգություն), կամ փշատերև ծառը՝ լայնատերևի հարևանությամբ (ծավալային ցայտերանգություն) և այլն:

ՅԱԼԿԱՇԱՐ, *Шпалера; trellis, lane*

Խիտ տնկված ցածրահասակ ծառերի կամ թփերի շարք՝ խուզված պատի նման կամ հենարանների վրա: Հենարան է ծառայում փայտե կամ երկաթե ցանկապատը կամ մի քանի շարքով ձգված և սյուներին ամրացված մետաղալարը:

ՅԱԼԿԱՇԱՐԱԹՈՒՓ, *Шпалерный кустарник; espalier bush*

Թփերի ձև, որը ստացվում է մի որոշակի հարթության վրա պարբերաբար խուզման շնորհիվ: Լայնորեն օգտագործվում է խաղողի այգիներում, ինչպես նաև պտղապատ և այլ բույսերից ցանկաշարեր, պատատավանդակներ ստեղծելիս:

ՅԱԼԿԱՊԱՏ, *Ограда; fence, fencing*

Պարտեզպարտակային շինություն: Նախատեսված է մարդկանց, կենդանիների, տրանսպորտային միջոցների և այլնի ազատ ելումուտը զբոսայգու տարածք սահմանափակելու համար: Կանաչ շինարարությունում օգտագործվում են կանաչ ցանկապատեր, եզրազարդեր, ծաղկաշղթաներ, պատատաճյուղեր և փաթաթվող բույսերից ստեղծված պատեր:

ՅԱԼՑԿԵՆՈՒԹՅՈՒՆ, *Ажурность; ajour*

Ինչպես առանձին ծառերի ու թփերի, այնպես էլ ամբողջ տնկարկի (ծառերի խումբ, ծառուղի, պաշտպանական գոտի) սաղարթներում լուսաշերտերի քանակը բնութագրող ցուցանիշ:

ՅԱԼՔԱԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ, *Густота, посадка; sowing density*

Յույց է տալիս 1 գծամետրում եղած սերմնաբույսերի քանակը:

ՅԱԼՔԱԻ ՔԱՄԵՏԱՐՈՒՄ, *Ветывание, посадка; sowing wind-blow*

Ցանքը ծածկող հողաշերտի քամետարում: Տեղի է ունենում չոր եղանակին ուժեղ քամիների հետևանքով՝ ավազային, տորֆային և փոշիացած սևահողերում:

ՅԵՂ, *Pod*; genus

Կարգաբանական հիմնական կատեգորիա, որն իր մեջ է համախմբում ծագմամբ և ցեղական հատկանիշներով համանման տեսակները:

ՑՈՂՈՒՆ, *Стебель; caulis, stem*

Բույսի հիմնական վեգետատիվ օրգաններից մեկը: Ունի փոխադրյալ դեր (արմատներից դեպի տերևները՝ ջուր և տերևներից արմատ՝ սինթեզված օրգանական նյութեր): Իր վրա է կրում նորմալ կամ ձևափոխված տերևներ, ծաղիկներ և պտուղներ: Ց.-ի ծայրը վերջանում է գազաթնային բողբոջով: Նրան բնորոշ է ճյուղավորումը: Խոտերի Ց. ունենում է խոտային փափուկ, իսկ բնափայտային տեսակների մոտ՝ ամուր բնափայտային կառուցվածք: Որոշ տեսակների Ց.-ին բնորոշ են ձևափոխություններ՝ կոճղարմատ, պալար, փշեր, բեղիկներ, կլադոդներ (տերևանման ցողուններ):

ՑՐՏԱՂԻՍԱԳՎՈՒՆ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ, *Морозостойкие древесные породы; cold-resistant tree species*

Ծառատեսակներ, որոնք տանում են ձմռան ցրտաշունչ պայմանները, դիմանում են ուշ գարնանային և վաղ աշնանային ցրտահարումներին: Ց.Ծ. սովորաբար ցրտահար ճաքեր չեն ունենում, երիտասարդ չփայտացած ճյուղերը չեն ցրտահարվում: Ց. են կեչին, կաղամախին, արոսենին, խշոքառեչ կաղնին և այլն:

ՑՐՏԱՂԻՍԱԳՎՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Морозоустойчивость; frost-resistance*

Ցածր ջերմաստիճաններին դիմանալու բույսերի ունակությունը: Պայմանավորված է միամյա շիվերի խցանաշերտի հասունությամբ և բջիջներում պարունակվող շաքարների քանակությամբ: Հատուկ է հիմնականում հյուսիսային ծագում ունեցող բույսերին:

ՑՐՏԱՀԱՐ, *Морозобои; frosted*

Ծառաբնի վրա երևակայական ճաք, որն առաջանում է ուժեղ սառնամանիքներից բնափայտի արտաքին և ներքին մասերը տարբեր աստիճանով սեղմվելու հետևանքով:

ՑՐՏԱՀԱՐՈՒՄ, *Вымерзание; frost-killing*

Շրջապատող միջավայրի ցածր ջերմաստիճանների հետևանքով բույսերի ոչնչանալը: Պայմանավորված է նյութափոխանակության խախտմամբ և պրոտոպլազմայում սառցաբյուրեղների առաջացմամբ: Նույնը կատարվում է նաև հողը սառչելու և բույսերի վրա ցրտահարության ճեղքեր, արմատային համակարգի պատվածքներ առաջացնելու հետևանքով:

ՅՐՏԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ, *Заморозки; frosts*

Տեղի է ունենում օրվա միջին դրական ջերմաստիճանների պայմաններում, գիշերը հողի մակերեսի ջերմաստիճանի 0⁰-ից ցածր անկման հետևանքով: Ց., որը պայմանավորված է այլ շրջաններից սառը օդի ներխուժմամբ, կոչվում է աղվեկտիվ: Երբ այն տեղի է ունենում գիշերը հողի մակերեսից և քույսերից ջերմության ճառագայթման հետևանքով, կոչվում է ճառագայթման ց.:

ՅՐՏԱԳԱՐ ՓՈՍ, *Морозобойная яма; frost pocket*

Հարթ, փոս ընկած վայր կամ անտառում ծառերով պաշտպանված խոշոր լուսամուտ, որտեղ վատ օդափոխության հետևանքով կուտակվում է սառը օդը: Ց.Փ. հաճախ լինում է խոնավ (սառը) հողային պայմաններում գտնվող խիտ անտառներում: Ց.Փ.-ում մեծ է ցրտահարման վտանգը, որից խուսափելու համար անհրաժեշտ է շրջակա ծառերի նոսրացման միջոցով ստեղծել օդափոխության նորմալ պայմաններ:

ՅՐՏԱՔԱՂՅԿԵՂ, *Морозобойный рак; frost cancer*

Օռոտեսակների հիվանդություն: Յրտահարման պատճառով առաջանում է վերք, որը եզրային մասերի ինտենսիվ աճի հետևանքով ծածկվում է շերտերով: Լինում է բաց, երբ վերքի կենտրոնում մնում է չփակված անցք, փակ, երբ վերքը լրիվ փակվում է:

ՅՅԱՇՈՐ (ԿԱՐԵԳԱՇՈՐ) ԲՈՒՅՍԵՐ, *Cyzocmoï; dead-standing tree*

Այս կամ այն պատճառով չորացած կանգուն ծառ, ծառերի խումբ կամ անտառի զանգված: Հիմնական պատճառներն են՝ քնական ծերացում, անտառածման պայմանների խիստ վատացում, տարերային աղետներ (հրդեհ), հիվանդություններ, վնասատուներով խիստ վարակվածություն և այլն:

ՅՅԱՊԱՏ, *Палисад; palisade*

Փայտե թեթև պատատաճաղային ցանկապատ: Տեղադրվում է ուղղանկյուն կամ քառակուսի բուսկետների եզրերին: Բարձրությունը հավասար է ծառուղու կամ անցուղու լայնության 2/3-ին: Հողի մեջ խրված գերաններով ցանկապատ լանջերի վրա:

ՑՈՒՑԻՉ ԲՈՒՅՍԵՐ, *Индикаторные растения; indicator plants*

Բնական ֆիտոցենոզներում աճող քույսեր, որոնք կարող են որոշակի պատկերացում տալ հողային տիպերի, հողում պարունակվող հանքային նյութերի, զրոնտային ջրերի, հանքային ապարների, հանածոների, հողային լուծույթի ռեակցիայի, հողում պարունակվող աղերի խտության, տվյալ վայրի ջերմաստիճանային ռեժիմի, օդի աղտոտվածության և միջավայրի այլ պայմանների վերաբերյալ:

ՈՒ

ՈՒՂԵԿՅՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿ, *Сопутствующая древесная порода; attendant tree specie, associated tree specie*

Ծառատեսակ, որն աճում է հիմնական անտառակազմող ծառատեսակի հետ՝ հաճախ կազմավորելով 2-3-րդ շարահարկ: Առանձնապես շատ ուղեկցող տեսակներ ունի կաղնի՝ լորենի, թեղի, թխկի, բոխի, հացենի և այլն, որոնք մասնակցում են նրա բարդ ու խառը ծառուտների կազմավորմանը: Աճման բարենպաստ պայմաններում ուղեկցող տեսակը կարող է բարձրանալ առաջին շարահարկ և հանդես գալ որպես անտառակազմող տեսակ:

ՈՒՂՂԱԾԻՐ ԿԱՆԱՉՊՊԱՏՈՒՄ, *Вертикальное озеленение; vertical greening*

Լիանների կամ խուզված ծառերի օգտագործմամբ կանաչապատման եղանակ: Լայնորեն կիրառվում է կանաչ շինարարությունում: Ուղեկցող տարածքի անբավարարության պայմաններում կարճ ժամանակամիջոցում ստանալ կանաչ մեծ մակերես, ինչպես նաև ձևավորել, պահպանել գերտաքացումից, աղմուկից, փոշուց, տարբեր հողամասերը իրարից առանձնացնելու համար ստեղծել կանաչ պատեր:

ՈՒՇ ԾԱՂԿՈՂ ԲՈՒՅՍԵՐ, *Позднецветущие растения; late blooming plants*

Աշնանը և ծնոանը ծաղկող բույսեր (քրիզանթեմներ, գլեռենի ճապոնական, բոնչի ճապոնական, դանձլամեր և այլն):

ՈՒՌԵՆՈՒ ԱՏՏԱՌՆԵՐ (ՈՒՌՈՒՏՆԵՐ), *Ивовые леса (увиаяк); willow forest (willow coppice)*

Ծառանման ուռենիներն առաջացնում են գետահովտային անտառներ, իսկ թփանման տեսակները՝ թփուտներ, ուռուտներ: Ու.Ա. ունեն հակաէրոզիոն, պաշտպանական, սանիտարահիգիենիկ կարևոր նշանակություն: Գետամերձ ձորամիջյան ուռուտները կատարում են կենսաֆիտրի դեր:

ՈՒՐՎԱՆԿԱՐ, *Абрус; outline, draft*

Առարկայի գծային պատկեր, ծառի կամ թփի հողակտորի ուրվագիծ: Կանաչապատման համար արված հատակագիծ, որի վրա նշված են բույսերի տնկման տեղերը, կառույցների, ճանապարհների և այլնի տեղադիրքը:

ՈՒՐՎԱՊԱՏԿԵՐ, *Силуэт; silhouette*

Երկնքի, ջրային մակերեսի կամ քաղաքային շինությունների հանրանկարի վրա առանձին բույսերի, խմբերի, ծառախմբերի ուրվագծային միատուն պատկերում պարտեզպուրակային կոմպոզիցիայում: Ընկալվում է տարածականորեն:

ՈՐՎԱԾՄԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՎԱՍՏՈՐԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ, *Radwobesue culyzotob; silhouettes
balance*

Իրար ներդաշնակ տարրեր ճարտարակերտության ծառերի կամ թվերի զու-
գակցում:



ՓԱԹԱԹՎՈՂ ԲՈՒՅՍԵՐ, *Выщущаемые растения; pack plants*

Աճելով և փաթաթվելով վեր բարձրանալու համար հենարանի կարիք ունեցող լիաններ: Ուղղաձիգ կանաչապատման հիմնական նյութն են: Ատորարածանվում են իսկական փաթաթվողների, մազլցողների և կաջողների:

ՓԱՅՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՓԱՅՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, *Древесиноведение; wood science*

Կենսաբանական գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է բնափայտի կառուցվածքը և հատկությունները:

ՓԱՅՏԱԹԵՓ (ԹԵՓ), *Древесные опилки; saw dust*

Առաջանում է փայտամշակման բոլոր պրոցեսներում սղոցման ժամանակ:

ՓԱՅՏԱԼՅՈՒՐ, *Древесная мука; wood flour*

Ստացվում է բնափայտի թափոնների (թեփ, տաշեղ, երբեմն տերևներ և այլն) մեխանիկական մշակումից: Օգտագործվում է որպես անասնակեր:

ՓԱՅՏԱԾՈՒՄ, *Древесный уголь; charcoal*

Ածխածնով հարուստ ծակոտկեն, կարծր վառելանյութ, որը ստանում են թթվածնազուրկ պայմաններում՝ բնափայտի վրա ջերմաստիճանի ներգործությամբ: Փ.-ի արտադրության համար օգտագործվում են ասեղնատերև և լայնատերև ծառատեսակների բնափայտի չիրացվող թափոնները: Նայած ծառատեսակին՝ 1 խմ բնափայտից ստացվում է 140-180 կգ փ.: Բարձրորակ Փ. ստացվում է ամուր, կարծր բնափայտ ունեցող ծառատեսակներից (կաղնի, հաճարենի, բոխի, դաժի, թեղի, և այլն):

ՓԱՅՏԱՅԱՆԱՆ ԵՆԱՄՊԱՐՅՆԵՐ, *Лесовозная дорога; forest roads, logging roads*

Հատատեղից անտառանյութի վերամշակման կամ ժամանակավոր պահեստավորման կետ տեղափոխման ճանապարհներ: Երբեմն անտառահանման ճանապարհով անտառանյութը հասցվում է անմիջապես սպառողին: Փ.ճ.-ի հիմնական տիպերն են՝ ավտոմոբիլային, որը լինում է գրանիտասալիկային, խճապատ, բետոնային, ասֆալտապատ, բետոնասալիկային, գրունտային, փայտասալիկային, նորմալ կամ նեղ երկաթգծային:

ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԶԱՐԵՈՒՂԻ, *Треловочный валок; skidding way, skidding portage*

Հատատեղում կտրած ծառի կամ անտառանյութի տեղափոխման կարծ ծանապարհ, որի օգտագործումը նպաստում է հողի, անտառի մատղաշի պահպանմանը: Փ.Տ.Ք. լինում է հատատեղային, որը սպասարկում է մեկ հատատեղի, և մագիստրալային, որը միացնում է քարշուղիները քարծման կետերի կամ անմիջական փոխադրման ժամանակ՝ ներքին պահեստի հետ: Հատատեղային քարշուղու լայնությունը 4-8 մ է, մագիստրալայինը՝ 5-8 մ:

ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՏԵՍԱԿԱՆՈՒ ԵՆ, *Выход сортиmenta; log yield*

Որոշվում է մինչև անտառի հատումը՝ ելնելով անտառզնահատման ցուցանիշներից և հատումից հետո ստացվելիք փայտանյութի տեսակաճու հաշվարկով:

ՓԱՅՏՍՏԱՇԵՂ (ՏԱՇԵՂ, *Древесные стружки; wood shippings*

Առաջանում է փայտամշակման որոշակի պրոցեսներում: Ներկայումս փայտանյութի թափոններից և չիրացվող քնափայտի տեսակներից ստանում են Փ.՝ հումք՝ սալիկներ պատրաստելու համար:

ՓԱՅՏԱՅՈՒՄ (ԼԻԳՆԻՖԻԿԱՅԻԱ), *Одревеснение; lignification*

Բնափայտի մեխանիկական, քիմիական և ամրության մեծացման պրոցես, որը տեղի է ունենում բջջապատերում լիգնինի ներծծման և մեխանիկական հյուսվածքների ավելացման շնորհիվ:

ՓԱՐՈՍԱՅԻՆ (ՈՆԶԵՐԿԱՅԻՆ) ԾԱՌԵՐ, *Маяковые деревья; reserve trees*

Բարձր արտադրողականության և ժառանգական այլ դրական հատկանիշներով օժտված ծառեր, որոնք գլխավոր օգտագործման հատումների ժամանակ թողնվում են տեղում՝ անտառի քնական սերմնային վերարտադրությունն ապահովելու նպատակով:

ՓԱՓԿՏԵՐԵՎԱՎՈՐ ՏԵՍԱԿՆԵՐ, *Мяколиственные породы; softwood species*

Սաղարթավոր ծառատեսակներ, որոնք ունեն փափուկ քնափայտ՝ լորենի, քարդի, լաստենի և այլն:

ՓՆՁԱՆՎՈՒՄ, *Букетная посадка; bouquet planting*

Արագ կերպով տնկարկներ ստեղծելու նպատակով ծառախմբեր ձևավորելու եղանակ: Կատարվում է մեկ քնում մի քանի տնկիներ դնելու միջոցով: Փնջատնկում կարելի է կատարել մեկ կտրված վրա երիտասարդ ծառ տնկելու կամ կողային ընձուղիներ զարգացնելու համար պայմաններ ստեղծելու միջոցով:

ՓՈՆԱՂՐԱՊԱՐՏԵՁ, *Переносный сад; transportable garden*

Կանաչապատման օրյեկտ: Մայթերի վրա, հասարակական շենքերի դիմաց, առևտրական կենտրոններում հանգստի համար առանձնացված ոչ մեծ հատված, որ-

տեղ բուսարկղերով, խեցեղեն և քետոնե ծաղկամաններով ածեցվում են ամառային ծաղկաբույսեր, փաթաթվող բույսեր, գեղեցիկ թփեր:

ՓՈՐՉԱԳՐԱՊՈՐԱԿ, Пробная площадь; sample plot

Անտառածածկ տարածքի հատված, որտեղ կատարվում են անտառի զնախառման ու նկարագրման մանրազնին չափումներ: Փ.-ները տեղադրվում են նաև անտառմշակույթներում գույքագրման նպատակով: Սովորաբար ընտրում են քառանկյունի կամ շրջանաձև՝ տեղադրելով տվյալ տարածքին բնորոշ հատվածում, ընդգրկելով առնվազն 200 ծառ: Փ.-ները լինում են մշտական (որտեղ բոլոր ծառերը յուզաներկերով համարակալվում են) կամ ժամանակավոր:

ՓՈՓՈՒՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Изменчивость; variability

Կենդանի օրգանիզմի հատկություն, ծնողական օրգանիզմներից տարբերվող հատկանիշների ձեռք բերում: Ժառանգականության հետ միասին հանդիսանում է բուսական ու կենդանական օրգանիզմների հիմնական հատկությունը, որն արգասիք է օրգանիզմի ու արտաքին միջավայրի փոխգործության և հանգեցնում է նոր հատկանիշների ու որակի առաջացման: Ներկայումս առանձնացվում է Փ.-յան երեք տիպ՝ մոդիֆիկացիա, մուտացիա և հիբրիդային կոմբինացիա:

ՓՉԱԿ, Дупло; hollow

Ծառաբներում, կմախքային ճյուղերում և հաստ արմատներում քնափայտի քայքայման հետևանքով առաջացած խոռոչ: Լինում է հիմնականում լայնատերև սաղարթավոր գերհասուն ծառերի վրա, մեխանիկական վնասվածք ստացած հատվածներում՝ սապրոֆիտ սնկերի ներգործությամբ, երբեմն մրջյունների ու թռչունների մասնակցությամբ: Փ. հաճախակի ծառայում է որպես թռչունների և կենդանիների թաքստոց ու բազմացման վայր:

ՓՏԱԽՏ, Гниль; rot

Բույսի հիվանդություն, հետևանք է բորրոսասնկերի գործունեության: Առաջացնում է հյուսվածքների մահացում:

ՓՏՈՒՄ, Завиживание; stagnation

Սնկերի գործունեության հետևանքով արմատների, սերմնաբույսերի, սերմերի փտում:

ՔԱՂԱՔԱՄԵՐՉ ԳՆԱԳԱՍԻ ԶՈՆԱ, *Зона пригородного отдыха; suburban recreational zone*

Քաղաքամերձ գոտու ջրատարածությունները, անտառները, լեռներն ու մարզագետիկները ընդգրկող և քաղաքային բնակչության կարճատև կամ երկարատև հանգստի համար օգտագործվող տարածք:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՆՏԱՌՆԵՐ, *Городские леса; urban forests*

Քաղաքամերձ անտառներ, որոնք ունեն մշակութային և առողջարարական նշանակություն: Երանցում արգելվում է մի շարք անտառտնտեսական միջոցառումների, փայտանյութի, խեժի, ծառի հյուսիսի և այլնի մթերման անցկացումը: Ի տարբերություն քաղաքային տնկարկների, Ք.Ա. մտնում են պետական անտառային ֆոնդի մեջ որպես պաշտպանական նշանակության անտառներ: Գաճախ կատարում են անտառապուրակի դեր:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՓՑ, *Городской ландшафт; urban landscape*

Բնական գործոնները՝ ռելիեֆի ձևերը, ջրամբարները, բուսականությունը, քաղաքային կառուցապատման՝ շենքերի, ճանապարհների, ինժեներական կառուցվածքների հետ զուգորդող լանդշաֆտ:

ՔԱՂԱՔԱՇՈՒՆՈՒԹՅՈՒՆ, *Городостроительство; urban construction*

Քաղաքների հատակագծման և կառուցապատման տեսություն և պրակտիկա: Սոցիալ-տնտեսական, շինարարատեխնիկական, ճարտարապետագեղարվեստական, ինչպես նաև սանիտարահիգիենիկ հիմնախնդիրների համալիր: Մեծ դեր են կատարում պարտեզները և զբոսայգիները, որոնք ունեն առողջարարական նշանակություն և ճարտարապետական անսամբլների ձևավորման ակտիվ միջոց են:

ՔԱՂԱՔԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՍՄԱԼԻ ԿԱՆԱՉՊԱՏՈՒՄ, *Комплексное озеленение города, населенного места; complex urban greening*

Կանաչապատման օբյեկտների շինարարության միջոցով քաղաքային բնակչության աշխատանքի, կյանքի, հանգստի հարմարավետ պայմաններ ապահովելու համար համալիր միջոցառումների իրականացում:

ՔԱՂԱՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԿԱՆԱՉՊԱՏՄԱՆ ՍԽԵՄԱ, *Схема озеленения города (населенного места); urban greening scheme*

Պորձառական տարբեր նշանակություն ունեցող կանաչապատված տարածքների ընդհանուր բնույթը և սկզբունքները հատակագծում արտացոլող գծագիր:

ՔԱՍԵՐԻՆՍ ԱՆՏԱՌՈՒՅՐ՝ *Ветроупорная опушка; wind face forest edge*

Անտառի եզրի 20-30 մ շերտ, որն իր վրա է վերցնում հանդիպակաց քամու քա-
ցասական ազդեցությունը:

ՔԱՍԵՍԱՐՈՂ ՏՆՎԱՐԿՆԵՐ, *Затишковые насаждения; wind milderer plantings*

Պաշտպանական անտառների տարատեսակ: Անտառաշերտեր, որոնք հիմ-
նադրվում են չոր տափաստանային, անապատային և կիսաանապատային շրջաննե-
րում, մշտական ու սեզոնային արոտավայրերում՝ գյուղատնտեսական կենդանիների
քամիներից, հողմերից, փոշեմրրիկներից պաշտպանելու նպատակով: Ք.Տ. իրենցից
ներկայացնում են երկու միմյանց հատող անթափանցելի կառուցվածքների անտա-
ռաշերտեր: Եարքերի քանակը շերտում 7 և ավելի է, միջշարքային տարածությունը՝ 3-
5 մ, շարքում բույսը բույսից՝ 1-2 մ:

ՔԱՍԵՋԱՐԴ, *Ветролом; windbreak*

Քամուց ջարդված սաղարթով ծառ: Առավելապես, երբ ջարդված է գազաթնա-
յին ճյուղը:

ՔԱՍԵՏԱՊԱԼ, *Ветрозан; windblown*

Քամուց վայր ընկած ծառ կամ ծառուտի որոշ մաս: Ք.-ման ենթարկվում են մա-
կերեսային արմատային համակարգ ունեցող և արմատային փտախտով հիվանդ ծա-
ռերը: Առանձնապես տուժում են խիտ անտառի հատումից հետո թողնված ծառերը,
ուժեղ քամու (20-25 մ/վրկ արագության) ժամանակ: Ծառի հասակին զուգընթաց Ք.-
ման վտանգը մեծանում է:

ՔԱՐՇԱՆ ԳՈՏԻ, *Зона тяготения; gravitation area (zone)*

Անտառային ֆոնդի այն մասը, որտեղով էկոլոգիական և տնտեսական տե-
սանկյունից նպատակահարմար է անտառանյութի փոխադրումը: Փայտանյութի փո-
խադրման հիմնական ճանապարհի դեպի գետ, պահեստ, փայտամշակման բազա և
այլն: Ք.Գ.-ու առանձնացումը կատարվում է անտառաշահագործման շրջանացման ժա-
մանակ:

ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ, *Картографирование; Cartography*

Քարտեզներ պատրաստելու, օգտագործելու և ուսումնասիրելու գիտություն,
արվեստ և տեխնոլոգիա:

ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, *Картографическая инвентаризация; Map inventory*

Քարտեզագրական գույքագրումը (առանց տաքսացիոն ցուցանիշների որոշ-
ման) նույնպես հենվում է տիեզերական նկարների վերծանման վրա՝ ուղեկցվելով

ընտրովի օդավիզուալ և դաշտային հետազոտություններով: Արդյունքում ստացվում են 1:100 000 և 1:200 000 մասշտաբի անտառային թեմատիկ քարտեզներ:

ՔԱՐՏԵԶԱԳՐՎԱԿԱՆ ՊՐՈՅԵԿՏԻՎՆԵՐ, *Картографические проекции; Map projections*

Մաթեմատիկական որոշակի օրենքներով ու կանոններով երկիր մոլորակի՝ հարթության, թղթի վրա պատկերելու եղանակները: Երկրի, որպես էլիպսոիդի հարթության վրա պատկերելու շատ եղանակներ կան, սակայն դրանք հիմնականում կարելի է խմբավորել երեք տիպերի մեջ ազիմուտային, գլանային և կոնային:

ՔԱՐՏԵԶԻ ՍԱՍԵՏԱՐ, *Масштаб карты; Map scale*

Քարտեզի մասշտաբը դա քարտեզի վրա եղած գծի հատվածի երկարության և տեղանքում նույն հատվածի իրական երկարության հարաբերությունն է: Քարտեզների մասշտաբները արտահայտվում են թվային և գրաֆիկական եղանակներով: Քարտեզներն ըստ մասշտաբի լինում են խոշոր, միջին և մանր:

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՎԵՐԱԾԱԾԿՈՒՄ, *Перекрытие карт; Map overlaying*

Որոշակի տարածքի բազմաթիվ թեմատիկ քարտեզների (միևնույն պոլյեկցիայի, ընդգրկման և մասշտաբի) միաժամանակյա պատկերման հնարավորությունը՝ ամբողջական պատկերացում ստանալու նպատակով:

ՔՍԵՐՈՖԻՏՆԵՐ, *Ксерофиты; xerophytes*

Բույսեր, որոնք կարող են տանել հողի և օդի խոնավության անբավարար քանակությունը՝ ջրի ծավալի կրճատման, ջրակլանողության բարձրացման, հյուսվածքներում ջրի կուտակման ճանապարհով: Քսերոֆիտ բույսերն այդքի են ընկնում խորը թափանցող և հզոր հորիզոնական արմատային համակարգով, հաստ տերևաթիթեղով, տերևների խիտ ջղավորությամբ, թավապատությամբ, խորը նստած հերձանցքներով, բջջահյութի բարձր խտությամբ և այլ հատկանիշներով:

ՔՍԻԼԵՄԱ, *Ксилема; xylem*

Բուսական հյուսվածք, որն արմատներից դեպի տերևներն է փոխադրում ջուր, հանքային նյութեր և արմատային մետաբոլիտներ: Կազմված է փոխադրող (անոթներ, տրախեյաներ, տրախեիդներ) և մեխանիկական (լիբրիֆորմա) տարրերից ու պարենքիմային բջիջներից: Ֆլոեմայի հետ միասին քսիլեման կազմում է բույսի փոխադրող միասնական համակարգը:



ՕՂԱԼՈՒՄԱՆ ԿԱՐՈՒՄՆԵՐՆԵՐ, *Аэрофотосъемка; Aerial photography*

Ինքնաթիռի վրա տեղադրված հատուկ լուսանկարչական սարքի օգնությամբ օդից տեղանքի լուսանկարահանումը կոչվում է օդալուսանկարահանում: Օդալուսանկարը տեղանքի լուսանկարչական պատկերն է, որը լրիվ օբյեկտիվ կերպով արտացոլում է ինչպես մանրամասներն, այնպես էլ ռելիեֆը: Օդալուսանկարահանման կարևոր առանձնահատկությունը տեղանքի եռաչափ, ծավալային պատկերի ստացումն է:

ՕՂԱԼՈՒՄԱՆ ԿԱՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, *Интерпретация аэрофотоснимка; Aerial photo interpretation*

Լուսանկարահանված տեղանքի մասին օդալուսանկարից տեղեկատվության քաղման գործընթացը կոչվում է օդալուսանկարի վերծանում: Օդալուսանկարի վերծանումը մարդու կողմից նկարից ստացած ազդանշանների համակարգված ընկալումն է համեմատությունների շնորհիվ և դասակարգումը որոշակի խմբերում կամ կատեգորիաներում: Վերջինս հիմնված է լուսանկարահանման օբյեկտների ուրվագծերի բնորոշ հատկանիշների, մասնավորապես նրանց ձևի, չափերի, պայծառության, գույնի, մակերևույթի կառուցվածքի վրա:

ՕՂԱԼՈՒՄԱՆ ԿԱՐԻ ԱՆՈՒՂՈՎԿԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, *Непрямая интерпретация аэрофотоснимка; Aerial photo indirect interpretation*

Օդալուսանկարի անուղղակի վերծանման ժամանակ երկրի մակերևույթի օբյեկտների մասին գաղափար ենք կազմում ոչ թե ուղղակի, այլ նկարում պատկերված այլ առարկաների կամ օժանդակ տեղեկատվության շնորհիվ:

ՕՂԱԼՈՒՄԱՆ ԿԱՐԻ ՄԱՍՇՏԱՐ, *Масштаб аэрофотоснимка; Aerial photo scale*

Օդալուսանկարի առանձնահատուկ երկրաչափական կառուցվածքը, որը հետևանք է պրոյեկտման կենտրոնական մեթոդի, հանգեցնում է նրան, որ նրա տարբեր մասերում տեղանքի պատկերման մասշտաբը կարող է տարբեր լինել: Մասշտաբների այդ տարբերությունը առանձնապես մեծ է լեռնային շրջաններում կատարված օդալուսանկարների վրա: Գետնաբար դրանց հետ աշխատելիս միշտ պետք է որոշել մասշտաբը նրա տարբեր մասերում: Օդալուսանկարի մասշտաբի որոշման եղանակներից մեկը օդալուսանկարի և տեղագրական քարտեզի համադրմամբ նույնաման օբյեկտների և նրանց ուրվագծերի, օրինակ բնակավայրերի, ճանապարհների, երկաթգծերի, գետերի և այլնի ճանաչումն է և՛ քարտեզի, և՛ օդալուսանկարի վրա: Գետազայում համապատասխան չափումներով՝ հիմք ունենալով տեղագրական քար-

տեղի մասշտաբը որոշվում է օդալուսանկարի մասշտաբը: Օդալուսանկարի մասշտաբի որոշման մյուս եղանակը կապված է օդալուսանկարահանման ապարատի ֆուկուսային հեռավորության և ինքնաթիռի թռիչքի բարձրության հետ:

ՕՂԱՆԻՍԱՆԿԱՐԻ ՎԵՐԱՅՍԿԵԼԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, *Контрольная классификация аэрофотоснимка; Aerial photo supervised classification*

Օդալուսանկարի վրա առկա վերծանման ուղղակի և անուղղակի էլեմենտների շնորհիվ նկարում պատկերված տարածքի առարկաների ու երևույթների վերահսկելի դասակարգման գործընթացը:

ՕՂԱՆԻՍԱՆԿԱՐԻ ՎԵՐԾԱՆՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ, *Элементы дешифровки аэрофотоснимка; Aerial photo interpretation elements*

Օդալուսանկարի վերծանման տարեր են հանդիսանում նկարի տոնը, տեքստուրան, ուրվագծերի ձևերը, չափերը, ասոցիացիաները, տեղագրությունները, ստվերները:

ՕՂԱՆԻՍԱՆԿԱՐԻ ՏԵՔՏՍՈՒՐԱ, *Текстура аэрофотоснимка; Aerial photo texture*

Տեքստուրան օդալուսանկարի վրա տոնային փոփոխությունների հաճախականությունն է, երբ մի քանի հատկություններ երևում են միանգամից: Տոնային տարբերությունները արտահայտվում են հավասարաչափ, թավոր և այլ նկարագրացնող տարրերով, ինչպե՛ս նաև նրանց տարածական տեղաբաշխմամբ: Համակարգչային վերծանման ժամանակ, սովորաբար թվային նկարի տեքստուրայի տակ հասկացվում է պիքսելների պայծառության արժեքների փոփոխությունները:

ՕՂԱՆԻՍԱՆԿԱՐԻ ՏՈՆ, *Тон аэрофотоснимка; Aerial photo tone*

Տոնը օդալուսանկարի միակ կարևոր բնութագրիչն է, որովհետև այն ներկայացնում է երկրի մակերևույթից անդրադարձած ճառագայթարձակման գրանցումը լուսածափավեմի վրա և արտահայտվում է գորշ գույնի տարբեր երանգներով և ստվերներով:

ՕՂԱՆԻՍԱՆԿԱՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԵՐԾԱՆՈՒՄ, *Прямая интерпритация аэроснимка; Aerial photo direct interpretation*

Օդալուսանկարից ուղղակի վերծանման հատկանիշը կոչվում է ուղիղ վերծանում: Օդալուսանկարի ուղղակի վերծանումը թույլ է տալիս ուղղակիորեն նկարի վրա ճանաչել և առանձնացնել երկրի մակերևույթի տարաբնույթ օբյեկտները, այդ թվում առանձին անտառատվածներ՝ փշատերև, լայնատերև, խառը և այլն:

ՕՐԱԼՈՒԲԱՆԿԱՎՈՒԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԶԵՎ, *Форма объектов аэрофотоснимка; Aerial photo objects form*

Չըն վերծանման ժամանակ օգտագործվող արդյունավետ, ուղղակի կանխան-
շան է, որը օբյեկտի ձևի կամ սահմանների որակական հաստատման մասին է խոսում:
Որպեսզի կարողանանք ծաղի ձևի չափի մասին գաղափար կազմել, ապա այն պետք
է դիտարկել ստերեոսկոպիկ եղանակով: Մարդու կողմից ստեղծված օբյեկտները աչ-
քի են ընկնում երկրաչափական կանոնավոր ձևերով, մինչդեռ բնական օբյեկտները՝
ոչ կանոնավոր:

ՕՐԱԼՈՒԲԱՆԿԱՎՈՒԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԶԱՓԵՐ, *Размеры объектов аэрофотоснимка; Aerial photo objects' sizes*

Օբյեկտի չափը կախված է լուսանկարի մասշտաբից: Օբյեկտների չափերի մա-
սին կարելի է դատողություններ անել համեմատելով այլ, հայտնի օբյեկտների չափե-
րի հետ: Այս տեսակետից կարևոր են և՛ բացարձակ չափերը, և՛ դրանց համեմատութ-
յունները:

ՕՐԱԼՈՒԲԱՆԿԱՎՈՒԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊՍԱԿԵՐ, *Образ объектов аэрофотоснимка; Aerial photo pattern*

Օդալուսանկարների վրա օբյեկտների տարածական տրամաբանական տեղա-
բաշխման հարգությունը՝ պատկերը: Կախված օդալուսանկարի մասշտաբից օբյեկտ-
ների տարբեր հատկություններ և տարբեր չափերի վերածածկումներ կերևան: Օրինակ
հորգձտագործման, երկրաբանական կառուցվածքների և այլ պատկերներ:

ՕՐԱԼՈՒԲԱՆԿԱՎՈՒԻ ՕԲՅԵԿՏԻ ՍՏՎԵՐ, *Тень объекта аэрофотоснимка; Aerial photo object shadow*

Օբյեկտի ստվերի չափը և ձևը կարող է օգտագործվել ծառատեսակների որոշ-
ման, շենքերի, քարափների բարձրությունների որոշման և այլ դեպքերում: Սովորա-
բար տարբերում են սեփական և տվյալ օբյեկտի վրա ընկած ստվերներ: Ստվերը,
մանրամասն նկարի վրա, արտացոլում է նկարահանված օբյեկտի ուրվագիծը, ինչը և
թույլ է տալիս որոշել նրա բարձրությունը:

ՕՐԱԼՈՒԲԱՆԿԱՎՈՐՆԵՐԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ, *Трансформация аэрофотоснимка; Aerial photos transformation*

Օդալուսանկարների մշակման գործընթաց, որի արդյունքում ապահովում են
միանման մասշտաբի առկայությունը նկարի բոլոր ուղղություններով: Այս նպատակին
հասնելու համար կազմվում է առաջնային օդալուսանկարի հորիզոնական պրոյեկ-
ցիան՝ նկատի ունենալով ինքնաթիռի թռիչքի տվյալները:

ՕՐԱՅԻՆ ԱՐՄԱՍՆԵՐ, *Воздушные корни; air roots*

Բնորոշ են արևադարձային բույսերին (եպիֆիտներին): Առաջանում են ճյուղերի
վրա եղած հավելյալ բողբոջներից: Երբեմն ճյուղավորվում են և հասնում մինչև հողի

մակերեսը: Կլանում են օդի հարաքերական խոնավությունը, մասնակցում ֆիզիոլոգիական որոշ ակտիվ պրոցեսների: Ճահճային րույսերի արմատների ծայրերը դուրս են գալիս ջրերից կամ հողից, ունեն շնչառական դեր (շնչառական արմատներ):

ՕՂԱՅԻՆ ՏԱՔԱՍՑԻՎ, *Аэро-инвентаризация; aerial inventory*

Օդային տաքսացիայի ժամանակ անտառային գույքագրումը իրականացվում է ինքնաթիռներից, միջին և փոքր մասշտաբի օդալուսանկարների օգնությամբ (1: 50 000 և ավելի փոքր մասշտաբի) նախօրոք եզրագծված տարածքներում: Թռիչքի ժամանակ ճշգրտվում են տաքսացիոն հատվածների սահմանները և աչքաչափական եղանակով որոշվում են տաքսացիոն քնութագրիչները:

ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐ, *Метеорологические спутники; meteorological satellites*

Մերժբևեռային և գեոստացիոնար ուղեծրերով շարժվող արբանյակներ, որոնք դիտարկումներ են կատարում երկրի տարրեր տարածաշրջանների ամպամածության և այլ եղանակային տարրերի նկատմամբ: Այս արբանյակները իրականացնում են նաև եղանակի կանխատեսումներ, տարերային երևույթների դեպքում՝ ապահովում են արագ տեղեկատվություն, ինչպես նաև մոնիթորինգ: Ամենահայտնի օդերևութաբանական արբանյակներից են Նախկին ԽՍՀՄ/ Ռուսաստանի Դաշնության Մետեոր, ԱՄՆ՝ ՆՈՒԱ և ԳՈՒՄ, Եվրոհամայնքի՝ Մետեոսատ և այլ արբանյակներ:

ՕԺԱՆԴԱԿ ՑԱԼՔՍ, *Подсеб; reseeding, under sow*

Մասնակի ցանքսի միջոցով անտառում մատղաշի քանակի ապահովում: Անտառի սերմնային վերականգնմանն օժանդակող հիմնական միջոցառումներից է:

ՕՂԱԿԱՃԱՔ, *Отяук; arc shake*

Բնափայտի արատ: Առաջանում է քամու, սառնամանիքի կամ քնի կենտրոնական մասի անհավասար չորանալու դեպքում, մեղ օղակներից խոշոր օղակների անցման սահմանում ներքին մեծ լարվածության առաջացման հետևանքով: Օ. կարող է առաջանալ նաև միջուկի փտախտի հետևանքով:

ՕՂԱԿԱՎՈՐՈՒՄ, *Окальцовывание; ringing, girdling*

Ծառը չորացնելու նպատակով 5-10 սմ խորությամբ քնի կեղևի օղական հեռացում, որի հետևանքով խախտվում է տերևներից պլաստիկ նյութերի հոսքը դեպի արմատներ: Խորը Օ. ընդհատում է նաև ջրի և արմատային մետաբոլիտների հոսքը դեպի տերևները: Առաջին դեպքում ծառը մահանում է դանդաղ, երկրորդ դեպքում՝ արագ:

ՕՊՏԻՄԱԼ ՏՆՎԱՐԿ (ՇԱՌՈՒՄՏ), *Оптимальное насаждение (древостоя); optimal planting (stand)*

Շառուտներ, որոնք անտառածման որոշակի պայմաններում (լավագույն ձևով կատարում են անտառի նպատակային դերը: Օ.Տ.-ների հիմնական տարրերը, քացի նրանց օգտակար հատկանիշներից, կարող են հանդիսանալ օպտիմալ կազմը, կառուցվածքը (ձևը), լիվությունը և այլ ցուցանիշներ:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹՆԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄ, *Разложение органических веществ; decomposition of organic matter*

Բուսական և կենդանական մնացորդների (տերևներ, ճյուղեր, արմատներ, միջատների և կենդանիների դիակներ և այլն) ձևափոխման տարրեր պրոցեսները, որոնք ընթանում են միաժամանակ 2 հակադիր ուղղություններով՝ 1/ բուն քայքայման, որի ժամանակ ստացվում են օրգանական նյութի քաղաղորիչ մասերը՝ ջուր, ածխաթթու զազ և մոխիր, 2/ նոր նյութի՝ հումուսի առաջացում: Օրգանական նյութերի քայքայման կամ հանքայնացման գործում կարևոր դեր են խաղում միկրոօրգանիզմները (մանրէներ, սնկեր և այլն) և կենդանիներ (որդեր, միջատներ, հարսնյակներ և այլն): Գունիֆիկացիայի պրոցեսում առաջնային նշանակություն ունի նաև օդի թթվածինը: Օրգանական նյութերի քայքայման արագությունը պայմանավորված է հողի ջերմությամբ, խոնավությամբ, օդափոխանակությամբ: Վերջինիս քանակը թելադրում է քայքայման պրոցեսում անոթք և անաերոբ միկրոօրգանիզմների ակտիվությունը: Աերոբ պայմաններում օրգանական նյութերի քայքայումն ընթանում է արագ և մինչև վերջ: Բարձր խոնավության և ցածր ջերմաստիճանների դեպքում (անաերոբ պայմաններում) քայքայումն ընթանում է դանդաղ, անաերոբ միկրոօրգանիզմների ազդեցության ներքո հումիֆիկացիայի պրոցեսը թուլանում է, և հողի մակերեսին կուտակվում է չքայքայված օրգանական զանգված, իսկ հողում՝ ազատ թթուներ, որոնք ղծվարացնում են միկրոօրգանիզմների գործունեությունը: Խոտաբույսերի, ինչպես նաև սաղարթավոր ծառատեսակների խաչաձև քայքայվում է ավելի արագ, քան ասեղնատերևավոր տեսակների և մամուռի թափուկը (ասեղնատերևավորների խնժղ պարունակում է միկրոօրգանիզմների համար թունավոր նյութեր):

ՕՐԹՈՒՈՒՄՆԱԿԱՐ, *Ортофотосинтез; Orthophotos*

Օրթուլուսանկարը, ինչպես անունն ինքն է հուշում, տվյալ տարածքի օրթոգրաֆիկ պատկերն է, որը մի կողմից քարտեզի նման ունի մեկ, միասնական մասշտաբ, իսկ մյուս կողմից՝ տվյալ տարածքի նկարն է: Այս կարևոր առավելությունը թույլ է տալիս նկարի վրա կատարել անկյունների և հեռավորությունների չափումներ, ինչպես նաև առկա տեղեկատվությունը ԱՏԳ միջավայր տեղափոխել և վերլուծություններ կատարել:

ՕՐԹՈՒՆՏՈՒՄԸ, *Orthopteron*; *Orthoptera*

Օրթոֆոտոպլանը նույն օրթոլուսանկարն է, սակայն այս դեպքում ավելանում է օելիեֆը՝ հորիզոնականների տեսքով: Գետնաբար օրթոֆոտոպլանը տեղանքի վերաբերյալ ավելի լայն վերլուծությունների հնարավորություններ է ընձեռում:

Ֆ

ՖԵՆՈԼՈԳԻԱ, *Фенология; phenology*

Գիտություն բնության սեզոնային երևույթների և նրանց սկսման ժամկետները պայմանավորող գործոնների ու բույսերի (կենսաֆենոլոգիա), ինչպես նաև լանդշաֆտի (կայուն ծնածածկի առաջացման ու վերացման, վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտահարությունների և այլ երևույթների) մասին: Բույսերի համար գրանցվում են զարգացման սեզոնային փուլերը, ֆենոֆազերը: Տարբեր վայրերում սեզոնային երևույթների վերաբերյալ համադրական տվյալներ ստանալու նպատակով Ֆ. կատարում են միևնույն ծրագրով և մեթոդով, ինչը հնարավորություն է տալիս կազմելու Ֆ.-ական քարտեզներ. վերջիններս ունեն կարևոր նշանակություն տվյալ բուսատեսակների աճեցման սահմանները բնորոշելու, բերքատվությունը, սերմերի հավաքն ու տնտեսվարման մյուս միջոցառումները կանխագուշակելու և պլանավորելու համար:

ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՐՐԱՊՍԿԵՐ, ՍՊԵԿՏՐ, *Фенологический спектр; phenological spectrum*

Տե՛ս Ֆենոտարրապատկեր:

ՖԵՆՈՏԱՐՐԱՊՍԿԵՐ, *Феноспектр; phenological spectrum*

Ֆենոլոգիական դիտումների արդյունքների հիման վրա կազմված հատուկ գծագիր, որտեղ պարզորոշ երևում են տարբեր բույսերի ֆենոլոգիական փուլերի ժամկետներն ու տևողությունը: Կարևոր նշանակություն ունի գեղազարդային պարտիզագործության համար, քանի որ երկարածաղկուն պարտեզներում հնարավորություն է տալիս բույսերը ճիշտ տեղադրել ըստ ծաղկման ժամկետների և տևողության, պտուղների հասունացման և տերևների աշնանային գունափոխության:

ՖԵՆՈՏԻՊ, *Фенотип; phenotype*

